ELIB.AM

Էլեկտրոնային Գրադարան



WILLIAM SAROYAN

SELECTED WORKS

IN FOUR BOOKS
BOOK ONE

STORIES
•
THE HUMAN COMEDY

YEREVAN "SOVETAKAN GROGH" 1986

ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆ

ԸՆՏԻՐ ԵՐԿԵՐ

ՉՈՐՍ ՀԱՏՈՐՈՎ ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ
•
ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ «ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ» 1986.

ԳՄԴ 84. 7 ԱՄՆ
Ս 281

Կազմեց ՆԱՏԱԼՅԱ ԳՈՆՉԱՐԸ
Խմբագիրներ՝ Ն. ԳՈՆՉԱՐ, Ֆ. ՄԵԼՈՅԱՆ

ՍԱՐՈՅԱՆ Վ.
Ս 281 Ընտիր երկեր։ 4 հատորով։ / Կազմ.՝ Ն. Գոնչար, խմբ. Ն. Գոնչար, Ֆ. Մելոյան։ Անգլ. թարգմ. Գր. Քեշիշյան և ուրիշ.— Եր.։ Սովետ. գրող, 1986։ Հ. 1, 1986 — 488 էջ։
Հատորում տեղ են գտել Վիլյամ Սարոյանի ընտիր պատմվածքները 1934—1940 թթ. ժողովածուներից և «Մարդկային կատակերգություն» վիպակը։
Ս $\frac{4703000000\ (482)}{705\ (01)\ 86}$ 86 «S» ԳՄԴ 84. 7 ԱՄՆ

© «Սովետական գրող» հրատարակչություն, թարգմանված է հայերեն, 1986 թ.



ԽՈՍՔ ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Վիլյամ Սարոյանը համաշխարհային գրականության բացառիկ երևույթներից է: Բացառիկ՝ ոչ իր հզոր տաղանդով— բազում են հզոր տաղանդները համաշխարհային գրականության մեջ: Բացառիկ՝ ոչ իր շեշտված ինքնատիպությամբ— ամեն մի նշմարիտ տաղանդ արդեն իսկ ինքնատիպություն է ենթադրում: Բացառիկ՝ ոչ իսկ իր ստեղծագործություններում ապրող անշափելի ու անպարագիծ բարությամբ— բոլոր նշմարիտ գրողներն, ի վերջո, բարության շատագովներ ու սերմանողներ են:

Սարոյանը բացառիկ ու զարմանալի է բոլորովին այլ իմաստով. լինելով ամերիկյան գրող, նա, իմ խորին համոզմամբ, միաժամանակ հայ ազգային գրող է: Այդպիսի երևույթ համաշխարհային գրականության մեջ գոնե ինձ ծանոթ չէ: Կան, իհարկե, շատ գրողներ, որ նակատագրի բերումով կտրվել են իրենց ժողովրդից ու նրա լեզվից, ստեղծագործել են այլ միջավայրում, որդեգրել այլ լեզու, բայց մնացել են իբրև սոսկ այդ միջավայրի ու այդ լեզվի գրող: Սարոյանի բացառիկությունն այն է, որ գերաճելով իր միջավայրից ու իր որդեգրած լեզվից, դարձավ նաև իր հարազատ ժողովրդի ազգային գրողներից մեկը: Եվ դա ամենից առաջ հենց ինքը Սարոյանն է հասկացել և ձևակերպել շատ սեղմ ու դիպուկ. «Թեև գրում եմ անգլերեն և ծնունդով ամերիկացի եմ, բայց ինձ համարում եմ հայ գրող»:

Ինչո՞ւ, ի՞նչ պատճառաբանությամբ, ինչի՞ վրա հենվելով է, որ նա իր գրական գործունեության հենց սկզբին արել է շատերի համար անճանաչելի ու վիճելի այդ հայտարարությունը: Չէ՞ որ գրողի այս կամ այն գրականությանը պատկանելը ամենից առաջ որոշում է այն լեզուն, որով նա գրում է:

Բայց տեղնուտեղը Սարոյանը բացատրել ու պատճառաբանել է իր հայտարարությունը: Այդ պատճառաբանությունը խորն է ու հիմնավոր. «Լեզուն, որով գրում եմ, անգլերեն է, միջավայրը, որ նկարագրում եմ, ամերիկյան է, բայց ոգին, որ ինձ մղում է գրելու՝ հայկական է: Ուրեմն ես հայ գրող եմ և պատկանում եմ հայ գրողների ընտանիքին»:

Այսպիսով, Սարոյանը գրականության մեջ կարևորագույնը ոգին է համարում և երիցս ճշմարիտ է, որովհետև գրականությունը, առհասարակ արվեստը, ամենից առաջ ոգի է և այդ ոգուց բխած կենսափիլիսոփայություն:

Իսկ Սարոյանի ստեղծագործությունների ոգին ստուգապես հայկական է, նրանից բխող կենսափիլիսոփայությունը հայ ժողովրդի դժվարին ճակատագրով դարերի ընթացքում ձևավորված, զտված ու բյուրեղացած կենսափիլիսոփայությունն է:

Եվ դա նկատել, արձանագրել ու շեշտել ենք ոչ միայն մենք՝ հայերս, այլև ուրիշները: Ըստ այլազգի քննադատների՝ Սարոյանը, նրա կյանքը, գրվածքների թեմաները ու հերոսները, հենց ստեղծագործության ոգին ու ոճը անխզելիորեն կապված են հայ ժողովրդի ավանդների, բարքերի ու բանաստեղծության հետ:

Այո, բանաստեղծության և ամենից առաջ այդ բանաստեղծության գլուխգործոցի՝ «Սասնա ծռերի» հետ:

Ես ստույգ չգիտեմ, իր գրական գործունեության սկզբին Սարոյանն արդյոք ծանոթ եղե՞լ է «Սասնա ծռերին», թե ոչ, բայց ստույգ գիտեմ, որ նրա մեջ ապրում էր այդ էպոսի ոգին, ապրում որպես արյան ժառանգություն ու բաղադրություն:

Հանախ եմ խորհել. եթե ճակատագիրն այնպես տնօրիներ, որ նա ծնվեր հայրենի Բիբլիսում ու լիներ մի պարզ բիբլիսեցի, ի՞նչ կաներ, ինչո՞վ կզբաղվեր: Եվ միշտ իմ պատկերացումների մեջ նա ներկայանում է որպես «Սասնա ծռեր» էպոսի մի թափառիկ վիպերգող, որպես մի նորօրյա Նախոր հեռի:

Եվ թեև բախտը այնպես չտնօրինեց, որ նա ծնվեր հայրենի հողի վրա ու իբրև ծննդավայր նրան տվեց ազգերի այնպիսի մի վիթխարի

խառնարան, ինչպիսին Ամերիկան է, բայց, միևնույն է, նա թեև այլ ոճով, թեև գրական այլ ժանրերով վերապատմեց իր ժողովրդի մեծ էպոսը, վերապատմեց այդ էպոսին հատուկ այնպիսի անհուն բարությամբ ու խաղաղասիրությամբ, մարդկային խղճի ու արդարության նկատմամբ ունեցած այնպիսի անսպառ հավատով, այնպիսի կենսահաստատ փիլիսոփայությամբ, որ նրա խոսքը XX դաժան դարի խաշմերուկներում հնչեց եզակիորեն տեղին ու ժամանակին, հարուցելով իրեն արժանի հիացմունք ու արձագանք:

Բայց թող չստացվի այնպես, թե Սարոյանը իր ժողովրդի ոգին ժառանգել էր զուտ իբրև արյան կախարդական հիշողություն, իբրև երջանիկ հետնորդին հասած ձրի պարգև: Ո՛չ: Հիշողությունը՝ հիշողություն, բայց այն կարող է խամրել ու բթանալ, եթե չի հարստանում սեփական ատապանքի փորձով, եթե կենսական հյութեր չի ստանում իրականությունից, մթնոլորտից: Սարոյանի մանկությունն ու պատանեկությունն անցան այնպիսի միջավայրում, որն ի վիճակի էր արյան հիշողությանը գումարել կենսական հարուստ հյութեր ու նաև ծանր կենսափորձ:

Նախ ընտանիքը. դարասկզբին հայրենի Բիթլիսը թողած ու այդ հեռավոր ափերը նետված նահապետական այդ ընտանիքը թարմ ու անխաբար էր պահել հայրենի երկրի վարքն ու բարքը, կենցաղը, ավանդները, բառն ու դանը, զրույցները, մի խոսքով՝ ոգին: Սարոյանի հոգում առանձնապես մեծ հետք է թողել տատը՝ Լուսնթագ Ղարաղյանյանը. «Իմ մեծ մայր,— պատմում էր Սարոյանը,— Ամերիկայի մեջ այ Բիթլիս կապրեր: Ան առանձին ատված ուներ, կրոն չէր գիտեր՝ անոր ատված ուրիշ էր, ան ամենեն շատ մարդու խելքին ու գութին կնավատար ու չէր վնասիր ու չէր հուսահատիր»:

Իսկ վնասվելու և հուսահատվելու առիթները շատ էին: Վաղ, շատ վաղ էր մահացել Սարոյանի հայրը, որը թողնելով իր չորս զավակներին: Անապահով ու ծանր էր տարագիր ընտանիքի վիճակը, բայց ամենահուսահատական պահերին իսկ տատը երկրից բերած որևէ իմաստուն զրույց, Սարոյանի խոսքերով ասած, «պգտիկ պատմություն» էր վերհիշում ու ավելացնում. «Հոգ մի ընեք, բան մը կըլլա»...

Հերմական, պատկառելի Սարոյանը մանկան հիացմունքով ու խանդոտանքով էր պատմում հոր՝ Արմենակ Սարոյանի մասին.

«Իմ հայր բանաստեղծ էր,— ասում է նա:— Ես անոր չեմ հիշեր,

չորս տարու մանչ էի, երբ մեռավ: Երբ մեծցա ու պատկերին նայեցա՝ բանաստեղծ էր...

Մայրս կպատմեր. օր մը տունը ոչ ալյուր կար, ոչ բրինձ, ոչ յուղ: Վաթսունհինգ սենթ դրամ կար: Հայրս կառնե այդ դրամ, կերթա, որ միչ մը ալյուր, միչ մը բրինձ, միչ մը յուղ բերե: Կերթա, իրիկուն կըլլա, կուգա տուն, ոչ ալյուր է բերեր, ոչ բրինձ, ոչ յուղ...

— Ի՞նչ բրիր դրամ,— կհարցնե մայրս:

— Մարդ մը տեսա,— կըսե,— ձեռք պարզեր էր ինձի, տվի անոր:

— Է, վեց սենթ տայիր, տասը սենթ տայիր, տասնվեց սենթ տայիր, ինչո՞ւ բոլոր տվիր...

— Ինչ գիտնամ, բոլոր տվի...

— Հոգ մի ընեք,— կըսե մայրս,— տանը մեջ միչ մը ալյուր, միչ մը բրինձ, միչ մը յուղ կգտնեմ»...

Մի «պզտիկ» պատմություն, և երկու ամբողջական կերպար. հայրը՝ բանաստեղծ, շռայլ, ձեռնբաց, մայրը՝ արհավիրքների, դժվարությունների փորձով դարձած խնայող, նեղ օրվա համար բաֆուն մի անկյունում ունեցած իր պահուստով:

Բայց ոչ միայն Սարոյանների ընտանիքում էր, որ թարմ ու անխաթար էին հայրենի երկրի բարքն ու վարքը, կենցաղը, ավանդները, բառն ու բանը, հոգեբանությունը: 1915 թվի Մեծ եղեռնը դաժան մի ալիքով այդ հեռավոր ափերն էր նետել մի հոծ հայություն, որի զգալի մասը ապաստան էր գտել Սարոյանի ծննդավայրում՝ Ֆրեզնո քաղաքում: Սարոյանի վկայությամբ իր մանկության ու պատանեկության տարիներին Ֆրեզնոն կիսով չափ հայկական քաղաք էր: Բիթլիսի, Վանի, Մշո, Խարբերդի խոսքն ու զրույցն էր ամենուր, փողոցներում, բակերում, արհարանքներում: «Ձարդեն փախած հայեր պզտիկ ուրախություններու վրա անանկ կխնդային, անանկ կպոռային, որ ամբողջ փողոց, ամբողջ թաղ կբռներ: Տեղացիներ կզարմանային, կնեղվեին, է՞, մեզի ինչ, մենք կխնդայինք, կպոռայինք...

Հայ իր բոլոր դժբախտություններու մեջ կատակ կսիրե, կոմիկը կսիրե, որովհետև լավատես է»...

Սարոյանը մանկուց է շփվել այդ մարդկանց հետ, սիրել է նրանց, ճաստանանալով խորամուխ է եղել նրանց էության, նրանց կենսափիլիսոփայության մեջ, ճայտնաբերել այնտեղ հոգևոր մեծ ու ստույգ արժեքներ, կեցության պարզ, բայց իմաստուն ու կայուն օրենքներ և ժառանգել դրանք:

Տարիների հետ հոգեկան այդ ժառանգությանը նա գումարել է մի այլ մեծ արժեք՝ մարդկային քաղաքակրթության ստեղծած հարստությունը։

Եվ այստեղ ուզում եմ մի խոստովանություն անել. մոտավորապես ծանոթ էի կենսագրությանը, գիտեի, որ կանոնավոր կրթություն չի ստացել, միջնակարգը չավարտած դեն է նետել դպրոցական պայուսակը, գնացել է փողոց թերթ վաճառելու, հետո հեռագրատանն է աշխատել, հեռագրեր է բաժանել... Մեր առաջին երկու հանդիպումներն էլ, Փարիզում ու Ֆրեզնոյում, շատ թուցիկ էին, մեր զրույցները հապնեպ ու կցկտուր, և այն տպավորությունն էի ստացել, թե նա սոսկ բնատուր տաղանդ է, մեծ տաղանդ, աստծո մատն ունի ճակատին և գրում է միայն վերուստ տրված շնորհով։ Բայց ահա, երբ նա եկավ Հայաստան, ու ես մոտիկից հաղորդվեցի նրան, իմ պատկերացումները լիովին փոխվեցին։ Խորապես զգացի ու հասկացա, որ նա, բնատուր մեծ տաղանդ լինելով հանդերձ, նաև մեր ժամանակի ամենազարգացած, ամենարարձր մտավորականներից է, որ նա, ինչպես ասում են, մաղից է անցկացրել աշխարհի բոլոր հին ու նոր փիլիսոփայական սիստեմները, քաջատեղյակ է աշխարհի հին ու նոր գրական ուղղություններին, դպրոցներին ու տեսություններին, հիանալի գիտե ռուս գրականությունը, մասնագետի հմտությամբ կարող է խոսել կերպարվեստի, երաժշտության ու թատրոնի մասին, իրեն քաղաքականությունից հեռու մարդ համարելով, նրբագույն քաղաքագետ է նաև։ Մի խոսքով՝ աշխարհի ամբողջ հին ու նոր քաղաքակրթությունը ներծծած ու մարսած բարձրագույն մտավորական, իր ժամանակի արվեստի ու գրականության շատ ու շատ մեծերի հետ սեղան նստած, մտքեր փոխանակած, հանախ նաև բուռն վեճերի մեջ մտած մտավորական։

Եվ ահա այդ երկուսի՝ մեր ազգային ոգու, ոճի, հոգեբանության, ավանդների և միջազգային գեղարվեստական մտածողության համաձայնվածքից ծնունդ է առել գրական վիթխարի մի երևույթ, որ մեկ բառով սարոյանական է կոչվում։ Եվ այնքան բնական է այդ համաձայնվածքը, որ դժվարանում եմ անգամ որոշել, թե որ կետում են այդ երկուսը հանդիպում միմյանց ու սերտաճում։ Սարոյանի ստեղծագործություններին մեջ զարմանալիորեն «չեն երևում» նրա բազմահարուստ գիտելիքները, ստեղծագործելիս նա ասես «մոռանում է» այդ ամենը և հետևում մեր ժողովրդական այն թափառիկ բանասացներին, որոնք

միայն բնատուր մղումով սմանչելի ասքեր ու վիպերգություններ են հյուսել: Այդ, այսպես ասած «մոռացումը» մեծերի մեծաշնորհն է։ Փոքրերն են, որ ընթերցողին զարմացնելու հավակնությամբ իրենց բոլոր գիտելիքներն ու իմացությունները շռայլորեն փռում են իրենց ստեղծագործությունների մակերեսին, մինչդեռ մեծերն այդ ամենը տարրալուծում են պատկերի, կերպարի, գեղարվեստական մտածողության, ներքին շերտերի մեջ և անկասելիորեն վերածում փիլիսոփայության:

Մեծ արվեստի գաղտնիքներից է սա, որին այնպես հիանալիորեն տիրապետում էր Սարոյանը:

Տիրապետում հենց սկզբից:

Եվ պատահական չէ, որ Սարոյանը այն քիչ գրողների թվին է պատկանում, որոնք մի առավոտ արթնանում են նշանավոր դարձած:

Սարոյանի պատմվածքների առաջին ժողովածուն իսկական հայտնություն եղավ ամերիկյան գրականության համար: Երիտասարդ հեղինակի անունը իսկույն տարածվեց, նրա պատմվածքներն ու պիեսները լայն ճանաչում գտան: Ամերիկյան գրական քննադատությունը նրան դրեց ժամանակի խոշոր գրողների կողքին:

Ի՞նչն էր այդ մեծ հաջողության գաղտնիքը:

Իմաստուն, թախծալի ու հեգնական հայ պոեզիայի թանձր բուրմունքով ներծծված սարոյանական ստեղծագործությունը ի՞նչ էր ասում ամերիկացիներին ու աշխարհին: Եթե փորձենք ամենակարճ պատասխանը տալ այդ հարցին, ապա ստիպված ենք դիմել հենց իրեն՝ Սարոյանին, որն աշխատելով բացատրել, թե ո՞րն է «Իմ սիրտը լեռներում է» պիեսի իմաստն ու բարոյախոսությունը, գրել է. «Դա հասարակ ու հին է, ինչպես աշխարհը՝ ավելի լավ է լինել բարի, քան լինել չար»: Ճիշտ է, դա միայն մի պիեսի մասին է ասված, բայց վերաբերում է նրա ամբողջ ստեղծագործությանը:

Իսկ եթե փորձենք մի փոքր ավելի ընդարձակ պատասխանել այդ հարցին, ապա դարձյալ ստիպված ենք դիմել Սարոյանին, քանի որ ինքներս հազիվ թե կարողանանք գտնել ավելի դիպուկ ու ավելի ապարդյուն պատասխան. «Փնտրիր բարին ամենուրեք, և թող նա լինի ազատ և անհերկյուղ... Արթնացրու առաքինությունը, ում սրտում էլ որ նա գաղտնի ու տրտում թաքնվելիս լինի աշխարհի սարսափներից ու ամոթից... Եվ քանի ապրում ես... ոչ մի բան չավելացնես աշխարհի աղետներին

ու տխրությանը, այլ ժպտա կենցության անծայր խնդության ու գաղտնիքի հանդեպ»։

Սարոյանական բարության մասին շատ է գրվել ու խոսվել։

Հիրավի, նրա ստեղծագործությունները թաթախված են անհուն մի բարությամբ։ Եվ բարության այդ զորեղ տարերքը հանախ թյուրիմացության մեջ է գցել քննադատներին. մեկ անգամ չէ, որ նրանք գրել են ու պնդել, թե իբր Սարոյանն իր այդ բարությամբ չարին չհակառակվելու քրիստոնեական բարոյախոս է, թե նա ուզում է կյանքից մերժված ու հասարակ մարդկանց հաշտեցնել դաժան իրականության հետ, թե սիսիֆելով նրանց, զինաթափում է և այլն, և այլն։

Ճշմարտության բաժինը շատ չնչին է այդ դատողություններում։ Չարն ու բարին Սարոյանի ստեղծագործություններում զուգահեռ չեն բնթանում, դրանք մշտական պայքարի մեջ են։ Եվ Սարոյանն ամենևին էլ չարին չհակառակվելու քրիստոնեական միամիտ բարոյախոս չէ, այլապես ևս նա հայ ժողովրդի կենսափիլիսոփայության, նրա էպոսի գաղափարների հարազատ ժառանգորդն է։ «Մի ամաչեք լինել բարի ու քնքուշ,— գրում է Սարոյանը իր գլուխգործոցներից մեկի՝ «Ձեր կյանքի ժամանակը» պիեսի նախաբանում,— բայց եթե երբևիցե ձեր կյանքի հանապարհին սպանելու հերթը կգա, սպանեցեք և մի զղջացեք»։ Եվ ինչպես այդպես էլ կատարվում է այդ պիեսում, բարու հանապարհին կանգնում է չարը՝ ոստիկան Բիլի տեսքով։ Ու երբ բարության խոսքն անզոր է դառնում նրա դեմ, փայլատակում է հատուցման դաշույնը, ելնում այնպես, ինչպես մեր հինավուրց էպոսում։

Անշուշտ, հանախ չէ, որ Սարոյանը մերկացնում է հատուցման դաշույնը, քանզի նրա կարծիքով դաժանության ուժերը կարող են մեղմանալ մեծանոգության առավել զորեղ ուժերից, անիրավության չարագուշակ գույները հանգչել ճշմարտության վառ գույների դեմ։

Սա Սարոյանի հայացքն է կյանքին, նրա հավատո հանգանակներից մեկը։ Պարզ ու բարդ հայացք է դա, բայց ոչ միամիտ։ Մարդու, նրա բանականության նկատմամբ ունեցած անհուն հավատն է այդ հայացքի մեջ, և այդտեղ է Սարոյանի բարության ակունքը։ «Ատեցեք չարությունն ու ատելությունը, բայց ոչ չար ու ատոր մարդկանց», ասում է նա, [illegible] համոզված լինելով, որ մարդն ի բնե ավելի լավն է, և միջավայրն ու պայմաններն են հանախ նրան դարձնում այդպիսին։

Իսկ այդ միջավայրի, այդ պայմանների դաժան ու ցնցող պատկերները քիչ չեն Սարոյանի ստեղծագործություններում։ «Մարդկային կատակերգության» գլուխներից մեկը, որ կոչվում է «Լարովի մարդը», դոստոևսկիական ուժով գրված մի պատկեր է, ամերիկյան, և ոչ միայն ամերիկյան, կյանքի համապարփակ մի խորհրդանիշ...

Դժվար է վերարտադրել այդ պատկերը, պիտի նորից կարդալ, զգալու, թե ցուցափեղկում դրված մետաղյա լարովի մարդու քստմնելի շարժումներից ինչպես է նրա դեմ կանգնած մանկան հոգում ծնունդ առնում անանուն, անդեմ, անծանոթ ու անավոր սարսափը։

Մեծահասակներ էլ են կանգնած նայում այդ մետաղյա մարդուն, նայում հետաքրքրությամբ, բայց բոլորը կամաց-կամաց ցրվում են, և չորսամյա մանուկը մենակ է մնում այդ մետաղյա մարդու քստմնելի պատկերի ու շարժումների դեմ։ Մանուկը, որ Սարոյանի գործերում միշտ մարդությունը, արդարությունը և մարդկային խիղճն է խորհրդանշում, մենակ է մնում ու սկսում է սարսափահար փախչել և կորչում է մթնող քաղաքի ամայի փողոցներում։ Գնալով նրա հոգում անագնանում է սարսափը, բայց մանուկը ենթագիտակցորեն զգում է, որ եթե հանկարծ տեսնի իր ընտանիքից որևէ մեկին՝ մորը, եղբորը կամ քրոջը, սարսափը կմահանա։

Ընտանիքը... Սա ևս Սարոյանի բազմանշանակ խորհրդանիշներից մեկն է։ Մարդկային մտերմության, ջերմության, փոխադարձ ըմբռնողության, միմյանց ապավինելու և միմյանց սատար լինելու խորհրդանիշը։

Սարոյանի «Կոտորածն մանկանց» պիեսի գործող անձերից մեկը՝ Արշին, բնելով մարդկային դժբախտության պատճառները, աշխատելով հասկանալ, թե շարն ինչո՞ւ է կարողանում հաղթանակ տանել բարու նկատմամբ, ինչո՞ւ են բարի մարդիկ այդքան անզոր ու անպաշտպան, ասում է. «Եթե նրանք տուն ունենային, եթե նրանք ունենային հայրեր ու մայրեր, նրանք իրենց կյանքն այդպես չէին ավարտի, նրանց չէին սպանի անա այսպես, առանց որևէ պատճառի»։

Մի անգամ գրույցի ժամանակ Սարոյանն ինձ հարցրեց.

— Գիտե՞ս, Քրիստոս ինչու դժբախտ էր։ Չե՞ս խորհած այդ մասին... Ես խորհած եմ։ Դժբախտ էր, որովհետև ընտանիք չունեցավ։

Ես տողեր եմ հիշում նաև «Վեպի Ջեկսոնի արկածները» վեպից, ուր համաշխարհային երկրորդ պատերազմի սարսափները են ու արհավիրքները: Վեպի հերոսը, այդ արհավիրքներից զարհուրած, ասում է. «Ես ծնվել ու մեծացել եմ ընտանիքում, հասկանո՞ւմ ես, ընտանիքում: Մենք սիրուց բացի ոչինչ չգիտեինք: Ես ուզում եմ ապրել ընտանիքում և ոչ բանակում... Ամեն ոք պիտի ընտանիք ունենա»:

Ընտանիք, փոխադարձ սեր ու ըմբռնողություն... Դարձյալ հայկական կենսափիլիսոփայությունից եկող ճշմարտություն, որ Սարոյանը հակադրում է ժամանակակից աշխարհի տարանջատվածությանը, մարդու միայնությանը:

Ընտանիք, տոհմ, ազգ, ժողովուրդներ, մարդկություն...

Նրանց կապը, փոխադարձ սերը, համերաշխությունը, բարեկամությունը ամենաբարձր ու գեղեցիկ արժանիքներն են Սարոյանի համար, յարին դիմադարձ լինելու ամենազորեղ միջոցները:

Հայաստան կատարած նախավերջին այցելության ժամանակ Երևանում մոլդավական արվեստի շաբաթ էր:

— Շատ լավ եք ըրեր, որ կանչեր եք մոլդավներուն, ժողովուրդներ իրար պիտի ճանչնան ու հասկնան երգով, պարով, բանաստեղծությամբ: Խոսք ու զրույցով պիտի հասկնան իրար: Շատ կուզեմ երթալ իրենց համերգին...

Է, երթանք...

Բայց...

Ի՞նչ բայց...

Կրնանք անանկ տեղ մը նստիլ, որ ինձի ոչ ոք չտեսնա:

Հասկացա: Այդ օրերին ուր էլ լինում էինք, ժողովուրդն իսկույն հայտնաբերում էր նրան: Ավտոմեքենայում միշտ վարորդի կողքին էր նստում, ու երբ ընթանում էինք քաղաքի փողոցներով, մարդիկ իսկույն նկատում էին նրան, կանգնում, հայացքով ուղեկցում էին մեքենան: Պիոներները պատվի էին առնում: Ինչ դահլիճում էլ հայտնվում էր, հանդիսատեսները, բեմը թողած, սկսվում էին դեպի Սարոյանը: Վաղեմում էր, որ այս անգամ էլ կարող է շեղել դահլիճի ուշադրությունը...

Դժվար է,— ասացի,— այնպիսի տեղ գտնել, որ ձեզ չտեսնեն:

Անանկ էնն, չեմ երթար, թելեվիզոնով կնայիմ:

Ժողովուրդների, նրանց բարեկամության նկատմամբ հարգանքը, նրանց ու ակնածանքը նրա էությունն է, մարդկային, ստեղծագործական էությունը։ Նա ոխերիմն է բշնամության, ոխերիմը՝ պատերազմի։

Մի առիթով պատմեց.

— Եղավ, որ խենթացա... Պատերազմի ատեն էր։ Երեսունհերեք օրեն «Վեսլի Ջեկսոնի արկածները» գրեցի ու խենթացա։ 72 ժամ խենթ եղա, խենթություն եկավ վրաս... Մարդ չիմացավ։ Ես ու իմ ատված կովեցանք, կովեցանք, ու ես հաղթեցի... Ո՛չ, իմ ատված հաղթեց, իմ ատված ես եմ։ Ամենամեծ խայտառակություն, ամենամեծ, չարիք պատերազմն է... Այդ ինչ խայտառակություն ըրին, ժողովուրդ չնչխեցին։ Սարսափեր էի աշխարհի դեմ։ Պատերազմեն վերջ տարի մը տող մը իսկ չկրցա գրել։ Հետո այդ խենթություն, այդ մելամաղձոտություն օգտակար եղավ ինձի, շատ բան հասկցա...

Թուրքական անընդմեջ հալածանքներից ու չարդերից փախած և օտար հողում ապաստան գտած հայ տարագիր ծնողների զավակը երևի ամբողջ խորությամբ հասկացավ, թե ժողովուրդներին ինչ է բերում կույր ֆանատիզմը, ինչ է բերում իրեն ուրիշից գերադասելու կույր մոլորությունը, ֆաշիզմի չախչախումով երևի առավել ամրապնդեց իր այն հավատը, որ «սերը անմահ է, ատելությունը մեռնում է ամեն վայրկյան»։

Քայլելով աշխարհի, իր խոսքերով ասած, «չարության ու ագահության, ատելության ու սարսափի, արատավորության ու նեխվածության» միջով, նա երևի սկսեց ավելի ու ավելի խոր զգալ իր ակունքների կարոտը։ Նախ կրկին այցելեց Սովետական Հայաստան, ապա գնաց Թիֆլիս, իր ծնողների ու նախնիների բնօրանը։

Հուզմունքով էր պատմում այդ մասին. «Քաղաք ավերակ էր, միայն բերդ կանգուն էր։

Քուրդ մը կար, ուրսունն անց, նորս հիշեց, ճանչցավ։ Ան էր, որ ինձի մեր տան տեղ ցուցուց։

Տուն ավերակ էր, բայց օջախ կար...

Հետս մարդիկ կային, քուրդեր, թուրքեր, ըսի՝ դուք գացեք, կուզեմ մենակ մնալ»։

Ու մենակ է մնացել հայրենի տան ավերակների մեջ։ Ինչքա՞ն է մնացել, ի՞նչ է խորհել, ի՞նչ է զգացել...

Ինչ իմանաս...

Հայրենի ավերակված տունը...

Այդ տան բարե պատերի մեջ դարեր շարունակ ապրած խղճի, բարության, առաքինության, կեցության պարզ ու բարդ փիլիսոփայության ժառանգորդն էր նա: Ու թեև ավերակ էր տունը, բայց այդ տան մեջ ապրած կեցության պարզ ու բարդ փիլիսոփայությունը, տեղափոխվելով Սարոյանի պատմվածքների, վեպերի, պիեսների մեջ, մնացել է անվթար, անխաթար և փոխարկվել մի մեծ համանվագի... Այդ համանվագի մեջ պղնձե փողեր են դղրդանջում, որ ասես անվերջ կրկնում են. «Իմ սիրտը լեռներում է»... Բարության ձայնը, գթության բարբառն ու ցավի ղղուկը գալիս, միաձյուսվում ու փոխվում են մինչ այդ աշխարհում չլսված մի զարմանալի մեղեդու: Մնծդանները այնտեղ հպարտորեն նրբինցնում են. «Ուր որ կերթաս, պռռա Հայաստան», իսկ ջութակները թավշի ձայնով կրկնում են. «Սերը անմահ է, ատելությունը մեռնում է ամեն վայրկյան»:

Հետո Սարոյանը կրկին ու կրկին եկավ Հայաստան, այստեղ նշեց իր ծննդյան 70-ամյակը, նորից շրջեց դաշտերն ու հովիտները, մտավ կիրճերն ու ձորերը, շփվեց հազարավոր մարդկանց հետ՝ գյուղացիների ու գլխանականների, գրողների ու բանվորների, ուսանողների ու երեխաների, եղավ Լոռիում, Զանգեզուրում, Շիրակում, Երևի կենսական նոր էներգիա կուտակեց ու խոստացավ մոտիկ ապագայում նորից գալ...

Խոստացավ... բայց 1981 թվի մայիսյան մի պայծառ օր եկավ նրա անակնկալ մահվան բոթը և բոթի հետ՝ նրա վերջին ցանկությունը, կտակով վավերացված նրա նվիրական իղձը՝ իր անյուն կեսը թաղել Հայաստանում...

Երբ առաջին անգամ Ամերիկա այցելեցի, եղա նրա ծննդավայր Ֆրեզնոյում ու մոտեցա նրա փոքրիկ առանձնատանը, նեռսից կոմիտասյան նվագ լսեցի: Հետո նա ինձ բացատրեց, որ միշտ, երբ աշխատում է, կոմիտասյան նվագ է լսում, որովհետև այդ նվագից ինչ-որ լուսեղեն ոգի է հաղորդվում իրեն:

Այժմ նա ննջում է Կոմիտասի կողքին:

Երբ վերջին անգամ եկավ Հայաստան, ասաց.

Տարպետ Մարտիրոս Սարյան շիկա, Հրաչյա Ներսիսյան շիկա, Գրիգոր Անանյան շիկա... Ու շատ տխուր եմ:

Այժմ նա ննջում է վարպետ Մարտիրոս Սարյանի, Հրաչյա Ներսիսյանի, Անեմյանի, հայոց մյուս մեծերի կողքին:

Եվ այնտեղ, Հրազդանի կիրճի եզերքին, գիշերային լռության մեջ շարունակվում է հայոց մեծերի հավիտենական ու լուռ զրույցը, որ աշխարհի ու մարդու, արդարության ու բարության մասին է, արվեստ հրաշքի մասին, հայ ժողովրդի խորհրդավոր ու հարատև ոգու մասին:

ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ

ՊԱՏՄԱՀԱԾ-ՔՆԵՐ



Վիլյամ Սարոյան

Արդեն քառասուն օր ու գիշեր մազերիս մկրատ չէր դիպել, և ես սկսել էի նմանվել անգործ ջութակահարի։ Մենք՝ փոքրասիացի բարբարոսներս, մազոտ ժողովուրդ ենք, ու եթե մեր մտքով անցնում է վարսավիրի դուռը գնալ, ուրեմն, դրա կարիքը իսկապես կա։ Բանը բանից անցել էր, և ունեցած միակ գլխարկս փոքր էր գալիս գլխիս։ (Ես լուրջ պատմվածք եմ գրում, գուցե ամենալուրջը, որ երբևիցե գրելու եմ։ Ահա թե ինչու խոսքս կարծես թե անլուրջ է։ Ով Շերվուրդ Անդերսոն կարդացել է, քիչ հետո կհասկանա, թե ինչ եմ ուզում ասել, կհամոզվի, որ ծիծաղիս մեջ թախիծ էլ կա)։ Ահավասիկ, մի երիտասարդ, որն ուրիշ ճար չուներ, մազերը պիտի կտրեր, այնպես որ գնացի Երրորդ փողոց (Սան Ֆրանցիսկոյում է այդ փողոցը), ուր վարսավիրների ուսումնարանում մազ կտրելը տասնհինգ սենթ արժե։

Երրորդ փողոց կոչվածը մի մեծ թաղամաս է. պատկերացրեք Նյու Յորքի Բաուերին կամ Լոս Անջելեսի Գլխավոր պողոտան, պատկերացրեք տարեց ու երիտասարդ գործազուրկների, որոնք քարշ են գալիս պարապ-սարապ, էժանագին ծխախոտ փստացնում, դատողություններ անում կառավարության մասին ու սպասում են, միայն սպասում, որ օրերից մի օր գուցե իրենց բախտը բացվի։ Օգոստոսն էր, երկուշաբթի առավոտ, վարսավիրանոցը լիքն էր այդ պարապ-սարապներով, որ եկել էին մի քիչ մարդավարի տեսք տալու իրենց։ Ճապոնացի տղան, որ վերջերս ազատված աթոռն էր ստացել, տասնմեկ հաճախորդի ցուցակ ուներ. մյուսներին սպասելն ավելի անհույս էր։ Նստեցի՝ սպասելու։ Կես տուփ էժանագին պիգարետ ուներ։ Հյուրասիրեցի ժամանակակիցներիցս մեկին, որը, տեսքից դատելով, Նիկոտինի կարիք ուներ, ինքս էլ ծխեցի և, ներս քաշելով դառը ծուխը, միտք էի անում Ամերիկայի մասին՝ քաղաքական, տնտեսական ու հոգևոր առումով։ Ժամանակակիցս թերևս տասնվեց տարեկան լիներ։ Թերևս այրվացի լիներ։ Բնությունից գերազանց տվյալներով ամրակազմ մի ամերիկացի էր,

միևնույն ժամանակ՝ լիովին թևաթափ։ Քնի կարոտ, ով գիտե քանի օր շորերը չփոխած, սրտի մեջ վախ ու ասված գիտե, թե էլի ինչ։ Շատ կուզեի իմանալ նրա անունը։ Գրողը միշտ ուզում է, որ անուններն ու դեմքերը որոշակի լինեն։ Այովացին ասաց. «Սալինասից եմ գալիս։ Սալաթի դաշտերում աշխատանք չկա։ Գնում եմ հյուսիս՝ Պորտլենդ, գուցե հաջողվի որևէ նավի վրա գործ գտնել»։ Ես նույնպես ուզեցի իմ գործերից պատմել նրան՝ Սկրիբները մերժել է պատմվածքս, «Յեյլ Ռևյուն»՝ ակնարկս, փողը չի հերիքում, որ կարգին սիգարետ ծխեմ, կոշիկներս մաշվել են, վերնաշապիկներս՝ հնացել։ Բայց վախենում էի իմ անախորժությունները խոսակցության նյութ դարձնել։ Գրողների հոգսերն ու դժվարությունները սովորաբար փոքր-ինչ անիրական են թվում ու ձանձրալի։ Մեկ էլ տեսար, մեկնումեկը մտածեց. «Հետո ի՞նչ, դու էլ մի գրիր, խնդրողն ո՞վ է»։ Այնպես որ, լավ է ամենևին էլ ցույց չտաս, թե գրող ես։ Ասացի. «Հաջողություն քեզ հյուսիսում»։ Այովացին գլուխն օրորեց. «Հազիվ թե բան ստացվի, բայց փորձեմ, ի՞նչ ունեմ կորցնելու»։ Փառավոր տղա էր, հուսով եմ, չի մեռել, հուսով եմ, չի պառել այս սաստիկ ցրտերին (1933-ի դեկտեմբերն է), հուսով եմ, ոտնատակ չի գնացել, չի կորել՝ ապրելու արժանի էր։ Այովացի, հուսով եմ, Պորտլենդում գործ ես գտել, հուսով եմ, փող ես աշխատում, հուսով եմ, կարգին սենյակ ես վարձել, մեջը՝ տաք անկողին, հուսով եմ, գիշերները քնում ես, կանոնավոր սնվում, մարդավայել ապրում, հուսով եմ, երջանիկ ես։ Ամենայն բարիք քեզ, այովացի։ Քանի-քանի անգամ եմ աղոթել քեզ համար։ (Բայց, միևնույն է, ինձ թվում է, հիմա նա արդեն չկա։ Մահը նրա մեջ դեռ այն օրն էր բույն դրել, երբ տեսա ասես հալածական գազանի նրա դեմքը, իսկ այդ նույն ժամանակ Ամերիկայի բոլոր կինոթատրոններում զվարճալի մի ֆիլմ էր գնում շարունակ, որի մեջ այսպիսի կրկներգ կար՝ «Չենք վախենում, չենք վախենում մեծ ու ագահ չար գայլից», և, ի վերջո, ամեն ինչ սրան է հանգում՝ փողով մարդիկ ծիծաղում են մահվան վրա, իսկ վերջինս գաղտագողի մոտենում է ու տանում այովացու նման երիտասարդներին, հարուստներն էլ ասում են, թե ոչինչ չեն նկատել ու իրենց համար ծիծաղում են տաք կինոսրահներում։ Ես աղոթել եմ այովացու համար և ինքս ինձ վախկոտ եմ համարում։ Թերևս, նա արդեն չկա՝ մեռել է, իսկ ես՝ նրա տած իմ փոքրիկ սենյակում, խոսում եմ նրա մասին, միայն խոսում եմ)։

Այդ ճապոնացի տղայի վրա էր։ Աշկերտ-վարսավիր էր։ Սպիտակում էր տարիքն առած մի թափառականի, որի դեմքին իրենց սարսափելի

կնիքն էին թողել անտուն ու անապահով կյանքի տարիները, երբ ոչ մի տեղ չես տնավորվել ու ոչինչ չունես։ Ճապոնացի տղան աշխատում էր քիթն այնպես թեքել, որ ծեր թափառականի հոտը չառնի։ Չնչին մանրուք է սա, աննշան մի բան, որը արվեստի գործի մեջ տեղ բռնելու իրավունք էլ չունի, այնուհանդերձ, ես հիշատակում եմ։ Երիտասարդ գրողին միշտ հետապնդում է որևէ նշանակալից փաստ աշքաթող անելու վախը։ Եվ նա ջանում է օգտագործել այն ամենը, ինչ տեսել ու նկատել է։ Ես ուզեցի իմանալ ճապոնացի տղայի անունը։ Անունները շատ են հետաքրքրում ինձ։ Ես համոզվել եմ, որ անհայտ մարդկանց անունները շատ արտահայտիչ են։ Նայելով ճապոնացի տղային, տեսնելով, թե ինչպես է նա ջանում իր հոտառության զգայարանը հեռու պահել ծեր թափառականի քիթ ու բերանից, ես փորձում էի հասկանալ այդ տղայի մտքինն ու սրտինը։ Տարիներ առաջ, երբ տասնյոթ տարեկան էի, խաղողի վազեր էի էտում հորեղբորս այգում՝ Սանջերից հյուսիս, Սան-Հոակին հովտում։ Ինձնից բացի, այնտեղ աշխատում էին մի քանի ճապոնացիներ՝ Ցոշիո Ինոմոտոն, Հիդեո Սուձուկին, Կացումի Սուջիմոտոն և էլի երկուսը։ Նրանցից մի քանի ճապոներեն բառեր էի սովորել՝ «բարև», «ինչպե՞ս ես», «լավ օր է, չէ՞», «ցտեսություն» և այլն։ Աշկերտ-վարսավիրին ասացի ճապոներեն. «Ինչպե՞ս ես»։ Պատասխանեց ճապոներեն. «Լավ եմ, շնորհակալություն»։ Հետո հարցրեց անթերի անգլերենով. «Դուք ճապոներե՞ն գիտեք։ Ապրե՞լ եք Ճապոնիայում»։ Ես ասացի. «Ցավոք, ոչ։ Իմացածս մի քանի բառ է միայն։ Տարիներ առաջ աշխատել եմ Ցոշիո Ինոմոտոյի, Հիդեո Սուձուկիի, Կացումի Սուջիմոտոյի հետ։ Գուցե ճանաչո՞ւմ ես նրանց»։ Գործից չկտրվելով, նա ասածս անուններն էր մտքում կրկնում, նույնիսկ կարծես շշնջում էր. «Ինոմոտո, Սուձուկի, Սուջիմոտո...», «Սուձուկի,— ասաց նա։— Փոքրահասակ մարդ է»։ «Այո»,— ասացի ես։ «Ճանաչում եմ,— ասաց։— Հիմա Սան-Ջոզում է ապրում։ Ամուսնացել է»։

Ուզում եմ իմանաք՝ ինձ խորապես հետաքրքրում են մարդկանց հիշողությունները։ Երիտասարդ գրողը հազար ու մի տեղ է գնում, սրանրա հետ խոսքի բռնվում և փորձում է պարզել, թե նրանք ինչ են հիշում։ Պատմվածքիս նյութը մի երևելի բան չէ։ Առանձնահատուկ ոչինչ չի կատարվելու գրվածքիս մեջ։ Հետաքրքրաշարժ սյուժե չեմ հորինում։ Հիշարժան հերոսներ չեմ ստեղծում։ Շարադրանքիս ոճը չեմ հղկում, փայլեցնում։ Մթնոլորտն էլ առանձնապես հրապուրիչ չէ։ Ես չեմ տենչում այս պատմվածքը կամ մեկ ուրիշը «Սաթըրդեյ Իվնինգ Փոստի», «Կոսմոպոլիտենի» կամ «Հարպերսի» գլխին կապել։ Հավակնություն չունեմ մրցելու կարճ պատմվածքի այնպիսի նշանավոր վարպետների հետ,

ինչպիսիք են Սինքլեր Լյուիսը, Ջոզեֆ Հերգեշեյմերը և Ջեյն Գրեյը, մարդիկ, որոնք իսկապես գիտեն, թե ինչպես է պետք սարքել պատմվածքը, որ ծախվի։ Հարուստ մարդիկ են, տեղյակ սյուժեի ու կերպարների, ոճի ու կառուցվածքի կանոններին և էլի նման շատ ուրիշ բաների։ Ես փառք չեմ տենչում։ Իմ նպատակը Պուլիտցերյան, Նոբելյան կամ որևէ այլ մրցանակ շահելը չէ։ Ես այստեղ եմ՝ հեռավոր Արևմուտքում, Սան Ֆրանցիսկոյում, Կարլ սթրիթի վրայի մի փոքրիկ սենյակում նստած նամակ եմ գրում հասարակ մարդկանց, պարզ լեզվով պատմում նրանց ծանոթ բաների մասին։ Պարզապես գրառումներ եմ անում, այնպես որ, եթե մի քիչ էլ շեղվում ու դեսուդեն եմ ընկնում, նրանից է, որ շտապելու բան չունեմ, և, մեկ էլ, որ անտեղյակ եմ պատմվածք սարքելու կանոններին։ Եվ եթե մի բան կա, որ ինձ դրդում է գրելու, ասելն է, որ մարդը մարդու եղբայրն է։ Այս հայտարարությունը մի քիչ վերամբարձ է հնչում։ Մարդ առհասարակ ամաչում է նման հայտարարություններից։ Վախենում է փորձված մարդիկ ծիծաղեն իր վրա։ Բայց դա ինձ քիչ է հետաքրքրում։ Խնդրեմ, թող ծիծաղեն։ Էլ ինչի՞ համար է նրանց փորձը։ Ինձ համար ցեղեր գոյություն չունեն։ Ես չեմ հավատում կառավարություններին։ Կյանք ասելով, հասկանում եմ ահա այս մեկի կյանքը՝ ծնունդից մինչև մահ, և այսպիսիք աշխարհում բազում միլիոններ են։ Երեխաները, որ դեռ չեն սովորել խոսել և ոչ մի լեզվով, միակ ցեղն են երկրագնդի վրա՝ մարդկանց ցեղը... Մնացած ամեն ինչը կեղծիք է ու խաբեություն, այն ամենը, ինչ մենք կոչում ենք քաղաքակրթություն, ատելություն, սարսափ, ուժ... Իսկ երեխան երեխա է։ Մարդկանց եղբայրությունը մանկան ճիչ ու լացի մեջ է, լացող երեխաների մեջ... Մեծանում ենք, լեզու սովորում և աշխարհը ընկալում մեր իմացած միակ լեզվի միջոցով, չենք ընկալում բոլոր լեզուների միջոցով կամ էլ առանց որևէ լեզվի, ասենք՝ լռությամբ, փակվում ենք մեր իմացած միակ լեզվի մեջ։ Այն, ինչ հավերժական է ու անսահման, դառնում է սոսկ բառ։ Ուզածս միակ բանը բոլորին հասկանալի լեզվով խոսելն է՝ մարդկային սրտի լեզվով, որն անմահ է ու հավասարապես հարազատ բոլորին։

Եվ ահա ինձ մեղավոր ու անօգնական եմ զգում։ Խոսեցի երկարաբարակ և այդպես էլ ոչինչ չասացի։ Սա է, որ խենթացնում է երիտասարդ գրողին, այս զգացումը, որ ոչինչ չես ասել։ Շարքային մի լրագրող եղած-չեղածը կտեղավորի երկու բառանոց վերնագրի մեջ։ «Մարդը մարդ է»՝ կասի նա։ Խորհրդավոր մի բան, տակը՝ հազար ու մի իմաստ։ Բայց ես ուզում եմ խոսել այնպիսի լեզվով, որ ասածս մեկ իմաստ ունենա։ Այնքան եմ ուզում՝ այդ իմաստը որոշակի լինի, որ

ահա՝ խոսքս անորոշ է դառնում։ Թափառում եմ խնդրո առարկայի շուրջ, փորձում գիտել բոլոր կողմերից, որ ամբողջովին տեսնեմ նրա պատկերը, տեսնեմ ամբողջությամբ։ Սիրտը՝ մարդու սիրտն եմ ուզում դնել իմ այս պատմվածքի մեջ։

Թույլ տվեք, ուրեմն, մի փորձ էլ անեմ. արդեն երկար ժամանակ մազերս չէի սարքել ու այնքան թափթփված տեսք ունեի, որ ստիպված գնացի Երրորդ փողոցի վրա գտնվող վարսավիրանոց ու բազմեցի աթոռին։ Ասացի. «Ետևից շատ կթողնես։ Գլուխս երկարավուն է, ետևից թե շատ չթողնես, այստեղից դուրս կգամ ձիու կերպարանքով։ Վերևից ինչքան ուզում ես վերցրու։ Լավ, թրջել չկա, չոր-չոր սանրիր»։ Կարդալը մարդուն գիտակ է դարձնում, գրելը՝ շիտակ։ Սա է եղած-չեղածը, բայց սրանով պատմվածք չի ստացվում, որովհետև մինչև հիմա աչքաթող եմ արել վարսավիրիս՝ այն երիտասարդին, որը սարքեց մազերս։

Նա նիհար էր ու բարձրահասակ, դեմքը՝ թուխ ու լուրջ, հաստ շրթունքներն ասես ժպտում էին, բայց տխուր, թարթիչները խիտ էին, աչքերը՝ թախծոտ, քիթը՝ խոշոր։ Հայելուն փակցված քարտի վրա գրված էր անունը՝ Թեոդոր Բաղալ։ Հաճելի անուն, հաճելի երիտասարդ։ Թեոդոր Բաղալը սկսեց զբաղվել իմ գլխով։ «Անունդ...— ասացի,— Բաղալ է։ Հա՞յ ես»։ Ես ինքս հայ եմ։ Արդեն ասած կլինեմ։ Մարդիկ նայում են ինձ ու զարմանում, և ես ասում եմ նրանց՝ «Ես հայ եմ»։ Կամ կարդում են գրածներս ու զարմանում, ես էլ բացատրում եմ՝ «Հայ եմ»,— ասում եմ նրանց։ Անիմաստ բացատրություն է, բայց, ինչ արած, նրանք սպասում են, ես էլ ասում եմ։ Ես չեմ հասկանում, թե ինչ է նշանակում հայ կամ անգլիացի, կամ ճապոնացի լինել։ Քիչ թե շատ հասկանում եմ, թե ինչ է նշանակում այս աշխարհում ապրող մարդ լինել։ Միայն դա է ինձ լրջորեն հետաքրքրում։ Մեկ էլ՝ թենիսը։ Հույս ունեմ, որ երբևիցե կգրեմ թենիսին նվիրված խոհափիլիսոփայական մի մեծ գործ, ինչպես Հեմինգուեյի «Մահը կեսօրից հետո»-ն, բայց գիտակցում եմ, որ դեռևս պատրաստ չեմ նման գործ ձեռնարկել։ Զգում եմ, որ եթե թենիսը լայնորեն տարածվի հողագնդում, շատ կնպաստի ցեղային տարբերությունների, նախապաշարումների, թշնամանքի և այլնի վերացմանը։ Հենց կատարելության հասցնեմ սկզբի հարվածը և գնդակը «կտրելը», կսկսեմ աշխատել այդ մեծ գործի վրա։ (Փորձված մարդկանց գուցե թվա, թե ձեռ եմ առնում Հեմինգուեյին։ Ամենևին։ «Մահը կեսօրից հետո»-ն ուժեղ արձակի նմուշ է։ Իբրև արձակի, այդ գործի դեմ երբեք ոչինչ չեմ ունեցել։ Ոչինչ չունեմ դրա դեմ և իբրև փիլիսոփայության։ Կարծում եմ, որ դա ավելի լավ փիլիսոփայություն է, քան այն, որ այլոց գործերում է

հանդիպում։ Հեմինգուեյը, նույնիսկ երբ հիմարություններ է ասում, չի կորցնում բարեխղճությունը։ Նա պատմում է այն, ինչ իսկապես տեղի է ունեցել, բայց թույլ չի տալիս, որ դեպքերի արագ ընթացքն իր նկարագրությունը դարձնի հապճեպ։ Իրականությունը շատ է անցողիկ, և նրա անշտապ, ակնթարթի իմաստը պահպանող նկարագրությունը արդեն մեծ բան է։ Որոշ նվաճում է գրականության համար)։

— Հա՞յ ես,— հարցրի ես։

Մենք փոքր ժողովուրդ ենք, և երբ մերոնցից երկու հոգի հանդիպում են, արդեն իրադարձություն է։ Մենք մեր շուրջը մշտապես փընտրում ենք մեկին, որի հետ մեր լեզվով խոսենք։ Մեր քաղաքական կուսակցությունները պնդում են, թե երկրագնդի վրա շուրջ երկու միլիոն հայ է ապրում, բայց մեզնից շատերը այդ կարծիքին չեն։ Հաճախ ենք մենք թուղթ ու մատիտ առած նստում և, մտովի աշխարհի մի ծայրից մյուսը թռչելով, փորձում հաշվել, թե քանի հայ ապրելիս կլինի այս կամ այն երկրում՝ Սովետական Հայաստանում, Ռուսաստանում, Հնդկաստանում, Եգիպտոսում, Իտալիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Ամերիկայում, Ավստրալիայում և այլն, և այլն, յուրաքանչյուրի դիմաց հավանական ամենաբարձր թիվը դնում, ապա բոլորը գումարում իրար և ստանում ընդհանուր մի թիվ, որը միլիոնի էլ չի հասնում։ Հետո սկսում ենք մտածել, որ մեր ընտանիքները բազմանդամ են, մանկածնությունը մեզ մոտ բարձր է, մահացությունը՝ ընդհակառակը, ցածր (չհաշված պատերազմի տարիները, երբ կոտորածները անհաշիվ կյանքեր տարան), սկսում ենք պատկերացնել, թե ինչքան արագ կբազմանանք, եթե գոնե մի քառորդ դար մեզ հանգիստ թողնեն, համարյա մխիթարվում ենք ու մեզ բավականին երջանիկ զգում։ Մենք միշտ աչքաթող ենք անում, որ կա երկրաշարժ, պատերազմ, կոտորած, սով ու էլի նման շատ ուրիշ բաներ, և դա մեր սխալն է։ Հիշում եմ Մերձավոր Արևելքի փոխօգնության կոմիտեի պատվիրակության այցը մեր քաղաք։ Մեր հոնտորը սովորաբար մորեղբայրս էր լինում, նա փաստաբան էր ու հրաշալի ճառախոս և որպես օրենք լսարանը լցնում էր հայերիս լացով։ Մեր գլխին պայթած առաջին չարիքը պատերազմն էր։ Պատերազմ, որը մենք չէինք մղում, բայց որտեղ կոտորվում էինք մենք։ Իսկ նրանք, ովքեր չսպանվեցին, անտուն-անտերունչ մնացին և հիմա սովից էին մեռնում։ Նրանք, ովքեր մեր միսն ու արյունն են՝ ասաց մորեղբայրս, և բոլորս լաց եղանք։ Մենք փող հավաքեցինք և ուղարկեցինք մեր ժողովրդին։ Հետո, երբ պատերազմն արդեն վերջացել էր, ու ես մեծ տղա էի, Մերձավոր Արևելքի հայերի օգտին հանգանակություն կատարելու

եկավ ևս մի պատվիրակություն, և մորեղբայրս մեր քաղաքի հասարակական ժողովների տան բեմը ելավ ու այնտեղից ասաց. «Փառք աստծուն, որ այս անգամ ոչ թե թշնամին է մեր մահն ուզում, այլ երկրաշարժը։ Կամոքն աստծո մեր տառապանքը վերջ չունի։ Աղետն ու արհավիրքը, վիշտն ու ցավը, սարսափն ու տառապանքը անպակաս են եղել մեզնից, հաճախ ենք հուսահատության ու խելագարության դուռը հասել, բայց, միևնույն է, աստծո անունը չի իջել մեր շուրթերից։ (Մորեղբայրս սկսեց արտասվել, սկսեց հեկեկալ)։ Հիմա էլ այս չարիքը պարգևեց մեզ, իսկ մենք դարձյալ պաշտում ենք նրան, էլի նրա անունն է մեր շուրթերին։ Անքննելի են աստծո գործերը»։ Հանգանակությունից հետո ես գնացի մորեղբորս մոտ ու ասացի. «Ինչ որ ասացիր աստծո մասին... այդպես էլ մտածո՞ւմ ես»։ Եվ մորեղբայրս ասաց. «Հանուն ճարտասանության շատ բան կասես։ Փող էր պետք, գեղեցիկ պիտի խոսեի, որ հավաքվեր։ Ի՞նչ աստված, ի՞նչ բան»։ «Իսկ լա՞ց դ»,— հարցրի ես, ու մորեղբայրս ասաց. «Լացս իսկական էր։ Չկարողացա զսպել։ Քար պիտի լինեի, որ գիմանայի։ Ասա ինձ, ի սեր աստծո, հանուն ինչի՞ աստված մեզ այս դժոխքը գցեց։ Մեր ո՞ր մեղքի համար է այս տառապանքը։ Մարդիկ մեզ հանգիստ չեն տալիս։ Աստված մեզ հանգիստ չի տալիս։ Ի՞նչ ենք արել։ Մի՞թե աստվածավախ ժողովուրդ չենք եղել։ Մեր մեղքը ո՞րն է։ Ես զզվել եմ աստծուց։ Զզվել եմ մարդուց։ Բայց ելնում եմ ու խոսում, որովհետև բերանս ջուր առած նստելու իրավունք չունեմ։ Ինչպե՞ս հաշտվեմ այն մտքի հետ, որ մեր ազգը դեռ շարունակում է կոտորվել։ Հիսուս Քրիստոս, ախր մենք ի՞նչ ենք արել»։

Ես հարցրի Թեոդոր Բաղալին՝ արդյոք նա հայ չի՞։

Նա ասաց. «Ասորի եմ»։

Էհ, դա էլ վատ չէր։ Ասորիները աշխարհի մեր կողմերից են, նրանց քիթը մեր քթի նման է, աչքերը՝ մեր աչքերի, փիրտը՝ մեր սրտի։ Նրանց լեզուն ուրիշ էր, երբ նրանք խոսել են, մենք չենք հասկացել նրանց, բայց, միևնույն է, մեզ շատ նման են եղել։ Իհարկե, ավելի հաճելի կլիներ, եթե պարզվեր, որ Բաղալը հայ է, բայց ասորին էլ վատ չի։

— Ես հայ եմ,— ասացի։— Մի ժամանակ իմ հայրենի քաղաքում մի քանի ասորի ընկերներ ունեի՝ Զոզեֆ Սարգիս, Նիթո Էլիյա, Տոնի Սալիհ։ Գուցե ճանաչո՞ւմ ես։

— Զոզեֆ Սարգսին ճանաչում եմ,— ասաց Բաղալը,— մյուսներին՝ չե։ Մենք Նյու Յորքում ենք ապրել, հինգ տարի առաջ փոխադրվեցինք արիզոնա, նախ՝ Բրլոր, հետո այստեղ՝ Սան Ֆրանցիսկո։

— Նիթո Էլիյան, ասացի ես,— Փրկության բանակում է ծառայում, ավագի կոչում ունի։ Թող որևէ մեկի մտքով չանցնի, թե այս

ամենը հորինում եմ կամ էլ որոշել եմ զվարճացնել սրան-նրան։— Տոնի Սալեհը,— ասացի,— ութ տարի առաջ մեռավ։ Ձին նրան գցեց թամբից ու վազեց, իսկ Տոնիի ոտքը ասպանդակի մեջ էր մնացել, և երբ ձին մի կես ժամ վազելուց հետո վերջապես կանգնեց, մենք մոտեցանք ու տեսանք, որ Տոնին արդեն մեռել է։ Տասնչորս տարեկան էր։ Նույն դրպրոցն էինք հաճախում։ Խելոք տղա էր, թվաբանությունից շատ ուժեղ էր։

Ասորերենի ու հայերենի մասին խոսեցինք, մեր նախնիների երկրի, հիմա այնտեղ տիրող վիճակի մասին ու էլի նման ուրիշ բաներից։ Ես տատնհինգ սենթով սարքում էի մազերս, միևնույն ժամանակ էլ հնարավոր ամեն ինչ անում, որ մի նոր ճշմարտություն գտնեմ։ (Մարդը շատ արժանիքներ ունի, չկարծեք, թե չունի)։

Բաղդին ասաց.

— Ես ասորերեն կարդալ չգիտեմ։ Ճիշտ է, մեր հին հողում եմ ծնվել, բայց կուզեի դա մոռանալ։

Նա հոգնած էր երևում։ Ոչ թե մարմնով, այլ հոգեպես։

— Ինչո՞ւ,— ասացի։— Ինչո՞ւ կուզենայիր մոռանալ։

— Էհ,— քմծիծաղեց նա,— որովհետև այնտեղ ամեն ինչ անցել-գնացել է։— Ես բառացի կրկնում եմ նրա ասածը, ոչինչ չավելացնելով։— Մի ժամանակ մենք մեծ ժողովուրդ ենք եղել,— շարունակեց նա։— Բայց դա երեկ էր, երեկ չէ անցյալ օրը։ Հիմա մենք պարզապես հին պատմություն ենք։ Մեծ քաղաքակրթություն ենք ունեցել։ Դրանով մինչև օրս էլ հիանում են։ Բայց հիմա ես Ամերիկայում եմ ու վարսավիրություն եմ սովորում։ Իբրև ցեղ մենք արդեն չկանք, մեզնից ոչինչ չի մնացել, մեր հաշիվը փակված է, ի՞նչ միտք ունի մեր լեզվով գրել-կարդալը։ Մենք գրողներ չունենք, նորություններ չունենք, միայն այն, որ Անգլիան ժամանակ առ ժամանակ դրդում է արաբներին, որ մեզ կոտորեն։ Սա է եղած-չեղածը։ Բայց դա էլ նորություն չէ, դրան էլ ենք վաղուց ընտելացել։ Այդ լուրերն էլ «Ասոշիեյթիդ Պրեսն» է հասցնում մեզ։

Նրա խոսքերը ցավ պատճառեցին ինձ՝ հայիս։ Սիրտս կսկծաց, ինչպես այն ժամանակ, երբ իմ ժողովուրդն էր կոտորվում։ Առաջին անգամ էի ասորուց նման բան լսում, այն էլ անգլերենով։ Ես համակրեցի այդ երիտասարդ տղային։ Բանն այն է, որ ես սիրում եմ բոլոր մարդկանց, նույնիսկ Հայաստանի թշնամիներին, որոնց անունը, ինչպես տեսնում եք, նրբանկատորեն չեմ տալիս։ Թե ովքեր են դրանք՝ ամենքին է հայտնի։ Առանձին-առանձին վերցրած՝ նրանցից և ոչ մեկի դեմ ես ոչինչ չունեմ, որովհետև նրանց մասին մտածում եմ իբրև ժամանակի այս մի հատվածում ապրող անհատների մասին և, որովհետև

գիտեմ, հաստատ համոզված եմ՝ մարդը ընդունակ չէ գազանություն-ների, գազան է դառնում ամբոխը։ Իմ թշնամանքը ամբոխին է ուղղվ-ված։

— Ինչ արած,— ասացի,— մեր վիճակն էլ մի բան չի։ Մենք էլ հին ազգ ենք։ Ճիշտ է, դեռ ունենք մեր եկեղեցին, դեռ ունենք մի քանի գյուղեր՝ Ահարոնյան, Խաչակյան, էլի մի քանիսը, բայց շատ հարցե-րում ձեր վիճակում ենք։

— Այո,— ասաց վարսավիրը,— գիտեմ։ Սխալ ընտրություն կա-տարեցինք, միամիտ բաների ետևից ընկանք՝ համերաշխություն, խա-ղաղ կյանք, սեր, ընտանիք։ Չեղանք մարտատենչ ու զավթող։ Չբռնե-ցինք դիվանագիտության ու խաբեության ճամփան, մեքենաների հետ գլուխ չդրեցինք, չստեղծեցինք գնդացիրներ ու թունավոր գազեր։ Իսկ հի-մա արդեն ուշ է։ Նույնիսկ հիասթափվելու համար։ Մեր օրն արդեն մթնել է։ Դու գիտե՞ս, թե քանի ասորի է մնացել երկրի երեսին։

— Երկու-երեք միլիոն,— ենթադրեցի ես։

— Յոթանասուն հազար,— ասաց Բադալը։— Ընդամենը յոթանա-սուն հազար ասորի է մնացել աշխարհում, իսկ արաբները էլի շարու-նակում են կոտորել մեզ։ Անցյալ ամիս մի փոքրիկ խռովության ժա-մանակ սպանեցին մերոնցից յոթանասուն հոգու։ Մի երկու տող գրվեց թերթում։ Ոչնչացվեց ևս յոթանասուն ասորի։ Շուտով մեր հետքն էլ չի մնա։ Եղբայրս ամերիկուհու հետ է ամուսնացել, տղա ունի նրանից։ Չէ, էլ ոչ մի հույս, դրա համար էլ աշխատում ենք մոռանալ Ասորեստանը։ Հայրս դեռ կարդում է Նյու Յորքից եկող մեր թերթը, բայց նա ծեր մարդ է, երկար չի ապրի։

Հետո Բադալի ձայնը փոխվեց։ Խոսեց արդեն ոչ թե իբրև ասորի, այլ իբրև վարսավիր։ Հարցրեց. «Հերի՞ք է ինչքան վերցրի վերևից»։

Մեր զրույցի շարունակությունը այլևս ոչ մի հետաքրքրություն չէր ներկայացնում։ Ես հրաժեշտ տվի երիտասարդ ասորուն ու դուրս եկա վարսավիրանոցից։ Չորս մղոն քայլեցի, մինչև հասա Կարլ սթրիթի վրայի իմ սենյակը։ Գլխիցս դուրս չէին գալիս Ասորեստանն ու այդ ասորին՝ Թեոդոր Բադալը, որ վարսավիրություն էր սովորում, նրա թախ-ծոտ ձայնը, նրա հուսահատությունը։ Ամիսներ առաջ էր, օգոստոսին, և այն ժամանակից ի վեր ես Ասորեստանի մասին էի մտածում ու ցան-կություն զգում մի բան ասել Թեոդոր Բադալի մասին՝ հինավուրց ցեղի նորօրյա որդու երիտասարդ, ուժեղ, եռանդով լի, բայց և հուսալքված մարդու մասին։ Յոթանասուն հազար ասորի, ընդամենը յոթանասուն հազար ասորի է մնացել երբեմնի մեծ ժողովրդից, մյուսները մահվան գիրկն են անցել, նրանց հետ էլ փոշիացել է ու ցիրուցան եղել ազգի

երեմնի մեծությունը, և ահա այսօր այդ ազգից մի երիտասարդ Ամերիկայում վարսավիրություն է անում և կսկիծը հոգում գանգատվում պատմության ընթացքից։

Ինչո՞ւ ես սյուժեներ չեմ հորինում, չեմ գրում սիրային գեղեցիկ պատմություններ, որոնցից հեշտությամբ կինոնկար կսարքվի։ Ինչո՞ւ ձեռ չեմ քաշում այս անշնորհակալ ու ձանձրույթ պատճառող նյութից։ Ինչո՞ւ չեմ ջանում հաճոյանալ ընթերցող հասարակայնությանը։

Է՛, լավ, ես հայ եմ։ Բայց Մայքլ Արլենը նույնպես հայ է։ Եվ կարողանում է դուր գալ հասարակությանը։ Ես մեծապես հիացած եմ նրանով, փայլուն ոճ ունի, տիրապետում է նման մյուս բաներին, բայց ես ցանկություն չունեմ գրելու այն մարդկանց մասին, որոնց մասին նա է գրում։ Դրանք մարդիկ չեն, դիակներ են։ Իսկ այովացին, ճապոնացի տղան, Թեոդոր Բագալը՝ ասորին, ուրիշ են։ Գուցեև նրանք մահվան դուռը հասած լինեն՝ ֆիզիկապես, ինչպես այովացին, կամ հոգեպես, ինչպես Բագալը, բայց նրանցում կա այն, ինչը հավերժական է մարդու մեջ և հենց դա է հետաքրքիրն ու հուզողը։ Այսպիսիներին չեք հանդիպի շքեղ վայրերում՝ սեքսից սրամտելիս կամ արվեստից դատարկաբանելիս։ Այսպիսիներին կգտնեք այնտեղ, որտեղ ես գտա, և նրանք միշտ կան ու կլինեն, նրանք են ցեղը մարդկային, մարդու էության այն մասը, որը որչափ Անգլիայինն է, նույնչափ էլ Ասորեստանինը, որը անհնար է ոչնչացնել, որը չի կարող ոչնչացնել ոչ կոտորածը, ոչ երկրաշարժը, ոչ սովը, ոչ խելագարությունը, որն ընդհանրապես ոչ մի ուժ չի կարող ջնջել աշխարհի երեսից։

Այս պատմվածքը նվիրվում է Այովային, Ճապոնիային, Հայաստանին, Ասորեստանին, և մարդկային ցեղին, այդ ցեղի արժանապատվությանը, բոլոր ապրողների եղբայրությանը։ Ես չեմ ակնկալում, թե «Փարամաունտ Փիքչըրսը» այս գործից կինոնկար կսարքի։ Հիմա ես մտածում եմ յոթանասուն հազար ասորիների մասին, որոնցից յուրաքանչյուրն ինքնին մի մեծ ցեղ է։ Մտածում եմ Թեոդոր Բագալի մասին՝ որպես յոթանասուն հազար ու նույնիսկ յոթանասուն միլիոն ասորու, որպես ամբողջ Ասորեստանի մասին, մի մարդու մասին, որն այսօր, 1933-ին, Սան Ֆրանցիսկոյում, վարսավիրանոցի սրահում թե՛ իր կյանքն է ապրում և թե՛ կանգնած է որպես մի մեծ ցեղ։

Սիրելի Մ...

Կուզեի իմանաք, որ այսօր շատ ցուրտ է Սան Ֆրանցիսկոյում, և ես սառչում եմ։ Այնքան ցուրտ է սենյակս, որ ամեն անգամ պատմվածք սկսելիս, ցուրտն ինձ նեղում է, ու ես վեր պիտի կենամ լիցքային վարժություններ անելու։ Ուստի, կարծում եմ, որ մի բան պիտի անել պատմվածք գրողներին տաք պահելու համար։ Մեկ-մեկ շատ ցուրտ ժամանակ էլ եմ գրում, բայց մեկ-մեկ էլ՝ ոչ։ Շատ լավ եղանակին էլ է նույնը։ Չեմ սիրում, երբ օրս առանց պատմվածք է անցնում, և ահա թե ինչու եմ գրում նամակս՝ իմացած եղեք, որ սաստիկ բարկացած եմ եղանակի վրա։ Չկարծեք, թե նստած եմ մի սքանչելի ու տաք սենյակում, ինչպես ասում են՝արևոտ Կալիֆոռնիայում, ու բաներ եմ հորինում ցրտի մասին։ Շատ ցուրտ մի սենյակում եմ, արևի նշույլ իսկ չկա ոչ մի տեղ։ միակ բանը, որից կարող եմ խոսել, ցուրտն է, քանի որ այսօր ցրտից բացի ոչինչ չկա։ Սառչում եմ, ատամներս իրար են գալիս։ Կուզեի իմանալ, թե դեմոկրատական կուսակցությունը երբևիցե ինչ է արել մրսող գրողների համար։ Մնացած բոլորը ջերմություն ստանում են։ Մենք ենք, որ կախյալ պիտի լինենք արևից, իսկ ձմռանն արևն անկախ է։ Սա է դրությունս։ Ուզում եմ գրել և ի վիճակի չեմ՝ ցրտի պատճառով։

Անցյալ տարի, ձմռան մի օր արևը դուրս նայեց, շողերն իմ սենյակը լցվեցին ու ընկան սեղանիս, տաքացնելով սեղանս ու սենյակս, տաքացնելով ինձ։ Մի թեթև լիցքային վարժություն արեցի ու սկսեցի պատմվածք գրել։ Բայց օրը՝ ձմռան օր, մինչ առաջին պարբերությունը կգրեի, արևն ամպերի տակ մտավ, և ցուրտ սենյակում նստած պատմվածք պիտի գրեի։ Այնքան լավ պատմվածք էր, որ թեպետ գիտեի՝ երբեք չի տպվելու, շարունակել էր պետք, և ի արդյունք՝ ավարտելիս սառույց կտրեցի։ Դեմքս կապտել էր, ձեռք ու ոտք շարժել չէի կարողանում. շատ էի սառել ու փայտացել։ Սենյակս լցվել էր մի տուփ «Չեսթերֆիլդի» ծխով, բայց ծուխն էլ էր սառած։ Ծխի ամպ էր կանգնած սենյակիս մեջ, բայց, մեկ է, ցուրտ էր։ Մի անգամ, գրելիս մտքովս անցավ տաշտի պես բան գտնել ու մեջը կրակ անել։ Մտքինս իմ գրքերից մի կես դյուժին վառելն էր, որ տաքանամ ու կարողանամ գրել։ Մի հին տաշտ գտա, ներս բերեցի, բայց երբ սկսեցի վառելու գիրք փնտրել, ոչինչ չկարողացա գտնել։ Բոլորը հին ու թանկ գրքեր էին։ Մոտավորապես հինգ հարյուր գիրք ունեմ, մեծ մասին մի քանի սենթ եմ տվել,

բայց երբ նայեցի վառելիք գրքերի վերնագրերին, ոչինչ չկարողացա առանձնացնել։ Գերմաներեն մի խոշոր ու ծանր գիրք կար՝ մարդակազմության մասին, լավ կրակ կբռներ, բայց երբ բացեցի ու այդ գեղեցիկ լեզվով մի տող կարդացի՝ «Hüftgelenkbeugemuskeln des Oberschenkels, von denen der eine breitere» և այլն, ձեռքս չգնաց։ Մեծ բան էր պահանջվում ինձնից։ Լեզուն չէի հասկանում, ամբողջ գրքից մի բառ չգիտեի, բայց մի տեսակ շատ պերճախոս գիրք էր՝ վառելու համար։ Երկու թե երեք տարի առաջ հինգ սենթ էի տվել, վեց ֆունտ կկշռեր, այնպես որ, տեսնում եք, նույնիսկ որպես վառելիք լավ բան էի առել, ու ես ընդունակ պիտի լինեի պատռել էջերն ու կրակ անել։

Այնինչ, ձեռքս չգնաց։ Ավելի քան հազար էջանոց գիրք էր, նախատեսել էի էջ առ էջ վառել ու տեսնել յուրաքանչյուր էջի կրակը, բայց հենց պատկերացրեցի այդ ամբողջ տպագրությունը՝ կրակի ճարակ դարձած, և այդ ճշգրիտ լեզուն՝ իմ գրադարանից չքացած, ձեռքս չգնաց, ու մինչև հիմա այդ գիրքն ունեմ։ Երբ հոգնում եմ խոշոր գրողներ կարդալուց, այդ գրքին եմ դիմում ու կարդում մի լեզվով, որը չեմ հասկանում՝ «während der Kindheit ist sie von birnförmiger Gestalt und liegt vorzugsweise in der Bauchhöhle»։ Ուղղակի սրբապղծություն է այդպիսի լեզվի հազար էջը վառելու մասին մտածելը։ Դեռ չասած, որ չեմ հիշատակել սքանչելի նկարազարդումները։

Հետո սկսեցի ավելի էժանագին ընթերցելիք փնտրել։

Դուք էլ գիտեք, որ աշխարհը լիքն է նման գրքերով։ Տասից ինը էժանագին, անարժեք, անկենդան բաներ են։ Էհ, կարծում եմ, որ իմ գրադարանում առնվազն կես դյուժին այդ գրքերից կան, որոնք կարող էի վառել, տաքանալ ու պատմվածքս գրել։ Այնպես որ վեց գիրք ընտրեցի, որոնք իրար հետ նույնքան էին կշռում, ինչքան գերմաներեն մարդակազմության գիրքը։ Առաջինը «Թոմ Բրաունը Օքսֆորդում։ Դպրոցական տարիների շարունակություն»-ն էր։ Երկու մասը՝ մի գրքով։ Առաջին մասը 378 էջ էր, երկրորդը՝ 430, այս ամենից մի թեթև կրակ կլիներ ու բավական ժամանակ կվառվեր, բայց չէի կարդացել ու ինձ թվում էր, թե իրավունք չունեմ չկարդացած բանը վառել։ Պետք է որ էժանագին արձակ լիներ, հենց վառելու արժանի, բայց ձեռքս չգնաց։ Կարդացի. «Զանգակատունը երերում ու թնդում էր, երբ համաղողանջը՝ մերթ ուրախ, մերթ լարախինդ կամ լալահառաչ, դուրս էր հորդում նեղլիկ պատուհաններից դեպի հարավ-արևմտյան քամու գիրկը, որ պար էր բռնել Էնգելբեռնի եկեղեցու հնամենի, մոխրագույն գմբեթի շուրջը»։ Լ. Հոյակապ արձակ չէ, բայց մյուս կողմից այնքան էլ վատ չէ։ Այնպես

որ գիրքը դրեցի տեղը։ Հաջորդը «Ինեա։ Պատմություն Ալամոյի» գիրքն էր՝ նվիրված Տեքսասի հայրենասերներին։ Հեղինակը ուրիշ գրքեր էլ ուներ, որոնցից մեկը կոչվում էր «Բելահ», մյուսը՝ «Սենտ Էլմո»։ Միակ բանը, որ գիտեի այդ կին գրողի ու նրա գրքերի մասին, այն էր, որ օրերից մի օր ինչ-որ օրիորդի խիստ հանդիմանել էին «Սենտ Էլմոն» դասարան բերելու համար։ Ասել էին, թե այդ տեսակ գիրքը կարող է խաթարել ջահել աղջկա բարոյականությունը։ Բացեցի ու կարդացի. «Ես մեռնում եմ։ Ու զգալով, որ քիչ է մնացել ապրելու, առանց երկնչելու խոսում եմ ազատ ու անկեղծ։ Ոմանք կկարծեն, թե ելնում եմ իմ սեռի բարեպատշաճության եզրերից, սակայն տվյալ հանգամանքներում զգում եմ, որ՝ ոչ։ Երկար ժամանակ եմ քեզ սիրել, և գիտակցումը, որ դա փոխադարձ էր, խորունկ ու անպատմելի ուրախության աղբյուր է եղել ինձ համար»։ Եվ այլն։

Սա այնքան վատ գրվածք էր, որ արդեն լավն էր։ Ու ես որոշեցի առաջին իսկ հարմար առիթով լրիվ կարդալ։ Երիտասարդ գրողը շատ բան ունի սովորելու մեր ամենաողորմելի գրողներից։ Խիստ կործանարար բան է վատ գրքեր վառելը, համարյա ավելի կործանարար, քան լավ գրքեր վառելը։

Հաջորդը Թ. Ս. Արթուրի «Տասը գիշեր դատական ատյանում և թե ինչ տեսա այնտեղ» գիրքն էր։ Էհ, նույնիսկ սա շատ լավ գիրք էր՝ կրակ տալու համար։ Մյուս երեքի հեղինակներն էին Հոլլ Քեյնը, Բրանդրը Մեթյուզը և Էպտոն Սինքլերը։ Միայն միստր Սինքլերի գիրքն էի կարդացել, ու թեպետ չէի հավանել որպես գրվածք, վառել չէի կարող, քանի որ տպագրությունն էր շատ հոյակապ, կազմն էր շատ լավը։ Տպագրական առումով դա իմ լավագույն գրքերից էր։

Ինչևիցե, ոչ մի գրքի և ոչ մի էջը չվառեցի, ցրտից սառչելով շարունակեցի գրել։ Ժամանակ առ ժամանակ լուցկի էի վառում, ինքս ինձ հիշեցնելու համար, թե ինչ տեսք ունի բոցը, ջերմության պատկերացումը չկորցնելու համար։ Հերթական սիգարետը վառելուց էր դա լինում, և փոխանակ փչելու, թողնում էի, որ լուցկին մատներս վառի։

Հիմա ասեմ՝ եթե դու նվազագույն հարգանք ունես գիրք սած բանի նկատմամբ ու գիտես, թե ինչ նշանակություն ունեն գրքերը կյանքում, եթե հավատ ունես թղթի ու տպագրության նկատմամբ, ապա չես կարող որևէ գրքի որևէ էջը վառել։ Նույնիսկ, եթե սառչում ես։ Նույնիսկ, եթե ինքդ ես փորձում մի բան գրել։ Չես կարող։ Մեծ բան է պահանջվում դրա համար։

Այսօր իմ սենյակում նույն գուրտն է, ինչ այն օրը, երբ ուզում էի գիրք վառել։ Ցրտի մեջ նստած, ծխում եմ, աշխատելով թղթին հանձնել

Այս ցուրտը, որպեսզի, երբ Սան Ֆրանցիսկոյում նորից տաք օրեր գան, չմոռանամ, թե ինչպես էր ցուրտ օրերին։

Մի փոքր նվագարկիչ ունեմ, և երբ տաքանալու համար ուզում եմ վարժություններ անել, միացնում եմ։ Բայց երբ շատ է ցուրտ, նվագարկիչը չի աշխատում։ Ինչ-որ բան է խափանվում ներսում, քսուքն է սառչում կամ անվակները չեն պտտվում, և ստիպված՝ ձեռքերս ծալում ու թափահարում եմ առանց նվագի։ Զգի նվագակցությամբ վարժություններ անելուց հաճելի բան չկա, բայց երբ շատ է ցուրտ, նվագարկիչը չի աշխատում ու վիճակս դառնում է անտանելի։ Առավոտյան ժամը ութից այստեղ եմ, հիմա հինգից քառորդ է պակաս, ու վիճակս արդեն անտանելի է։ Ատելով ատում եմ, երբ օրն անցնում է առանց մի բան անելու, առանց մի բան ասելու. ամբողջ օրն ահա այստեղ եմ՝ գրքերիս հետ, որոնք չեմ կարդացել, փորձում եմ սկսել ու գործս առաջ չի գնում։ Ժամանակի մեծ մասը սենյակը չափչփելու վրա կորավ (ցանկացած ուղղությամբ երկու քայլ հետո պատի ես դեմ առնում), մեկ էլ՝ ձեռքերս ծալելու և թափահարելու։ Հիմնականում դա էր արածս։ Մի քանի անգամ փորձեցի նվագարկիչը, որ տեսնեմ, թե չի՞ բարձրացել արդյոք ջերմաստիճանը, բայց ջերմաստիճանը չէր բարձրացել, և նվագարկիչը լուռ էր։

Մտածեցի, որ հարկավոր է ձեզ պատմել այս մասին։ Մի մեծ բան չէ։ Թերևս հիմարություն է ցրտից մեծ բան սարքելը, բայց միաժամանակ այսօրվա ցուրտը փաստ է, տվյալ պահին՝ մեծ բան, ու դա՛ եմ ասում։ Ինձ զարմացնողն ու հիացնողն այն է, որ գրամեքենաս այսօր ոչ մի անգամ չխափանվեց։ Մենդյան տոներից առաջ, երբ մեզ մոտ սառուցիկ ցրտեր էին, անընդհատ խափանվում էր։ Այն ժամանակ ոչինչ չկարողացա անել։ Ուրիշ տեսակի յուղ էի գործածել՝ դրանից էր։ Բայց սրտի մասին գրելուս ընթացքում գրամեքենան իր գործը գերազանց է անում և դա զարմացնում ու հիացնում է ինձ։ Հաճելի է, որ չնայած սրտին, այս մեքենան կարող է վերարտադրել իմ օգտագործած լեզուն։ Դա ինձ քաջալերում է, որ ինչ էլ լինի, մեքենայից չհեռանամ։ Ինքս ինձ ասում եմ՝ եթե գրամեքենան աշխատում է, ուրեմն դու էլ պիտի աշխատես նրա հետ միասին։ Դա՛ է մնում. եթե ցրտի պատճառով խելքը գլխին պատմվածք գրել չես կարող, ուրիշ բան գրիր։ Մի որևէ բան։ Մեկնումեկին երկար նամակ գրիր։ Պատմիր, թե ինչպես ես մրսում։ Մինչև նամակը տեղ հասնի, արևը նորից կերևա, նորից կտաքանաս։ Բայց նամակը կմնա՝ ցուրտը հիշեցնելով։ Եթե այնքան ցուրտ է, որ չես կարող թեկուզ շարքային, օրվա արձակ ստեղծել, ոչի՛նչ, գրոնչը

տանի, ինչ ուզում ես, ասա, միայն թե ճշմարիտ լինի։ Ասա, թե ինչպես են սառչում ոտքերիդ մատները, ասա, թե ինչպես էիր ուզում գիրք վառել՝ տաքանալու համար, բայց ձեռքդ չդնաց, նվագարկիչից խոսիր։ Պատմիր ցուրտ օրվա մանր-մունր, անկարևոր բաներից, երբ միտքդ քարացել էր, ձեռք ու ոտքդ սառել։ Պատմիր, թե ինչ էիր ուզում գրել, բայց չկարողացար։ Ահա թե ինչ էի ասում ինքս ինձ։

Սուրճ խմելուց հետո այսօր առավոտյան այստեղ եկա կարևոր մի պատմվածք գրելու համար։ Սուրճն ինձ տաքացրել էր ու չէի պատկերացնում, թե ինչքան ցուրտ է։ Թուղթ վերցրեցի և սկսեցի մտմտալ, թե ինչ եմ մտադիր ասել այդ կարևոր պատմվածքում, որն արդեն չի գրվի, քանի որ եթե կորցնում եմ մի բան, կորցնում եմ ընդմիշտ, ինչպես այդ պատմվածքը, որ ընդմիշտ կորած է ինձ համար, ցրտի պատճառով։ Ցուրտը մարմինս է մտել, համրացրել է ինձ ու ստիպում է վեր թռչել աթոռի վրայից ու վարժություններ անել։ Է ինչ, կարող եմ հենց դա ձեզ պատմել։ Կարող եմ պատմել, թե իրենից ինչ էր ներկայացնելու այդ պատմվածքը՝ որքան հիշում եմ, բայց որը չգրեցի ու կորսված է այլևս։ Դա որոշ պատկերացում կտա ձեզ, թե ինչպես եմ գրում։

Հայտնեմ ձեզ, թե ինքս ինձ ինչ էի ասում այսօր առավոտյան, երբ մտմտում էի այդ պատմվածքը։

Պատկերացրու Ամերիկան՝ ինքս ինձ ասում էի առավոտյան։ Ամբողջությամբ։ Քաղաքները, բոլոր շինությունները, բոլոր մարդկանց, նրանց գալն ու գնալը, երեխաների գալը, նրանց գնալը, մարդկանց գալն ու գնալը և մահը, և կյանքը, շարժումն ու խոսակցությունը, մեքենաների աղմուկը, ճառասանները, մտածիր Ամերիկայի ցավի մասին, նաև՝ սարսափի, ներքին խորը կարոտի մասին՝ կենդանի ամեն ինչի մեջ Ամերիկայում։ Հիշիր վիթխարի մեքենաներն ու անիվների պտույտը, ծուխ ու կրակը, հանքահորերն ու այնտեղ աշխատողներին, ժխորը, իրարանցումը։ Հիշիր լրագրերն ու կինոթատրոնները և այն ամենն, ինչ այս կյանքի մասնիկն է կազմում։ Թող քո նպատակը լինի՝ նկատի ունենալ վիթխարի մի երկիր։

Հետո դիմիր որոշակի, առանձին մի բանի։ Դիմիր միակ մի մարդու և նրա հոգին թափանցիր։ Սիրելով, ջանալով հասկանալ նրա գոյության հրաշքը, ցույց տալով նրա գոյի խորհուրդը, բացահայտիր այն պարզ փաստի հրաշքը, որ նա կա, ապրում է, ու հենց դա էլ պատմի, մեծ արձակով, պարզ, ցույց տուր, որ նա ծնունդն է ժամանակի, մեքենաների, ծուխ ու կրակի, լրագրերի և աղմուկի։ Հետևիր նրան դեպի ի գաղտնիքն ու խոսիր դրա մասին նրբորեն, նկատել տալով, որ դա մար

դա մարդու գաղտնիք է։ Մի ստիր։ Բաներ մի մոգոնիր՝ որևէ մեկին սիրաշահելու համար։ Պատմվածքիդ մեջ ոչ մեկին սպանելու հարկ չկա, ուղղակի ասա, թե ինչն է ամբողջ պատմության, բոլոր ժամանակների մեծագույն երևույթը՝ սովորական գոյության պարզ ու համեստ ճշմարտությունը։ Ավելի մեծ թեմա չկա։ Կարիք չկա, որ մեկնումեկը բռնություն գործի՝ քո արվեստի մեջ քեզ օգնելու համար։ Բռնությունը կա՝ հիշեցրու, իհարկե, երբ հիշեցնելու ժամանակն է։ Պատերազմը հիշեցրու։ Բոլոր այլանդակությունները, բոլոր կորուստները հիշեցրու։ Նույնիսկ դա՝ սիրելով արա։ Սակայն շեշտիր պարզ գոյության սքանչելի ճշմարտությունը։ Դա է գլխավոր թեման։ Քեզ պետք չէ ծայր լարումներ ստեղծել։ Մարդը, ում մասին գրում ես, հերոսական կամ հրեշավոր բաներ անելու կարիք չունի՝ գրածդ մեծ արձակ դարձնելու համար։ Թող անի այն, ինչ արել է միշտ, օրը օրի վրա, շարունակելով ապրելը։ Թող քայլի ու խոսի ու մտածի ու քնի ու երազներ տեսնի ու արթնանա ու նորից քայլի ու նորից խոսի ու շարժվի ու ապրի։ Այդքանը բավական է։ Գրելու ուրիշ բան չկա։ Կյանքում դու երբեք պատմվածք չես տեսել։ Կյանքի դեպքերը երբեք պատմվածքի ձև կամ պոեմի ձև կամ ուրիշ որևէ ձև չեն ընդունում։ Սեփական գիտակցությունդ միակ ձևն է, որ պետք է քեզ, միայն արթուն միտքդ է քեզ պետք։ Խոսիր այդ մարդու մասին, ճանաչիր նրա գոյը։ Խոսիր մարդու մասին։

Է, սա խղճուկ պատկերացում է, թե ինչ պիտի լիներ պատմվածքը։ Երբ ինքս ինձ ասում էի, թե ինչ ու ինչպես գրեմ, սուրճն ինձ տաքացրել էր, բայց հիմա սառչում եմ և այսքանից ավելի չեմ կարող գլխումս եղածին մոտ գնալ։ Սքանչելի մի բան պիտի լիներ, բայց հիմա լոկ ապոտ հիշողություն է մնացել այդ պատմվածքից։ Առնվազն, կարող եմ հիշողությունն արտահայտել բառերով։ Վաղը մի ուրիշ պատմվածք եմ գրելու։ Պատկերը դիտելու եմ ուրիշ տեսանկյունով։ Ստույգ չգիտեմ, բայց կարող եմ աքլորանալ ու ծաղրի ենթարկել այս երկիրն ու իր կյանքը։ Հնարավոր է։ Կարող եմ անել։ Նախկինում արել եմ, և երբեմն, երբ քաղաքական կուսակցություններից ու քաղաքական գործարքներից ցնդում եմ, նստում ու ծաղրում եմ մեր այս մեծ երկիրը։ Ես դատապարտում եմ ու մարդուն ներկայացնում որպես նեխած, անարժեք, անմաքուր մի բան։ Դա չէ մարդը, բայց ես ձևացնում եմ, որ դա է։ Մի ուրիշ, նվազ որսալի բան է, բայց ծաղրելու համար ավելի հարմար է ձևացնել, թե հենց դա է մարդը։ Իմ գործը ճշմարտությանը հասնելն է, սակայն երբ սկսում ես ծաղրել, գրողի ծոցն ես ուղարկում ճշմարտությունը։ Ոչ ոք չի ասում ճշմարտությունը։ Ինչի՞ համար ես ասեմ։ Բո-

լորը հաճելի ստեր են ասում, դուրեկան պատմվածքներ ու վեպեր գրում, ինչի՞ համար ես անհանգստանամ՝ ճշմարտության ցավն ի՞նձ են տվել։ Ճշմարտություն չկա։ Եղածը քերականություն է, կետադրություն ու նման բաներ։

Բայց իմ գիտցածն իմն է։ Կարող եմ ցնդել այս կամ այն բանից ու ծիծաղի տալ, բայց իմ գիտցածն իմն է։ Եվ այդ ամեն ինչը լավագույն դեպքում բավական տխուր է ու սրտաշարժ։

Ամբողջ օրս անցավ այս սենյակում, սառչելով, ուզում էի բոլոր ապրողներիս մասին մի հիմնավոր ու մաքուր բան ասել, բայց այնքան ցուրտ էր, որ ոչինչ չստացվեց։ Արածս միայն ձեռքերս թափահարելը, ծխելն ու ինձ նողկալի զգալն եղավ։

Առավոտ վաղ, երբ սուրճն ինձ տաքացրել էր, այդ մեծ պատմվածքը գլխիս մեջ էր՝ պատրաստ դառնալու տպագիր նիշեր, բայց կորավ գնաց։

Միակ բանը, որ կարող եմ հիմա ասել, այն է, որ Սան Ֆրանցիսկոյում սաստիկ ցուրտ է ու ես սառչում եմ։

ՃՈՃԱՁՈՂՈՎ ՍԱՎԱՌՆՈՂ ԽԻԶԱԽ ՊԱՏԱՆԻՆ

1. Քնած

Հորիզոնական արթնություն՝ տիեզերքի անհունում, ծիծաղի ու հրճվանքի վարժանք, ծաղրանք, վերջն ամեն ինչի՝ Հռոմի, և ինչու ոչ՝ Բաբելոնի, սեղմած ատամներ, հուշ, հրաբխային ջերմի հորձանք, Փարիզի փողոցները և դաշտերը Երիքովի, երևակայական զեռունների անվերջանալի սողքը, ջրաներկի ցուցահանդես, ծովն ու ձկներն՝ իրենց աչքերով, սիմֆոնիա, մի սեղան՝ էյֆելյան աշտարակի պոնկին, ջազ՝ օպերային թատրոնում, զարթուցիչ, և գոփապարը ճակատագրի, զրույց ծառի հետ, Նեղոսը, Դոստոևսկու աղաղակը և մի խավար արև։

Այս հողագունդը, դեմքն այստեղ ապրողի, անմարմին մի ձև, հեկեկոց՝ ձյան վրա, ճերմակ մեղեդի, հսկայական ծաղիկ՝ երկու աշխարհի չափ, սև-սև ամպեր, վանդակված հովազի անքթիթ նայվածք, անմահության տարածք, թևքերը քշտած խմոր հունցող միստր Էլիոթը, Ֆլոբեր և Գի դը Մոպասան, նախնական իմաստը՝ անբառ հանգերով, Ֆինլանդիա, մաթեմատիկան՝ փայլուն ու սայթաքուն, ինչպես կանաչ սոխն ատամի տակ։ Երուսաղեմ, պարադոքսի մի կածան։

Խորունկ երգը մարդու, նենգամիտ շշունջը անտեսանելի, սակայն ծանոթ թվացող մեկի, խորշակ՝ եգիպտացորենի արտում, շախմատ, չեզոքացված թագուհի, արքա, Կառլ Ֆրանցը, սև «Տիտանիկը», միստր Չապլինն՝ արտասվելիս, Ստալին, Հիտլեր, հրեաների բազմություն, վաղը երկուշաբթի է և փողոցներում էլ չեն պարելու։

Օ՜, կյանքի սրընթաց պահ, որ անցար, ու վերստին՝ երկիր։

2. Արթուն

Նա (ապրողը) հագնվեց ու սափրվեց, հայելու մեջ չհավանեց իրեն։

— Դեշ եմ,— ասաց,— փողկա՞պս ուր է։ (Մեկն ուներ միայն)։

Սուրճ և գորշ երկինք, խաղաղ օվկիանոսից եկող մշուշ, անցնող մեքենայի վնգոց, քաղաք շտապող մարդիկ, և կրկին՝ ժամանակը, օրը, արձակն ու չափածոն։ Աստիճաններով արագ ցած իջավ, քայլեց փողոցով ու մտքովն անցավ. «Միայն քնի մեջ է մարդ իրեն ապրելիս զգում։ Միայն քնի՝ կենարար այդ մահու մեջ ենք ճանաչում ինքներս մեզ ու հեռավոր մեր երկիրը, աստծուն ու սրբերին, մեր հայրերի անունները, անցած պահերի իմաստը։ Միայն քնի մեջ են դարերը դառնում ակնթարթ, անհունը վերածվում է հավերժի մանրիկ, շոշափելի մասնիկի»։

Նա մխրճվեց օրվա մեջ՝ ծայր սթափությամբ, կրունկներն աշխուժով սալարկն էին կոկտացնում, աչքերը որսում էին փողոցների ուշադիր առերևույթ ճշմարտությունը, առօրեականության ճղճիմ ճշմարտությունը։ Իրենից անկախ ուղեղում հնչեց.

Անկշիռ, թեթև՝ թռչում էր օդով
Խիզախ պատանին, իր ճոճաձողով։

Ապա ծիծաղեց ամբողջ հոգով։ Իրոք, հոյակապ առավոտ էր՝ գորշ, լուսաբաց, շտապամադրող, առավոտ էր՝ ներքին կորով պահանջող։ «Ա՜հ, Էդգար Գեստ,— ասաց,— ինչպես եմ կարոտել քո երաժշտությանը»։

Առվի մեջ մի մետաղադրամ տեսավ՝ 1923 թվականին կտրած պենսոնոց էր։ Դրեց ափի մեջ, երկար զննեց, հիշեց, թե ինչ է եղել այն թվականին ու մտածեց Լինկոլնի մասին, ում կիսադեմը դրոշմված էր պենսոնոցին։ Ի՞նչ կարող ես անել մի պենսանոցով։ Ավտոմեքենա կգնեմ, մտածեց նա, պճնամոլի պես կհագնվեմ, հյուրանոցային պոռ-

նիկների մոտ կգնամ, կխմեմ ու կճաշեմ, հետո էլ հանգիստս կառնեմ։ Կամ՝ կդցեմ անցքի մեջ ու կկշռվեմ։

Չքավորությունը գուցեև լավ բան է, սակայն սովածությունն անտանելի է։ Դատարկ ստամոքս. ի՞նչ ախորժակ ունի ամփոփած, ինչպես է անձնատուր ուտելիքին։ Նա հիշեց, թե ուտելու ինչպիսի պահանջ ունի։ Ամենօրյա կերը հացն էր, սուրճը և ծխախոտը և այսօր հաց էլ չուներ։ Առանց հաց սուրճից ի՞նչ ընթրիք, իսկ զբոսայգում եղածն այն խոտը չէր, որը հնարավոր լիներ խաշել սպանախի պես։

Ճշմարիտն ասած, սովից կիսամեռ էր նա, և մեռնելուց առաջ ընթերցվելիք գրքերի ծայրը չէր երևում։ Հիշեց Բրուկլինի հիվանդանոցի իտալացի պատանուն։ Վտիտ ու վատառողջ այդ ծառայողի անունը Մուլլիկա էր, նա ասում էր հուսալքված. «Մեռնելուցս առաջ Կալիֆորնիան մի անգամ էլ տեսնեի»։ Լրջորեն մտածեց. «Մի անգամ էլ կարդայի «Համլետը» կամ գուցե «Հեքլբերի Ֆիննի արկածները»։

Հենց այստեղ՝ մեռնելու մտքից նա վերջնականապես արթնացավ՝ ըստ էության, դա տևական թմրության վիճակ էր։ Ոմն պատանի կարող է մեռնել հենց այնպես՝ մտածեց նա, սովից արդեն համարյա կիսամեռ։ Ջուրը և արձակը սքանչելի բաներ են, դրանցով է լեցուն օրգանական ոլորտը, սակայն սնունդ դառնալ չեն կարող։ Գոնե մի գործ գտներ՝ օրավարձով, աննշան մի գործ՝ ի շահ առևտրի։ Եթե թողնեին օրնիբուն նստեր մի սեղանի մոտ և գումարեր, հաներ, բաժաներ ու բազմապատկեր եկամուտների թվերը, գուցեև չմեռներ։ Կգներ ուտեստեղենի բոլոր տեսակները, Նորվեգիայից, Իտալիայից, Ֆրանսիայից բերված անծանոթ խորտիկներ, մսի ու ձկան, պանրի զանազան տեսակներ, նաև խաղող, թուզ, տանձ, խնձոր ու սեխ, որոնք կվայելեր քաղցը հագեցնելուց հետո։ Կարմիր խաղողի մի ողկույզ կգներ սկուտեղի մեջ, երկու սև թուզ, խոշոր ու դեղին մի տանձ, կանաչ մի խնձոր։ Կտրած սեխը ժամերով կպահեր քթի տակ։ Ֆրանսիական երկարուկ ու կարմրրած հացեր կգներ, տեսակ-տեսակ բանջարեղեն, միս, կյանք։

Բլրի կատարից նա տեսավ արևելքի կողմը սփռվող վեհապանծ ու բարձրաշտարակ քաղաքը՝ իր մեջ կարծրացած, ու հանկարծ զգաց, որ մուտք չունի այնտեղ, և համարյա վստահ էր, որ երբեք չի էլ ունենա, համարյա համոզված էր, որ ինչ-ինչ եղանակով իրեն վիճակվել է ընկնել թերևս մի ուրիշ երկիր, մեկ ուրիշ դար, ու ահա ինքը՝ քսաներկուամյա երիտասարդ, շարունակ շպրտվում, դուրս է մղվում այնտեղից։ Այդ միտքը նրան չդառնացրեց։ Ինքն իրեն ասաց. «Շուտով երևի ապրելու թույլտվության խնդրագիր գրեմ»։ Մեռնելու միտքն ընդունեց

առանց խղճահարության թե՛ իր, թե՛ այլոց համար, հանգիստ, որ ի վերջո մի գիշեր էլ պիտի քնի։ Հաջորդ օրվա կացարանի վարձը մուծված էր, մի էգուց ևս ուներ։ Դրանից հետո կարող էր գնալ այնտեղ, ուր բոլոր անտուները։ Կարող էր նույնիսկ Փրկության բանակին միանալ, աղոթքներ երգել առ Աստված ու Քրիստոս (որ չընդունեցի՞ն իմ խեղճ հոգին), լինել փրկված, կուշտ և ծածկի տակ։ Սակայն գիտեր, որ անողը չի։ Իր կյանքն իրենն էր։ Ցանկություն չուներ այդ փաստն աղճատել։ Որևէ այլ ելք նախընտրելի էր։

«Անկշիռ, թեթև՝ թռչում էր օդում...»,— մեղմ հնչեց գլխում։ Զվարճալի էր, անչափ ծիծաղելի։ Աստծու մոտ տանող ճոճաձող, կամ՝ դեպի անհայտություն, ինչ-որ հավերժություն սլացող ճոճաձող, և նա ուժ աղերսեց, որ իր այդ թռիչքը գեղեցիկ լինի։

«Մի սենթ ունեմ,— ասաց։— Ամերիկյան մետաղադրամ է։ Երեկոյան կշտեմ, մինչև որ փայլի արեգակի պես, գրվածը կուսումնասիրեմ»։

Այժմ նա բուն քաղաքում էր, քայլում էր մարդկանց հոսանքի միջով։ Մի երկու տեղ ուներ մտնելու։ Խանութների հայելապատ ցուցափեղկերի մեջ իր պատկերը տեսավ ու հիասթափվեց իրենից։ Ամենևին էլ այն ուժեղ մարդը չէր, որպիսին զգում էր իրեն, իրականում մարմնի բոլոր մասերն անհաստատ տեսք ունեին՝ վիզը, ուսերը, ձեռքերը, ողնաշարը, ծնկները։ «Սա մի բան չէ»՝ ասաց, ջանաց ի մի բերել թուլացած մարմինն ու բռնազբոսիկ շիտակ և հաստատուն տեսք ընդունեց։

Բազում ռեստորանների մոտով անցավ մի հոյակապ ինքնատիրապետումով, աչքն անգամ չբարձրացնելով, ապա տեղ հասավ ու ներս մտավ։ Վերելակով բարձրացավ յոթերորդ հարկ, անցավ միջանցքով ու լցվեց գործակալության դուռը։ Քսանի չափ երիտասարդներ կային այնտեղ, մի անկյուն գտավ՝ իր հերթին սպասելու։ Վերջապես մեծ շնորհ արեցին, և շորչոփ ու ծանծաղ, հիսնամյա մի օրիորդ սկսեց հարցափորձը...

— Ասացեք հապա, ի՞նչ կարող եք անել։

Պատանին շփոթվեց։

— Կարող եմ գրել,— ասաց նա սրտաշարժ։

— Այսինքն, լավ ձեռագի՞ր ունեք,— հարցրեց պառաված օրիորդը։

— Է, ոչինչ։ Բայց ուզում եմ ասել, որ գրել գիտեմ։

— Ի՞նչ գրել,— արդեն բարկացած էր օրիորդը։

— Արձակ,— պատասխանեց ուղղակի։

Հետևեց դադար։ Վերջապես օրիորդը հարցրեց.

— Մեքենագրել գիտե՞ք։

— Անշուշտ։

— Նատ լավ,— շարունակեց օրիորդը։— Ձեր հասցեն ունենք։ Տեղյակ կպահենք։ Այսօր ոչինչ չկա, ոչինչ։

Մյուս գործակալությունում համարյա նույնն էր, միայն թե հարցուփորձ անողը փքված մի երիտասարդ էր՝ անչափ նման խոզի։ Գործակալություններից հետո մտավ մեծ խանութները. ահագին ճոխություն, մի քիչ նվաստացում, ի վերջո՝ տեղեկացում, որ գործ չկա։ Դա չվշտացրեց նրան, զարմանալիորեն չէր զգում նույնիսկ, թե ինչ անհեթեթ վիճակի մեջ է ընկել. կենդանի մի մարդ, որ դրամի կարիք ունի ապրելու համար, վաստակելու այլ միջոց չունի, քան աշխատելը, իսկ աշխատանք չկա։ Բացարձակ վերացական մի խնդիր, որ վերջին անգամ ճգնում էր լուծել։ Հիմա արդեն գոհ էր, որ հարցը վճռվեց։

Նա ըմբռնել սկսեց իր կյանքի որոշակի ընթացքը։ Առանձին պահեր չհաշված, ծայրաստիճան տարերային էր ամեն ինչ, սակայն հիմա, վերջին այս պահերին նա լի էր համոզումով, որ այլևս այդպես չպետք է լինի։

Անհամար խանութների և ռեստորանների մոտով հասավ Երիտասարդների քրիստոնեական ընկերություն, թուղթ ու թանաք վերցրեց ու սկսեց իր խնդրագիրը կազմել։ Մի ժամի չափ գրում էր այդ փաստաթուղթը, ապա հանկարծ գաղջ օդից թե քաղցից գլուխը պտտվեց։ Կարծես ինքն իր միջից դուրս էր լողում՝ ձիգ թևալողով։ Շտապ փողոց ելավ, Կենտրոնական զբոսայգում, հանրային գրադարանի դիմաց ահագին ջուր խմեց ու մի քիչ թարմացավ։ Խճապատ ճեմուղու մեջտեղում, ծովորորներով ու աղավնիներով շրջապատված մի ծերունի թղթե խոշոր ծրարի միջից բուռ-բուռ հացի փշրանք էր հանում և շաղ տալիս թռչուններին՝ բարեկիրթ շարժումներով։

Մշուշոտ մի մղում ունեցավ՝ փշրանք խնդրել ծերունուց, բայց արգելեց իրեն նույնիսկ ըմբռնել այդ միտքը։ Մտավ հանրային գրադարան և մի ժամվա չափ Պրուստ էր կարդում այնտեղ, հետո զգալով, որ դարձյալ լողում է հեռուները, փողոց ելավ։ Էլի ջուր խմեց զբոսայգու աղբյուրից և բռնեց իր տուն տանող երկար ճամփան։

— Գնամ ու էլի քնեմ,— ասաց նա,— բան չունեմ անելու։

Հիմա հասկանում էր, որ չափից ավելի է հյուծված ու թուլացած՝ իրեն խաբելու համար, թե իբր ամեն ինչ լավ է, այնուամենայնիվ, միտքը սթափ ու զգոն էր թվում՝ կարծես գործում էր իրենից դուրս և իր մարմնական շատ զգալի տառապանքների վերաբերյալ լկտի ու համառ ծաղր ուներ ամփոփած։ Տուն հասավ կեսօրից հետո և անմիջապես սուրճ պատրաստեց պստիկ գազօջախի վրա։ Ամանի մեջ

կաթ չկար, անցյալ շաբաթ գնած շաքարը լրիվ վերջացել էր։ Մահճակալին նստած ու ժպտալով, մի գավաթ տաք ու սև հեղուկ խմեց։

Երիտասարդների քրիստոնեական ընկերությունից մի տասը թերթ թուղթ էր թռցրել, որոնց վրա իր խնդրագիրը պիտի կազմեր, բայց ներկայումս գրելու միտքն իսկ տհաճություն էր պատճառում։ Ասելու ոչինչ չէր մնացել։ Սկսեց շփել ու հղկել առավոտյան գտած պենսանոցը, և այդ անհեթեթ զբաղմունքից մի տեսակ մեծ բավականություն էր ստանում։ Ամերիկյան և ոչ մի մետաղադրամ չի լինի այնպես հիանալի փայլեցնել, ինչպես պենսանոցը։ Քանի՞ պենս է հարկավոր ապրելու համար։ Որևէ բան չի՞ մնացել ծախելու։ Հայացքը տարավ մերկ պատերի վրայով։ Ոչ։ Ժամացույցը ծախել էր, ինչպես և գրքերը։ Իր սքանչելի բոլոր գրքերը, ինը գիրք՝ ութսունհինգ սենթով։ Ամոթ ու ցավ զգաց, որ բաժանվել է իր գրքերից։ Ամենալավ կոստյումը երկու դոլարով էր ծախել, բայց դա՝ ոչինչ։ Հագուստը քիչ էր զբաղեցնում նրան։ Սակայն գրքե՞ր։ Դա ուրիշ բան էր։ Նա զայրանում էր՝ մտածելով, որ հարգանք չկա գրող մարդկանց նկատմամբ։

Փայլեցրած պենսանոցը դրեց սեղանին, ժլատի հիացմունքով մետաղադրամին նայելով։ «Ի՞նչ փառավոր ժպիտ ունի»,— ասաց։ Առանց կարդալու նայեց. «E Pluribus Unum, մեկ սենթ, Ամերիկայի Միացյալ Նահանգներ» բառերին, շրջեց ու տեսավ Լինկոլնին և «Հավասով առ Աստված։ Ազատություն։ 1923» դրոշմվածքները։ Ի՞նչ սքանչելի է»,— ասաց։

Քուն իջավ վրան, և արյան մեջ ներխուժած մի նողկալի ցավ զգաց, սրտխառնուքի և քայքայումի զգացողություն ապրեց։ Շփոթմունքի մեջ կանգնել էր մահճակալի մոտ, մտածելով, որ այլևս անելիք չունի՝ քնելուց բացի։ Արդեն զգում էր, թե ինչպես ձիգ թևալողով կտրում է հեղուկ դարձած հողը, լողալով հեռուները, դեպի ակունքը։ Բերանքսիվայր ընկավ մահճակալին, ասելով. «Պենսանոցը մի երեխայի պիտի տված լինեի։ Երեխան ինչ ասես կառնի պենսանոցով»։

Հետո սրընթաց ու կանոնավոր, ճոճաձողով սլացող պատանու գեղեցիկ թեթևությամբ նա ելավ իր մարմնից։ Հավիտենական մի պահի նա մեկին դարձավ ամեն ինչ՝ թռչուն ու ձուկ, միջատ, զեռուն ու մարդ։ Տպագրերի մի օվկիանոս էր ալեկոծվում նրա դիմաց՝ անեզր ու խավար մի օվկիանոս։ Քաղաքն այրվում էր։ Մոլեգնում էին ամբոխները։ Սրիրագունդը հեռացավ՝ պտույտ տալով, և վերջին մի գիտակցությամբ նա իր կորուսյալ դեմքը դատարկ երկնքին դարձրեց ու դարձավ աներազ, անկենդան, կատարյալ։

Երբ մայիս ամսին քայլում էր այգու միջով, նա տեսավ մի փոքրիկ մոխրագույն օձ, որ փախչում էր նրանից խոտի ու տերևների տակ, և գնաց օձի ետևից, ձեռքին մի երկար ճիպոտ բռնած, զգալով այն բնազդական վախը, որ սողունները պատճառում են մարդուն։

«Ա՜հ,— մտածեց,— չարիքի մեր խորհրդանշա՞նը», և ճիպոտով դիպավ օձին, որը գալարվեց։ Օձը բարձրացրեց գլուխը և խփեց ճիպոտին, ապա սլացավ խոտի միջով, շտապ, ահաբեկված, և նա գնաց օձի ետևից։

Շատ գեղեցիկ էր օձը և զարմանալիորեն ճարպիկ, բայց նա որոշեց միառժամանակ հետևել ու ինչ-որ բան իմանալ դրա մասին։

Փոքրիկ մոխրագույն օձը նրան տարավ այգու խորքերը, այնպես որ նա հիմա աչքից հեռու էր և առանձին՝ օձի հետ։ Նա իրեն հանցավոր էր զգում, որ օձին հալածելով խախտում է այգու այս կամ այն օրենքը, որևէ մեկը կարող էր հայտնաբերել իրեն, ուստի պատասխան պատրաստեց։ Մտածեց, որ կասի՝ «ես ժամանակակից բարոյականությունն եմ ուսումնասիրում», և կամ՝ «ես քանդակագործ եմ և ուսումնասիրում եմ սողունների կառուցվածքը»։ Այսպես թե այնպես, խելքի մոտ մի բացատրություն էր տալու։

Չէր ասելու, թե մտադիր է սպանել օձին։

Գնում էր վախեցած օձի կողքով, մեկ-մեկ ցատկում էր, որ ետ չմնա, մինչև որ օձն ուժասպառ եղավ և էլ չէր կարող փախչել։ Եվ նա պպզեց, որպեսզի ավելի մոտիկից տեսնի օձին, որին դիպչում էր ճիպոտով և իր աչքի առաջ պահում։ Խոստովանեց ինքն իրեն, որ վախենում է ձեռքով դիպչել։ Ձեռք տալ օձին՝ նշանակում էր ձեռք տալ մարդկային մտքում թաքնված չգիտես ինչ գաղտնիքի, որ երբեք չպետք է լույս աշխարհ բերվի։ Մարդն ինքը մի ժամանակ այդ սահուն ողորկությունն էր և այդ ահավոր լռությունը, և հիմա, երբ մարդը հասել է իր այս վերջին ձևին, ահա դեռ օձերը սողում են երկրի վրա, կարծես դեռ ոչ մի փոփոխություն չի եղել։

Առաջին արուն և էգը՝ բիբլիական. և շրջափոխություն։ Ադամն ու Եվան և մարդկային սաղմը։

Սիրուն օձ էր, մաքուր, նրբագեղ ու ճշգրիտ։ Օձի զգացած սարսափը վախեցրեց նրան, և նա խուճապահար մտածեց, որ գուցե այգու բոլոր օձերը սուսուփուս կգան փոքրիկ մոխրագույն օձին փրկելու, կշրջապատեն նրան իրենց չարամիտ լռությամբ ու իրենց գեշ ձևերի անտանելի զզվանքով։ Այդին մեծ էր ու պետք է որ հազարավոր օձեր

լինեին այնտեղ։ Եթե բոլոր օձերն իմանային, որ նա այս փոքրիկ օձի գլխին է կանգնած, հեշտորեն կկարողանային ջլատել նրան։

Նա վեր կացավ ու շուրջը նայեց։ Խաղաղություն էր տիրում։ Լռությունը գրեթե բիբլիական էր՝ ի սկզբանե։ Լսեց, որ մի թռչուն ոստից ոստ էր թռչկոտում մոտակա ցածր թփուտում, բայց ինքն առանձին էր օձի հետ։ Մոռացավ, որ գտնվում է հասարակական այգու մեջ խոշոր քաղաքում։ Մի ինքնաթիռ անցավ, բայց նա չտեսավ ու չլսեց։ Լռությունը շատ տիրական էր, և նրա տեսողությունը տիրականորեն կենտրոնացած էր օձի վրա։

Այգու մեջ, օձի հետ, ոչ մերկ, ի սկզբանե, 1931 թվականին։

Նա նորից պպզեց ու սկսեց խոսել օձի հետ։ Արտաքուստ և ներքուստ ծիծաղեց այն մտքից, թե օձի ձևն այնքան նյութականորեն գտնըվում է իր աչքի առաջ, իր սեփական էությունից անջատ, գետնի երեսին տափակ ընկած, փոխանակ իր սեփական ինքնության մի նուրբ մասը լինելու։ Ահռելի բան էր իրոք։ Սկզբում սիրտ չարեց բարձրաձայն խոսել, բայց հետզհետե ավելի համարձակ դարձավ և սկսեց անգլերեն խոսել օձի հետ։ Շատ հաճելի էր այդ խոսակցությունը։

— Լավ,— ասաց,— ահա ես, անցած բոլոր տարիներից հետո, մի երիտասարդ, որ ապրում է նույն երկրի վրա, նույն արևի տակ, և նույն կրքերն ունի։ Եվ ահա դու էլ իմ առջև, նորից նույն օձը։ Դրությունն էլ նույնն է։ Ի՞նչ ես ուզում անել։ Փախչե՞լ։ Չեմ թողնելու, որ փախչես։ Ի՞նչ է միտքդ։ Ինչպե՞ս ես պաշտպանելու քեզ։ Իմ նպատակն է քեզ ոչնչացնել։ Իբրև պարտավորություն մարդու նկատմամբ։

Օձը նրա առաջ ցնցվում էր անօգնականորեն, չկարողանալով խուսափել ճիպոտից։ Մի քանի անգամ խփեց ճիպոտին, հետո անտարբեր դարձավ, որովհետև շատ էր հոգնել։ Նա ետ քաշեց ճիպոտը և լսեց, որ օձն ասաց.

— Շնորհակալ եմ։

Սկսեց սուլել, տեսնելու համար, թե արդյոք երաժշտությունը որևէ կերպ ազդե՞ւ է օձի վրա, ստիպե՞ւ է օձին պարել։ Դու իմ միակ սերն ես, սուլեց նա, Շուբերտը՝ վերածված նյույորքյան երաժշտական կատակարգության՝ իմ միակ սերը, իմ միակ սերը. բայց օձը չէր պարում։ Դուցե իտալական մի բան, մտածեց, և սկսեց երգել la donna e mobile, դիտմամբ սխալ հնչեցնելով բառերը, զվարճանալու համար։ Բրամսի մի օրորոցային փորձեց, բայց երաժշտությունը չէր ազդում օձի վրա։ Օձը հոգնած էր։ Վախեցած։ Ուզում էր հեռանալ։

Հանկարծ նա զարմացավ ինքն իրեն. մտքով անցել էր թողնել, որ

փախչի օձը, թողնել, որ սպրդի գնա և կորչի իր ցեղակիցների ստորին աշխարհներում։ Ինչո՞ւ պետք է թողնի, որ փախչի օձը։

Մի ծանր քար վերցրեց գետնից և մտածեց. «Հիմա ես կջախջախեմ քո գլուխը այս քարով և քո մահը կտեսնեմ»։

Ոչնչացնել այդ չար գեղեցկությունը, փչացնել այդ մեղսալի հմայքը։

Բայց շատ տարօրինակ էր։ Չէր կարողանում քարը գցել օձի գլխին, և հանկարծ սկսեց խղճալ կենդանուն։

— Կնայես,— ասաց, մի կողմ նետելով քարը։— Ներողություն եմ խնդրում։ Հիմա հասկանում եմ, որ միայն սեր ունեմ քո նկատմամբ։

Եվ ուզեց ձեռքով դիպչել օձին, բռնել ու հասկանալ օձին շոշափելու ճշմարտությունը։ Բայց դժվար էր։ Օձն ահաբեկված էր և դառնում ու հարձակվում էր ամեն անգամ, երբ նա ձեռքերն էր երկարում դիպչելու համար։

— Ես միայն սեր ունեմ քո նկատմամբ,— ասաց նա։— Մի՛ վախենա։ Չեմ ուզում քեզ վնասել։

Հետո արագ բարձրացրեց օձին գետնից, իմացավ, թե ինչ է դրան շոշափելու ճշմարիտ զգացողությունը, և գցեց։

— Ահա՛,— ասաց։— Հիմա գիտեմ ճշմարտությունը։ Օձը սառն է, բայց մաքուր։ Լպրծուն չէ, ինչպես մտածում էի առաջ։

Բարեմիտ ժպտաց փոքրիկ մոխրագույն օձին։

— Կարող ես գնալ հիմա,— ասաց։— Հավատաքննությունը վերջացավ։ Եվ դու դեռ ողջ ես։ Դու զգացիր մարդու ներկայությունը և դեռ ողջ ես։ Կարող ես գնալ հիմա։

Բայց օձը չէր հեռանում։ Վախից ուժասպառ էր եղել։

Նա խորապես ամաչեց իր արածից և բարկացավ ինքն իր դեմ։ «Աստված իմ,— մտածեց,— սարսափի մատնեցի փոքրիկ օձին։ Էլ երբեք մտքիցը չի գնա եղածը։ Միշտ կհիշի ինձ իր վրա պայծած»։

— Հեռացիր, ի սեր աստծո,— ասաց օձին։— Վերադարձիր քո ցեղակիցների մոտ։ Պատմիր նրանց ինչ որ տեսար, ինչ որ ինքդ քո սեփական աչքերով տեսար։ Պատմիր նրանց ինչ որ զգացիր։ Մարդու ձեռքի հիվանդագին ջերմությունը։ Այն ներկայությունը, որ զգացիր քո կողքին։

Հանկարծ օձը շուռ եկավ նրանից, առաջ նետվեց ու հեռացավ։

— Շնորհակալ եմ,— ասաց նա։

Եվ ուրախությունից ծիծաղեց, տեսնելով, որ փոքրիկ օձն իրեն գցում էր խոտերի ու տերևների մեջ, հեռու էր փախչում մարդուց։

— Հոյակապ է,— ասաց։— Շտապիր նրանց մոտ և ասա, որ

գտնվել ես մարդու ներկայության առաջ ու չես սպանվել։ Մտածիր այն բոլոր օձերի մասին, որոնք ապրում ու մեռնում են առանց մարդուս հանդիպելու։ Մտածիր, թե ինչ նշանակություն է ունենալու այդ տարբերությունը քեզ համար։

Նրան թվաց, թե փոքրիկ օձի փախչելու շարժումները ցնծագին ծիծաղի էությունն էին, ու մեծ հաճույք զգաց դրանից։ Վերադարձավ, գտավ արահետը և շարունակեց իր ճամփան։

Երեկոյան, երբ աղջիկը նստած էր դաշնամուրի առաջ և մեղմ նվագում էր, նա ասաց.

— Տարօրինակ բան պատահեց։

Աղջիկը շարունակեց նվագել։

— Տարօրինակ բա՞ն,— հարցրեց։

— Այո,— ասաց նա։— Այգու միջով քայլում էի և մի փոքրիկ մոխրագույն օձ տեսա։

Աղջիկն ընդհատեց նվագը և աթոռի վրա դարձավ նրան նայելու։

— Օ՞ձ,— ասաց։— Զզվելի է։

— Ոչ,— ասաց նա։— Գեղեցիկ էր։

— Եվ ի՞նչ։

— Ոչինչ,— ասաց նա։— Ուղղակի բռնեցի և մի որոշ ժամանակ չթողեցի, որ գնա։

— Իսկ ինչո՞ւ։

— Առանց որևէ պատճառի,— ասաց նա։

Աղջիկն անցավ սենյակի մյուս կողմը, նստեց նրա կողքին և տարօրինակ նայեց նրան։

— Պատմիր օձի մասին,— ասաց։

— Սիրուն էր,— ասաց նա։— Բոլորովին էլ զզվելի չէր։ Երբ ձեռքով դիպա, զգացի մաքրությունը։

— Շատ ուրախ եմ,— ասաց աղջիկը։— Հետո՞։

— Ուզեցի սպանել օձին,— ասաց նա։— Բայց չկարողացա։ Շատ գեղեցիկ էր։

— Ուրախ եմ,— ասաց աղջիկը։— Բայց ամեն ինչ պատմիր։

— Այս է ամբողջը։

— Չէ, չէ,— ասաց աղջիկը։— Գիտեմ, որ չէ։ Ամեն ինչ պատմիր։

— Շատ տարօրինակ է,— ասաց նա։— Ուզում էի սպանել օձին և լքել այստեղ։

— Ինքդ քեզանից չե՞ս ամաչում,— ասաց աղջիկը։

— Իհարկե ամաչում եմ։

— Հետո՞,— ասաց աղջիկը։— Ի՞նչ մտածեցիր իմ մասին, երբ օձն էր քո աչքի առաջ։

— Կբարկանաս,— ասաց նա։

— Է՜, դատարկ բան։ Անկարելի է, որ ես քեզ վրա բարկանամ։ Ասա, ի՞նչ մտածեցիր։

— Դե լավ,— ասաց նա,— մտածեցի, որ դու գեղեցիկ ես, բայց չար։

— Չա՞ր։

— Ասացի, չէ՞, որ կբարկանաս։

— Լավ, հետո՞։

— Հետո դիպա օձին,— ասաց նա։— Հեշտ չէր, բայց իմ ձեռքերով վերցրի օձին գետնից։ Ինչպե՞ս ես բացատրում դա։ Դու շատ գրքեր ես կարդացել այսպիսի բաների մասին։ Ի՞նչ է նշանակում այն, որ ես օձին վերցրի գետնից։

Աղջիկն սկսեց մեղմ ու խելացի ծիծաղել։

— Գիտե՞ս ինչ, դա նշանակում է, պարզապես նշանակում է, որ դու ապուշ ես։ Դա հոյակապ է ուղղակի։

— Ինչ է, ըստ Ֆրոյդի՞,— հարցրեց նա։

— Այո,— ծիծաղեց աղջիկը։— Ըստ Ֆրոյդի։

— Դե լավ,— ասաց նա,— համենայն դեպս շատ լավ բան էր օձին ազատ թողնելը։

— Երբևիցե ինձ ասե՞լ ես, որ սիրում ես ինձ,— հարցրեց աղջիկը։

— Դա ինքդ պետք է իմանաս,— ասաց նա։— Ի՞նչ հիշեմ, մեկ-երկու բան ասել եմ քեզ։

— Ոչ,— ասաց աղջիկը,— երբեք չես ասել։

Աղջիկը նորից սկսեց ծիծաղել և հանկարծ շատ երջանիկ զգաց նրա ներկայությունից։

— Դու միշտ ուրիշ բաներից ես խոսել,— ասաց։— Դրա հետ կապ չունեցող բաներից։ Եվ ամենահրաշալի բոպեներին։

— Փոքրիկ մոխրագույն օձ էր այս օձը,— ասաց նա։

— Եվ դա քո անմեղությունն է,— ասաց աղջիկը։— Դու երբեք պնդերես չես եղել։

— Ի՞նչ ես դուրս տալիս,— ասաց նա։

— Այնքան ուրախ եմ, որ չես սպանել օձին։

Աղջիկը վերադարձավ դաշնամուրին և ձեռքերը թեթև դրեց ստեղների վրա։

— Մի քանի երգ սուլեցի օձի համար,— ասաց նա։— Շուբերտի Անավարտ սիմֆոնիայից մի հատված սուլեցի։ Կուզենայի լսել այդ

հատվածը։ Գիտես, այն մեղեդին, որ օգտագործել էին «Ծաղկման ժամանակը» կոչվող երաժշտական կատակերգության մեջ։ Այն մասը, որտեղ երգում են դու իմ միակ սերն ես, միակ սերը և այլն։

Աղջիկն սկսեց մեղմ նվագել, նրա աչքերն զգալով իր մազերի, իր ձեռքերի, իր վզի, իր թիկունքի, իր թևերի վրա, զգալով, որ նա իրեն զննում է այնպես, ինչպես զննել էր օձին։

ՀԱՐԻՆ

Այդ տղան ծնվել էր աշխարհը նվաճելու համար։ Ինչի էլ որ նա դիպչեր՝ վերածվում էր փողի, և տասնչորս տարեկան հասակում Հովսի Բանկում վեց հարյուր դոլարից ավելի փող ուներ, փող՝ որ ի՛նքն էր սարքել։ Նա ծնվել էր վաճառելու համար։ Ութ-ինը տարեկան հասակում սեղմում էր դռների զանգերը և տնային տնտեսուհիներին էր ցույց տալիս Օհայոյի Նահանգի Թոլեդո քաղաքի Նորությունների թողարկման ընկերության արտադրած Հիսուս Քրիստոսի և այլ սուրբ մարդկանց հրաշալի գունավոր պատկերները, հատը՝ տասնհինգ սենթ, չորս հատը՝ կես դոլար։

— Տիկին,— ասում էր նա այդ վաղ հասակում,— սա Հիսուսն է։ Տեսեք։ Գեղեցիկ նկար է, չէ՞։ Եվ ընդամենը տասնհինգ սենթ։ Սա երեք Պողոսն է։ Կամ գուցե Մովսեսը։ Դուք ավելի լավ կիմանաք։ Աստվածաշնչից։

Օտարերկրացիների թաղամասի բոլոր տները նա լցրել էր այդ նկարներով, դրանք մինչև հիմա էլ տներից շատերում մնում են, և, ինչպես տեսնում եք, նա բավական բարերար ազդեցություն էր գործում։

Այսպես շրջելով, որոշ ժամանակ անց նա «Ճշմարիտ պատմությունների ամսագրի» համար բաժանորդներ էր հավաքագրում։ Սովորաբար նա կանգնում էր պատշգամբում և, բացելով ամսագրի մի օրինակը, նկարներն էր ցույց տալիս։

— Ահա մի կին,— ասում էր նա,— որն ամուսնացել է իրենից երեսուն տարով մեծ մի մարդու հետ և հետո սիրահարվել այդ մարդու տասնվեց տարեկան որդուն։ Տիկին, ի՞նչ կանեիք դո՛ւք այդպիսի մի անելանելի դրության մեջ։ Կարդացեք և կտեսնեք, թե այս կինն ինչ է արել։ Բոլորն էլ ճշմարիտ պատմություններ են՝ ամսական տասնհինգ հատ։ Ռոմանտիկա, խորհրդապաշտություն, կիրք, կատաղի հեշտանք և սոհասարակ ամեն ինչ՝ այբից մինչև ֆե։ Բացի այդ կան խմբագրի մեկնությունները՝ երազների վերաբերյալ։ Դրանք բացատրում են ձեր

երազները՝ արդյոք ճանապարհ ունեք գնալու, թե փող եք ստանալու, կամ էլ ում հետ եք ամուսնանալու, և բոլորը՝ գիտակցորեն ու ճշմարիտ։ Բացի այդ կան պշրանքի գաղտնիքներ, կամ թե ինչ պիտի արվի, որ երկար ժամանակ երիտասարդ երևաս։

Այդ ամսագիրը երկու ամսից էլ կարճ ժամանակամիջոցում արդեն վաթսունից ավել ամուսնացած կանայք էին կարդում։ Միգուցե նա չէր մեղավորը, բայց որոշ ժամանակ անց բազմաթիվ չնախատեսված բաներ սկսեցին պատահել։ Մի երկու ամուսնացած կանայք, որոնք գաղտնի սիրային կապեր ունեին ուրիշների հետ, իրենց ամուսինների կողմից բացահայտվեցին, և ամուսինները կամ ծեծեցին նրանց, կամ էլ տանից վռնդեցին, իսկ մի կես տասնյակ կանայք էլ սկսեցին աչքերի թերթերունքների քսուք, լոգանքի աղ, քսայուղ և այդ տեսակ այլ բաներ պատվիրել։ Օտարերկրացիների ողջ թաղամասն աստիճանաբար դառնում էր մի քիչ անբարոյական։ Կանայք բոլորն էլ սկսեցին շրթունքները ներկել, դիմափոշի օգտագործել, մետաքսյա գուլպաներ և իրանն ամուր գրկող վերնաշապիկներ հագնել։

Երբ Հարին մի քիչ մեծացավ, սկսեց բանեցրած «ֆորդեր», «մաքսվելներ», «սաքսոններ», «շևրոլեներ» և էլի ուրիշ փոքր ավտոմեքենաներ գնել։ Սովորաբար, որպեսզի էժան լինի, նա հատը տասնհինգ կամ քսան դոլարով միանգամից մի կես տասնյակ մեքենա էր գնում, թեթևվակի նորոգում էր, ներկում՝ կարմիր, կապույտ կամ էլ մի որևէ այլ վառ գույնով և երեք-չորս անգամ ավելի թանկ գներով, քան ինքն էր գնել, վաճառում էր միջնակարգ դպրոցի բարձր դասարանցիներին։ Նա ոչ միայն քաղաքը, այլև քաղաքի շրջակայքը լցրեց կարմիր, կապույտ ու կանաչ ավտոմեքենաներով։ Բարձր դասարանցիները գիշերներն ու կիրակի երեկոներն իրենց ընկերուհիներին դրանցով տանում էին քաղաքից դուրս, և բոլորն էլ հիանալի գիտեին, թե դա ինչ է նշանակում։ Մի կողմից տղաների համար դա հարմար բան էր, միայն թե, մյուս կողմից էլ, նրանցից շատերը, դեռևս աշխատանք չճարած, ստիպված եղան ամուսնանալ, և բացի այդ մի շարք դրանից ավելի վատ բաներ էլ պատահեցին։ Երկու թե երեք աղջիկներ, որոնք երեխաներ ունեցան, չգիտեին, թե ով է իրենց երեխայի հայրը, որովհետև ամեն մեկի հետ բանեցրած ավտոմեքենա ունեցող երկու-երեք տղա էր ման եկել։ Ինչևէ, աղջիկներից շատերն իրենց համար թեև հանպատրաստից, բայց և այնպես ամուսիններ ճարեցին։

Ինքը՝ Հարին աղջիկների հետ հիմարություն անելու համար չափից ավելի էր զբաղված։ Նա միայն մի բան էր ուզում՝ շարունակել փող սարքել։ Տասնյոթ տարեկանում նա արդեն մի փոքր կարողություն էր

վաստակել և հոգ էր տանում, որ քաղաքի լավագույն հագնված երի-տասարդներից մեկն ինքը լինի։ Իր կոստյումները նա առնում էր մեծածախ գներով, միանգամից մի քանի հատ, քանի որ մտքովն անգամ չէր կարող անցկացնել, որ որևէ մեկը իր հաշվին շահ ստանա, չէ որ շահելը հենց իր արհեստն էր։ Եթե կոստյումի վրա դրված էր քսանհինգ ու հիսուն, Հարին վաճառողին առաջարկում էր տասներկու դոլար։

— Հեքիաթ մի պատմիր,— ասում էր նա։— Ես գիտեմ, թե էս քըրջերն ինչ արժեն։ Տասներկու դոլարի մեջ դու երկու դոլար հիսուն սենթ մաքուր շահ կունենաս, իսկ դա ամեն մարդու համար էլ բավական է։ Ուզում ես համաձայնվիր, ուզում ես՝ չէ։

Կոստյումը սովորաբար նա գնում էր տասնհինգ դոլարով՝ ձևափոխություններն էլ ներառյալ։ Ձևափոխությունների համար մի ժամ առնտուր էր անում։ Եթե վաճառողն ասում էր, թե թիկնոցը հիանալի է նստում, Հարին համարում էր, որ իրեն ծծկերի տեղ են դրել և պնդում էր, որ թևքերը չափազանց երկար են, կամ էլ ուսերը չափից դուրս լայն են։ Միակ պատճառը, որի համար վաճառողներն առհասարակ հանդուրժում էին նրան, այն էր, որ նա լավ հագնվողի համարում ուներ, և նրան կոստյում վաճառելը նշանակում էր ահագին օգտակար և ձրի ռեկլամ անել, որովհետև դա բազմաթիվ այլ ջահելների էլ կբերեր խանութ՝ ջահելներ, որոնք կոստյումները կգնեին սովորական գներով։

Բացի այն, որ Հարին ուղղակի զզվեցնում էր, գնումը վերջացնելու պահին անմիջապես սկսում էր խոսել փոխանակման սկզբունքի մասին, ասում էր, որ հենց դա է ամերիկյան բիզնեսի հիմքը, և փորձում էր վաճառողին մի բոլորովին նոր «ստուդբեկեր» վաճառել կամ էլ ապահովագրել երկրաշարժից, և մեծ մասամբ դա նրան հաջողվում էր։ Գործարար մարդկանցից շատերը երկրաշարժից ապահովագրվում էին պարզապես այն բանի համար, որ Հարին ձայնը կտրի։ Նա ինքը խաբում էր և բնական էր համարում, երբ խաբում էին ուրիշները, և դրա համար էլ միշտ անխաբանցիկ գներ էր նշանակում և նոր միայն իջնում սովորական գներին։ Դրանից նրա գնորդները բավականություն էին ստանում։ Նրանց համար հաճելի էր մտածել, որ Հարին տակ է մնացել, բայց նա միշտ կամացուկ քմծիծաղ էր տալիս։

Մի տարի Սան Իռակինի ողջ հովիտը համարյա կործանվեց դաժան ուռնամանիքից, որը լրիվ սրբեց տարավ խաղողի ու նարնջի հիանալի բերքը։ Հարին նստեց իր «ստուդբեկերը» և սկսեց շրջել հովտով։ Որատարված նարինջները բացարձակապես անպետք էին, որովհետև տարածաշրջանի կոմիտեն թույլ չէր տա դրանք վաճառել, բայց Հարին մի միտք էր հղացել։ Նա մեքենայից իջնում էր և մտնում նարնջենու

պուրակները, նայում այժմ արդեն անարժեք պտուղներով ծանրաբեռնված ծառերին, խոսում էր ֆերմերի հետ, խորապես ցավակցում նրանց։ Հետո ասում էր.

— Բայց միգուցե ես կկարողանամ օգնել ձեզ։ Ես կօգտագործեմ ցուրտը տարած նարինջները... խոզերին և տավարին կերակրելու համար։ Խոզերի համար մեկ է՝ նարինջը ցուրտը տարած է, թե չէ, իսկ դրա հյութը նրանց համար նույնն է, ինչ որ մարդկանց համար... վիտամիններ։ Դուք նեղություն չեք քաշի։ Նարինջները ես ինքս հավաքել կտամ և կտեղափոխեմ, իսկ ձեզ կտամ քսանհինգ դոլարի մի չեկ, առձեռն։

Այդ տարի նա քսանից ավել բարձած բեռնատարներ ուղարկեց Լոս Անջելեսի նարնջահյութ վաճառողներին և ճանկը մի որոշ գումար էլ ցցեց։

Բոլորն ասում էին, որ նա ամեն ինչ կարող է փողի վերածել, ամեն ինչից էլ կարող է փող սարքելու հնար գտնել։

Նրա մտքով անգամ չէր անցնում գործասենյակ պահել։ Հարիի գործասենյակը ամբողջ քաղաքն էր, և հենց որ ուզում էր մի որևէ տեղ հանգրվանել, գնում էր պարոն Փիթերի գործասենյակը, նստում էր ու դեսից-դենից զրուցում փաստաբանի հետ։ Խոսում էր պատահական բաներից, սակայն անընդհատ հետամուտ էր կատարվելիք գործարքներին, հետաքրքրվում էր, թե ինչ է հարկավոր անել, որ մարդիկ գործի մեջ փող ներդնեն, կամ էլ հարցնում էր, թե ինչ կարգով են ունեցվածքների վրա կալանք դնում։ Նրան բազմաթիվ մարդիկ էին պարտք, և նա միշտ հետամուտ էր իր փողերն ստանալուն։

Նա սառնարաններ, փոշեծծիչներ, ռադիոընդունիչներ և բազմաթիվ այլ նորաձև սարքեր էր վաճառել այնպիսի մարդկանց, որոնք ի վիճակի չէին դրանք գնելու։ Վաճառել էր պարզապես այդ իրերի մասին խոսելով ու ազդացուցակների նկարները ցույց տալով։ Կանխավճարը տալուց հետո գնորդներն ստիպված էին լինում նաև մնացած գումարը վճարել։ Վաճառելիս Հարիի միակ արած բանը խոսելն էր։ Եթե մեկը չէր կարողանում ռադիոընդունիչի համար վճարել, Հարին կանխավճարից պակասեցնում էր մի հինգ դոլար և համապատասխան մուրհակ էր դրում, և եթե այդ մարդը չէր կարողանում մուծումները կատարել, Հարին կալանք էր դնում կամ նրա տան, կամ խաղողի այգու, կամ ավտոմոբիլի, կամ ձիու, կամ էլ այդ մարդու որևէ այլ ունեցվածքի վրա։ Զարմանալին այն է, որ ոչ ոք երբեք նրան չէր քննադատում բիզնեսի այդօրինակ եղանակների համար։ Որևէ մեկի ունեցվածքի վրա կալանք դնելիս նա շատ հանգիստ էր և անխոով բացատրում էր, որ դա սովո-

բական արարողություն է՝ ըստ օրենքի։ Դե, էլ ինչ ասես, ինչ որ ճիշտ է՝ ճիշտ է։

Ոչ ոք չգիտեր, թե Հարրի ինչին է պետք այդքան փողը։ Նա արդեն մի մեծ ավտոմեքենա՝ ու բանկում էլ փող ուներ, իսկ աղջիկներով չէր հետաքրքրվում, ուրեմն էլ ինչի՞ համար էր տնտեսում փողը։ Նրան երբեմն հարցնում էին այդ մասին, և Հարին, երկմտելուց հետո, ասում էր.

— Ուզում եմ մի կես միլիոնի տեր դառնալ ու գործը թողնել։

Բավական զվարճալի էր, որ Հարին տասնութ տարեկանում մտածում էր գործը թողնելու մասին։ Միջնակարգ դպրոցը թողել էր հենց առաջին տարին, որովհետև նրա սրտով չէր դասերին նստելը և աշխատասիրությամբ առաջադիմելու մասին անմիտ քարոզներ լսելը։

Այդ ժամանակվանից ի վեր նա զբաղված էր փող սարքելու միջոցների մասին մտորելով։

Երբեմն նրան հարցնում էին, թե ինչ է մտադիր անելու գործը թողնելուց հետո։ Հարին հանկարծակիի էր գալիս, շփոթվում և վերջապես ասում էր.

— Երևի կգնամ շուրջերկրյա ճանապարհորդության։

Եթե գնա էլ,— մտածում էին բոլորը,— ուր էլ լինի, ինչ-որ բան է վաճառելու։ Գնացքներում, նավերի վրա կամ էլ արտասահմանյան երկրներում նա ինչ-որ բան է վաճառելու։ Բոպե անգամ չի կորցնի շուրջը նայելու համար։ Կբացի ազդացուցակը և ուզածդ բանը կվաճառի օտարերկրացիներին։

Սակայն կյանքում ինչ ասես չի լինում։ Հնարավոր չէ կանխագուշակել մարդկանց կյանքի ընթացքը, նույնիսկ այնպիսիներինը, ինչպիսին Հարին էր։ Բոլորն էլ ենթակա են հիվանդության։ Մահն ու հիվանդությունները ընտրյալներ չեն ճանաչում։ Նրանք այցելում են բոլոր մարդկանց։ Բոլորն էլ մահանում են, բոլորն էլ հիվանդանում՝ պրեզիդենտներն էլ, թագավորներն էլ, կինոաստղերն էլ։

Նույնիսկ Հարին հիվանդացավ։ Ո՛չ թեթև և ո՛չ էլ այնպիսի մի սովորական հիվանդությամբ, ինչպիսին վիրուսն է, որը կարելի է մի շաբաթում հաղթահարել և էլի առաջվա պես առողջ լինել։ Խեղճ տղան հիվանդացավ թոքախտով և այն էլ՝ ծանր տարատեսակով։

Եվ այսպես, Հարին հիվանդացավ, ու Հովտի Բանկի նրա ողջ փողը նրան կաթիլ անգամ չօգնեց։ Իհարկե, որոշ ժամանակ նա փորձեց հանգիստ տալ իրեն, բայց դա ուղղակի լինելու բան չէր։ Մահճակալում պառկած՝ Հարին փորձում էր ապահովագրել իր լավագույն ընկերներին։ Ինձ այդ մասին պատմեց Սայմոն Գրեգորին՝ Հարիի հորեղբորորդին։ Նա ասաց, որ Հարիի ուզածը ոչ թե շատ փող ունենալն է, այլ նա պար-

զապես բերանը չի կարող բացել, եթե խոսքն առևտրին չի վերաբերում։ Սովորական խոսակցություն վարել նա չի կարող, որովհետև այն ամենի մասին, ինչը որ կապ չունի ապահովագրության, ավտոմեքենաների կամ անշարժ գույքի հետ, ամենատարրական բաներն անգամ չգիտի։ Եթե որևէ մեկը փորձում էր խոսել քաղաքականության կամ էլ, օրինակ, կրոնի մասին, Հարին նեղվում էր և սկսում առ ու ծախից խոսել։ Օրինակ, նա հարցրել էր Սայմընն Գրեգորիի տարիքը, և երբ Սայմընն ասել էր, որ քսաներկու տարեկան է, Հարին կատարելապես հուզվել էր և ասել.

— Լսիր, Սայմընն, դու իմ հորեղբորորդին ես և ես ուզում եմ քեզ մի լավություն անել։ Եթե ուզում ես վաթսունհինգ տարեկանում ֆինանսապես անկախ լինել, դու օ՛ր անգամ չպիտի կորցնես։ Ապահովագրական քարտն էլ հենց մոտս է։ Դու, անշուշտ, ի վիճակի ես ապագա քսանհինգ տարում ամսական վեց դոլար քսանհինգ սենթ վճարելու։ Իհարկե, ինչ-որ կինոներից կզրկվես։ Բայց ի՞նչն է ավելի կարևոր՝ մի քանի հիմար կինոնկար նայելը, թե՞ վաթսունհինգ տարեկանում անկախ լինելը։

Սայմընը, լսելով, թե ծանր հիվանդ Հարին ինչեր է խոսում, քիչ էր մնացել գոռար։

Բժիշկը Հարիի հարազատներին ասաց, որ մեկ կամ երկու տարով Հարին պետք է գնա Արիզոնա, որ դա միակ հույսն է, բայց երբ Հարիին ասացին այդ մասին, նա դառնացավ և ասաց, որ բժշկի ուզածն այն է, որ ինքն իր փողերն իզուր տեղը ծախսի։ Նա ասաց, որ իր մոտ ամեն ինչ կարգին է, պարզապես կուրծքը մի փոքր մրսած է։ Եվ հարազատներին ասաց, որ բժշկին քշեն։

— Մի ուրիշ բժիշկ բերեք,— ասաց նա։— Ես ինչո՞ւ պիտի Արիզոնա գնամ։

Ժամանակ առ ժամանակ Հարիին տեսնում էինք քաղաքում, մեկնումեկի հետ արագ-արագ խոսելիս, փորձելով որևէ բան վաճառել նրան։ Բայց մեկ կամ երկու օր միայն, հետո նորից անկողին էր ընկնում։ Այսպես շարունակվեց մոտ երկու տարի, տեսնել էր պետք, թե խեղճ տղան ինչպես էր փոխվել։ Նրա տեսքից արդեն սիրտդ ահավոր դառնությամբ էր լցվում։ Թվում էր, թե քո առջև աշխարհի ամենամիայնակ մարդն է, բայց ցավալին այն էր, որ գիտեիր՝ հանկարծ հետը խոսես, կարեկցանք ցույց տաս՝ կշրջվի ու կաշխատի քեզ ապահովագրել։ Սրանից է, որ քիչ էր մնում խենթանաս։ Հերիք չի՝ ինքը ոտի վրա մեռնում է, դեռ առողջ մարդկանց էլ ուզում է մեռնելուց ապահովագրել։ Եվ սա այնքան տխուր էր, որ դառնում էր ծիծաղելի։

Եվ այսպես, մի օր (սրանից մի տարի առաջ), քաղաքում հանդի-

պեցի Սայմընն Գրեգորիին։ Վշտահար տեսք ուներ։ Հարցրի՝ բանն ինչ է, և նա ասաց, որ Հարին մահացել է, ինքն էլ այդ պահին նրա անկողնու մոտ է եղել և մինչև հիմա իրեն վատ է զգում։ Պատճառը՝ մահանալիս Հարիի ասածներն էին։ Դա սարսափելի էր։ Մինչև վերջ էլ խոսում էր ապահովագրության և վաթսունհինգ տարեկանում ֆինանսական անկախության մասին։

Հարիի լուսանկարը տպագրվեց երեկոյան թերթում։ Այնտեղ մի մեծ պատմություն կար նրա կյանքի մասին, այն մասին, թե ինչքան ճարպիկ էր Հարին, ինչքան պատվախնդիր, և էլի ուրիշ այդ տեսակ բաներ։ Ահա թե ինչով վերջացավ ամենը, բայց, այսպես թե այնպես, այդ խելառ ավանակի մեջ մի ինչ-որ բան կար, որը մեզնից ոչ ոք չի կարող մոռանալ։ Ինչ ուզում ես ասա, նա ուրիշներից տարբեր էր։ Մեզանում նա արդեն լեգենդ է դարձել, նրա մահվանից հետո այս քաղաքում բազմաթիվ երեխաներ են ծնվել, սակայն նրանք բոլորն էլ Հարիի մասին գիտեն նույնքան, ինչքան որ մենք, և, գուցե, մի քիչ էլ ավելի։ Կարելի է կարծել, որ նա մի պատմական նշանավոր դեմք է եղել, որի մասին տովորաբար պատմում են երեխաներին, որպեսզի նրանց մեջ պատվախնդրություն կամ էլ նման բաներ ներարկեն։ Իհարկե, նրա մասին գոյություն ունեցող պատմությունների մեծ մասը ծիծաղաշարժ են, բայց միևնույն է, դրանք ապացուցում են, որ նա իրոք նշանավոր անձնավորություն էր։ Հազիվ թե որևէ մեկը հիշի մեր նախավերջին քաղաքագլխի անունը, ականավոր դեմքեր էլ մեր քաղաքը չի ունեցել, բայց Հարիի անունը այս կողմերի բոլոր երեխաները գիտեն։ Դա առավել ևս ուշագրավ է, եթե նկատի առնենք, որ նա մահացավ քսաներեք տարին չլրացած։

Երբ մեր քաղաքում մեկը որևէ անսովոր գործ է ձեռնարկում և ձախողվում է, մարդիկ ասում են իրար. «Հարին դա կաներ», և բոլորը ծիծաղում են, հիշում նրան, հիշում, թե ինչպես էր նա տենդագին դես ու դեն վազվզում քաղաքով մեկ, թե ինչպես էր արթնացնում մարդկանց և գործարքներ կնքում։ Օրինակ, մի երկու ամիս առաջ ձիարշավարանում մի լարախաղաց հանդես եկավ։ Նա փորձեց լարի վրա սալտո անել, բայց չկարողացավ հավասարակշռությունը պահել և ցած թռավ։ Հետո նորից փորձեց, ամենասկզբից, նվագով, թմբուկի դղրդոցով, որպեսզի զգացվի, թե ինչ վտանգավոր է դա։ Լարախաղացը երեք անգամ փորձեց հնարքը և երեք անգամ էլ ձախողվեց, ու երբ չորրորդ անգամ ելում էր լարի վրա հավասարակշռությունը պահել, ամֆիթատրոնի հետևի շարքերից մի ջահել տղա, ձայնը գլուխը գցած, գոռաց.

— Հարին բերեք։ Հարին կանի։— Հանդիսականները ծիծաղից

թնդացին։ Եղեռն լարախաղացը մի պահ շշմեց, իսկ հետո սկսեց իսպաներեն հայհոյել հանդիսականներին։ Նա անտեղյակ էր մեր քաղաքի սեփական կատակից։

Այս ամենը ձեզ գաղափար կտա, թե Հարին ինչ տեսակ անուն էր հանել, բայց նրա մասին հնարված ամենածիծաղելի պատմությունները նրանք են, որոնք նկարագրում են Հարիին երկնքում կամ էլ դժոխքում՝ երկրաշարժից ապահովագրելիս, ավտոմոբիլներ վաճառելիս և էժան գներով հագուստ գնելիս։ Հարին ծնվել էր աշխարհը նվաճելու համար։ Նա ուրիշներից տարբեր էր։ Բոլորն էլ սիրում են ծիծաղել նրա վրա, բայց միևնույն է, ողջ քաղաքն զգում է նրա պակասը, և չկա մեկը, որ ճանաչեր նրան և չուզենար, որ նա՝ այդ իսկական ամերիկյան գործարարը, մեր մեջ լիներ, տենդագին վազվզեր քաղաքով մեկ, խոսեր մեծ բիզնեսից և ռեկլամ աներ։

ՀՈՎՎԻ ԱՂՋԻԿԸ

Տատիս կարծիքով (ողորմի իրեն), բոլոր մարդիկ պետք է աշխատեն, և քիչ առաջ, երբ սեղան էինք նստել, նա ինձ ասաց.

— Դու պետք է մի կարգին գործ տվորես, պետք է սովորես կավից կամ փայտից, կամ մետաղից, կամ էլ գործվածքեղենից ինչ-որ մի բան, մարդկանց համար ինչ-որ մի օգտակար իր սարքել։ Որևէ ազնիվ արհեստից անտեղյակ լինելը վայել չէ երիտասարդ մարդուն։ Կարո՞ղ ես դու որևէ բան սարքել։ Կարո՞ղ ես մի հասարակ սեղան, մի աթոռ, մի սովորական ափսե, մի փոքրիկ գորգ, մի սրճման սարքել։ Վերջապես, մի բան կարո՞ղ ես գլուխ բերել։

Եվ տատս զայրույթով նայեց ինձ։

— Ես գիտեմ,— ասաց նա,— համարվում է, որ դու գրող ես, և ես կարծում եմ, որ իրոք գրող ես։ Դու այնքան ես ծխում և ամբողջ տունն այնպես ես լցնում ծխով, որ, անշուշտ, ինչ ասես կարող ես լինել, բայց դու պետք է սովորես նյութական բաներ սարքել, այնպիսի բաներ, որ հնարավոր է օգտագործել, որ հնարավոր է տեսնել ու շոշափել։

— Կար չկար մի պարսիկ թագավոր կար,— ասաց տատս,— և նա մի որդի ուներ։ Այս տղան սիրահարվեց մի հովվի աղջկա։ Նա գնաց հոր մոտ և ասաց. «Տեր իմ, ես մի հովվի աղջկա եմ սիրում և կուզենայի, որ նա իմ կինը լիներ»։ Թագավորն ասաց. «Ես թագավոր եմ, դու՝ իմ որդին, և երբ ես մեռնեմ, դու կդառնաս թագավոր, իսկ թագավորին մի՞թե վայել է ամուսնանալ հովվի աղջկա հետ»։ Եվ թագավորի

որդին ասաց. «Տեր իմ, ես չգիտեմ վայել է, թե ոչ, միայն գիտեմ, որ սիրում եմ այդ աղջկան, և կուզենայի, որ նա իմ թագուհին լիներ»։

Եվ թագավորը, տեսնելով, որ իր որդու սերն աղջկա նկատմամբ աստծուց է, ասաց. «Ես լուր կուղարկեմ աղջկան»։ Եվ նա իր մոտ մի սուրհանդակ կանչեց և ասաց նրան. «Գնա հովվի աղջկա մոտ և ասա՝ թագավորի որդին սիրում է քեզ և ուզում է, որ իր կինը դառնաս»։ Եվ սուրհանդակը գնաց աղջկա մոտ ու ասաց. «Թագավորի որդին սիրում է քեզ և ուզում է, որ իր կինը դառնաս»։ Եվ աղջիկն ասաց. «Իսկ նա ի՞նչ արհեստով է զբաղվում»։ Եվ սուրհանդակն ասաց. «Ինչպես թե, նա թագավորի որդի է, նա ոչ մի արհեստով չի զբաղվում»։ Եվ աղջիկն ասաց. «Նա պետք է որևէ արհեստ սովորի»։ Եվ սուրհանդակը վերադարձավ թագավորի մոտ և հովվի աղջկա ասած խոսքերը հաղորդեց նրան։

Եվ թագավորն ասաց իր որդուն. «Հովվի աղջիկը ցանկանում է, որ դու մի որևէ արհեստ սովորես։ Դու էլի՞ ես ուզում, որ նա քո կինը դառնա»։ Եվ որդին ասաց. «Այո, ես կսովորեմ ծղոտե խսիրներ գործել»։ Եվ թագավորի որդուն սովորեցրին ծղոտե խսիրներ գործել՝ գույներով, նկարներով և զարդանախշերով, և երեք օր հետո նա շատ դեղեցիկ խսիրներ էր գործում, այնպես, որ սուրհանդակը վերադարձավ հովվի մոտ և ասաց. «Այս ծղոտե խսիրները թագավորի որդու աշխատանքն է»։ Եվ աղջիկը սուրհանդակի հետ գնաց թագավորի պալատը և դարձավ թագավորի որդու կինը։

— Մի օր,— ասաց տատս,— երբ թագավորի որդին ման էր գալիս Բաղդադի փողոցներով, մի խորտկարան տեսավ, ուր այնքան զով էր ու մաքուր, որ նա ներս մտավ և նստեց մի սեղանի մոտ։ Այս տեղը,— ասաց տատս,— գողերի և մարդասպանների որջ էր, և նրանք բռնեցին թագավորի որդուն և գցեցին մի մեծ զնդան, որտեղ արդեն այդ քաղաքից շատ մեծամեծ մարդիկ էին պահվում։ Գողերն ու մարդասպանները այդ մարդկանցից ամենաչաղերին սպանում էին, տալիս էին ուտելու ամենանիհարներին և դրանով զվարճանում էին։ Թագավորի որդին ամենանիհարներից էր, և, բացի այդ, հայտնի չէր, որ նա պարսիկների թագավորի որդին է, այնպես որ նրան խնայեցին, և նա ասաց գողերին ու մարդասպաններին։ «Ես ծղոտե խսիրներ գործող եմ, և իմ խսիրները մեծ արժեք ունեն»։ Եվ նրանք նրա համար ծղոտ բերեցին և ասացին, որ գործի, և թագավորի որդին երեք օրում երեք խսիր գործեց և ասաց. «Այս խսիրները տարեք պարսիկների թագավորի պալատը և յուրաքանչյուր խսիրի համար ձեզ հարյուր ոսկի կտան»։ Եվ խսիրները տարան թագավորի պալատը, և, երբ թագավորը տեսավ

խսիրները, հասկացավ, որ դրանք իր որդու ձեռքի գործն են, և խսիրները տարավ հովվի աղջկա մոտ և ասաց. «Այս խսիրները բերել են պալատ և դրանք իմ կորած որդու ձեռքի գործն են»։ Եվ հովվի աղջիկը վերցրեց յուրաքանչյուր խսիրը և, մոտիկից նայելով, տեսավ, որ ամեն մի խսիրի զարդերի մեջ իր ամուսնուց պարսիկների գրավոր լեզվով լուր է ուղարկված, և նա հաղորդեց այդ լուրը թագավորին։ Եվ թագավորը,— ասաց տատս,— բազմաթիվ զինվորներ ուղարկեց գողերի ու մարդասպանների որջը, և զինվորներն ազատեցին բոլոր գերիներին և սպանեցին բոլոր գողերին ու մարդասպաններին, և թագավորի որդին անվնաս վերադարձավ իր հոր պալատը, իր կնոջ՝ հովվի աղջկա մոտ։ Եվ երբ տղան մտավ պալատ և նորից տեսավ կնոջը, խոնարհվեց կնոջ առջև և գրկեց նրա ոտքերն ու ասաց. «Սեր իմ, քո շնորհիվ է, որ ես ողջ եմ»։ Եվ թագավորը մեծապես գոհ մնաց հովվի աղջկանից։

— Հիմա հասկացա՞ր,— ասաց տատս,— թե ինչո՞ւ է պետք, որ ամեն մարդ մի ազնիվ արհեստ սովորի։

— Շատ լավ հասկացա,— ասացի ես,— և հենց այնքան փող վաստակեմ, որ կարողանամ մի սղոց, մի մուրճ ու մի կտոր տախտակ առնել, ձեռիցս եկածը կանեմ, որ մի հասարակ աթոռ կամ գրադարակ գլուխ բերեմ։

ՆԱՐԻՆՋՆԵՐԸ

Նրան ասված էր.

— Երկու ամենախոշոր նարինջներ ձեռքդ բռնած կանգնիր փողոցի անկյունում և երբ մոտովդ ավտոմոբիլներ անցնի, ժպտա ու մեկնի նարինջները։ Մեկ հատը՝ հինգ սենթ, եթե մեկը վերցնեն, երեք հատը տասը սենթ, դյուժինը՝ երեսունհինգ սենթ։ Ժպտա բերանովդ մեկ,— ասաց հորեղբայր Ջեկը,— կարո՞ղ ես, չէ՞, Լյուկ։ Դու այդպիսին ես, չես ժպտա, չես ժպտա, մեկ էլ տեսար ժպտացիր, հը՞։

Մեծ դժվարությամբ նրան հաջողվեց ժպտալ, բայց ի պատասխան դրա, հորեղբայր Ջեկը սոսկալի ծամածռեց դեմքը, և նա հասկացավ, որ ժպիտը վատ էր ստացվել։ Այլ բան, եթե նա կարողանար սովորել ուրիշների պես բարձր ծիծաղել, բայց, ախր, ուրիշները այնպես ահաբեկված, այնպես ծեծկված չէին, ինչպես ինքը։

— Կյանքումս այսպիսի լուրջ տղա չեմ տեսել,— ասաց հորեղբայր Ջեկը,— լսիր, Լյուկ...

Նա պպզեց Լյուկի առաջ, որպեսզի ուղիղ աչքերին նայի և շարունակեց.

— Լյուկ, քեզնից նարինջ չեն գնի, եթե չժպտաս։ Մարդկանց հաճելի է, երբ նարինջ վաճառող տղան ժպտում է։ Դա նրանց դուր է գալիս։

Լյուկը նայում էր հորեղբոր աչքերին, լսում էր նրա խոսքերը, բայց մի բան էր զգում միայն՝ որ հորեղբայր Ջեկը նույնպիսի ծեծկվածի մեկն է, ինչպես ինքը։ Հորեղբայրը ուղղվեց ու ծանր հառաչ հանեց, ճիշտ այնպես, ինչպես մի ժամանակ Լյուկի հայրն էր հառաչում։

— Լյուկ,— ասաց հորեղբայրը,— կարո՞ղ ես ժպտալ թեկուզ մեկ անգամ։

— Կտեսնես նրա ժպիտը, ինչպե՞ս չէ,— ասաց հորեղբայր Ջեկի կինը։— Վախկոտ չլինեիր, հիմա ինքդ դուրս կգայիր փողոց ու կվաճառեիր նարինջները։ Ինչ դո՞ւ, ինչ քո եղբայրը։ Գերեզմա՛ն մտնեիր նրա ետևից, գերեզմա՛ն։ Այնտեղ է միայն քո տեղը։

Ա՛յ, հենց այդ պատճառով էլ Լյուկը դժվարանում էր ժպտալ։ Նրա համար, որ այդ կինը միշտ խայթում էր հորեղբայր Ջեկին։ Էլ ինչպե՞ս է նա ուզում, որ ինքը ժպտա ու դեմքը չխոժոռի, եթե մի գլուխ պընդում է, թե նրանք ամբողջ ընտանիքով բանի պետք չեն։

Ջեկը Լյուկի հոր փոքր եղբայրն էր և ինչ-որ բանով շատ էր հիշեցնում նրան։ Իսկ Ջեկի կինը միշտ ասում է, թե լավ էր, որ Լյուկի հայրը մեռավ և, իհարկե, միայն նրա համար, որ առևտուր անել չգիտեր։ Նա միշտ Ջեկին ասում է. «Մենք Ամերիկայում ենք, ոչ թե մի ուրիշ տեղ։ Դու պետք է ավելի շատ մարդկանց հանդիպես, աշխատես հաճելի լինել նրանց»։ Ջեկն էլ ասում է. «Հաճելի՞ լիներ։ Ես ինչպե՞ս կարող եմ հաճելի լինել նրանց»։

Եվ կինը միշտ բարկանում է նրա վրա ու ասում. «Հիմար ես, հիմար։ Եթե ես երեխայով չլինեի, վաղուց ծառայության կմտնեի Ռոզենբերգի պահեստները և քեզ էլ կպահեի երեխայիս պես»։

Ջեկը նույնպիսի հուսահատ արտահայտություն ուներ, ինչպես Լյուկի հանգուցյալ հայրը։ Նա միշտ ինքն իրենից դժգոհ էր, իսկ ուրիշներին ուզում էր գոհ և ուրախ տեսնել։ Ու անվերջ խնդրում էր Լյուկին, որ ժպտա։

— Լա՛վ,— ասաց Ջեկը,— լա՛վ, լա՛վ, լա՛վ։ Թող ես խենթանամ, թող մեռնեմ։ Գերեզմանն է իմ տեղը։ Իհարկե։ Տասը արկղ նարինջ ունենք, բայց ուտելու ոչինչ, ոչ փող, ոչ էլ տանը մի կտոր հաց։ Ավելի լավ չի՞ մեռնեիր։ Հիմա ի՞նչ է, գնամ տնկվեմ փողոցում ու նարի՞նջ մեկնեմ անցորդներին։ Կամ գուցե սայլակով նարի՞նջ ման տամ քաղաքում։ Ավելի լավ է մեռնեի։

Ջեկն այնպես դժբախտ ու տխուր տեսք ուներ, կարծես աշխար-

հում ավելի տխուր մարդ չէր եղել, և որովհետև Ջեկը շատ էր տխուր, Լյուկն աշխատեց զսպել իրեն ու լաց չլինել։ Մյուս կողմից էլ Ջեկի կինը առաջվանից էլ ավելի բորբոքվեց ու լաց եղավ՝ այնպես, ինչպես լաց էր լինում այն դեպքերում, երբ իսկապես զայրացած էր։ Եվ այն յանից, որ նա լաց էր լինում ոչ թե վշտացած, այլ զայրույթով, Լյուկը ավելի ու ավելի էր զգում, թե ինչքան սարսափելի է ամեն ինչ։ Լաց լինելով, կինը Ջեկին հիշեցրեց բոլոր անվճար մնացած հաշիվները և միասին անցկացրած բոլոր սև օրերը։ Իսկ երեխայի մասին, որ դեռ նոր պետք է ծնվեր, ասաց. «Է՜հ, ի՞նչ օգուտ, որ աշխարհիս երեսին մի հիմար էլ ավելանա»։

Հատակին գրված էր նարինջներով լի արկղը, և նա լաց լինելով վերցրեց այնտեղից երկու նարինջ ու ասաց.

— Վառարանում ածուխի կտոր չկա, այն էլ նոյեմբեր ամսին. ախր սառչում ենք, չէ՞։ Տնից պետք է մսի հոտ գա։ Դե, ա՜ռ, բռնի՛, կեր քո նարինջները։ Այնքան կեր, որ խեղդվես։

Եվ նա լալիս ու լալիս էր։

Ջեկն այնքան էր վշտացած, որ ոչ մի բառ անգամ ի վիճակի չէր արտասանել։ Նստեց բազկաթոռին և սկսեց ետ ու առաջ ճոճվել, հայացքն էլ կարծես խենթի հայացք լիներ։ Եվ դեռ ուզում են, որ ինքը՝ Լյուկը ծիծաղի։

Իսկ Ջեկի կինը նարինջները ձեռքին անվերջ գնում-գալիս էր անկյունից անկյուն՝ լաց լինելով ու կրկնելով երեխայի մասին։

Քիչ հետո նա դադարեց լաց լինելուց։

— Դե՛, ուղեկցիր նրան մինչև փողոցի անկյունը,— ասաց կինը,— գուցե իսկապես մի բան վաստակի։

Ջեկը կարծես խլացել էր, անգամ գլուխը չբարձրացրեց։

— Անկյո՛ւնը տար նրան,— բղավեց կինը։— Թող ժպտա մարդկանց։ Մեզ ուտելու բան է պետք։

Ի՞նչ միտք ունի ապրելը, երբ շուրջդ ամեն ինչ այդքան զզվելի է և ոչ մեկը չգիտի, թե ինչ անի։ Ի՞նչ միտք ունի դպրոց գնալ, թվաբանություն սովորել, ոտանավոր կարդալ, բաղդիջան ու ամեն տեսակ անպետք բաներ նկարել։ Ի՞նչ միտք ունի նստել ցուրտ սենյակում, մինչև քնելու ժամանակը գա, հետո անկողին մտնել՝ լսելով Ջեկի ու իր կնոջ անդադար կռիվը, արտասվելով քնել ու արթնանալ և տեսնել մռայլ երկինքը ու դողդողալ ցրտից։ Դողդողալով դպրոց գնալ ու նախաճաշին հացի փոխարեն նարինջ ուտել։

Ջեկը վեր թռավ տեղից ու սկսեց գոռգոռալ կնոջ վրա։ Գոռալով ասում էր, որ կտա կսպանի նրան, իսկ հետո էլ դանակը իր սիրտը

կիրի, և դրա վրա կինը առաջվանից էլ սաստիկ լաց եղավ և, շորը կրծքին պատռելով, գոչեց. «Այո՛, ավելի լավ է ամենքս էլ մեռնենք։ Սպանի՛ր ինձ, սպանի՛ր»։ Բայց Ջեկը թեը նրա ուսին գցած տարավ մյուս սենյակը ու այնտեղից լսվում էր, թե ինչպես կինը լաց է լինում ու համբուրում Ջեկին ու ասում ու կրկնում, որ նա իսկական երեխա է, մեծ ու հիմար մի երեխա։

Մինչ այդ Լյուկը անշարժ կանգնած էր անկյունում, իսկ ժամանակը այնպես արագ էր անցել, որ նա չէր էլ նկատել, թե ինչքան է հոգնած։ Նա շատ էր հոգնել ու սոված ացել և հիմա ընկավ աթոռի վրա։ Ի՞նչ միտք ունի ապրելը, երբ ամբողջ աշխարհում դու մեն-մենակ ես, չունես ո՛չ հայր, ո՛չ մայր, ո՛չ մեկը, որ սիրի քեզ։ Նա ուզում էր լաց լինել, բայց արտասվելուց ի՞նչ օգուտ։

Քիչ անց Ջեկը սենյակից դուրս եկավ շինծու ուրախ դեմքով։

— Մի բան է միայն պահանջվում քեզնից, Լյո՛ւկ,— ասաց նա,— երկու մեծ նարինջ բռնել ձեռքդ, մեկնել դրանք ավտոմոբիլանոներով անցնողներին ու ժպտալ։ Հինգ րոպեում մի ամբողջ արկղ կվաճառես։

— Կժպտամ,— ասաց Լյուկը,— հատը հինգ սենթ, երեք հատը՝ տասը, դյուժինը՝ երեսունհինգ սենթ։

— Միանգամայն ճիշտ է,— ասաց Ջեկը։

Ջեկը հատակից բարձրացրեց նարինջներով լի արկղը և գնաց դեպի դուռը։

Շատ տխուր էր փողոցում, Ջեկը քայլում էր արկղը ձեռքին ու անվերջ կրկնում, թե պետք է բերանով մեկ ժպտալ, երկինքը տխուր էր, ծառերին՝ ոչ մի տերև, փողոցը՝ տխուր, նայում զարմանում ես, նարինջներն այնպես կոկիկ, սիրունիկ՝ նայում զարմանում ես. այդքան դեղեցիկ ու այդքան տխուր։

Նրանք հասան Վենտուրա փողոցի անկյունը, որտեղից անցնում էին բոլոր մեքենաները, և Ջեկը արկղը դրեց մայթին։

— Ավելի լավ է, երբ փոքրիկ տղան մենակ է լինում,— ասաց նա,— ես տուն եմ գնում, Լյուկ։

Ջեկը նորից պպզեց ու նայեց նրա աչքերին։

— Ջես վախենում, չէ՞, Լյուկ։ Ես լույսով քեզ մոտ կվերադառնամ։ Մութը դեռ մի երկու ժամից կընկնի։ Ուրախ պահիր քեզ ու կարգին ժպտա։

— Կժպտա՞մ,— ասաց Լյուկը։

Այստեղ Ջեկը վեր թռավ տեղից, կարծես թե առանց վեր թռչելու չէր կարող ոտքի կանգնել, և համարյա վազելով հեռացավ փողոցից։

Լյուկը ընտրեց երկու մեծ նարինջ, բռնեց աջ ձեռքում և բարձրաց-

րեց գլխից վեր։ Դրա ի՞նչն էր լավ։ Պարզապես տխուր դրություն։ Ի՞նչ միտք ունի ձեռքին երկու նարինջ բռնել, բարձրացնել դրանք գլխից վեր ու աշխատել ժպտալ ավտոմեքենաներով անցնողներին։

Թվաց, թե շատ ժամանակ անցավ, մինչև որ նա տեսավ մի ավտոմեքենա, որ գալիս էր քաղաքից, փողոցի այն կողմով, ուր կանգնած էր ինքը։ Իսկ երբ մեքենան մոտեցավ, նրա մեջ տեսավ մի տղամարդ՝ ղեկի մոտ, իսկ հետևում մի կին, երկու երեխաներով։ Լյուկը բերանով մեկ ժպտաց նրանց, բայց չէր երևում, թե կանգնելու մտադրություն ունեն, այնպես որ նա մոտեցավ մայթի եզրին ու թափահարեց նարինջները։ Հիմա նա արդեն շատ մոտիկից տեսավ նրանց դեմքերը և ժպտաց՝ բերանը մի քիչ էլ լայնացնելով։ Ավելին չէր էլ կարող, որովհետև այտերը հոգնում էին։ Բայց մեքենան կողքով անցավ ու գնաց, և մարդիկ նույնիսկ չժպտացին ի պատասխան։ Մեքենայում նստած փոքրիկ աղջիկը ծամածռեց դեմքը, ասես թե գտավ, որ նա անճոռնի տեսք ունի։ Ի՞նչ միտք ունի կանգնել փողոցի անկյունում և փորձել նարինջ վաճառել մարդկանց, որոնք ծամածռում են դեմքերը, երբ դու ժպտում ես նրանց և ցանկանում հաճելի լինել։ Ի՞նչ միտք ունի ցավեցնելու չափ մկանները լարել, ինչ է թե կան աշխարհում հարուստ մարդիկ և կան չքավորներ, և հարուստները ուտում ու ծիծաղում են, իսկ չքավորները ուտելու բան չունեն և միշտ վիճում են և գոռում մեկմեկու՝ «Սպանի՛ր ինձ»։

Նա ձեռքը ցած իջեցրեց, դադարեց ժպտալ, նայեց հրշեջ ծորակին, ծորակից այն կողմ ջրհորդանն էր, իսկ ջրհորդանից դենը՝ Վենտուրա փողոցը, նրա երկու կողմերում՝ տներ, տներում՝ մարդիկ, իսկ այնտեղ, ուր վերջանում է փողոցը, քաղաքից դուրս՝ խաղողի այգիներ, մրգաստաններ, գետեր ու դաշտեր, իսկ հեռվում՝ սարեր, իսկ սարերից այն կողմ՝ էլի քաղաքներ, էլի տներ, էլի փողոցներ, էլի մարդիկ։ Ի՞նչ միտք ունի ապրել աշխարհում, երբ նույնիսկ հրշեջ ծորակին չես կարող նայել առանց լաց լինելու ցանկության։

Փողոցում էլի մի ավտոմեքենա երևաց, և Լյուկը բարձրացրեց ձեռքը ու նորից ժպտաց, իսկ երբ մեքենան մոտեցավ, պարզվեց, որ ղեկին նստած մարդը նույնիսկ չի էլ նայում իրեն։ Հատը հինգ սենթով նրանք կարող են նարինջներ ուտել։ Հացից ու մսով ճաշից հետո ուտել մի-մի նարինջ։ Մաքրել կեղևը, ներծծել նրա հրաշալի հոտը և ուտել այն։ Կարող են պարզապես կանգնեցնել մեքենան և տասը սենթով գնել երեք հատ։ Ահա մի մեքենա էլ մոտեցավ։ Լյուկը ժպտաց ու թափահարեց ձեռքը, բայց մարդիկ միայն նայեցին նրան. ուրիշ ոչինչ։ Ախր մեկը թեկուզ ժպտար ի պատասխան՝ նա իրեն ավելի լավ կզգար։ Բայց ոչ՝

մոտովն անցնում էին նույնիսկ առանց ժպտալու։ Կողքով շատ մեքենաներ անցան գնացին և Լյուկին արդեն թվում էր, որ ինքը բոլորովին իզուր է կանգնել մայթին ու ժպտում, ավելի լավ է՝ նստի ու լաց լինի։ Ոչ մի նարինջ էլ պետք չէ նրանց, ոչ էլ Լյուկի ժպիտը, ինչ ուզում է ասի հորեղբայր Ջեկը։ Նայում են իրեն ու անցնում. ուրիշ ոչինչ։

Մութն ընկավ, և նրան այնպես թվաց, թե կարող է աշխարհի վերջը գալ, իսկ ինքը մինչև աշխարհի վերջը այդպես պետք է կանգնի՝ ձեռքը բարձրացրած ու ժպտալով։

Նրան թվաց, թե հենց այն բանի համար է ծնվել, որ կանգնի այստեղ, անկյունում՝ մինչև աշխարհի վերջը, նարինջները մեկնի մարդկանց ու ժպտա, արցունք թափելով ժպտա։ Շուրջը ամեն ինչ սև է ու դատարկ, իսկ նա կանգնել ու ժպտում է այտերը ցավեցնելու չափ ու աչքերից էլ արցունք է թափվում, որովհետև չեղավ մեկը թեկուզ, որ ժպտար իրեն, ու հիմա ամբողջ աշխարհը կարող է փլվել, խավարել և աշխարհի վերջը կգա, և կմեռնի հորեղբայր Ջեկը, և նրա կինը կմեռնի, և չեն լինի ոչ փողոցներ, ոչ տներ, ոչ մարդիկ, ոչ երկինք կլինի, ոչ գետ, ոչ դաշտ և ոչ մի տեղ չի լինի ոչ մի շոնչ-կենդանի, ոչ էլ անգամ դատարկ փողոց, ոչ մութ պատուհան, ոչ փակ դռներ, որովհետև չեն ուզում նարինջ գնել իրենից և չեն ժպտալու իրեն և աշխարհը խավարելու է...

ԿՈՏՐՎԱԾ ԱՆԻՎԸ

Մենք փոքրիկ տուն ունեինք Սանտա Կլարա փողոցում, Ֆրեզնոյի հեռավոր թաղամասերից մեկում, որտեղ բոլորն իրենց քեֆին ման էին գալիս ու իրար հետ զրուցում էին բակից բակ, նրբանցքից նրբանցք ու փողոցից փողոց։ Այդ տունը պատկանել էր մի մարդու, որը զբաղվել էր ամեն տեսակ ընկուզեղեն խորովելով ու վաճառելով։ Երկու փոքր մարագներում մենք գտնում էինք մեծ ու պստիկ սարքեր, իսկ Երբեմն էլ հատակի ճեղքերից ընկույզի միջուկներ ու կճեպներ էինք հանում։ Տունը բուրում էր մաքուր, առողջ հոտով։ Խոհանոցի լվացարանի մոտ բազում ծղրիդներ կային և մի քանի տնային սարդեր, այն տեսակից, որ կոչվում են երկարոտն մամուկներ։ Կար նաև մի կատու։ Երբ մենք տեղափոխվեցինք այդ տուն, կատուն արդեն կար, այնպես որ մենք նրան ընդունեցինք իբրև օրինական փոխանցում։ Խոշոր, սև արու կատու էր՝ հպարտ ու անտարբեր կեցվածքով և սեփական գերազանցությամբ ազնվական պահվածքով։ Սկզբում կատուն ապրում էր տան տակ,

մթությանմեջ, բայց հետո, երբ եղանակը ցրտեց, տեղափոխվեց տուն։ Մեր մտքով երբեք չանցավ որևէ անուն տալ նրան, պարզապես հայերեն ասում էինք «կատու»։

Տան կողքին, նրբանցքի մոտ երկու մոլաթզենու ծառ ունեինք, իսկ ետնաբակում՝ մի անգլիական ընկուզենի, որը երևի քսան տարեկան կլիներ։ Ունեինք նաև մի պստիկ ձիթենի ու երեք եղրևենի, որոնք գավիթին շատ մոտ էին աճում։ Խիտ պատատուկները ստվերում էին գավիթը։ Բակում խորդենիներ, բերմուդյան խոտ և այլ բույսեր էլ էին աճում։ Որոշ ժամանակ անց հայտնվեցին երկու դեղձենի, մի կակտուսի ծառ ու կաստորի տնկի։ Դեղձենիները բուսնեցին պատահականորեն, մենք դրանք տնկելու մտադրություն էլ չունեինք, պարզապես դեղձի կորիզները նետել էինք բակ ու ծառերը իրենք իրենց բուսնել էին։ Մենք դրանց տեղը չփոխեցինք։ Դեղձենիներն իրար չափից դուրս մոտ էին աճում, բայց դրանք կամ անչափ բախտավոր էին, կամ էլ չափազանց համառ՝ երեք տարի անց աշնանը դրանցից թափվող տերևները բավական էին մի ամբողջ կույտ անելու ու այրելու համար։ Դեղձենիները բակից դուրս էին աճում, բայց քանի որ մենք ոչ ցանկապատ ունեինք, ոչ էլ մոտ ապրող հարևաններ, բացի մի ընտանիքից, որ բնակվում էր նրբանցքի հակառակ կողմում, մենք դրանք համարում էինք մերը։ Տարին մեկ իմ քույր Նաոմին դեղձենիների վարդագույն ծաղիկներ էր բերում տուն և դնում սև սկահակի մեջ։

Մենք նայում էինք սկահակում դրված ծաղիկներին ու ծիծաղում էինք, քանի որ ձմեռը վերջացել էր։ Մենք ձմռանն էլ էինք մի գլուխ ծիծաղում։ Շաբաթներով լինում էինք խոժոռ ու թախծոտ, իսկ հետո հանկարծ բոլորս սկսում էինք ծիծաղել։ Տասնհինգ-քսան րոպե ծիծաղում էինք, իսկ հետո կրկին դառնում էինք խոժոռ ու թախծոտ։

Իմ եղբայր Գրիգորը խնամում էր կակտուսի ծառը։ Օրերից մի օր նա եկավ տուն՝ մի փոքրիկ փշոտ կակտուս ձեռքին ու ասաց.

— Գիտե՞ք, որ ժամանակին այս ամբողջ երկիրն անապատ է եղել ու ամենուրեք կակտուսներ են աճել։

— Ուզում ես ասել, որ այստեղ ոչ ոք չի՞ ապրել։

— Այո,— պատասխանեց Գրիգորը,— ինձ թվում է ոչ ոք, բացի մողեսներից, օձերից, եղջերավոր դոդոշներից, բաղեներից ու նման բաներից։ Ոչ մի մարդ։

Ես պատկերացրի մեր հովիտն առանց մարդկանց, փողոցների ու տների և դա ինձ շատ տարօրինակ թվաց։

— Այսինքն մինչև Սելմա, էնտեղից էլ մինչև Քլովիս և Սքագզ Բրի-

չի վրայով մինչև Քերման ընկած ամբողջ տարածությունո՞ւմ,— հարցրի ես։

— Այսինքն ամբողջ հովիտում,— պատասխանեց Գրիգորը։— Նկատի ունեմ Քոուսթ Բեյնջի և Սիեռա-Նևադայի միջև ընկած այս ամբողջ հարթավայրում։ Այս բոլոր հողերը, ուր հիմա այդիներ են ցցված։ Առաջ այստեղ չոր ու ցամաք է եղել, և մարդիկ սկսել են ջրանցքներով ու ոռոգման խրամներով ջուր բերել։

Այդ օրը Գրիգորը կակտուսը տնկեց, և երբ ես դարձա տասը տարեկան, կակտուսն արդեն կարմիր ծաղիկներ ու մի տեսակ պտուղ էր տալիս, որը ոչ ոք չգիտեր, թե ինչպես կարելի է ուտել։ Կակտուսը բարձրահասակ մարդուց էլ բարձր էր։

Կաստորի ծառն էլ պատահականորեն հայտնվեց։ Նրբանցքի հակառակ կողմում ապրող մեր հարևանի այգում կաստորի ծառ էր աճում։ Մի ամառ դրա սերմերից մի քանիսն ընկան մեր բակ, իսկ հաջորդ ամառ մենք արդեն կաստորի մեր ծառն ունեինք։ Դա մի տեսակ ապօրինի բուսած ծառ էր, որն աճում էր չափազանց արագ և ծառ կոչվելու համար շատ էր նուրբ։ Անգամ մի փոքրիկ տղա չէր կարող մագլցել այդ ծառը, և ամենաթույլ քամին իսկ կոտրատում էր նրա ճյուղերը։ Բայց նա ուներ գեղեցիկ տերևներ, մաքուր, ուժեղ բուրմունք և մեծ ստվեր էր նետում։ Այդ ծառը մենք չէինք տնկել, բայց քանի որ սկսել էր աճել, ուրախ էինք։

Ամռանը խիստ շոգ էր լինում և վաղորդյան զովը զգալու համար մենք շուտ էինք արթնանում։ Ամեն ամառ քաղաքից տրակտոր էին ուղարկում Սանտա Կլարա փողոցի կուպրը փորելու և նրբանցքը բարեկարգելու համար։ Տրակտորը, միալար հոնդալով, մեր տանը մոտենալով ու հեռանալով, մեծ աղմուկ էր հանում։ Առավոտյան մենք լսում էինք հեռվից եկող նրա բում-բում-բումն ու ասում էինք՝ ըհը, նորից հայտնվեց։ Երբեմն էլ հարց էինք տալիս՝ իսկ ի՞նչ կպատահի, եթե փողոցը մի քիչ էլ խորդուբորդ լինի։ Մեկ է, ասում էինք, ոչ ոքի պետքը չի։ Գասպարյանը, ամեն ամառ ձմերուկ վաճառող մարդը, հայերեն «ձմերուկ» կանչելով, իր խարխուլ սայլով ու ծեր ձիով ամեն օր անցնում էր մեր փողոցով։ Ուրիշ երթևեկություն առանձնապես չկար։ Նրբանք, ովքեր ուզում էին շուտ տեղ հասնել, հեծանիվ էին քշում։

Մի տարի իմ քեռի Վահանը, որ այն օրերին երիտասարդ էր, իր նոր-նոր «ափերսոնով» եկավ ու կանգ առավ մեր տան առջև։

— Հավանո՞ւմ եք,— հարցրեց նա։— Ամերիկայում ընդամենը տասնմեկ «ափերսոն» կա և դրանցից միայն մեկն է կարմիր։

Նրանը կարմիրն էր։ Մենք բոլորս ծիծաղեցինք, իսկ իմ քեռի Վահանը սիգարետներ էր ծխում։ Նա իր քրոջը՝ իմ մորը, զբոսանքի տարավ Բոուդինգ Փարք։ Դա մորս առաջին զբոսանքն էր ավտոմեքենայով և նա շատ հպարտ էր եղբորով։ Մենք բոլորս նրան երևելի մարդ էինք համարում։ Բանը միայն «ափերսոնը» չէր, նաև լարվածությունն ու եռանդն էր, ծիծաղելու ու խոսելու ձևը։ Մորս հետ վերադառնալուց հետո նա քաղաք զբոսանքի տարավ իմ քույրերին՝ Լյուսիին ու Նաոմիին։ Իմ եղբայր Գրիգորը գիրքը ձեռքին գավիթում նստած անհամբեր իր հերթին էր սպասում։ Գրիգորն ասաց, որ մեքենան կարող է ժամում հիսուն մղոն արագությամբ գնալ։ Ռուբենը, մեր հարևանը, մեզ հետ միասին նստած էր գավիթում։ Նա ասաց, որ իր քեռի Լևոնը «կադիլակ» ունի, որը ժամում վաթսուն մղոն արագությամբ կարող է գնալ։

— Այո,— ասացի ես,— բայց հո կարմի՞ր չէ։

Նա համաձայնեց, որ մեքենան սև էր։

— Ամերիկայում միայն մի կարմիր «ափերսոն» կա,— ասացի ես։

Դա նույնն էր, որ ասեին, թե մեկի ապուպապը տեսել է Լինկոլնին կամ էլ թե նրա նախնիները ժամանել են «Մեյֆլաուեր[1]» նավով, միայն ավելի տպավորիչ էր։ Գիտեիր՝ ուր որ է անկյունից կհայտնվի անիվավոր կարմիր հսկան ու կանգ կառնի տանդ առջև, և զգում էիր, որ դա մեծ բան է։

Իմ քեռի Վահանը Լյուսիի ու Նաոմիի հետ վերադարձավ և մտավ տուն, տաճկական սուրճ խմելու։ Մենք լսում էինք, թե նա ինչպես էր քրոջը պատմում Սան Ֆրանցիսկոյի կյանքի մասին։ Նա քննություն էր հանձնել ու այժմ փաստաբան էր, բայց ունեցած դրամի մեծ մասը ձմերուկի մեծաքանակ վաճառքից էր վաստակել։ Նա հուսով էր, ի վերջո, այստեղ՝ Բոուել Բելդինգում մի հիմնարկ բացել։ Մայրս կրտսեր եղբոր համար շատ ուրախ էր և մենք լսում էինք, թե ինչպես է նրա հետ ծիծաղում ու հարցեր տալիս։

Գրիգորը խիստ անհանգիստ էր, որովհետև մեր քեռի Վահանը նրան զբոսնելու առաջարկ չէր արել, իսկ ինքն էլ շատ էր հպարտ ու քաղաքավարի, որպեսզի խնդրեր իրեն էլ զբոսանքի տանել։ Ես էլ այդ ժամանակ այն էի զգում, որ մեր ընտանիքում փաստաբան կա և նա կարմիր «ափերսոն» ունի։ Ուրեմն մենք ձեռներեց մարդիկ ենք։ Դա ինձ այնքան էր ուրախացնում, որ ես չէի կարող հանգիստ նստել և անընդհատ թռչում էի պատշգամբի բազրիքի վրա, քայլում ու ցած ցատկում։

---

1 «Մեյֆլաուեր» («Մայիսյան ծաղիկ»)— այն նավի անվանումը, որով 1620 թվին մի խումբ անգլիացի վերաբնակիչներ եկել են Հյուսիսային Ամերիկա և հիմնել Նոր Պլիմուտ ավանը, սկզբնավորելով Նոր Անգլիայի գաղութները։

Երբ իմ քեռի Վահանը տանից դուրս եկավ, Գրիգորը, մեքենայից մի քանի քայլ հեռու կանգնած, հիանում էր նրանով։ Գրիգորն այնպես համեստորեն էր հիանում, որ իմ քեռի Վահանը գլխի ընկավ, թե ինչն է նրան տանջում և ասաց.

— Եկեք, տղերք։ Ես ձեզ մեքենայով ման կածեմ։

Իմ քեռի Վահանը միացրեց շարժիչն, ու մենք պոկվեցինք՝ մեծ աղմուկ ու ծուխ հանելով։ Հիշում եմ՝ մայրս, Լյուսին ու Նատին պատշգամբում կանգնած ձեռքով էին անում մեզ։ Մենք քաղաքով մեկ տպավորիչ ճանապարհորդություն կատարեցինք և շատ ուրախ էինք ու ոգևորված։ Երբ վերադարձանք, մայրս երկու սառը ձմերուկ կտրեց և բոլորս նստեցինք պատշգամբում։ Ձմերուկն ուտում էինք ու զրուցում։ Շատ շոգ էր, և բոլորս քրտնել էր որ քրտնում էինք, բայց դա պայծառ ակնթարթ էր մեր կյանքում։

Իմ քեռի Վահանն ասաց.

— Մենք չենք էլ իմանում, թե որքան բախտավոր ենք, որ այսպիսի երկրում ենք ապրում, ուր ամեն ոք ազատ է։

Նա հայերեն էր խոսում, քանի որ իր համար այդպես ավելի հեշտ էր։

Նա Ամերիկա էր եկել տասներեք տարեկան, իսկ այժմ քսաներկու տարեկան էր։ Իմ քեռի Վահանը Գրիգորին հարցրեց, թե նա որոշե՞լ է արդյոք ինչ մասնագիտություն պիտի ձեռք բերի, և Գրիգորը շփոթվեց։

— Հուսով եմ,— ասաց իմ քեռի Վահանը,— որ դու որոշես իրավաբանությամբ զբաղվել։

Մայրս բացականչեց.

— Անշուշտ։

Ինձ թվում էր, թե Գրիգորը կուզենա երաժիշտ դառնալ, բայց ես ոչինչ չասացի։ Մեկ-երկու օրից իմ քեռի Վահանն իր կարմիր «ափերսոնը» քշեց գնաց, և մենք սկսեցինք հիշել նրա այցելության բոլոր մանրամասները, որոնց վրա սկզբում ուշադրություն չէինք դարձրել։ Մեր տանն ամեն ինչ հաստատուն ու անփոփոխ էր, և մենք չէինք նկատում, թե ժամանակն ինչպես է թռչում։ Մի օր Գրիգորը տուն եկավ սև պայուսակով։ Ճաշասենյակում նա պայուսակը սեղանին դրեց, և մենք բոլորս հավաքվեցինք շուրջը, տեսնելու, թե մեջն ինչ կա։ Մենք երբեք չգիտեինք, թե Գրիգորն ինչ կարող է անել հաջորդ պահին և մշտապես ամեն ինչի պատրաստ էինք։ Գրիգորը խիստ հուզված էր ու լուռ։ Նա պայուսակի բանալին մտցրեց փականքի անցքն ու պտտեց, բաց արեց պայուսակը, և մենք տեսանք, որ մեջը նվագելու գործիք է։ Մայրս հայերեն հարցրեց.

— Սա ի՞նչ է, Գրիգոր։

Ծվ նա պատասխանեց, որ դրա անունը կոռնետ է։

Որքան հիշում եմ, որտեղ էլ որ բնակվել ենք, տանը դաշնամուր է եղել։ Լինում էին ժամանակներ, երբ մեզնից ոչ ոք ամիսներով դաշնամուրին մոտ չէր գնում, բայց հետո հանկարծ բոլորս էլ սկսում էինք դաշնամուր նվագել։ Իմ քույր Լյուսին դասեր էր առել և կարող էր նոտաներով նվագել։ Նա Շոպեն ու Մոցարտ էր նվագում։ Նա նվագում էր ժողովրդական երգեր՝ «Վառ պահեք տան օջախը», «Սիրում եմ քեզ, Կալիֆոռնիա», «Կար մի երկար-երկար շավիղ», «Ծպիտներ», «Օհ, ինչ լավն էր Մերին» և նման բաներ։ Ես ոչ նոտաներով էի կարողանում նվագել, ոչ էլ լսողությամբ, բայց հաջողացրել էի մի քանի մեղեդի հորինել, որոնցից, երևում էր, երբեք պրծում չէի ունենալու։ Հուսահատ հարվածում էի դաշնամուրի ստեղներին, փորձելով ձայնի տոնայնության ու տեմպի բոլոր հնարավոր տարբերակները, որ ձեռքիցս գալիս էին։ Քույրերիցս մեկնումեկը շարունակ ինձ հեռու էր քշում դաշնամուրից։ Չգիտեի էլ ինչու էի ձգտում դաշնամուր նվագել, թվում էր, եթե նվագեմ, շուրջս ինչ-որ բան կկատարվի, կփոխվի, բայց ամեն անգամ պարզվում էր, որ ամեն ինչ մնում է նույնը։

Գրիգորի կոռնետը կոպիտ ու խառնաշփոթ բան էր, ավելի շուտ կապարի կտոր, քան երաժշտական գործիք։ Նա նոտակալ ու կոռնետ նվագելու ինքնուսույց բերեց տուն։

— Մինչև Ծննդյան տոները,— ասաց նա,— կսովորեմ նվագել «Բարկարոլան»։

Երկար ժամանակ Գրիգորը պարապում էր, և մենք երաժշտական փողն արդեն ընկալում էինք որպես մեր տանից անպակաս մի բան, ինչպես կատուն, ծղրիդները կամ անգլիական ընկուզենին, բայց Գրիգորն այդպես էլ «Բարկարոլան» նվագել չսովորեց։ Նա հենց սկզբից դեմ առավ դժվարությունների, եռանդն աստիճանաբար մարեց ու նա կասկածների մեջ ընկավ։ Իր իսկ նվագից Գրիգորը ջղայնանում, տպված նոտաները վերարտադրելու համար հերոսական ջանքեր էր գործադրում, բայց հետո մեկ էլ տեսար շեղվում ու սկսում էր ամեն տեսակ աղմուկներ արձակել։ Մենք դիտեինք, որ նրա հանած աղմուկը լսվում էր և հարավում՝ մինչև Բեյներ բրուվեր, և հյուսիսում՝ մինչև Քորթ հարք փարք, քանի որ այդ մասին մեզ տեղեկացրել էին։ Որոշ ժամանակ անց նա այլևս ի վիճակի չէր լինում փչել և նստում էր տարաբախտ տեսքով։

Նա ասում էր.

— Չգիտեմ ինչն է պատճառը։ Ես կանոնավոր նվագել եմ ու ամեն ինչ արել եմ այնպես, ինչպես գրքում է գրված։

Գրիգորը նայում էր երաժշտական գործիքին ու հարցնում էր.

— Կարծում ես պատճառը սրա հին լինելն է, թե պարզապես կոռնետ նվագելու տաղանդ չունեմ։

Ես չգիտեի ինչ մտածեմ, բայց հասկանում էի, թե նա ինչ է զգում, քանի որ ինքս էլ էի նույն բանը զգում։

Շրջակա թաղերում ամենքը գիտեին, որ Գրիգորը կոռնետ ունի, և երբ նա փողոցով անցնում էր մարդկանց կողքով, նրանք իրար ականջի փսփսում էին.

— Այ սա է այն տղան, որ այդքան աղմուկ է հանում։ Նա կոռնետ ունի ու նվագել է սովորում։ Մենք կարծում էինք, թե փողոցային կատուներն են, բայց կատուներն օրը ցերեկով այդպես չեն աղմկում։

Ամեն ամառ երկարավուն տրակտորը հայտնվում ու օրերը լցնում էր իր շարագույժ խուլ դղրդյունով, ընկույզներն անգլիական ընկուզենուց գետնին էին թափվում և մենք դրանք հավաքում էինք արկղերի մեջ։ Միշտ էլ աննշմարելիորեն ինչ-որ փոփոխություններ էին տեղի ունենում և ամեն գարուն իմ քույր Նաոմին դեղձենու ծաղիկները դնում էր սև սկահակի մեջ։

Մի օր Գրիգորն ասաց.

— Ես որոշել եմ էլ կոռնետ չնվագել։

Նա դա ասաց վճռականորեն, մտածված կերպով։

Մի շաբաթ չանցած նա տուն եկավ հեծանիվով։ Նա հեծանիվը քշում էր ոտքը միջնաձողի տակով անցկացրած, քանի որ նստատեղից ոտքերը ոտնակներին չէին հասնում։ Գրիգորը մոտ տասներկու տարեկան էր, բայց իր տարիքի համեմատ փոքրամարմին էր։ Երբ մայրս նրան տեսավ ոտքը միջնաձողի տակով անցկացրած, ամբողջ մարմինը ծռմռած, փնչացնելով փողոցով քշելիս, գավթի աստիճաններով ցած վազեց մայթ։

— Այդ ի՞նչ ես բերել տուն,— ասաց նա,— դուրս արի այդ խախուտ բանի միջից։ Ուզում ես քեզ ամբողջ կյանքում հաշմանդա՞մ դարձնես։

Գրիգորը հեծանիվը բերեց բակ ու սկսեց նստատեղը ցածրացնել։ Նա շատ չարչարվեց ու որոշ ժամանակ անց նստատեղը հնարավորին չափ ցածրացրեց, բայց նույնիսկ այդպես հեծանիվը նրա համար շատ էր մեծ և նա շարունակում էր քշել ոտքը միջնաձողի տակով անցկացրած։ Մի երեկո մայրս հեծանիվը տարավ տուն ու ներքնասենյակում կողպեց։

— Քո հայրը,— ասաց նա,— ուղիղ կեցվածք ուներ, և քո մայրն էլ ուղիղ կեցվածք ունի։ Կասկած չունենաս, ես թույլ չեմ տա, որ դու քեզ հաշմանդամ դարձնես։ Եթե պիտի անպայման հեծանիվ քշես, այնպիսինը գնիր, որ մարդավարի քշես։

Մոտ երկու տարի Գրիգորը դասերից հետո փողոցներում «Երեկոյան թերթ» էր ծախում ու փողը ետ էր գցում։ Մայրս խրախուսում էր նրա փող հավաքելը, բայց և դեմ չէր լինում, եթե Գրիգորը ծախսում էր իր փողերից այնքան, որքան հարկ էր համարում ծախսել։ Իր ծննդյան տասներկուերորդ տարեդարձին Գրիգորը տուն եկավ մի թխվածքով, որը նրա վրա յոթ դոլար հիսուն սենթ էր նստել։ Երբ մենք հարցրինք, թե ինչու է այդքան անհեթեթ ծախս արել և այդքան մեծ թխվածք բերել տուն, երբ տանն ընդամենը հինգ ուտող կա, նա ասաց.

— Ես ոչ մի անգամ ծննդյան տոնի թխվածք չեմ գնել, հրուշակագործն էլ առաջինը հենց այս թխվածքն առաջարկեց, ես մտածեցի, որ իսկական չափը սա է։ Շա՞տ է մեծ։

Մենք մի ամբողջ շաբաթ Գրիգորի բերած թխվածքն էինք ուտում ու շարունակ այդ մասին էինք խոսում։

Գրիգորը մեծ հեծանիվը ետ տարավ խանութ և փոխանակեց ավելի փոքրի հետ։ Նա սակարկելու մեծ տաղանդ չուներ և առաջին անգամ մեծ հեծանիվ գնելու միակ պատճառը եղել էր այն, որ Քեբոն՝ հեծանիվ վաճառողը, համոզել էր նրան գնել այդ մեկը։ Նա տուն վերադարձավ ավելի փոքր հեծանիվով, նստատեղին բազմած, ինչպես կարգն էր, և մայրս ասաց.

— Այ սա արդեն ուրիշ բան է։ Հիմա կարգին տեսք ունես։

Շատ չանցած ես սկսեցի հեծանիվն ավելի հաճախ քշել, քան Գրիգորը և մենք, ի վերջո, այդ հողի վրա կռվեցինք։ Մենք առաջ էլ էինք կռվել, բայց դա մեր կռիվներից ամենամեծը եղավ, քանի որ մենք էլ էինք մեծացել։ Սկզբում Գրիգորն էր իմ ետևից վազում տան շուրջը, հետո ես էի անսպասելիորեն շրջվում ու հետապնդում նրան հակառակ ուղղությամբ։ Մենք ծեծկռտվում էինք, երբ մայրս բաժանեց մեզ ու ասաց, որ եթե չդադարենք կռվել, առհասարակ հեծանիվի երես չենք տեսնի։ Ես գիտեի, կարծում եմ Գրիգորն էլ գիտեր, որ խնդիրը հեծանիվը չէր, մենք, մեկ է, կռվելու որևէ առիթ կգտնեինք։ Պարզապես այդ պահին հեծանիվը պատճառ դարձավ։ Բանն այն էր, որ մենք եղբայրներ էինք և ինչ էլ որ անեինք, անում էինք իրար հետ։ Մի օր, երբ ես ու Գրիգորը լուռումունջ կռվում էինք բակում, ծերուկ Անդրեասը, որ անցնում էր մեր տան կողքի ամայի տարածությունով, վազեց մեր դռան կողմն ու գոչեց.

— Եսթեր, Եսթեր, տղաներդ ինչպես պատում են։

Մենք սկսեցինք հեծանիվը երկուսով քշել, մեկս մյուսին միջնաձողին նստեցնելով։ Երբեմն ես էի Գրիգորին նստեցնում առջևում, բայց ավելի հաճախ նա էր ինձ նստեցնում այնտեղ։ Մեր քաղաքում շատ եղբայրներ էին այդպես անում։ Մենք հեծանիվով արահետ էինք բացել մեր հողամասում, որի վերջում երեք-չորս ոտնաչափ երկարությամբ մի զառիթափ կար։ Մենք թափ էինք առնում բակում և որոշ արագություն հավաքելուց հետո ցած էինք սլանում զառիթափով։

Նոյեմբերի մի կիրակի օր մենք որոշեցինք քշել-գնալ Քաունթի Ֆեր Գրաունդզ։ Ու թեև այդ օրը ոչ տոնավաճառ կար, ոչ էլ բեյսբոլի խաղ, բայց մենք ուզեցինք գնալ այնտեղ և մեր հեծանիվով ելանք ցեխոտ ճանապարհը։ Մենք առաջ էլ էինք եղել այնտեղ և լավ էինք զգացել ամայի Ֆեր Գրաունդզում։ Երբ այնտեղ շատ մարդիկ էին լինում, բոլորովին այլ էր, իսկ մենք մենակ շատ ավելի էինք զվարճանում, և Ֆեր Գրաունդզն էլ ավելի գեղեցիկ ու մտերմիկ էր թվում։ Մեզ դուր էր գալիս անդորրը, արձակ տարածությունը, դատարկ նստատեղերի արտատվորությունը։ Մենք հերթով քշում էինք հեծանիվը, տեսակ-տեսակ շրջաններ գործելով։ Գրիգորը ժամացույց ուներ և երբ ես էի քշում, նա էր ժամանակը պահում, իսկ երբ նա էր քշում, ես էի պահում։ Հետո ծոցատետրում գրանցում էինք ամեն մեկիս արագությունը։

Կաստորի տունկը շատ մեծացավ։ Դեղձենին էլ աճեց։ Կրկին եկան ու անցան Զատկի ու Ննդյան տոները, Ջամիչի օրը։ Մենք կտրատեցինք-թեթևացրինք պատատուկները, որ նրանք նոր կյանք ստանան։ Մենք նոր կոշիկներ ու հագուստներ գնեցինք։ Մենք գրիպ ընկանք։ Բայց այդ ամենը ոչ նկատում էինք, որ էլ հիշում։ Ընտանեկան ալբոմում մի քանի լուսանկարներ ունեինք, բայց երբ նայում էինք դրանց, թվում էր չենք փոխվել։ Շարունակում էինք խաղաղ ապրել, ձմռան երեկոները նստում էինք տանը, դասեր պարապելով, դաշնամուր նվագելով ու առանց պատճառ քահ-քահ ծիծաղելով։ Այդ ամենը եղել էր ու կար, թեև չէր հիշվում, և այժմ մենք ցանկանում էինք հեծանիվ քշելով գնալ ու հասնել Քաունթի Ֆեր Գրաունդզ։

Ես տեղավորվեցի միջնաձողին, Գրիգորը՝ նստատեղին, և մենք ճամփա ընկանք։

— Հիմա ցած ենք սլանալու,— ասաց Գրիգորը։

Մենք հասանք զառիթափին ու մինչ սլանում էինք ցած, ինչ-որ բան պատահեց։ Մեր հեծանիվի երկաթյուղը ճաքեց ու կոտրվեց, և առաջին անիվը մի կողմ թեքվեց։ Իրական լինելու համար այդ ամենը շատ դանդաղ կատարվեց, ու մինչ կատարվում էր, մինչ երկաթյուղը ճաքում ու

անիվը թեքվում էր, մենք ասես երկարատև երազի միջից դուրս գալիս լինեինք։ Այդ հասարակ դեպքը պետք է որ զվարճացներ մեզ, և մենք պետք է որ ծիծաղեինք, բայց դա բոլորովին էլ զվարճալի չէր ու մենք չծիծաղեցինք։ Առանց մի բառ ասելու տուն դարձանք։

Մայրս Նաումի սենյակի պատուհանից տեսել էր, թե ինչ պատահեց, և երբ մենք տուն մտանք, ասաց.

— Չե՞ք հասկանում, որ մեծացել եք։ Դուք արդեն շատ մեծ եք երկուսով մի հեծանիվ նստելու համար։

Այդ դեպքի մասին մենք ամբողջ օրը ոչինչ չխոսեցինք։ Տանը նստած փորձում էինք կարդալ, մտածել, որ բան չկա՝ եղած-չեղածը մի հեծանիվի երկճյուղ է։ Մենք մոռացել էինք մեր ապրած կյանքը, բայց այժմ այդ անհնարին պատահարի հետևանքով ակամա մտաբերում էինք այն բոլոր մանրամասները, որոնք նշել էին մեր հասակ առնելու փուլերը։

Հիշեցի այն օրերը, երբ ես ու Գրիգորը կավարներով, կտավով ու ձյութով կանոե սարքեցինք, քանի որ մտքներիս դրել էինք գետակով նավարկել։ Այրող արևի տակ մենք վեց մղոն քարշ տվինք նավակը մինչև Թոմփսոն Դիչ, իսկ հետո տեսանք, թե նա ինչպես էր մեր ծանրության տակ խորասուզվում։

Հիշեցի այն օրերը, երբ քիչ էր մնում խեղդվեի Քինգզ Ռիվերում, իսկ Գրիգորն ինձ օգնության լողալով հայերեն գոռգոռում էր. այն օրերը, երբ Լյուսիին աշխատանքից ազատել էին և նա մի շաբաթ լաց էր լինում. այն օրերը, երբ Նաումին թոքերի բորբոքում ընկավ և մենք բոլորս աղոթում էինք, որ նա չմեռնի. այն օրերը, երբ Գրիգորը տուն բերեց մի փոքրիկ պատեֆոն ու երկու ձայնապնակ՝ «Բարկարոլան» և «O սոլե միոն»։

Սրտակեղեք զգացումով հիշեցի այն օրը, երբ իմ քեռի Վահանը զինվորական համազգեստով եկավ մեր տուն և իր ջութակի վրա նվագեց «Ջոնի, հրացանդ վերցրու» երգը, ու մորս ուրախությունը, երբ նա մեզ հետ սեղան նստեց, ու լռությունը, երբ նա գնացքով մեկնեց։ Ես հիշեցի բոլոր այն օրերը, երբ մայրս հյուրասենյակում նստած կարդում էր հայերեն «Ասպարեզ» թերթը ու պատմում էր մեր հին երկրում տիրող թշվառության, վշտի ու կոտորածների մասին։

Հիշեցի այն օրը, երբ իմացանք, որ իմ քեռի Վահանը զոհվել է Ֆրանսիայում, և մենք նստել էինք ընթրիքի սեղանի շուրջն ու չէինք կարողանում ուտել, քանի որ բոլորս լաց էինք լինում և նրա մասին էինք խոսում։

Հիշեցի, թե ինչպես էի ամեն օր վազ տալիս «Հերալդի» խմբա-

գրատուն, պատերազմի մասին լույս տեսնող հավելվածը վերցնելու, իսկ հետո գոռգոռալով վազում էի փողոցից փողոց։ Հիշեցի այն օրը, երբ պատերազմն ավարտվեց և «Հերալդն» առաջին էջում տպագրեց ամենափրկիչի պատկերը և «Խաղաղություն աշխարհին», «Բարի կամք մարդկանց հանդեպ» բառերը։ Հիշեցի, ինչպես տուն դարձա գոռալուց խռպոտած ու հոգով տկար, որովհետև ամեն ինչ ավարտվել էր, իսկ իմ քեռի Վահանը շարունակում էր մնալ Եվրոպայում՝ մեռած։ Հիշեցի այն պահերը, երբ միայնակ քայլելով հանկարծ փղձկում էի ու արցունք թափում, այն պատճառով, որ կյանքն այսքան պայծառ է ու այսքան մաքուր ու այսքան վայրագ։

Ամբողջ օրն ու համարյա ամբողջ երեկո մեր տանը ոչ մի խոսք ու ղրույց չեղավ։ Իմ քույր Լյուսին մի քանի րոպե դաշնամուր նվագեց, իսկ իմ քույր Նաոմին դնդնաց «Ժպիտները», մինչև չհիշեց, որ մայրս խնդրել էր երբեք այդ երգը չդնդնալ, որովհետև այդ երգը իր եղբայր Վահանն էր երգել։ Մենք բոլորս տխուր էինք ու շփոթված։ Մենք պատրաստվում էինք գնալ քնելու, երբ Գրիգորն ասաց.

— Ծիծաղելի էր, չէ՞, թե ինչպես հեծանիվը կոտրվեց մեր տակ։

Մայրս ու քույրերս ասացին, որ դրանից ավելի ծիծաղելի բան երբեք չէին տեսել և սկսեցին ծիծաղել։ Սկզբում նրանք ցածրաձայն էին ծիծաղում։ Հետո դադարեցին ծիծաղել, հետո հիշելով, թե որքան ծիծաղելի էր, ավելի բարձր ծիծաղեցին։ Գրիգորն էլ սկսեց ծիծաղել նրանց հետ, և թվում էր, թե մեր աշխարհում ամեն ինչ կարգին է։ Ես չգիտեի ինչ անեմ, որովհետև չէի կարծում, թե որևէ ծիծաղելի բան է եղել, բայց մի երկու րոպե անց ես էլ սկսեցի ծիծաղել։

Ինչ ասես չէր կատարվել, և, այդուհանդերձ, մենք շարունակում էինք միասին ապրել մեր տանը, մեր ծառերն աճում էին և ամեն ամառ կրկին քաղաքից ուղարկում էին տրակտորը և մենք լսում էինք նրա աղմուկը, իսկ ծեր Գասպարյանը, իր սայլին նստած, հայերեն «ձմերուկ» գոռալով, անցնում էր մեր տան առջևով։ Ես ինձ բոլորովին էլ երջանիկ չէի զգում, սակայն այնքան ծիծաղեցի, մինչև աչքերիցս արցունք եկավ։

Հետո հանկարծ արտասովոր մի բան կատարվեց՝ դա իմ ներսում եղավ, բայց կարծես միևնույն ժամանակ ամբողջ աշխարհի հետ կատարվելիս լիներ։ Ես զգացի, որ, ի վերջո, աշխարհի մի մասնիկն եմ և գիտեմ, թե ինչով է ամեն ինչ ավարտվում։ Աշխարհին ասես տարօրինակ ամայացնող մի տխրություն պատեց, և ես կյանքումս առաջին անգամ դա անձնապես զգացի։ Թվում էր հենց նոր եմ ծնվել ու նոր եմ միայն գիտակցում աշխարհի գոյությունը։ Ես հասկացա, թե ինչու էի նստում դաշնամուրի առջև ստեղներին հարվածելով, ինչու էի կռվում

իմ եղբայր Գրիգորի հետ և ինչու էինք մենք միասին ծիծաղում։ Ու քանի որ ես ծիծաղում էի, քանի որ ծիծաղելուց աչքերս արտասուք էր լցվում, ես նստեցի մահճակալիս և սկսեցի լաց լինել։

Առանց մի բառ ասելու իմ եղբայր Գրիգորն էլ սկսեց լաց լինել։ Նրանից հետո իմ քույրերն էլ սկսեցին լաց լինել։

Իմ մայրը հայերեն ասաց.

— Լաց լինելուց օգուտ չկա։ Մենք միշտ կրել ենք մեր հիասթափություններն ու զրկանքները, միշտ հաղթահարել ենք դրանք և միշտ էլ կհաղթահարենք։

Երբ բոլորս պիտի որ արդեն քնած լինեինք, ես վեր կացա անկողնուց, մոտեցա հյուրասենյակին ու դուռը մի երկու մատնաչափ բաց արի։ Ես տեսա, որ մայրս եղբոր լուսանկարը վերցրել է դաշնամուրի վրայից ու դրել սեղանին՝ իր առջև։ Ես լսեցի նրա կամացուկ հեկեկոցը և տեսա, որ նա գլուխը տարուբերում է, ինչպես անում էին դա հին երկրի մարդիկ։

ՊԱՏԵՐԱԶՄԸ

Պատերազմը մեզ էլ հասավ։ Ասացին, որ չափից ավելի չուտենք, ոչինչ չշռայլենք՝ ամեն ինչ արժեքավոր էր։ Ասացին, որ պատերազմի նամականիշներ գնենք։ Մենք Ատլանտյան օվկիանոսի մյուս կողմը հազարավոր զինվորներ էինք ուղարկում, իսկ դրա համար փող էր հարկավոր։ Մեզ կոչ էին անում դրամ վաստակել ու պատերազմի նամականիշներ գնել՝ հատը քսանհինգ սենթ։ Միսս Դամման ասաց, որ մենք՝ երեխաներս, նույնպիսի զինվորներ ենք, ինչպես և համազգեստ հագած տղամարդիկ։ Շքերթներ էին լինում։ Մենք տեսնում էինք երթաքայլող զինվորներին։ Մենք նրանց տեսնում էինք Սաուդերն Փըսիֆիք կայարանում գնացքների մեջ լցվելիս։ Մենք լսում էինք նրանց մայրերի ու քույրերի լացը։

Գերմանացիները հանցագործ ազգ էին։ Գերմանացիներն ամբողջ ժողովուրդներ էին սրբում քարտեզի վրայից։ Անտառներ, դաշտեր, քաղաքներ՝ ամեն ինչ ոչնչացվում էր մեծ ռումբերով։ Գերմանիան նույնիսկ Ատլանտյան օվկիանոսում էր հանցագործություններ կատարում՝ խորտակվեց Լուսիթանիան։ Մի սուզանավ նրան ծովի հատակն ուղարկեց։

Լուսիթանիան մի նավ էր, որի մասին երաղում էր ամեն մի տղա։ Նրա մասին մտածելիս վշտանում էի։

Ես սկսեցի ատել։ Այո, գերմանացիները հանցագործներ են։ Նրանք մեզ նման չեն։ Մենք նրանց տեսանք «Ուսին առ» ֆիլմում, որտեղ Չարլի Չապլինն էր խաղում։ «Կինեմա» կինոթատրոնում, նստատեղերի եզրերին թառած, ցնծությամբ ողջունում էինք Չարլիին՝ պատերազմի հերոսին։ Կինոնկարում մենք տեսանք կայզերին ու սուլեցինք։ Նա Գերմանիան էր։ Չարլին ձեռ էր առնում նրան։ Մենք մի գլուխ ծիծաղում էինք, բայց միևնույն է, ամեն ինչ տխուր էր, մենք զգում էինք, և մեզ չէիր խաբի, եթե դա նույնիսկ կատակերգություն էր։

Աշխարհի մեծագույն ոճրագործը կայզերն էր, և մենք ատում էինք նրան։

Այդ ատելությունն ամենուրեք էր։ Ես մի քեռորդի ունեի՝ անունը Սիմոն։ Նա հենց որ խոսել սովորեց, ասաց.

— Ես կայզերի գլուխը կկոտրեմ։

Ոչ ոք նրան չէր սովորեցրել ատել կայզերին։ Նա այդ ատելությունը միջավայրից էր իր մեջ առել։

Մենք, մի խումբ տղաներ, սովորություն ունեինք մագլցել մեր ետնաբակի ընկուզենին։ Ծառին թառում ու մտածում էինք կայզերին ուշնշացնելու տարբեր ձևերի մասին։ Մեր մեջ մի տղա կար, որ տանջանքներ հորինելու վարպետ էր։ Նրա անունը Ալբերտ Սավին էր՝ ինքը լալկանի մեկը, բայց ամբողջ շրջակայքում նրանից լավ տանջանքներ հորինող չկար։ Նրա հորինած տանջանքների գլխավոր նպատակը կայզերին մահվան դուռը հասցնելն էր, հետո առժամանակ հանգիստ թողնելը, որպեսզի դրան հաջորդեր մեկ ուրիշ տանջանք, այս անգամ ավելի դաժանը։ Այդպիսով կայզերը հազար մահով կմեռներ ու ողջ կմնար, որ նորից խոշտանգվեր։ Մեր հորինած տանջանքներից ամենաթեթևը գնդակահարությունն էր։ Բայց դա շատ էր հասարակ։ Ոչ ոք չէր ուզում, որ նա հենց այնպես մեռներ։ Բոլոր տղաներն ուզում էին, որ նա շատ տառապեր, իր պատճառած տառապանքների դիմաց փոխհատուցելու համար։ Որոշ խոշտանգումներ զվարճալի էին։ Մեր մտքում Չարլի Չապլինն էր, և մենք զվարճալի տանջանքներ, անակնկալներ ու նման բաներ էինք հորինում։ Օրինակ, մենք կայզերին կհրավիրեինք կարևոր ճաշկերույթի ու մի մեծ աթոռ կառաջարկեինք։ Դա էլեկտրական աթոռ կլիներ։ Կայզերն ուտելիս նստած կլիներ այդ աթոռին, և մենք կմիացնեինք հոսանքը։ Մենք այնքան հոսանք չէինք տա, որ նա տեղնուտեղն այրվեր, այլ աստիճանաբար կբարձրացնեինք լարվածությունը և սենյակում գտնվող բոլոր մարդիկ կշրջապատեին նրան ու կծամածռեին դեմքերը, հիշեցնելով նրան Լուսիթանիայի մասին։ Ես չեմ հիշում, թե ով հորինեց այդ տանջանքը, բայց հիշում եմ այն օրը, երբ դա հորինվեց։

Պայծառ ամառային օր էր, և մենք ծառին թառած շատ ուրախ ասում-խոսում էինք։ Ժամերով միտք էինք անում, թե ինչպես կարելի է տարբեր ձևերով մարդու ցավ պատճառել, առանց նրան սպանելու։

Սան Փաբլո փողոցում մի գերմանական ընտանիք՝ մեր հարևանությամբ տուն ուներ։ Նրանք հիանալի մարդիկ էին՝ պարզ ու հասարակ։ Նրանք Հերման անունով տղա ունեին, որը մոտավորապես նույն տարիքին էր, ինչ և իմ եղբայր Գրիգորը։ Նա խաղաղ տղա էր, փոքր-ինչ ինքնամփոփ և խոսում էր քիչ օտարոտի արտասանությամբ, թեև բնիկ մեր հողից էր։

Երբ մենք ասում-խոսում էինք կայզերին տանջելու մասին, անձամբ ես քիչ էի մասնակցում և իհարկե համարում էի, որ դա խաղ է ու մենք երբեք որևէ մեկի հետ դաժանորեն չենք վարվի։ Սակայն կային ուրիշ, ավելի մեծ տղաներ, որոնք գնալով սկսեցին ավելի ու ավելի գրգռվել և արդեն ցանկանում էին որևէ բան անել։ Մեկը տվեց Հերմանի անունը։ Իրոք, շատ տղաներ նման են իրենց հայրերին, և այդ լալկան Ալբերտ Սավինն ու Էդգար Բայֆ անունով մի ուրիշ տղա սկսեցին ատելություն սերմանել Հերմանի դեմ, որը երբեք ոչ մեկի ոչ մի վնաս չէր տվել։

Այդ ամենը սկիզբ առավ մեր ընկուզենու ծառի վրա, սակայն տարածվեց ամբողջ շրջակայքով մեկ։ Տղաների խումբը, ինը-տասը հոգի, որոշեցին հաշիվ տեսնել Հերմանի հետ։ Իմ եղբայր Գրիգորը գնաց նրանց հետ։ Ես էլ գնացի։ Ես չէի ուզում, որ Հերմանին ցավ պատճառեն, բայց անկարող էի ստիպել ինձ տանը մնալ։ Մտածում էի, որ եթե մնամ տանն ու չտեսնեմ, թե ինչ է կատարվելու, կմեռնեմ։ Իմ եղբայր Գրիգորն ու ես իրար կողք էինք քայլում և մենք մեծ տղաներից ետ մնացինք։ Ճիշտն ասած, մենք այդ խմբի հետ կապ չունեինք, բայց զգում էինք, որ այդ ամենը սկիզբ է առել մեր ծառի վրա և ուզում էինք տեսնել, թե ինչ է լինելու։

Խումբը հասավ Սան Փաբլո փողոց։ Էդգար Բայֆը մոտեցավ Հերմանեց դռանն ու թակեց։ Խումբը, փողոցի լայնքով մեկ կանգնած, սպասում էր։ Դուռը բացեց Հերմանի մայրը։ Էդգար Բայֆը մի բոպե խոսեց նրա հետ ու մոտեցավ խմբին։

— Տանը չէ,— ասաց Էդգար Բայֆը։— Մայրն ասաց, որ քաղաք է գնացել, շուտով կվերադառնա։

Իմ եղբայր Գրիգորն հայերեն ասաց, թե հուսով է, որ նա տուն չի վերադառնա։

Սակայն Հերմանը վերադարձավ։ Ինչ-որ մեկը նրան տեսավ Սան

Փաբլո փողոցով բարձրանալիս, և խումբը վազեց նրա կողմը։ Ինչ-որ մեկը հարցրեց.

— Դու գերմանացի՞ ես։

Հերմանն ասաց.

— Այո։

Ինչ-որ մեկը հարցրեց.

— Դու ատո՞ւմ ես կայզերին։

Հերմանն ասաց.

— Ոչ, ես ոչ ոքի չեմ ատում։

Այդ ժամանակ ինչ-որ մեկը հարվածեց Հերմանի դեմքին։ Ինչ-որ մեկը ոտք գցեց նրան ու նա ընկավ։ Ինչ-որ մեկը ցատկեց նրա վրա և մյուսները սկսեցին ծեծել ու քացահարել։

Դա երկու րոպե էլ չտևեց։ Ամեն ինչ շատ շուտ ավարտվեց։ Մենք պատկերացնում էինք, որ փոքրիկ զինվորներ ենք։ Մենք պատկերացնում էինք, որ արդարության պաշտպաններ ենք։ Երբ Հերմանի քթից արյուն եկավ, նրան հարցրին.

— Դե, հիմա ասա, ատո՞ւմ ես կայզերին։

Եվ նա բղավեց.

— Ոչ, ես ձեզ եմ ատում։

Երբ նրանք տեսան, որ Հերմանը, միևնույն է, կայզերին չի ատելու, բաց թողին։ Նրանք Հերմանի վրա ծիծաղում էին ու ծամածռվելով կապկում էին նրա լացը, նրա ետևից ընկած հրում, հարվածում ու քացահարում էին։ Նրանք դա անում էին ամբողջ ճանապարհին, մինչև Հերմանենց տան աստիճանները, բայց նա չփորձեց փախչել։ Հերմանը գավթի աստիճաններով բարձրանում էր, երբ մայրը տանից դուրս եկավ ու տեսավ նրան։ Մայրը նետվեց դեպի որդին ու օգնեց նրան տուն մտնել։ Նա ապշած էր ու տղաներին ոչ մի խոսք չասաց։ Տղաները, հայհոյելով ու ծիծաղելով, մի որոշ ժամանակ էլ կանգնեցին տան առջև, իսկ հետո հեռացան։

Այդ գիշեր, երբ անկողնում էինք, ես իմ եղբայր Գրիգորին հարցրի.

— Գրիգոր, դու ատո՞ւմ ես գերմանացիներին։

Եվ իմ եղբայր Գրիգորը հարցրեց.

— Ի՞նչ։

Ես մի անգամ էլ հարցրի.

— Դու գերմանացիներին ատո՞ւմ ես, Գրիգոր։

Միառժամանակ նա ոչինչ չասաց, բայց ես գիտեի, թե ինչ է մտածում։

— Ոչ, ես նրանց չեմ ատում,— ասաց նա։— Թե ինչն եմ ատում, չգիտեմ, բայց մի բան ատում եմ՝ դրանց այսօրվա արածն եմ ատում։ Դա եմ ես ատում։ Այ հենց դա է, որ ես ատում եմ։

ՖՐԵԶՆՈՆ

Մեր քաղաքի սրտից ուղված ուղղությամբ եթե մարդ չորս-հինգ մղոն քայլեր. կտեսներ, թե մեր փողոցներն ինչպես են կորչում անմշակ հողերի ու մոլախոտերի մեջ։ Այգիների ու մրգաստանների հողեր շատ կային, բայց ավելի շատ էին խամ ու խոպան հողերը, և մոլախոտերն էլ խոպանի ուժեղ, չոր մոլախոտեր էին։ Այս ամայության մեջ դարերով անապատի անդորրում գոյատևած արարածներ կային։ Կային օձեր ու եղջերավոր գոդոշներ, տափաստանային շնիկներ ու ճագարներ։ Այս հողերի վրա կախված երկնքում հավկուլներ ու բազեներ կային, կար և կիզիչ արև։ Անապատում ամենուրեք բեռնասայլերի անվահետքեր կային, որոնք դարձել էին մենավոր ճամփաներ։

Մեր քաղաքի սրտից երկու մղոն քայլելով մարդ կարող էր գալ հասնել անապատ և զգալ անմարդաբնակ, երկրի երեսին կորած-մոլորած, մարդկային մտքի կարեկցանքից կորստյան մատնված վայրի մենությունը։ Մեր քաղաքի ծայրամասում կանգնելով՝ մարդ կարող էր զգալ, որ մենք անապատի լռության ու մենության մեջ ենք հիմնել մեր բնակատեղն ու փողոցները, և որ մենք անվեհեր գործ ենք արել։ Եկել ենք պատմություն չունեցող այս չոր ու ցամաք վայրը, հանգրվանել ենք այստեղ ու կառուցել մեր տները, և անշտապ արարում ենք մեր կյանքի լեգենդը։ Ջրին հասնելու համար մենք փորում ու պապակ հողով առվակներ էինք հոսեցնում։ Մենք տնկում ու մշակում էինք և կանգնած էինք մեր ձեռակերտ այգու կենտրոնում։

Մեր ծառերը դեռևս բավականաչափ բարձր չէին բավարար ստվեր նետելու համար, և մենք մի քանի տեսակ ծառեր էինք տնկել, որ պետք է տնկած չլինեինք, քանի որ դրանք դիմացկուն չէին ու երբեք մի դար ապրել չէին կարող, այդուհանդերձ մենք սկիզբը լավ էինք դրել։ Մեր գերեզմանատները փոքրաթիվ էին և շիրիմները սակավաթիվ։ Մենք ոչ մի նշանավոր մարդ չէինք թաղել, քանի որ մեծություններ արարելու ժամանակ չէինք ունեցել։ Մենք սաստիկ զբաղված էինք ջուրն անապատ հասցնելով։ Մեր քաղաքի վրա չէր սավառնում որևէ մեծ մտքի շուք։ Սակայն մենք ունեինք խաղահրապարակ, որը կոչվում էր «Կոսմոս»։ Մենք ունեինք Էմերսոնի և Հոութորնի, Լոուելի և Լոնգֆելոյի ան-

վան հանրակրթական դպրոցներ։ Մեր քաղաքի միջով երկու կարևոր երկաթգծեր էին անցնում և որոշ առումով մենք մեզ լիովին կորուսյալ չէինք զգում։ Մենք երկու լրագիր, մի քաղաքային լսարան և հասարակական գրադարան ունեինք, որի դեռ մեկ երրորդն էր գրքերով լի։ Մենք դասախոսության ակումբ ունեինք։ Ունեինք ամեն տեսակ եկեղեցիներ, բացի քրիստոնեագիտականից։ Մեր քաղաքի ամեն տուն իր Աստվածաշունչն ուներ, իսկ բազում տներում դրանից չորս հատ կար։ Մարդ կարող էր համարել, որ մեր քաղաքը գեղեցկաշեն քաղաք է։

Մարդ կարող էր համարել, որ մեր քաղաքը խաբեություն է, որ մեր կյանքը դատարկ է ու մենք էլ ճագարների ժամանակակիցներն ենք։ Կամ էլ մարդ կարող էր առավոտյան այսպես մտածել, իսկ երեկոյան բոլորովին այլ կերպ։ Մեր դատարանի գմբեթը բարձր էր, բայց անհեթեթ էր ու ծիծաղաշարժ և ոչ մի կապ չուներ այն ամենի հետ, որ ջանում էինք անել այս անապատում։ Դա հռոմեական ճարտարապետության նմանակում էր։ Մենք քաղաքագլուխ ունեինք, բայց նա նշանավոր անձնավորություն չէր և քաղաքագլխի տեսք էլ չուներ։ Նա ֆերմերի տեսք ուներ։ Նա ֆերմեր էր որ կար, բայց քաղաքագլուխ էր ընտրվել։ Մեզանում երևելի մարդիկ չկային, սակայն բոլորս միասին մենք գրեթե երևելի էինք։ Մեր քաղաքագլուխն իրեն կարող էր թույլ տալ երկար-բարակ զրուցել անգլերեն համարյա չիմացող հայ ֆերմերի հետ։ Մեր քաղաքագլուխը գուռզ մարդ չէր ու երբեմն ընկերների հետ խմում էր։ Նա սիրում էր խորհուրդներ տալ մարդկանց, թե ինչպես փորեն ջրհորը ջրին հասնելու համար կամ ինչպես էտեն մուսկատի թուփը, որ լավ բերք ստանան և, առհասարակ, նա հիանալի մարդ էր։ Մենք, անշուշտ, մի քաղաքագլուխ պետք է ունենայինք և մեկնումեկը, հարկավ, պիտի քաղաքագլուխ դառնար։

Մեր ձեռնարկած գործերը մի մեծ բան չէին։ Դրանք նույնիսկ մի-ջակ էլ չէին։ Ինչ գործ էլ որ բռնում էինք, հարթ չէր գնում։ Մեր ձեռնարկումները ոչ գիտական հիմք ունեին, ոչ էլ վայրագ էին, ինչպես սովորաբար աճող քաղաքներում է լինում։ Ոչ ոք չգիտեր արդյունագործություն բառի իմաստը և հանդիսաճառերում մեր քաղաքագլխի երբևէ գործածած բառերից ամենաերկյուղալին առաջադիմությունն էր, սակայն առաջադիմություն ասելով նա նկատի ուներ քաղաքապետարանի առջևի մասի սալարկումն ու քաղաքի միջոցներով քաղաքագլխի համար ֆորդ ավտոմոբիլ գնելը, և մեր ժողովուրդը դա հենց այդպես էլ ընկալում էր։ Մեր ամենախոշոր վաճառականը Քիմբալ անունով մի կարճահասակ տղամարդ էր, որ սիրում էր սրած մատիտը աջ ականջի հետևը խրած թրև գալ իր հսկայական վաճառատնով մեկ։ Նա սիրում էր

անձամբ սպասարկել իր հաճախորդներին, թեև տասնյակից ավելի աշխույժ գործակատարներ ուներ։ Ցմռանը նրանք աշխույժ էին, իսկ ամռանն էլ, եթե օրը ցերեկով երբեմն նիրհում էին, ապա միայն այն պատճառով, որ կեսօրից հետո ամբողջ քաղաքն էր քնում։ Ուրիշ անելիք չկար։ Նման վիճակը մի տեսակ սիրողական բընույթ էր տալիս մեր քաղաքին, ասես մենք լոկ փորձեր էինք անում և կատարելապես վստահ չէինք, որ անապատում ապրելու ավելի իրավունք ունենք, քան ճագարներն ու եղջերավոր դոդոշները, ասես չէինք հավատում, որ մեծ գործ ենք ձեռնարկել՝ մի գործ, որը, ի վերջո, աշխարհի պատմության մեջ վիթխարի փոփոխությունների էր հանգեցնելու։

Ժամանակի ընթացքում, սակայն, մեր մեջ մի հանճար հայտնվեց, որն ասաց, թե մենք փոխելու ենք աշխարհի պատմությունը։ Նա ասաց, որ մենք դա չամիչ-քիշմիշով ենք անելու։

Նա ասաց, որ մենք փոխելու ենք մարդկանց սնվելու սովորությունները։

Ոչ մեկի մտքով չանցավ, թե նա խենթ է, քանի որ լուրջ տեսք ուներ ու քթին ակնոց կար։ Նա, ինչպես ասում են, կրթված մարդու տպավորություն էր թողնում, իսկ կրթություն ստացած յուրաքանչյուր մարդ, համալսարանավարտ ու գրքեր կարդացած ամեն մեկը պետք է որ լրջմիտ լիներ։ Նա ձեռքին վիճակագրական տվյալներ ուներ և դրանց վրա էր հիմնում իր տեսակետը։ Նա մաթեմատիկորեն ապացուցեց, որ կարող է իրագործել այն ամենը, ինչի մասին որ ասում է։ Նա ասաց, որ մեր հովտին անհրաժեշտ է մի այնպիսի սիստեմ, որը չամիչը կհռչակեր որպես կերակուրի անհրաժեշտ բաղադրամաս, և որ ինքն այդ սիստեմը հայտնագործել է ու դա շահավետ է մեր հովտի համար։ Նա պերճախոս ճառեր արտասանեց մեր քաղաքային լսարանում և շրջակա փոքր քաղաքների հասարակական դահլիճներում։ Նա ասաց, որ Ամերիկային չամիչ ուտել սովորեցնելուց հետո մենք պետք է չամիչ ուտելու վարժեցնենք Եվրոպան ու Ասիան, գուցե նաև Ավստրալիան, ու այդ ժամանակ մեր հովիտը կդառնա աշխարհի ամենահարուստ հովիտը։ Չինաստան՝ ասաց նա։ Նա հայտնեց Չինաստանում բնակվող չինացիների ստույգ քանակը։ Դա ապշեցուցիչ թիվ էր և լսարանում գտնվող ֆերմերները չգիտեին՝ ծափահարեն թե հակառակեն։ Նա ասաց՝ եթե մենք հասնենք այն բանին, որ ամեն մի չինացի իր եփած ամեն մի աման բրնձի մեջ դնի մի չամիչ, նկատի ունեցեք՝ թեկուզ մեկ հատ, այդ դեպքում մենք կկարողանանք թանկ վաճառել մեր չամիչը ու հովտում բնակվող ամեն ոք բանկում կունենա փող ու հնարավորություն ձեռք

բերելու ժամանակակից կյանքի համար անհրաժեշտ բոլոր հարմարությունները՝ լողարան, փոշեկուլ, էլեկտրականություն և ավտոմեքենա։

Բրինձ՝ ասաց նա։ Նրանց կերածը միայն դա է։ Բայց մենք կարող ենք նրանց վարժեցնել, որ իրենց եփած ամեն ման բրնձի մեջ մի հատիկ չամիչ գցեն։

Չամիչը հիանալի համ ունի, ասում էր նա։ Մարդիկ սիրել են չամիչ ուտել։ Մարդիկ այնքան են սիրել չամիչ ուտել, որ ուրախ կլինեին դրա դիմաց վճարել։ Ցավն այն է, որ մարդիկ չամիչ ուտելուց ետ են վարժվել։ Դրա պատճառը խանութպաններն են, որոնք ամբողջ երկրով մեկ տարիներ շարունակ չամիչ չեն վաճառել, կամ էլ եթե նույնիսկ վաճառել են, ապա փաթեթավորումը գրավիչ չի եղել։

Մեզ ընդամենը հարկավոր է, ասում էր նա, ունենալ չամիչի ընկերություն՝ իր գործադիր վարչությամբ և փաթեթավորման ու առաքման կենտրոնական գործարան։ Մնացյալն ինքը կանի։ Նա հրապուրիչ փաթեթ կձևավորի և մեր չամիչի համար կհորինի վաճառքային պատենտավորված անվանում։ Նա մի ամբողջ էջի վրա հայտարարություններ կտպի «Սաթըրդեյ իվնինգ փոստում» և երկրի այլևայլ պարբերականներում։ Նա մեծ աճուրդ կկազմակերպի։ Նա կանի ամեն բան։ Եթե մեր ֆերմերները միանան չամիչի իր ընկերությանը, նա կանի ամեն ինչ և մեր քաղաքը կդառնա Կալիֆոռնիայի ամենածաղկուն քաղաքներից մեկը։ Մեր հովիտը կդառնա աշխարհի ամենահարուստ գյուղատնտեսական կենտրոններից մեկը։ Նա փքուն բառեր էր գործածում, ինչպես օրինակ՝ կոոպերացիա, մասսայական արտադրություն, ժամանակակից արդյունագործություն, ժամանակակից հոգեբանություն, ժամանակակից ռեկլամ, ժամանակակից առաքում, և մեր ֆերմերները, որոնք չէին հասկանում, թե նրա ասածն ինչ է, բայց զգում էին, որ նա շատ խելացի է և որ իրենք պետք է միանան չամիչի ընկերությանն ու նպաստեն չամիչի հռչակմանը։

Նա հռետոր էր։ Նա վիճակագրող էր։ Նա հանճար էր։ Ես մոռացել եմ նրա անունը, բայց ժամանակին նա մեծ էյֆորիա գցեց։

«Մորնինգ ոիփաբլիքընի» խմբագիրն ուսումնասիրեց այս մարդու առաջարկն ու խելքին մոտ համարեց։ «Իվնինգ հերալդի» խմբագիրն էլ ասաց, որ դա լավ գործ է։ Մեր քաղաքապետն էլ բարեհաճ վերաբերմունք ցուցաբերեց, և մեր ամբողջ հովիտը հուզվեց ու իրար անցավ։ Հովտի բոլոր կողմերից ֆերմերները կառքերով ու սայլերով եկան քաղաք։ Նրանք մեծ ու փոքր խմբերով հավաքվում էին հասարակական շենքերի առջև ու խոսում չամիչի հռչակը տարածելու գաղափարից։

Չամիչի ընկերության գլխավոր նպատակն էր մի տեղում կու-

տակել ամբողջ հովտի չամիչը, իսկ համատարած ռեկլամի միջոցով պահանջարկ ստեղծելուց հետո վաճառքի հանել այնպիսի գնով, որ փակվեր ընկերության բոլոր ծախսերը և դեռ մի որոշ գումար էլ մնար ֆերմերներին։

Այսպիսով ընկերությունը հիմնվեց և կոչվեց «Արևաստեղծ չամիչի ընկերություն»։ Վեր խոյացան «Արևաստեղծ չամիչի» վեցհարկանի շինությունը և առաքման ու փաթեթավորման վիթխարի գործարանը, որը հագեցվեց ժամանակակից լավագույն մեքենաներով։ Մեքենաները մաքրում էին չամիչներն ու պոկում պոչերը։ Ամբողջ գործարանը կարգուկանոնի և արտադրողականության նմուշ էր։

Այն օրերին ես ամեն հինգշաբթի գնում էի Բրոդվեյ և տպագրատնից «Սաթերդեյ իվնինգ փոստի» մի դյուժին օրինակներ էի վերցնում։ Հանդեսը շատ հաստ ու ծանր էր։ Սովորաբար դրանցից մի դյուժին գցում էի ուսս ու տանում։ Մինչև մի թաղամաս անցնում էի, ուսս սկըսում էր ցավել։ Էլ չգիտեմ, թե ինչու էի «Սաթերդեյ իվնինգ փոստը» վաճառելու նեղությունն ինձ տալիս, բայց կարծում եմ, մասամբ պատճառն այն էր, որ դա Բենջամեն Ֆրանկլինն էր հիմնել, մասամբ էլ այն, որ սիրում էի հանդեսի մի օրինակը տուն տանել ու աչքի անցկացնել հայտարարությունները։ Որոշ ժամանակ ես նույնիսկ սովորություն էի դարձրել կարդալ Ջորջ Ագնյու Ջեմբեռլենի պատմվածքները։ Մի հինգշաբթի երեկոյան հյուրասենյակի սեղանին առջև փռել էի «Սաթերդեյ իվնինգ փոստի» օրինակը, շրջում էի էջերն ու աչքի անցկացնում ռեկլամվող ապրանքների հայտարարությունները։ Էջերից մեկի վրա կարդացի՝ «Արդյոք դուք այսօր ճաշակե՞լ եք Ձեր բաժին երկաթը»։ Դա մեր «Չամիչի ընկերության» ամբողջ մի էջ բռնող ռեկլամն էր։ Ռեկլամն անբասիր անգլերենով բացատրում էր, որ չամիչը պարունակում է երկաթ, և որ խելացի մարդիկ ամեն օր հինգսենթանոց մի տուփ չամիչ են ուտում։ Ռեկլամն ասում էր, որ չամիչը վերացնում է հոգնածությունը։ Էջի ներքևում մեր քաղաքի անունն էր, ընկերության անվանումն ու հասցեն։ Մենք այլևս կորած չէինք անապատում, քանի որ մեր քաղաքի անունը տպագրված էր «Սաթերդեյ իվնինգում»։

Այս ռեկլամը սկսեց պարբերաբար հայտնվել «Իվնինգ փոստի» էջերում։ Դա ինքնին սքանչելի էր։ Մարդիկ լսում էին մեր մասին։ «Փոստում» ամբողջ մի էջ բռնող ռեկլամը թանկ արժեր, բայց մարդկանց չամիչ ուտել էին սովորեցնում, և կարևորը դա էր։

Մարդիկ, իրոք, մի որոշ ժամանակ սկսեցին չամիչ ուտել։ Փոխանակ հինգսենթանոցը կոկա-կոլայի կամ շաքարաձողիկի տային, նրանք չամիչի փոքր տուփեր էին գնում։ Չամիչի գինը սկսեց բարձրանալ և

մի քանի տարի անց, երբ Ամերիկան բարգավաճում էր, չամիչի գինն այնքան բարձրացավ, որը տասը ակր հող ունեցող մարդը մեծ ունեցվածքի տեր էր համարվում և դա այդպես էլ կար։ Տասը ակր այգի ունեցող որոշ ֆերմերներ նոփ-նոր մեքենաներ էին գնում ու քշում էին ուր սիրտներն ուզեր։

Մեր քաղաքում ամենքը հպարտ էին Չամիչի ընկերությամբ։ Ամեն ինչ թվում էր հրաշալի։ Գները բարձր էին և մի կտոր խոպան հողի համար մարդիկ պատրաստ էին խոշոր գումար վճարել։

Հետո ինչ-որ բան պատահեց։

Մեղավորը մեր Չամիչի ընկերությունը չէր։ Ուղղակի այդպես ստացվեց։ Մարդիկ դադարեցին չամիչ ուտել։ Գուցե պատճառն այն էր, որ նախկին բարգավաճումը չկար, կամ գուցե մարդիկ պարզապես ձանձրացել էին չամիչ ուտելուց։ Ուրիշ բաներ էլ կային, որ մարդիկ կարող էին գնել հինգ սենթով և ուտել։ Մեր ռեկլամային հայտարարությունները շարունակում էին հայտնվել «Սաթըրդեյ իվնինգ փոստում», մենք շարունակում էինք հարցնել ամերիկացիներին, թե նրանք արդյոք կերե՞լ են իրենց բաժին երկաթը, բայց ամեն ինչ ապարդյուն էր։ Մենք մեր «Արևաստեղծի» մթերանոցում ավելի շատ չամիչ ունեինք, քան կարող էինք վաճառել նույնիսկ չինացիներին, եթե անգամ նրանք երեքական չամիչ գցեին իրենց եփած բրնձի յուրաքանչյուր ամանի մեջ։ Չամիչի գինը սկսեց ընկնել։ Ընկերության ղեկավարները սկսեցին մտահոգվել։ Նրանք սկսեցին մտածել չամիչի օգտագործման նոր ձևերի մասին։ Նրանք հրավիրեցին քիմիկոսների, որոնք և հնարեցին չամիչի օշարակը։ Ենթադրվում էր, որ դա առնվազն նույնքան լավը կլինի, որքան թխկիինը։ Սակայն այդպես չէր։ Հեռավոր նմանություն իսկ չկար։ Դա բոլորովին օշարակի համ չուներ։ Պարզապես օշարակի կազմություն ուներ, ուրիշ ոչինչ։ Սակայն մեր ընկերության ղեկավարները լի էին համառ եռանդով և ջանում էին այս կամ այն կերպ տնօրինել չամիչի մնացորդը։ Նրանք պատրաստ էին, եթե դրա կարիքը կար, իրենք իրենց խաբելով, հիմարի տեղ դնելով, հավատալ, որ մեր հովիտը կարող է բարգավաճել չամիչի օշարակի արտադրությամբ ու վաճառքով։ Եվ որոշ ժամանակ նրանք հավատում էին դրան։ Սակայն չէին հավատում մարդիկ, որոնք պետք է գնեին մեր օշարակը։ Չամիչի գինը շարունակում էր ընկնել։ Ի վերջո, այնքան ընկավ, որ մեզ արդեն թվաց, թե սխալ ենք գործել, կանգ առնելով անապատում ու քաղաք կառուցելով առաջին իսկ պատահած տեղում։

Հետո մենք իմացանք, որ երկրում վիճակն ամենուրեք նույնն է։ Գներն ամեն տեղ էլ ցածր էին։ Անկախ նրանից, թե որքան հնարամիտ

էինք մենք ու որքան խելամիտ էին մեր գրած հայտարարությունները կամ գրավիչ չամիչի համար պատրաստած տուփերը, միևնույն էր, չէին կարող հուսալ ավելի թանկ վաճառել չամիչը, քան վաճառում էինք։ Վեցհարկանի շինությունը տխուր տեսք ուներ, ոգևորությունը մարել էր, փսկ փաթեթավորման տեղամասը դարձել էր բնապատկերի ավելորդ զարդարանք։ Մեքենաները վերածվել էին հնոտիքի, և մենք գիտակցում էինք, որ ամերիկյան մեծ գաղափարը կոտր է ընկել։ Մենք չէինք փոփսել մարդկանց համի զգացողությունը։ Նրանք շարունակում էին հացը գերադասել չամիչից։ Մենք չէինք վարժեցրել յուրաքանչյուր շինացու չամիչ գցել իր եփած բրնձի ամանը։ Բրինձն առանց չամիչի էլ բավարարում էր նրանց։

Եվ մենք սկսեցինք ինքներս ուտել չամիչը։ Զարմանալի էր, թե ինչպես սովորեցինք չամիչ ուտել։ Մենք այնքան էինք խոսել այդ մասին, որ մոռացել էինք, թե ինչքան համով է չամիչը։ Մենք սովորեցինք չամիչը եփել։ Լավ շոգեփած չամիչը հացի հետ հիանալի համ ուներ։ Ամբողջ հովիտի ժողովուրդը չամիչ էր ուտում։ Մարդիկ չամիչ գնել չէին կարող, քանի որ դա շռայլություն էր, այնպես որ մենք ստիպված էինք չամիչն ինքներս ուտել, թեև մեզ համար դա բնավ էլ շռայլություն չէր։

ՎԱՐՍԱՎԻՐԸ, ՈՐԻ ՔԵՌՈՒ ԳԼՈՒԽԸ ԿՐԾԵՑ ԿՐԿԵՍԻ ՎԱԳՐԸ

Միսս Գեման ասում էր՝ մազերդ պետք է կտրես, մայրս ասում էր՝ մազերդ պետք է կտրես, եղբայրս՝ Գրիգորը, ասում էր՝ մազերդ պետք է կտրես, ողջ աշխարհն ուզում էր, որ ես մազերս կտրեմ։ Գլուխս ասես շատ մեծ լիներ աշխարհի համար։ Այսքան շատ սև մա՜զ, ասում էր աշխարհը։

Բոլորն ասում էին.

— Վերջապես ե՞րբ ես մազերդ կտրելու։

Մեր քաղաքում մի շատ գործիմաց մարդ կար Հանթինգթոն անունով, որ ամեն երեկո ինձնից «Իվնինգ հերալդ» էր գնում։ Այդ մարդն ուներ երկու հարյուր քառասուն ֆունտ քաշ, ուներ երկու «կադիլլակ», վեց հարյուր ակր հող, ուր ալիկանտե խաղող էր աճեցնում, միլիոնից ավելի դոլար բանկում, և փոքր ու ճաղատ գլուխ իր մարմնի հենց գագաթին, որտեղից այն բոլորին շատ լավ երևում էր։ Նա ստիպում էր եր-

կաթուղային պահեստներում աշխատող իր մարդկանց, որ մի վեց թաղամաս կտրեն ու գան տեսնեն իմ գլուխը։

— Սա Կալիֆոռնիա է, մի նայեք է,— բղավում էր նա փողոցով մեկ։— Սա արդեն կլիմա՜ է, սա առողջությո՜ւն է։ Տեր իմ, այ սա մազեր են մարդու գլխին։

Միսս Գեման շատ խիստ էր արտահայտվում գլխիս չափերի մասին։

— Ես որևէ անուն չեմ տալիս,— ասաց մի օր նա,— սակայն եթե մեր դասարանից մի երիտասարդ այս օրերիս վարսավիրի մոտ չգնա, նրան կուղարկեն ուղղիչ դպրոց։

Անուն նա չէր տալիս, պարզապես այդ ասելիս նայում էր ինձ։

— Հետո՞, գուցե բացատրե՞ս սրա իմաստը,— ասաց Գրիգոր եղբայրս։

— Հիշիր Սամսոնին,— ասացի ես,— հիշիր Սամսոնի ցասումը, երբ նրա մազերը կտրեցին։

— Դա ուրիշ բան է,— ասաց Գրիգոր եղբայրս,— դու Սամսոնը չես։

— Չե՞մ,— ասացի ես։— Դու ի՞նչ գիտես, որ չեմ։ Իսկ ինչո՞ւ չեմ, ինչո՞ւ ես այդպես կարծում։

Ես ուրախ էի, որ աշխարհն այդպես զայրացած էր ինձ վրա, սակայն մի օր մի ճնճղուկ փորձեց բույն հյուսել մազերիս մեջ, և ես շտապեցի վարսավիրի մոտ։ Ես քնած էի մեր բակի ընկուզենու տակ, խոտերի մեջ, երբ ծառից մի ճնճղուկ ընկավ և սկսեց փորփրել մազերս։ Ձմեռային տաք օր էր, և ամբողջ աշխարհը դեռ քնած էր։ Շուրջս լուռ էր ու խաղաղ։ Ոչ ոք մեքենայով ոչ մի տեղ չէր շտապում և ամենուր միայն բերկրալի ու թախծոտ լռություն էր։ Աշխարհը։ Օհ, տեր իմ, ինչ լավ է ապրելը ուր էլ որ ապրես։ Ինչ հիանալի է, երբ աշխարհում ունես մի փոքրիկ տուն մեծ պատշգամբով՝ ամռան երկար օրերի ու երեկոների համար։ Ունես սենյակներ, սեղան, աթոռ ունես, մահճակալ։ Ունես դաշնամուր։ Ունես վառարան։ Պատկերներ «Սաթըրդեյ իվնինգ փոստ»-ից պատերին ամրացրած։ Զարմանք, հրաշք բան է աշխարհում ապրելը, ուր էլ որ ապրես։ Լինել ողջ, կարողանալ շարժվել ժամանակի և տարածության, առավոտվա, կեսօրի և գիշերվա մեջ, շընչել և ուտել, ծիծաղել և խոսել, քնել և մեծանալ։ Տեսնել, լսել, շոշափել, շրջել աշխարհով մեկ այս արևի տակ։ Ունենալ քո տեղը։ Աշխա՜րհ։

Ես ուրախ էի, որ կա աշխարհ և ուրեմն կարող էի և ես լինել։ Ես մենակ էի և տխուր, տխուր ամեն ինչի համար, բայց և ուրախ։ Վեր-

չապես դա նույն բանն է։ Ես շատ ուրախ էի այն ամենի համար, ինչի համար որ տխուր էի։ Ես այնքան ուրախ էի և տխուր ամեն ինչի համար, որ ուզում էի երազել այնպիսի վայրերի մասին, որ երբեք չէի տեսել։ Աշխարհի հեքիաթային քաղաքներ՝ Նյու Յորք, Լոնդոն, Փարիզ, Բեռլին, Վիեննա, Հռոմ, Կոստանդնուպոլիս, Կահիրե։ Փողոցներ, տներ, կենդանի մարդիկ։ Ամենուր դռներ և պատուհաններ։ Գնացքներ՝ գիշերով, նավեր՝ ծովում, գիշերով։ Մութ, թախծոտ ծովը։ Պայծառ պահերը բոլոր մոռացված տարիների, ժամանակի տակ թաղված քաղաքները, ամայի, պվերված վայրերը. մի կյանքը հավերժական մահ է և հավերժական կենդանություն, որովհետև երկրագնդի վրա կենդանի, ամեն ինչ կենդանի է լինելու հավերժ։ Ահ, Հիսուս, 1919 թվականն էր և ես տեսա մի երազ, իբր կենդանի, ամեն ինչ կենդանի է լինելու հավերժ։ Երազում էի, որ չի լինելու այլևս ջրհեղեղ, կործանում և մահ։ Երազում էի հավերժ արև երկնքում և աշխարհը լի ջերմությամբ։

Այդ պահին էր, որ ճնճղուկը ցած թռավ և իջնելով գլխիս փորձեց բույն հյուսել մազերիս մեջ. ես արթնացա։

Բացեցի աչքերս, սակայն չշարժվեցի։

Մտքովս չէր անցնում, թե մազերիս մեջ թռչուն կա, երբ մեկ էլ ճնճղուկը սկսեց երգել։ Երբեք կյանքումս այդպես պարզ չէի լսել թռչունի լացը և այն, ինչ լսեցի, թվաց ինձ նոր և զարմանալի, միաժամանակ սովորական և հին։ Թռչունը պարզապես երգում էր, սակայն թվաց ինձ, թե լսում եմ. «Լացիր, լացիր, լացիր, օ՜հ, լացիր, ուրիշ հնար չունես, լացիր»։ Եվ սակայն այդ տխուր մեղեդին թռչնակն իմ կատարում էր շատ կենսուրախ։ Թվում էր մինչ այդ լռություն էր աշխարհում, ոչ մի ձայն, և հանկարծ ականջիս հասավ ճնճղուկի այդ խոսուն երաժշտությունը։ Մի պահ, քանի դեռ լրիվ չէի արթնացել, այդ ամենը ինձ շատ բնական թվաց. թռչունը մազերիս մեջ, որ ասես խոսում էր ինձ հետ, նրա ուղերձի բովանդակության և ոգու զարմանալի անհամապատասխանությունը։ Մի կողմից թախիծ, մյուս կողմից ուրախություն։

Հասկացա, որ դա սխալ է։ Վայել չէ փոքրիկ թռչնին պտտվել որևէ մեկի մազերի շուրջ։

Տեղից վեր թռա և շտապեցի քաղաք, իսկ ճնճղուկը, սարսափելի վախեցած, միանգամից թռավ, հեռացավ։

Աշխարհն իրավացի էր։ Իրավացի էր և միսս Գեման։ Եղբայրս Գրիգորը, նույնպես իրավացի էր։ Պետք էր կտրել մազերս, որպեսզի ճնճղուկներն այլևս չփորձեին բույն հյուսել այնտեղ։

Մարիփոզա փողոցում Արամ անունով մի հայ վարսավիր կար, ով թվում էր, թե կարող էր լինել և ադարակատեր, և դարբին, և նույնիսկ

փիլիսոփա։ Նա դա չգիտեի։ Գիտեի միայն, որ նա մի փոքրիկ վարսավիրանոց ուներ Մարիփոզա փողոցում և իր ժամանակի մեծ մասը անց էր կացնում «Ասպարեզ» և այլ հայկական թերթեր կարդալով, գլանակ էր փաթաթում, ծխում ու նայում անցորդներին։ Դեռ չէր պատահել, որ տեսնեի նրան մեկնումեկին սափրելիս կամ որևէ մեկի մազերը կտրելիս, չնայած, հնարավոր է, որ եղել են հատուկենտ մարդիկ, որ սխալմամբ, միամտաբար մտել են նրա վարսավիրանոց։

Գնացի Մարիփոզա փողոց, Արամի վարսավիրանոցը և արթնացրի նրան։ Նա, փոքրիկ սեղանի մոտ նստած, հայերեն գիրքը բաց դրված առաջը, հանգիստ ննջում էր։

— Մազերս կկտրե՞ք,— հարցրի հայերեն,— քսանհինգ սենթ ունեմ։

— Ահ,— ասաց նա,— շատ ուրախ եմ ձեզ այստեղ տեսնելու։ Ձեր անունն ի՞նչ է։ Նստեցեք, խնդրեմ։ Նախ ես մի սուրճ կպատրաստեմ։ Բայց ինչ հիանալի մազախուրձ է ձեր գլխին։

— Բոլորն ասում են, որ պետք է մազերս կտրեմ,— ասացի ես։

— Այդպես է, միշտ այդպես են մարդիկ,— ասաց նա։— Անպայման պետք է քեզ սովորեցնեն, թե ինչ անես։ Իսկ ի՞նչ վատ բան կա դրա մեջ, եթե մարդը մազեր ունի։ Ինչո՞ւ են ամեն ինչի մեջ քիթները խոթում։ Փող աշխատիր, ասում են։ Ֆերմա գնիր։ Այս արա, այն արա։ Ահ, չեն թողնում մարդ հանգիստ ապրի։

— Դե, ասեք, կարո՞ղ եք,— հարցրի ես,— կարող եք ինձ այնպես խուզել, որ այլևս երկար ժամանակ մազերիս մասին խոսք չլինի։

— Սուրճ,— ասաց վարսավիրը,— նախ մի-մի կում սուրճ խմենք։

Վարսավիրանոցի ետևի մասում մի փոքրիկ գազօջախ կար, կային նաև ջրի ծորակ, լվացարան, մի դարակ՝ վրան սուրճի փոքրիկ գավաթներ, պնակներ, գդալներ, պահածոյի բացիչ և զանազան այլ մանրամանր բաներ։

Նա ինձ համար մի գավաթ սուրճ բերեց, և ես զարմանքով մտածում էի, թե ինչպես էր պատահել, որ առաջ երբեք չէի այցելել մեր քաղաքի այս թերևս ամենահետաքրքիր մարդուն։ Այն բանից, թե նա ինչպես արթնացավ, երբ ես վարսավիրանոց մտա, ինչպես խոսեց ինձ հետ, ինչպես քայլեց և ինչպես շարժվեց, հասկացա, որ նա ուշագրավ անձնավորություն է։ Հասկացա, որ նա աշխարհի ամենանշանավոր մարդն է, Մարիփոզա փողոցում ապրող այդ վարսավիրը։ Նա մոտ հիսուն տարեկան էր, իսկ ես՝ տասնմեկ։ Հասակով նա ինձնից բարձր չէր, ոչ էլ հավանաբար քաշն էր իմից ավելի, սակայն դեմքը, դա այնպիսի մի մարդու դեմք էր, որ շատ բան էր տեսել, շատ տառապել, շատ բան գի-

տեր, շատ իմաստուն էր, և սակայն դարձյալ սիրում էր մարդկանց, չէր չարացել։

Երբ բացում էր աչքերը, նրա հայացքը կարծես ասում էր. «Աշխա՞ր-հը։ Ես ամեն ինչ գիտեմ մեր այս աշխարհի մասին։ Չարություն և ժլատություն, ատելություն և վախ, արատ և քայքայում։ Թող այդպես լինի, այդ բոլորով հանդերձ, ես սիրում եմ աշխարհը։

Վերցրի սուրճով լի գավաթը, և շուրթերիս մոտեցրի տաք, սև հեղուկն ու մի կում արեցի։ Ինձ թվաց, որ այդպիսի համեղ բան դեռ խմած չկայի կյանքում։

— Նստեք,— ասաց նա հայերեն,— նստեք, նստեք։ Մենք ոչ մի տեղ չենք շտապում, անելու բան էլ չունենք։ Մի ժամում ձեր մազերը ավելի չեն երկարելու։

Ես նստեցի ու հայերեն ծիծաղեցի, և նա սկսեց ինձ պատմել աշխարհի բաներից։

Պատմեց ինձ մշեցի իր Միսակ քեռու մասին։ Խմեցինք սուրճը։ Հետո նստեցի աթոռին ու նա սկսեց կտրել մազերս։ Մազերս նա կտրեց շատ վատ, ավելի վատ, քան անվճար կտրում էին երկաթգծի մյուս կողմում գտնվող վարսավիրների դպրոցում։ Սակայն նա պատմեց ինձ իր խեղճ Միսակ քեռու մասին, պատմեց այնպիսի մի պատմություն, որ աշկերտ-վարսավիրներից ոչ մեկը չէր կարող պատմել։ Նրանք բոլորը, այդ ամբողջ փունջը միասին, չէր կարող այդպիսի պատմություն անել։ Ես չէի զարմանա, եթե աշխարհի բոլոր աշկերտ-վարսավիրները միասին վերցրած չկարողանային գոնե կիսով չափ այնպիսի պատմություն անել, ինչպիսի պատմություն էր նրա խեղճ Միսակ քեռու և կրկեսի վագրի մասին տխուր պատմությունը։ Դուրս եկա նրա վարսավիրանոցից՝ մազերս շատ տգեղ խուզած, սակայն դա բնավ ինձ չէր հուզում։ Ախր նա վարսավիր էլ չէր։ Նա միայն ձևի համար էր զբաղվում մազ խուզելով ու սափրելով, որպեսզի կինը հոգին շատ չհանի։ Նա այդ անում էր, որպեսզի աշխարհն իրենից գոհ մնար։ Նրա ուզածը միայն մի բան էր՝ գիրք կարդալ, մեկ էլ խոսք ու զրույցի բռնվել օրինավոր մարդկանց հետ։ Նա հինգ երեխա ուներ՝ երեք տղա և երկու աղջիկ, բայց բոլորն էլ կնոջ նման էին՝ նա չէր կարող նրանց հետ խոսել։ Նրանց միայն մի բան էր հետաքրքրում՝ թե նա որքան փող է վաստակում։

Իմ խեղճ Միսակ քեռին,— ասաց վարսավիրը,— ծնվել էր շատ վատ։ Մուշում նա շատ անպուսակ տղա էր, բայց ոչ անօրեն էր, ոչ ավազակ։ Կատաղում, կռիվ էր սարքում միայն այն մարդկանց հետ, ովքեր իրենց շատ ուժեղ էին երևակայում, իսկ ինքը մենակ կարող էր հաղթել միանգամից երկու մարդու, քաղաքի ուզածդ տղաներին, ու թե

տեղը գար՝ դեռ իրենց հայրիկներին ու մայրիկներին, պապիկներին և տատիկներին էլ հետը։

Դե, բոլորն ասում էին իմ խեղճ Միսակ քեռուն. «Միսակ, դու շատ ուժեղ ես։ Ինչո՞ւ չես ուզում ըմբիշ դառնալ և ըմբշամարտով փող վաստակել»։

Եվ այդպես Միսակը դարձավ ըմբիշ։ Դեռ քսան տարեկան էլ չկար, բայց արդեն տասնութ հոգու ոսկոր էր ջարդել։ Ամբողջ փողը ծախսում էր ուտել-խմելու վրա, ինչ էլ որ մնում էր, բաժանում էր երեխաներին։ Փող չէր ուզում։

— Ահ,— ասաց վարսավիրը,— դա շատ վաղուց էր։ Հիմա բոլորը հենց միայն փողի են վազում։ Նրան ասում էին, որ կգա մի ժամանակ, որ ինքը կզրջա փող չունենալու համար, և մարդիկ իրավացի էին։ Ասում էին, որ փողը մի քիչ խնայի, որովհետև վերջ ի վերջո կզրկվի իր ուժից, այլևս չի կարողանա ըմբշամարտել, և կմնա առանց կոպեկի։ Այդ օրը իսկապես էլ եկավ։ Իմ խեղճ Միսակ քեռին դարձավ քառասուն տարեկան, էլ առաջվա ուժը չուներ և փող էլ չուներ։ Բոլորը վրան ծիծաղում էին, և նա տնից գնաց։ Մեկնեց Կոստանդնուպոլիս։ Հետո մեկնեց Վիեննա։

— Վիեննա՞,— հարցրի ես։— Ձեր Միսակ քեռին եղել է Վիեննայո՞ւմ։

— Այո, իհարկե,— ասաց վարսավիրը։— Իմ խեղճ Միսակ քեռին շատ տեղերում է եղել։ Վիեննայում, իմ խեղճ քեռին աշխատանք չգտավ, նա համարյա թե մեռնում էր սովից և իմ խեղճ քեռին մի կտոր հաց գոնե գողացա՞վ այդ ժամանակ։ Ոչ, նա ոչինչ չգողացավ։ Հետո նա մեկնեց Բեռլին։ Ա՜յ դա քաղաք է, Բեռլինը։ Այնտեղ նույնպես, իմ խեղճ Միսակ քեռին մեռնում էր քաղցից։

Վարսավիրը մի կերպ կտրում էր մազերս։ Տեսնում էի հատակին թափված սև մազերս ու զգում էի, որ երբեմնի մազերով պաշտպանված գլուխս սառչում է ու սառչում, գնալով փոքրանում է, փոքրանում։

— Ահ, Բեռլինը,— ասաց վարսավիրը։— Դա աշխարհի ամենագաժան քաղաքն է։ Ինչքան ասես փողոցներ, տներ, մարդիկ, բայց ոչ մի դուռ չբացվեց իմ խեղճ Միսակ քեռու համար՝ ոչ սենյակ ուներ, ոչ սեղան, ոչ էլ ընկեր։

— Ա՜հ, աստված,— ասացի ես,— մարդու մենությունը այս աշխարհում։ Կյանքի այդ սոսկալի մենությունը։

— Նույնն էր և Փարիզում,— շարունակեց վարսավիրը։— Նույնը և Լոնդոնում, Նյու Յորքում, Հարավային Ամերիկայում։ Ամեն տեղ նույնն

էր՝ փողոցներ ու փողոցներ, տներ ու տներ, դռներ ու դռներ, բայց իմ խեղճ Միսակ քեռու համար ասես տեղ չկար աշխարհում։

— Ա՜հ, աստված,— աղոթեցի ես,— պահպանիր նրան, տե՜ր աստված, պահպանիր նրան։

— Չինաստանում,— պատմում էր վարսավիրը,— իմ խեղճ Միսակ քեռին հանդիպեց մի արաբի, որ ծաղրածու էր ֆրանսիական կրկեսում։ Արաբ ծաղրածուն ու իմ քեռի Միսակը իրար հետ խոսեցին թուրքերեն։

Ծաղրածուն ասաց. «Եղբայր, դուք սիրո՞ւմ եք մարդկանց և կենդանիներին»։

Եվ իմ քեռի Միսակն ասաց. «Եղբայր, ես սիրում եմ այն ամենը, ինչ արարել է աստված այս երկնակամարի տակ՝ մարդկանց և կենդանիներին, ձկներին և թռչուններին, սիրում եմ և ժայռերը, և կրակը, և ջուրը, և այն ամենը՝ ինչ տեսանելի է և անտեսանելի»։

Արաբ ծաղրածուն ասաց. «Եղբայր, իսկ դուք կարո՞ղ եք սիրել ջունգլիների կատաղի վագրին»։

Եվ իմ Միսակ քեռին ասաց. «Եղբայր, ես անսահման սիրում եմ ջունգլիների կատաղի վագրին»։ Ա՜հ, դժբախտ մարդ էր իմ Միսակ քեռին։

— Աստվա՜ծ իմ,— ասացի ես։

Արաբ ծաղրածուն շատ ուրախ էր՝ լսելով, որ իմ Միսակ քեռին սիրում է ջունգլիների վայրի գազաններին, քանի որ ինքն էլ խիզախ մարդ էր։

«Եղբայր,— ասաց նա իմ քեռուն,— իսկ դու կարո՞ղ ես վագրին այնքան սիրել, որ գլուխդ դնես նրա բաց երախի մեջ»։

— Աստվա՜ծ իմ, պահպանիր նրան,— աղոթեցի ես։

— Եվ,— ասաց վարսավիր Արամը,— իմ Միսակ քեռին ասաց. «Այո, եղբայր, կարող եմ»։

Արաբ ծաղրածուն ասաց. «Կուզե՞ք մեր կրկեսում աշխատել։ Երեկ մեր վագրը մի քիչ անզգույշ վրա բերեց իր ծնոտները մեր խեղճ Սիմոն Պերիգորի գլխի շուրջ, և հիմա կրկեսում չկա մեկը, որ այդպես ուժեղ սիրի ամենագեղ աստծո այդ արարածին»։

Իմ խեղճ Միսակ քեռին հոգնել էր կյանքից երկրային և ասաց. «Եղբայր, ես կաշխատեմ կրկեսում և գլուխս կդնեմ աստծո սուրբ վագրի բաց երախի մեջ, թեկուզ օրական տասն անգամ»։

«Ոչ, այդքան պետք չէ,— ասաց արաբ ծաղրածուն,— օրական երկու անգամ միանգամայն բավական է»։

Եվ այսպես, իմ խեղճ Միսակ քեռին սկսեց աշխատել Չինաստանում, ֆրանսիական կրկեսում և գլուխը դնում էր վագրի բաց երախը։

— Կրկեսը,— շարունակում էր վարսավիրը,— Չինաստանից գնաց Հնդկաստան, Հնդկաստանից՝ Աֆղանստան, Աֆղանստանից՝ Պարսկաստան, և այնտեղ, հենց Պարսկաստանում դա պատահեց։ Վագրն ու իմ խեղճ Միսակ քեռին վաղուց արդեն շատ բարեկամացել էին։ Թեհրանում, այդ հին, կործանման հասած քաղաքում վագրը գազազեց։ Սարսափելի շոգ էր, և բոլորն էլ մի տեսակ չարացած էին։ Վագրը կատաղել էր և առավոտից մինչև երեկո այս ու այն կողմ էր նետվում վանդակում։ Իմ խեղճ Միսակ քեռին, ինչպես միշտ, գլուխը դրեց վագրի բաց երախը, Թեհրանում, Պարսկաստանի այդ չար ու զզվելի քաղաքում։ Նա արդեն պատրաստվում էր գլուխը ետ քաշել, երբ վագրը, գազազած կենդանի ամեն ինչի վրա, չիկոցով իրար միացրեց ծնոտները։

Ես վեր կացա աթոռից։ Մի անծանոթ մարդ տեսա հայելում՝ ես էի։ Սարսափեցի, գլխիս գրեթե մազ չկար։ Վճարեցի քսանհինգ տենթ Արամ վարսավիրին ու գնացի տուն։ Բոլորը ծիծաղում էին վրաս։ Գրիգոր եղբայրս ասաց, որ այսպիսի ահավոր մազերի կտրվածք դեռ տեսած չկա։

Ինչևէ, դա խնդիր չէր։

Չորս շաբաթ շարունակ մտածում էի վարսավիրի խեղճ Միսակ քեռու մասին, որի գլուխը կրծեց կրկեսի վագրը, և անհամբեր սպասում էի այն օրվան, երբ նորից կարիք պիտի ունենամ մազերս կտրելու, որպեսզի գնայի վարսավիրանոց՝ Արամի մոտ, ու լսեի պատմությունը այն մարդու մասին, որ միայնակ ու կորսված էր աշխարհում, միշտ վտանգի մեջ. տխուր պատմությունը նրա խեղճ Միսակ քեռու մասին, տխուր պատմությունը կենդանի ամեն մարդու մասին։

ՍԵՎ ԹԱԹԱՐՆԵՐԸ

1926 թվականին Ռուսաստանում ընդամենը տասներկու սև թաթարներ կային, իսկ հիմա, 1935-ին նրանցից միայն տասն են մնացել զինվոր Մագոյի խորունկ սիրո պատճառով, որ նա տածում էր Մոյսքանի աղջկա՝ Քոմիի նկատմամբ։

1926 թվականին Մագոն տասնինը տարեկան էր։ Ես նրա եղբորն ու հարսին հանդիպեցի Կիև—Խարկով ուղևորվող գնացքում։ Մագոյի եղբայր Քարաշին զինվոր չէր, նրան չէր հետաքրքրում՝ սև թաթարները իսպառ կբնաջնջվեի՞ն, թե ոչ, որովհետև կարծում էր ավելի լավ է խոհեմաբար ապրել, քան թե լինել քաջ ու խելառ... Իսկ Մագոն այդպիսին չէր։ Նա ուզում էր խիզախորեն ապրել։

Գնացքում Քարաշին ռուսերեն էր խոսում, իսկ մի հրեուհի թարգ-

մանում էր նրա ասածները։ Քարաչիի կինը ուկրաինուհի էր։ Նա մտահոգված չէր եղել ամուսնանալ սև թաթարուհու հետ, պահպանել իր ցեղը, իր ցեղի ավանդույթը։ Նա ուզում էր միայն ողջ մնալ, կողքին մի աղջիկ լիներ, որ իրեն սփոփեր տխուր պահերին։

Հրեուհին թարգմանում էր, իսկ Քարաչիի կինը ժպտալով ավելի էր սեղմվում ջահել սև թաթարին։

— Մոյսքանը հրաշալի երգիչ էր,— ռուսերեն ասաց Քարաչին հրեուհուն, իսկ նա էլ թարգմանեց անգլերեն։— Նա ոչ միայն թաթարական հինավուրց երգերն էր երգում, նաև նորերն էր հորինում՝ մանավանդ խմած ժամանակ։ Իսկ կնոջը ծեծելուց հետո երգերն ավելի թախծալի էին դառնում և նա դիմում էր աստծուն, որպեսզի իրեն սպանի, իսկ երբ նրա աղոթքը տեղ չէր հասնում, գանգատվում էր ընկերներին. «Ախր ի՞նչ անեմ, երբ աստված չի ուզում, որ մեռնեմ...»։

Մոյսքանը հինգ որդի ուներ և մի աղջիկ։ Որդիներից երեքը զոհվել էին մանր-մունր խռովությունների կամ բանդիտական հարձակումների ժամանակ, մեկին աքսորել էին Սիբիր բոլորովին առանց պատճառի, իսկ մյուսը բանվոր էր Մոսկվայի տրակտորի գործարանում։ Նրա աղջիկը՝ Քոմին, անմման գեղեցկուհի էր։

— Ես սիրահարվեցի Քոմիին, իմ եղբայր Մաքոն սիրահարվեց, Սովետական Ադրբեջանի բոլոր զինվորներն ու սպաները սիրահարվեցին։ Տղամարդ չկար, որ այդ աղջկան տեսնելիս չգժվեր նրա համար։

Քարաչին վառեց ռուսական սիգարետը, խոր ներս քաշեց ծուխը, նայեց մեկ իր կնոջը, մեկ հրեուհուն, հետո ներողամտորեն ասաց.

— Քոմին բոլորովին նման չէր սրանց... Թող աստված ողորմի իմ խելառ եղբորը, որտեղ էլ որ նա հիմա լինի։ Քոմիի սիրտը խավար ծով էր։ Սև, անծիր ծով և իմ եղբայրը նրան կին էր կամենում։ Մոյսքանը համաձայնեց, հետո մի նոր երգ հորինեց։ Նա երեք օր ու գիշեր երգեց եղբորս՝ Մագոյի ու իր աղջկա՝ Քոմիի ամուսնության համար, առանց դադարի։ Նա չէր երգում միայն խմելիս։

Իսկ Քոմին իմ ջահել եղբորը՝ Մագոյին, պատասխանեց. «Ես քեզ չիմ ուզում...»։

Եվ իմ եղբայր Մագոն մի ձի գողացավ, նվիրեց Քոմիին, բայց նա մնաց իր ասածին։ Իսկ ձին հրաշալի էր, ուզածդ աղջիկ կսիրեր եղբորս, բայց Քոմին... Քոմին մերժեց Մագոյին։ Իմ խեղճ եղբայրը մի գեղեցիկ զգեստ գնեց նրա համար, բայց իզուր. Քոմին նորից պատասխանեց՝ ինքը չի ուզում սիրել նրան։ Մագոն կով գողացավ, Մոյսքանը մորթեց կերավ։ Հետո սեղան գողացավ... բայց աղջիկը՝ չէ որ չէ։ Եղ-

բայրս ասաց, որ Քոմիի համար ինքը կարող է նաև ամերիկյան ավտոմեքենա գողանալ, բայց դե ինչին է պետք՝ քշել չգիտե։

Ես, ճիշտ է, միայն մեկ տարով եմ փոքր իմ եղբայր Մագոյից, բայց մեզ մոտ ընդունված է, երբ ավագ եղբայրը խոսում է,փոքրը իրավունք չունի նրան խորհուրդներ տա, ասի՝ էս պիտի անես, էս պիտի չանես... Այդպես է ընդունված ոչ միայն սև թաթարների մոտ։ Շատ ժողովուրդներ այդ սովորությունն ունեն։ Ամերիկացիներն այդպես չե՞ն...

— Նայած ամերիկացի,— ասացի ես։

— Իմ եղբայրն ուզում էր ամերիկյան ավտոմեքենա գողանալ, որովհետև խենթի պես սիրում էր Քոմիին։ Ես էլ էի սիրում նրան, բայց երբ ծովը խավար է ու փոթորկոտ, միայն քաջը կամ խենթը կուզենա լողալով անցնել, կամ նա, ով մեռնելուց չի վախենում և ուզում է... մեռնել։ Իմ եղբայրը գիշերը չէր քնում։ Նա չէր քնում նաև ցերեկը և ես նրա աչքերի մեջ էի տեսնում, որ պատրաստ է ամբողջ աշխարհը կործանել, միայն թե տիրանար Քոմիին։ Մագոն կարող էր նաև սպանել աղջկան, եթե բացի իրենից որևէ մեկը սիրեր նրան։ Նա ամեն ինչի ընդունակ էր։ Իհարկե դա հիմարություն էր, բայց նաև՝ միայն մեծ մարդկանց յուրահատուկ բան։ Միայն իմ եղբայրն էր իսկական սև թաթար։ Միայն նա չէր ամաչում իր խենթությունից։ Բացի Մագոյից ոչ մեկը չէր կարող ամերիկյան ավտոմեքենա գողանալ։ Բանակի սպաներն ու զինվորները չէին համարձակվում այդ անել։ Նրանք գիտեին, թե ինչ բան է վախը։ Կառավարությանը պատկանող ամերիկյան ավտոմեքենան գողանալը կամ մեռնելը նույն բանն էր։

Իմ եղբայր Մագոն գողացավ «կադիլլակը», քշեց հյուրանոց։ Նա ուզում էր Քոմիին ման ածեր մեքենայով, բայց քշել չգիտեր։ Եղբայրս «կադիլլակով» գնաց Մալիջին փողոցում գտնվող «Նոր Եվրոպա» հյուրանոց։

Քարաչին տեղից ելավ, տխուր տարուբերեց գլուխը։

— Իմ խենթ եղբայր... Ախ, իմ խեղճ, խենթ եղբայր Մագո։ Մարդ է՞լ այդքան խոր կսիրի...

Նա նորից նստեց, խոժոռված մտորեց, հիշելով իր եղբորը։

— Ա՛խ, ա՛խ, ա՛խ...— հոգոց հանեց նա։— Իսկ դուք Ամերիկայում կարո՞ղ եք նման բաներ հասկանալ։

— Նա ուզում է իմանալ՝ արդյոք Ամերիկայում նման բաներ հասկանո՞ւմ են,— թարգմանեց հրեուհին։

— Նրան բացատրիր, որ սերն ամենուր է այդպիսին։ Ասա, որ այն

կապ չունի կառավարության վարչակարգի հետ։ Սերն ամենուր այդպիսին է։

Հրեուհին թարգմանեց իմ ասածները, և Քարաչին ռուսերեն ասաց.

— Да, да...

Հետո շարունակեց.

— Իմ եղբայրը ամերիկյան ավտոմեքենան քշեց Բաքվի Մալիջին փողոցում գտնվող «Նոր Եվրոպա» հյուրանոցի նախասրահ։ Ապակեպատ դռները փշրվեցին, հյուրանոցի կենվորները վախեցած դեսուդեն էին վազվզում։ Եղբայրս «կադիլլակով» մտավ նախասրահ։ Ապակիների սուր կտորները արյունլվա էին արել նրա գլուխը, դեմքը... Իսկ Մագոն, մեքենայի մեջ նստած, հանգիստ, իր համար սիգարետ էր ծխում, իսկ նրա շուրջ խռնված մարդիկ բղավում էին, աղաղակում։ Հետո մի երկու հարյուր հոգի մարդ հավաքվեց։ Հետո՝ Մոյսքանն ու իր աղջիկ Քոմին եկան... Եղբայրս ասաց. «Քոմի, Սովետական Ադրբեջանի բանակում կարո՞ղ ես գտնել մեկին, որ հանուն քո սիրո այսպիսի խելառություն աներ։ Լսո՞ւմ ես, Քոմի... կա՞ աշխարհում մի մարդ, որ...»։

— Այս դեպքը 1926 թվականին էր,— շարունակեց Քարաչին։— Տարիները այնպես արագ են անցնում, որ աչքդ չթարթած՝ կյանքդ արդեն չկա... Այո... կյանքի պատկերը փոխվում է...

— Ես չգիտեմ ինչպես թարգմանեմ,— ասաց հրեուհին։— Նա ասում է՝ «Կյանքի պատկերը փոխվում է»։

— Ապրողները մոռանում են մեռածներին... Իմ խեղճ, խելառ եղբայրը սպանեց Քոմիին։ Իմ եղբայրը՝ Մագոն, որ նրան ավելի շատ էր սիրում, քան թե որևէ մեկը Սովետական Ադրբեջանի բանակում։ Իմ խեղճ եղբայր... Ի՞նչ իմանաս, հիմա նա երևի Իրաքում է, Աֆղանստանում... կամ՝ մեռած է։ Ախ, ախ, ախ... Բոլորն ասում էին՝ լույսը դեռ չբացված եղբորդ կգնդակահարեն։ Պետությունից «կադիլլակ» գողանաս... Հետո «Նոր Եվրոպա» հյուրանոց ուղարկեցին մի սպա և հարյուր զինվորներ։ Սպան հարցրեց Մագոյին— «Ի՞նչ ես անում, մեքենայի մեջ»։ Եղբայրս պատասխանեց.— «Նստել եմ, ինչ պիտի անեմ...»։ Սպան թե՝ «Որտեղի՞ց ես այդ մեքենան գողացել»։ Մագոն նրան ասաց.— «Ժողովրդական կոմիսարների շենքի առջևից»։— «Իսկ գիտե՞ք, որ այդ ավտոմեքենան պատկանում է Կենտգործկոմին»,— հարցրեց սպան։ Իմ խենթ եղբայրը ոչ դեմ, ոչ դեն՝ պատասխանեց.— «Ոնց չգիտեմ։ Ես դա գողացել եմ Քոմիի համար»։ Իմ եղբայրը խենթ էր ու քաջ... — «Իսկ դու գիտե՞ս թե այդ հանցանքի համար ինչ պատիժ է սահմանված»,— ասաց սպան։— «Գիտեմ,— պատասխանեց եղբայրս,— մահապատիժ»։ Ախ Մագո, Մագո, Մագո...

Քարաշին դառնորեն թեքվեց հրեուհու կողմն ու բազմաթիվ հարցեր տվեց։

Ես միայն նրա ձայնի հնչերանգներից և դեմքի արտահայտությունից կռահեցի, որ նա հարցեր էր տալիս։

— Ի՞նչ է ասում,— հարցրի հրեուհուն։

— Նա հարցնում է՝ արդյոք ես թարգմանո՞ւմ եմ նրա յուրաքանչյուր բառը։ Քարաշին ուզում է իմանալ, դուք հասկանո՞ւմ եք իր եղբոր խորունկ սերը։ Նա ասում է՝ չեմ հավատում, թե որևէ մեկը առանց Քոմիին տեսնելու կհասկանա, թե ինչու Մագոն «կադիլլակ» գողացավ ու քշեց «Նոր Եվրոպա» հյուրանոցի նախասրահ։

— Նրան ասա՝ հասկանում եմ, հասկանում,— ասացի ես։

— Да?— հարցրեց Քարաշին։— Այո՞... Ճի՞շտ եք ասում...

— Այո,— ասացի։

Քարաշին շարունակեց.

— Բոլորը ուշադիր լսում էին սպային ու եղբորս ու երբ Մագոն ասաց՝ «Գիտեմ, մահապատժի են տալու», բոլորը վախեցած, բարձրաձայն ասացին. «Լսեցի՞ք... Նա գիտե, որ իրեն գնդակահարելու են, բայց հեշ պետքն էլ չի...»։

— Ասում եք ինչու գողացաք այս մեքենա՞ն,— նորից հարցրեց սպան։

— Որովհետև սիրում եմ Քոմիին,— ասաց եղբայրս։

Հետո բոլորը հանդարտվեցին, միայն մի մարդ չէր հանգստանում։ Նա սպասավոր էր։ Ասաց. «Ախր ինչե՞ր եք խոսում, է՛... Ամբողջ աշխարհն է սիրահարված Քոմիին։ Նույնիսկ իմ խելքն է նրա համար գնում...»։ Մեկը ափով փակեց նրա բերանը։ Ասելու բան չէր. բոլորն էին սիրում հպարտ ու գեղեցիկ Քոմիին։ Նրանք ամաչում էին ասել, բայց միաժամանակ հպարտ էին, որ իմ եղբայրը՝ Մագոն, չի ամաչել, իր սիրած աղջկա համար ամերիկյան «կադիլլակ» է գողացել ու քշել «Նոր Եվրոպա» հյուրանոցի նախասրահ։ Սպան նույնպես սիրահարված էր Քոմիին։ Նա ոչինչ չպատասխանեց, որովհետև զգում էր եղբորս ցավը։ Մագոյին փակեցին Բաքվի զինվորական բանտում։ Առավոտյան նրան նորից հարցաքննեցին։ Բոլոր հարցերին եղբայրս միայն ճշմարտությունն էր ասում։

— Դու ձի գողացե՞լ ես։ Կանացի զգեստ... Կանացի զգեստ գողացե՞լ ես։ Կով գողացե՞լ ես։ Սեղա՞ն...

— Այո, այո, այո,— պատասխանում էր եղբայրս։

— Իսկ ինչու ես գողացել։

— Որովհետև սիրում եմ Քոմիին։

Զինվորական դատավորը հաղթանդամ ծերունի էր՝ ավագ կապիտան։

— Իսկ ո՞վ է Քոմին,— հարցրեց դատավորը։

— Նա սև թութարի աղջիկ է,— պատասխանեց եղբայրս։— Նրա պես աղջիկ ամբողջ աշխարհում չես գտնի։ Ես էլ եմ սև թութար և սիրում եմ Քոմիին։ Ուզում եմ նրա հետ ապրել միևնույն տանը։ Աշխարհում սև թութարներ քիչ են մնացել։ Ես չեմ ուզում, որ մեր ցեղը վերանա։ Ես ուզում էի միայն սիրել Քոմիին։

— Բայց դու այնքան էլ սև չես,— ասաց դատավորը։

— Վերջերս ո՞վ է արևի երես տեսել որ... Ես ծառայում եմ ադրբեջանական բանակում։ Ախոռում եմ աշխատում, որտեղ արև չկա։ Եթե մի ամիս մնամ արևի տակ, ես էլ Քոմիի պես կսևանամ։ Ախոռում երկար ժամանակ մնալուց է, որ հիվանդի պես գունաթափ եմ։

— Առաջին անգամ եմ լսում սև թութարների մասին,— ասաց զինվորական դատավորը։— Ճիշտ է, սպիտակ թութարներ շատ եմ տեսել, բայց սև թութարներ... Ովքե՞ր են դրանք։ Ինչո՞ւ են կոչվում սև թութարներ։

— Որովհետև սև են,— պատասխանեց եղբայրս։

— Դրա համար, հա՞,— ասաց դատավորը։— Իսկ ինչքա՞ն սև թութարներ կլինեն աշխարհում։

— Աշխարհում չգիտեմ, բայց Բաքվում ինը-տասը հոգի կլինեն,— ասաց եղբայրս— Երեսուն տարի առաջ Քոտովա անունով մի սև թութար Ամերիկա գնաց։ Հիմա նա ամերիկացի է դարձել, նրա երեխաները այլևս սև չեն և ապրում են Փիթսբրգում։

— Իսկ ի՞նչ լեզվով եք խոսում,— ասաց դատավորը։

— Մեծ մասամբ ուրիշ լեզուներով,— ասաց եղբայրս։— Արաբերեն, քրդերեն, թուրքերեն, իսկ վերջերս էլ՝ ռուսերեն։

— Ինչ է, դուք մայրենի լեզու չունե՞ք,— ասաց դատավորը։

— Ունենք,— ասաց եղբայրս։

— Գրավո՞ր լեզու է,— ասաց դատավորը։

— Իհարկե։ Միայն թե աշխարհում ոչ մի սև թութար չկա, որ կարողանա կարդալ կամ գրել մեր լեզվով։ Մենք չենք կարողանում գրել նաև ուրիշ լեզուներով։

— Լավ,— ասաց դատավորը։— Իսկ ձեր լեզվով ինչպե՞ս եք ասում «արև»։

— Մեր լեզվում «արև» բառը չկա,— ասաց եղբայրս։

— Չհասկացանք։ Դուք ընդհանրապե՞ս բառեր չունեք,— ասաց դատավորը։

— Ունենք, ոնց չունենք։ Շատ բառեր կան մեր լեզվում, բայց դրանք արաբերեն, քրդերեն, թուրքերեն և ռուսերեն բառեր են. ուղղակի այդ բառերով խոսում ենք որպես սև թաթարների մայրենի լեզու։

— Ո՞նց թե,— զարմացած ասաց դատավորը։

— Մենք խոսում ենք սև թաթարի լեզվով,— բացատրեց եղբայրը։— Մենք սև թաթարներ ենք և այն բոլոր բառերը, որ գործածում ենք, կան մեր լեզվում։

— Ուրեմն. դու գողացել ես Կենտգործկոմին պատկանող «կադիլլակը», որ նվիրես այդ սև թաթարի աղջկա՞ն։ Այո՞... Դու այդքան շա՞տ ես սիրում նրան։ Այո՞,— ասաց դատավորը։

— Այո,— պատասխանեց եղբայրս։

— Այստեղ կանչեք, խնդրեմ, այդ աղջկան,— ասաց դատավորը։

Հենց այդ օրը, միջօրեանին Քոմիին տարան այն սենյակը, որտեղ եղբորս էին հարցաքննում։ Երբ գեղեցկուհին ներս մտավ, դատավորն այդ պահին փաստաթղթերն էր աչքի անցկացնում։ Հետո նա բարձրաձայն կարդաց՝ բացելով դատավարությունը։ Հանկարծ տեսավ Քոմիին։

Էլ չկարդաց։ Շփոթվել մնացել էր, չէր կարողանում աչքը կտրել նրանից։

— Նա՞ է,— հարցրեց դատավորը։

— Այո,— ասաց եղբայրս։— Քոմին է։

— Քոմիին աթոռ տվեք, թող նստի։ Նա շատ հուզված է երևում։ Ի՞նչ եք բերաններդ ջուր առած կանգնել։ Ասում եմ՝ նրան աթոռ տվեք,— ասաց դատավորը։

Հետո Քոմին ներկայացավ դատավորին, և նա մի քանի հարցեր տվեց։

— Դու հասկանո՞ւմ ես, թե ինչ է կատարվել,— հարցրեց դատավորը։

— Ոչ,— պատասխանեց Քոմին։

— Այս հիմար զինվորը սիրում է քեզ։ Նա քեզ համար ձի է գողացել, զգեստ, կով, սեղան, ի վերջո՝ Կենտգործկոմին պատկանող «կադիլլակը»։ Գիտե՞ք այդ մասին։

— Ոչ,— ասաց Քոմին։— Մագոն իմ հորեղբորորդին է։

— Քոմի, ճիշտ չես ասում։ Ես քո հորեղբորորդին չեմ,— ասաց եղբայրս։

— Լսիր,— ասաց դատավորը։— Չե՞ս հասկանում, որ քեզ մահվան դատավճիռ է սպասվում։

— Ես նրա հորեղբորորդին չեմ,— ասաց Մագոն։— Բաքվի սև թաթարներից ում ուզում եք հարցրեք։ Ես նրա ազգականը չեմ։

— Լռե՛ք,— ասաց դատավորը։ Նա կոթնեց սեղանին այնպես, որպեսզի մոտիկից տեսներ աղջկան։— Դու սիրո՞ւմ ես այս հիմար երիտասարդին։

— Ո՛չ,— ասաց Քոմին։

— Ուրեմն այդպես... Մի րոպե թողեք մտածեմ։ Դու գողացել ես կենտգործկոմին պատկանող ավտոմեքենան։

— Այո,— ասաց եղբայրս։

— Դու այդ ժամանակ սիրահարված էիր, այո՞։— ասաց դատավորը։

— Այո,— ասաց Մագոն։— Ես հիմա էլ եմ սիրահարված։ Ես մինչև կյանքիս վերջը կսիրեմ Քոմիին։

— Լռություն,— ասաց դատավորը։— Օրենքով այսպիսի հրեշավոր հանցանքի համար անհապաղ մահապատժի են ենթարկում։

— Բայց նա իմ աղգականն է,— ասաց Քոմին։— Ի՞նչ է, դուք ուզում եք նրան գնդակահարե՞լ։

— Ես մեռնելուց չեմ վախենում, —ասաց Մագոն։

— Լռե՛ք,— ասաց դատավորը։ Հակվելով առաջ, նորից դիմեց Քոմիին։— Մենք հնարավոր ամեն բան կանենք, որպեսզի ներում շնորհեն քո հորեղբորորդուն։ Կուսումնասիրենք նրա փաստաթղթերը և եթե նա վերջին հինգ տարիներին մարդասպանություն չի կատարել, նորից կվերադառնա բանակ, որտեղ նրան կառնեն հսկողության տակ և կհետևեն նրա վարքագիծը։

Չորս օր հետո Մագոյին նորից բանակ տարան։ Բաքվում բոլորն ուրախացան այս լուրն առնելով։ Բայց մի երեկո իմ եղբայր Մագոն տեսել էր Քոմիին՝ ավտոմեքենայում ծեր դատավորի հետ։ Դատավորը շատ մոտ էր նստած աղջկան։ Քոմին ուրախ ժպտում էր նրան։ Դատավորը ծեր մարդ էր և նրա երեխաները Մագոյից էլ մեծ էին։ Եղբայրս կատաղել էր։ Սկզբում որոշել էր սպանել դատավորին, նրա կնոջը և հինգ երեխաներին՝ հերթով, ավագից սկսած։ Հետո փոխեց իր մտադրությունը, ասաց՝ երկու լավ ձի կգողանա, Քոմիին կկապի դրանցից մեկին, կտանի բլուրները, կպահի այնքան, մինչև միասին կմեռնեն խոր ծերության հասնելով. սովից, իրար շատ սիրելուց և այլևս ապրել չուզելուց։ Եվ իմ եղբայր Մագոն գնաց Քոմիին ասաց.

— Ինչո՞ւ ես ման գալիս էդ բիձու հետ։

— Սիրտս ուզում է, ման եմ գալիս,— ասաց Քոմին։

— Բայց նա սև թաթար չէ,— ասաց եղբայրս։— Եթե մի անգամ էլ քեզ այդ դատավորի հետ տեսնեմ, նրան կսպանեմ։

— Բայց չէ՞ որ նա քո կյանքը փրկեց,— ասաց Քոմին։

— Դա ոչ մի նշանակություն չունի,— ասաց Մագոն։— Դու սև թաթար ես և անպայման սև թաթարի պիտի սիրես։

— Ես չգիտեմ, թե ով եմ։ Ինչ իմանաս... Գուցե և սև թաթար չեմ։

— Դու սև թաթար ես,— ասաց Մագոն։— Ես ուզում եմ, որ ինձ հետ նույն տանն ապրես։

— Ես չեմ ուզում քեզ սիրել,— ասաց Քոմին։

— Դու պետք է ինձ սիրես,— ասաց Մագոն։— Ես ու դու սև թաթարներ ենք և դու պիտի ինձ սիրես։

Ա՛խ, ա՛խ, ա՛խ... Աշխարհում այնքան շատ աղջիկներ կան... Բայց իմ խեղճ եղբոր աչքին ոչ մեկը չէր երևում, բացի Քոմիից։ Երևի դուք հասկանաք. իմ խենթ, խեղճ եղբայրը սպանեց Քոմիին ու փախավ Իրաք, կամ... գուցե Աֆղանստան։ Ո՛վ գիտե, գուցե ինքնասպանություն է գործել։ Նրա մասին ոչինչ չգիտենք։

Քոմին չէր ուզում սիրել եղբորս։ Մագոն աշխարհում միակն էր նրա համար, բայց աղջիկը չէր ուզում նրան սիրել։ Եղբայրս «կադիլլակը» քշեց «Նոր Եվրոպա» հյուրանոցի նախասրահ, որպեսզի Քոմին նրան սիրեր, բայց աղջիկը դարձյալ մերժեց նրան։

Մի առավոտ, արշալույսը դեռ չբացված, իմ եղբայր Մագոն գնաց Մոյսքանի տուն՝ ադրբեջանական բանակի ախոռներից վերցրած երկու ընտիր ձիեր տանելով։ Նա մտավ տուն, կապեց Քոմիի ձեռքերն ու ոտքերը, համբուրեց աղջկա շուրթերը, ձեռքերն ու մազերը։ Քոմիի հայրը՝ Մոյսքանը, օգնում էր նրան, որովհետև իր սրտով չէր, որ աղջիկը մանգար ծեր դատավորի հետ։ Իսկ Մոյսքանի կինը բղավում էր, աղաղակում և նա խփեց գետին փռեց կնոջը։ Հետո իմ եղբայր Մագոն Քոմիին կապեց ձիերից մեկին և իր հետ դեպի բլուրները տարավ։

Ոչ ոք չիմացավ, թե ինչ պատահեց այնտեղ։ Ոչ մեկն աշխարհում այնպես խոր չի սիրել որևէ մեկին, ինչպես իմ եղբայր Մագոն էր սիրում Քոմիին։ Կառավարությունը հեծյալ զինվորներ ուղարկեց բլուրները։ Նախ տասը զինվոր, հետո քսան, հիսուն, հետո հարյուր, վերջապես ադրբեջանական ամբողջ բանակը։ Մերուկ կապիտանը շատ էր բարկացել եղբորս վրա։ Նա հրամայեց. «Այդ հիմար զինվորին գնդակահարեք, բայց աղջկան ողջ և առողջ տուն բերեք»։

Բայց զինվորները ոչ եղբորս, ոչ էլ Քոմիին չգտան։

Իսկ մի առավոտ նրանք Քոմիին տեսան մեռած։ Եղբայրս՝ Մագոն, նրան պահել էր գետի ծանծաղուտի մեջ։ Նա չէր ուզել, որ աղջիկն ապրի, եթե իրեն չի սիրում։

Հետո Քարաչին խոր հոգոց հանելով հարցրեց.

— Ամերիկայում մարդ կարո՞ղ է այդպես խոր սիրել որևէ կնոջ։

— Չեմ կարծում,— ասացի։

Նա նորից թեքվեց հրեուհու կողմն ու սկսեց շատ արագ խոսել։

— Նա ուզում է, դուք հասկանաք, որ իր եղբոր արածը հանցագործություն չէ,— թարգմանեց հրեուհին։— Այդ սպանությունը ոչ թե ատելությունից, այլ սիրուց է եղել։ Ասում է՝ եթե տեսած լինեիք իր եղբորը, նրան ավելի լավ կհասկանայիք։ Քարաչին ուզում է իմանաք, որ իր եղբայրը երևելի մարդ էր։ Մագոն ուզում էր երևելի մարդու պես ապրել։ Ու այդ պատճառով նա այդ հիմար բանն արեց։

— Քարաչիին ասա, ես լիովին հասկանում եմ նրա եղբորը,— ասացի ես։

Հրեուհին թարգմանեց։

Քարաչին մի քանի րոպե լուռ մնաց, հետո ասաց.

— Ախ, Մագո, Մագո, Մագո...

Հետո էլի ռուսերեն բառեր ասաց, որոնք չհասկացա։

— Իսկ հիմա ի՞նչ է ասում,— հարցրի հրեուհուն։

— Ասում է՝ մարդ է՞լ Քոմիի պես աղջկան կսպանի։ Ինչքան շատ պիտի սիրես մեկին, որ... որ կարողանաս սպանել...

ԻՄ ՍԻՐՏԸ ԼԵՌՆԵՐՈՒՄ Է

1914 թվականին, երբ ես վեց տարեկան էի, մի ծերունի երևաց մեզ մոտ Սան Բենիտո փողոցում. նա գնում էր զառամյալների տուն։ Ծերունին գնում էր փող փչելով ու մեկ էլ կանգ առավ մեր տան առաջ։ Ես բակից դուրս թռա մայթի վրա, որպեսզի ականջ դնեմ, բայց նա այլևս չէր փչում։

Ես ասացի.

— Մի բան էլ նվագեք։ Ես շատ եմ ուզում լսել։

Իսկ նա ասաց.

— Երիտասարդ, մի բաժակ ջուր բերեք ծերուկիս, որի սիրտն այստեղ չէ, այլ լեռներում։

— Ո՞ր լեռներում,— հարցրի ես։

— Շոտլանդական,— ասաց ծերունին։— Մի բաժակ ջուր կբերե՞ք։

— Իսկ ի՞նչ է անում ձեր սիրտը շոտլանդական լեռներում։

— Թախծում է,— ասաց ծերունին։— Խնդրում եմ, մի բաժակ սառը ջուր տվեք։

— Իսկ որտե՞ղ է ձեր մայրը,— ասացի ես։

— Իմ մայրը Տալսում է, Օկլահոմայի նահանգում, բայց նրա սիրտը այնտեղ չէ։

— Հապա որտե՞ղ է,— ասացի ես։

— Շոտլանդական լեռներում,— ասաց ծերունին։— Երիտասարդ, ես սաստիկ ծարավ եմ։

— Այդ ո՞նց է, որ ձեր ընտանիքի բոլոր անդամները սրտները թողնում են լեռներում,— ասացի ես։

— Ինչ արած, մենք այդպես ենք ստեղծված,— ասաց ծերունին։— Այսօր այստեղ ենք, իսկ վաղը՝ մնաք բարով։

— Այսօր այստեղ, իսկ վաղը՝ մնաք բարո՞վ,— ասացի ես։— Այդ ինչպե՞ս։

— Հիմա մենք ողջ ենք, ու մեկ էլ տեսար՝ չկանք,— ասաց ծերունին։

— Իսկ որտե՞ղ է ձեր մոր մայրը,— ասացի ես։

— Վերմոնտ նահանգում է, Ուայթ-Ռիվր-Ջանքշն փոքրիկ քաղաքում,— ասաց ծերունին,— բայց նրա սիրտն այնտեղ չէ։

— Նրա խեղճ ծերացած, չորացած սիրտն է՞լ է լեռներում,— ասացի ես։

— Այո, իսկ և իսկ լեռներում,— ասաց ծերունին։— Տղաս, ես ծարավից մեռնում եմ։

Այստեղ արտասանդուղք ելավ իմ հայրը և մոնչաց, ինչպես վատ երազներից արթնացած առյուծը։

— Ջոնի,— մոնչաց նա,— վերջապես հանգիստ թող այդ խեղճ ծերուկին։ Մի կուժ ջուր տուր նրան, քանի դեռ տեղնուտեղը չի ընկել ու մեռել։ Գրողը տանի, այդ ի՞նչ վարվելաձև է։

— Ինչ է, մարդ իր կյանքում մի անգա՞մ էլ իրավունք չունի հարցուփորձ անելու ճամփորդին,— ասացի ես։

— Շուտ ջուր տուր ծեր ջենտլմենին,— ասաց հայրս։— Գրողը տանի, մի տնկվի դդումի պես։ Ջուր տուր մարդուն, քանի դեռ տեղնուտեղը չի ընկել ու մեռել։

— Ինքդ տուր, էլի։ Մեկ է, ոչինչ չես անում։

— Ե՞ս ոչինչ չեմ անում,— ասաց հայրս։— Ինչպե՞ս։ Ջոնի, գրողը տանի, դու հիանալի գիտես, որ ես նոր պոեմ եմ ստեղծում։

— Իսկ ի՞նչ իմանամ,— ասացի ես։— Ձեռքերդ քշտած կանգնում ես հովնոցում, ահա և բոլորը։ Ես ի՞նչ իմանամ։

— Դե-դե, դու պետք է որ իմանայիր,— ասաց հայրս։

— Բարի օր,— դիմեց ծերունին հորս։— Ձեր որդին պատմեց ինձ, թե այս կողմերում ինչ զով, հիանալի կլիմա է։

«Հիսուս Քրիստոս,— մտածեցի ես,— կլիմայի մասին ես նրան ոչինչ չեմ ասել։ Այդ ո՞րտեղից հնարեց»։

— Բարի օր,— ասաց հայրս։— Չէի՞ք անցնի մեզ մոտ մի փոքր հանգստանալու։ Գուցե պատիվ կանեք մեզ հետ բաժանելու մեր համեստ սեղանը։

— Սքր,— ասաց ծերունին,— ես քաղցից մեռնում եմ։ Գալիս եմ։

— Իսկ դուք նվագո՞ւմ եք «Միայն հայացքով ըմպիր կենացս»,— հարցրի ես ծերունուն։— Այդ իմ սիրած երգն է, կուզեի լսել։ Նվագեցեք, հը՞։ Հիանալի երգ է։

— Տղաս,— ասաց ծերունին,— երբ դու հասնես իմ տարիքին, կհասկանաս, որ երգը կարևոր չէ։ Հաց՝ ահա թե ինչն է կարևորը։

— Ինչ որ է,— ասացի ես։— Շատ կուզեի այդ երգը նվագեիք։

Ծերունին բարձրացավ արտասանդուղք ու սեղմեց հորս ձեռքը։

— Ինչ կոչում են Ձասպր Մաք-Գրեգոր,— ասաց նա։— Ես դերասան եմ։

— Անչափ ուրախ եմ ձեզ հետ ծանոթանալու,— ասաց հայրս։— Ջոնի, մի կուժ ջուր բեր միստր Մաք-Գրեգորի համար։

Ես վազեցի դեպի ջրհորը, կժով սառը ջուր առա ու տվեցի ծերունուն։ Նա ամբողջ կուժը միանգամից խմեց։ Հետո աչք ածեց շուրջը, նայեց երկնքին ու Սան Բենիտո փողոցի կողմը, ուր արևն արդեն մայր էր մտնում։

— Այստեղից մինչև իմ տունը թերևս հինգ հազար մղոն լինի,— ասաց նա։— Ինչ եք կարծում, մի կտոր հաց ու պանիր չուտե՞նք, որպեսզի հոգին մարմնից չբաժանվի։

— Ջոնի,— ասաց հայրս,— վազիր նպարավաճառի մոտ, վերցրու մեկ հատ ֆրանսիական բատոն և մի ֆունտ պանիր։

— Փողը տուր,— ասացի ես։

— Միստր Կոզակին ասա՝ ապառիկ տա,— ասաց հայրս։— Ես ոչ մի սենթ չունեմ, Ջոնի։

— Ախր նա ապառիկ չի տա,— ասացի ես։— Նա մեզանից արդեն ձանձրացել է։ Նա զայրանում է։ Ասում է, որ մենք չենք աշխատում ու երբեք չենք վճարում ըստ հաշիվների։ Մենք նրան պարտք են քառասուն սենթ։

— Գնա, գնա նրա մոտ ու համոզիր,— ասաց հայրս։— Ինքդ գիտես՝ ինչպես, դա քո մասնագիտությունն է։

— Ախր նա լսել անգամ չի ուզում,— ասացի ես։— Ասում է՝ ոչինչ չեմ ուզում իմանալ, նախ տվեք իմ քառասուն սենթը, և վերջ։

— Գնա, գնա,— ասաց հայրս,— համոզիր, որ մեկ հատ ֆրանսիական բատոն տա ու մի ֆունտ պանիր։ Դու այդ բանը կարողանում ես։

— Գնա, տղաս— ասաց Ծերունին,— և ասա միստր Կոզակին, որ տա քեզ մեկ ֆրանսիական բատոն ու մի ֆունտ պանիր։

— Գնա, Ջոնի,— ասաց հայրս։— Դեռ ոչ մի անգամ դու նրա մոտից դատարկաձեռն չես վերադարձել։ Տասը րոպե չանցած տուն կվերադառնաս արքայավայել պարենով։

— Չգիտեմ,— ասացի ես։— Միստր Կոզակն ասում է, որ մենք ուզում ենք իրեն խաբել։ Նա ուզում է իմանալ, թե դու ի՞նչ գործի ես։

— Լավ, գնա նրա մոտ ու ասա։ Ես թաքցնելու բան չունեմ։ Ես բանաստեղծություններ եմ գրում։ Այդպես էլ ասա միստր Կոզակին, որ ես գիշեր-ցերեկ բանաստեղծություններ եմ գրում։

— Լավ,— ասացի ես։— Բայց հաղիվ թե դա մի առանձին տպավորություն թողնի նրա վրա։ Նա ասում է, որ դու աշխատանք փնտրելու համար մի քայլ էլ չես անում, ինչպես մյուս գործազուրկները։ Ասում է, որ դու ծույլ ես ու անբան։

— Գնա ասա, որ նա գժվել է, Ջոնի,— ասաց հայրս։— Ասա այդ մարդուն, որ քո հայրը մեր օրերի մեծագույն անհայտ բանաստեղծներից մեկն է։

— Իսկ նրա համար՝ թքած,— ասացի ես։— Լավ, գնամ փորձեմ։ Մի՞թե տանը ոչինչ չունենք։

— Միայն եգիպտացորեն,— ասաց հայրս։— Չորս օր իրար վրա միայն եգիպտացորեն ենք ծամում։ Ջոնի, եթե ուզում ես, որ ես այդ մեծ պոեմն ավարտեմ, անպայման պիտի հաց ու պանիր ճարես։

— Լավ, կփորձեմ,— ասացի ես։

— Եվ շատ մի ուշանա,— ասաց Ծերունին։— Այստեղից մինչև իմ տունը հինգ հազար մղոն է։

— Վազելով կգնամ,— ասացի ես։

— Տես հա,— ասաց հայրս,— թե որ ճամփին փող գտնես, կեսը իմն է, չմոռանաս։

Ամբողջ ճանապարհը մինչև կրպակ վազեցի, շարունակ ոտքերիս տակ նայելով, բայց անգամ մի պեննի չգտա։

Մտա կրպակ։ Միստր Կոզակն աչքերը բացեց։

— Միստր Կոզակ,— ասացի ես,— ի՞նչ կանեիք, եթե հանկարծ մեն-մենակ ընկնեիք Չինաստան և ոչ մի պեննի չունենայիք գրպաննե-

ռումդ։ Մի՞թե հույս չէիք դնի, որ այնտեղի քրիստոնյաներից մեկնումեկը մի ֆունտ բրինձ կտա ձեզ։

— Ուզածդ ի՞նչ է,— ասաց միստր Կոզակը։

— Դե ես հենց այնպես, խոսելու համար,— ասացի։— Դուք հավանորեն կհուսայիք, թե արիական ցեղի որևէ ներկայացուցիչ անպայման կօգնի ձեզ, ճի՞շտ է, միստր Կոզակ։

— Ինչքա՞ն փող ես բերել,— ասաց նա։

— Խոսքը փողի մասին չէ, միստր Կոզակ,— ասացի ես։— Խոսքը վերաբերում է Չինաստանում գտնվող մարդուն։ Ձեր կարծիքով, սպիտակ ցեղի կողմից օգնություն հարկավո՞ր է նրան, թե ոչ։

— Ոչինչ չեմ իմանում, ոչինչ ու ոչինչ,— ասաց միստր Կոզակը։

— Ինչպե՞ս կզգայիք ձեզ նման դրության մեջ Չինաստանում,— ասացի ես։

— Չեմ իմանում,— ասաց նա։— Ի՞նչ գործ ունեմ Չինաստանում։

— Ենթադրենք,— ասացի,— ընկել եք Չինաստան ու սաստիկ սոված եք, և չորս կողմը՝ ոչ մի ծանոթ։ Կարո՞ղ եք պատկերացնել, որ մի որևէ քրիստոնյա ձեզ ճամփու դնի առանց գոնե մի ֆունտ բրնձի, հը՞, միստր Կոզակ։

— Երևի ոչ,— ասաց միստր Կոզակը։— Բայց Ջոնի, դու հո Չինաստանում չես, ոչ էլ քո հայրը։ Դու և քո հայրը վաղ թե ուշ ստիպված կլինեք անպայման աշխատելու, ուրեմն ինչո՞ւ հենց հիմա չսկսեք։ Ես այլևս ձեզ ապառիկ ոչինչ չեմ տա, քանի որ գիտեմ՝ չեք վճարելու։

— Միստր Կոզակ,— ասացի ես,— դուք ինձ ճիշտ չհասկացաք։ Ոչ մի մթերքի մասին խոսք անգամ չի եղել։ Ահա թե ես ինչ եմ ասում. ձեր չորս կողմը Չինաստանում կռապաշտներ են, և դուք նրանց մեջ մեռնում եք սովից...

— Մենք Չինաստանում չենք,— ասաց միստր Կոզակը։— Այստեղ, այս երկրում մարդ պետք է վաստակի իր ապրուստը։ Ամերիկայում բոլորն էլ աշխատում են։

— Միստր Կոզակ,— ասացի ես,— եթե ձեր կյանքը պահպանելու համար կարիք ունենայիք մի ֆրանսիական բատոնի ու մեկ էլ մի ֆունտ պանրի, մի՞թե կքաշվեիք այդ բանը խնդրել քրիստոնեական միսիոներից։

— Կքաշվեի,— ասաց միստր Կոզակը։— Կամաչեի խնդրել։

— Նույնիսկ եթե իմանայիք, որ փոխարենը երկու բատոն ու երկու ֆունտ պանի՞ր կտաք նրան,— ասացի ես։— Նույնիսկ ա՞յդ դեպքում։

— Նույնիսկ այդ դեպքում,— ասաց նա։

— Դե, այդ արդեն լավ չէ, միստր Կոզակ,— ասացի ես։— Հապա

մի միտք արեք՝ դուք կանգնած եք մահվան շեմին։ Մի՞թե պիտի մեռնեք ընտանիքից հեռու, օտարության մեջ, Չինաստանում։ Օ՜, միստր Կոզակ։

— Ինձ համար մեկ է,— ասաց նա,— թող այդպես լինի։ Իսկ ահա դու և քո հայրը պետք է վճարեք հացի ու պանրի համար։ Ինչո՞ւ քո հայրը աշխատանք չի փնտրում։

— Միստր Կոզակ, —ասացի ես,— իսկ ընդհանրապես ո՞նց եք ապրում։

— Շատ լավ, Ջոնի։ Իսկ դո՞ւ։

— Լավից էլ լավ, միստր Կոզակ։ Ձեր երեխանե՞րը ոնց են։

— Հոյակապ,— ասաց միստր Կոզակը։— Ստեփանն արդեն սկսել է քայլել։

— Ի՞նչ եք ասում, այդ հո սքանչելի է,— ասացի ես։— Իսկ Անժելան ինչպե՞ս է։

— Անժելան սկսել է երգել,— ասաց միստր Կոզակը։— Դե, իսկ տա՞տդ ոնց է։

— Հիանալի,— ասացի ես։— Նա էլ է սկսել երգել։ Ասում է՝ ուզում է օպերային աստղ դառնալ. ավելի լավ է օպերային աստղ լինես, քան թագուհի։ Իսկ ինչպե՞ս է Մարթան, ձեր կինը, միստր Կոզակ։

— Օ՜, շատ լավ է,— ասաց միստր Կոզակը։

— Որքա՜ն ուրախ եմ այդ լսելու։ Ուրեմն, ձեր տանը ամեն ինչ լավ է,— ասացի ես։— Կարծում եմ ձեր Ստեփանը ժամանակին մեծ մարդ կդառնա։

— Հուսով եմ,— ասաց միստր Կոզակը։— Կտամ նրան միջնակարգ դպրոց, թող ձեռք բերի այն ամենը, ինչ որ ես չեմ ունեցել։ Չեմ ուզում, որ նա նստի վաճառասեղանի ետևը։

— Ես Ստեփանի նկատմամբ մեծ հավատ ունեմ,— ասացի ես։

— Քեզ ի՞նչ է հարկավոր, Ջոնի,— հարցրեց միստր Կոզակը։— Ինչքա՞ն փող ես բերել։

— Միստր Կոզակ,— ասացի ես,— ախր ես չեմ եկել գնումներ կատարելու։ Գիտեք, մեկ-մեկ սիրում եմ պարզապես փիլիսոփայական դրույցի բռնվել ձեզ հետ։ Տվեք ինձ մեկ ֆրանսիական բատոն ու մի ֆունտ պանիր։

— Վճարումը կանխիկ,— ասաց միստր Կոզակը։

— Հա՜, իսկ էսթերը,— հարցրի ես։— Ո՞նց է ձեր գեղեցկուհի դուստր էսթերը։

— Էսթերը լավ է, Ջոնի,— ասաց միստր Կոզակը,— բայց միևնույն

է, դու պետք է կանխիկ վճարես։ Դու և քո հայրը ամենաանվստահելի մարդիկն եք այս երկրում։

— Որքա՞ն ուրախ եմ,— ասացի,— որ էսթերը լավ է։ Միստր Կոզակ, իսկ դուք գիտե՞ք, թե հիմա ով է մեզ մոտ հյուր։ Միստր Ջասպր Մաք-Գրեգորը։ Նա մեծ գերասան է։

— Լսած չկամ,— ասաց միստր Կոզակը։

— Եվ մի շիշ գարեջուր միստր Մաք-Գրեգորի համար,— ասացի ես։

— Չէ, գարեջուր տալ չեմ կարող։

— Անշուշտ, կարող եք։

— Չեմ կարող,— ասաց միստր Կոզակը։— Ես կտամ ձեզ մի բատոն ու մի ֆունտ պանիր, ուրիշ ոչինչ։ Իսկ ի՞նչ է անում քո հայրը, երբ աշխատում է, Ջոնի։

— Իմ հայրը ոտանավորներ է գրում, միստր Կոզակ։ Դա նրա արած միակ աշխատանքն է։ Նա աշխարհի մեծագույն բանաստեղծներից մեկն է։

— Իսկ նա ե՞րբ է փող ստանալու,— ասաց միստր Կոզակը։

— Նա երբեք էլ ոչ մի փող չի ստանում,— ասացի ես։— Նրա արած գործը փողի համար չէ։

— Այդպիսի գործը այնքան էլ դուր չի գալիս ինձ,— ասաց միստր Կոզակը։— Ինչո՞ւ քո հայրը չի աշխատում, ոնց որ բոլոր մարդիկ։

— Նա բոլորից էլ ավելի մեծ եռանդով է աշխատում,— ասացի։— Սովորական մարդկանցից երկու անգամ շատ։

— Դե, Ջոնի,— ասաց միստր Կոզակը,— հիմա դուք ինձ պարտք եք հիսունհինգ սենթ։ Թող այդպես լինի, այսօր էլ ես ձեզ հաց ու պանիր կտամ, բայց դա կլինի վերջին անգամ։

— Հայտնեցեք էսթերին, որ ես սիրում եմ իրեն,— ասացի ես։

— Անպայման,— ասաց միստր Կոզակը։

Ես վազեցի տուն, ֆրանսիական բատոնն ու մի ֆունտ պանիրը ձեռքիս։

Հայրս և միստր Մաք-Գրեգորը սպասում էին փողոցում, որպեսզի շուտ իմանային՝ ուտելիք ստացել ե՞մ, թե ոչ։ Նրանք մի կես թաղ վազեցին ինձ ընդառաջ ու երբ տեսան, որ ուտելիքն ապահովված է, ձեռքով արին տատիկին, որն սպասում էր արտասանդուղքի վրա։ Նա ներս ընկավ տուն, որ սեղան գցի։

— Գիտեի, որ քեզ կհաջողվի,— ասաց հայրս։

— Ես էլ,— ասաց միստր Մաք-Գրեգորը։

— Մենք նրան պարտք ենք հիսունհինգ սենթ,— ասացի ես։— Թե չվճարենք, ոչինչ չենք ստանա։

— Թող այդպես համարի, —ասաց հայրս։— Այսօր ի՞նչ խոսեցիր հետը, Ջոնի։

— Նախ խոսեցի Ջինաստանի ու այն սոված մարդու մասին, որը կանգնած է մահվան շեմին։ Իսկ հետո հարցուփորձ արի նրա ընտանիքից։

— Դե, ո՞նց են նրանք,— հարցրեց հայրս։

— Հիանալի,— ասացի ես։

Բոլորս գնացինք խոհանոց, կերանք բատոնն ու մի ֆունտ պանիրը և ամեն մեկս երեք բաժակ ջուր խմեցինք։ Երբ հացի վերջին փշրանքը չքացավ, միստր Մաք-Գրեգորն սկսեց աչք ածել չորս կողմ՝ տեսնի, թե ուտելու որևէ բան կգտնի՞ արդյոք։

— Այդ կանաչ ամանը, որ վերևում է,— ասաց նա,— ի՞նչ կա մեջը, Ջոնի։

— Մարմարե գնդիկներ,— ասացի ես։

— Իսկ այս պահարանում,— ասաց նա։— Ուտելու որևէ բան չկա՞։

— Միայն ծղրիդներ,— ասացի ես։

— Իսկ այն ի՞նչ մեծ կուժ է այնտեղ, անկյունում։ Ուտելու հարմար մի բան չկա՞ նրա մեջ։

— Այնտեղ իմ լորտուն է։

— Հիանալի՜ է,— ասաց միստր Մաք-Գրեգորը։— Մի կտոր տապակած լորտուն հիմա իսկ և իսկ տեղին կլիներ։

— Լորտոն չի կարելի ուտել,— ասացի ես։

— Բայց ինչո՞ւ, Ջոնի,— ասաց միստր Մաք-Գրեգորը։— Ինչո՞ւ չէ, գրողը տանի։ Ես լսել եմ, որ Բոռնեոյի բնակիչները օձեր ու ծղրիդներ են ուտում։ Ջոնի, մի կես դյուժին յուղոտ ծղրիդներ չե՞ս ունենա արդյոք։

— Ընդամենը չորս հատ,— ասացի ես։

— Էլ ի՞նչ ես սպասում, բեր այստեղ,— ասաց միստր Մաք-Գրեգորը։— Այ, կուշտ կուտենք-կպրծնենք, և ես փողի վրա կնվագեմ քեզ համար «Միայն հայացքով ըմպիր կենացս»։

— Չեմ տա նրանց սպանեք։ Ամեն մի արարած ուզում է ապրել,— ասացի ես։

— Ես սարսափելի սոված եմ, Ջոնի։

— Ես էլ,— ասացի,— բայց թույլ չեմ տա ձեզ իմ լորտուն ուտել։ Ես եմ բռնել այդ լորտուն և ոչ թե դուք։

— Ի՞նչ օգուտ պառավ-շապկաթափ լորտուն տանը պահելուց,— ասաց միստր Մաք-Գրեգորը։

— Իսկ որ նա ինձ դուր է գալիս,— ասացի ես։

— Ավելի լավ չէ՞ տապակել և ուտել այդ ճարպոտ, հիանալի լորտուն,— պնդում էր միստր Մաք-Գրեգորը։

Հայրս նստել էր սեղանի մոտ, գլուխը դրած ձեռքերին և ննջում էր։ Տատիկս ճեմում էր ամբողջ տնով մեկ ու երգում Պուշչինի արիաները. «Ես թափառում եմ փողոցներում»,— աղաղակում էր նա իտալերեն։

— Ոչ ոք էլ իմ օձը չի տապակի ձեզ համար, —ասացի ես։

— Լավ,— ասաց միստր Մաք-Գրեգորը։— Թող քո ասածը լինի, Ջոնի, բայց և այնպես ես սոված մնացի։

— Որևէ բան չեի՞ք նվագի մեզ համար, միստր Մաք-Գրեգոր,— ասաց հայրս։— Տղային երևի հաճելի լինի։

— Իհարկե, միստր Մաք-Գրեգոր,— ասացի ես։

— Լավ, Ջոնի, թող այդպես լինի։

Եվ նա ոտքի ելավ ու սկսեց փողհարել, և այնպես բարձր, որ չորս կողմը, մոտիկ ու հեռու շրջակայքի մարդիկ լսեցին ու իրար անցան։ Տատուի հարևաններ հավաքվեցին մեր տան առաջ, ու երբ միստր Մաք-Գրեգորը ավարտեց նվագը, բոլորը ծափահարեցին։ Հայրս ծերոնուն դուրս բերեց արտասանդուղք ու ասաց.

— Սիրելի բարեկամներ ու հարևաններ, թույլ տվեք ներկայացնել ձեզ Ջասպր Մաք-Գրեգորին, մեր օրերի շեքսպիրյան մեծագույն դերասանին։

Սիրելի բարեկամներն ու հարևանները ի պատասխան ոչինչ չասացին։ Այն ժամանակ խոսեց ինքը՝ միստր Մաք-Գրեգորը.

— Երեկվա պես,— ասաց նա,— հիշում եմ իմ առաջին ելույթը Լոնդոնում, 1867 թվականին...

Ու շարունակեց իր դերասանական կյանքի պատմությունն անել։

Այդտեղ ատաղձագործ Ռուֆ Էպլին առաջ եկավ ու ասաց.

— Կարելի՞ է մի քիչ էլ երաժշտություն լսել, հը՞, միստր Մաք-Գրեգոր։

Իսկ միստր Մաք-Գրեգորն ի պատասխան.

— Արդյոք ձեր տանը հավկիթ կճարվի՞։

— Իհարկե, կճարվի,— ասաց Ռուֆը։— Մեր տանը ամբողջ մի դյուժին հավկիթ կա։

— Չե՞ք դժվարանա տուն գնալ և այդ մի դյուժինից մեկ հատ հավկիթ բերել այստեղ,— ասաց միստր Մաք-Գրեգորը։— Իսկ երբ վերադառ-

նաք, ես մի այնպիսի երգ կնվագեմ ձեզ համար, որ ձեր սիրտը թրթռա վշտից և ուրախությունից։

— Գնացի, գնացի,— ասաց Ռուֆը և գնաց հավկիթ բերելու։

Միստր Մաք-Գրեգորը Թոմ Բրաունին հարցրեց, թե արդյոք նրա տանը մի կտոր երշիկ չի՞ ճարվի, և նա ասաց, որ կճարվի։ Այն ժամանակ միստր Մաք-Գրեգորը հարցրեց, թե արդյոք այդ կտորի նետից գնալը նեղություն չի՞ պատճառի նրան, իսկ երբ նա, Թոմը, վերադառնա, ինքը նրա համար այնպիսի մի երգ կնվագի, որից Թոմի ողջ կյանքը կփոխվի։ Թոմն էլ գնաց երշիկ բերելու, իսկ միստր Մաք-Գրեգորն սկսեց տասնութ սիրելի բարեկամներից ու հարևաններից յուրաքանչյուրին հերթով հարցնել, թե արդյոք նրանց տանը որևէ համեղ բան չի՞ ճարվի, և ամեն մեկը պատասխանում էր, որ կճարվի, ու բոլորն էլ գնացին իրենց տները՝ որևէ համեղ բան բերեն, որովհետև միստր Մաք-Գրեգորը խոստացել էր նրանց՝ մի սքանչելի եղանակ նվագել, ու երբ բոլոր բարեկամներն ու հարևանները վերադարձան մեր տան մոտ՝ ձեռքներին ոմեն տեսակ ուտելիքներ, միստր Մաք-Գրեգորը փողը մոտեցրեց շրթունքներին ու նվագեց «Իմ սիրտը լեռներում է, այնտեղ է հոգիս» ու բոլոր սիրելի հարևաններն ու բարեկամները լաց եղան ու ցրվեցին իրենց տները, իսկ միստր Մաք-Գրեգորն այդ ամբողջ համեղ բաները խոհանոց բերեց, և մեր ընտանիքն սկսեց քեֆ անել, երգել և ուրախանալ։

Հավկիթ, երշիկ, կանաչ սոխ, երկու տեսակ պանիր, յուղ, երկու տեսակ հաց, խաշած կարտոֆիլ, թարմ պոմիդորներ, սեխ, թեյ և շատ ուրիշ համեղ բաներ՝ այդ ամենը մենք կերանք, վրայից էլ թեյ խմեցինք, և փորներս տոզեց։ Միստր Մաք-Գրեգորն ասաց.

— Սըր, եթե դուք դեմ չեք, ես կուզենայի մոտակա օրերը հյուր մնալ ձեր տանը։

Հայրս պատասխանեց.

— Սըր, իմ տունը ձեր տունն է։

Միստր Մաք-Գրեգորը տասնյոթ օր մնաց մեզ մոտ, իսկ տասնութերորդ օրը ծերանոցից մի մարդ եկավ մեր տուն և ասաց.

— Ես փնտրում եմ դերասան Ջասպր Մաք-Գրեգորին։

Հայրս ասաց.

— Ի՞նչ եք կամենում։

— Ես ծերանոցից եմ,— ասաց երիտասարդը։— Մենք խնդրում ենք միստր Մաք-Գրեգորին վերադառնալ մեզ մոտ, որովհետև երկու շաբաթ հետո կազմակերպում ենք մեր ամենամյա ներկայացումը, և մեզ դերասաններ են հարկավոր։

Միստր Մաք-Գրեգորը վեր կացավ հատակից, ուր նա ննջում էր, և ասաց.

— Ինչ ասացի՞ք, երիտասարդ։

— Իմ անունը Դեյվիդ Կուպեր է,— պատասխանեց երիտասարդը։— Ես ծերանոցից եմ։ Խնդրում եմ ձեզ վերադառնալ ինձ հետ, որովհետև «1914 թվականի ծերունիների տարօրինակությունները» կոչվող մեր նոր բեմադրության համար մեզ դերասաններ են հարկավոր։

Եվ ահա միստր Մաք-Գրեգորը վեր կացավ ու գնաց այդ երիտասարդի հետ, իսկ հետևյալ օրը հայրս խիստ սոված ցավ ու ասաց.

— Ջոնի, գնա միստր Կոզակի կրպակը և ուտելու մի բան ճարիր։ Դու հո կարողանում ես այդ, Ջոնի։ Բեր, ինչ որ հաջողվի։

— Նախ պետք է միստր Կոզակին հիսունհինգ սենթ վճարել,— ասացի ես։— Առանց փողի նա մեզ մի փշրանք էլ չի տա։

— Գնա, գնա, Ջոնի,— ասաց հայրս։— Չէ՞ որ դու միշտ էլ կարողանում ես կոտրել այդ հիանալի սլովակ ջենտլմենի համառությունը։

Ես ուղղվեցի դեպի միստր Կոզակի կրպակը և սկսեցի քննարկել չինական հարցը ճիշտ այնտեղից, ուր նախորդ անգամ կանգ էի առել։ Ստիպված էի հսկայական ջանքեր գործադրել, որպեսզի դատարկ ձեռքով չվերադառնամ կրպակից, և հազիվ կարողացա մի ծրար թռչնահատիկ ու մի փոքրիկ ման թխկու հյութ պոկել, այնպես որ հայրս ասաց. «Ջոնի, հանկարծ ու այսպիսի ուտելիքը վնասի պառավ լեդիին»։ Եվ իսկապես, առավոտյան լսեցինք, որ տատիկը գեղգեղում է ճիշտ ու ճիշտ դեղձանիկի պես, ու հայրս ասաց.

— Գրողը տանի, ախր ես ինչպե՞ս պիտի մեծ պոեմ գրեմ միայն թռչնահատիկ ուտելով։

ԲԻԹԼԻՍԸ

Ամեն ինչ մոռանում եմ, մինչև կրկին չեմ լսում եգիպտացորենի ձողիկներ վաճառողի փողոցով անցնող բեռնակառքի շոգեսուլիչի մելամաղձոտ ու սրտամաշ ձայնը և ահա տեսնում եմ բեռնակառքը, փողոցը, ու կրկին հիշում եմ, իբր դեռ ութամյա տղա եմ՝ նստած Սանտա Կլարա փողոցի մեր տան աստիճաններին։ Ու միտքս են գալիս այն օրերը, որոնք հիշում էի այն ժամանակ և այժմ էլ հիշում եմ, թեև օրերն այդ իմ կյանքում երբեք չեն եղել։ Դրանք եղել են շատ վաղուց հեռավոր քաղաքներում ապրած մարդկանց աշխարհին պատկանող օրեր։ Մուտքի աստիճաններին նստած, ես կրկին զգում էի դեպի ինձ

վերադարձող անցած-գնացած պահերի դառնագին ցավը և գիտեի, որ դրանք իմն են, թեև այդ պահերը երբեք չէի ապրել։

Երկինքը շատ բարձր էր ու տակավին շատ մոտ, մաքուր ու լի բազում պայծառ աստղերի ողբերգական ներկայությամբ, օդը՝ տաք ու համարյա շոշափելի, ու անկարելի էր շնչելով, տրվելով այդ պահի ջերմությանը, ետ չդառնալ նորից դեպի նիրհի երկար տարիները, որոնք հաջորդել էին ծննդին. դեպի այն տաք ամիսների՝ օգոստոսի, սեպտեմբերի, հոկտեմբերի տաք օրերը, երբ տան մեջ մի փոքրիկ կենդանի էակ քնած երազել է աշխարհի մասին, անկարելի էր կրկին չվերապրել այս աշխարհում կյանք առնելու, քնի ու երազի այդ մութ, այդ տաքուկ ժամերը։

Ջին ու եգիպտացորենի բեռնակառքը դանդաղ շարժվելով անցել են փողոցով, և ես ի վիճակի չեմ եղել իմանալ դեպի ինձ վերադարձող օրերի էությունը, ու հարցեր եմ տվել՝ որտե՞ղ, ո՞վ, ե՞րբ։ Անշուշտ եղել է մի քաղաք և մարդիկ՝ եզները սայլերին լծած կամ ուղտերին նստած, եկել են այդ քաղաք, մտել են այդ քաղաքի տները, որտեղ սեղաններ ու աթոռներ, ուտելիք ու խմելիք է եղել, և ահա մարդիկ նստում են սեղանների շուրջը, ուտում են ու խմում, և ես էլ նրանց միջին։

Եգիպտացորենի բեռնակառքի ետևից գնում էի մինչև փողոցի անկյունը, հարցնելով.

— Ո՞վ էր ծիծաղում։

Բեռնակառքի ետևից գնալով մի թաղամաս էլ էի անցնում, հարցնելով.

— Ո՞վ էր քահ-քահ ծիծաղում։

Հետո հիշում էի վտանգն ու վախենում էի աշխարհից, աշխարհի բնակիչներից ու նրանց բազմությունից։ Հետո ծիծաղի էի տալիս վախը, հիշում էի քրքջացող մարդու ծիծաղը և ինքս էլ էի ծիծաղում։ Ես վախին մարտահրավեր էի նետում։ Այ այսպես՝ ծիծաղում եմ։ Վտանգը կա և՛ տեսանելի, և՛ անտեսանելի բաներում։ Դե ինչ, ահա և ես։ Չեմ վախենում։

Վերադառնում էի տուն, նստում էի աստիճաններին ու նորից սպասում։ Նորից թող գա բոլորը։ Ինչ-որ տեղ ծով կար, որն ամայի էր ու լի վտանգներով, հետո քամի էր բարձրանում, անձրև էր շրխկում և կայծակ էր ճայթում մթության մեջ։ Ցուրտը վտանգներով լի էր, և ծովը հատակ չուներ։ Բայց ծովի եզրին ցամաք կար։ Այնտեղ տաք հող ու աճող խոտի մաքուր դաշտեր կային, կային ծառեր, ապառաժներ, առուներ և երկրի վրա ապրող ամեն բան, կային փափկամազ կենդանիներ, կային ոտքեր, աչքեր։ Կային և երփներանգ փետուրներով թռչուններ, և

աչքեր կային։ Երկրի վրա։ Քաղաքներ ու փողոցներ կային, տներ ու մարդիկ։

Մի երեկո հորս կրտսեր եղբայր Սեդրակը հեծանիվը նստած փողոցով ցած իջավ։ Նա հեծանիվի ոտնակը դեմ տվեց փայտե մայթեզրին ու մոտեցավ.

— Ինչո՞ւ ես այդպես մտահոգ,— ասաց նա։

— Առաջ մենք որտե՞ղ ենք ապրել,— հարցրի ես։

— Դու ծնվել ես այստեղ,— պատասխանեց նա։— Դու քո ամբողջ կյանքն այս հովիտում ես ապրել։

— Իսկ որտե՞ղ է ապրել իմ հայրը,— հարցրի ես։

— Հին երկրում,— ասաց նա։

— Քաղաքի անունն ի՞նչ էր։

— Բիթլիս։

— Քաղաքը որտե՞ղ էր։

— Լեռներում։ Լեռներում էր կառուցված։

— Իսկ փողոցնե՞րը։

— Փողոցները քարերով էին սալարկված, ծուռումուռ էին ու նեղ։

— Հորս Բիթլիսի փողոցներում հիշո՞ւմ ես։

— Իհարկե, նա իմ եղբայրն էր։

— Դու նրան տեսե՞լ ես,— հարցրի ես։— Դու հորս տեսե՞լ ես լեռներում կառուցված քաղաքի փողոցներով քայլելիս։

Ես վեր կացա, աստիճաններից ցած թռա ու քայլեցի տան առջև։ Տանից հեռացա, հետո շրջվեցի ու ետ դարձա։

— Նա այսպե՞ս էր քայլում,— հարցրի ես։— Դու նրան տեսե՞լ ես հին երկրում քայլելիս՝ հորս։

— Իհարկե։ Նա իմ ավագ եղբայրն էր։ Ես նրա հետ շատ եմ քայլել։

— Դու հորս հետ քայլե՞լ ես,— հարցրի։— Նա ի՞նչ էր խոսում։

— Ճիշտն ասած,— ասաց հորս կրտսեր եղբայրը,— նա առանձնապես շատ չէր խոսում։

— Բայց և այնպես երբեմն խոսում էր,— ասացի ես։— Երբ նա խոսում էր, ի՞նչ էր ասում։

— Մի օր, հիշում եմ,— ասաց հորս կրտսեր եղբայրը,— մենք միասին եկեղեցի էինք գնում։ Հայրդ ասաց. «Ահ, ահ, հապա նայիր, Սեդրակ։ Նայիր, նայիր»։

— Դու լսել ես ինչպես ասաց՝ «Ահ, ա՞հ»,— հարցրի ես։— Դա ի՞նչ էր նշանակում։

— Ոչինչ,— ասաց Հորս կրտսեր եղբայրը։— Ոչ մի բան։ Եվ ամեն բան։

— Ահ, ահ,— ասացի ես Հորս պես։— Նայիր, նայիր։

Հորս կրտսեր եղբայրը հեծանիվը նստած գնաց, և ես նստեցի մուտքի աստիճաններին, ու լեռնային քաղաքում Հորս ապրած օրերը շունչ առած վերադարձան դեպի ինձ, և ես գիտեի, որ հայրս մեռած չէր, քանի որ երկինքը շատ բարձր էր, տակավին շատ մոտ ու ջինջ, և օդը տաք էր ու համարյա շոշափելի, և շունչ առած պահը բոլոր օրերի ու բոլոր մարդկանց հավերժական պահն էր, և աշխարհը երբևէ ծնված ամենքի աշխարհն էր, բոլորի աշխարհն էր, ովքեր օգոստոսի, սեպտեմբերի, հոկտեմբերի տաք օրերին երբևէ երազել են։

ԿԻՐԱԿՆՈՐՅԱ ՑԵՊԵԼԻՆԸ

Լյուկը բռնել էր իմ ձեռքից, իսկ ես՝ Մարգարետի ձեռքից։ Ամեն մեկս հինգ սենթ ուներ եկեղեցուն նվիրելու։ Լյուկն ասաց ինձ.

— Տես, հա, Մարկ, չմոռանաս փողը տուփի մեջ գցել, թե չէ մեկ էլ տեսար նորից թաքցրիր ու պաղպաղակ առար քեզ համար։

— Ինքդ չմոռանաս,— ասացի ես։

Անցյալ անգամ Լյուկն իր փողը չգցեց գանձարկղի մեջ, և ես դա նկատեցի։ Այդ օրը շատ շոգ էր, ես պաղպաղակ առա ինձ համար։ Շուլցը երկու լիքը գդալ լցրեց։ Լյուկը տեսավ, որ ես պաղպաղակ եմ ուտում դպրոցի բակում, չինական խնձորենու տակ։

Նա արագ գործի անցավ, ինչպես կինոնկարի խուզարկուն։

— Ը՜հը՜,— ասաց նա։— Այդ ո՞րտեղից փող ճարեցիր, Մարկ։

— Ինքդ գիտես՝ որտեղից,— ասացի ես։

— Չէ, չգիտեմ,— ասաց նա։— Ասա, ո՞րտեղից։

— Աջհամբույրի փողն էր,— ասացի ես։— Չգցեցի տուփի մեջ։

— Դա մեղք է,— ասաց Լյուկը։

— Լավ,— ասացի։— Դու ինքդ էլ չգցեցիր։

— Չէ, գցեցի,— ասաց Լյուկը։

— Չէ, չգցեցիր,— ասացի ես։— Ես տեսա, թե դու ձեռքդ ոնց տարար տուփին, առանց փողը գցելու։

— Ես փողը հավաքում եմ,— ասաց Լյուկը։

— Հավաքո՞ւմ ես։ Ինչի՞ համար։

— Ցեպելինի։

— Իսկ ի՞նչ արժե ցեպելինը։

— Դե այդ «Դպրոցականի աշխարհում» է գրած։ Մեկը կա, որ արժե մեկ դոլար։ Չիկագոյից են ուղարկելու։

— Իսկական՞ ցեպելին։

— Երկու հոգով կարելի է բարձրանալ։ Կթռչեմ Էրնըստ Վեսթի հետ։ Ես կուլ տվի պաղպաղակի վերջին կտորը։

— Իսկ ինձ չե՞ս վերցնի,— ասացի ես։

— Քեզ չի կարելի,— ասաց Լյուկը։— Դու դեռ փոքր ես։ Բոլորովին երեխա։ Իսկ Էրնըստ Վեսթը իմ տարիքին է։

— Ես ի՞նչ երեխա եմ,— ասացի։— Արդեն ութ տարեկան եմ, իսկ դու՝ տասը։ Թույլ տուր ես էլ ձեզ հետ ցեպելինով թռչեմ, հը՞, Լյուկ։

— Չէ,— ասաց Լյուկը։

Ես լաց չեղա, բայց վշտացա։ Ու կարծես դա դեռ քիչ էր, հիմա էլ Լյուկը սրտիս դիպավ։

— Քո խելքը գնում է Ալիս Սմոլի համար,— ասաց նա։

Այդ ճիշտ էր։ Իսկապես, Ալիս Սմոլն ինձ դուր էր գալիս, բայց ինձ վիրավորեց այն տոնը, որով Լյուկն ասաց այդ բանը։

Ես դառնություն ու մենակություն զգացի։ Ալիս Սմոլը շատ էր դուր գալիս ինձ, բայց մի՞թե ամեն ինչ այնպես էր, ինչպես ես կուզենայի։ Մի՞թե ես երբևէ զբոսնել էի նրա հետ, մի՞թե բռնել էի նրա ձեռքն ու ասել, թե ինչպես եմ սիրում։ Գոնե մի անգամ անունն արտասանե՞լ էի այնպես, ինչպես ուզում էի, որ հասկանար, թե ինքը որքան թանկ է ինձ համար։ Ո՛չ։ Ես նրանից քաշվում էի։ Նույնիսկ սիրտ չէի անում երկար նայել։ Քաշվում էի, որովհետև նա այնպես սիրուն էր, իսկ երբ Լյուկն այդ տոնով խոսեց նրա մասին, սրտիս դիպավ։

— Դու շուն-շանորդի ես, Լյուկ,— ասացի ես։— Քոսոտ բիճի մեկը։

Էլ ուրիշ վատ խոսքեր չհիշեցի, որ լսել էի մեծ տղաներից, դրա համար էլ զոռցս դրի։

Հետո շատ ամաչեցի, որ հարազատ եղբորս այդպիսի խոսքեր եմ ասել։ Երեկոյան ներողություն խնդրեցի նրանից։

— Գլուխս մի տանի,— ասաց Լյուկը։— Հայհոյանքը ոչ քար է, ոչ փայտ, որ ոսկորները ջարդի։

— Դե ախր ես ե՞րբ եմ քեզ քարով կամ փայտով խփել,— ասացի ես։

— Դու ինձ վատ խոսքերով հայհոյեցիր,— ասաց նա։

— Ես չէի ուզում, դա պատահաբար եղավ, Լյուկ։ Աղնիվ խոսք։ Ախր դու ասացիր, թե ես սիրահարված եմ Ալիս Սմոլին։

— Այո, սիրահարված ես։ Ինքդ էլ գիտես, որ սիրահարված ես։ Արար-աշխարհ գիտի, որ սիրահարված ես։

— Ճիշտ չէ,— ասացի։— Ես ոչ ոքի էլ սիրահարված չեմ։

— Դու սիրահարված ես Ալիս Սմոլին,— ասաց Լյուկը։

— Դու շուն-շանորդի ես,— ասացի ես։

Հայրիկը լսեց իմ խոսքերը։

Նա հյուրասենյակում նստած գիրք էր կարդում։ Իմ խոսքի վրա վեր թռավ տեղից ու ներս մտավ մեզ մոտ։ Ես լաց եղա։

— Այդ ի՞նչ է նշանակում, երիտասարդ,— ասաց նա։— Ինչպե՞ս անվանեցիր եղբորդ։

— Հայհոյանքը ոչ քար է, ոչ փայտ...— սկսեց Լյուկը։

— Թող այդ,— ասաց հայրիկը։— Ինչո՞ւ ես դու շարունակ ձեռ առնում Մարկին։

— Ես նրան ձեռ չեմ առնում,— ասաց Լյուկը։

— Չէ, ձեռ ես առնում,— բղավեցի ես արցունքների միջից։— Նա ասում է, որ ես սիրահարված եմ Ալիս Սմոլին։

— Ալիս Սմոլի՞ն,— ասաց հայրիկը։

Նա երբեք չէր լսել Ալիս Սմոլի մասին։ Նույնիսկ չգիտեր, թե աշխարհում այդպիսի աղջիկ գոյություն ունի։

— Ո՞վ է այդ Ալիս Սմոլը,— ասաց նա։

— Մեր դասարանցի է,— ասացի ես։— Նրա հայրը մեր եկեղեցու քահանան է։ Ալիսն ուզում է, երբ մեծանա՝ միսիոներ դառնա։ Նա ինքն ասաց այդ ամբողջ դասարանի առաջ։

Այստեղ հայրիկն ասաց.

— Ներողություն խնդրիր Լյուկից նրան հայհոյելու համար։

— Լյուկ, ներողություն եմ խնդրում, որ հայհոյեցի քեզ,— ասացի ես։

— Իսկ դու, Լյուկ,— ասաց հայրիկը։— Ներողություն խնդրիր Մարկից, որ ձեռ ես առել նրան՝ Ալիս Սմոլի անունը տալով։

— Մարկ, ես շատ եմ ցավում, որ ձեռ եմ առել քեզ՝ Ալիս Սմոլի անունը տալով,— ասաց Լյուկը։

Բայց ես լավ գիտեի, որ նա բոլորովին էլ չի ցավում։ Ես ցավում էի, որ հայհոյել եմ նրան, իսկ նա, ես գիտեմ, չէր ցավում, երբ ասաց, թե ցավում է։ Նա այդպես ասաց միայն նրա համար, որովհետև հայրիկը հրամայեց։

Հայրիկը վերադարձավ հյուրասենյակ ու նստեց իր աթոռին։ Բայց նախքան նստելը ասաց.

— Տղաներ, ես ուզում եմ, որ դուք զբաղվեք որևէ խելացի բանով և ոչ թե ջղայնացնեք իրար։ Հասկանալի՞ է։

— Այո, սըր,— ասաց Լյուկը։

Մենք երկուսս էլ մի-մի ամսագիր առանք ու սկսեցինք նկարները նայել։ Լյուկը համառորեն չէր խոսում ինձ հետ։

— Կարելի՞ է, ես էլ ցեպելինով թռչեմ,— ասացի ես։

Նա միայն լուռ թերթում էր ամսագիրը։

— Ընդամենը մեկ անգամ,— ասացի ես։

Կեսգիշերին արթնացա ու նորից սկսեցի մտածել, թե ինչպես կթռչեմ ցեպելինով։

— Լյուկ, այ Լյուկ,— ձայն տվի ես։

Վերջապես նա արթնացավ։

— Ի՞նչ ես ուզում։

— Լյուկ,— ասացի,— թույլ տուր, երբ Չիկագոյից ցեպելինն ուղարկեն, ես էլ թռչեմ ձեզ հետ։

— Չէ,— ասաց նա։

Այդ անցյալ շաբաթ էր։

Իսկ հիմա մենք գնում էինք կիրակնօրյա դպրոց։

Լյուկն ասաց.

— Տես, հա, Մարկ, չմոռանաս փողը տուփի մեջ գցել։

— Ինքդ չմոռանաս,— ասացի ես։

— Արա, ինչ քեզ ասում են,— ասաց նա։

— Ես էլ եմ ցեպելին ուզում,— ասացի ես։— Եթե դու փողը չդցես, ես էլ չեմ գցի։

Թվում էր, թե Մարգարետը մեզ չի լսում. նա լուռ քայլում էր, մինչդեռ ես ու Լյուկը վիճում էինք ցեպելինի մասին։

— Կեսը ես կվճարեմ, Լյուկ,— ասացի,— թե որ ինձ վերցնես թռչելու քեզ հետ։

— Երկրորդ կեսը տալիս է էրնըստ Վեսթը,— ասաց Լյուկը։— Մենք նրա հետ ընկերակիցներ ենք։ Մի յոթ-ութ շաբաթ էլ, և ցեպելինը կժամանի Չիկագոյից։

— Լավ, թող այդպես լինի,— ասացի ես։— Կարող ես ինձ չվերցնել։ Կտեսնենք։ Դու դեռ կափսոսաս դրա համար, երբ ես իմ սեփական զբոսանավով կգնամ ճամփորդելու աշխարհի շուրջը։

— Գնա, ասաց Լյուկը։

— Լյուկ,— ասացի ես,— խնդրում եմ թույլ տուր հետդ ցեպելինով թռչելու։ Իսկ ես քեզ կվերցնեմ ինձ հետ զբոսանավով շուրջերկրյա ճանապարհորդության։

— Լողա մենակ,— ասաց Լյուկը։

Երբ մենք մոտեցանք եկեղեցուն, Էրնըստ Վեսթն ու իր քույր Դորոտին կանգնած էին նրա առաջ։ Մարգարետն ու Դորոտին միասին մտան եկեղեցու բակը, իսկ ես, Լյուկն ու Էրնըստը մնացինք մայթին։

— Պալկա էստոս— ասաց Էրնըստը Լյուկին։

— Իմմել,— ասաց Լյուկը։

— Լյուկ, այդ ի՞նչ է նշանակում,— ասացի ես։

— Չեմ կարող ասել,— ասաց Լյուկը։— Սա մեր գաղտնի լեզուն է։

— Լյուկ, ասա ինձ, թե այդ ինչ է նշանակում։ Ես ոչ ոքի չեմ ասի։

— Չէ,— ասաց Էրնըստը։— Էֆֆին օնտուր,— դիմեց նա Լյուկին։

— Գարիկ Հոպին,— ասաց Լյուկը, և նրանք քրքջացին։

— Գարիկ Հոպին,— ծիծաղելով կրկնեց Էրնըստը։

— Ասա, Լյուկ,— խնդրեցի ես։— Ազնիվ խոսք, բացի ինձանից ոչ ոք չի իմանա։

— Չէ,— ասաց Լյուկը։— Ինքդ քեզ համար գաղտնի լեզու հնարիր։ Ոչ ոք չի խանգարում։

— Ես չեմ կարողանում,— ասացի ես։

Զանգը զողանջեց, մենք մտանք եկեղեցի ու նստեցինք տեղներս։ Լյուկն ու Էրնըստը նստեցին կողք-կողքի։ Լյուկն ասաց ինձ, որ իրենցից հեռանամ։ Ես նստեցի նրանց ետևը, վերջին շարքում։ Առաջին շարքում նստած էր Ալիս Սմոլը։ Նրա հայրը, մեր քահանան, անցավ նրստարանների արանքով և աստիճաններով բարձրացավ իր առանձնասենյակը, ուր հորինում էր իր քարոզները։ Դա մի բարձրահասակ տղամարդ էր, որ ժպտում էր բոլորին քարոզից առաջ ու հետո։ Քարոզի ժամանակ երբեք չէր ժպտում։

Մենք մի քանի սաղմոս երգեցինք, հետո Էրնըստն առաջարկեց երգել «Խաչի ներքո», միայն թե նա և Լյուկը դրա փոխարեն երգում էին.

«Քանի-քանի երեկո
Գինետնից գինետուն
Թափառում եմ ես տրտում
Ու փողերս-դոլար ու սենթ—
Ջվում են ու կորչում անհետ»։

Ես նախանձում էի Լյուկին ու Էրնըստ Վեսթին։ Նրանք միշտ էլ կարողանում էին զվարճանալ։ Նույնիսկ եկեղեցում։ Մեկ-մեկ Էրնըստը նայում էր Լյուկին ու ասում. «Արկել ռոպպեր», իսկ Լյուկը պատաս-

խանում էր. «Հագգիդ օսսում», և երկուսով էլ ծիծաղները հազիվ էին զսպում։ Նրանք ամեն կերպ պահում էին իրենց, մինչև որ սկսվեր բարձրաձայն երգեցողությունը, և այդ ժամանակ ուղղակի ծիծաղից տրաքվում էին, որը ասես նրանց գաղտնի լեզվի մասը լիներ։ Ես անչափ վշտացած էի, որ չեմ կարող մասնակցել այդ հիանալի խաղին։

«Արկել ռոպպեր»— ասում էի ես, աշխատելով զգալ, թե դա որքան ծիծաղելի է, բայց ոչ մի ծիծաղելի բան չէր ստացվում։ Պարզապես սարսափելի էր լիմանալ, թե ինչ է նշանակում «արկել ռոպպեր»։ Պատկերացնում էի, որ դա նշանակում է ինչ-որ խիստ ծիծաղելի մի բան, բայց թե հատկապես ինչ՝ չգիտեի։ «Հագգիդ օսսում»,— ասացի ես։ միայն թե այդ խոսքերից տխրություն եկավ վրաս։ Երբևէ ես էլ կհորինեմ իմ շատ ծիծաղելի լեզուն և ոչ Էյուկին կասեմ, ոչ էլ Էրնբստ Վեսթին, թե այդ ինչ է նշանակում։ Ամեն մի խոսքն ինձ ուրախություն կպատճառի, և ես այլևս ոչ մի ուրիշ լեզվով չեմ խոսի։ Ամբողջ աշխարհում միայն ես ու մեկ էլ մի ուրիշ մարդ կիմանանք իմ գաղտնի լեզուն։ Միայն Ալիսն ու ես։ «Օհվեր լինտեն»,— կասեմ Ալիսին, ու նա կհասկանա, թե ինչ հրաշալի բառեր են դրանք, կնայի ինձ ու կժպտա, իսկ ես կբռնեմ նրա ձեռքը ու, թերևս, կհամբուրեմ։

Այստեղ ամբիոն բարձրացավ մեր վերատեսուչ Հարվեյ Գիլլիսը և սկսեց պատմել երիցական միսիոներների մասին, որոնց համար մենք փող էինք հավաքում, որպեսզի գնային քրիստոնեություն քարոզելու հեռու-հեռավոր կռապաշտական երկրներում։

— Սիրելի երեխաներ,— խոսեց նա բարձր, սուր ձայնով։— Հյուսիսային Աֆրիկայում մեր ասածո հոգևոր հովիվները ամեն օր հրաշքներ են գործում հանուն Քրիստոսի։ Վայրենի բնիկներն իրենց հավատը գտնում են Սուրբ գրքի ու առաքինի կյանքի մեջ, և Քրիստոսի լույսը թափանցում է տգիտության մութ խորշերը։ Ցնծանք հոգով ու աղոթենք։

— Ամպեր համպեր Հարվեյ Գիլլիս,— ասաց Էյուկը Էրնբստին։

Էրնբստը հազիվ ծիծաղը զսպեց։

Ես ինձ բոլորովին միայնակ զգացի։

Ինչպե՞ս իմանամ, թե նրանք ինչի մասին են խոսում։ «Ամպեր համպեր Հարվեյ Գիլլիս»։ Դա այնքան շատ բան կարող էր նշանակել մեր վերատեսչի մասին։ Նա անպետքի մեկն էր և խոսում էր ծվծվան ձայնով։ Բացի Ալիս Սմոլից, չեմ կարծում, թե մեզանից մեկնումեկը հավատում էր նրա թեկուզ մի խոսքին։

— Հավատի մեր փառապանծ հերոսները ապաքինում են հիվանդներին ու ակարներին,— ասում էր նա։— Նրանք զոհաբերում են իրենց մարմինն ու հոգին, որպեսզի աշխարհը նախապատրաստեն տիրոջ երկ-

րորդ գալստյան։ Նրանք ատոծո ճշմարտությունը տարածում են երկրի ամենահեռավոր անկյուններում։ Աղոթենք նրանց համար։ Միսս Վալենտայն, չէի՞ք հաճի սկսել աղոթքը։

Չէր հաճի՞։ Ախր նա ամբողջ շաբաթվա ընթացքում սպասում էր, թե վերջապես երբ հնարավորություն կստանա աղոթելու։

Միսս Վալենտայնը ոտքի ելավ երգեհոնի մոտ դրված աթոռակից, հանեց ակնոցն ու աչքերը սրբեց։ Դա քառասունի մոտ ոսկրոտ մի կին էր, որը երգեհոն էր նվագում մեր եկեղեցում։ Նվագում էր այնպես, ասես չարացած էր ինչ-որ մեկի վրա և ուզում էր հաշիվները մաքրել նրա հետ։ Նա խփում էր ստեղներին և ստեպ-ստեպ շուռ գալիս, որպեսզի թռուցիկ հայացք նետի աղոթողների վրա։ Թվում էր, թե նա ատում է բոլորին։ Ես կյանքումս միայն երկու անգամ էի նստել եկեղեցում մինչև քարոզի վերջը, և երկու անգամն էլ ահա նա իրեն նույն ձևով էր պահում, երբեմն էլ խորիմաստ գլխով անում քահանայի խոսքերին, ասես եկեղեցում միակ մարդն էր, որ հասկանում էր, թե ինչ է ասվում։

Այժմ նա վեր կացավ տեղից, որպեսզի աղոթի Սև Աֆրիկայում և երկրագնդի ուրիշ կռապաշտական երկրներում գտնվող հերոսական միսիոներների համար։

— Էկդել սորգա,— ասաց Էրնբստը Լյուկին։

— Ճիշտ է,— ասաց Լյուկը։— Դեռ մի բան էլ ավել։

— Հայր մեր ողորմած ու ամենակարող,— աղոթում էր նա,— մենք մեղք ենք գործում ու շեղվում քո ճամփից, ինչպես մոլորյալ ոչխարներ...

Եվ էլի շատ ուրիշ նման բաներ։

Ես կարծում էի՝ նրա աղոթքը պիտի վերաբերվեր հավատի մեր ազնվագույն մշակներին, մինչդեռ նա խոսում էր միայն ճշմարիտ ուղիներից շեղվելու և մեղք ու սխալ գործելու մասին։ Եվ արդեն շատ երկար էր աղոթում։

Մի բոպե ինձ նույնիսկ թվաց, թե հիմա Հարվեյ Դիլլիսը կբռնի նրա ձեռքից և ուշքի կբերի, թե՝ այսօրվա համար հերիք է, միսս Վալենտայն։ Բայց նա այդ չարեց։ Հենց որ միսս Վալենտայնը անցավ աղոթելու, ես սկսեցի աչք ածել չորս կողմս։ Աղոթքի ժամանակ պահանջվում է աչքերը փակել, բայց ես միշտ բաց եմ պահում, որպեսզի տեսնեմ, թե ինչ է կատարվում եկեղեցում։

Առանձնապես ոչինչ չէր կատարվում։ Բոլոր գլուխները ցած էին խոնարհված, բացի իմ, Լյուկի և Էրնբստի գլուխներից. Լյուկը և Էրնբստը իրենց գաղտնի լեզվով դեռևս քչփչում էին ինչ-որ հետաքրքիր բա-

նի մասին։ Ես նկատեցի, որ Ալիս Սմոլն իր գլուխն ամենից շատ է խոնարհել և ասացի ինքս ինձ. «Տեր աստված, այնպես արա, որ ես երբեք Ալիս Սմոլնի հետ խոսեմ մեր սեփական գաղտնի լեզվով, որ աշխարհում էլ ոչ ոք չհասկանա»։

— Ամեն։

Վերջապես միսս Վալենտայնը լռեց, և մենք անցանք եկեղեցու այն անկյունը, ուր յոթից-տասներկու տարեկան տղաները զանազան պատմություններ էին սովորում Աստվածաշնչից և իրենց լուման գցում գանձարկղը։

Լյուկը և Էրնըստը նորից նստեցին միասին և ասին ինձ, որ իրենց մոտից հեռանամ։ Ես նստեցի ճիշտ նրանց ետևը, որպեսզի նայեմ, թե Լյուկն իր փողը կգցի՞ արդյոք։ Ամեն կիրակի մեզ բաժանում էին կիրակնօրյա դպրոցի փոքրիկ թերթը՝ «Դպրոցականի աշխարհ» անունով։ Այդտեղ խոսվում էր փոքրիկ տղաների մասին, որոնք օգնել էին ծեր մարդկանց, կույրերին ու հաշմանդամներին, այլև խորհուրդներ էին տրվում, թե ինչպես ինքդ այս ու այն բանը սարքես։ Մի անգամ ես և Լյուկը փորձեցինք միանիվանի ձեռնասայլակ շինել, բայց անիվ չգտնըվեց։ Դրանից հետո այլևս ոչինչ չփորձեցինք։ Վերջին էջում նկարներով հայտարարություններ էին։

Մեր ուսուցիչը Հենրի Փարքրն էր։ Նրա քթին հաստ ապակիներով ակնոց էր և բերանի շուրջը ինչ-որ կարմիր ցան։ Նա հիվանդի տեսք ուներ, և մենք նրան չէինք սիրում։ Իմ կարծիքով տղաներից ոչ ոք չէր սիրում կիրակնօրյա դպրոց գնալ։ Մենք ստիպված գնում էինք, որովհետև հայրիկն ասաց. «Դա շատ ավելի օգուտ կտա, քան վնաս»։ Հետագայում, ասաց նա, երբ կմեծանաք, ինքներդ կորոշեք՝ գնա՞ք, թե ոչ։ Իսկ առայժմ դա լավ է իբրև կարգապահություն»։

Մայրիկն ասաց. «Ճիշտ է»։

Եվ մենք առայժմ գնում էինք։ Միգուցե պարզապես վարժվել էինք, որովհետև երբեք չէինք խնդրել, որ թույլ տան չգնալու։ Միևնույն է, կիրակի առավոտյան անելիք չկար։ Էրնըստ Վեսթը նույնպես գնում էր, և դրա համար էլ Լյուկը հավանորեն չէր փորձում ծլկել։ Նա կարող էր Էրնըստ Վեսթի հետ խոսել իր գաղտնի լեզվով ու կուշտ ծիծաղել բոլորի վրա։

Այս անգամ Աստվածաշնչի պատմությունը Հովսեփի ու նրա եղբայրների մասին էր, գունավոր շողշողուն շորեր հագած Հովսեփի, իսկ հետո հանկարծ ամբողջ դասարանը խոսեց կինոնկարների մասին։

— Ը՛հը՛,— ասաց Լյուկը Էրնըստ Վեսթին։

— Ահա թե ինչ,— ասաց Հենրի Փարքրը,— թող ձեզնից յուրաքանչյուրը որևէ բացատրություն գտնի, թե ինչու հարկավոր չէ կինո գնալ։

Դասարանում մենք յոթ հոգի էինք։

Փաթ Քարրիկոն ասաց.

— Կինոյում ցույց են տալիս պարող մերկ կանանց։ Ահա թե ինչու չպետք է այնտեղ գնանք։

— Ճիշտ է,— ասաց Հենրի Փարքրը,— դա լավ բացատրություն է։

— Այնտեղ ցույց են տալիս, թե ինչպես են գող-ավազակները մարդկանց սպանում,— ասաց Թոմմի Սիզրը,— իսկ դա մեղք է։

— Շատ լավ,— ասաց մեր ուսուցիչը։

— Այո,— ասաց Էրնըստ Վեսթը,— բայց չէ որ ոստիկանությունն սպանում է ավազակներին, չէ որ ավազակները վերջում միշտ ստանում են իրենց պատիժը։ Ուրեմն, այդպիսի բացատրությունը սխալ է։

— Չէ, սխալ չի,— ասաց Թոմմի Սիզրը։— Կինոն մեզ սովորեցնում է գողանալ։

— Ես համաձայն եմ միստր Սիզրի հետ,— ասաց Հենրի Փարքրը։— Կինոն մեզ վատ օրինակ է ցույց տալիս։

— Դե լավ,— ասաց Էրնըստ Վեսթը։

Նա իմաստալից մի հայացք նետեց Լյուկին և պատրաստվում էր ինչ-որ բան ավելացնել իրենց գաղտնի լեզվով, բայց Լյուկն առանց այդ էլ արդեն քրքջում էր կոկորդով մեկ, և Էրնըստը հետևեց նրան։ Երևում է, Լյուկն այնպես էլ գիտեր, թե Էրնըստն ինչ էր ուզում ասել, և դա, հավանորեն, ինչ-որ շատ ծիծաղելի բան էր, որովհետև նրանք քրքջում էին ամբողջ ձայնով։

— Այս ի՞նչ բան է,— ասաց ուսուցիչը։— Կիրակնօրյա դպրոցում ծիծաղե՞լ։ Այստեղ ի՞նչ կար ծիծաղելու։

«Հիմա կասեմ դրանց մասին,— մտածեցի ես։— Կասեմ միստր Փարքրին, որ նրանք գաղտնի լեզու ունեն»։ Բայց իսկույն էլ որոշեցի այդ բանը չանել։ Այդ կփչացներ նրանց ամբողջ խաղը։ Ախր դա այնպիսի զվարճալի լեզու էր։ Ես չէի ուզում այդ խաղը փչացնել, չնայած ոչ մի բառ չէի հասկանում նրանց լեզվից։

— Առանձնապես ոչինչ,— ասաց Լյուկը։— Մի՞թե մարդ չի կարող նույնիսկ ծիծաղել։

Հետո եկավ Ջեկոբ Հայլնդի հերթը։ Ջեկոբը ապուշի մեկն էր։ Նա ոչինչ հորինել չէր կարողանում։ Չէր կարող նույնիսկ ամենահասարակ մի պատասխան գտնել։ Պարզապես ոչինչ չէր հասկանում։

— Դե,— ասաց միստր Փարքրը,— հապա դուք ասեք, թե ինչո՞ւ հարկավոր չէ կինո գնալ։

— Չգիտեմ ինչու,— ասաց Ջեկոբը։

— Դե,— ասաց միստր Փարքրը,— մտածեք և, անշուշտ, որևէ բացատրություն կգտնեք։

Ջեկոբն սկսեց մտածել։ Այլ կերպ ասած, նա սկսեց նայել շորա կողմը, հետո ներքև՝ իր ոտքերին, հետո վերև՝ առաստաղին, իսկ մենք սպասում էինք, թե նա ինչ է պատասխանելու։

Նա երկար մտածեց, ապա ասաց.

— Բայց և այնպես, ես չգիտեմ ինչու, միստր Փարքր։ Իսկ ինչո՞ւ չի կարելի,— հարցրեց նա։

— Ես այդ ձեզ եմ հարցնում՝ ինչու,— ասաց ուսուցիչը։— Ես գիտեմ ինչու, բայց ուզում եմ, որ դուք ինքներդ ձեր ձևով ասեք։ Դե, հասմարձակ, որևէ բացատրություն տվեք միստր Հայլնդ։

Եվ ահա Ջեկոբը նորից սկսեց մտածել, իսկ մենք բոլորս շարանում էինք նրա վրա։ Մեզանից ամեն մեկը կարող էր որևէ բան հորինել, ամեն մեկը բացի այդ բթամիտ Ջեկոբից։ Ոչ ոք չգիտեր, թե նա ինչում էր այդքան դժում։ Նա դասարանում բոլորիցս մեծն էր։ Ջեկոբը երկար շուռումուռ եկավ իր աթոռակի վրա, հետո սկսեց քիթը քչփորել ու գլուխը քորել և ամբողջ ժամանակ նայում էր միստր Փարքրին, ինչպես մի շուն, որն ուզում է լավ վարվեն իր հետ։

— Դե,— ասաց ուսուցիչը։

— Ազնիվ խոսք,— ասաց Ջեկոբը,— չգիտեմ ինչու։ Ես այնքան էլ հաճախ չեմ գնում կինո։

— Բայց դուք գոնե մեկ անգամ եղե՞լ եք այնտեղ, թե ոչ։

— Այո, սըր,— ասաց Ջեկոբը։— Նույնիսկ մեկ անգամից էլ ավելի։ Միայն թե ես շուտ եմ մոռանում։ Ինչ-որ միտքս չի մնում։

Ուսուցիչն ասաց.

— Հավատացած եմ՝ դուք կարող եք հիշել գոնե որևէ բան, որը ծանոթ էր իբրև լավ պատճառ՝ կինո չգնալու համար։

Հանկարծ Ջեկոբի դեմքը լուսավորվեց։

— Գիտե՛մ,— ասաց նա։

— Հապա՞,— ասաց ուսուցիչը։

— Նա մեզ սովորեցնում է սերուցքով կարկանդակներ շպրտել մեր թշնամիների վրա, քացի տալ կանանց ու փախչել։

— Եվ ա՞յդ է ամենը, ինչ որ հիշեցիք։

— Այո, սըր,— ասաց Ջեկոբը։

— Դա բացատրություն չէ,— մեջ ընկավ էրնըստ Վեսթը։— Ի՞նչ վատ բան կա սերուցքով կարկանդակներ շպրտելու մեջ։

— Ամբողջովին սերուցք ես դառնում,— ասաց Ջեկոբն ու հռհռաց։— Հիշո՞ւմ եք, թե ոնց էր սերուցքը ծորում մարդու դեմքի վրայով։

— Կանանց քացի տալը, իհարկե, վատ բան է,— ասաց միստր Փարքրը։— Հիանալի է, միստր Հայլնդ, ես այդպես էլ գիտեի, որ դուք լավ բացատրություն կգտնեք, եթե ինչպես հարկն է մտածեք։

Հերթը հասավ Նելսոն Հոլգմին։

— Տոմսերը թանկ են,— ասաց նա։— Էժան չի նստում։

— «Բիժուում» ընդամենը հինգ սենթ արժե,— ասացի ես։— Դա բացատրություն չէ։

— Հինգ սենթով կարելի է մի հաց առնել,— ասաց Նելսոնը։— Այսօրվա օրը դա կարգին փող է։

— Ճիշտ է,— հաստատեց միստր Փարքրը։— Հիանալի բացատրություն։ Փողը պետք է ծախսել ավելի ազնիվ նպատակների համար։ Հապա մտածեք, թե մենք ինչպիսի հաջողությունների կարող էինք հասնել մեկ տարվա ընթացքում, եթե մեր երիտասարդությունը դադարեր կինո գնալուց և իր միջոցները տար եկեղեցուն։ Ախր այն փողերով, որ ծախսվում են կինոյի նման ամեն տեսակ թեթևամիտ զվարճությունների վրա, մենք կարող էինք մեկ տարում ամբողջ աշխարհը քրիստոնեական հավատի բերել։

Միստր Փարքրը գլխով նշան տվեց Էրնբստ Վեսթին։

— Կինոն մեզ ստվորեցնում է դժգոհ մնալ մեր ունեցածից,— ասաց Էրնբստը։— Մենք տեսնում ենք մարդկանց, որոնք շրջում են շքեղ մեքենաներով և ապրում մեծ-մեծ տներում, և խանդում ենք նրանց։

— Նախանձում ենք,— ասաց միստր Փարքրը։

— Մենք սկսում ենք երազել այդ բաների մասին,— ասաց Էրնբստը,— բայց գիտենք, որ չենք կարող ունենալ, որովհետև փող չունենք, և դրանից մենք մեզ վատ ենք զգում։

— Հոյակապ բացատրություն,— ասաց միստր Փարքրը։

Հասավ Լյուկի հերթը, իսկ հետևյալը իմն էր։

— Երաժշտությունը վատն է,— ասաց Լյուկը։

— Միայն ոչ «Լիբերթիում»,— ասաց Թոմմի Սիզրը։— Ոչ էլ «Սինեմայում»։ Դա բացատրություն չէ։

— «Բիժուում» վատն է,— ասաց Լյուկը։— Շարունակ նույն բանն են նվագում դաշնամուրով։ Ահավոր ձանձրույթ է։ «Հողմերի հարսանիքը»։

— Ճիշտ չէ,— ասաց Թոմմի Սիզրը։— Մեկ-մեկ էլ ուրիշ բան են նվագում։ Չգիտեմ ինչպես է կոչվում։ Մի քանի տարբեր երգեր։

— Բոլորն էլ նույնն են,— ասաց Լյուկը։— Մարդու գլուխ է ցավում։

— Ինչ որ է,— ասաց ուսուցիչը,— մենք որոշ բաներ պարզեցինք։ Կինոյից մարդու գլուխը ցավում է։ Դա վնասակար է առողջության համար։ Իսկ մենք չպետք է ոչ մի այնպիսի բան անենք, որը վնասում է մեր առողջությանը։ Առողջությունից թանկ բան չկա մեզ համար։ Մենք պետք է անենք այն, ինչը ամրապնդում է մեր առողջությունը, և ոչ թե այն, ինչը վնասում է նրան։

Իսկ ես ասացի, թե մենք չպիտի կինո գնանք, որովհետև երբ դուրս ենք գալիս կինոթատրոնից, մեր քաղաքն այլևս մեզ դուր չի գալիս։

— Ամեն ինչ մի տեսակ հիմար է թվում մեր քաղաքում,— ասացի ես։— Եվ ուզում ես այստեղից հեռանալ։

Հասավ գանձանակը ձեռքից ձեռք տալու պահը։ Միստր Փարքրը մի փոքրիկ ճառ արտասանեց, թե դրամի ինչպիսի խիստ անհրաժեշտություն կա այժմ և որ շատ ավելի լավ է տալ, քան ստանալ։

Թոմմի Սիզրը երկու սենթ գցեց գանձանակը, Փաթ Քարրիկոն՝ երեք, Նելսոն Հոլգմը՝ մեկ, Ջեկոբ Հայլնդը՝ հինգ, ապա գանձանակն անցավ Էրնբստ Վեսթի ձեռքը։ Նա պարզեց այն Լյուկին, Լյուկը՝ ինձ, իսկ ես վերադարձրի միստր Փարքրին։ Մենք երեքով ոչինչ չգցեցինք։ Միստր Փարքրը հանեց գրպանից քսակը, պարունակությունը զնգզնգացրեց, ապա հանեց այնտեղից քառորդ դոլար այնպես, որ բոլորս տեսնեինք, և գցեց գանձանակի մեջ։ Նա հույժ վեհապանծ տեսք ուներ։ Դրա համար էլ մենք բոլորս, նույնիսկ այնպիսի բթամիտը, ինչպիսին Ջեկոբ Հայլնդն էր, տանել չէինք կարող նրան։ Նա այնպիսի տեսք ուներ, ասես իր քառորդ դոլարով փրկելու էր ողջ մարդկությունը։

Հետո նա մեզ բաժանեց «Դպրոցականի աշխարհ» թերթիկը, և դասը վերջացավ։

Բոլորը վեր թռան տեղներից ու նետվեցին փողոց։

— Դե,— ասաց Էրնբստ Վեսթը Լյուկին,— ապլիկա մինչև հաջորդ հանդիպում։

— Ապլիկա,— ասաց Լյուկը։

Հետո եկեղեցուց դուրս կավ մեր Մարգարետ քույրիկը, և մենք ճանապարհվեցինք դեպի տուն։

Ես նայեցի «Դպրոցականի աշխարհի» վերջին էջը և տեսա ցեպելինի մասին եղած հայտարարությունը։ Այնտեղ նկարված էին երկու ապաներ՝ բարձր երկնքում, ցեպելինի գոնդոլի մեջ կանգնած։ Երկուսն էլ շատ սխալ տեսք ունեին։ Երկուսն էլ ձեռքով հրաժեշտ էին տալիս։

Մենք հասանք տուն և կիրակնօրյա սեղան նստեցինք։ Հայրիկն ու

մայրիկը խիստ ուրախ էին, և մենք ամեն բանից էլ կերանք, ինչքան կարող էինք։

Հայրիկն ասաց.

— Լյուկ, այսօրվա դասն ի՞նչ էր։

— Կինոյի վնասները,— ասաց Լյուկը։

— Որո՞նք են,— ասաց հայրիկը։

— Այնտեղ մերկ կանայք են պարում,— ասաց Լյուկը։— Ավազակներն սպանում են ոստիկաններին։ Հետո՝ թանկ արժե։ Եվ մեզ սովորեցնում են սերուցքով կարկանդակներ շպրտել սրա-նրա վրա։

— Պարզ է,— ասաց հայրիկը։— Խիստ վնասակար է։

Ճաշից հետո ես չգիտեի ինչով զբաղվեմ։ Եթե այդպես չքաշվեի, հյուր կգնայի Ալիս Սմոլին ու կասեի, որ սիրում եմ իրեն։ Ալիս, կասեի, ես ձեզ սիրում եմ։ Բայց քաշվում էի։ Եթե զբոսանավ ունենայի, կմեկնեի դրանով աշխարհի շուրջը։ Հետո հիշեցի ցեպելինի մասին։ Լյուկը բակում էր, ինչ-որ տախտակներ էր մեխում իրար։

— Այդ ի՞նչ ես անում,— ասացի ես։

— Հեչ,— ասաց Լյուկը։— Հենց այնպես մեխում եմ։

— Լյուկ,— ասացի ես,— ահա քեզ իմ հինգ սենթը։ Երբ ցեպելինը գա, թույլ տուր ես էլ հետդ թռչեմ։

Ես փորձեցի փողը խոթել նրա բուռը, բայց նա չվերցրեց։

— Ոչ,— ասաց նա։— Այդ ցեպելինը էրնըստ Վեսթինն է ու իմը։

— Դե լավ,— ասացի։— Ես քեզ հետ հաշիվներս կմաքրեմ։

— Խնդրեմ,— ասաց Լյուկը։

Խիստ շոգ էր։ Ես նստեցի թզենու տակ, կանաչ խոտերին ու նայում էի, թե Լյուկն ինչպես է տախտակները մեխում։ Նայելով նրա խնամքով մեխելուն, կարելի էր կարծել, թե խելքը գլխին բան է պատրաստում. ես չէի հավատում, որ նա հենց այնպես, պարապությունից է մեխում, մինչև որ վերջացրեց։ Մի տասնյակ տախտակներ իրար էր մեխել, և ուրիշ ոչինչ։ Պարզապես մեխերով միացրել էր իրար։ Առանց որևէ օգուտի։

Հայրիկը լսեց, թե նա ինչպես է թիկթիկացնում և դուրս եկավ բակ ծխամորճ ծխելու։

— Այդ ի՞նչ ես շինում,— ասաց նա։

— Սա՞,— ասաց Լյուկը։

— Այո,— ասաց հայրիկը։— Այդ ի՞նչ բան է։

— Հեչ,— ասաց Լյուկը։

— Հիանալի է,— ասաց հայրիկը, շուռ եկավ ու մտավ տուն։

— Հիանալի՞,— կրկնեց Լյուկը։

— Քո արածից բան չստացվեց,— ասացի ես։— Ավելի լավ է որևէ բան շինեիր։

Ես լսեցի, թե ինչպես հայրիկն սկսեց երգել սենյակներում։ Հավանորեն օգնում էր մայրիկին ափսեները սրբել-շորացնելու։ Նա երգում էր շատ բարձր, և փոքր-ինչ հետո մայրիկն սկսեց ձայնակցել նրան։

Լյուկը թողեց մեխեր խփելը և տախտակները նետեց ավտոտնակի տանիքից այն կողմ։

Նա վազեց ավտոտնակի ետևը ու վերադարձավ տախտակները ձեռքին, ապա նորից նետեց տանիքի վրայով ու նորից վազեց ու բերեց։

— Ի՞նչ ես խաղում,— ասացի։

— Հեչ,— ասաց Լյուկը։

— Լյուկ,— ասացի,— արի գնանք «Բիժու»։

— Ե՞ս։ Քեզ հե՞տ։

— Հա, էլի,— ասացի։— Դու հինգ սենթ ունես, ես էլ ունեմ։ Գնանք «Տարզանը» նայենք։

— Ես փողը հավաքում եմ ցեպելինի համար,— ասաց Լյուկը։— Արդեն տասը սենթ հավաքել եմ։ Մի երկու ամիս հետո ցեպելինն այստեղ կլինի։ Այն ժամանակ մնաք բարով։

— Մնաք բարո՞վ,— կրկնեցի ես։

— Այո,— ասաց Լյուկը,— մնաք բարով։

— Մի՞թե դու կթռչես, կհեռանաս մեր մոտից, Լյուկ։

— Իհարկե,— ասաց նա։— Բա էլ ինչի՞ համար է ցեպելինը։

— Ու այլևս չե՞ս վերադառնա։ Հը՞, Լյուկ։

— Ինչու չէ, կվերադառնամ,— ասաց Լյուկը։— Մի երկու ամիս կթռչեմ ու կվերադառնամ։

— Իսկ ո՞ւր ես ուզում թռչել, Լյուկ։

— Կլոնդայկ,— ասաց նա։— Դեպի հյուսիս։

— Հենց ուղիղ այնտեղ, այդ ցուրտ երկի՞րը։

— Դե իհարկե,— ասաց Լյուկը։— Երկուսով կգնանք՝ ես ու էրնըստ Վեսթը։ Պալկա էսկոս,— ավելացրեց նա։

— Այդ ի՞նչ է նշանակում,— հարցրի ես։— Ասա, խնդրում եմ, ի՞նչ է նշանակում պալկա էսկոս։

— Այդ գիտենք միայն ես ու իմ ընկերը։

— Ես ոչ ոքի չեմ ասի, Լյուկ։ Ազնիվ խոսք։

— Ո՞նց չէ, կգնաս ու մեկին կասես։

Ասում եմ,— ասում եմ։— Գետնի տակն անցնեմ, թե ասեմ։

Լեգվիոն ասեցներ կիսրմե՞ն, թե որ ասես։

Այո, ասում եմ։ Ասեցներ ու շիկացած երկաթ։

— Ազնիվ խո՞սք։

— Ազնիվ խոսք, Լյուկ։ Այդ ի՞նչ է նշանակում։

— Պալկա էսկո՞ս,— ասում է Լյուկը։

— Դե հա, Լյուկ, պալկա էսկոս։

— Բարի լույս,— ասում է նա։— Բարի լույս՝ ահա թե դա ինչ է նշանակում։

Հավատալս չէր գալիս։

— Եվ բոլորն ա՞յդ է, Լյուկ։

— Պալկա էսկոս այդ է նշանակում։ Բայց դե մենք էլի մի ամբողջ լեզու ունենք։

— Պալկա էսկոս, Լյուկ,— ասացի ես։

— Իմմել,— ասաց նա։

— Իսկ ի՞նչ է նշանակում իմմել։

— Իմմե՞լ։

— Այո, Լյուկ, իմմել։

— Ուրիշին չե՞ս ասի։

— Ախր արդեն երդվեցի,— ասում եմ ես։— Թող շիկացած երկաթ խրվի լեզվիս մեջ։

— Ողջույն,— ասում է Լյուկը։— Իմմել նշանակում է ողջույն։

— Գնանք «Բիժու»,— ասում եմ ես։— Հո փող ունենք։

— Լավ, —ասում է Լյուկը։— Ճիշտն ասած, երաժշտությունից գլուխ չի ցավում։ Ես այդ հենց այնպես ասացի։

— Խնդրիր մայրիկին,— ասացի ես։

— Իսկ եթե թույլ չտա՞,— ասաց նա։

— Իսկ եթե թույլ տա՞։ Հանկարծ ու հայրիկն ասի նրան։

Ես ու Լյուկը մտանք տուն։ Մայրիկը ափսեներն էր լվանում, իսկ հայրիկը սրբում-չորացնում էր։

— Մա, կարելի՞ է «Բիժու» գնանք,— ասաց Լյուկը։

— Ի՞նչ,— ասաց հայրիկը։— Չէ՞ որ ձեր դասը կինոյի վնասակարության մասին էր։

— Այո, սրբ,— ասաց Լյուկը։

— Եվ քո խիղճը մաքո՞ւր է,— ասաց հայրիկը։

— Իսկ ի՞նչ է գնում այնտեղ,— հարցրեց մայրիկը։

— «Տարզան»,— ասացի ես։— Կարելի՞ է գնանք, մա։ Մենք մեր փողը գանձանակի մեջ չգցեցինք։ Լյուկը փողը հավաքում է ցեպելինի համար, միայն թե չի ուզում ինձ իր հետ վերցնել։

— Փողը չգցեցի՞ք,— ասաց հայրիկը։— Եվ դա էլ կոչում եք հավա՞տ։ Եթե դուք փող չտաք, մեկ էլ տեսար ողջ միսիոներական երիցա-

կան միաբանությունը կապկպեց իր ճամպրուկներն ու փախավ Աֆրիկայից։

— Կարող է պատահել,— ասաց Լյուկը,— բայց մենք էրնըստ Վեսթի հետ փողը հավաքում ենք ցեպելինի համար։ Անպայման պիտի հավաքենք։

— Այդ ի՞նչ ցեպելին է,— հարցրեց հայրիկը։

— Ամենաիսկական,— ասաց Լյուկը։ —Նա անցնում է ժամում ութսուն մղոն և բարձրացնում է երկու մարդ՝ ինձ ու էրնըստ Վեսթին։

— Իսկ ի՞նչ արժե,— հարցրեց հայրիկը։

— Մեկ դոլար,— ասաց Լյուկը։— Չիկագոյից պիտի ուղարկեն։

— Դե լսիր,— ասաց հայրիկը։— Եթե ավտոտնակը մաքրես ու ամբողջ շաբաթ բակը կարգին վիճակում պահես, շաբաթ օրը մեկ դոլար կտամ քեզ։ Եղա՞վ։

— Այն էլ ո՞նց,— ասաց Լյուկը։

— Միայն մի պայմանով,— ասաց հայրիկը։— Որ Մարկին վերցնես հետդ թռչելու։

— Եթե նա ինձ օգնի,— ասաց Լյուկը։

— Իհարկե, կօգնի,— ասաց հայրիկը։— Կօգնե՞ս, Մարկ։

— Ես նրանից շատ գործ կանեմ,— ասացի ես։

Հայրիկն ամեն մեկիս տասը սենթ տվեց ու ասաց, որ գնանք կինո։

Մենք գնացինք «Բիժու» և դիտեցինք «Տարզանի» տասնութերորդ սերիան։ Էլի երկու սերիա, և վերջ։ Թոմմի Սիզրը և Փաթ Քարրիկոն էլ կինոյում էին։ Երբ վագրը հարձակվեց Տարզանի վրա, նրանք երկուսով ավելի շատ աղմուկ բարձրացրին, քան մնացած բոլորը։

Ամբողջ շաբաթ ես ու Լյուկը մաքրում էինք ավտոտնակը և բակը կարգին վիճակում պահում։ Շաբաթ օրը երեկոյան հայրիկը մեկդոլարանոց մի թղթադրամ տվեց Լյուկին։ Լյուկը նստեց ու մի սիրալիր նամակ գրեց Չիկագոյի այն մարդկանց, որոնք ցեպելիններ էին վաճառում։ Նա դոլարը ծրարի մեջ դրեց ու նամակը գցեց փողոցի անկյունի փոստարկղը։ Ես էլ նրա հետ գնացի նամակը գցելու։

— Ըհը՛,— ասաց նա,— հիմա մեզ մնում է միայն սպասել։

Մենք սպասեցինք տասը օր։ Ամբողջ ժամանակ խոսում էինք միայն հեռավոր, անծանոթ երկրների մասին, որտեղ թռչելու էինք ցեպելինով։

Վերջապես ցեպելինն ստացվեց։ Դա մի ոչ մեծ, տափակ ծրար էր, մեջը մի տուփ, որի վրա նույն նկարն էր, ինչ տեսել էինք «Դպրոցականի աշխարհում»։ Տուփը մեկ ֆունտից ավելի չէր կշռի, գուցե նույնիսկ պակաս լիներ։ Բացելիս Լյուկի ձեռքերը դողում էին։ Ես ինձ վատ էի

զգում՝. հանկարծ ինձ համար պարզ դարձավ, որ այստեղ ինչ-որ բան այնպես չի։ Տուփի մեջ վերևից մի քարտ էր դրած, որի վրա ինչ-որ բան էր գրած։ Մենք կարդացինք.

«Սիրելի երեխաներ։ Ուղարկում ենք ձեզ ցեպելինը՝ դրանից օգտվելու հրահանգի հետ միասին։ Բոլոր ցուցումները ճշտորեն պահպանելու դեպքում այս խաղալիքը կթռչի և մոտ 20 վայրկյան կմնա օդում...»։

Եվ ուրիշ այսպիսի բաներ։

Լյուկը խնամքով կատարեց բոլոր ցուցումները։ Ծխախոտի թղթից պատրաստած պարկը փչեց այնքան, մինչև դա լցվեց և ընդունեց ցեպելինի տեսք։ Հետո թուղթը տրաքեց, ցեպելինը սմքեց ու կուչ եկավ մանկական օդապարիկի պես։

Ահա և բոլորը։ Այդպիսին էր մեր ցեպելինը։ Լյուկը ոչ մի կերպ չէր կարող հավատալ դրան։

— Նկարի մեջ,— ասաց նա,— երկու տղաներ կան գոնդոլում։ Ես կարծում էի, ցեպելինը կհասցնեն մեզ ապրանքատար վագոն-հարթակով։

Դրանից հետո նա ինչ-որ բան ավելացրեց իր գաղտնի լեզվով։

— Այդ ի՞նչ ես ասում, Լյուկ,— հարցրի ես։

— Լավ է, որ չես հասկանում,— ասաց նա։

Նա բռունցքով ջնջեց այն, ինչ մնացել էր ցեպելինից և թուղթը կտոր-կտոր արեց։ Հետո գնաց ցախատուն, մուրճ ու մի քանի տախտակ առավ և սկսեց տախտակներն իրար մեխել։

ՎԵԼՎԵՏԵ ՇԱՎԱՐԸ

Մարդկության մեծամասնությունը, եթե չասենք երբեք, ապա խիստ հազվադեպ է խորհում այն մասին, թե ինչ կարևոր բան է շալվարը, սովորական մարդը առավոտյան շալվար հագնելիս և երեկոյան այն հանելիս, կամ օրվա որևէ այլ պահի, մի վայրկյան անգամ կանգ չի առնում մտածելու, եթե նույնիսկ այդ մտքերը զվարճանալու համար լինեն միայն, թե ինչ դժբախտ կլիներ ինքը, եթե շալվար չունենար, ինչ խղճուկ տեսք կստանար, եթե ստիպված լիներ մարդկանց առաջ ներկայանար առանց շալվարի, ինչքան անճոռնի կդառնար նրա շարժուձևը, որքան անհեթեթ՝ յուրաքանչյուր ասած խոսքը, ինչ կատարյալ՝ անուրախ նրա վերաբերմունքը կյանքի նկատմամբ։

Չնայած դրան, երբ ես տասնչորս տարեկան էի, կարդում էի Շոպենհաուեր, Նիցշե և Սպինոզա, աստծուն չէի հավատում ու նույնիսկ

արհամարհում էի, թշնամանք ունեի Հիսուս Քրիստոսի ու կաթոլիկ եկեղեցու դեմ ու խելքիս փչել էր, թե ես փիլիսոփա եմ, այդ տարի ահա իմ և ամենախոր և նմանապես ամենաառօրյա մտքերը ժամանակ առ ժամանակ անդրադառնում էին «մարդ առանց շալվարի» խնդրին, և, ինչպես կռահում եք, դրա շուրջ ունեցած մտքերս լինում էին մերթ մռայլ ու տխուր, մերթ էլ ուրախ ու զվարճալի։ Եվ ես կարծում եմ, թե փիլիսոփա լինելու ամբողջ հաճույքը հենց այն է, որ կարող ես ճանաչել երևույթի ինչպես մեկ, այնպես էլ մյուս կողմը։ Ուրեմն այսպես, մտածում էի ես, եթե մի մարդ ապրում է առանց շալվարի, ապա պետք է, որ նա խղճուկ արարած լինի, և դա, իրոք, այդպես է, մյուս կողմից էլ եթե այս նույն մարդը շալվարով աշխույժ է և բոլորի սիրելին, ապա ամենայն հավանականությամբ, առանց շալվարի էլ նույն աշխույժն ու սիրելին կմնա, դեռ ավելին, այդ վիճակը կհամարի սքանչելի առիթ սրամիտ կատակներ անելու համար։ Այսպիսի մարդու գոյությունը բոլորովին էլ անհավանական չէր ու ես հավատում էի (գոնե կինոնկարներում այդպես է), որ նա չէր շփոթվի, ճիշտ հակառակը, կիմանար ինչպես պահել իրեն և ինչը ոնց անել, որպեսզի բոլորին ներշնչի այն պարզ ճշմարտությունը, թե վերջապես շալվարի եղածը մի մեծ բան չէ, և դրա բացակայությունը դեռ չի նշանակում, թե աշխարհի վերջը եկել է կամ քաղաքակրթությունը դրանից կործանվում է։

Բայց միևնույն է, այն միտքը, թե օրերից մի օր հնարավոր է, որ ինքս մնամ առանց շալվարի, սարսափեցնում էր ինձ, առավել ևս, որ համոզված էի, թե չեմ կարողանա պատշաճ բարձրության վրա պահել ինձ և համոզել մարդկանց, թե նման չնչին բանի համար աշխարհը փուլ չի գա։

Ես ընդամենը մի շալվար ունեի, իմ քեռու շալվարը, որը հնաձև էր ու կարկատանների մեջ կորած։ Նախքան ինձ հանձնելը, քեռիս հինգ տարի շարունակ հագել էր այդ շալվարը, իսկ հետո էլ ես սկսեցի ամեն առավոտ հագնել, ամեն գիշեր հանել։

Ստանալ և հագնել քեռուս շալվարը, նշանակում էր մեծ պատվի արժանանալ։ Եվ ես ամենավերջին մարդը պիտի լինեի աշխարհում, եթե այդպես չհամարեի։ Ես գիտեի, որ դա պատիվ էր ինձ համար և ընդունեցի շալվարը պատվի հետ միասին, և ես կրում էի շալվարն ու պատիվն էլ հետը, բայց դե շալվարը վրաս չէր նստում։

Այդ շալվարը չափազանց լայն էր գոտկատեղում և չափազանց նեղ՝ ներքևում։ Մանկությանս տարիներին ես երբեք էլ լավ հագնվող չեմ համարվել։ Եվ եթե պատահում էր, որ մարդիկ փողոցում շրջվում էին մեկ անգամ էլ ինձ նայելու, ինչպես հաճախ անում են հիմա, ապա

միայն հետաքրքրությունից դրդված, թե արդյոք ո՞ւմ շալվարն է հագիս։ Չորս գրպան կար քեռուս շալվարի վրա, չորսն էլ՝ ծակ։ Եթե գործը հասնում էր փողին, գնումներ էի կատարում կամ մանր դրամ էի ստանում, ապա փողը ստիպված բերանս էի դնում ու շարունակ ուշքս վրաս էի պահում, որ հանկարծ կուլ չտամ։

Բնական է, որ ես ինձ շատ դժբախտ էի զգում։ Ես կարդում էի Շոպենհաուերին և ատում մարդկանց, մարդկանցից հետո՝ աստծուն, աստծուց հետո, կամ գուցե առաջ, կամ գուցե միաժամանակ, ամբողջ աշխարհը, ամբողջ տիեզերքը, կյանքի ամբողջ անհեթեթ դրվածքը։ Բայց, միաժամանակ, հասկանում էի, որ, շալվարն ինձ տալով, քեռիս իմ բազում ազգականների միջից ինձ էր պատվի արժանացրել, և ես ինձ շոյված էի զգում ու ինչ-որ չափով հագնված։ Ավելի լավ էր իմ քեռու շալվարի նման շալվար ունենալ, քան բոլորովին չունենալ, դառնորեն մտածում էի ես, և իմ ճկուն ու փիլիսոփայական ուղեղը արագորեն հասցնում էր այս միտքն իր ավարտին։ Ենթադրենք, թե մի մարդ հասարակության մեջ հայտնվում է առանց շալվարի։ Ոչ թե, որ նա այդպես է ուզում։ Ոչ թե կատակի համար։ Ոչ թե հանուն անհատական ոճի և կամ էլ ի հակառակ արևմտյան քաղաքակրթության, այլ պարզապես որովհետև մարդը հագնելու շալվար չունի, պարզապես որովհետև շալվար գնելու փող չունի։

Ենթադրենք, թե նրա հագին ամեն ինչ կա, բացի շալվարից՝ վարտիք, կիսագուլպաներ, կոշիկներ, վերնաշապիկ, դուրս է գալիս այդպես փողոց և նայում ուղիղ մարդկանց աչքերին։ Չէ, դուք պատկերացնո՞ւմ եք։ Տիկնայք, ես շալվար չունեմ, պարոնայք, ես փող չունեմ։ Եվ ի՞նչ։ Ոչ շալվար ունեմ, ոչ էլ փող։ Բայց դե ես այս երկրի բնակիչն եմ և միտք ունեմ մնալ այդպիսին մինչև շունչս չփչեմ կամ աշխարհի վերջը չգա։ Ես մտադիր եմ շարունակել իմ երթը աշխարհում, թեկուզև առանց շալվարի։

Հետաքրքիր է, ինչ կարող են անել։ Կարող են արդյոք այդ մարդուն բանտ նետել։ Եթե այո, ապա ինչ ժամկետով։ Եվ ինչի՞ համար։ Ի՞նչ կարգի հանցանք պիտի համարվի արդյոք եղբայրակիցների առջև առանց շալվար հայտնվելը։

Իսկ եթե նրանք հանկարծ խղճան ինձ, մտածում էի ես, եթե հանկարծ ուզենան ինձ մի հին շալվար նվիրել։ Այդ մտքից անգամ ես ուղղակի խենթանում էի։ Միայն թե չփորձեք տալ ինձ ձեր հին շալվարը, կգոռամ ես նրանց երեսին։ Չփորձեք բարի լինել իմ նկատմամբ։ Ես չեմ ուզում ձեր հին շալվարը, ես ոչ էլ ձեր նոր շալվարն եմ ուզում։ Ես ուզում եմ խանութից գնված իմ սեփական շալվարն ունենալ, բոլորովին

նոր, ճիշտ իմ վրայով, պիտակը, անվանումը, ամեն ինչ տեղը-տեղին։ Ես ուզում եմ իմ սեփական գրողի տարած շալվարն ունենալ, այլ ոչ թե որևէ մեկի։ Ես աշխարհ եմ եկել և ուզում եմ իմ շալվարն ունենալ։

Ես սոսկալի կատաղում էի այն մտքից, թե որևէ մեկը կարող է ինձ խղճալ, դա անհնար բան էր։ Անհնար էր պատկերացնել, թե որևէ մեկը կարող է ինձ որևէ բան շնորհել։ Ես ուզում էի ինքս հոգալ իմ կարիքները։ Ի՞նչ արժե այս շալվարը։ Երեք դոլա՞ր։ Շատ լավ։ Վերցնում եմ։ Միայն այսպես։ Ոչ մի կմկմոց, ոչ մի բան։ Ինչքա՞ն։ Երեք դոլա՞ր։ Շատ լավ։ Փաթաթեք։

Այն օրը, երբ առաջին անգամ հագա իմ քեռու շալվարը, քեռիս մի քանի քայլ ետ գնաց, հարմար տեղ ընտրեց հայացքը վրաս գցելու համար և ասաց.

— Հրաշալի է նստում վրադ։

— Այո, սըր,— ասացի ես։

— Վերևում բավականին ազատ է,— ասաց նա։

— Այո, սըր,— ասացի ես։

— Իսկ ներքևում շատ քիփ է ու գեղեցիկ,— ասաց նա։

— Այո, սըր,— ասացի ես։

Իսկ հետո, սատանան գիտի, թե ինչու, թերևս այն պատճառով, որ շալվար հագնելու փառավոր ավանդույթը վերջապես մի սերնդից փոխանցվեց մյուսին, քեռիս խորապես հուզված սեղմեց ձեռքս, ուրախությունից և հիացմունքից գոնատվեց ու կորցրեց խոսելու ընդունակությունը։ Նա դուրս փախավ տնից այնպես, ինչպես կարելի է փախչել շատ հուզիչ ու ցնցող տեսարանից, իսկ ես, երբ մենակ մնացի, փորձեցի հասկանալ կհաջողվի՞ ինձ արդյոք շալվարը հագիս տեղից-տեղ փոխադրվել, եթե իհարկե զգույշ լինեմ։ Պարզվեց, որ այո, քայլել կարող եմ։ Չնայած ես ինձ կաշկանդված էի զգում, բայց այնուամենայնիվ, քայլել հնարավոր էր։ Չեմ կարող ասել, թե ինձ ապահով էի զգում, բայց մերկությունս հո ծածկված էր, գիտեի նաև, որ շարժվել կարող եմ, բացի այդ, հուսով էի, որ օրեցօր կվարժվեմ և կսովորեմ արագ քայլել։ Պարզապես հարմարվել էր պետք։ Մի երկու ամիս թերևս դժվար լիներ, սակայն, ես հուսով էի, որ ժամանակի ընթացքում կսովորեմ այս շալվարը հագիս քայլել աշխարհի առաջ հաստատուն և փխստ տպավորիչ ձևով։

Մի քանի ամիս հագա իմ քեռու շալվարը և դրանք իմ կյանքի ամենաղժբախտ ամիսներն էին։

Ինչո՞ւ. կհարցնեք։ Որովհետև վելվետե շալվարը այն ժամանակ ամենանորաձևն էր համարվում։ Սկզբից սովորական վելվետե շալվարն

էր նորաձև, իսկ մի տարի անց Կալիֆոռնիայում իսպանական վերածնունդ սկսվեց և իսպանական ոճով կարված վելվետե շալվարը դարձավ նորաձևության վերջին խոսքը։ Այդ շալվարը, որի փողքերը լայնանում էին զանգի նման և եզերված էին կարմիր գույնով, շատ դեպքերում հինգ մատնաչափ բարձրություն ուներ կոնքերում, հաճախ էլ գոտկատեղը զարդարված էր լինում փոքրիկ նախշերով։ Տասնչորս տարեկան տղաները այսպիսի շալվարով ոչ միայն ապահով ու ազատ էին իրենց զգում, այլև գիտեին, որ նորաձև են հագնված և բնականաբար ինչ ուրախ բան էլ խելքներին փչեր, կարող էին անել, կարող էին վազվզել աղջիկների ետևից, շաղակրատել նրանց հետ և նման բաներ։ Իսկ ես չէի կարող։ Բնական բան էր, կարծում եմ, որ այդ հանգամանքներում ես ամենայն մոայլությամբ անդրադարձա Շոպենհաուերին և սկսեցի ատել կանանց, ապա տղամարդկանց, երեխաներին, եզներին, ընտանի կենդանիներին, ջունգլիների գազաններին և ձկներին։

Վերջապես ի՞նչ է կյանքը, հարցնում էի ես։ Եվ ինչո՞ւ են նրանք այդպես երևակայում իրենց, մի՞թե միայն նրա համար, որ իսպանական թավշյա շալվարներ են հագնում։ Իսկ Շոպենհաուեր կարդացե՞լ են։ Ոչ։ Գիտե՞ն, որ աստված գոյություն չունի։ Ոչ։ Գոնե գիտե՞ն, որ սերը ամենաանձրալի բանն է աշխարհում։ Ոչ։ Նրանք տգետ են։ Նրանք հագնում են սքանչելի վելվետե շալվարներ, բայց տգիտությունից փուրացել են։ Նրանք չգիտեն, որ ամեն ինչ ծաղր է ու իրենք էլ այդ շարաբաստիկ խաղի զոհերը։

Ես դառնորեն ծիծաղում էի նրանց վրա։

Այնուամենայնիվ, ես երբեմն մոռանում էի իմացածս, մոռանում էի, թե ինչ եմ սովորել Շոպենհաուերից, անմեղությամբ լցված, առանց այս կամ այն խոր փիլիսոփայական մտքի ուրախ ու զվարթ ընկնում էի աղջիկների ետևից ու դառնում նրանց ծիծաղի առարկան։ Եվ միայն քեռուս շալվարի պատճառով։ Ախր այդպիսի շալվարով աղջիկների ետևից չեն ընկնում։ Դա դժբախտ, շարաբաստիկ, մելամաղձոտ շալվար էր և նրանով աղջիկներին հաճոյանալը շատ ողբերգական բան էր, իսկ կողքից նայողի համար խիստ զավեշտական։ Ես սկսեցի ձեռքս ընկած գրոշն անգամ հավաքել և համբերատար սպասել։ Ոչինչ, կգա այն օրը, երբ ես խանութ կմտնեմ ու կասեմ նրանց, թե ուզում եմ իսպանական վելվետե շալվար գնել, և որ գինը ինձ համար նշանակություն չունի։

Անցավ գառնություններով լի մի տարի։ Փիլիսոփայական մտքերի և մարդկության նկատմամբ ունեցած ատելության տարի։

Ես կոպեկ առ կոպեկ փող էի հավաքում, որպեսզի օրերից մի օր

իսպանական վելվետե սեփական շալվար ունենամ։ Դրանով ես ձեռք կբերեմ ոչ միայն վստահություն և ապահովություն, այլև մի հագուստ, որի մեջ անհնար է ուրախ և զվարթ լինել։

Ուրեմն այսպես։ Ես փող հավաքեցի անհրաժեշտ չափով, ինչպես որոշել էի, գնացի խանութ, ինչպես որոշել էի, և իսպանական վելվետե շալվար գնեցի ինձ համար, ինչպես որոշել էի, բայց մի ամիս անց, երբ դասերը սկսվեցին ու ես դպրոց գնացի, տեսա, որ միայն ես էի հագել այդ հատուկ ոճի վելվետե շալվարից։ Ինչպես երևում է, իսպանական վերածնունդը վերջացել էր։ Այժմ նորաձև էր համարվում պարզ, վելվետե շալվարը՝ առանց նախշերի ու այլ բաների։ Ուղղակի սովորական վելվետե շալվար։

Էլ ինչպե՞ս կարող էի ես ուրախ ու զվարթ լինել։ Ոչ, ուրախ ու զվարթ տեսք ես, իհարկե, լունեի։ Եվ դա գործը ավելի էր փչացնում, քանի որ իմ շալվարը ուրախ ու զվարթ շալվար էր։ Իմ սեփական շալվարը։ Իմ փողերով գնված շալվարը ուրախ ու զվարթ տեսք ուներ։ Իսկ դա պարզապես նշանակում էր, մտածում էի ես, անկախ այն բանից, թե ինչո՞վ եմ զբաղված, ես նույնպես պետք է իմ շալվարի նման ուրախ ու զվարթ լինեի։ Եթե ոչ, ուրեմն աշխարհում արդարություն չկա։ Եվ իսկապես, ես հո չէի կարող այդպիսի շալվարով դպրոց գնալ և ուրախ ու զվարթ չլինել, այնպես որ որոշեցի հենց ուրախ ու զվարթ էլ լինել։ Ես սրամտում էի ամեն առիթով և այդ պատճառով անընդհատ հարվածներ էի ստանում վզակոթիս, և շատ հաճախ ծիծաղում էի ու տեսնում, որ հիմնականում, երբ ես ծիծաղում եմ, մնացած բոլորը լուռ են։

Դա այնպիսի մղձավանջ էր, որ ես թողեցի դպրոցը։ Այժմ համոզված եմ, որ ես այն փիլիսոփան չէի դառնա, ինչ հիմա եմ, եթե չլիներ այն տառապանքը, որ ես ապրեցի իսպանական ոճի իմ վելվետե շալվարի պատճառով։

ԱՌԱՋԻՆ ՕՐԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Ջիմ անունով մի փոքրիկ տղա, բժիշկ Լոսի Դևիի անդրանիկ ու միակ որդին, առաջին անգամ դպրոց գնաց։

Նրա հայրը ֆրանսիացի էր, քառասնամյա թիկնեղ մի տղամարդ, որի պատանեկության տարիներն անցել էին աղքատության, ձախորդությունների ու փոքրամոլ երազանքների մեջ։ Ջիմի մայրը մեռել էր ապրելու ժամանակ, և միակ կինը, որին մտերիմ էր, շվեդուհի էմին էր՝ իրենց անտեսուհին։

Հենց նա էլ Ջիմին առնական զգեստ հագցրեց ու տարավ դպրոց։ Ջիմը սիրում էր Էմիին, բայց դադարեց սիրելուց, որովհետև նա իրեն դպրոց էր տանում։ Ջիմն այդպես էլ ասաց նրան։ Ամբողջ ճանապարհին նա այդ էր կրկնում։

— Ես քեզ չեմ սիրում,— ասում էր նա.— Էլ չեմ սիրում քեզ։

— Իսկ ես քեզ սիրում եմ,— պատասխանում էր տնտեսուհին։

— Բա էլ ինչո՞ւ ես ինձ դպրոց տանում։

Նա առաջ էլ էր զբոսնում Էմիի հետ, մի անգամ նույնիսկ կիրակնօրյա ցերեկային համերգ գնացին քաղաքային զբոսայգում, սակայն դպրոց գնալը բոլորովին այլ բան էր։

— Ինչո՞ւ ես ինձ դպրոց տանում,— ասաց նա։

— Բոլորն էլ պետք է դպրոց գնան։— ասաց տնտեսուհին։

— Իսկ դու գնացե՞լ ես։

— Չէ։

— Բա ես ինչո՞ւ պիտի գնամ։

— Այնտեղ քեզ դուր կգա,— ասաց տնտեսուհին։

Ջիմը մի քանի քայլ լուռ անցավ, բռնած տնտեսուհու ձեռքից։

— Ես քեզ չեմ սիրում,— ասաց նա։— Էլ չեմ սիրում քեզ։

— Իսկ ես քեզ սիրում եմ,— ասաց տնտեսուհին։

— Բա էլ ինչո՞ւ ես ինձ դպրոց տանում,— նորից ասաց նա։— Ինչո՞ւ։

Տնտեսուհին հասկանում էր, թե փոքրիկ տղայի համար որքան սարսափելի կարող է լինել առաջին անգամ դպրոց գնալը։

— Այնտեղ քեզ դուր կգա,— ասաց նա։— Դու երևի երգեր կսովորես ու զանազան խաղեր կխաղաս։

— Չեմ ուզում,— ասաց Ջիմը։

— Ես ամեն օր կգամ քո ետևից,— ասաց տնտեսուհին։

— Ես քեզ չեմ սիրում,— կրկնեց տղան։

Տնտեսուհու սիրտը ցավում էր, որ տղան պետք է դպրոց գնա, բայց ինչ արած, նա պարտավոր էր գնալ։

Դպրոցի շենքը երկուսին էլ մի տեսակ անհոգի երևաց։ Տնտեսուհին իրեն վատ զգաց, և երբ աստիճաններով վերև էին բարձրանում, հանկարծ ուզեց, որ տղան իսկապես դպրոց չգնար։ Նախադասարանները ու դասասենյակները վախեցնում էին նրանց, այնտեղից ինչ-որ օտարոտի ու տհաճ հոտ էր գալիս։

Տնօրեն միստր Բարբրը տղային դուր չեկավ։ Էմին արհամարհանքով վերաբերվեց նրան։

— Ինչպե՞ս է ձեր որդու անունը,— ասաց միստր Բարբրը։

— Սա բժիշկ Լուի Դևիի որդին է,— ասաց Էմին։— Անունը Ջիմ է։ Ես բժիշկ Դևիի տանը աշխատում եմ իբրև տնտեսուհի։

— Ջե՞մս,— ասաց միստր Բարբրը։

— Ոչ, Ջեմս չէ,— ասաց Էմին։— Պարզապես Ջիմ։

— Շատ լավ,— ասաց միստր Բարբրը։— Իսկ երկրորդ անուն ունի՞։

— Ոչ,— ասաց Էմին։— Նա դեռ շատ փոքր է։ Ուղղակի Ջիմ Դևի։

— Շատ լավ,— ասաց միստր Բարբրը։— Մենք նրան կփորձենք առաջին դասարանում։ Եթե գլուխ չհանի, կփոխադրենք մանկապարտեզ։

— Բժիշկ Դևին ասաց՝ տալ նրան դպրոցի առաջին դասարան և ոչ թե մանկապարտեզ,— ասաց Էմին։

— Շատ լավ,— ասաց միստր Բարբրը։

Տնտեսուհին հասկանում էր, թե տղան ինչպես էր վախեցած, երբ նստեց աթոռին, դիրեկտորի առաջ, և ջանում էր զգացնել տալ, թե ինքը ինչպես է սիրում նրան և ինչպես է ցավում այս ամենի համար։ Նա ուզում էր որևէ քնքուշ խոսք ասել տղային, բայց չգիտեր, թե ինչ։ Եվ նա իրեն հպարտ զգաց, տեսնելով, թե Ջիմն ինչպիսի թեթևությամբ ցած թռավ աթոռից ու կանգնեց միստր Բարբրի կողքին, որպեսզի նրա հետ դասարան գնա։

Տուն դառնալիս նա այնպես հպարտ էր տղայով, որ նույնիսկ արտասվեց։

Առաջին դասարանի ուսուցչուհի միսս Բիննին բոլորովին չարացած պառավ մի լեդի էր։ Դասարանը լիքն էր փոքրիկ տղաներով ու աղջիկներով։ Առաջվա պես ինչ-որ օտարոտի ու սրտնեղիչ հոտ էր գալիս։ Ջիմը նստեց նստարանին և սկսեց ուշադիր լսել։

Նա լսում էր, թե ոնց է ուսուցչուհին անունները տալիս՝ Ջարլզ, Օլվին, Էրնեստ, Նորման, Բետտի, Հաննա, Ջուլիետ, Վիոլա, Պոլլի։

Նա ուշադիր լսում էր, և ահա միսս Բիննին ասաց.

— Հաննա Վինտեր, այդ ի՞նչ ես ծամում։

Ջիմը տեսավ, թե ոնց Հաննա Վինտերը կարմրեց։ Հաննա Վինտերն խսկույն դուր եկավ նրան։

— Ծամոն,— ասաց Հաննան։

— Գցիր աղբարկղը։

Ջիմը տեսավ, թե ոնց փոքրիկ աղջիկը գնաց դեպի դռան մոտի անկյունը, ծամոնը հանեց բերանից ու գցեց աղբարկղը։

Նա լսեց, թե ինչպես միսս Բիննին ասաց.

— Էրնեստ Հասկին, իսկ դո՞ւ ինչ ես ծամում։

— Ծամոն,— ասաց Էրնըստը։

Էրնըստը նույնպես դուր եկավ Ջիմին։

Նրանք հանդիպեցին դպրոցի բակում, և Էրնըստը զանազան զվարճալի բաներ սովորեցրեց Ջիմին։

Էմին նախասենյակում սպասում էր դասերը վերջանալուն։ Նա մոայլ կիտել էր հոնքերը և շարացած էր ամենքի դեմ, մինչև որ տեսավ Ջիմին։ Նրան ապշեցրեց, որ տղան բնավ չի փոխվել։ որ նա ողջ-առողջ է, ոչ ոք չի սպանել ու չի հաշմել նրան։ Դպրոցը և այն ամենը, ինչ կապված էր դրա հետ, մահու չափ վախեցնում էր Էմիին։ Նա բռնեց տղայի ձեռքը և դուրս եկավ դպրոցից հպարտ ու բարկացած։

Ջիմն ասաց.

— Հինգն ու մեկը ինչքա՞ն կանի։

— Վեց։

— Երեսիդ մուր քսվեց։

Ընթրիքի ժամանակ հայրը լուռ նստել էր։

— Հինգն ու մեկը ինչքա՞ն կանի,— ասաց տղան։

— Վեց,— ասաց հայրը։

— Երեսիդ մուր քսվեց,— ասաց Ջիմը։

Առավոտյան նա հորից հինգ սենթ խնդրեց։

— Փողն ինչի՞դ է հարկավոր,— ասաց հայրը։

— Ծամոնի համար,— ասաց տղան։

Հայրը մի հինգսենթանոց տվեց նրան։ Դպրոց գնալիս Ջիմը կանգ առավ միսիս Ռայլի կրպակի մոտ և մի տուփ «Անանուխի» ծամոն առավ։

— Ուզո՞ւմ ես մի հատ,— հարցրեց նա Էմիին։

— Իսկ դու ուզո՞ւմ ես ինձ տալ,— ասաց տնտեսուհին։

Ջիմը մտածեց ու ասաց.

— Այո։

— Դու ինձ սիրո՞ւմ ես։

— Սիրում եմ,— ասաց Ջիմը։— Իսկ դո՞ւ ինձ։

— Այո,— ասաց տնտեսուհին։— Դպրոցը քեզ դո՞ւր է գալիս։

Ջիմը հաստատ ասել չէր կարող։ միայն գիտեր, որ ծամոնի խաղն ֆրեն դուր է գալիս։ Հաննա Վինտերն էլ։ Էրնըստ Հասկինը նույնպես։

— Չգիտեմ,— ասաց նա։

— Երգեր երգո՞ւմ եք,— ասաց տնտեսուհին։

— Չէ, չենք երգում։

— Իսկ խաղեր խաղո՞ւմ եք։

— Խաղում ենք։ Միայն ոչ թե դպրոցում, այլ բակում։

Ծամոնի խաղն անչափ դուր էր եկել նրան։

Միսս Բիննին ասաց.

— Ջիմ Դևի, այդ ի՞նչ ես ծամում։

«Հա-հա-հա»,— մտածեց նա ու ասաց.

— Ծամոն։

Նա գնաց դեպի աղբարկղն ու վերադարձավ իր տեղը, Հաննա Վինտերը նայում էր նրան։ Էրնեստ Հասկինը նույնպես։ Դպրոցում եղածի լավն էլ հենց այդ էր։

Իսկ հետո ավելի ևս լավ եղավ։

— Էրնեստ Հասկին,— բղավեց նա դպրոցի բակում,— այդ ի՞նչ ես ծամում։

— Հում փղի միս,— ասաց Էրնեստը։— Ջիմ Դևի, այդ ինչ ես ծամում։

Ջիմն ուզեց որևէ ծիծաղելի բան մտածել, բայց չկարողացավ։

— Ծամոն,— ասաց նա։

Եվ Էրնեստ Հասկինը ավելի բարձր ծիծաղեց, քան Ջիմը, երբ ինքը խոսեց հում փղի մսի մասին։

Ինչ էլ պատասխաներիր, մեկ է, ծիծաղելի էր ստացվում։

Բակից վերադառնալիս Ջիմը նախաձրահում տեսավ Հաննա Վինտերին։

— Հաննա Վինտեր,— ասաց նա,— այդ ի՞նչ ես ծամում շարունակ։

Աղջիկը շփոթվեց։ Նա ուզում էր մի հաջող սրամիտ պատասխան տալ, այնպես որ երևա, թե որքան հաճելի է, որ Ջիմն իրեն անուն-ազգանունով կանչեց և ծիծաղելի հարց տվեց, տնազելով ուսուցչուհուն։ բայց չկարողացավ ոչինչ մտածել, որովհետև արդեն հայտարյա դասարանի դռանն էին, և նա ժամանակ չունեցավ։

— Տուտտի-ֆրուտտի,— շտապով ասաց նա։

Ջիմին թվաց, թե երբեք այդպիսի հոյակապ խոսք չէր լսել, և ամբողջ օրը կրկնում էր ինքն իրեն։

— Տուտտի-ֆրուտտի,— ասաց նա տնտեսուհուն տան ճամփին։

— Էմի Լարսոն,— ասաց նա,— այդ ի՞նչ եք ծամում։

Ընթրիքի ժամին Ջիմն այդ ամենը պատմեց հորը։

Նա ասաց.

— Ջորս կողմ ավազ, մեջը ակ։ Էդ ի՞նչ եղավ։

— Չգիտեմ, —ասաց հայրը։— Ի՞նչ է։

— Ավազակ,— ասաց տղան։

Տնտեսուհին հիացած էր։

— Ավազ-ակ,— ասաց Ջիմը։— Տուտտի-ֆրուտտի։

— Իսկ դա ի՞նչ է,— հարցրեց հայրը։

— Ծամոն,— ասաց Ջիմը։— Ծամոնի մի տեսակ, որ ծամում է Հաննա Վինտերը։

— Ո՞վ է այդ Հաննա Վինտերը,— ասաց հայրը։

— Մեր դասարանցի է,— ասաց Ջիմը։

— Օ՜,— ասաց հայրը։

Ընթրիքից հետո Ջիմը պառկեց հատակին, վերցնելով իր կարմրա-կապտա-դեղնավուն փոքրիկ հոլը, որը պատեցնելիս բզզում էր։ «Ամեն ինչ կարգին է»,— մտածում էր Ջիմը։ Ճիշտ է, դպրոցում նա դեռևս տխրում էր, բայց ծամոնի խաղը ծիծաղելի էր, իսկ Հաննա Վինտերը շատ լավիկն էր։ «Հում փղի միս»,— հանկարծ հիացմունքով հիշեց նա։

— Հում փղի միս,— բարձրաձայն ասաց նա հորը, որը երեկոյան թերթն էր կարդում։

Հայրը ծալեց թերթն ու նստեց հատակին նրա մոտ։ Տնտեսուհին նրանց տեսավ կողք-կողքի նստած և, չգիտես ինչուն նրա աչքերում արցունքներ երևացին։

ՄԵՔՍԻԿԱՑԻՆ

Ժուան Քաբրալը մի բարձրահասակ մեքսիկացի էր, որ աշխատում էր հորեղբորս այգում, որթատունկերը էտելու ժամանակ։ Նա մի աղքատ մարդ էր, որի ամբողջ ունեցվածքը իր կին Կոնսուելան էր՝ Պաբլո և Պանչո որդիների հետ միասին, երեք գնորիկները, իր կաղ զարմիկ Ֆեդերիկոն՝ շորթ շների ու մի կատվի ուղեկցությամբ, կիթառը, հին կոտորակի հրացանը և արդեն վաղուց պատռված ձին, որ քաշում էր դատարկ ամանեղենի շրխկ-թրխկոցով լիքը ծածկած սայլը։

Այդ առավոտ ես ու հորեղբայրս հանդարտ զրուցում էինք ագարակի բակում, երբ ճանապարհի ծայրին երևաց սայլը, և Ժուանը իր ամբողջ թափառական խմբի հետ միասին ուղղվեց մեր կողմը։

— Սա ի՞նչ է,— զարմացավ հորեղբայրս։

— Մեքսիկացիներ են,— ասացի։

— Ի՞նչ գիտես։— նորից զարմացավ հորեղբայրս։

— Շների նայիր,— բացատրեցի ես։— Մեքսիկացիները պարզ ու ազնվասիրտ ժողովուրդ են։ Ամենաաղքատ մեքսիկացին էլ շների մի ամբողջ ոհմակ է պահում։ Նրանք հնդկացիների և ուրիշ ազնվագարմ ցեղերի խառնուրդ են։

— Ի՞նչ են ուզում,— ասաց հորեղբայրս։

— Աշխատանք,— ասացի ես,— դա դեմ է նրանց ազնվազարմ բնությանը, բայց կյանքն ստիպում է, որ աշխատեն։

Ինչպես երևում է, հորեղբորս բոլորովին չհուզեց իմ ճառը։

— Որթատունկերս ես ինքս եմ էտելու,— հայտարարեց նա։

— Նրանց ի՞նչ,— ասացի ես,— կշրջվեն ու կգնան մի ուրիշ ագարակ։

Բեռնասայլակը դանդաղ ագարակի բակը մտավ, և Ժուան Քաբրալը բարձրահասակ մեքսիկացու իր ողջ վեհությամբ ողջունեց մեզ՝ «Բուենոս դիաս, ամիգոս»։ Հետո կոտրված անգլերենով տեղեկացավ.

— Այստեղ աշխատանք կճարվի՞ մի ուժեղ մեքսիկացու համար։

— Այսինքն ո՞ւմ համար,— հարցրեց հորեղբայրս ինձ։

— Ինձ համար,— ասաց մեքսիկացին։— Ժուան Քաբրալի։

— Ժուան Քաբրալ,— կրկնեց հորեղբայրս,— չէ, աշխատանք չկա։

— Ինչքանո՞վ,— Ժուանն անտեսեց հորեղբորս պատասխանը։

— Ի՞նչ է ասում,— հորեղբայրս չհասկացավ մեքսիկացու ասածը ու, սարսափելի շփոթված, մի ծխախոտ վառեց։

— Նա ուզում է իմանալ որքա՞ն ես վճարելու,— թարգմանեցի ես։

— Վճարելու մասին ո՞վ բան ասաց։ Ես աշխատող չեմ վարձում։

— Հետո ի՞նչ,— ասացի ես,— նա համենայն դեպս ուզում է իմանալ։ Նա հրաշալի գիտի, որ դու աշխատող չես վարձում։

Հորեղբայրս շվարեց։

— Երեսուն սենթ,— կասկածելով ասաց նա։— Ես ճապոնացիներին ժամը երեսուն սենթ եմ վճարում։ Ուրիշ ագարակատերեր քսան կամ քսանհինգ են տալիս։

— Ժամը երեսուն սենթ,— ասացի մեքսիկացուն։

— Չէ,— ասաց Ժուանը,— բավական չէ։ Իմ տանը լիքը սոված բերան կա էս ձմեռ։

— Ի՞նչ,— անհանգստացավ հորեղբայրս։ Նա անընդհատ նեղվում էր ու Ժուանի ասածներից ոչինչ չէր հասկանում, այնպես որ՝ ես ստիպված էի թարգմանել մեքսիկացու ամեն խոսքը։

— Ասում է՝ երեսուն սենթը բավական չէ։ Նա դրանով իր տան բոլոր սոված ներին այս ձմեռ չի կերակրի։

— Ովքե՞ր են այդ սոված ները։

— Կարծում եմ, այս ամբողջ թափառախումբն էլ սոված է,— ասացի ես։

Հորեղբայրս շրջվեց սայլի կողմը։

Որտե՞ղ են սրանք ապրում,— հետաքրքրվեց նա։

Չգիտեմ։ Մի տեղ գտնում են։ Էլի։

Ժուան Քաբրալը կանգնած էր մեր արևոտ բակում, արձանի նման անշարժ ու լուռ։ Նրա շներից մեկը ձանձրանալով մոտեցավ Հորեղբորս ու ձեռքը լիզեց։ Հորեղբայրս վեր թռավ ու վախեցած շուրջը նայեց։

— Սա ի՞նչ է,— հարցրեց նա ինձ։

— Մեքսիկացու շներից մեկն է,— ասացի ես։ Շունը տխուր աչքերով նայեց Հորեղբորս ու պոչը շարժեց։

— Ասա՝ թող հեռու գնա։

— Հեռու գնա,— խնդրեցի ես։ Շունը վերադարձավ թափառախմբի մոտ։ Հորեղբայրս նայում էր (ավելի ճիշտ կլինի ասել՝ ուսումնասիրում էր), թե շունն ինչպես վազեց-անցավ բակի մյուս կողմը։ Երբ շունը պառկեց սայլի ստվերում, Հորեղբայրս ասաց.

— Սովորական շուն է։ Դրանցից հարյուրներով փողոցներում կան։

— Ճիշտ է,— ասացի ես։

— Մի պենսի էլ չարժի։

— Պենսիի կեսի կեսն էլ չարժի,— ասացի ես,— վրան երկու դոլար էլ տաս, չեն վերցնի։

— Ինձ որ վրան երեք դոլար էլ տաս, չեմ վերցնի։ Բանի պետք չի։ Նապաստակ կամ դրա նման մի բան կարո՞ղ է բռնել։

— Երբեք։

— Գողերի կարո՞ղ է վախեցնել։

— Երբեք,— ասացի ես։— Նա դուրս կգա ու կլիզի գողերի ձեռքերը։

— Ուրեմն՝ ի՞նչ օգուտ դրանից։

— Ոչ մի օգուտ։

— Չեմ հասկանում,— համառեց Հորեղբայրս,— ինչո՞ւ են այդ անպետք շներից չորս հատ պահում։

— Մեքսիկացիներ են,— ասացի ես,— պարզ մեքսիկացի մարդիկ են։

— Ես լսել եմ, որ բոլոր մեքսիկացիները գողեր են։

— Նրանք վերցնում են այն ամենը, ինչ որ հողում արմատներ չունի։

— Իմ տանը տասներեք սոված բերան կա, ինձ չհաշված։ Երեսուն սենթը բավական չի,— ասաց Ժուանը։

— Տասներեք բերա՞ն,— զարմացավ Հորեղբայրս։

— Նա կենդանիներին էլ է հաշվում։

— Չեմ կարծում, թե նա որթատունկ էտել իմանա,— ասաց Հորեղբայրս։

— Որթատունկ էտել գիտե՞ք,— հարցրի ես մեքսիկացուն։

— Ոչ, սենյոր, ես զինվոր եմ։

— Ի՞նչ ասաց,— չհասկացավ Հորեղբայրը։

— Նա զինվոր է,— ասացի ես,— քաջ զինվոր։

— Պատերազմն արդեն վերջացել է,— Ժուանին հայտնեց Հորեղբայրը։

Ըստ երևույթին նրանք իրար չէին հասկանում, և բարձրահասակ մեքսիկացին բեռնասայլակից հանեց իր հին կոտորակի հրացանը ու նշան բռնեց ճիշտ այնպես, ինչպես զինվորներն են անում կրակելիս։ Երբ Հորեղբայրը տեսավ կոտորակի հրացանը, վատ զգաց իրեն։ Նա կանգնեց իմ ետևում և, ձեռքը մեկնելով, խստորեն խոսեց մեքսիկացու հետ։

— Հեռացրու հրացանը,— ասաց նա։— Ես չեմ ուզում, որ ինչ-որ մեքսիկացի պատահաբար սպանի ինձ։ Ես հավատում եմ քեզ։

Հետո, անհանգստացած ինձ դառնալով, ասաց.

— Թող հեռու տանի էդ անտեր հրացանը։ Նա հիմա կսպանի ինձ՝ ցույց տալու համար, որ ինքն իսկապես զինվոր է։

— Չի սպանի,— ասացի ես։

— Հեյ,— ասաց Հորեղբայրը Ժուան Քաբրալին,— ես ոչ մեկի օգնության կարիքը չեմ զգում։

Մեքսիկացին քայլ արեց դեպի առաջ։

— Երեսուն սենթը, ինձ չհաշված, տասներեք հոգու կերակրելու համար բավական չի,— պնդեց նա։

Հետո հրացանը մի կողմ դրեց, և Հորեղբայրը հազիվ էր շունչը տեղը բերել, երբ նորից քիչ մնաց հավասարակշռությունը կորցնի. սայլի ծածկի տակից երան էին նայում հինգ երիտասարդ մեքսիկացու դեմքեր։

— Այն ի՞նչ մարդիկ են,— խզված ձայնով հարցրեց Հորեղբայրը։

— Երեխաներ են,— ասացի ես։— Երկու տղա, երեք աղջիկ։

— Ի՞նչ են ուզում երեխաները։

— Բակլա ու ալյուր,— ասացի ես,— ու մի քիչ էլ աղ։ Ուղածները շատ քան չի։

— Ասա նրանց՝ թող հեռանան,— ասաց Հորեղբայրը։— Նա որթատունկ էտել չգիտի։

— Ամեն մարդ էլ կարող է սովորել։

— Նա կավերի իմ այգին։

— Եվ իր հետ կտանի այն ամենը, ինչը հողում արմատներ չունի,— ասացի ես։

— Ես ժամը տասը սենթ ավելի եմ վճարում, քան ուրիշները։

— Նա ասում է, որ երեսուն սենթը բավական չէ։

— Իսկ որքա՞ն է բավական,— հարցրեց հորեղբայրս։

— Սենյոր Քաբրալ,— դարձա ես մեքսիկացուն,— դուք ժամը երեսունհինգ սենթով կաշխատե՞ք։ Իմ հորեղբայրը օգնության կարիք բոլորովին չունի, բայց ձեզ անչափ հավանել է։

— Ընտանիքիս ու կենդանիների համար տուն կճարվի՞,— հարցրեց մեքսիկացին։

— Այո,— ասացի ես,— հպմեստ, բայց հարմարավետ մի տուն կա։

— Աշխատանքը շա՞տ է,— հարցրեց մեքսիկացին։

— Բոլորովին անհրաժեշտ է,— ասացի ես։

—Հաճելի՞ աշխատանք է։

— Անչափ հաճելի է,— ասացի ես,— և առողջության համար օգտակար։

Մեքսիկացին մի պահ լռեց, հետո ծանրաքայլ մոտեցավ մեզ։ Զորս շները քայլում էին նրա ետևից, և նրա հինգ երեխաներն արդեն շրջապատում էին հորեղբորս։ Ես զգում էի, որ նրանց մոտենալու հետ միասին հորեղբայրս ավելի ու ավելի է նեղվում։

— Սենյոր,— այսպես դիմեց մեքսիկացին հորեղբորս,— ես կաշխատեմ ձեր այգում։

— Ինձ համար մեծ պատիվ է,— թոթովեց հորեղբայրս։

Նա լրիվ շփոթված էր։ Հիմնականում դրա պատճառը շներն էին։ Եվ իհարկե երեխաները՝ երկու տղա և երեք աղջիկ։ Անկապկած, նաև մեքսիկացու փառահեղ պահվածքը։ Եվ, իհարկե, ոչ մի դեպքում հրացանը չէր։ Հորեղբայրս երբեք թույլ չէր տա, որ այս աշխարհում որևէ ուժ վախեցներ իրեն։

Ժամը երեքի կողմերը մեքսիկացիներն արդեն տեղավորվել էին իրենց փոքրիկ տնակում, և ես Ժուան Քաբրալին տարա մի որթատունկի մոտ, որպեսզի էտել սովորեցնեմ։ Պաբլոն ու Պանչոն, կաղ Ֆեդերիկոյի հետ միասին, եկան մեզ հետ։

Ես բացատրում էի նրան ամեն մի ճյուղը կտրելու նպատակը՝ նախ որթատունկի ձևը պահպանելու համար, որպեսզի ուժեղ լինի որթատունկը, որ մատղաշ ճյուղերը ձգվեն արևին և այլն։ Հետո, երբ անցանք մյուս որթատունկին, ես, մկրատը հանձնելով Ժուանին, հարցրի, թե արդյոք չէ՞ր բարեհաճի մի որթատունկ էտել։ Ժուանը շատ նրբանկատ գտնվեց և համաձայնեց։ Նա աշխատում էր դանդաղ ու մտախոհ։ իր երեխաներին ու կաղ զարմիկին բացատրելով ամեն մի ճյուղը կտրելու նպատակը, ինչպես ես էի իրեն բացատրել։ Կաղ Ֆեդերիկոն,

որ վաթսունին մոտ մի մարդ էր, ուղղակի ցնցված էր։ Ես նրան առաջարկեցի գործը շարունակել մինչև մութն ընկնելը, և ինքս վերադարձա Հորեղբորս մոտ, որ ֆորդի դեկին նստած երազում էր։

— Գործերն ինչպե՞ս են,— հարցրեց նա։

— Հրաշալի,— ասացի ես։

Մենք քաղաք էինք գնում ժամում վաթսունվեց մղոն արագությամբ, կարծես թե հորեղբայրս ուզում էր փախչել ինչ-որ վախեցնող բանից։ Ամբողջ ճանապարհին նա ձայն չհանեց։ Միայն երբ Վենտուրա ավենյու էինք մտնում Ֆեյն Գրաունդի մոտ, ասաց.

— Այդ բոլոր չորս շները միասին վերցրած մի պենի էլ չարժեն։

— Շները կապ չունեն,— ասացի ես։— Ուղղակի մեքսիկացիներն ուրիշ ձևով են աշխարհին նայում։

— Ինձ թվաց, որ շունն ինձ պիտի կծի,— ասաց հորեղբայրս։

— Ոչ,— ասացի,— նրա մտքովն էլ չէր անցնում։ Անգամ եթե ոտքով խփեիր։ Նրա հոգին լի էր սիրով։ Նույնն էլ մեքսիկացիներն են։ Նրանց գողությունը երբեք լուրջ բան չի դառնում։

— Նրեխաները առողջ տեսք ունեին,— ասաց հորեղբայրս։

— Ավելի առողջ երբեք չեն լինում։

— Ի՞նչ են ուտում։

— Բակլա և մեքսիկական հաց,— ասացի ես։— Այն բաները, որ քեզ համար անօգուտ են։

— Կարծում ես երբևէ որթատունկ էտել կսովորի՞։

— Անկասկած,— ասացի։

— Չեմ կարծում, թե տրակտորը թոցնի, հը՞։

— Չէ,— ասացի,— տրակտորը չափից դուրս ծանր է։

— Այդ այգու վրա ես անցյալ տարի ահագին դրամ կորցրի,— ասաց հորեղբայրս։

— Գիտեմ,— ասացի,— նախանցյալ տարի էլ նույնն էր։

— Այդ այգին առնելուս օրվանից դրա վրա դրամ եմ կորցնում,— բոլոքեց հորեղբայրս։— Ո՞ւմ է պետք խաղող, ո՞ւմ է պետք չամիչ։

— Միգուցե այս տարի կփոխվի՞։

— Կարծո՞ւմ ես։

— Ինձ թվում է՝ մեքսիկացին հաջողություն կբերի,— ասացի ես։

— Հետաքրքիր է,— ասաց հորեղբայրս,— ես էլ նույնն էի մտածում։ Եթե նա տասներեք հոգու կերակրելու է այս ձմեռ, ուրեմն՝ այնքան էլ վատ տարի չի լինի։

— Անցյալ տարվանից ավելի շատ չես կորցնելու,— ասացի։

— Ճապոնացիները վատը չեն,— ասաց հորեղբայրս։— Ուղղակի աշխարհին ուրիշ տեսակ են նայում, քան մեքսիկացիները։

— Ճապոնացիները երբեք չորս սովորական շուն չէին պահի,— ասացի։

— Նրանք կքշեին շներին։

— Եվ կքարկոծեին,— ասացի ես։

— Ինձ թվում է՝ այս տարին լավը կլինի։

Մենք այլևս ոչ մի բառ չխոսեցինք ամբողջ ճանապարհին։

ԳՅՈՒՂԱՑԻՆ

Սարգիս անունով մի մարդ 1908-ին Հայաստանի Գյուլտիկ գյուղից Ամերիկա եկավ։ Դեռ երեսուն տարեկան չկար։ Խիտ, կարճ կտրած մազերով, սև ու հաստ բեղերով ածդահա մի գյուղացի էր։ Քաշը հավանաբար մի հարյուր կիլո կլիներ, բայց գեր չէր երևում, և ուներ տարօրինակ ու թախծոտ հայացք։ Գյուլտիկում առանձնապես հայտնի մարդ չէր։ Գյուլտիկում առհասարակ հայտնի մարդիկ չկային։ Բայց նա լավ ընկերներ ուներ՝ հայեր, քրդեր, թուրքեր, արաբներ, հրեաներ, հույներ, բուլղարներ ու ուրիշ ազգի ու ցեղի մարդիկ։ Նրանց հետ խոսում էր հայերեն, թուրքերեն, քրդերեն, արաբերեն և, հեռանալով, շատ ընկերներ էր թողել Գյուլտիկում։

1908-ի մայիսին հասավ Նյու Յորք։ Դա մի սարսափելի տեղ էր, մեկը չկար, որ հետը խոսեր։

1908-ին Նյու Յորքում հատուկենտ էին այն մարդիկ, որ մի երկու բառ հայերեն, քրդերեն, թուրքերեն կամ արաբերեն դիտեին։

Մենակ էր։

Մեկնեց Լին՝ Մասաչուսեթս, աշխատանք գտավ կոշիկի գործարանում և սկսեց կամաց-կամաց անգլերեն սովորել։

Գործը դժվար էր, դժվար՝ հատկապես իր նման ածդահա մարդու համար։ Այնպիսի գործ չէր, որ մարդ աներ մեջքով, ուսերով, ոտքերով... Ոչ, ձանձրալի մի աշխատանք էր, որ մարդ պիտի աներ միայն մատներով և օգտագործեր բազկի մի քանի մկանը։ Եվ աչքը։

Կոշիկի գործարանում նա աշխատեց մի ամբողջ տարի, և միայնակությունը գնալով սաստկացավ ու սաստկացավ։ Լինում մի քանի հայ ընտանիք կար, բայց գյուղացին նրանց չէր սիրում։ Բոլորովին նման չէին Գյուլտիկի հայերին։

Մի գիշեր հարբեց ու երբ օրորվելով գնում էր փողոցով, նրան հանդիպեց մի հայ տերտեր։

Միասին գնացին տեր Հոր տունը։

— Ցավդ ի՞նչ է, տղաս,— հարցրեց տեր Հայրը։

— Մենակ եմ,— տնքաց գյուղացին։

— Աստված քեզ հետ է,— ասաց տեր Հայրը։

— Դա շատ պատվական է,— պատասխանեց գյուղացին,— բայց ես մենակ եմ, տեր Հայր։ Մարդ չկա, որ հետը խոսեմ։ Գյուլտիկում բոլորին ճանաչում էի, քրիստոնյաներին էլ, անհավատներին էլ։ Ախ, տեր Հայր, ինչ անուշ էր Գյուլտիկը։

— Դու պիտի պսակվես,— ասաց տեր Հայրը։

— Ինչո՞ւ չէ, ինձ համար մի սիրուն աղջիկ գտիր, որ ճաշ եփել իմանա, հետս հայերեն ու մեկ էլ ուրիշ լեզու՝ թուրքերեն կամ արաբերեն խոսի։ ու, ինչո՞ւ չէ, կպսակվեմ։

Տեր Հայրը գյուղացուն անկողին դրեց։

Մի շաբաթ անց գյուղացին նամակ ստացավ տերտերից։ Տեր Հայրն գրում էր, թե մի բարի, լավ աղջիկ է գտել և ուզում է, որ գյուղացին ինչքան կարելի է շուտ գա իր տուն։ Գյուղացին մի հիսուն անգամ կարդաց այդ նամակը, երկար նամակ չէր։

Նա իր ամենալավ շորերը հագավ ու գնաց տերտերի տուն։

— Տեր Հայր,— հարցրեց գյուղացին,— նա ճաշ եփել գիտի՞։ Շատ եմ ուզում իմանալ՝ ճաշ եփել գիտի՞։ Ստամոքսս այս երկրի կերակուրներից խենթացել է։ Ճաշ եփել գիտի՞, երգել գիտի՞, հիմա ձեր տա՞ն է։

— Չէ, տղաս,— ասաց տեր Հայրը,— իմ տանը չէ, մենք պիտի գնանք նրա տուն։

Մեկ մղոն ճանապարհ անցան, մինչև հասան աղջկա տուն։ Ավելին չասելու համար ասենք միայն՝ աղջիկը տգեղ էր։

Գյուղացին կոտրված սրտով կանգնել էր տան առաջ։ Տխուր էր իր բոլոր դժբախտություններ համար, կորցրած Գյուլտիկի, կորցրած ընկերների համար, կոշիկի գործարանի անիծյալ աշխատանքի, իր մենակության, Գյուլտիկի ճաշերի, բարի ու գեղեցիկ երգերի համար... Եվ հիմա այս կինը, հայ կինը, անկասկած, պարկեշտ մի կին, որ գուցե աքանչելի ճաշեր է եփում, աքանչելի ասեղնագործում... բայց միևնույն է, ինքը չի ուզում նրան և հիմա ավելի մենակ է զգում իրեն, քան երբևէ։

Նա գրպանից մի ծխախոտ հանեց, զարկեց լուցկու տուփին և ասաց.

— Տեր Հայր, ես պիտի ծխեմ։

Տեր Հայրն ասաց.

— Գլխարկդ դիր այստեղ, ներս մտնենք, նստենք։ Ես դեռ նրա անունը չեմ ասել քեզ. Էլիզա Իսկենդերյան է։

Գյուղացին ցած դրեց գլխարկը և խոր ներս քաշեց ծխախոտի ծուխը։

— Այո,— ասաց նա,— այդպես է, նրա անունն այդպես է, տեր հայր, ես քեզ հավատում եմ...

Իսկ աղջկան ասաց.

— Ինձ համար պատիվ է։

— Դու նրա հոր և մոր հետ պիտի ծանոթանաս,— ասաց տեր հայրը,— նրանք պատվական մարդիկ են։

— Հասկանում եմ, տեր հայր,— ասաց գյուղացին։— Նրանք պատվական մարդիկ են, այս տունն էլ շատ պատվական տուն է։ Մեկ վայրկյան իսկ չեմ տատանվի ասելու, որ նրանք աշխարհի ամենալավ մարդիկ են, այո, ամենալավ...

Նա խոր շունչ քաշեց, նորից նայեց աղջկան ու ասաց.

— Այո, ամենալավ, ներիր ինձ, տեր հայր...

Աղջկա հայրն ու մայրը եկան գյուղացու հետ ծանոթանալու և հարցրին անունն ու ազգանունը։

— Սարգիս Խաչատուրյան,— պատասխանեց նա։— Գյուլտիկից, հայրենի երկրի տաքուկ կրծքից պոկված։ Տասնհինգ ամիս է Ամերիկայում է։ Մեն-մենակ, կորած օտարության մեջ։ Մի թշվառական, մի անբախտ մարդ։ Ներիր ինձ, տեր հայր, ինչ անարդար է աշխարհը...

Աղջիկը սուրճ պատրաստեց։ Անհամ էր։ Աղջիկը երգեց։ Վատ էր, շատ էր վատ։

Գյուղացին, աթոռին նստած, իր տունն էր հիշում։

Հանեց ոսկի ժամացույցը, նայեց ու ասաց.

— Ներեցեք ինձ, հայրենակիցներ։ Անչափ երջանիկ եմ։ Հիմա պիտի գնամ։ Աստված ձեզ հետ կենա։ Բարի գիշեր։

Տեր հայրն էլ գյուղացու հետ դուրս եկավ։

— Է,— ասաց տեր հայրը,— ինչպե՞ս է...

— Տեր հայր,— ասաց գյուղացին,— ես անբախտ եմ, շատ եմ անբախտ։ Աղջիկը լավ աղջիկ է, լավ սուրճ է պատրաստում։ Սխալի ձայն ունի, բայց, տեր հայր, նրա մեջ ինչ-որ մի բան կա, ինչ-որ փոքրիկ մի բան, որ սրտումս չէ։ Չէ, ես չեմ կարող նրա հետ նույն տանը ապրել։ Պատկել նույն անկողնում, չէ, տեր հայր, չեմ կարող, խաչ չինի այդ մասին։

— Կվարժվես՝ կսիրես,— ասաց տեր հայրը։

— Չեմ ուզում վարժվել, տեր հայր,— ասաց գյուղացին,— ներիր ինձ, անբախտ եմ։

— Ժամանակի հարց է,— ասաց տեր հայրը,— մի շաբաթ, երկու, մի ամիս, երկու, մի տարի, երկու, մի երեխա հետո՝ երկու... Հետո... Ինչ կա որ... Ամուսնացած մարդ կլինես, երեխաներ կունենաս, տարիները կանցնեն...

— Ներիր ինձ, տեր հայր,— ասաց գյուղացին։— Երախտապարտ եմ քեզ։ Բայց այն փոքրիկ, շատ փոքրիկ բանը... Ոչ։ Ոչ մեկ շաբաթ, ոչ երկու։ Բարի գիշեր, տեր հայր։

— Բարի գիշեր, տղաս։

Կալիֆոռնիայից լին ժամանեց մի հայ և Սարգիս խաչատուրյանը սրճարանում մի երեկո հանդիպեց նրան։ Միասին օղի խմեցին, և մարդը Սարգիս խաչատուրյանին պատմեց Կալիֆոռնիայի մասին։

— Համարյա Հայաստան է,— ասաց մարդը,— արև, խաղող, դաշտեր, թզենիներ, առուներ, կովեր...

Գյուղացին ճչաց.

— Կովե՞ր, հայրենակից, դու կովե՞ր ասացիր...

— Հարյուրներով,— ասաց մարդը։

— Տեր աստված, կովե՞ր... Իսկ աշխատա՞նք, ի՞նչ աշխատանք կա այնտեղ։

— Այգու գործ,— ասաց մարդը։

— Տեր աստված,— ասաց գյուղացին,— ա՜ռև...

Մտմտաց, հետո նորից ճչաց.

— Սիրելի հայրենակից, իսկ մերոնցից՝ հայեր Կալիֆոռնիայում՝ շա՞տ կան... Կարևորը դա է...

— Շատ,— ասաց մարդը։

— Աստվա՜ծ իմ,— ասաց գյուղացին,— ուրեմն գնամ Կալիֆոռնիա։

Ու գնաց։

Կալիֆոռնիա հասավ օգոստոսին, ճիշտ խաղողաքաղի ժամանակ։ Աշխատանքն ավելի լավ էր, քան կոշիկի գործարանում, բայց սա էլ իր վատ կողմերն ուներ։ Աշխատողների մեծ մասը կամ մեքսիկացի էր, կամ ճապոնացի։ Օտար մարդիկ էին։ Ինքն ուզում էր խոսել, բայց ոչ մեկը չէր հասկանում իրեն... Եվ առանց խոսելու էր աշխատում։

Իսկ աշխատանքը ողկույզ կտրել ու պինու վրա դնելն էր։

Ողկույզը պիտի մնար արևի տակ ու դառնար չամիչ։ Երբ ողկույզի մի կողմը չորանում էր, երկու հոգի պիտի բարձրացնեին սինիները, խաղողը շուռ տային մի այլ սինիի մեջ, որ-մյուս կողմն էլ չորանա։

Եվ հաճելի չէր այդ աշխատանքը անել մեքսիկացու հետ, մի մարդու, որի հետ չես կարող խոսել։

Ժամեր շարունակ մեքսիկացու հետ սինիներ շուռ տալը շատ էր ձանձրալի...

Նա ամբողջ ամառն այդ գործն արեց, ձմեռնամուտին հող փխրեցրեց, գարնանը այգու վազերն էտեց... Կիրակի օրերը քաղաք գնաց։ Մարիփոզա փողոցի վրա գտնվող հայկական մի սրճարան, օղի և սուրճ խմեց, սկամբիլ ու նարդի խաղաց, խոսք ու զրույց արեց իր հայրենակիցների հետ...

Մի կիրակի օր, երբ գյուղացին սրճարանում էր, մի մարդ մտավ այնտեղ և այդ մարդը Արշակ Դոմբալյանն էր, գյուլտիկցի։ Արշակ Դոմբալյանը Սարգիս Խաչատուրյանին դեռ հայրենիքից էր ճանաչում։ Այնտեղ նրանք իրար հետ հաճախ էին խոսում։ Եվ Սարգիս Խաչատուրյանի համար շատ էր հաճելի, որ այդ գյուլտիկցի մարդուն հանդիպել է Ամերիկայում։

Նրանք ամուր, շատ ամուր ու շատ երկար իրար ձեռք սեղմեցին և համարյա լաց եղան։

— Ախ, Սարգիս եղբայր,— ասաց Արշակ Դոմբալյանը,— ինչպե՞ս ես, ինչպե՞ս...

— Լավ եմ, Արշակ եղբայր,— տխրությամբ ասաց Սարգիսը,— իսկապես շատ լավ եմ։ Դո՞ւ ինչպես ես...

— Ախ, ես էլ շատ լավ եմ, սիրելիս,— ասաց Արշակը,— իսկ Ամերիկան հավանո՞ւմ ես, սրտո՞վդ է, գյուլտիկցի եղբայր...

— Ախ, Ամերիկա՜ն,— ասաց Սարգիսը։— Հարցնում ես՝ սրտո՞վս է։ Ի՞նչ ասեմ։ Գնա, արի... Ծանոթ-անծանոթ մարդկանց հետ սինիներ շուռ տուր։ Եղածը դա է։ Գնա, արի, գնա, արի, ծանոթ, անծանոթ, ծանոթ, անծանոթ... Սինիներ շուռ տուր... Ինչ մարդիկ են, ի՞նչ իմանաս, եղբայր... Առաջ այդպիսի մարդկանց տեսած չկայինք, ի՞նչ ազգ են, ինչպե՞ս է նրանց լեզուն, ի՞նչ իմանաս։

Կալիֆոռնիա տեղափոխվելուց մեկ տարի հետո Սարգիս Խաչատուրյանը ամուսնացավ։ Կինը մի ավելի համեստ ընտանիքից էր, քան էինի այն աղջիկը։ Բայց ավելի կլորիկ էր, ավելի թուխ, ավելի սիրուն։ Մի տարի անց տղա ունեցան։ Շատ աշխատեց Սարգիսը, երեք հարյուր դոլար կուտակեց և տվեց իբրև կանխավճար՝ 10 ակր այգու դիմաց։

Հիմա նա արդեն այդպիսի էր՝ իր սեփական իրավունքներով։ Ուներ ձիեր, մի կով, մի տուն, մի քարի կին ու մի տղա։ Ինչպես տեր հայրն էր ասել, մեկը դարձավ երկու, երկուսը՝ երեք, երեքը՝ չորս, օրեր,

ամիսներ, տարիներ, երեխաներ... Այս բոլորը իսկապես շատ լավ էր, հիանալի, նա չէր կարող ասել, թե հիանալի չէ... Նա ավելի փող վաստակեց, ավելի հող գնեց. հերկեց, ցանեց, էտեց, ջրեց, բերք հավաքեց։ Նրա տասը ակրանոց այգին մեծացավ, դարձավ երեսուն, ապա քառասուն, հիսուն ակրանոց այգի։

Նոր տուն կառուցեց, էլեկտրականություն քաշեց ներսը, մեքենա գնեց, գրամոֆոն գնեց, կնոջն ու երեխաներին պաղպաղակ ուտելու, հանքային ջրեր խմելու տարավ, կինո-թատրոն տարավ...

Անցան տարիներ։

Ավագ տղան միջնակարգ դպրոցն ավարտեց, և գյուղացին դպրոցի դահլիճում նստած տեսավ, թե տղան ինչպես է վկայական ստանում ու լացը հազիվ զսպեց։ Այդ բոլորը շատ լավ էր, սքանչելի։ Նա գիտեր, որ այդ բոլորը հոյակապ է։

Ավագ տղան ամուսնացավ Կալիֆոռնիայում ծնված մի հայ աղջկա հետ, հարսանիքի ժամանակ եղավ իսկական նվագ ու պար՝ հայկական, թուրքական, քրդական երգեր եղան, պարեր եղան։ Տղան էլ իր համար այգի գնեց։ Հրաշալի էր, հրաշալի... Հոյակապ էր, հոյակապ... Նրա մյուս տղան ոչ միայն միջնակարգն ավարտեց, այլև Բերկլիի քոլեջը։ Ուղղակի սքանչելի էր...

Այո, այդ բոլորը սքանչելի էր։ Հենց իր աչքի առաջ ինչեր փոխվեցին կյանքում ու աշխարհում։ Տեսավ հեռախոսը։ Տրակտորը։ Գորգ մաքրող մեքենան։ Լվացքի մեքենան։ Սառնարանը։ Ռադիոն։ Անգլերեն խոսող, անգլերեն գրող, ուրիշ շատ բաներ իմացող իր երեխաներին։ Փառավոր դար էր, փառավոր ժամանակներ։

Բայց նա տխուր էր. նա ոչինչ չէր հասկանում։ Գյուլտիկն էր հիշում։ Այնտեղ ամեն ինչ լավ էր։ Այնտեղ մարդ գիտեր, թե ում հետ է խոսում։ Արաբը արաբ էր՝ թուրքը՝ թուրք, քուրդը՝ քուրդ։ Մարդ գիտեր, թե ում հետ է խոսում։ Ճանաչում էր դեմքը, աչքերը, քիթը։ Հոտը։ Այնտեղ տուն էր, օջախ էր։ Երբ մարդ խոսում էր մեկի հետ, գիտեր, թե ում հետ է խոսում։ Բայց ի՞նչ էր Ամերիկայում... Նա չէր կարողանում մոռանալ, թե ինչ էր Ամերիկայում...

Եղավ, որ հարգարժան հայերը, գիտուն մարդիկ եկան նրա տուն։ Սուրճ խմելիս հարցրին.

— Գե, հայրենակից, ասա՝ Ամերիկան արտո՞վդ է...

Եվ նա միշտ թախիծով նայեց այդ մարդկանց դեմքերին, աչքերին ու ասաց.

— Ի՞նչ իմանամ... գնա, արի, գնա, արի... ու ծանոթ անծանոթ մարդկանց հետ սինի շուտ տուր...

Մի առավոտ մտնում եմ գրասենյակ, տեսնեմ՝ մեր հաշվապահ միսիս Հիլպլին վերարկուն հագնում է, գլխարկը դնում. իսկ աչքերից արցունք է հոսում։

Ապրիլ ամիսն էր, և ինչ անենք, որ ես եղած-չեղած՝ մի ինչ-որ գարշելի թաղման բյուրոյում չնչին գրասենյակային աշխատող էի։ Մի՞թե ես չունեի նոր գլխարկ ու նոր կոշիկներ։ Մի՞թե Հարավային խաղաղ-օվկիանոսյան ընկերությունը շաբաթ օրերը էժանացրած տարիֆով հատուկ գնացքներ չի ուղարկում Մոնթերեյ։ Եվ մի՞թե ես չեմ պատրաստվում վաղը գնալ Մոնթերեյ, ծովափ։

Շաբաթ օրը կաշխատեմ մինչև կեսօր, մտածում էի ես, Ջարլիի սրճարանում մի հիանալի շնիցել կուլ կտամ տասնհինգ սենթով, հետո շտապ կգնամ Հարավային խաղաղ-օվկիանոսյան կայարան, հատուկ շաբաթօրյա տոմս կգնեմ Մոնթերեյ գնալ-գալու համար, գնացքը կնստեմ և շաբաթ օրվա կեսից մինչև երկուշաբթի առավոտը ազատ կլինեմ թռչունի պես։ Մի նկարագարդ ամսագիր կգնեմ և մինչև Մոնթերեյ ամբողջ ճանապարհին պատմվածքներ կկարդամ։

Բայց, ահա, մտնում եմ գրասենյակ ու տեսնում՝ մեր հաշվապահ միսիս Հիլպլին հագնում է իր վերարկուն, դնում է գլխարկը, իսկ աչքերից արցունք է հոսում։

Ես դադարեցի սուլել և շուրջս նայեցի։ Ամեն ինչ խաղաղ էր։ Միստր Ուայլիի առանձնասենյակի դուռը կիսաբաց էր, այնպես որ պետք էր կարծել, որ նա արդեն եկել է։ Գրասենյակում ուրիշ ոչ ոք չկար։ Ժամը ութն անց էր քսան րոպե, և լսվում էր, թե ինչպես բարձր թիկ-թակ է անում ժամացույցը, որի ձայնը սովորաբար մարդ չի նկատում։

— Բարի լույս, միսիս Հիլպլի,— ասացի ես։

— Բարի լույս։ Ջո,— ասաց նա։

Ես չմոտեցա իմ փոքրիկ պահարանին՝ գլխարկս կախելու և սեղանիս մոտ գնալու, որովհետև զգում էի, որ այստեղ մի ինչ-որ վատ բան է պատահել։ Ինձ թվում էր, որ անքաղաքավարություն կլինի գլխարկս կախել ու նստել սեղանիս մոտ, առանց նախապես իմանալու, թե ինչ է պատահել և ինչու է միսիս Հիլպլին վերարկուն հագնում, գլխարկը դնում ու լաց լինում։ Միսիս Հիլպլին պառավ կին էր։ Նա բեղեր ուներ, խիստ կուզիկացել էր, նրա ձեռքերը շոր էին, կնճռապատ և ոչ ոքի նա դուր չէր գալիս, բայց չէ՞ որ ապրիլ ամիսն էր, ու ես էլ ունեի նոր գլխարկ և նոր կոշիկներ, և չէ՞ որ ես միսիս Հիլպլիի հետ միևնույն գրասենյակում աշխատել էի դեռ սեպտեմբեր ամսից, ամբողջ ձմեռը և

չեմ ասի, թե նրան սիրում էի, ես նրա համար չէի խելագարվում, բայց նա բարեսիրտ պառավ էր, և ես չէի կարող այնպես հեշտությամբ գնալ գլխարկս կախել և իմ աշխատանքային օրն սկսել, որպես թե ոչինչ չի եղել։

— Միսիս Հիլպլի,— ասացի ես,— որևէ բա՞ն է պատահել։

Նա գլխով ցույց տվեց միստր Ուայլի առանձնասենյակի կիսաբաց դուռը և նշան արեց, որ ես լիսեմ, այլ պարզապես գնամ գլխարկս կախեմ ու գործի անցնեմ։

«Պարզ է,— մտածեցի ես։— Միստր Ուայլին նրան վռնդել է»։

Այսքան տարվա աշխատանքից հետո։

— Միսիս Հիլպլի,— ասացի ես,— գուցե դուք զրկվե՞լ եք ձեր տեղից, հա՞։

— Ես ինքս եմ հրաժարվել,— ասաց նա։

— Այդպես չէ,— ասացի ես։— Դուք չեք հրաժարվել։ Ես երեխա չեմ։ Ինձ չեք խաբի։

Միսիս Հիլպլիի ռոճիկը շաբաթական քսանյոթ դոլար և հիսուն սենթ էր։ Առաջ, երբ նա նոր էր ծառայության մտել թաղման բյուրոյում, նրան վճարելիս են եղել ութ դոլար։ Ինձ արդեն սովորեցրել էին նրա աշխատանքը կատարել, և իմ ռոճիկը շաբաթական տասնհինգ դոլար էր։ դրա համար նրանք վռնդել էին պառավ լեդիին։ Իհարկե, ես շատ գոհ էի, որ աշխատանք ունեմ. ես պատրաստվում էի գնալու Մոնթերեյ և երեք դոլարանոց նոր կոշիկներով ու նոր գլխարկով ինձ հիանալի էի զգում, բայց ամենևին սրտովս չէր, որ իմ պատճառով լաց լինի միսիս Հիլպլին, այն էլ այդ տարիքում։

— Միսիս Հիլպլի,— ասացի։— Ես որոշել եմ այսօրվանից թողնել իմ ծառայությունը և այդպես էլ կանեմ։ Ես մի քեռի ունեմ Պորտլանդում, նա նպարեղենի խանութ է բաց անում, և ես գնալու եմ նրա մոտ՝ նրա հաշիվները պահելու։ Ես մտադիր չեմ ամբողջ կյանքումս աշխատել մի ինչ-որ թաղման բյուրոյում։ Գնում եմ։

— Ջո,— ասաց միսիս Հիլպլին,— դուք հիանալի գիտեք, որ Պորտլանդում ոչ մի քեռի էլ չունեք։

— Մի՞թե,— ասացի։— Դուք նույնիսկ չեք պատկերացնում, թե քանի տեղ ես քեռիներ ունեմ։ Ոչ, այս ծառայությանը վերջ եմ տալիս։ Հետևել հասցեներին, թե որտեղ է որևէ մեկը մեռել։ Երիտասարդ մարդու համար համա՛ թե երևելի աշխատանք է։

— Ջո,— ասաց միսիս Հիլպլին։— Եթե դուք այս աշխատանքը թողնեք, ես այլևս երբեք չեմ խոսի ձեզ հետ։

— Շատ պե՞տքս է աշխատել թաղման բյուրոյում,— ասացի ես։— Հանուն ինչի՞ ես պիտի հետևեմ ինչ-որ հանգուցյալների։

— Դուք բարեկամներ չունեք այս քաղաքում, Ջո,— ասաց միսիս Հիլպլին։— Չէ՞ որ դուք ամեն ինչ պատմել եք ինձ, թե որտեղ եք ծնվել և ինչ եք անում այստեղ, Ֆրիսկոյում, և ես ամեն ինչ գիտեմ։ Ձեզ այս ծառայությունը հարկավոր է, և եթե հեռանաք, ինձ խիստ դառնացրած կլինեք։

— Միսիս Հիլպլի,— ասացի ես,— դուք ինձ ինչի՞ տեղ եք դնում։ Գամ այստեղ և գրավեմ ձեր տե՞ղը։ Դա անարդար բան կլինի։ Դուք այստեղ ծառայում եք քսան տարի, եթե ոչ ավելի։

— Ջո,— ասաց միսիս Հիլպլին,— գնացեք կախեցեք ձեր գլխարկը և գործի անցեք։

— Ոչ,— ասացի։— Ես հենց հիմա թողնում եմ ծառայությունը։

Ես գնացի ուղիղ միստր Ուայլի առանձնասենյակը։ Միստր Ուայլին թաղման ընկերության փոխնախագահն էր։ Տարիքն առած մարդ էր, երկարահասակ, մտացրիվ, քթի ծայրը տափակ, գլխին էլ լայնեզր գլխարկ էր դնում։ Ժլատի մեկն էր։

— Ի՞նչ կա,— ասաց նա։

— Հեռանում եմ ձեզնից,— ասացի։

— Այդ ինչո՞ւ հանկարծ,— ասաց։

— Քիչ եք վճարում,— ասացի։

— Որքա՞ն եք ուզում,— ասաց նա։

Ա՜յ թե զարմացա։ Ախր ես կարծում էի, թե նա իսկույն կվռնդի ինձ։ Եվ ահա որոշեցի մի մեծ գումար պահանջել, որպեսզի նա անպայման դուրս անի ինձ։

— Շաբաթական երեսուն դոլար,— ասացի ես։

— Բայց չէ՞ որ դուք դեռ ընդամենը տասնութ տարեկան եք,— ասաց նա։— Այդպիսի բարձր ռոճիկը մի քիչ վաղաժամ է։ Ի դեպ, մենք կփորձենք կարգավորել այդ գործը։

Գրողը տանի։ Եթե փորձեի նման մի բանի հասնել, հավանորեն դրանից ոչինչ չէր ստացվի։ Իսկ հիմա հանկարծ՝ խնդրեմ։ Շաբաթական երեսուն դոլարը ինձ կբավականացներ, որ ընդամենը մի կես տարվա ընթացքում գնեմ այն ամենը, ինչ երազել էի իմ ամբողջ կյանքում։ Տեր իմ աստվա՜ծ, այդպիսի փողով ես հո շատ շուտով կկարողանայի «Հարլեյ-Դեվիդսոն» մոտոցիկլետ գնել։

— Ոչ,— ասացի։— Ես հեռանում եմ։

— Ինչո՞ւ եք հեռանում,— ասաց նա։— Ես կարծում էի ձեզ դուր է գալիս ձեր աշխատանքը։

— Կար ժամանակ,— ասացի,— երբ դուր էր գալիս, իսկ հիմա՝ ոչ։ Միստր Ուայլի,— ասացի,— մի՞թե դուք դուրս եք արել միսիս Հիլպլիին։

Միստր Ուայլին ետ ընկավ բազկաթոռում և ինձ նայեց։ Նա դժգոհ էր ու բարկացած։ Ո՞վ եմ ես, որ այդպիսի հարցեր տամ նրան։

— Երիտասարդ,— ասաց նա,— ձեր վերջնահաշվի չեկը պատրաստ կլինի հենց այս առավոտ։ Կարող եք մի ժամից հետո գալ ստանալու։

Այստեղ ես էլ նեղացա։

— Ես ուզում եմ անհապաղ ստանալ իմ վերջնահաշիվը,— ասացի։

— Այդ դեպքում սպասեցեք միջանցքում։ Միջնորմի մյուս կողմը։

Ես դուրս եկա և անցա միջնորմի հետևը։ Միսիս Հիլպլին խիստ հուզված էր։

— Ես հեռանում եմ,— ասացի։

Նա ոչ մի խոսք չկարողացավ արտասանել։

— Նա ուզում էր ինձ շաբաթական երեսուն դոլար տալ,— ասացի,— բայց ես հեռանում եմ։

Նա լուռ կանգնած՝ միայն օդ էր կուլ տալիս։

— Միսիս Հիլպլի,— ասացի ես,— նրանք ստիպված կլինեն նորից ձեզ ծառայության ընդունել, որովհետև այժմ չկա մեկը, որ ձեր գործն անի։

— Ջո,— ասաց նա,— դուք ինձ խիստ վշտացնում եք։

— Ոչինչ, ամեն ինչ կանցնի,— ասացի։— Որտեղ ես ծնվել եմ, այնտեղ ընդունված չէ աշխատանք խլել կնոջից։ Չէ՞ որ ես Չիկագոյից եմ և միշտ էլ կարող եմ վերադառնալ այնտեղ։

(Գնամ Չիկագո՞։ Ա՜յդ էր պակաս։ Ես սիրում եմ Կալիֆորնիան։ Ես միշտ սիրել եմ Կալիֆորնիան։ Բայց հենց այնպես ասացի)։

— Ջո,— ասաց միսիս Հիլպլին,— իսկ ի՞նչ կլինի, եթե դուք ուրիշ աշխատանք չճարեք։

Ես մատներս չխկացրի.

— Է, աշխատանք միշտ կգտնվի։

Այդ ժամանակ առանձնասենյակի դռան մեջ երևաց միստր Ուայլին և գլխով արեց միսիս Հիլպլիին։ Վերջինս մտավ առանձնասենյակ, և միստր Ուայլին դուռը ծածկեց։ Միսիս Հիլպլին այնտեղից դուրս եկավ միայն ժամը իններից տասնհինգ պակաս։ Նա գլխարկն ու վերարկուն հանեց, չեկի գրքույկը վերցրեց, մի չեկ գրեց և տարավ, որ միստր Ուայլին ստորագրի։

Չեկն ինձ համար էր։ Դա տասներեք դոլարի չեկ էր։

— Ահա ձեր լեկը, Ջո,— ասաց միսիս Հիլլին։— Ես փորձեցի նը-բան համոզել, որ տանձհինգ տա ձեզ, բայց նա ասաց, որ դուք ձեզ ամ-բարտավան եք պահել։

— Դուք նորից ծառայությա՞ն եք ընդունված,— ասացի ես։

— Այո։

— Միսիս Հիլլի,— ասացի,— ես շատ ուրախ եմ, որ դուք նորից ստացաք ձեր տեղը։ Ուրեմն նրա ասելով ես ինձ ինչպես ե՞մ պահել։

— Ամբարտավան,— ասաց միսիս Հիլլին։

— Դա ի՞նչ է նշանակում։

— Անբարեկիրթ։

— Ճիշտ չէ,— ասացի։— Որտեղ ես ծնվել եմ, այնտեղ մարդիկ պարկեշտ են։ Ինչպե՞ս է նա համարձակվում ինձ անբարեկիրթ կոչել։

Ես մտա միստր Ուայլի առանձնասենյակը և ասացի.

— Միստր Ուայլի, ինչպե՞ս եք համարձակվում ինձ կոչել անբա-րեկիրթ։

— Այդ ի՞նչ եք դուք տալիս,— ասաց նա։

— Դուք իրավունք չունեք ինձ անբարեկիրթ կոչելու,— ասացի ես։— Որտեղ ես ծնվել եմ, այնտեղ մարդիկ պարկեշտ են։

Չիկագոյում, իհարկե, բոլորը չեն պարկեշտ։ Նայած որ շրջանում, այնտեղ, որտեղ ես էի ապրում, մարդիկ իրենց քաղաքավարի էին պա-հում։ Ոչ միշտ, իհարկե, բայց և այնպես։ Եվ ես բարկացա։

— Իրավունք չունեք ասելու, թե ես ինձ անքաղաքավարի եմ պա-հում,— ասացի ես։

— Ինչ որտե՞ղ եք ծնվել դուք,— ասաց միստր Ուայլին։

— Չիկագոյում,— ասացի։— Իբր թե չգիտե՞ք։

— Ոչ,— ասաց նա։— Ինչ որ է։ Դուք դեռ շատ բան ունեք սովո-րելու։ Եվ ահա իմ խորհուրդը՝ շարժե կծել այն ձեռքը, որ կերակրում է ձեզ։

— Ես ոչ մի ձեռք չեմ կծել,— ասացի։

— Դուք հեռանում եք մեզանից, չէ՞,— ասաց նա։

— Այո, սըր,— ասացի,— ճշմարիտ է, հեռանում եմ։ Բայց ես ոչ ոքի չեմ կծել։

— Լավ, էլ ի՞նչ եք ուզում։

— Ես պարզապես ներս մտա հրաժեշտ տալու,— ասացի։— Ես պարզապես ուզում էի, որ դուք իմանաք, ես միանգամայն քաղաքավա-րի եմ։

— Լավ,— ասաց միստր Ուայլին։— Բարի ճանապարհ։

— Մնաք բարով,— ասացի ես։

Ապա դուրս եկա առանձնասենյակից և սկսեցի հրաժեշտ տալ միսիս Հիլպլին։ Մինչ նս խոսում էի նրա հետ, առանձնասենյակից դուրս եկավ միստր Ուայլին։ Միսիս Հիլպլին խիստ հուզվեց, երբ միստր Ուայլին երևաց գրասենյակում, բայց ես չդադարեցի խոսել։

— Միսիս Հիլպլի,— ասացի,— ես իմ ամբողջ կյանքում երազել եմ գնել մի «Հարլեյ-Դեվիդսոն» ու ման գալ զանազան տեղեր և երևի այդպես էլ կանեի, եթե ուզենայի ծառայության մեջ մնալ։ Բայց այնտեղ, որտեղ ես ծնվել եմ, ոչ մի տղամարդ իրեն թույլ չի տա ծառայության մեջ մնալ և իր համար «Հարլեյ-Դեվիդսոն» գնել, եթե նրա պատճառով հեռացնում են մի ուրիշին, որն աշխատանքի ավելի մեծ կարիք ունի։

— Այդ ի՞նչ բան է «Հարլեյ-Դեվիդսոն»-ը,— հարցրեց միստր Ուայլին։

— Մոտոցիկլետ,— ասացի։

— Այ թե ինչ,— ասաց նա։

— Եվ խնդրում եմ, միսիս Հիլպլի, չկարծեք, թե ես չեմ կարող տեղավորվել ինչպես հարկն է,— ասացի ես։— Կտեղավորվեմ, մի անհանգստացեք։

— Մոտոցիկլետն ի՞նչ եք անելու,— ասաց միստր Ուայլին։

— Քշելու եմ,— ասացի։

— Իսկ ի՞նչ նպատակով։

— Ման գալու, ճամփորդելու նպատակով։

— Դա ճամփորդելու ձև չէ,— ասաց միստր Ուայլին։

— Ամենալավ ձևերից մեկն է,— ասացի։— Դուք երևի երբեք չեք փորձել ճամփորդել մոտոցիկլետով։

— Ոչ, չեմ փորձել,— ասաց նա։

— Դա աննման բան է,— ասացի.— Լավ մոտոցիկլետը ժամում ութսուն մղոն է կտրում, էլ ի՞նչ է հարկավոր։ Միսիս Հիլպլի,— ասացի,— եթե ես երբևիցե մոտոցիկլետ ձեռք բերեմ իր սայլակով, երջանիկ կլինեմ հրավիրել ձեզ զբոսնելու Գոլդեն Գեյթ պուրակում, հենց միայն նրա համար, որ դուք պատկերացում ունենաք, թե ինչ հիանալի բան է մոտոցիկլետ քշելը։

— Շատ շնորհակալ եմ, Ջո,— ասաց միսիս Հիլպլին։

— Ցտեսություն,— ասացի ես։

— Ցտեսություն,— ասաց միսիս Հիլպլին։

— Ցտեսություն,— ասաց միստր Ուայլին։

Ես գրասենյակից դուրս եկա և սեղմեցի վրելակի կոճակը։ Վերելակը վարում էր հույն Ջորջը։

— Այդ ո՞ւր,— ասաց նա։

— Պորտլանդ,— ասացի։

— Պորտլա՞նդ։ Այդ ի՞նչ գործով, գրողը տանի։

— Չգիտեմ, հենց այնպես։

— Ի՞նչ է պատահել,— ասաց նա։

— Որոշեցի ծառայությունս թողնեմ։

— Այդպես հանկա՞րծ, ինչո՞ւ, գրողը տանի։

— Դուրս չի գալիս,— ասացի։— Էլ չեմ ուզում ննջեցյալներ որսալ։

— Խելքդ թռցրե՞լ ես,— ասաց նա։

— Ամենևին։

Վերելակից դուրս եկա, իջա փողոց ու քայլեցի Մարկեր սթրիթով։ Ինքս էլ չգիտեմ ինչպես պատահեց, հանկարծ ընկա «Հարլեյ-Դեվիդսոնի» խանութը, և ինձ ցույց տվին մի նոր նմուշ։ Վաճառողին հարցրի, թե չի՞ կարելի մի կես ժամով մեքենան վերցնեմ փորձելու։ Նա խոսեց գրասենյակում ինչ-որ մեկի հետ և ասաց, որ կարելի է, եթե ես մի քիչ փող թողնեմ։ Համենայն դեպս, ասաց նա։

Դե, իմ ձեռքին էլ չեկ կար, այնպես որ այդ չեկը տվի նրան։

Հիանալի մեքենա էր։ Ես ետ սլացա Մարկեր սթրիթով և կանգ առա հենց այն շենքի առաջ, որտեղ դեռ երեկ աշխատում էի։ Բարձրացա վերև և մտա միստր Ուայլի առանձնասենյակը։

Նա զարմացավ։

— Միստր Ուայլի,— ասացի,— այնտեղ, ներքևում ես մի սքանչելի «Հարլեյ-Դեվիդսոն» ունեմ։ Եթե ցանկանաք ինձ հետ զբոսնել, ես երջանիկ կլինեմ, ձեզ նստեցնելու իմ հետևը։ Թամբը շատ մեծ է, և ես էլ մի քիչ առաջ կքաշվեմ ու միանգամայն հարմար տեղ կբացվի։

— Ոչ մի մոտոցիկլետով զբոսնելու ցանկություն չունեմ,— ասաց միստր Ուայլին։

— Իսկ ես կարծում էի գուցե հանկարծ կուզենաք,— ասացի։

Ես դուրս եկա առանձնասենյակից, բայց և իսկույն ետ դարձա։

— Բայց գուցե ձեզ համար հետաքրքիր կլինի գոնե տեսնե՞լ մեքենան։

— Ոչ։

— Դե, ինչպես կուզեք։

Ես ցած իջա, նստեցի մոտոցիկլետը և քշեցի։ Ա՜յ թե մեքենա էր։ Շարժիչը հիանալի էր աշխատում։ Ես դուրս եկա ծովեզրի խճուղին, հիշեցի Մոնթերեյը ու մտքովս անցավ. միգուցե թափով քշեմ Մոնթերեյ, հասնեմ ու վերադառնամ, ու հետո միայն մոտոցիկլետը հանձնեմ խանութ և սկսեմ մի ուրիշ աշխատանք որոնել։ Հնարավոր է փողի մի

մասը նրանք ինձ ետ կտան, բաց թողի ամբողջ թափով։ Ա՛յ թե զբոսանք էր հա։ Ապրիլ ամիս։ «Հարլեյ-Դեվիդսոն»-ը իմ տակը, խաղաղ օվկիանոսը՝ կողքիդ։ Աշխարհ, քաղաքներ, մարդիկ, ծառեր։ Եվ ես մի ակնթարթում դղրդոցով հասա Մոնթերեյ։

Դա մի հրաշալի քաղաք էր։ Մի քանի հին շենք, նավեր։ Ձկնորսական նավեր։ Ձկան հրաշալի բուրմունք, առատ արև։ Ձկնորսներն իրար ձայն էին տալիս իտալերեն։ Ես «Հարլեյ-Դեվիդսոնով» նստած ամբողջ քաղաքի միջով, դուրս եկա ուղիղ ծովափի խոնավ ավազի վրա և մի քիչ էլ քշեցի հենց ափի եզրով։ Ծովորդիների մի երամ փախցրի, կանգ առա սրճարանի մոտ, երեք շնիցել կերա և երկու բաժակ սուրճ խմեցի։

Իսկ հետո ետ դարձա դեպի Ֆրիսկո։

Հրաշալի զբոսանք էր դա՝ և գնալը և գալը, իսկ մեքենան՝ ամենահիանալին իմ տեսածների մեջ։ Նա կարող էր կատարել ինչ որ ցանկանայի։ Կարող էր տանել ինձ ուզածս տեղը, կարող էր հետիոտն մարդուց էլ դանդաղ գնալ և կամ ավելի արագ, քան ամենաարագընթաց ավտոն խճուղու վրա։ Գրազ եմ գալիս, որ խճուղու վրա ես առնվազն վաթսուն մվլիոնատերերից առաջ անցա։ Ես այնպես էի անում, որ մեքենան փնչացնի։ Քշում էի զիգզագներով։ Քշում էի մի կողմի վրա թեքվելով։ Ես կարծեմ որ շատ ու շատ մարդկանց վախեցրի խճուղու վրա։ Մի ամբողջ մղոն քշեցի առանց ղեկը բռնելու։ Հետո քշում էի թամբի վրա կանգնած և ղեկից բռնած։ Մարդկանց թվում է, թե դա վտանգավոր է, բայց բոլորովին էլ վտանգավոր չէ, եթե ձևն իմանաս։

Ես հիանալի ժամանակ անցկացրի այդ «Հարլեյ-Դեվիդսոնով»։ Հետո վերադարձա խանութի բակը։

— Այդ որտե՞ղ էիք,— ասաց վաճառողը։

— Գնացել էի Մոնթերեյ,— ասացի։

— Մոնթերե՞յ,— ասաց նա։— Մենք չէինք կարծում, որ Մոնթերեյ կգնաք։ Մենք կարծում էինք, թե դուք պարզապես ուզում եք փորձել մեքենայի ընթացքը։

— Գիտե՞ք ինչ,— ասացի,— ես վաղուց ցանկանում էի այնտեղ գնալ։ Կարո՞ղ եմ ետ ստանալ իմ փողը։

— Իսկ դուք այդ մեքենան չե՞ք վերցնում։

— Որքան արժե,— ասացի ես։

— Երկու հարյուր յոթանասունհինգ դոլար։

— Ոչ,— ասացի,— մոտս այդքան փող չունեմ։

— Իսկ որքա՞ն կլինի։

— Հենց այն չեկն է, որ տվել եմ ձեզ, էլ չկա,— ասացի։— Այնտեղ տասներեք դոլար է։

— Մենք կարծում էինք դուք մոտոցիկլետը կգնեք,— ասաց նա։

— Անպայման կգնեի, եթե ծառայությունս թողած չլինեի,— ասացի։— Կարո՞ղ եմ իմ փողը ետ ստանալ։

— Չեմ կարծում,— ասաց վաճառողը։— Ես կխոսեմ կառավարիչի հետ։ Հարցնեմ։

Նա գնաց դրասենյակ, խոսեց, հետո վերադարձավ, հետն էլ մի մարդ։ Այդ մյուսը շատ հպարտ ու բարկացած տեսք ուներ։

— Չեմ հասկանում, դուք ի՞նչ եք մտածել,— ասաց նա,— որ մեքենան վերցրել ու գնացել եք Մոնթերեյ։

— Ի՞նչ,— ասացի։

Ես չգիտեի ինչ ասեմ։ Նա ի՞նքն ինչ էր մտածում, երբ ինձ հարցնում էր, թե ես ինչ եմ մտածել։ Ոչինչ էլ չեմ մտածել։

— Այդպես անել չի կարելի,— ասաց նա։— Մենք կարծում էինք դուք ուզում եք շրջել մի թաղամաս կամ որևէ մեկին ցույց տալ մեքենան։

— Ես հենց ոմանց էլ ցույց եմ տվել այն,— ասացի։— Կարո՞ղ եմ ետ ստանալ իմ փողը։

— Վախենում եմ, որ դեռ մի բան էլ դուք պիտի վճարեք,— ասաց կառավարիչը։— Դա նոր մեքենա է։ Վաճառքի համար։ Իսկ հիմա արդեն դարձել է բանեցրած։

— Գոնե փողի մի մասը կվերադարձնե՞ք,— ասացի։

— Ոչ,— ասաց կառավարիչը։

— Փառավոր մոտոցիկլետ է,— ասացի ես։

Դուրս եկա խանութից և ուղղվեցի տուն, իմ սենյակը, նույնիսկ չմտածելով, թե հիմա որտեղ պիտի աշխատանք գտնեմ։ Ախր շատ երջանիկ էի զգում ինձ Մոնթերեյ կատարած այդ ճամփորդությունից։

ՁՈՐՍ, ՀԻՆԳ, ՎԵՑ, ԴՈՒՌԸ ՄԵԿԵՆ ՓԱԿՎԵՑ

Այն տարին Ֆիլդինգ-ավենյուի վրա կանգնած էր մի հին, դեղին գույնով ներկված երկհարկանի տուն։ Մենք հաճախ գնում էինք այնտեղ, նստում շքամուտքի աստիճաններին, նայում անցնող մեքենաներին և այնպիսի տեսք ընդունում, ասես ապրում էինք այդ տանը։ Տունը մեծ էր, իսկ թե ում էր պատկանում՝ չգիտեինք։ Ջոնին այն ժամանակ ճիշտ ասաց միստր Ֆիկընսին, երբ նա մեզ բռնեց. մենք իսկապես ոչինչ չգիտեինք այդ տան մասին։

Այդ նույն տարին տունն այրվեց։ Մագի բնակիչները դեռ երբեք այդպիսի մեծ հրդեհ չէին տեսել։ Ամբողջ քաղաքը տեսավ, թե ինչպես է հին տունը վառվում։ Սեպտեմբեր ամսի մի ուշ երեկո էր, ցուրտ ու խավար, և հանկարծ աշնանային երկնքում բոլորը նկատեցին հրացոլք։ Ընթրիքի ժամն էր, ու մարդիկ, ընթրիքի սեղանը թողած, սլացան դեպի հրդեհի վայրը։ Ոմանք ոտքով, ոմանք հեծանվով, ոմանք մոտոցիկլետով, իսկ հարուստները՝ նույնիսկ ավտոմեքենաներով։ Շատ գեղեցիկ էր ու սարսափելի։ Երկինքը սև էր, և սև երկնքի վրա հրավառ բոցեր՝ ահ ու սարսափ։

Բոլորը իրար էին անցել և ուզում էին իմանալ, թե այդ ո՞վ արեց։ Շատերը բղավում էին։ Չնայած գիտեին, որ տան մեջ ոչ ոք չկա, բայց և այնպես բղավում էին։

Ես ու Ջոնին հաճախ էինք գնում այդ տունը և նստում շքամուտքի աստիճաններին։ Ջոնին նեգր էր, չնայած համարյա սպիտակ։ Ոչ ոք նրան չէր սիրում, նույնիսկ սեփական եղբայրները։

Բայց և այնպես տունը Ջոնին չէր վառել։

Նրան վախեցրին ու շատ հարցեր տվին, բայց ախր նա ոչ մի բան էլ չէր վառել։

Շերիֆ Ապլին այնպես վախեցրեց նրան, որ քիչ էր մնում Ջոնին ահից մեռնի։ Շերիֆն ուղղակի հարցրեց նրան.

— Դու ինչո՞ւ արիր այդ։

— Ես ոչինչ չեմ արել,— ասաց Ջոնին։— Ազնիվ խոսք։ Ինչո՞ւ պիտի վառեի միստր Ֆիկրնսի տունը։ Ես այդ չեմ արել։ Ում կուզեք՝ հարցրեք։

— Ում ուզե՞նք։ Օրինակ, ո՞ւմ։

— Կարող եք հարցնել Գլենին,— ասաց Ջոնին։

— Գլենի՞ն։ Այդ ի՞նչ Գլեն է, գրողը տանի։

— Գլեն Լայլը,— ասաց Ջոնին։

— Դու նկատի ունես դատավոր Լայլի որդո՞ւն,— ասաց շերիֆը։

— Այո, սըր,— ասաց Ջոնին։— Հարցրեք Գլենին՝ վառե՞լ եմ, թե ոչ։

— Իսկ Գլեն Լայլը ո՞րտեղից կարող է իմանալ։

— Գլեն Լայլը իմ ընկերն է,— ասաց Ջոնին։— Մենք նրա հետ միշտ միասին էինք նստում այնտեղ, աստիճանների վրա։

— Տեսքիցդ էլ երևում է, որ դու սևամորթ ես, չէ՞։

— Այո, սըր, սևամորթ եմ։

— Սակայն մոռացդ անսովոր է,— ասաց շերիֆը։— Դու դատավոր Լայլի որդուն ի՞նչ ընկեր։ Էլի փչում ես, երևի։

— Ոչ, սըր,— ասաց Ջոնին,— ինքներդ հարցրեք Գլենին։ Նա ձեզ կասի։

Ջոնին ամբողջովին քրտնքի մեջ էր, երբ ես մտա շերիֆի առանձնասենյակը։ Կեսգիշերից հետո հրդեհն արդեն հանգցրել էին, բայց այնտեղ ամեն ինչ դեռ ծխում էր։

— Դու Գլեն Լա՞յլն ես,— ասաց շերիֆը։

— Այո, սըր։

— Դատավոր Լայլի որդի՞ն։

— Այո, սըր։

— Ճանաչո՞ւմ ես այս սևամորթին,— ասաց շերիֆը։

— Ճանաչում եմ,— ասացի։— Սա Ջոնին է։

— Այ, տեսնո՞ւմ եք,— ասաց Ջոնին։

— Ո՞րտեղից ես ճանաչում այս սևամորթին,— ասաց շերիֆը։

— Նրա հայրը մեր այգեպանն է,— ասացի ես։

— Այս սևամորթը քեզ ի՞նչ ընկեր։

— Այ, հարցրեք նրան, հարցրեք՝ ե՞ս եմ վառել տունը, թե ոչ,— ասաց Ջոնին,— նա ձեզ կասի։ Գլեն, ես ե՞մ արել։

— Այս սևամորթը քեզ ի՞նչ ընկեր,— ասաց շերիֆը։

Նա կարող էր վախեցնել Ջոնիին, միայն ոչ ինձ։ Կարծես ինձ համար միևնույնը չէ, թե Ջոնիի մաշկն ինչ գույնի է։ Թող Ջոնին սևամորթ լինի, չնայած ծնվել է սպիտակ հորից։ Թող նա սևամորթ լինի, դրանից ի՞նչ է փոխվում։ Ջոնի Բրուկլինը իմ ընկերն էր, որովհետև մենք միասին էինք մեծացել։ Ջոնիին մեծացնող սևամորթ հայրը մեր այգեպանն էր՝ որքան որ ես ինքս ինձ հիշում եմ։ Ջոնիի հետ ես միշտ էլ ընկերություն եմ արել։

— Իմ կարծիքով ես կարող եմ ընկեր ընտրել ում որ ուզում եմ,— ասացի ես։

— Իսկ քո հորը հայտնի՞ է, որ ընկերդ սևամորթներից է,— ասաց շերիֆը։

— Եթե դա նրան հայտնի չէ, ուրեմն էլ ինչն է հայտնի։

— Էլ ինչն է հայտնի՞,— ասաց Ջոնին։— Միստր Ապլի, սըր, հարցրեք Գլենին՝ վառե՞լ եմ ես այդ տունը։

— Ասա, այս սևամորթը վառե՞լ է միստր Ֆիկընսի տունը,— հարցրեց շերիֆը։

— Ոչ ավել, քան ես ու դուք,— ասացի ես։

— Լսիր,— ասաց շերիֆը,— միգուցե ավելի քաղաքավարի պատասխանես։ Դու իրավունք չունես ինձ հետ այդպես անպատկառ խոսել միայն նրա համար, որ դատավոր Լայլի որդին ես։ Չէ՞ որ առանց այդպիսի ձևերի էլ կարելի է ճշմարտությունն ասել, հը՞, ինչ ես կարծում։

— Նա ոչ մի բան չի վառել,— ասացի ես։

— Հապա ո՞վ է վառել,— ասաց շերիֆը։

Ես գիտեի, թե ով, բայց չուզեցի խոսել։ Մեկ է, դրանից ոչինչ չէր փոխվի։

— Ի՞նչ իմանամ,— ասացի ես։— Ջոնին որ այդ չի արել։

— Դուցե հենց դո՞ւ ես արել,— ասաց շերիֆը։

— Ոչ ավել, քան դուք,— ասացի ես։

Իմ խոսելու ձևը շերիֆին դուր չեկավ։ Նա, իհարկե, համոզված էր, որ ինձ հայտնի է, թե ով է արել այդ, բայց դա նույնքան լավ հայտնի էր նաև իրեն։ Նա ինձանից վատ չգիտեր, որ ինքը միստր Ֆիկլընսն էր վառել իր տունը։ Պատճառը շերիֆը նույնպես գիտեր։ Ամեն մարդ, որ քիչ թե շատ ծանոթ էր միստր Ֆիկլընսին, նրա հին տանը և ինը տարի առաջ այնտեղ կատարված դեպքերին, երբեք չէր կասկածի, որ միստր Ֆիկլընսը ինքն է հրդեհել իր տունը։

Եվ քանի որ Ֆիկլընսը մեռել էր, նրանք որոշել էին ամբողջ հանցանքը գցել Ջոնի Բրուկլինի վրա միայն նրա համար, որ նա բաց մաշկով նեգր էր։ Երբ նրանք ջարդեցին «Ջեֆերսն» հյուրանոցի համարի դուռը և այնտեղ Ֆիկլընսին մեռած գտան, որոշեցին, որ կարելի է մեղքը Ջոնիի վրա բարդել։ Հը՞մ, սխալվում էին։

— Դու ինձ, խնդրեմ, անպատկառ պատասխաններ մի տուր,— ասաց շերիֆը։— Ես այստեղի շերիֆն եմ, գրողը տանի, ու թույլ չեմ տա, որ ինչ-որ տասը տարեկան լակոտ ինձ հետ այդ լեզվով խոսի։

— Ես տասնմեկ տարեկան եմ,— ասացի։

— Մեկ է՝ տասը թե տասնմեկ, ես այդ թույլ չեմ տա։ Ծեղդ նստիր և մարդավարի պատասխան տուր։ Հանցագործություն է կատարված, և իմ պարտքն է գտնել հանցագործին։

— Բայց ես և Ջոնին մեղք չունենք։

— Դու հաճախ ես այս սեամորթի հետ գնացել այնտեղ, նստել տան շեմին, թրև եկել բակում, ճի՞շտ է։

— Ճիշտ է։ Ամառվա արձակուրդների ժամանակ համարյա ամեն օր,— ասացի ես։

— Այ, հիմա մարդավարի ես խոսում,— ասաց շերիֆը։— Ես պարտավոր եմ կատարել իմ պարտքը և կկատարեմ։ Հասկանում եմ, որ գիշեր է, և դու վաղուց պիտի անկողնում լինեիր, բայց ես կատարում եմ իմ պարտքը։ Մեր քաղաքում դեռ սրա նման հրդեհ երբեք չէր պատահել։

— Տեսա,— ասացի ես։

— Կարծում եմ, բոլորն էլ տեսան,— ասաց շերիֆը։

Առանձնասենյակում լռություն տիրեց։ Դրսում, մարգախոտերի մեջ խմբվել էին քսան-երեսուն մարդ։ Նրանք պարզապես սպասում էին իմացվի, թե դա ում արածն է, որպեսզի մեղավորին շերիֆի մոտից իրենց ձեռքն ընեն։ Այստեղ գալիս ես լսեցի նրանց խոսակցությունը։ Նրանք Ջոնի Բրուկլինի անունն էին տալիս։ Նրանց համար դա բավականություն էր։ Սպիտակները ատում էին Ջոնիին բաց մաշկ և սպիտակ հայր ունենալու համար, նեգրերն էլ՝ նույն բանի համար։

Ջոնին սարսափելի ահաբեկված էր։ Առանձնասենյակում միայն ես ու Ջոնին էինք, մեկ էլ շերիֆ Ապլին ու իր օգնական Թեդ Հրովը։ Թեդը ոչ մի խոսք չէր ասում, որովհետև գիտեր, թե տունն ով է հրկիզել, և նրա սրտով չէր, որ շերիֆն այդպես վախեցնում է փոքրիկ նեգրին. ինչ է թե նրա մաշկը թուխ է և մեկ էլ որ նրա հարազատ հայրը միստր Ֆիկընսն է եղել։ Թեդը նստել էր իր սեղանի մոտ, ծխախոտ էր ծամում և մի գլուխ թքում թքամանի մեջ։

— Այդ հրդեհը ամբողջ քաղաքը իրարանցման մեջ է դրել,— ասաց շերիֆը։

— Ես մեղավոր չեմ,— ասաց Ջոնին։— Կարելի՞ է տուն գնամ։

— Ավելի լավ է դու ինձ հետ գաս,— ասացի ես։

— Ոչ, հարկ կլինի մի քիչ էլ նստել,— ասաց շերիֆը։— Այնտեղ, դռան ետևը մի խումբ ապուշներ են հավաքվել։ Նրանք կարծում են, որ տունը դու ես վառել։ Ես դեռ ստիպված պիտի լինեմ գլուխ դնել այդ ավանակների հետ։ Հանգիստ նստիր։ Եթե դու անմեղ ես, ոչ ոք չի կարող քեզ մատով դիպչել։ Ես ուզում եմ միայն, որ դատավոր Լայլի որդին մարդավարի պատասխանի ինձ։

— Ես այդպես էլ պատասխանում եմ, միստր Ապլի,— ասացի ես։

— Ինձ միայն այդ էլ հարկավոր է,— ասաց շերիֆը։— Այնքան էլ հաճելի չէ, երբ լինչահարում են տարեց նեգրին, իսկ հիմա՝ խնդրե՞մ, տասը տարեկան երեխա։

— Եթ տասնմեկ տարեկան եմ,— ասաց Ջոնին։

— Մեկ է՝ տասը թե տասնմեկ, ես թույլ չեմ տա, որ իմ քթի տակ այդպիսի բան կատարվի։ Ես կզբաղվեմ այդ խուլիգաններով, եթե հարկ լինի, մենք Թեդի հետ նրանց կքշենք տները։

Թեդը ծամոնը թքեց ու բերանը սրբեց ձեռքով։

— Ինչո՞ւ էիր այս սևամորթի հետ գնում այնտեղ,— հարցրեց ինձ շերիֆը։

— Չգիտեմ,— ասացի ես։— Արձակուրդներին մենք միասին չափչփում էինք փողոցները և մի անգամ նկատեցինք այդ դեղին տունը։ Բարձրացանք ու նստեցինք շքամուտքի աստիճաններին։ Մեծ տուն էր,

ամեն օր գալիս նստում էինք շեմքին ու նայում անցնող ավտոմեքենա-ներին։

— Դե, այ հիմի ուրիշ բան։ Այի ամեն ինչ կարգով պատմիր։ Ես մտադիր եմ ամբողջ գիշեր ձեզ պահել այստեղ։ Երբ վերջացնենք, ես այդ խուլիգաններին իսկույն կցրեմ, իսկ ձեզ մեքենայով տուն կհասցնենք։

— Ես կարծում եմ, Ջոնիին տուն գնալ չի կարելի,— ասացի ես,— ավելի լավ է թող այս գիշեր նա մեզ մոտ քնի։

— Ինչպես ուզում ես։ Դե, շարունակիր պատմել։

— Ահա, ուրեմն,— ասացի ես։— Մի անգամ մենք ուզեցինք մտնել տուն, տեսնել, թե ներսում ինչ կա։ Շքամուտքի դուռը քաշեցինք՝ փակ էր։ Փորձեցինք ետևի դռնից, այնտեղ էլ փակ էր։ Ես բարձրացա Ջոնիի ուսերին, բացեցի պատուհանը, և մենք տուն մտանք։

— Հետո՞։

— Ներսը շատ սիրուն էր։ Անթիվ սենյակներ, պատերին՝ նկարներ, իսկ դահլիճում նվագարան կար։ Հիմա բոլորը այրված կլինի։

— Շարունակիր,— ասաց շերիֆը։— Նվագարան, հետո՞։

— Հետո ոչինչ։ Մեկ-մեկ նվագարանը պտտեցնում էինք։ Հին ձևի էր, ոչ էլեկտրական։ Մեկ ես էի պտտեցնում, մեկ՝ Ջոնին։ Մենք չգիտեինք, որ տերը միստր Ֆիկընսն էր։ Չգիտեինք, թե դա ում տունն է։ Մեկ-մեկ Ջոնին ասում էր. «Ինչ ես կարծում, այս հիանալի տունն ո՞ւմն է։ Ո՞նց է, որ ոչ մի մարդ չի ապրում այսպիսի լավ տան մեջ»։

— Դու այդպես հարցրե՞լ ես,— դիմեց շերիֆը Ջոնիին։

— Այո, սըր,— պատասխանեց նա։— Այդպիսի մեծ տուն, այդքան սիրուն իրեր, և մարդ չէր ապրում։

— Չեմ կարծում, թե դու դրա պատճառն իմանաս,— ասաց շերիֆը։

— Չէ, չգիտեմ,— ասաց Ջոնին։

Շերիֆը նայեց Թեդ Հրովրին, և Բեդը թքեց թքամանի մեջ։

— Լավ,— ասաց շերիֆը,— շարունակիր։

— Մի անգամ մենք տան ներսում էինք, շեմքին քայլեր լսվեցին։ Ուզեցինք ծլկել ետնամուտքից։ Այդ ամբողջ օրը մենք նվագարանն էինք նվագում։ Պարզվեց, որ դա միստր Ֆիկընսն է։ Մենք փախչում էինք ամբողջ թափով, բայց ցանկապատի մոտ նա հասավ մեզ։ Բարկացած բղավում էր։ «Ի՞նչ էիք անում իմ տանը, հիմար լակոտներ»։ Իսկ Ջոնին ասաց նրան. «Մենք չգիտեինք, որ սա ձեր տունն է։ Մենք ընդհանրապես ոչինչ չգիտենք»։

— Իսկ նա ի՞նչ ասաց,— հարցրեց շերիֆը։

— Սկզբում շատ չարացավ։ Նույնիսկ խփեց Ջոնիի երեսին։

— Նա երեսիդ խփե՞ց։

— Այո, սըր,— ասաց Ջոնին։

Շերիֆը նորից նայեց Թեդ Հրովրին, և Թեդը նորից թքեց։

— Իսկ հետո,— ասացի ես,— միստր Ֆիկընսն սկսեց ինչ-որ ծիծաղելի բաներ անել։

— Ի՞նչ ասել է՝ ծիծաղելի բաներ։

— Մի խոսքով, թվաց, թե նա լաց է լինում, բայց չէ, լաց չէր լինում, ուղղակի ինքն իրեն խոսում էր։

— Ի՞նչ էր խոսում։

— Ինչ ասես, հիմա արդեն մոռացել եմ։ Հիշում եմ միայն, որ ասաց, թե չէր ուզում Ջոնիին խփել, զղջում է։ Հետո մեզ խնդրեց իր հետ տուն վերադառնալ։ Այնտեղ նա իրեն հանգիստ էր պահում։ Փակեց այն դահլիճի դուռը, որտեղ նվագարանն էր, և ասաց. «Չորս, հինգ, վեց, դուռը մեկեն փակվեց»։

— Չորս, հինգ, վեց, դուռը մեկեն փակվե՞ց,— հարցրեց շերիֆը։

— Այո, սըր,— ասացի ես։

— Այո, սըր,— ասաց իմ ետևից Ջոնին։

Պատին կախված ժամացույցը բարձր չկկում էր. գիշերվա մոտ ժամը մեկն էր։ Ես շատ էի ուզում քնել, բայց Ջոնին վախից մոռացել էր քնի մասին։

— Այո, սըր,— ասաց նա,— չորս, հինգ, վեց, դուռը մեկեն փակվեց։

— Իսկ հետո ի՞նչ եղավ։

— Հետո,— ասացի ես,— միստր Ֆիկընսը նստեց ու սկսեց նայել իր շուրջը, զննեց նվագարանը, գորգը, աթոռները, և՛ հատակը, և՛ պատերը, և՛ առաստաղը, ապա վեր կացավ, մոտեցավ մի շատ սիրուն աղջկա դիմանկարի ու նորից սկսեց ինչ-որ տարօրինակ բաներ անել ու ինքն իրեն խոսել։

— Այդ ո՞ւմ դիմանկարն էր,— հարցրեց շերիֆը։

— Երևի, կնոջ։

— Չեմ կարծում, թե դու գիտենաս, որ նրա կինը մեռել է ինը տարի առաջ,— ասաց շերիֆը։

Ես գիտեի, գիտեի նաև, թե շերիֆը հիմա ինչ է մտածում։ Ես նայեցի նրան, ապա Ջոնիին։ Թեդ Հրովրը ճռճռացրեց աթոռն ու թքեց։

— Եվ հավանաբար չգիտես, թե Գրեյս Ֆիկընսը ինչից մեռավ,— ասաց շերիֆը։

Ես գիտեի, որ նա ինքնասպանություն էր գործել, գիտեի նաև, թե

ինչու, բայց չէի ուզում, որ Ջոնին այդ բոլորն իմանա։ Առանց այդ էլ նրա քաշածը հերիք էր։

Ես չպատասխանեցի, և այդ ժամանակ Թեդ Հրովրն ասաց.

— Լավ, Գլեն, շարունակիր պատմել շերիֆին, թե բանն ինչպես եղավ։

Ես շարունակեցի իմ պատմությունը, բայց հանկարծ կանգ առա, որովհետև Ջոնին ոտքի թռավ, դրսից լսվեցին բարձր ճիչեր ու դռան թակոց։ Շերիֆը վերցրեց իր մեծ ատրճանակը, Թեդ Հրովրը նույնպես։

— Գրողը տանի դրանց, այդ խուլիգաններին,— ասաց շերիֆը։— Թեդ, գուցե ավելի լավ է դուրս գանք ու դրանց քշենք տնե՞րը։

— Այո,— ասաց Թեդը։

— Իսկ դուք, տղաներ, հանգիստ մնացեք,— ասաց շերիֆը։— Այստեղից ոչ մի քայլ, լսո՞ւմ եք։ Այդ նեգրին ոչ ոք ճկույթով անգամ չի դիպչի։ Համենայն դեպս քանի դեռ այստեղ շերիֆը ես եմ։

Շերիֆ Ապլին և Թեդ Հրովրը գուրս եկան սենյակից, դուռը փակելով ետևներից։ Մենք լսեցինք, թե նրանք միջանցքով ինչպես էին գնում դեպի ելքը։ Գիտեինք, որ դուռը սողնակով փակած է, բայց սարսափում էինք։ Ինձ դուր չէին գալիս փողոցից հասնող ճիչերը։

— Նրանք ինձանից ի՞նչ են ուզում,— ասաց Ջոնին։

— Մի վախենա, ոչինչ,— ասացի ես։— Նրանք քեզ ոչինչ չեն անի։

Նա շատ հոգնած էր ու վախեցած, շրթունքները դողդոջ էին, թվում էր, թե ահա ուր որ է լաց կլինի։

— Ավելի լավ է ես աշխարհ չգայի,— ասաց նա։

— Բան չկա,— ասացի՝ ես։— Շերիֆն ու Թեդ Հրովրը այդ հիմարի գլուխներին իսկույն կքշեն։

Մենք լսում էինք, թե ինչպես էր շերիֆ Ապլին բղավում դռների ետևում և ինչպես էին նրան պատասխանում նույնպիսի գոռգոռոցով։

— Ես ոչ նեգր եմ, ոչ էլ սպիտակ,— ասաց Ջոնին։

— Դու կարող ես մնալ մեզ մոտ,— ասացի՝ ես։— Ապրիր, մինչև որ մեծանաս, հետո կարող ես գնալ։

— Նրանք ինչո՞ւ են ուզում ինձ սպանել,— ասաց Ջոնին։— Չէ՞ որ ես ոչինչ չեմ արել։

— Խելագարներ են,— ասացի՝ ես։— Բայց շերիֆը թույլ չի տա։

— Իսկ ինչո՞ւ միստր Ֆիկլենն իրեն սպանեց։

— Քեզ ո՞վ ասաց։

— Շերիֆը։ Գլեն, ինչո՞ւ նա իրեն սպանեց։

— Չգիտեմ։

— Լավ մարդ էր,— ասաց Ջոնին։— Չնայած նա ինձ խփեց, բայց լավ մարդ էր։

Ես չպատասխանեցի, երկուսով էլ ականջ էինք դնում փողոցի ճիչերին։ Հանկարծ ամբոխն սկսեց ավելի ուժգին ծեծել դուռը։ Ջոնին դեսուդեն էր նետվում սենյակում, թաքնվելու տեղ փնտրելով։

— Ի՞նչ անեմ,— հարցրեց նա։

Հետո իրար ետևից լսվեցին ատրճանակի չորս կրակոցներ, և մարդիկ սկսեցին առաջվանից ավելի թունդ բղավել։ Կարծես էինք, թե նրանք ինչպես էին դռան վրա ընկած հուպ տալիս։ Վերջապես դուռը չդիմացավ, և ինչ-որ ահավոր բան սկսվեց. բոլորը դոփյունով վազեցին միջանցքի երկարությամբ։ Այն ժամանակ մենք բացեցինք պատուհանը, թռանք մարգախոտերի վրա ու վազեցինք։ Բակը բոլորովին ամայի էր, և մենք վազում էինք ամբողջ թափով, սկզբում բակի միջով, ապա Բեյքր սթրիթով։ Փողոցները մութ էին, դատարկ։ Մենք այդպես վազեցինք մինչև մեր տուն, կտրելով վեց թաղամաս։ Հայրիկս դահլիճում նստած խոսում էր մեր այգեպան Սեմ Բրուկլինի՝ Ջոնիի սևամորթ հոր հետ։

— Նրանք ջարդեցին դուռը,— ասացի ես։— Իսկ ես ու Ջոնին պատուհանից թռանք ու փախանք։

Հայրս մոտեցավ հեռախոսին և սկսեց զանգել շերիֆին։ Նա զանգեց յոթ անգամ, ի վերջո ինչ-որ մեկը պատասխանեց։ Դա ոչ շերիֆն էր, ոչ Թեդը։ Հայրիկը լսում էր նրանց աղմուկն ու գոռգոռոցը, այնպես որ առանց խոսելու լապտերը կախեց։ Նա կարգադրեց Սեմին գնալ ավտոտնակ և դուրս բերել մեքենան։ Սեմը վազեց դեպի բակ, իսկ հայրիկս ինձ ու Ջոնիին վերարկու հագցրեց և ինքն էլ սկսեց հագնվել։ Դուրս եկանք տնից, նստեցինք մեքենա, ես ու Ջոնին հորս հետ առջևի նստատեղում, իսկ Սեմը՝ ետևի։ Հայրս հրացանն ու երկու ատրճանակը տվեց նրան։

— Պատրաստ պահիր,— ասաց հայրս։

Մեքենան շարժվեց տեղից, և շուտով մենք խճուղու վրա էինք. մենք սլանում էինք դեպի հյուսիս ժամը յոթանասուն մղոն արագությամբ։ Ոչ ոք մեզանից որևէ խոսք չասաց։

ՖԻԼԻՊԻՆՑԻՆ ՈՒ ՀԱՐԲԱԾԸ

Ուղտի մորթուց մուգ վերարկու հագած այդ գոռգոռացող տղամարդը իրականում վատը չէր, նա հարբած էր։ Նրան, չգիտես ինչու, դուր չեկավ փոքրիկ, լավ հագնված Ֆիլիպինցին, և նա սկսեց կոպտել Ֆի-

լիպինցուն դեռ սպասասրահում՝ ասելով, որ հեռու գնա և չխառնվի սպիտակներին։ Նրանք սպասում էին Օքլենդ մեկնող նավին։ Եթե նա հարբած չլիներ, հազիվ թե որևէ մեկը նկատեր նրան, բայց քանի որ հարբած էր, իրարանցում էր առաջացնում սպասասրահում։ Եվ, չնայած, թվում էր թե բոլորը կարեկցում են ֆիլիպինցուն, համենայն դեպս ոչ մեկը մտադիր չէր միջամտել, և խեղճ տղայի սիրտը արդեն վախ էր ընկնում։

Նա մարդկանց մեջ կանգնած էր, երբ հարբածը նորից սկսեց բղել նրան՝ ասելով. «Քեզ չասեցի՝ հեռու գնա։ Դե, դուրս կորի։ Քաշվի էստեղից։ Ես քսանչորս ամիս կռվել եմ Ֆրանսիայում։ Ես իսկական ամերիկացի եմ։ Չեմ ուզում, որ դու ցցվես աչքիս առաջ, սպիտակների կողքին»։

Տղան ետ քաշվեց և ամեն կերպ աշխատում էր խույս տալ հարբածից՝ արագ-արագ առաջանալով ամբոխի միջով։ Նա ոչինչ չէր պատասխանում և ջանում էր երևալ որքան կարելի է համեստ ու քաղաքավարի։ Նա մերթ կորչում էր ամբոխի մեջ, մերթ հայտնվում, սակայն, չէր կարողանում ճողոպրել հարբածի տեսադաշտից։ Իսկ հարբածի սրտում բուռ ատելությունը գնալով ավելի ու ավելի էր աճում և նա սկսեց հայհոյել տղային։ Նա շարունակ կրկնում էր. «Դուք, կեղտոտներդ Սան Ֆրանցիսկոյում բոլորից լավ եք հագնվում։ Դուք ման լվալով եք ձեր փողը սարքում։ Դուք ո՞վ եք, որ էդպես հագնվեք»։

Նա այնքան հայհոյեց, որ այլևս հնարավոր չէր դիմանալ և կանանցից շատերը ստիպված եղան ձևացնել, որ իրենք խուլ են և նրա ասածները պարզապես չեն լսում։

Երբ դուռը բացվեց, երիտասարդ ֆիլիպինցին սկսեց աննկատ առաջ շարժվել ամբոխի հետ՝ խույս տալով հարբածից և նավ բարձրացավ բոլորից շուտ։ Նա վազեց դեպի նավի մի անկյունը, նստեց մի վայրկյան, հետո ոտքի ելավ և սկսեց թաքնվելու համար ավելի հարմար տեղ փնտրել։

Նավի մյուս ծայրից ականջին էին հասնում հարբածի հայհոյանքները։ Ֆիլիպինցին տեղ էր փնտրում թաքնվելու։ Վերջապես նկատեց զուգարանը, վազեց այնտեղ, մտավ ազատ խցերից մեկը և փակվեց։

Հարբածը մտավ զուգարան և սկսեց սրան-նրան հարցնել՝ չե՞ն տեսել արդյոք տղային, ընթացքում գոռալով, որ ինքն իսկական ամերիկացի է, որ երկու անգամ վիրավորվել է համաշխարհայինի ժամանակ։

Զուգարանում նա ավելի սանձարձակորեն էր հայհոյում՝ օգտագործելով բառեր, որ երբեք չէր ասի կանանց ներկայությամբ։ Նա սկսեց

կռանալ ու նայել փակ դռների ճեղքերից ներս, ասելով «կներեք» նրանց, ում չէր փնտրում, իսկ երբ գտավ խուցը, որտեղ տղան էր կանգնած, սկսեց հայհոյել և պահանջել, որ նա դուրս գա այնտեղից։

— Դու ինձնից չես ազատվի։ Դու իրավունք չունես մտնես էնտեղ, որտեղ սպիտակները։ Դուրս արի, թե չէ դուռը կջարդեմ։

— Հեռացիր,— ասաց տղան։

Հարբածը սկսեց հարվածել դռանը։

— Վերջ-առաջ պիտի դուրս գաս։ Ոչինչ, կսպասեմ։

— Հեռացիր,— ասաց տղան։— Ի՞նչ ես ուզում ինձնից։

Նա զարմանում էր, թե ինչու զուգարանում եղածներից որևէ մեկը չի փորձում զսպել հարբածին, դուրս տանել։ Հետո հասկացավ, որ զուգարանում իրենից բացի ուրիշ մարդ չկա։

— Հեռացիր,— ասաց տղան։

Հարբածը ի պատասխան նորից հայհոյեց՝ հարվածելով դռանը։

Դռան մյուս կողմում տղայի բարկությունը տեղի էր տալիս զայրույթի։ Նա սկսեց դողալ՝ վախենալով ոչ թե հարբածից, այլ կատաղությունից, որ ծնունդ էր առնում իր ներսում։ Նա գրպանից հանեց դանակը, դուրս քաշեց սուր շեղբը։ Դանակն այնքան ամուր էր սեղմել ձեռքում, որ մատների եղունգները խրվել էին ափի փափուկ մսի մեջ։

— Հեռացիր, ասում եմ։ Մոտս դանակ կա։ Չեմ ուզում գլխիս փորձանք բերել։

Հարբածը կրկնում էր, որ ինքն ամերիկացի է։ Քսանչորս ամիս կռվել է Ֆրանսիայում։ Երկու անգամ վիրավորվել։ Մի անգամ ոտքից, մի անգամ՝ կոնքից։ Նա չի հեռանա։ Նա չի վախենում ինչ-որ մի կեղտոտ դեղնափոր ֆիլիպինցուց ու նրա դանակից։ Թող փորձի դուրս գալ։ Ինքն ամերիկացի է։

— Ես քեզ կսպանեմ,— ասաց տղան,— չեմ ուզում մարդ սպանել։ Դու հարբած ես, հեռացիր դռան մոտից։

— Խնդրում եմ, հեռու գնա, գլխիս փորձանք մի բեր,— լուրջ ասաց տղան։

Տղայի ականջին հասնում էր նավի շարժիչի ձայնը, սաստկանալով նրա ներսում սաստկացող կատաղության հետ մեկտեղ։ Տղան զգում էր, որ իրեն ստորացրել են, գետապնդել ու ստիպել թաքնվել ու հիմա նրա միակ ցանկությունն էր՝ ազատվել այդ վիճակից, թեկուզև մարդ սպանելու գնով։ Նա հրեց դուռը և փորձեց դուրս փախչել՝ դանակն ափի մեջ ամուր սեղմած, բայց հարբածը բռնեց նրա թևքից և ետ քաշեց։ Պիջակի թևքը պատռվեց ու կախ ընկավ։ Տղան շրջվեց և դանակը խրեց հարբածի կողը, զգալով, թե այն ինչպես քերծեց կողոսկրը։ Հարբածը

գոռաց ու բռնեց տղայի կոկորդից։ Տղան նորից դանակը խրեց հարբածի մարմնի մեջ և այդպես մի քանի անգամ, այնպես, ինչպես բռընցքամարտիկն է բռունցքով հարվածներ տեղում։

Երբ հարբածի թևերը թուլացան ու նա փռվեց գետնին, տղան դուրս փախավ զուգարանից՝ դանակը, որի ծայրից արյուն էր կաթում, ափի մեջ սեղմած, առանց գլխարկի, մազերը խռնված և պիջակի թևքը անդուր կախված։

Բոլորը հասկացան, թե նա ինչ է արել, բայց ոչ մեկը տեղից չշարժվեց։

Տղան վազեց դեպի նավի առաջամասը՝ փախչելու տեղ փնտրելով, հետո շրջվեց, վազեց դեպի անկյունը։ Ոչ ոք չէր համարձակվում խոսել նրա հետ, և սակայն, չկար մարդ, որ անտեղյակ լիներ կատարվածին։

Փախչելու տեղ չկար, և մինչ կգային նրան տանելու, նա կանգնեց կենտրոնում ու սկսեց գոռալ մարդկանց վրա.

— Ես չէի ուզում մարդ խփել, ինչո՞ւ ոչ ոք չզսպեց նրան։ Ինչո՞ւ էր, կարծես առնետ տեսած, ետևիցս ընկել։ Տեսնում էիք, որ հարբած է։ Ես չէի ուզում նրան խփել, բայց նա ինձ հանգիստ չէր տալիս։ Նա պատռեց պիջակս և ուզում էր խեղդել ինձ։ Ես զգուշացրի, որ կսպանեմ, եթե չհեռանա։ Ես մեղավոր չեմ։ Ես պետք է Օքլենդ գնամ՝ տեսնելու եղբորս։ Հիվանդ եղբորս։ Մի՞թե ես գլուխս փորձանքի տակ կդնեի, երբ եղբայրս հիվանդ է։ Ես չէի ուզում մարդ խփել։ Ինչո՞ւ ոչ ոք չզսպեց նրան։

ՀԱՆՃԱՐԸ

Մի օր երեկոյան Իզիի գարեջրատանը ինձ մոտեցավ վելվետե շալվարով մի երիտասարդ հանճար և ասաց.

— Լսել եմ, որ դուք գրող եք։ Ես մի լավ պատմություն ունեմ մտքումս, որից հրաշալի ֆիլմ դուրս կգա, միայն թե հարկավոր է փորձառու մեկը, որ շարադրի այն։ Ես ինքս կգրեի, բայց աշխատում եմ, իսկ աշխատանքից հետո չափազանց հոգնած եմ լինում որևէ բան գրելու համար։

Ես մի թեթև խմած էի, բայց դե երբեք այն աստիճան խմած կամ զբաղված չեմ լինում, որ չլսեմ որևէ գրող ընկերոջ, այնպես որ ասացի.

— Դե, լսում եմ, սկսիր պատմությունդ։ Թե քանի նման է, կգրեմ,

իսկ հետո միասին կտանենք «Մետրո-Գոլդվին-Մեյեր» ու ֆիլմ կսարքենք։ Ինչի՞ մասին է։

Եթե դուք երբևէ պատմվածք եք տպագրել ամերիկյան որևէ հայտնի ամսագրում և այդ առիթով գնացել-եկել եք խմբագրատուն, ապա հանդիպած կլինեք ամենատարբեր զբաղմունքի տեր մարդկանց, իրենց պատմություններով, որոնցից կարելի է հրաշալի ֆիլմեր սարքել։ Աշխարհը լինքն է կինոթեմաներ ունեցող մարդկանցով, բայց թվում է, թե ֆիլմ արտադրողները երբեք չեն հանդիպում նրանց, իսկ եթե հանդիպում էլ են, ապա երբեք չեն լսում նրանց պատմությունները, դրա համար էլ արտադրվող ֆիլմերի մակարդակը բանի պետք չէ, նույնիսկ գունավորներինը, նույնիսկ երբ գլխավոր դերերում հանդես են գալիս այնպիսի աստղեր, ինչպիսիք են Քլարք Գեյբլը, Ջոն Բարիմորը, Նորմա Շիրերը կամ մեկ ուրիշը։ Ստացվում է, որ ֆիլմ արտադրողները առանձնապես մտահոգված չեն դրանց մակարդակով։

Ինչի գարեջրատանը մի երեկոյի ընթացքում առնվազն ութսունյոթ հրաշալի ֆիլմ է պատմվում, բայց դրանցից ոչ մեկը երբևէ չի նկարահանվում։

Ես ասացի տղային, որ սկսի իր պատմությունը։

— Սկզբից սկսե՞մ,— հարցրեց նա։

— Պարտադիր չէ,— ասացի,— որտեղից կուզես, սկսիր։ Ուզում ես վերջից սկսիր ու պատմելով հասիր սկզբին։ Նույնիսկ կարող ես նստել, եթե ուզում ես։

— Չէ, շնորհակալություն,— ասաց նա,— ավելի լավ է կանգնած։

— Մի շտապիր, հանգիստ պատմիր,— ասացի ես։

— Շատ բան չկա պատմելու,— ասաց նա,— եղած-չեղածը սա է։ Ասում է՝ վերջ, պիտի մի բան արվի։ Ամբողջ կյանքս հո գրասենյակում քարշ չե՞մ գալու։ Նավ է նստում ու մեկնում Շանհայ։

— Ո՞վ,— ասացի ես։

— Դե, տղան,— ասաց նա,— Քլարք Գեյբլը։

— Ախ, Քլարք Գեյբլը,— ասացի ես։— Ուրեմն ասում է՝ պիտի մի բան անել։ Այսինքն ի՞նչ։

— Տախտակամած է դուրս գալիս ու տեսնում աղջկան։

— Ի՞նչ աղջիկ,— ասացի ես։

— Ջոան Քրոֆորդին։

— Ախ, Ջոանին,— ասացի։— Հետո ի՞նչ է լինում։

— Սիրահարվում են։

— Եվ էստեղ, ուրեմն, տղան մի բան անո՞ւմ է։

— Դեռ ոչ։ Դա վերջում է։

— Հասկանալի է,— ասացի ես,— երևի վերջապես մի արտակարգ բան է անում։

— Ամուսնանում է աղջկա հետ։

— Փողի հարցը ո՞նց է,— ասացի ես,— փող ունեցողն ո՞վ է։

— Աղջիկը։ Ու հենց էստեղից էլ գործը սկսում է բարդանալ։

— Ասում ես, բարդանում է, հա՞,— ասացի։

— Բա, իհարկե, տղան հո՞ վարձու պարբնկեր չէ։ Իմանալով, որ աղջիկը հարուստ է, որոշում է չամուսնանալ նրա հետ։

— Ինչո՞ւ,— ասացի ես։

— Նա այն կարծիքին է, որ չի կարող ամուսնանալ հարուստ աղջկա հետ նույնիսկ եթե սիրում է։ Ու էստեղ խռովում են իրարից։

— Երևի էնպես, կատակով,— ասացի ես,— լուրջ բան չկա մեջտեղը։

— Էն էլ ինչքա՜ն լուրջ,— ասաց տղան։— Ախր, աղջիկը պարտավոր է ամուսնանալ որևէ մեկի հետ մինչև նավը կհասնի Շանհայ, հակառակ դեպքում զրկվում է տասնութ միլիոն դոլարի հասնող ժառանգությունից։

— Քանի՞ միլիոն,— ասացի ես։

— Տասնութ։

— Քի՞չ չէ,— ասացի ես,— հանկարծ չպակասի՞։

— Չէ, ինչու։ Կարգին գումար է։

— Մեծ բան չի,— ասացի։— Դե, լավ, հետո ի՞նչ է լինում։

— Հետո էսպես ուրեմն։ Աղջիկը նշանված է միջին տարիքի մի բանկիրի հետ։ Բանկիրը սիրուն չի։ Աղջիկը չի ուզում ամուսնանալ նրա հետ։ Այ, հենց այստեղ էլ պետք է երևա դերասանուհու խաղը։

— Իսկապես որ,— ասացի ես։

— Տղայի հետ գժտվելուց հետո աղջիկը հայտարարում է, որ ամուսնանում է բանկիրի հետ, պարզապես տղայի խանդը շարժելու համար։

— Էստեղ էլ կարելի է մի լավ խաղ ցույց տալ,— ասացի ես։

— Իհարկե։ Մի խոսքով նավապետը պատրաստվում է հարսանիք կատարել հենց նավի վրա։ Սկսվում է ֆիլմի ամենահետաքրքիր մասը։ Ի՞նչ դրվագներ՝ մեկը մյուսի հետևից։ Բաց ծովում, նավի վրա հարձակվում են չինացի ծովահենները, գրավում նավը և չինացիներից մեկը, աղջկան տեսնում է թե չէ, որոշում է տեղնուտեղն ամուսնանալ նրա հետ, իհարկե առանց հարսանեկան ձևականությունների։ Բանկիրի վերջն էլ չի, որովհետև նա վախկոտի մեկն է, բայց տղան հենց առաջին հայացքից ատում է չինացուն։ Դա մի երիտասարդ ու կրթված

չինացի է և անգլերեն ավելի լավ է խոսում, քան նավի վրայի մարդկանցից որևէ մեկը։

— Հետո՞,— ասացի ես։

— Չինացին խցկվում է աղջկա սենյակը ու սկսում սենյակով մեկ վազել նրա ետևից։

— Մի տես դրան,— ասացի ես։

— Չինացին աղջկան սենյակում այս ու այն կողմ է քշում, երբ տղան ջարդում է դուռը և հարձակվում չինացու վրա։ Նրանք սկսում են կռվել։ Չինացին տղային տակն է գցում, շոքում վրան, հանում դաշույնը ու պատրաստվում, որ խրի...

— Ո՞ւր խրի,— ասացի ես։

— Ուղիղ սիրտը։ Բայց հենց այդ պահին աղջիկը աթոռով տալիս է չինացու գլխին։

— Ա՜յ քեզ սեր,— ասացի ես

— Այդ ընթացքում նավապետը հեռագիր է ստանում, որտեղ ասվում է, որ նա պետք է ձերբակալի բանկիրին՝ մեղադրելով նրան խոշոր գողության և երկկնության մեջ։

— Ընդամենը երկու փոքր հանցագործություն ամբողջ ֆիլմո՞ւմ,— ասացի ես։

— Ինչո՞ւ։ Բա հնարավոր սպանությունը։ Տեսարանն ավարտվում է աղջկա և տղայի երկարատև գրկախառնությամբ և համբույրով։

— Ա՜յ թե փայլուն վերջաբան ես գտել,— ասացի ես։

— Հը, ո՞նց էր,— ասաց նա։

— Հոյակապ էր,— ասացի ես։

— Իսկապե՞ս հուզիչ էր։

— Շունչ կտրելու աստիճան,— ասացի ես։— Հատկապես երբ չինացին հետապնդում է աղջկան։

— Այդպես էլ գիտեի, որ կհավանեք,— ասաց նա։— Գուցե ավելի լավ կլինի սկզբում գիրք դուրս բերեք սրանից, իսկ հետո ծախեք կինոսարքողներին։

— Ուստված վկա, կանեի, մեծ բան չի,— ասացի,— բայց թարսի պես երեկ չէ առաջին օրվանից գրելը թողեցի։

— Ինչո՞ւ,— ասաց նա։

— Ջանձրացա,— ասացի։— Անընդհատ նույնը, նույնը...

— Չէ, սա տարբեր է,— ասաց նա։— Չինացին արդեն ինչ ասես արժի։ Արևմուտքի և Արևելքի բախում։

— Թեկուզ այդպես,— ասացի,— միևնույն է, գրելը թողել եմ երեկ չէ առաջին օրվանից։ Հենց ինքդ էլ գրի։

— Կարծում եք կտպագրե՞ն,— ասաց նա։

— Հիմարություն կանեն, թե չտպեն,— ասացի ես։

— Իսկ ի՞նչ ոճով գրեմ,— ասաց նա։

— Օ՜,— ասացի ես,— ոճի համար չմտահոգվես։ Պարզապես թերթին հանձնիր ճիշտ այն ձևով, ինչ ձևով որ միտդ է գալիս աշխատանքից հետո, և կտեսնես, որ հրաշալի ոճ է ստացվում, դեռ մի երկու ֆիլմի նյութ էլ կավելանա։

— Ախր քերականությունից լավ չեմ,— ասաց նա։

— Իմն էլ բանի նման չէ,— ասացի ես։— Դրա մասին էլ մի մտածիր։ Դա էլ հենց քո ոճի, քո ինքնատիպության մի մասը կկազմի։ Ես սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ դու հանճար ես։

— Չէ, ինչ եք ասում,— ասաց նա։— Պարզապես իմ գլխում ծընվում են մտքեր, որոնցից կարելի է գիրք կամ ֆիլմ սարքել, սա է ամբողջը։ Դեռ մի տասնյակ գրքի և ֆիլմի նյութ էլ գլխիցս թռել է արդեն։

— Գրի առ, բոլորը գրի առ,— ասացի ես։— Մի թող, որ գլխիցդ թռնեն։ Դու ամեն րոպե դոլար ես կորցնում։

— Մատիտ ունե՞ք,— ասաց նա։

— Վախենամ՝ ոչ,— ասացի ես,— գրելը թողել եմ երեկ չէ առաջին օրվանից։

— Գրողը տանի, ախր ինչո՞ւ թողեցիք,— ասաց նա։

— Իմ գրածներից ֆիլմ չի ստացվում,— ասացի ես։— Պատմվածքներ եմ գրում ու ժամանակ առ ժամանակ վաճառում 30—40 դոլարով։ Իմ գլխում կինոթեմաներ չեն ծնվում։ Կարծում էի, վազ թե ուշ կծնվեն, իսկ որ տեսա բան չի ստացվում, գրելը թողեցի։

— Լավ չէ,— ասաց նա,— իսկ իմ գլխում հա ծնվում ու ծնվում են։

— Պարզ է,— ասացի։— Քեզ մնում է միայն դրանք գրի առնել։ Կտեսնես, որ կարճ ժամանակում մեծ հռչակի ու փողի տեր կդառնաս։

— Մի պատմություն էլ պատմեմ, տեսեք, թե ինչ լավ ֆիլմ կըստացվի,— ասաց նա։

— Չո,— ասացի ես։

Չոն մոտեցավ սեղանին։

— Չո,— ասացի ես,— վերցրու այս տասը սենթանոցը և մի մատիտ բեր ինձ։

Չոն վերցրեց փողը և մոտեցավ Իզիին։ Իզին չորս կողմը նայեց ու մի մատիտ գտավ։ Մի փոքրիկ մատիտ։ Չոն բերեց մատիտն ու տվեց ինձ։ Ես էլ տվեցի տղային։

— Լսիր, Չորջ,— ասացի ես,— ժամանակ մի կորցրու։ Ահա քեզ մատիտ, գնա տուն և մտքերդ հանձնիր թղթին։ Ինչ թուղթ, ուզում է

լինի։ Լինքոլնը իր հայտնի ճառը ինչ-որ ծրարի հակառակ երեսին է գրել։

Նա մատիտը վերցրեց, բայց մնաց կանգնած։

— Գուցե այս երեկո էլ հանգիստ տամ ինձ ու վաղվանի՞ց սկսեմ։

— Ոչ,— ասացի։— Մեծ սխալ կգործես։ Ուղիղ տուն գնա և սկսիր աշխատել, քանի մտքերդ թարմ են ուղեղիդ մեջ։

— Ճիշտ է,— ասաց նա։

Նա մատիտը դրեց վերարկուի ներսի գրպանը, գլխարկը քաշեց աչքերին ու աստիճաններով իջավ ցած։

— Ջո,— ասացի ես,— երեք հատ գարեջուր բեր ինձ։

ՋԻՄ ՓԵՄԲԵՐԹԸՆԸ ԵՎ ՆՐԱ ՈՐԴԻ ԹՐԻԳԵՐԸ

Ես նստած էի Փիչ փողոցի վրայի Վիլլի վագոն-խորտկարանում, վաճառասեղանի կողքին, թակածո կողիկ էի ուտում մի գավաթ սուրճով և զրուցում Տելեսաից եկած նոր մատուցողուհու՝ Էլլայի հետ, երբ հայրս ներս մտավ, լայնեզր գլխարկը շպրտեց խաղամեքենայի վրա, հանեց թիկնոցը, ծալեց այն, դրեց գլխարկի կողքին և ասաց.

— Թրիգ, ես հիմա գլուխդ թոցնելու եմ։ Դու տիկին Շերիդանին ասել ես, որ ես բանակում չեմ եղել։

Ես քիչ մնաց խեղդվեի, որովհետև սուրճն ու կողիկը թռան շնչափողս, ու Էլլան ասաց, որ ձախ թևս բարձրացնեմ, քանի որ դա կգադարեցնի հազս, իսկ հայրս ասաց.

— Թրիգեր, վեր կաց այդ աթոռից։

— Համենայն դեպս, թող այս կողիկը վերջացնեմ, սխ,— ասացի ես։

— Շատ լավ,— ասաց նա։— Դու տիկին Շերիդանին ասել ես, որ ես կյանքումս ոչ մեկին չեմ սպանել, և այժմ նա այլևս չի ուզում ինձ տեսնել։

— Դե լավ, թող այս կողիկը վերջացնեմ, պա,— ասացի ես։— Դու երբեք էլ ոչ մեկին չես սպանել և դա ինքդ էլ գիտես։

— Ի՞նչ իմացար,— ասաց հայրս,— դու վստա՞հ ես։

— Ես ճշտիվ վստահ չեմ,— ասացի ես,— բայց տեր աստված, պա, հանուն ինչի՞ դու պիտի որևէ մեկին սպանեիր։

— Կարևոր չէ,— ասաց հայրս։— Ես ժամանակ չունեմ որ բացատրեմ, թե հանուն ինչի։ Շուտ արա, կուլ տուր էդ վերջին կտորն ու վեր կաց։ Ես հիմա գլուխդ թոցնելու եմ։

Նա չրջվեց դեպի Էլլան։

— Ողջույն, Էլլա,— հարգալիր ասաց նա։— Ինձ համար մի կտոր մեջքի միս դիր թող տապակվի։ Շատ չչորանա։

— Լավ, պարոն Փեմբերթըն,— ասաց Էլլան։— Դուք նորից մտադիր եք Թրիգերի հետ կռվե՞լ։

— Ես թույլ չեմ տա, որ նա իմ մասին ստեր տարածի,— ասաց հայրս։

— Դա սուտ չի, պա,— ասացի ես։— Ո՞ւմ ես դու երբևէ սպանել։ Մեկի անունը տուր։

— Գրողը տանի,— ասաց հայրս։— Ես իմ մատների ծայրերի վրա կարող եմ համրել տասնչորս մարդու։

— Դու տասնչորս մատ չունես,— ասացի ես։— Դու նույնիսկ տասը չունես։ Դու ութն ունես։ Զախ ձեռքիդ մատնեմատն ու ճկույթը դու կորցրել ես Փերրիի սղոցարանում։

— Այդ մատներս ես կորցրել եմ պատերազմում,— ասաց նա։— Հանուն իմ հայրենիքի։

— Դու,— ասացի ես,— ինքդ էլ գիտես, որ դու երբեք Եվրոպայում չես եղել։ Դու պարզապես զոհ ես գնում քո երևակայությանը։

— Հիմա դու կտեսնես, թե ով ում զոհ կգնա,— ասաց։— Տիկին Շերիդանն ասում է, որ հս հերոս չեմ։

— Եվ չես էլ,— ասացի ես։

— Դե լա՜վ, հապա վեր կաց, որ էդպես է,— ասաց նա,— եթե դու էդ կարծիքին ես, ապա ես գլուխդ թռցնելու եմ։

— Դու լավ գիտես, որ ես կարող եմ քո հախիցը գալ, պա,— ասացի ես։— Մի ստիպիր, որ էդ բանը ես նորից անեմ։

— Նորի՞ց,— ապա։— Էդ ե՞րբ է եղել, որ դու իմ հախից գաս։

— Բայց, պարոն Փեմբերթըն,— ասաց Էլլան։— Թրիգերը ձեր հախից եկավ երեկ, հենց այստեղ։

— Ինձ համար մի կես բաժին չորացրած սոխ դիր թող տապակվի,— ասաց հայրս։— Գործերդ ինչպե՞ս են, Էլլա։ Իմ որդին հո վիրավորական ակնարկներ չի՞ անում քեզ։ Ես դա չեմ հանդուրժի, գիտես։ Ես նրա գլուխը կթռցնեմ։

— Բայց, պարոն Փեմբերթըն,— ասաց Էլլան։— Թրիգերն այնքան սիրալիր է, որ էլ տեղ չկա։ Թրիգերը Քինգզբուրգի ամենասիրուն և ամենաքաղաքավարի տղան է։

— Ես չեմ հանդուրժի, որ որևէ մեկը վիրավորական ակնարկներ անի քո նման անմեղ աղջկան, Էլլա,— ասաց հայրս։— Եթե իմ որդի

Թրիգերը քեզ կխնդրի իր հետ դաշտ գնալ, դու ինձ պարզապես իմաց տուր, և ես նրա գլուխը կթռցնեմ։

— Բայց, պարոն Փեմբրրթրն, ես հաճույքով Թրիգերի հետ դաշտ կգնայի,— ասաց Էլլան։

— Էդպես բան չանե՛ս,— ասաց հայրս։— Թրիգերը քեզ երկու բոպեում կփռի բարձր խոտերի մեջ։

— Չէ-հա, նա էդպիսի բան չի անի,— ասաց Էլլան։

— Անպայման կանի,— ասաց։— Կանես, չէ՞, որդիս։

— Ի՞նչ իմանամ,— ասացի ես։

Ես նայեցի Էլլային և մտածեցի, որ նա, իր կյանքում երևի առաջին անգամ, ճիշտ է։ Նրա անսանձ երևակայությունը իր կյանքում առաջին անգամ նրան չափից դուրս հեռուն չէր տանում։

Այնպես էր երևում, որ հայրս մոռացել է տիկին Շերիդանի մասին, և այդ պատճառով էլ ես սկսեցի լավ զգալ։ Ես չէի ուզում անընդհատ փչացնել հորս կյանքի լավագույն տարիները, նրան դեսուդեն հրհրելով, քանի որ նրա պատկերացմամբ կռիվ անելը՝ հենց հրհրելն էր։

— Էլլա,— ասաց հայրս,— ինչ էլ որ դու անես, թույլ չտաս, որ Թրիգերն իր նրբին խոսակցությամբ և կիրթ շարժուձևերով քեզ հրապուրի։

— Ես երեկ չէ մյուս օրվանից այս քաղաքում եմ,— ասաց Էլլան,— և չեմ տեսել որևէ մեկին, որն ինձ Թրիգերի գոնե կեսի չափ դուր գար։

Նա մսի կտորը շրջեց։

— Ինչպե՞ս է, հարմա՞ր է, պարոն Փեմբրրթրն,— ասաց Էլլան։

— Գերազանց է,— ասաց հայրս։

Նա նստեց կողքիս։

— Թրիգեր,— ասաց նա,— նեղություն չե՞ս քաշի, դրսում սպասես, մինչև ես ընթրեմ։ Դատարկ ստամոքսով ես առհասարակ ի վիճակի չեմ կռվի բռնվել։

— Ես պիտի Կոլիզեումի կողմերը գնամ,— ասացի ես։

— Չի խանգարի, որ մի հինգ րոպե սպասես,— ասաց նա։

— Ախր ես պայմանավորվել եմ Հարի Վիլքիի հետ մի քիչ բիլիարդ խաղալու,— ասացի ես։— Մտքինդ ի՞նչ է։

— Ես ուզում եմ, որ դու անցնես տիկին Շերիդանի մոտ,— ասաց նա,— և ասես նրան, որ ես պատերազմում տասնյոթ գերմանացի եմ սպանել։ Նա նստած է պատշգամբում։ Այս տեսակ հրաշալի եղանակին ես չեմ կարող մնալ առանց գեղեցիկ կնոջ սիրո ու հիացմունքի։

— Տեր աստված,— ասացի ես,— տիկին Շերիդանն ինձ չի հավատա։

— Կհավատա,— ասաց նա։— Նա կհավատա քո ասած ամեն մի խելառ բանին։ Տես, ուրեմն, տասնյո՛թ։ Զմոռանա՞ս։

— Բայց չէ՞ որ իրականում դու էդպես բան չես արել,— ասացի ես։

— Իսկ ի՞նչ տարբերություն,— ասաց Հայրս։

Էլլան միսը դրեց ափսեի վրա՝ ճաշի գդալի և դանակի ու պատառաքաղի միջև։ Հայրս մի մեծ կտոր միս կտրեց։ Այն արնակարմիր էր։ Նա կտորը բերանը դրեց և ժպտաց Էլլային։

— Դու մի լավ, անմեղ աղջիկ ես, Էլլա,— ասաց նա։— Մոտ ժամանակներս ուզենալու ես ամուսնանալ, այնպես որ Թրիգերի հետ դաշտ չգնաս։

— Բայց ես հաճույքով կգնայի, պարոն Փեմբրրթըն,— ասաց Էլլան։

— Շատ լավ, ուրեմն,— ասաց Հայրս։— Դե գնա՛, որ սիրտդ էդպես է ուզում ու թող քեզ շրմփացնեն գետնին։

Հայրս շրջվեց դեպի ինձ։

— Թրիգեր, էդ չնչին բանը դու ինձ համար կանե՞ս, չէ,— ասաց նա։

Տեր աստված, ես այնպես հպարտացա նրանով։ Նա այնքա՞ն մեծ էր ու այնքա՞ն խելառ։

— Անպայման, պա,— ասացի ես։— Ես կասեմ տիկին Շերիդանին, որ դու գնդացրորդների մի ամբողջ վաշտ ես կոտորել։

— Դե ուղիղ գնա տիկին Շերիդանի մոտ,— ասաց Հայրս։— Դուն նրան կգտնես պատշգամբում, ճոճաթոռի մեջ։ Ասա նրան, որ ես հենց ընթրիքս վերջացնեմ, իսկույն կգամ։

— Անպայման,— ասացի ես։

— Յտեսություն, Թրիգեր,— ասաց Էլլան։

— Յտեսություն, Էլլա,— ասացի ես։

Ես դուրս եկա մայթեզրը և նստեցի իմ Հարլեյ-Դեվիդսընը և քշեցի մի վեց թաղամաս այն կողմ՝ Էլմի պողոտա՝ դեպի տիկին Շերիդանի վարձակալման սենյակները։

Ինչպես որ Հայրս էր ասել, տիկին Շերիդանը նստած էր պատշգամբում, միայն թե նրա հետ այնտեղ էր նաև Ռալֆ Էյթընը։ Տիկին Շերիդանը շշից ծղոտով ելակի գազաջուր էր ծծում։

Ես իմ մոտոցիկլետը հենեցի մայթեզրին և մոտեցա պատշգամբին։ Տիկին Շերիդանի տեսքը գոհ էր ու դուրեկան, բայց երբ Ռալֆ Էյթընը ինձ տեսավ, տրամադրությունն ընկավ։ Ես երբեք էլ նրա աղջկան՝ Էֆիին չեմ սիրել։ Պարզապես այդ նրան էր թվում, թե սիրել եմ։ Նա փորձեց ինձ ամուսնացնել Էֆիի հետ, բայց ես խնդրեցի նրան ապա-

ցուցել,, որ այդ ես եմ եղել, և ոչ թե Դեյբի Ֆիշերը։ Նա հայտարարեց, որ երեխան Դեյբի Ֆիշերին նման չի, իսկ ես հայտարարեցի, որ ի՞նձ էլ նման չի։ Նա դառնացավ և ասաց, որ գործը կտա Բարձրագույն Դատարան, բայց այդպես էլ չտվեց։

— Բարի երեկո, տիկին Շերիդան,— ասացի։

— Բարի երեկո, Թրիգեր,— ասաց տիկին Շերիդանը։— Վերև արի ու նստիր։

— Բարի երեկո, պարոն Էյթքն,— ասացի ես, և Ռալֆ Էյթքնը ասաց,— որդի, ի՞նչն է քեզ բերել այստեղ երեկոյան այս ժամին։

— Վերև արի պատշգամբ ու նստիր,— ասաց տիկին Շերիդանը։— Ես և Ռալֆը ուզում ենք քեզ հետ խոսել։

Ես բարձրացա պատշգամբ և նստեցի բազրիքին, դեմքով դեպի տիկին Շերիդանն ու պարոն Էյթքնը։

— Ահա այստեղ եմ, տիկին Շերիդան,— ասացի ես։— Դուք ինչի՞ մասին եք ցանկանում խոսել ինձ հետ։

— Դե,— ասաց տիկին Շերիդանը,— Ռալֆի կրտսեր աղջկանից՝ Էֆֆիից ունեցած քո որդի Հոմերի մասին։

— Հոմերն իմ որդին չի,— ասացի ես։

— Սխալվում ես,— ասաց Ռալֆ Էյթքնը։— Թրիգեր, այդպես կարծելով դու մահացու սխալ ես կատարում։ Հոմերն իսկ և իսկ քո պատկերն է, հո՛ր պատկերն է և նրանից էլ առաջ՝ պապի՛նդ։ Հոմերն իսկակա՛ն Փեմբրրթն է։

— Պարոն Էյթքն,— ասացի ես,— վախենամ, որ դուք ձեզ թույլ եք տալիս զո՛հ գնալ ձեր երևակայությանը։

— Չեղավ, Թրիգեր,— ասաց պարոն Էյթքնը։— Հոմերը քո որդին է։ Նա արդեն խոսում է և նույնիսկ խոսելն էլ նման է քո խոսելուն։

— Թրիգեր,— ասաց տիկին Շերիդանը։— Ես կարծում եմ, որ դու պետք է մի փոքր ավելի հետաքրքրություն ցուցաբերես քո երեխաների նկատմամբ։

— Բայց տիկին Շերիդան,— ասացի ես,— ինչպես կարող եք դուք նման բան ասել։ Ի՞նչ երեխաներ։ Չէ՞ որ ես կին չունեմ։

— Կին ունես, թե ոչ,— ասաց տիկին Շերիդանը,— բայց այս տեղերում դու չորսից ավել երեխաներ ունես։ Դու այդ մոտոցիկլետով այնքան հեշտությամբ ես տեղից տեղ շրջում, Թրիգեր, որ իմ կարծիքով դու չես էլ գիտակցում, թե այդ մեքենան ինչքան ժամանակ է տնտեսում քեզ այն բանի համար, որ հասնես անմեղ աղջիկներին և հետո էլ շտապ հեռանաս նրանցից։

— Ես օգտվում եմ այս մեքենայից, որպեսզի Սան Ֆրանցիսկոյի

թերթերը հանձնեմ այս տեղերում ապրող ֆերմերներին,— ասացի ես։— Ահա՛ թե ինչի համար է այս մոտոցիկլետը։

— Ես չեմ ասում, որ այն գլխավորապես թերթերը հանձնելու համար չի,— ասաց տիկին Շերիդանը։— Բայց թերթերը դու հանձնում ես վաղ առավոտյան, մոտ կես ժամում։ Քո երեխաները Քինգզ Քաունթիի ամենապիրունիկ երեխաներն են, և ես կարծում եմ, որ քո կողմից բոլորովին էլ լավ բան չէ նրանց վրա ուշադրություն չդարձնելը։

— Թրիգեր,— ասաց պարոն Էյթընը,— ինչո՞ւ դու չես ամուսնանում իմ դուստր Էֆիի հետ, տուն ու տեղ դնում ու անուն հանում քո համար։

— Դուք ի՞նչ տեսակ անուն նկատի ունեք, պարոն Էյթըն— ասացի ես։

— Մեծ անուն,— ասաց պարոն Էյթընը։— Ինչո՞ւ դու տուն ու տեղ չես դնում ու մարդ դառնում։

— Իսկապես, Թրիգեր,— ասաց տիկին Շերիդանը։— Ես կարծում եմ, որ եթե քո կողմից մի փոքր ջանք թափվեր, դու կարող էիր աչքի ընկնող մարդ դառնալ։

Ես որոշեցի, որ արդեն ժամանակն է տիկին Շերիդանին մշակելու, բայց չէի կարող դա անել պարոն Էյթընի նման մարդու ներկայությամբ, մի մարդ, որին հայրս երբեք չէր սիրել, այնպես որ ես որոշեցի շտապ նրանից աղատվել։

— Պարոն Էյթըն,— ասացի ես,— քանի դեռ չեմ մոռացել, ասեմ, որ այստեղ եկա, որպեսզի հաղորդեմ, որ Չարլի Հեյգընը ուզում է ձեզ անձնական գործով տեսնել։ Նա ասաց, որ շտապ գնաք իր մոտ։

Պարոն Էնթընը բազկաթոռից երեք ոտնաչափ վեր թռավ։

— Դու նկատի ունես բանկի՞ր Չարլի Հեյգընին, որդի,— ասաց նա։— Դու նկատի ունես Քինգզ Քաունթիի ամենահարուստ մարդո՞ւն, Թրիգեր։

— Այո, սըր,— ասացի ես։— Պարոն Հեյգընը ասաց, որ ինչ-որ կարևոր բան ունի, որի մասին ուզում է ձեզ հետ խոսել։

— Ո՞ւմ մտքով կարող է անցնել,— ասաց պարոն Էյթընը։— Դուք ինձ կներե՞ք, տիկին Շերիդան։

— Իհարկե,— ասաց տիկին Շերիդանը։

Պարոն Էյթընը պատշգամբի աստիճաններով ցած իջավ, ցատկելով կտրեց անցավ բակը և վազեց էլմի պողոտայով ներքև։

— Տիկին Շերիդան,— ասացի ես,— ուզում եք հավատացեք, ուզում եք մի հավատացեք, բայց իմ հայրը պատերազմում մի ամբողջ գունդ գերմանացի առաջնակարգ գնդացրորդներ է ոչնչացրել։ Նա սո-

զացել է նրանց մոտ, երբ նրանք քնած են եղել։ Ահա թե ինչպես է նա այդ արել։

Տիկին Շերիդանը գաղաչրի շիշը ցած դրեց, ուղղեց իր ծավալուն կուրծքը և տարակուսանքով սկսեց ճոճվել։

— Թրիգեր,— ասաց նա,— գրողը տանի, էդ ո՞ւմ մասին ես դու խոսում։

— Իմ հոր,— ասացի։— Ես խոսում եմ Ջիմ Փեմբրրթընի, Քինգզ Քաունթիի միայնակ գայլի, գողերի և գրպանահատների սարսափի, մանուկների և անմեղ աղջիկների պաշտպանի մասին, ահա թե ում մասին եմ ես խոսում։

— Ասում ես ինչ է արե՞լ քո խելացնոր հայրը պատերազմի ժամանակ, Թրիգեր,— ասաց տիկին Շերիդանը։

— Ես ասացի, որ նա մե՛ն-մենակ տասնյոթ գերմանացի առաջնակարգ գնդացրորդ է սպանել, ահա՛ թե ինչ ասացի։

— Ես չեմ հավատում դրան,— ասաց տիկին Շերիդանը։

—Ես միայն կարող եմ ասել, որ դուք ձեզ թույլ եք տալիս զոհ գնալ ձեր երևակայությանը, տիկին Շերիդան,— ասացի ես։— Իրողությունն այդ է։ Նա ապացուցող թղթեր էլ ուներ, բայց կորցրել է դրանք։ Նա յո՛թ մեդալ ուներ, բայց ստիպված է եղել վաճառել դրանք։ Նա հերո՛ս է, տիկին Շերիդան։

— Թրիգեր,— ասաց տիկին Շերիդանը,— այդ խելացնոր պատմությամբ քեզ ո՞վ է ուղարկել այստեղ։ Երեկ դու ինձ ասացիր, որ քո հայրը Եվրոպայում չի եղել։ Երեկ դու ինձ ասացիր, որ նա նույնիսկ բանակում չի եղել։

— Տիկին Շերիդան,— ասացի ես,— այդ ժամանակ ինձ թյուր տեղեկություններ են տրված եղել։ Այո, ինձ միանգամայն թյուր տեղեկություններ են տրված եղել։

— Ուրեմն, ասում ես, ինչպե՞ս է քո հայրը այդպիսի խիզախ բան արել,— ասաց տիկին Շերիդանը։— Գրողը տանի, ինչպե՞ս է նա այդ արել։

— Նա մոտեցել է սողալով,— ասացի ես։— Տասնմեկ հոգու հենց քնած տեղն է սպանել՝ իր հրացանի կոթով խփելով գլուխներին։ Այդ ժամանակ մնացած վեցը զարթնել են ու սկսել նրան նեղել, բայց նա դրանց վրա է շրջել իր սեփական գնդացիրներից մեկը և բոլորին հրնձել է։ Դրա համար նա յոթ մեդալ է ստացել և երկու օր հետո պատերազմը ավարտվել է։

Տիկին Շերիդանը շատ նրբագեղորեն հետ ու առաջ ճոճվեց։

— Այ քեզ բան։ Ինչ իմանաս ինչեր են լինում,— ասաց նա։—

Թրիգեր, ահա տասնհինգ սենթ։ Գնա ներքև՝ Մեյերի խանութ ու ինձ մի տուփ «Զեսթերֆիլդ» բեր։ Քո լուրերն ասանց մի լավ ծխելու չեն մարսվի։

Ես մի կես թաղամաս վազեցի մինչև Մեյերի խանութ ու մի տուփ գլանակ գնեցի տիկին Շերիդանի համար։ Երբ եկա, հայրս նստել էր պատշգամբում և պատմում էր, թե ինչպես է այդ պատահել։ Նա պատմում էր շատ քնքուշ և գորովալի ձայնով։

— Ահ, Թրիգեր,— ասաց տիկին Շերիդանը,— տուր ինձ այդ գլանակները։

Ես նայեցի հորս, որ տեսնեմ, թե ինչպես են նրա հաջողությունները։ Այդ ընթացքում տիկին Շերիդանը բացեց գլանակների տուփը, հանեց մեկը և վառեց։ Հայրս ժպտաց և իր աջ ձեռքով որոշակի շարժում արեց, որը, ինչպես ինձ էր հայտնի, նշանակում էր, որ ամեն ինչ հոյակապ է և որ նա շատ շնորհակալ է։ Ես նույն շարժումով պատասխանեցի, իսկ տիկին Շերիդանը, հուզված ու գեղեցիկ, ղնչում էր սովորականից ավելի խոր, այնպես որ ես հասկացա, որ իմ գործն արված է։

— Բարի գիշեր, տիկին Շերիդան,— ասացի ես։— Ձեր ընկերակցությունը շատ սքանչելի էր։

— Ձարժե, Թրիգեր,— ասաց տիկին Շերիդանը։— Ինձ համար էլ էր շատ հաճելի։

— Բարի գիշեր,— ասացի ես։

— Բարի գիշեր, Թրիգեր,— ասաց հայրս։

Ես ցած իջա դեպի մայթեզրը և նստեցի իմ մոտոցիկլը։ Մինչ շարժիչը գործի կդնեի, լսեցի, ինչպես հայրս սկսեց խոսել ցածր, ջերմ ու գորովալի երանգով և հասկացա, որ այս երեկո այլևս կարելի է նրա համար հանգիստ լինել։

ԴՈՒ ԿՈՏՐՈՒՄ ԵՍ ՍԻՐՏՍ

Սիրելի Էմմա,— գրեց Մայքը։— Ես հիմա այստեղ եմ՝ Սան Ֆրանցիսկոյում։

Գիշերվա ժամը մեկից քսան էր պակաս ու շատ խաղաղ էր։ Մայքը տխրագին նայում էր նրա լուսանկարին։ Այդ լուսանկարը նվեր էր ստացել վեց տարի առաջ, երբ իրենք դեռ նոր էին ծանոթացել։ Հիմա Էմման նույնիսկ ավելի լավիկն էր, քան այն ժամանակ, բայց ընդհանրությամբ լրիվ նույնն էր մնացել։ Այժմ էլ՝ ինչպես վեց տարի առաջ, նրան բացարձակապես անհնար էր հասկանալ։

Հետաքրքիր է,— մտածեց Մայքը,— նա ի՞նչ է անում Նյու Յորքում, մինչ ես, հյուրանոցի այս համարում նստած, գրում եմ նրան։

Այստեղ համարյա ժամը մեկն է։ Փոխված ժամանակի մեկ ժամն էլ հետը՝ չորս ժամվա տարբերություն կա։ Հիմա Նյու Յորքում առավոտյան ժամը հինգն է։

Առավոտյան ժամը հինգը Նյու Յորքում... ծանր տխրություն իջավ Մայքի վրա այս մասին մտածելիս։

Էմման երևի քնած է,— մտածեց նա։— Նյու Յորքում, առավոտյան ժամը հինգին... Մայքի սիրտը կծկվեց տան կարոտից։— Միգուցե չի՞ քնել և հիմա նստած իմ մասին է մտածում։

Մայքը վերադարձավ իր նամակին։— Ազնվորեն, Էմմա,— գրեց նա,— ես երբեք չեմ պատկերացրել, թե որքան եմ քեզ սիրում, և որքան ես դու ինձ պետք, մինչև երեք ամիս առաջ չսկսվեցին այս ապուշությունները։ Ես չգիտեի, թե ինչ ես նշանակում ինձ համար, մինչև որ Նյու Յորքը թողած ճամփա չընկա, և ահավասիկ հիմա այստեղ եմ՝ Սան Ֆրանցիսկոյում։ Պատկերացրու, թե որքան եմ քեզ սիրում։

Քեզ ազնվորեն կասեմ,— գրեց նա։— Այս քաղաքը դուրս չի գալիս։ Երկու ժամ է այստեղ եմ, և ոչ մի լավ բան չկա։ Գուցե վատ քաղաք չի, բայց ես չհավանեցի։ Ի՞նչ ես ուզում, որ անեմ։ Ես որևէ գործի համար պիտանի չեմ։ Երեք ամիս է հեռացել եմ տանից և հիմա ասում եմ քեզ, որ ուզում եմ տուն գալ։ Դու չե՞ս ուզում, որ ես տուն գամ։

Նա նայեց լուսանկարի հրաշալի աղջկան, որ իր կինն էր։— Հոգիս,— ասաց նա։— Չե՞ս ուզում, որ ես տուն գամ։ Ես գրող չեմ։ Ես դերասան չեմ։ Ոչ էլ երգիչ եմ։ Կամ օդաչու։ Հեռտոր էլ չեմ։ Ի՞նչ ես ուզում, որ անեմ։

Դու կոտրում ես սիրտս,— ավելացրեց նա։

Մայքը մոտեցավ պատուհանին։ Ներքևում փողոցը դատարկ էր։

Աշխարհում ինձ համար պիտի որ մի բան լիներ անելու,— մտածեց նա։— Բայց ի՞նչ։ Էմման ուզում է, որ ես որևէ բան անեմ, բայց արի իմացիր թե ի՞նչ։

Ներքևում մի հարբած անցնում էր փողոցը, գայթելով ու ընկնելու փորձեր անելով։

Կարող եմ իջնել ու այս հարբածին տաքսիով տուն տանել,— մտածեց Մայքը,— բայց դրանից նրան ի՞նչ օգուտ։ Կամ Էմմային ի՞նչ օգուտ, կամ ի՞նձ։ Միևնույն է, վաղը նորից պիտի հարբի։

Իսկապես, հարբածին տուն տանելուց ի՞նչ օգուտ։ Կամ ի՞նչ օգուտ, եթե ասենք, այդ հարբածի կնոջը դրամ տաս։ Մայքը պատկերացրեց,

թե ինքն ինչպես է թաքուն զրուցում կնոջ հետ՝ մի փոքրիկ, անձկալից տիկնոջ (յոթ երեխաների մոր), անունը միսիս Գիլհուլի, և ասում է՝ միսիս Գիլհուլի, ես ուզում եմ, որ դուք ընդունեք այս փոքրիկ նվերը (ընդամենը մի հազար դոլար) և Թոմին ալկոհոլիզմից բուժելու միջոցներ ձեռք առնեք։ Դա մոտավորապես յոթանասուն դոլար կարժենա, և որքանով լսել եմ, նորմալ կյանքի կվերադարձնի նրան։ Այնուհետև ուզում եմ, որ երեխաների համար նոր հագուստներ գնեք և ընդհանրապես մի ավելի լավ բնակարան տեղափոխվեք։ Ուզում եմ նաև, որ Թոմի համար մի լավ գիրք առնեք, մի որևէ ոգեշնչող գիրք, ասենք՝ «Արթնացիր և ապրիր» կամ դրա նման մի բան, և եթե ես չարաչար չեմ սխալվում, գիրքը կարդալուց հետո նա կուղղվի, գործ կգտնի և կսկսի ամենայն ջանասիրությամբ աշխատել, մինչև մի օր, շատ հնարավոր է, գլխավոր ինժեներ կդառնա։ Եթե, իհարկե, նա ինժեներ է։ Վստահ եմ, միսիս Գիլհուլի, որ նրանից կարգին մարդ դուրս կգա։ Ես այս դրամի կարիքը չունեմ և հուսով եմ, որ դուք կանեք այս մի քանի աննշան բաները։

Չէ, սա էլ միջոց չէ,— լրջորեն մտածեց Մայքը։— Բայց մյուս կողմից, ո՞վ գիտե, գուցե այդ կնոջ յոթ-ութ երեխաների մեջ շատ շնորհալի մեկը լինի, որ, ասենք, ջութակահար կդառնա, կամ մեծ գրող, կամ գյուտարար։

Գյուտարար. սրա վրա Մայքի միտքը կանգ առավ։— Ի՞նչ կարող եմ հայտնագործել, որ էմման հպարտանա ինձանով,— մտածեց նա։— — Ավտոմեքենա՞, օդանա՞վ, շոգեքա՞րշ, հովանո՞ց, օդապարի՞կ, սուզանա՞վ, զսպանակով խաղալի՞ք։ Գուցե եռանիվ հեծանի՞վ կամ դրա նման մի բան։ Ուրիշ ի՞նչ կարելի է հայտնագործել։

Մայքը երկար մտածում էր, թե ի՞նչ պետքական գյուտ կարելի է անել և վերջն այն մտքին եկավ, որ հայտնագործելու միակ արժանի բանը իր սիրելի էմմայի նման մեկն է։ Այնպիսի մեկը, որ ամեն ինչով նման լինի իր էմմային, նրա նման լավը լինի, սակայն չուզենա, որ իր ամուսինը, ասենք Մայքի նման մեկը, որևէ բան անի, ասենք ավտոմեքենա, սուզանավ, շոգեքարշ, հովանոց կամ ձեռնափայտ հայտնագործի։ Այդպիսի էմման հանճարեղ հայտնագործություն կլիներ. էմմա Քորբեթ՝ ամենահրաշալի էակը արար աշխարհում, Մայքլ Քորբեթի գյուտի մենաշնորհը։

Մայքը շրջվեց պատուհանից ու տխուր նայեց հեռախոսին։— Գուցե էմման չի՞ քնել։ Գուցե արթուն է, որովհետև Պոտիկ Մայրը լաց է լինում և դայակը չի կարողանում նրան հանգստացնել։ Գուցե Պոտիկ Մայքը հիվանդ է, տաքություն ունի։ Եվ Հինգերորդ ավենյուի իր տու-

նը լիքն է բժիշկներով։ Տեր աստված, գուցեեւ տունն այրվում է բոցերի մեջ։

Նա վերցրեց լսափողը.

— Հերթապահ,— ասաց,— միացրեք Նյու Յորք։ Բաթերֆիլդ 8—9737։ Մայքլ Քորբեթ։ Հեռախոսի մոտ կանչեք կնոջս։ Սպասում եմ։

Քիչ հետո՝ Էմմայի ձայնը։

— Հելլո,— ասաց նա,— Էմմա՞։

— Այո, Մայք,— ասաց Էմման,— ի՞նչ է պատահել։

— Էմմա,— ասաց նա։— Էմմա, ես անհանգիստ էի Մայքի համար։ Մայքն ինչպե՞ս է։

— Լավ է,— ասաց Էմման։

— Էմմա,— գոռաց Մայքը,— երեխան տաքություն չունի, չէ՞։

— Իհարկե ոչ,— ասաց Էմման։

— Փառք աստծու։ Իսկ տունը՞։ Տունը չի վառվում, չէ՞։

— Ինչե՞ր ես խոսում,— ասաց Էմման,— տունն ինչո՞ւ պիտի վառվի։

— Ամեն տուն էլ կարող է հրդեհվել, ինչպես գիտես,— ասաց Մայքը։— Եվ մերն էլ ուրիշների նման կարող էր վառվել։

— Կարող էր։ Բայց չի վառվում,— ասաց Էմման։— Իսկ դու ի՞նչ ես անում Սան Ֆրանցիսկոյում։

— Ինքս էլ կուզեի իմանալ,— ասաց Մայքը։— Աստված վկա, կուզեի իմանալ, թե ընդհանրապես քեզնից հեռու որևէ տեղ ի՞նչ անելիք ունեմ։ Էմմա,— աղաչեց նա,— ես ի վիճակի չեմ ոչինչ անելու։ Չեմ կարող որևէ բան հնարել։ Ազնվորեն, չեմ կարող։ Վստահ ես, որ Մայքը լավ է։ Ինձ թվում է, մի հարյուր տարի կլինի, որ ձեզ չեմ տեսել։ Դու ինչպե՞ս ես, Էմմա։ Հասկանո՞ւմ ես, որ տանից երեք հազար կիլոմետր հեռու եմ։ Ի՞նչ ես ուզում, որ անեմ։

— Ինքդ պիտի որոշես,— ասաց Էմման։

— Ես շատ եմ փորձել,— ասաց Մայքը։— Բայց ամենալավ բանը, որ կարող եմ անել՝ քո և Մայքի կողքին լինելն է։ Կարո՞ղ եմ տուն վերադառնալ։

— Մայք,— ասաց Էմման,— ես հիմա կախում եմ լսափողը ու գնում եմ քնելու։ Քունս սարսափելի տանում է։ Այստեղ ամեն ինչ նորմալ է։ Բարի գիշեր։

— Էմմա,— գոռաց Մայքը,— ուզում ես գժվե՞մ։

Լարի մյուս ծայրին լսափողը չկաց։

— Դե արի ու բան հասկացիր,— ասաց Մայքը։

Երեք ամսվա ընթացքում սա Մայքի երեսուներորդ միջքաղաքային

խոսակցությունն էր, և երեսուներորդ անգամ երեք ամսվա մեջ Մայքն ամեն ինչ նորից պիտի սկսեր, միայն թե այժմ՝ տանից ավելի քան երեք հազար կիլոմետր հեռու։

Սարսափելի էր։

Նա զանգահարեց հյուրանոցի հերթապահին և 747 սենյակն ուզեց։

— Սե՞մ,— ասաց նա։

Նրա վարորդը սմքած ձայնով խոստովանեց, որ ինքը Սեմն է։

— Ինձ մոտ չե՞ս գա։

— Ինչո՞ւ։

— Հետդ խոսելու բան ունեմ,— ասաց Մայքը։

— Ինչի՞ մասին։

— Նույն բաների մասին։

— Պարզ է,— ասաց Սեմը։ Նա իհարկե այնքան էլ գոհ չէր։— Այնպես է երևում, որ ես մի երկու ժամ քնելու իրավունք էլ չունեմ։ Հիմա գալիս եմ։

— Շնորհակալություն,— ասաց Մայքը։

Սեմ Լեվինը Մայք Քորբեթի սոսկ վարորդը չէր, նաև նրա խորհրդատուն էր։ Սեմը արևմտյան Նյույորքցի էր։ Մոտավորապես Մայքի տարիքին էր՝ քսանութ-քսանինը տարեկան, նույն կառուցվածքն ուներ՝ հինգ ու ինը ոտք բոյով, քաշը՝ 160 ֆունտ։ Մայքը Հարվարդի 1927-ի շրջանավարտ էր։ Սեմը որևէ տեղի շրջանավարտ չէր։ Մայքը գտավ նրան Նյու Յորքում տաքսի քշելիս և աշխատանք առաջարկեց։ Սեմն ասաց, որ ինքն աշխատանք ունի։ Մայքն ասաց, որ ավելի շատ կվճարի, քան Սեմը վաստակում է տաքսի քշելով։ Սեմը հարցրեց, թե ո՞ր ժամերին է աշխատելու։ Մայքն ասաց, որ չգիտի։ Սեմը հարցրեց, թե ի՞նչ տեսակ մեքենա է քշելու։ Մայքն ասաց, որ երեք տեսակի մեծ մեքենաներ ունի։ Սեմը համաձայնեց։ Նրա խելքը գնում էր մեծ մեքենաների համար։

Սեմը Մայքի մեքենան քշեց ամբողջ Հյուսիսային Ամերիկայի մայրցամաքով Մանհեթենից մինչև Սան Ֆրանցիսկո։

Հիմա, իր սենյակում հագնվելիս, նա դժգոհեց՝ եկել հասել են աստված գիտի ուր, և դեռ չի էլ թողնում, որ գոնե քնի։

Սեմը քնած հյուրանոցի աստիճաններով իջավ Մայքի սենյակը։

— Ժամը քանի՞ն է,— հարցրեց։

— Մեկն անց է,— ասաց Մայքը։— Լսիր, Սեմ, դու պիտի մի բան մտածես, որ ես տուն վերադառնամ։ Դու էլ ես ուզում Նյու Յորք վերադառնալ, չէ՞։ Ռոզ Տարանտինոյին կարոտել ես, չէ՞։

— Ռոզ Տարանտինոյին կարոտե՞լ եմ։ Դու հարցնում ես կարոտե՞լ

եմ Ռոզ Տարանտինոյին։ Ի՞նչ է, լգիտե՞ս, որ Նյու Յորք վերադառնալուն պես ամուսնանալու եմ հետը։ Մայք, դու համոզվա՞ծ ես, որ մենք երբևիցե կենդանի վիճակում Նյու Յորք կվերադառնանք։

— Կվերադառնանք,— ասաց Մայքը։— Եթե օգնես ինձ, որ մի բան հնարեմ։ Էմման միտքը չի փոխելու Հենց նոր խոսեցի հետը։

— Էմման ի՞նչ կապ ունի,— վրդովվեց Սեմը։— Դու Հարվարդի ամենաապուշ շրջանավարտն ես, որին հանդիպել եմ։ Էմման ոչ մի կապ չունի։ Ամբողջ հեղինակը նրա հայրն է՝ Յերուկ Գորդոնը։ Մի՞թե իսկապես ոչինչ չես հասկանում։

— Ինչի՞ց ելնելով ես ասում։

— Մակաբերական դատողությունից,— ասաց Սեմը։ Այս մեթոդը նա հայտնաբերել էր մի դետեկտիվ պատմվածքում, ուր ամբաստանյալը՝ մի խեղճ տոմարակալ, մակաբերական դատողության մեթոդով ապացուցել էր, որ իրական մարդասպանը քննիչն է և դրանով անասելի բերկրանք էր պատճառել Սեմին։— Մակաբերական դատողությունից,— կրկնեց Սեմը։— Յերուկ Գորդոնը մի փոքր պակաս է, հասկանո՞ւմ ես, չէ՞, ինչ եմ ուզում ասել,— Սեմն իր աջ ցուցամատը եռանդով պտտեցրեց իր աջ քունքի մոտ։— Մի քիչ ցնդած է։ Կարող է, որ նա շատ կրթված մարդ է բայց միևնույն է, մի քիչ խելառ է։ Այդ գաղափարներն Էմմայինը չեն։ Նրա գաղափարներն են. Էմման քեզ սիրում է։ Ինչո՞ւ պիտի քեզ տանից քշեր ու պահանջեր, որ որևէ բան անես։ Ավելի ապուշ բան կյանքումս չեմ լսել։ Հավատա ինձ, այս բոլոր հիմարությունների հեղինակը Յերուկ Գորդոնն է։

— Վստահ չեմ,— ասաց Մայքը։

Սեմը դրեց գլխարկն ու կանգնեց։

— Մի կանգնիր,— ասաց Մայքը։— Նստիր։ Գիշերվա կեսին քեզ անկողնուց հանելն ինձ էլ շատ հաճելի չէ, բայց ամեն ինչ գնալով լրջանում է։ Ես անհանգստացած եմ։ Եվ քո խորհրդի կարիքն ունեմ։ Մենք պետք է ամենամոտ ապագայի համար որևէ բան մտածենք։ Ես լրիվ կուշտ եմ այս անապատ տեղերից։ Եվ քեզանից էլ ոչ պակաս ուզում եմ Նյու Յորք վերադառնալ։

— Ոչ,— ասաց Սեմը,— շատ պակաս։ Նույնիսկ համեմատել չի կարելի։

Նա գլխարկը հանեց ու նորից նստեց։

— Համենայն դեպս,— ասաց Մայքը,— միակ բանը, որ հաստատ գիտեմ՝ մահու չափ ուզում եմ տուն վերադառնալ ու վերջ։

— Իսկ ինչո՞ւ չես վերադառնում,— հարցրեց Սեմը։

— Չեմ կարող։

— Ինչո՞ւ նա քո կինն է, չէ՞։ Քո տղայի մայրն է, չէ՞։

— Այո,— ասաց Մայքը,— և չնայած դրան, եթե ես առանց որևէ բան անելու վերադառնամ, հաստատ գիտեմ, որ կբաժանվի ինձանից։

— Այո՞,— ասաց Սեմը,— իսկ ինչի՞ հիման վրա։

— Այն հիման վրա, որ ես որևէ բան չկարողացա անել։

— Այդ տեսակ հիմքին ի՞նչ անուն ես տալիս,— հարցրեց Սեմը։

— Էմմայի հիմք,— ասաց Մայքը։

— Բաժանության համար այդպիսի հիմք գոյություն չունի։ Եթե խփած լինեիր, կամ լքած, կամ դրա նման մի բան, ուրիշ հարց է։

— Փաստորեն՝ այո։ Բայց հասկացիր, որ եթե նա ուզում է բաժանվել, կամ թեկուզ միայն մտածի, թե ուզում է, ես, միենույն է, ի վիճիկի չեմ լինի դիմադրելու։ Հենց այդ պատճառով էլ ամբողջ երեք ամիս գլուխ եմ կոտրում՝ նրան գոհացնող որևէ բան անելու համար։

— Ապուշություն,— ասաց Սեմը։— Դու աղքատ չես։ Ինչո՞ւ պիտի որևէ բան անես։

— Քեզ հայտնի է, չէ՞, որ դա իմ գաղափարը չի,— ասաց Մայքը։— Ինձ լսիր, Սեմ։ Դու էլ աղքատ չես, բայց իհարկե հարուստ էլ չես։ Պիտի որ դու կարողանայիր այս մասին կարգին մտածել ինձ հետ առանց ժամանակ կորցնելու և ինձ գոնե մի գաղափար տայիր։ Կամ ավելի լավ է՝ երկուսը։

— Այո,— ասաց Սեմը,— բայց մենք այս մասին արդեն հազար անգամ խոսել ենք։ Ես չգիտեմ՝ էմմայի ուզածն ինչ է, որ անես։

— Լավ,— ասաց Մայքը։— Բեր հարցին ուրիշ կերպ մոտենանք։ Եթե քեզ նույն բանը Ռոզ Տարանտինոն առաջարկեր, ի՞նչ կանեիր։

— Քեզ հազար անգամ ասել եմ, որ Ռոզ Տարանտինոն չէր պահանջի, որ ես որևէ բան անեմ,— վրդովվեց Սեմը։— Նա սիրում է ինձ։

— Հասկանում եմ,— ասաց Մայքը։— Դու հրաժարվում ես համագործակցելուց։

— Լավ,— ասաց Սեմը։— Լավ։ Մի նեղացիր։ Ես մի քիչ էլ կհամագործակցեմ։ Արի մտածենք, թե ի՞նչ կարող ես անել։

Երկուսն էլ միաժամանակ լռեցին։

— Լսել եմ, մի տղա, տակառի մեջ նստած, անցել է Նիագարայի ջրվեժը,— ասաց Սեմը։

— Այո, բայց մեռել է,— ասաց Մայքը։

— Իսկապես որ,— ասաց Սեմը։

— Չէ,— ասաց Մայքը,— ես տակառով Նիագարայի ջրվեժը չեմ անցնի։ Ուրիշ բան մտածիր։ Ուզեղդ աշխատեցրու։

— Հիմա,— ասաց Սեմը։ Կես րոպեի չափ նա, գլուխը համարյա

հատակին կպցրած, աշխատեցրեց իր ուղեղը։ Հետո գլուխը բարձրացրեց, և Մայքը նրա աչքերում պայծառ լույսի շողեր տեսավ։

— Դրոշակի ձողին նստելու մասին ի՞նչ կասես, Մայք։

— Դրոշակի ձողի՞ն։ Հնարավոր չի,— ասաց Մայքը։— Տեղ չկա նստելու։

— Ի՞նչ է նշանակում՝ տեղ չկա,— զարմացավ Սեմը։— Դու հո հենց ձողին չե՞ս նստելու։ Քեզ աթոռ կտան։ Հարմար կտեղավորվես։

— Չեմ ուզում նստել դրոշակի ձողին,— ասաց Մայքը։

— Վճռական եղիր, խնդրում եմ,— ասաց Սեմը,— թե չէ ես Ռոզ Տարանտինոյի կարոտից կմեռնեմ։

— Ես դրոշակի ձողին նստողը չեմ,— ասաց Մայքը։— Էդ միտքը գլխիցդ հանիր։

— Դրոշակի ձողին որ նստես, բոլորն էլ կխոսեն քո մասին,— ասաց Սեմը։— Մի այնպիսի բան հնարիր, որի շուրջը մարդիկ խոսեն։

— Ես դրոշակի ձողին չեմ նստի,— կատաղեց Մայքը։

— Դե լավ,— ասաց Սեմը,— լավ։ Դու ինձ հարցրիր, ես քեզ ասացի։ Նիագարայի ջրվեժն ու դրոշակի ձողը։ Ուրիշ բան չգիտեմ։

— Երկուսն էլ բանի պետք չեն,— ասաց Մայքը։

— Հարվարդն ես ավարտել, չէ՞։ Ի՞նչ ես սովորել Հարվարդի համալսարանում։

— Չեմ հիշում,— ասաց Մայքը։

— Այդպես էլ գիտեի։ Կյանքումդ որևէ լավ բանով զբաղվե՞լ ես։

Մայքն ընկավ մտածմունքների մեջ։

— Մի տարի,— ասաց նա,— բոնցքամարտով էի զբաղվում։

Սեմը վեր թռավ։ Իսկույն հանեց բաճկոնն ու թևքերը վեր քշտեց։

— Դե արի տեսնեմ,— ասաց նա,— ցույց տուր՝ տեսնեմ ի՞նչ գիտես։

— Կարծում եմ՝ ոչ մի բան էլ չես տեսնի։ Ինձ հենց առաջին ռաունդում գետնին փռեցին։

— Մեկ է,— ասաց Սեմը։— Վեր կաց, բաճկոնդ հանիր։

— Ինչո՞ւ։

— Տասը րոպեում քեզ այնքան բան կսովորեցնեմ, որ ամբողջ կյանքումդ չես սովորի։

— Ի՞նչ է, ուզում ես բոնցքամարտի չեմպի՞ոն դառնամ.

— Այո,— ասաց Սեմը։— Դու լավ մարդավիճակում ես։ Ես քեզ ահագին բան կսովորեցնեմ։

— Կարծում ես՝ կկարողանա՞մ։

— Ի՞նչ է նշանակում՝ կարծում ես։ Հաստատ բան եմ ասում։

Ականջդ բաց արա՝ ժայռի պես ամուր Հարվարդի շրջանավարտ։ Խելք, արագություն, հնարամիտ ոճ, և ամենակարևորը՝ հարձակվողականություն։ Վեր կաց, Մայք, և ես քեզ մի քանի հնարքներ կսովորեցնեմ։

Մայքը վեր կացավ, հանեց բաճկոնն ու քշտեց թևերը։

— Պատրա՞ստ ես,— ասաց Սեմը։— Ուրեմն՝ սա ռինգ է։ «Բիինգ»-գոնգը խփեց։ Սկսեցինք։

Մայքը վախենալով առաջ եկավ։ Վարորդը, արագ, բացատրելով, ձախից թրխկացրեց նրա ծնոտին ու գրեթե միաժամանակ աջ բռունցքով ուժեղ խփեց փորին։ Մայքը շնչակտուր երկտակվեց։

— Տեսա՞ր,— ասաց Սեմը։— Դու էլ նույնը կանես։

Հինգ րոպեից Մայքի շունչը տեղն ընկավ, ու նա կարողացավ խոսել։

— Մի րոպե,— ասաց նա։— Սեմ, մի րոպե։ Դու բնածին մարդասպան ես։ Խնդրում եմ, դու եղիր բռնցքամարտիկը, իսկ ես կլինեմ քո տնօրենը։ Մենք ամենակարճ ժամանակում կնվաճենք կռփամարտի աշխարհը։ Դու Շարքեյին նոկաուտ կանես երկրորդ ռաունդում, Բեյերին՝ երրորդում, Բրեդդոքին՝ չորրորդում և Ջո Լուիսին՝ հինգերորդում։

— Կռփամարտի աշխարհը ես չպիտի նվաճեմ, այլ դու,— ասաց Սեմը։— Ռոզ Տարանտինոն չի, որ պահանջում է որևէ բան անել, այլ քո կինը։ Դու պիտի նոկաուտ անես, բայց ոչ Շարքեյին, Բեյերին, Բրեդդոքին կամ Ջո Լուիսին։ Լրիվ բավական կլինի, եթե դու հաղթես մի որևէ մաշված տեղացի տղայի։ Արդեն լավացա՞ր։

— Մի քիչ,— ասաց Մայքը։

— Օ քեյ,— ասաց Սեմը։— «Բիինգ»-գոնգը խփեց։ Երկրորդ ռաունդ։

— Մի րոպե,— ասաց Մայքը։

— Նա ճարպկորեն թռավ աթոռի վրայից և վազեց մյուս սենյակ, բայց վարորդը նույնպես թռավ ու վազեց նրա ետևից։

— Դու սեղմված ես պարաններին,— ասաց նա։— Ի՞նչ ես անելու։ Սա դժվար կետ է։

Մայքը չգիտեր՝ ի՞նչ է անելու։ Նրա արածն այն եղավ, որ պարզապես փովեց հատակին։

Սեմը զզված արտահայտությամբ կանգնեց նրա գլխավերևում։

— Սրանից կովող դուրս չի գա,— ասաց նա։

Ապա գնաց լողասենյակ, բաժակով ջուր բերեց։ Հետո ջրից մի բուռ շփեց Մայքի դեմքին։

— Հուսով եմ՝ նկատեցիր հարվածս,— ասաց նա։

— Վիսկի տուր ինձ,— տնքաց Մայքը,— և կարող ես քեզ գործից ազատված համարել։

— Այսինքն։

— Այսինքն՝ թե մեկ էլ փորձես ինձ բանդքամարտից բան սովորեցնել, կարող ես քեզ գործից ազատված համարել։

— Օ քեյ,— ասաց Սեմը։— Ես ազնվորեն կատարում էի պարտքս այնպես, ինչպես պատկերացնում էի։— Նա նույն դետեկտիվ պատմվածքից էր քաղել այս նախադասությունը։

Սեմը վիսկի լցրեց ու տվեց Մայքին։ Մայքը կուլ տվեց վիսկին և ուժասպառ, ծնոտը շփելով վեր կացավ հատակից։

— Հիմա լսիր, թե ինչ ենք անում,— ասաց նա։— Մենք հոգնած ենք։ Դու պիտի գնաս սենյակդ և պառկես քնելու։ Առավոտյան թարմ գլխով որևէ բան կձեռնարկենք։ Կեսօրին կարթնացնես ինձ։

— Օ քեյ, Մայք,— ասաց Սեմը։

Տասը րոպեից Մայքի հեռախոսը զնգաց։

— Մայք,— ասաց Սեմը լսափողից,— Հրաշալի բան եմ մտածել։

— Ապրես,— ասաց Մայքը։— Ասա տեսնեմ։

— Քեզանից կռվող դուրս չի գա, բայց ինձ թվում է՝ դու ստեղծված ես վազք ու ցատկի համար։ Հիմա ես կգամ ու քեզ մի քանի ցուցումներ կտամ։

— Հենց եկար, գործից ազատված ես,— ասաց Մայքը։— Առավոտյան կտեսնվենք։

— Օ քեյ,— ասաց Սեմը։— Մի նեղացիր, Մայք։

Մայքն արթնացավ առավոտյան ժամը տասին ու գնաց իր վարորդի սենյակը։ Սեմը դեռ քնած էր։ Դռան թխկթխկոցը լսելուն պես, քունը գլխին կանչեց՝

— Ո՞վ է։

— Մայքը։

— Ո՞ր Մայքը,— կանչեց Սեմը։

— Քորբեթ Մայքը,— ասաց Մայքը։

Սեմը վեր թռավ անկողնուց ու բացեց դուռը։

— Չէ,— ասաց նա,— չհասկացար։ Երբ հարցնում եմ՝ ո՞ր Մայքը, մի ծիծաղելի բան ասա։ Օրինակ, ես կասեմ՝ «Թրխկ-թրխկ», իսկ դու ասա՝ ո՞վ է։

— Բան ասա, բան։

— «Թրխկ-թրխկ»— ասաց Սեմը։

— Լավ— ասաց Մայքը։— Ո՞վ է։

— Օլբին,— ասաց Սեմը։

— Ո՞ր Օլբին։

— Այն Օլբին, որ լինելու է ուրախ, թե որ սատկես դու, այ սրիկա ախմախ,— հանգավորեց Սեմը։

— Համա թե ծիծաղելի է,— ասաց Մայքը։— Հագնվիր, գործ ունենք անելու։

— Գո՞րծ,— զարմացավ Սեմը։— Ի՞նչ գործ։

— Կտեսնես։ Վեր կաց, մեքենան հանիր, գնանք քաղաք, շրջենք։ Մեկ էլ տեսար՝ մի միտք ծագեց։

Սեմը մտավ ցնցուղի տակ։

— «Թրխկ-թրխկ»— ասաց։

— Վերջ տուր,— ասաց Մայքը։— Եվ շուտ արա։ Ես իջնում եմ ներքև սուրճ խմելու և առավոտվա թերթը կնայեմ։ Քեզ համար էլ սուրճ կուղարկեմ վերև։

— Շնորհակալություն,— ասաց Սեմը։— Միջին չափսի կառան կոտլետները չմոռանաս։

— Տասը րոպեից մեքենան պատրաստ լինի,— ասաց Մայքը։

Տասնհինգ րոպե հետո Սեմն արդեն նստած էր ղեկին։ Նա քշեց դեպի Մարքեթ, այնտեղից էլ դեպի Ֆել ու հետո՝ Գոլդեն Գեյթ զբոսայգին։ Զբոսայգում նա շատ դանդաղ էր քշում։ Հրաշալի օր էր, և զբոսայգում ամենալավ ժամանակը։

Զբոսայգուց դուրս եկան ուղիղ օվկիանոսի ափը։

— «Թրխկ-թրխկ»— ասաց Սեմը՝ երբ տեսավ օվկիանոսը։

— Ո՞վ է։

— Խաղաղ օվկիանոսը։

— Ո՞ր խաղաղ օվկիանոսը։

Սեմը ծիծաղեց։

— Բոնացրիր ինձ,— ասաց։— Ուղղակի խաղաղ օվկիանոսը։ Մեկզրո՝ հօգուտ քեզ։

— Ինչո՞ւ— ասաց Մայքը։— Շատ լավ է ստացվում։ Ուղղակի խաղաղ օվկիանոսը,— կրկնեց նա։

Խաղաղ օվկիանոսն այնպես ուժեղ զգացնել տվեց Մայքին իր մենակությունը, որպիսին երբեք չէր զգացել։ Մայքը հասկացավ, որ իրեն միայն մի ելք է մնում՝ տուն վերադառնալ։

— Լսիր, Սեմ,— ասաց նա։— Ես որոշեցի։ Վաղն առավոտյան մենք պետք է Նյու Յորքում լինենք։

— Այս մարդը գիժ է,— ասաց Սեմը։— Դա անհնար է, Մայք։

— Անհնար չէ։ Գիշերն ինքնաթիռ ենք նստում և առավոտյան Նյու Յորքում ենք։

— Ինքնաթի՞ռ,— ասաց Սեմը։— Իսկ այս մեքենան ի՞նչ ենք անում։

— Կթողնենք այստեղ՝ գարաժում։ Կամ կվաճառենք։ Կամ ինչո՞ւ վաճառենք, ուղղակի կնվիրենք։ Տես, թե ի՞նչ կանենք. մենք սա կնվիրենք մեկին, որ միշտ երազել է սրա նման մի մեծ խարաբա ունենալ։

— Ես միշտ երազել եմ սրա նման մի մեծ խարաբա ունենալ,— ասաց Սեմը։

— Եղավ,— ասաց Մայքը։— Այս մեծ խարաբան հիմա քոնն է։

— Լո՞ւրջ ես ասում։

— Իհարկե,— ասաց Մայքը։— Ես տուն եմ գնում։ Դու կարող ես վարորդ վարձել ու ինքդ նստել իմ տեղը։

— Չէ,— ասաց Սեմը,— շնորհակալություն։ Ես ինքս կքշեմ։

— Ավելի լավ,— ասաց Մայքը։— Ես օդանավ կնստեմ, իսկ դու կքշես տուն։

— Մի րոպե,— ասաց Սեմը,— արի մտածենք։ Այդ օդանավերն ապահով են, չէ՞։

— Իհարկե,— ասաց Մայքը։— Ի՞նչ է, չե՞ս ուզում այս մեծ խարաբա-մեքենան։

— Ավելի լավ է Ռոզ Տարանտինոյին յոթ օր շուտ տեսնեմ։ Արի էս խարաբան ուրիշին նվիրենք. մի որևէ լրագրավաճառ տղայի կամ դրա նման մեկին։

— Այ, հիմա խելոք բան ասիր,— ասաց Մայքը։

Նրանք մեքենան նվիրեցին մի տասնչորսամյա իտալացի լրագրավաճառի, անունը՝ Վինսենտ Տորինի։ Մայքը տղային Նյու Մոնթգոմերի փողոցում գտնվող Ռասս Բիլդինգի իրավաբանի մոտ տարավ և գործարքն օրինականացրեց։ Տղան զարմացած էր, ահաբեկված ու երջանիկ։ Ասաց, որ ինքը փորձված քշող է։ Իրավաբանը մահու չափ վախեցած էր։ Նրան թվում էր, որ դա ինչ-որ նոր տեսակի դավադրություն է։ Հնարավոր է՝ երեխային գողանալու համար, չնայած ո՞վ պիտի ուզենար լրագրավաճառին գողանալ։ Այնուամենայնիվ, նա զանգահարեց ոստիկանությանը և թերթերին։

Ոստիկաններն ու լրագրողները Մայքին ու Սեմին Տորինիների Թելեգրաֆ Հիլլի տանը գտան։

Մայքն ու Սեմը, Տորինիների հետ միասին, իրենց արածն էին նշում, խմում էին գինի, ծիծաղում էին, ճառում, հրճվում ամեն մեկն իր հաջողությամբ։

Ջերբակալություններ չեղան, բայց դրա փոխարեն տասնյակ լուսանկարներ արվեցին։ Հայր Տորինին, մայր Տորինին, Վինսենտը, հինգ փոքրիկ Տորինիները, Մայքը և Սեմը՝ բոլորն էլ ժպիտը դեմքներին։

Մայքն ու իր վարորդը օդանավ նստեցին և առավոտյան իրենց

ճամպրուկներով կանգնած էին Նյու Ջըրսիի հողին։ Սեմը շտապեց Բրուկլին՝ Ռոզ Տարանտինոյի մոտ, Մայքը թռավ մի տաքսու մեջ ու սլացավ Մանհեթեն՝ տուն, Պստիկ Մայքի ու Էմմայի մոտ։

Չգիտեմ,— մտածում էր նա։— Ես նվիրեցի իմ մեծ խարաբան ու տուն եկա։ Երեք ամսում ես Նյու Յորքից հասա Սան Ֆրանցիսկո և մի գիշերում Սան Ֆրանցիսկոյից վերադարձա Նյու Յորք։

Չգիտեմ,— կրկնեց նա մտքում ու թաղվեց նստատեղի մեջ՝ երջանիկ, բայց մի փոքր անհանգստացած։

Առաջինը Պստիկ Մայքը տեսավ նրան։

— Ահա, նորից եկել է,— ասաց Մայքը։

Պստիկ Մայքը թաթիկներով գրկեց նրա պարանոցն ու համբուրեց այտը։

— Աստված իմ,— ասաց Մայքը։

Հետո՝ Էմման։ Մայքի ոտքերն ուրախությունից թուլացան։

— Աստված իմ,— ասաց նա։

Հետո նստեց ու փորձեց հանգստանալ։

— Հավատս չի գալիս, որ տանն եմ,— ասաց։— Չգիտեմ,— ասաց։— Ինձ թվում է՝ ուրա՞խ ես։

— Իհարկե, ուրախ եմ,— ասաց Էմման։

— Երբեք չեմ կարողացել հասկանալ քեզ,— ասաց Մայքը։

— Նախանցյալ գիշեր,— ասաց նա,— երբ խոսում էի քեզ հետ, այնպես ցույց տվիր, որ չես ուզում ինձ նորից տեսնել, իսկ հիմա քեզ եմ նայում...

— Է, ինչ կա, նայիր։— ժպտաց Էմման։

— Նայում եմ,— ասաց Մայքը,— տեսքդ հրաշալի է, իսկ ես երևի հյուծված ու տանջահար եմ, չէ՞։ Այս երեք ամիսները, որ հեռու էի քեզանից, կյանքիս ամենադժբախտ, ամենախղճուկ, ամենահիմար ամիսներն էին։ Եվ ես ինքս էլ այդպիսին եմ, որովհետև ոչինչ չեմ արել։

— Արածդ մեծ բան չի եղել,— ժպտաց Էմման։

— Չեմ հասկանում,— ասաց Մայքը,— իսկ որևէ բան եղե՞լ է։

— Այո,— ասաց Էմման։— Երեք ամսվա մեջ բացարձակապես չես փոխվել։

Մայքը շփոթվեց։

— Աղնվորեն, Էմմա,— ասաց նա,— չեմ հասկանում։ Կարող է, որ ես լրիվ ապուշի մեկն եմ, բայց չեմ հասկանում։ Ինձ թվում էր՝ ես ինչ-որ բան պիտի անեի։

— Գաղափարն այդ էր,— ասաց Էմման։

— Բայց ես ոչինչ չարեցի։ Ես շատ էի մտածում դրա մասին, բայց

տուն գալուց ավելի լավ բան չգտա։ Տասներեք օր ես Չիկագոյում փորձում էի պատմվածք գրել։ Գրեցի վերնագիրը և ընդամենը մի փոքրիկ նախադասություն։

— Վերնագիրն ի՞նչ էր,— հարցրեց Էմման։

— «ԷՄՄԱ»— ասաց Մայքը,— դա էր վերնագիրը։

— Փոքրիկ նախադասությունն ի՞նչ էր։

— «Դու կոտրում ես սիրտս»— ասաց Մայքը,— դա էր նախադասությունը։

— Մայք,— ասաց Էմման։

— Ուզում ես ասել՝ ամեն ինչ լա՞վ է,— ասաց Մայքը։

— Լա՞վ,— ասաց Էմման։— Ամեն ինչ ուղղակի հրաշալի է։

— Ինչպե՞ս,— ասաց Մայքը։

— Դու տուն ես եկել,— ասաց Էմման,— և բոլորովին չես փոխվել։

— Տո՞ւն եմ եկել,— զարմացավ Մայքը։— Ես կարծում էի դա է հենց, որ դու ինձ չես ներելու... Բայց չէի կարող չգալ։

— Մի օր կբացատրեմ քեզ,— ասաց Էմման։

— Չգիտեմ,— ասաց Մայքը,— ես չեմ կարողանում հասկանալ քեզ։

— Զարշարանքի երեք ամիս,— ասաց նա։— Իգուր չարչարանքի երկու ամիս։

— Ի՞նչ,— ասաց Էմման։

— Չգիտեմ,— ասաց Մայքը։— Չեմ հասկանում։ Երբեմն ես պարզապես ոչինչ չեմ հասկանում...

ՄՐՋՅՈՒՆՆԵՐԸ

Այնպես պատահեց, որ մենք տեղափոխվեցինք մի տուն, որը, բնակարանային գործերով զբաղվող գործակալի խոսքերով ասած, տուն չէր, այլ հրաշք։ Մի բան այնտեղ իսկապես հրաշալի էր՝ պատշգամբը, ուր տատիկը կարող էր ամբողջ օրը նստել իր ճոճաթոռի մեջ։ Եվ նա այդ հնարավորությունից օգտվեց հենց անմիջապես, օր առաջ, մինչ մենք տասնմեկս՝ ներառյալ Սեմը, կտեղափոխվեինք նոր տուն։ Տատիկը պատշգամբն այնքան էր հավանել, որ ինձ ստիպեց յոթ թաղամաս ճամփա կտրել, գնալ Փիլթրի փողոցում գտնվող մեր հին տունը և բերել իր ճոճաթոռը, որի մեջ էլ անցկացրեց օրվա մնացած մասը։ Արևի մայր մտնելուց հետո տուն մտավ ընթրելու և հետո նորից գնաց ու նստեց իր ճոճաթոռին։ Նստել էր, ծխում էր ու ճոճվում։

Ամառ էր, տաք գիշեր, ու տատիկը այդպես էլ ամբողջ գիշեր ճոճվում էր։

Առավոտյան, երբ սկսեցինք իրերը տեղափոխել, արթնացրինք նրան։ Բոլոր տասնմեկս, այդ թվում և Սեմը, ստիպված էինք մի-չորս անգամ գնալ-գալ, մինչև տեղափոխեցինք մեր փալաս-փուլուսը։ Ցերեկը ժամը երկուսին մոտ մեր ունեցած-չունեցածն արդեն նոր տանն էր, և իմ քեռի Ուոֆֆորդը, կամ Լուին, ինչպես կոչում էինք նրան, գնաց քաղաք՝ ջուրը, գազը և էլեկտրականությունը միացնելու հարցերը հոգալու։ Արևը դեռ մայր չմտած, բոլորս արդեն հավաքված էինք նոր տանը, խոհանոցի ծորակից ջուրն էր հոսում, գազօջախի վրա եփվում էր միսը, իսկ էլեկտրական հոսանքը շիկացնում էր Վուլվորդից գնած տասը սենթանոց պայծառ լամպերը։

Սեմը, որին մենք միշտ հաշվում էինք մեր ընտանիքի առկա անդամների թվում, անկախ նրա վերաբերմունքից մեր այս գործի հանդեպ, ամբողջ օրը փնթփնթում էր, իսկ ընթրիքից առաջ սպառնաց, թե նորից կգնա տնից։

— Սեմ,— ասաց տատիկը,— գոնե ինքդ քեզնից ամաչեիր, մի գլուխ սպառնում ես, թե կգնաս տնից, քառասուն տարեկան մարդը այդպես կխոսի՞ երեխաների մոտ, մի մտածիր, թե ինչ օրինակ ես ցույց տալիս նրանց։

— Ինքներդ էլ գիտեք, որ անարդարացի եք, մայրիկ,— ասաց Սեմը,— ոչ ոք ձեզ իրավունք չի տվել ինձ վրա այդպես բռնանալ, այնպես վարվել, ասես ես ոչնչություն եմ։

— Չենք ասում, որ դու ոչնչություն ես,— ասաց Լուին,— ասում ենք միայն վերջ տուր քո այդ հիմարություններին, բոլորի նման դու էլ մի գործի լծվի և կյանքում ինչ-որ մի բանի հասի։

— Իսկ դու ինքդ ինչի՞ ես հասել,— ասաց Սեմը։

— Ե՞ս,— ասաց Լուին,— ես չէի՞, որ գնացի քաղաք, որ ստիպեցի միացնեն ջուրը, գազը, լույսը, հը՞, ես չէի՞։ Չլինի՞ թե դու գնացիր ուր պետք է, հայտնեցիր մեր նոր հասցեն, ասացիր ում անունով է տունը։ Եվ դեռ հարցնում է՝ ես ինչի եմ հասե՞լ։ Ես որ շատ եմ տրորվել, քարշ եկել ուր ասես, դու դա չմոռանաս։

— Ոչ մի կարիք չկար տեղափոխվելու մեր հին տնից,— ասաց Սեմը,— այդ մեկը ես գիտեմ։ Տեղափոխվեցինք միայն նրա համար, որ չկարողացանք վճարել բնակարանի վարձը։

— Պատճառը բոլորովին էլ դա չէր,— ասաց տատիկը։— Այն տունը շատ փոքր էր, նեղվածք։ Այնտեղ նույնիսկ պատշգամբ էլ չկար, որ իմ ճոճաթոռը դնեինք։ Այ, դրա համար տեղափոխվեցինք։

— Բոլորդ էլ նստեցեք եք,— ասաց Սեմը,— ամեն մեկդ միայն ձեր մասին եք մտածում, չունեք ոչ մի հարգանք մեր հին տան պատերին թողած իմ արվեստի նկատմամբ։ Պատերին գրված իմ բոլոր բանաստեղծությունների ու պատմվածքների։ Դրա՞ն ինչ կասեք։

— Օհ, նորերը գրի այս տան պատերին,— ասաց տատիկը,— մի լավ մատիտ ճարի և խոհանոցի առաստաղից սկսի ու գրի մտքովդ անցած բոլոր բանաստեղծություններն ու պատմվածքները։

— Օհ, լռիր,— ասաց Սեմը։

— Դե,— ասաց Լուին,— տես ինչ կասեմ՝ դու պետք է համակերպվես մեր այս նոր տանը, որովհետև մենք այստեղ ունենք ջուր, գազ, լույս և դեռ երկու ամիս էլ կունենանք, մինչև կանջատեն։

Այդպես մենք սկսեցինք ապրել պատշգամբ ունեցող այդ նոր տանը։ Ու մեր կյանքն այնտեղ սկսեցինք տուն ոտք դնելուն պես։ Ոմանք տեղավորվեցին հենց տան մեջ, ոմանք՝բակում,-իսկ իմ մորաքրոջ տղան՝ Մերլը, ուզեց ապրել տանիքում, որտեղից, նրա կարծիքով, ամեն ինչ շատ լավ էր երևում։

Տունը հիանալի տուն էր, եթե միայն չլինեին մրջյունները։ Մրջյուններ էին ամենուր. նոր տանը մեր կյանքի հենց առաջին առավոտից մրրջյունները և մեզ վրա էին, և մեր կերակուրի մեջ, մրջյուններ էին ամենուր։ Սկզբում բոլորս շատ զայրացած էինք, բորբոքված խոսում էինք, թե ինչ սարսափելի ստախոս է այդ գործակալը, շարունակ գովում էր այդ հիանալի տունը, մի բառ անգամ չասելով, թե մրջյուններ կան։ Մրջյունները վխտում էին մեր մարմնով մեկ, մտնում շորերի, մազերի, աչքերի մեջ, սողում ձեռների վրայով, մի խոսքով մրջյուններ էին ամեն տեղ։ Սկզբում, անընդհատ ճմլում էինք, ճզմում, տրորում, ջրում խեղդում էինք այդ մրջյուններին, բայց երբ համոզվեցինք, որ դա զուր բան է, թողեցինք պարզապես, որ վեր ու վար անեն ուզածին պես։

Ուրիշ ելք չունեինք, թեև ստիպված էինք շարունակ քացի-քացի անել, վեր-վեր թռչել, գալարվել, մրջյուններ թափ տալ ձեռքներիս ծայրերից, քթներիս վրայից։ Միակ փրկությունը լոգանք ընդունելն էր։

— Դե,— ասաց Սեմը,— կարծում եմ, որ հիմա բոլորդ էլ կվերադառնաք Փիլթրի փողոցի հին տունը՝ մեր իսկական տեղը։

— Ոչ, չենք վերադառնա,— ասաց Լուին,— կմնանք հենց այստեղ, դժվարությունները կհաղթահարենք։ Մարդ ե՞նք մենք, վերջապես, թե ի՞նչ ենք։

— Լավ,— ասաց Սեմը,— ես միայն իմ փոխարեն կարող եմ ասել, և ասում եմ, որ սարսափելի ստորացուցիչ է տեսնել, թե մրջյուններն

ինչպես են գիշեր-ցերեկ վրադ շրջում, և եթե դուք գեթ մի փոքր հպարտություն ունեք, ինչ-որ բան պետք է անեք նրանց դեմ։

Նոին գալարվեց, քացի տվեց, վեր ցատկեց, քթի վրայից երկու մրջյուն թափ տվեց և ասաց.

— Մենք անընդհատ ինչ-որ բան անում ենք։ Եվ քեզնից էլ պահանջ հպարտ չենք։

Այսպիսով մենք նոր տանը ոչ թե սկսեցինք ապրել, այլ ապրել և տառապել։ Այդպես ապրում էինք այդ տանը, սակայն մեր տառապանքները՝ ցերեկ թե գիշեր, ոչ մի բոպե չէին դադարում։ Քացի-քացի էինք անում, վեր էինք թռչում, գալարվում, մրջյուններ թափ տալիս վրաներիցս և մրջյուն էինք ուտում ամեն ինչի հետ։

— Ես առաջ էլ եմ մրջյուններ տեսել,— ասաց տատիկը,— բայց սրանց նման տեսած չկամ։

Մեր մորաքրոջ աղջիկը՝ Վերման, քացի էր տալիս, վեր թռչում, ծռմռվում, պտտվում էր, ծիծաղում, ձեռքերը վեր պարզում և բղավում «Օ՜-ա»։

Նրա այդ ձևի բղավելը շատ հաճելի էր լսել։ Մարդիկ քաղաքի մյուս ծայրից հավաքվում էին, որ իմանան, թե այդ ինչ աղմուկ է։ Նրանք փողոցից նայում էին մեզ, գլուխները թափահարում և հեռանում։ Բայց ահա մի օր, կարմիր ու կապույտ գծավոր սվիտեր հագած մի երիտասարդ ձայն տվեց Վերմային։

— Քույրիկ,— բղավեց նա,— ի՞նչ է կատարվում ձեր տանը։

— Մրջյուններ,— նույնպես բղավելով պատասխանեց Վերման։

— Ինչո՞ւ չեք ստակացնում,— բղավեց տղան։

Եվ Վերման նորից բղավելով պատասխանեց։

— Շա՜տ-շատ են։ Ստակացնում ենք, բայց նրանք մեզնից արագաշարժ են։

— Ինձ թվում է, ես կարող եմ ստակացնել ձեր տան բոլոր մրջյուններին,— բղավեց տղան,— ի՞նչ միտք ունի այդպես տանջվել։

— Իսկ մենք արդեն չենք տանջվում,— բղավեց Վերման,— վարժվել ենք։

— Պետք է որ սարսափելի հոգնեցուցիչ լինի այդպես շաբունակ թռչկոտելը տնով մեկ,— ասաց երիտասարդը։

— Այնքան էլ չէ,— ասաց Վերման։

Այդպես սկսվեց նրանց սիրավեպը։ Նրա անունը Ջոն Թարհիլ էր, մասնագիտությամբ նավաստի։

Ինչևէ, ինքն այդպես ասաց։ Տատիկին նա դուր եկավ կյանքի հանդեպ իր համարձակ և անխոհեմ վերաբերմունքով։ Մի անգամ ինչպես

է պատահել նաև Սան Ֆրանցիսկոյում հանկարծ հայտնվել է նավահանգիստում կանգնած մի նավի վրա։ Իսկույն իջել է մեքենաների բաժանմունքը, տեսել է կաթսաները, խողովակները, մի խոսքով դրա ինչ լինելը, տեղեկատեղը նորից բարձրացել է վերև ու վերադարձել Քինգզբուրգ։ Զնայած դրան, նա եղել է շոգենավի վրա։ Նույնպես մի մեծ շոգենավի, որ կոչվում էր «Վասկո դա Գամա»։

— Տատիկ, հավատո՞ւմ եք ինձ,— ասաց Ջոն Թարհիլը,— երբ ձեզ ասում եմ, որ այն շոգենավը, որի տախտակամածին կանգնել էի և որի մեքենաների բաժանմունքը իջա, եղել էր Չինաստանում և նույնիսկ էլ ավելի հեռու տեղերում։

— Այդպես,— ասաց տատիկը,— ուրեմն, հենց Չինաստա՞ն։ Իսկ շոգենավից ի՞նչ հոտ էր գալիս։

— Տախտակամածից՝ փչացած սուրճի և նավթի հոտ էր գալիս,— ասաց Ջոն Թարհիլը,— իսկ ներքևում՝ մեքենաների բաժանմունքից՝ գրիպի և բարձր ջերմության։ Ահա թե ինչու հրաժարվեցի գնալ Հարավային Ամերիկա։

— Մի տես, է՛,— ասաց տատիկը,— Հարավային Ամերիկա, ուրեմն, աղաս, քիչ էր մնում այդպիսի հեռու տեղ մեկնեիր, հա՞։

— Իհարկե, տատիկ,— ասաց Ջոն Թարհիլը,— ի՞նչ եք կարծում, եթե ես երկու դոլար ճարեմ ամուսնական թույլտվության համար, կարող եմ ամուսնանալ Վելմայի հետ, կարո՞ղ ենք մենք ընտանիք դառնալ։

— Կարծում եմ, որ կարող եք, տղաս,— ասաց տատիկը,— երևում է, որ դու լավ ընտանիքից ես։ Ուրիշ էլ ո՞ւր է գնացել այն շոգենավը, որի մասին ամեն ինչ գիտես։

— Գիտեք, տատիկ,— ասաց Ջոն Թարհիլը,— մի մարդուց լսել եմ, որ այդ շոգենավն իբր գնացել է Լիվերպուլ։ Կարծեմ Իռլանդիայում է ինչ-որ տեղ։ Շատ ուրիշ տեղեր էլ է գնացել։

— Այո, այո,— ասաց տատիկը,— իսկապես հետաքրքիր է այսպես զրուցել երիտասարդ տղամարդու հետ, որն ինչեր ասես որ չի տեսել և ուր ասես որ չի եղել աշխարհում։

Մի երկու շաբաթ Ջոն Թարհիլը սիրահետեց Վելմային, և նրանք ամուսնացան։ Սեմը կատարեց արարողությունը, իսկ Մերլը հարսանեկան երաժշտության նման մի բան նվագեց իր շրթհարմոնով։ Ջոնը ոչ մի դոլար էլ չճարեց, այնպես որ Վելման և Ջոնը ամուսնացան առանց մի դոլարի։

— Կարծում եմ, որ ոչ ոք բան չի ասի, եթե դու թույլտվությունն ավելի ուշ ստանաս, երբ փող կունենաս,— ասաց տատիկը,— ամեն ինչ օրենքով է, և Սեմն էլ կարգը գիտի։

Այդպիսով, մեր տանն արդեն տասներկուսով էինք թռչկոտում մրջյուններից։

Հետաքրքիր զբաղմունք էր հետևել այդ փոքրիկ, գործնական և չափազանց զավեշտական արարածներին։ Վելման և Ջոն Թարհիլը իրենց մեղրամիսն անցկացրին պատշգամբի ձախ կողմում, փորի վրա պառկած նայելով մրջյուններին ու ծիծաղելով, բացի, իհարկե, այն դեպքից, երբ տատիկը նորից հարցուփորձ էր անում այն տարբեր երկրների մասին, ուր գնացել էր շոգենավը։

Մի օր Վելման մոտեցավ տատիկին, բայց չկարողացավ ոչ մի բառ արտասանել։

— Ինչ, ի՞նչ է պատահել քեզ,— ասաց տատիկը։

Եվ Վելման թռչկոտեց ու ծիծաղեց։

— Ահա թե ինչ,— ասաց տատիկը,— էհ, փառք աստծո, ես միշտ այդպես եմ ասում։ Նա մեզնից լավ գիտի։ Եվ հետո, հո հիմա չի՞ լինելու։ Ես ուրախ եմ քեզ համար։

Եվ մենք բոլորս իմացանք, որ Վելման երեխա է ունենալու ամուսնությամբ մեզ բարեկամ դարձած Ջոն Թարհիլից։

Հիրավի մենք երկու հիանալի ամիս անցկացրինք նոր տանը. մրջյուններ, շոգենավ, որի տախտակամածին եղել էր Ջոն Թարհիլը, Վելմայի ու նրա սիրավեպը։

Երկու ամսից անջատեցին՝ ջուրը, գազը, լույսը, և մոտ մի շաբաթ մի կերպ ապրում էինք առանց այդ ժամանակակից հարմարությունների, բայց մի շաբաթից եկավ բնակարանային գործակալն ու ասաց, որ մենք կամ պետք է վճարենք բնակարանի վարձը կամ դուրս կորչենք այնտեղից։

Եվ տատիկը ասաց.

— Վճարե՞լ բնակարանի համար։ Ի՞նչ վճարել, տղաս, այս տունը լիքը մրջյուններ են։

Նույն օրը տեղափոխվեցինք մի ուրիշ տուն։

ԱԿՐՈԲԱՏՆԵՐԸ

Մենք նրանց տեսանք փողոցում, երկրորդ հարկում գտնվող բժիշկ Լ. Ռ. Դորգոսի (այսպես էր գրել իր դռան վրա) ատամնաբուժարանի պատուհանից։ Դժվար էր միանգամից հասկանալ, թե նրանք ինչ են անում, մինչև որ երեքից ամենապստվիկը, որն այնքան էլ մեծ չէր

գաճաճից, չսկսեց թռիչքներ կատարել օդում և թավալգլոր գալ հենց փողոցում։

— Հապա նայեք, պարոն Դորգուս,— ասաց Էմին։

— Ի՞նչ է պատահել,— հարցրեց ատամնաբույժը։

Երբ ատամնաբույժը շրջվեց, Հարրին՝ Էմիի եղբայրը, փակեց բերանը և մի բարկացած հայացք նետեց քրոջ վրա։

— Չե՞ս կարող հեռու կանգնել այդ պատուհանից, քանի դեռ ես տանջամահ եմ լինում այստեղ,— ասաց նա։— Նույնիսկ, երբ ամբողջ նրա ուշադրությունն ինձ վրա է, էլի վիճակս լավ չէ, ուր մնաց թե կանչում ես պատուհանի մոտ։ Համ էլ, ի՞նչ է կատարվում այդտեղ։

— Նրանք օդ են թռցնում պատլիկին,— ասաց Էմին։

— Երևի ընտանեկան վեճ է կամ դրա նման մի բան,— ասաց Հարրին։— Պետք չէ ուրիշների գործերին խառնվել։

— Ոչ մի վեճ էլ չէ,— ասաց Էմին։— Նրանք իրար չեն խփում։ Եվ կարծես պատլիկին դուր է գալիս, երբ իրեն օդ են թռցնում։ Այ տես, այնպես է վայր թռչում ոտքերի վրա, կարծես կատու լինի։ Ու դեռ ամեն անգամ էլ տեղում ցատկոտում է։

Ես չգիտեի, թե այդ ամենը ինչպես հասկանամ։ Այսպիսի աշխույժ, կենդանի մարդիկ երբեք տեսած չկայի։ Սրանք կարծես ավելի շատ կենդանիների էին նման, քան մարդկանց։ Դեմքերը թուխ էին, աչքերն այնպիսին, որ երկրորդ հարկից էլ կտեսնես, ձեռքերը ուժեղ, մարմինները ճկուն։

Ատամնաբույժը պատուհանին մոտեցավ հենց այն պահին, երբ մյուս երկուսը, որ մի քիչ ավելի մեծ էին, չնայած իրականում նույնպես փոքրիկ էին, բռնեցին պատլիկին և թռցրին նրան այնպես, որ նա երեք անգամ պտույտ գործեց օդում։ Պտտվելով, նա թեթևորեն վայրէջք կատարեց ոտքերի վրա, մի երկու անգամ ցատկոտեց, իսկ հետո, ըստ ամենայնի պարզապես ուրախությունից, թռիչքներ գործեց օդում։ Մինչդեռ մյուս երկուսը հոլի նման պտտվում էին։

Փողոցի այն կողմից սկսեցին մարդիկ հավաքվել։ Ատամնաբույժը, որ կանգնած էր իմ ու Էմիի կողքին, ասաց.

— Դե, ի՞նչ կասեք սրա մասին։

— Սա ի՞նչ բան է, բժիշկ,— ասաց Հարրին։— Հանելու ե՞ք այս ատամը, թե ուզում եք ամբողջ օրը պատուհանի մոտ կանգնած մնալ։

— Արի դու էլ տես, Հարրի,— ասաց Էմին։— Հիմա արդեն ամեն կողմից մարդիկ են հավաքվել։

Հարրին վեր կացավ ատամնաբուժական աթոռից ու մոտեցավ պատուհանին։ Երեք փոքրիկ տղամարդիկ այժմ արդեն շուրջպար էին

բռնել ու թոշկոտում էին, բայց հետո հանկարծ կանգ առան, շրջվեցին ու սկսեցին շարժել իրենց շուրթերը։

Ատամնաբույժը մի կողմ հրեց մեզ և բացեց պատուհանը։

— Աստված իմ,— ասաց նա,— նրանք կարծես երգում են։ Ու դա կատարվում է հենց Թոթոն փողոցում, ուղիղ դատարանի շենքի առաջ։ Դեռ երբեք Ռիդլիում այսպիսի բան չեր պատահել։

Նրանք, իրոք, երգում էին։ Երգում էին բարձր ձայներով ու մի լեզվով, որի մասին մեզնից ոչ մեկը ամենաչնչին գաղափարն անգամ չուներ։ Իսկ երգը միաժամանակ և տխուր էր, և ուրախ։

— Դե, ի՞նչ եք կարծում,— ասաց Հարրին,— ովքե՞ր են սրանք այնուամենայնիվ։

— Պատկերացում չունեմ— ասաց ատամնաբույժը։— Տասներկու տարի է ինչ աշխատում եմ այստեղ, իսկ նման բան երբեք չեմ տեսել։ Հապա լսեք դրանց երգելը։

Ակրոբատների շուրջը մոտ քսան հոգի մարդ էր հավաքվել։ Նրանցից մի քանիսին ես ճանաչում էի, հատկապես Ջիմ Հոքինին, որն իմ լավագույն ընկերներից էր՝ նախքան մեր կռվելը։ Նա աչքերը շոած կանգնել էր բազմությանն մեջ։ Նրա տեսքը վախեցած էր, ասենք ինչպես նաև մնացած բոլորինը։ Մենք ինքներս էլ վախեցած էինք։ Չնայած, ես ոչ մի կերպ չեի հասկանում, այդ ինչն է, որ վախեցրել է մեզ։ Թերևս գուցե այն, որ այս մարդիկ ինչ-որ անծանոթ հեռու տեղից եկել հասել են Ռիդլիի նման մի փոքրիկ քաղաք և ահա թավալգոր են գալիս, ցատկոտում, պարում են և երգում մեզ անհասկանալի մի լեզվով։ Եթե դա չէր մեզ վախեցնում, ապա ի՞նչը։ Վաղ առավոտյան, ամառային այս խաղաղ փողոցում նրանց թոշկոտելուց ու երգելուց բացի վախենալու ուրիշ ոչ մի պատճառ չկար։

— Կարելի՞ է փողոց իջնեմ— հարցրեց Էմին։

— Ոչ մի տեղ չես գնա,— ասաց Հարրին։

— Ես ուզում եմ տեսնել նրանց,— ասաց Էմին։

— Դու կմնաս այստեղ և ինձ գլխացավանք չես պատճառի։ Ես ինչ իմանամ, թե ովքեր են այդ խենթ մարդիկ։

— Դե, ի՞նչ կասեք սրա մասին,— ասաց ատամնաբույժը։— Ճիշտ որ երգում են։ Ապա լսեք։ Դուք կարո՞ղ եք հասկանալ, թե ինչ են դրանք երգում, Հարրի։

—Թույլ տուր ցած իջնեմ, Հարրի,— ասաց Էմին։— Խնդրում եմ, թույլ տուր։

Հարրին, որ տառնչորս տարեկան էր, բռնեց քրոջ ձեռքից ու մի լավ թափ տվեց։

— Բախտդ բերել է, որ այստեղ ես, բժշկի մոտ։ Գոհ եղիր, որ կարող ես պատուհանից հանդիսատ ու ապահով դրանց նայել։ Ոչ մի փողոց իջնել։ Ի՞նչ իմանաս, դրանք ովքեր են։

Էմիի շուրթերը դողացին, ամաչելով նա մի կողմ քաշվեց պատուհանից և սկսեց անձայն լաց լինել։

— Ըհը,— ասաց Հարրին,— տեր աստված, վերջապես ի՞նչ ես ուզում ինձնից։

— Ոչինչ չեմ ուզում,— հեծկլտալով ասաց Էմին։— Ես ոչ մի բան չեմ ուզում։

— Վերջ տուր լաց լինելուդ,— ասաց Հարրին։— Արի պատուհանի մոտ ու նայիր ինչքան սիրուն ուզում է։ Համենայն դեպս այստեղից շատ ավելի լավ է երևում։

— Չեմ ուզում,— ասաց Էմին։— Դու ինձ երբեք ոչ մի բան թույլ չես տալիս։

Նա աղեկտուր լաց էր լինում, նրա դեմքը ամբողջովին կծկվել էր, մինչդեռ ակրոբատները շարունակում էին երգել փողոցում։ Նրանց երկրորդ երգը ավելի հնչեղ էր, ավելի կենսախինդ ու ավելի տխուր, քան առաջինը, ու չնայած ես էլ էի մի փոքր վախեցած այդ ամենից, այնուամենայնիվ ուզում էի ներքև իջնել ու տեսնել նրանց։ Էմին, որ հեռու էր քաշվել մեզնից, ամբողջովին ջղաձգված հեկեկում էր, իսկ ակրոբատները երգում էին իրենց համար, և հետո հանկարծ ես էլ չդիմացա ու լաց եղա։ Չգիտեմ, թե ինչից լացս եկավ, երևի պարզապես չդիմացա։ Ու այդպես լաց լինելով քաշվեցի սենյակի մյուս անկյունը։

— Քեզ ի՞նչ եղավ,— ասաց Հարրին։— Դո՞ւ էլ ներքև ուզեցիր, հա՞։ Ախր չի կարելի, հասկացիր։ Ես եկել եմ բժշկի մոտ փչացած ատամս հանելու։ Սա ձեզ համար տոնական զբոսանք չէ։

— Դե, ի՞նչ կարծիքի եք արա մասին,— նորից ասաց ատամնաբույժը։

Բժիշկը քառասունհինգին մոտ տարց գլուխ չորացած մի մարդ էր, մաշկն էլ էր չորացած, բերանն էլ, ձայնն էլ։ Նա բարձրահասակ էր, բայց ուսերը կորացած, և շնչառությունն էլ շարունակ ծխելուց տաք էր ու ծանր։ Նա ծխախոտը վառում էր մեկը մյուսի ետևից և երբեք զբաղված չէր աշխատանքով, ապա անընդհատ ծուխ էր արձակում։ Իսկ աշխատանքով երբեք ծանրաբեռնված չէր լինում, այնպես որ ժամանակի մեծ մասը, ամառ լիներ թե ձմեռ, անց էր կացնում պատուհանի մոտ, աթոռին նստած ծխում էր ու երկնքին նայում։

— Երբեք այսպիսի բան չէի տեսել,— ասաց նա։— Հապա մի լսեք դրանց։

— Այս երեխեքի լացը կթողնի՞, որ լսեմ,— ասաց Հարրին։

— Ես երեխա չեմ,— ասաց Էմին,— դու ես երեխա, որ վախենում ես ցած իջնել ու մոտիկից դրանց նայել։

— Ես այստեղ եմ եկել փչացած ատամս հանելու,— ասաց Հարրին։

— Ոչ, դու վախենում ես։ Դու շատ լավ գիտես, որ վախենում ես թե նրանց աչքը քեզ չդիպչի հանկարծ։

— Բոլորովին էլ չեմ վախենում,— ասաց Հարրին։— Մենք պարզապես ժամանակ չունենք փողոց իջնելու։ Ճիշտ չե՞մ ասում, բժիշկ։

— Ինձ համար անպատշաճ բան կլիներ փողոց իջնելը,— ասաց բժիշկը։— Ես որոշակի հեղինակություն ունեմ և պետք է պահպանեմ այն։

Այս տարիքով մարդը նույնպես վախենում էր։ Նա վախենում էր երեք փոքրիկ թուխ տղամարդկանցից այն պատճառով միայն, որ նրանք պարզապես նման չեն մյուսներին, որ նրանք ակրոբատներ են և համարձակություն ունեն փողոցի մեջտեղում երգել ու պարել։

— Այ, տեսնում ե՞ս,— ասաց Հարրին Էմիին։

Ես այլևս լաց չէի լինում, քանի որ խիստ զարմացած էի այն բանի վրա, որ Հարրին ու ատամնաբույժը կարող էին այդքան վախենալ։ Նրանք սոսկալի վախեցած էին և ինձ հետաքրքիր էր, թե ինչու։ Ես ու Էմին նույնպես վախեցած էինք, բայց ես գիտեի, որ մենք Հարրիի ու ատամնաբույժի նման չէինք վախեցած։ Ամենից վախեցածը ատամնաբույժն էր։

— Կարծում եմ ինչ-որ քաղաքային որոշում պիտի լինի այս կարգի բաների դեմ,— ասաց բժիշկը։

— Այո, ճիշտ որ,— ասաց Հարրին։— Հո չի կարելի պարզապես քաղաք գալ, գտնել նրա գլխավոր փողոցը և ակրոբատիկ ֆոկուսներ ու նման բաներ ցույց տալ։ Այստեղ արի, Էմի, տես, նրանք նորից թռչկոտում են։

— Չեմ գա,— ասաց Էմին։

— Ոնց կուզես,— ասաց Հարրին,— Ջոյ, դու արի։

— Ոչ,— ասացի ես։

Ես իհարկե ոչ մի պատճառ չունեի այդքան համառ լինելու, բայց ուղղակի չկարողացա զսպել ինձ։

— Ինչ եք ասում, բժիշկ,— ասաց Հարրին,— չվերադառնա՞նք իմ այս փչացած ատամին։

— Հիմա չէ, Հարրի,— ասաց ատամնաբույժը։— Իմ պարտքն է

վկա լինել այս բանին։ Համոզված եմ, որ սրա դեմ անպայման ինչ-որ որոշում կա։

— Ոչ մի որոշում էլ չկա,— ասաց Էմին։

— Համենայն դեպս, նման բան երբեք չէր պատահել, ուրեմն մի պատճառ գոյություն ունի։

— Խնդրում եմ դուրս քաշեք այս փչացած ատամը իմ բերանից,— ասաց Հարրին։

Նա սկսել էր զայրանալ։

— Բանն իր ժամանակին,— ասաց ատամնաբույժը։— Երբ այս ամենն ավարտվի, ես պետք է զեկուցագիր գրեմ եղածի մասին։ Դե, իսկ սրան ի՞նչ կասեք,— գոչեց նա հանկարծ։— Հիմա նրանք իրենց գլխարկներն են մեկնել հասարակությանը։

Էմին անմիջապես մոտեցավ պատուհանին, ես՝ նույնպես։

Երկու մեծերը միասին կանգնած գլուխ էին տալիս, մինչդեռ պստլիկը պտտվում էր շրջանի ներսում՝ գլխարկը մարդկանց պարզած։ Եվ դա անում էր այնպես, որ դու ակամայից մտածում էիր, թե նա բոլորովին էլ ողորմություն չի խնդրում, այլ պարզապես հնարավորություն է տալիս մարդկանց ցանկության դեպքում որևէ բան տալու իրենց։ Նա արագորեն պտտվում էր շրջանի ներսում, սակայն ոչ մեկը մի գրոշ չէր նետում գլխարկի մեջ։ Պատկերացնում եք, ոչ մեկը։ Երբ նա մոտենում էր, բոլորը շրջվում էին, ձևացնում, թե ուրիշ կողմ են նայում կամ էլ մի շարք ետ էին կանգնում։ Նա դեռ պտտվում էր շրջանի ներսում, երբ Էմին կայծակի արագությամբ դուրս թռավ սենյակից, մինչ Հարրին կհասցներ բռնել նրան։

— Անմիջապես վերադարձիր, Էմի Սելբի,— բղավեց Հարրին։

Մենք տեսանք, թե Էմին ինչպես դուրս թռավ փողոց և վազեց դեպի ակրոբատների շուրջը հավաքված բազմությունը։ Տեսնելու բան էր, թե նա ինչ լավիկն էր։ Նրա ոսկեգույն մազերը ազատ արձակված ծածանվում էին։ Մենք տեսանք, թե ինչպես Էմին բազմությունը ճեղքելով առաջ մղվեց դեպի շրջանի կենտրոնը և ճիշտ այն պահին, երբ պստլիկը պարզել էր գլխարկը, հայտնվեց ուղիղ նրան դեմ դիմաց։

Նա մի մետաղյա դրամ նետեց գլխարկի մեջ։ Բազմության մեջ զարմանք ու անհանգստություն առաջացավ, իսկ պստլիկը մի քայլ ետ գնաց, գլուխ տվեց Էմիին և դեպի ետ մի քանի թռիչքներ գործեց, մի բան, որ մինչև այդ չէր արել։ Որից հետո մեկ անգամ էլ գլուխ տվեց Էմիին։ Էմին շրջվեց ու փողոցով մեկ վազեց դեպի դատարանի այգին։

Առանց որևէ բառ ասելու ակրոբատները ճեղքեցին ամբոխը և հաս-

նելով փողոցի անկյունը՝ անհետացան, բայց ժողովուրդը դեռ չէր ցրվում, մարդիկ հավաքված խոսում էին նրանց մասին։

— Դե, ինչ կասեք,— հարցրեց ատամնաբույժը։— Ես համոզված եմ, որ ինչ-որ օրենք պիտի լինի սրա դեմ։ Բայց տեսնում եք՝ շերիֆը ոչինչ չձեռնարկեց։ Իսկ նրանք արդեն գնացին։

Բազմության մի փոքր մասն էր միայն ցրվել, մյուսները խմբերի բաժանված դեռ խոսում էին իրենց տեսածի մասին։

— Լավ, թող նա միայն տուն գա, այն ժամանակ կտեսնի,— ասաց Հարրին։— Ախր նա միակ մարդն էր, որ նրանց փող տվեց։

— Նա այդպիսի բան չպիտի աներ,— ասաց ատամնաբույժը։— Այս կարգի բաները չի կարելի խրախուսել։

Հարրին ու ատամնաբույժը մի երկու րոպե էլ մնացին պատուհանի մոտ։ Նրանք նայում էին փողոցում կանգնած մարդկանց։

— Իսկ հիմա, գուցե, զբաղվենք իմ այս փչացած ատամով, հը՞, բժիշկ,— որոշ ժամանակ անց ասաց Հարրին։

— Ես մի վայրկյանում կհանեմ այդ ատամը։

Հարրին ու ատամնաբույժը գնացին, իսկ ես մնացի պատուհանի մոտ, մինչև որ ատամը հանեցին։ Երբ Հարրին պատրաստվում էր տուն գնալ, փողոցում դեռ բան ու գործ չունեցող մարդկանց երեք փոքրիկ խմբեր կային։

— Լավ, Ջոյ, գնացինք,— ասաց նա,— Էմին իրենը կստանա, երբ տուն գա։

Երբ մենք տուն եկանք, Էմին դեռ չէր վերադարձել։

Հարրին ամեն ինչ պատմեց տիկին Սելբիին։

— Նա վախենում է տուն գալ,— ասաց Հարրին։

Երբ Էմին տուն եկավ, համարյա գիշեր էր։ Նրա տեսքից ես հասկացա, որ լաց էր եղել և ամբողջ օրը թափառել էր։ Հարրին ճաշասենյակում նրան էր սպասում, ուզում էր տեսնել, թե տիկին Սելբին ինչպես է պատժելու Էմիին։ Էմին նայում էր Հարրիին և ամաչում, որ նա կարող էր այդքան վախենալ, ամաչում էր, որ փողոցում կանգնածներից ոչ մեկը չուզեց այն փոքրիկ մարգկանց որևէ բան տալ։

— Ես բոլորովին չեմ ափսոսում,— ասաց նա։— Ունեցած ամբողջ փողս տվեցի նրանց։ Բայց եթե ավելի շատ ունենայի, դա էլ կտայի։

— Ոչինչ, դու հիմա քոնը կստանաս,— ասաց Հարրին։

Տիկին Սելբին դուրս եկավ խոհանոցից ու մի պահ լուռ նայեց Էմիին։ Էմին փսկապես որ արտակարգ տեսք ուներ, հոգնած, քաղցած, բարկացած, հպարտ։ Հանկարծ տիկին Սելբին ժպտաց ու ձեռքերը

պարզեց Էմիին։ Էմին նետվեց նրա գիրկը և սկսեց լաց լինել, իսկ տիկին Սելբին ծիծաղեց, այդ ժամանակ Հարրին վեր կացավ ու ասաց.

— Այ քեզ բան։

— Ես ուրախ եմ, որ դու այդպիսի բան ես արել, Էմի,— ասաց տիկին Սելբին։— Ես էլ նույնը կանեի։ Պատմիր ինձ նրանց մասին։

Սակայն Էմին այնքան երջանիկ էր, որ լաց լինելուց բացի ուրիշ ոչինչ չէր կարող անել, իսկ տիկին Սելբին ծիծաղում էր ջերմ ու լիաբերան ծիծաղով, որից ես ուրախությունն էի զգում, թեպետ ընդամենը նրա եղբոր տղան էի։ Ես իրոք որ հիանալի էի ինձ զգում՝ լսելով նրա ծիծաղը Էմիի երջանիկ լացի հետ մեկտեղ։

ՄԵՐ ՈՒԶԱԾԸ ՍԵՐ Է ԵՎ ՓՈՂ

— Ձեր անունն ի՞նչ է,— հարցրեց աղջիկը։

— Ջոյ,— ասաց տղան։— Անցած երեկո մենք հանդիպել ենք բարում։

— Օհ, այո, իհարկե,— ասաց աղջիկը։— Հիմարի պես մոռացել եմ։ Դուք գրող եք։

— Այդ մեկը կարող եք մոռանալ,— վրա բերեց տղան։

— Ինձ ամուսինս ասաց,— ավելացրեց աղջիկը։

— Ճիշտ է, գրող եմ։

— Դուք պիտի որ բավականին լավ գրող լինեք։

— Բավականին վատն եմ,— ասաց տղան,— բայց ավելի լավ, քան ամենավատը։ Մոռանանք այդ։

— Դուք չեք սիրում գրողներին, հա՞։

— Նրանք լավն են։ Էլի չեմեմ՝նք։

— Խմենք։

— Երկու հատ էլ,— պատվիրեց տղան։

— Այքիս վրա,— եռավ բարմենի պատասխանը։

— Ձեզ որտե՞ղ է գալիս ապրելը,— հարցրեց աղջիկը։

— Փառավոր տեղ է,— ասաց տղան։

— Ի՞նչը դուր չի գալիս,— հարցրեց աղջիկը։

— Ձէ,— ասաց տղան,— ես հենց դա էլ ուզում էի ասել։ Փառավոր տեղ է։ Այստեղ միշտ էլ փող եմ ոսկեմում։

Նա անմոտորեն ժպտաց՝ փոքր-ինչ զմարճացած։

— Ինչի՞ վրա եք քմծիծաղ տալիս,— հարցրեց աղջիկը։

— Փողի,— ասաց տղան,— և ինձ վրա։

— Դուք աղքա՞տ եք եղել։

— Հացի կարոտ,— ասաց տղան։— Անընդհատ դառն ու դատարկ նստած։ Մի ձեռք շապիկով։

— Ինչ գեղեցիկ կոստյում եք հագել,— ասաց աղջիկը։

— Առաջին կոստյումն է, որ կարել եմ տվել,— ասաց տղան։— Երբեք մտքովս չի անցել, թե շորերը կարող են այսքան հարմարավետ լինել։ Վրաս յոթանասունհինգ դոլար է նստել։— Նա ժպտաց ինքն իրեն։— Թեպետ ես այդպես էլ փողատեր չդարձա։

— Որտե՞ղ եք աշխատում,— հարցրեց աղջիկը։

— Փարամաունթոմ,— ասաց տղան։— Հին, լավ Փարամաունթոմ։ Ինձ ահագին փող են տալիս չգիտես ինչի համար։ Դա էլ է հարգանքի տուրք համարվում։ Ես չեմ դժգոհում։

— Հետաքրքիր առաջադրա՞նք եք ստացել։

— Բավականին։

— Իսկապե՞ս,— ասաց աղջիկը։— Թե՞ դուք դարձյալ փչում եք։

— Չեմ փչում,— ասաց տղան։— Տեսնո՞ւմ եք կոշիկս։ Վրաս տասնյոթ դոլար է նստել։ Ամենաընտիրն է համարվում։

— Ի՞նչ տեսակ պատմություն է,— հարցրեց աղջիկը։

— Է՛հ,— հոգոց հանեց տղան,— դժվար է ասել։ Ըստ իս, ստանդարտ բան է։

— Ստանդա՞րտ,— հարցրեց աղջիկը։— Ի՞նչ եք ուզում դրանով ասել։

— Հասկանո՞ւմ եք,— ասաց տղան,— նրանց ուզածը սեր է և փող։

— Ո՞ւմ ուզածը։

— Տղայի և աղջկա։

— Օ՜,— բացականչեց աղջիկը,— կատակերգությո՞ւն է։

— Զվարճալի կատակերգություն,— ասաց տղան։

— Իսկապե՞ս։

— Այն էլ խիստ զվարճալի,— վրա բերեց տղան։

— Չեմ հավատում ձեզ,— ասաց աղջիկը։— Դուք մի՞շտ եք այդպես երկիմաստ խոսում։

— Երկիմա՞ստ,— հարցրեց տղան։— Ի՞նչ եք ուզում դրանով ասել։

— Օհ, ինքներդ էլ գիտեք,— պատասխանեց աղջիկը։— Դուք անընդհատ երկիմաստ բաներ եք ասում։

— Չգիտեի,— խոստովանեց տղան։— Ես կարծես թե հարբել եմ,— ավելացրեց նա։

Աղջիկը փոթկաց։

— Դուք՝ հարբա՞ծ,— ասաց նա։— Դուք ավելի լուրջ եք, քան որևէ մեկն այստեղ։ Ես կասեի, դուք ավելի լուրջ եք, քան որևէ մեկը Հոլիվուդում։

— Հարբա՞ծ,— քրքջաց նա։— Դուք երևի հյուսիսամերիկյան մայրցամաքի ամենալուրջ գրողն եք։ Ուղղակի հրաշք։

«Աստված իմ,— անցավ երիտասարդի մտքով,— ո՞ր գրողի ծոցն է կորել նրա ամուսինը։ Հարբել է ախր։ Աղնիվ խոսք, իմ ուղածը միայն փող է»։

ԻՍՊԱՆԻԱՑԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Ենչել չէր լինում, այնքան որ տոթ էր։

Մեծ եղբայրս՝ Դրեյքը, սառը լոգանքից հետո մերկ շրջում էր իր սենյակում, ձայնը գլուխը գցած՝ երգում։ «Վերցրու ամեն ինչ»,— գեղգեղում էր նա։

«Վերցրու ունեցվածքս»։

«Սիրտս»։

«Եվ կյանքս»։

Ես փլվեցի պատշգամբի ճոճաթոռին և սկսեցի հետևել նրան։ «Ինչ տխուր տարի է», անցավ մտքովս։ Զգում էի, թե ինչպես է աշխարհը ծիծաղում մեզ՝ ապրողներիս վրա։

Դրեյքը իր սենյակում կանգնած՝ ծխում էր։

«Դու գիտես, որ ուրիշինն ես,— երգում էր նա,— ուրեմն էլ ինչո՞ւ չես ինձ հանգիստ թողնում»։

Հետո նա քրքջաց։

— Ենոք,— ձայն տվեց ինձ,— ա՛հ, Ենոք։

Ես ելա ճոճաթոռից և մտա տուն։ Հայրիկը քնած էր հյուրասենյակի թախտին։ Նա այնպիսի տեսք ուներ, ասես ջանում էր հեռու մի տեղ գնալ, ուր հնարավոր լիներ մաքուր օդ շնչել։

Ես մտա Դրեյքի սենյակը։

— Ի՞նչ է,— ասացի։

— Ենոք,— ասաց նա։

— Ի՞նչ։

— Ինչի՞ մասին ես երազում հիմա։

— Ոչ մի բանի,— ասացի։— Ի՞նչ ես ուզում։

— Ապերիկ,— ասաց նա,— ես շուտով հրաժեշտ կտամ ձեզ։ Ուզում եմ մի քիչ զրուցել քեզ հետ։

«Սա ամենատխուր տարին է աշխարհում», անցավ մտքովս։

— Ո՞ւր ես գնալու,— հարցրի ես։

— Ենոք, ապերիկ,— ասաց նա,— ես պատերազմ եմ գնում։

— Պատերա՞զմ,— ասացի։— Սուտ-սուտ մի խոսիր։

Ես սարսափեցի, ինչպես այն պահերին, երբ ինձ թվում էր, թե ուր որ է աշխարհի վերջը վրա կհասնի, ամեն ինչ ջարդուփշուր կլինի, և բոլորը կմեռնեն՝ կամ ջրահեղձ կլինեն, կամ շնչահեղձ, կամ էլ կճզմվեն ինչ-որ անտեսանելի, վիթխարի ծանրության տակ։

— Սուտ-սուտ մի խոսիր,— ասացի։

— Ապերիկ,— ասաց նա,— ես արդեն զինվոր եմ։

Ես սկսեցի լալ, որովհետև հասկացա, որ նա սուտ չի ասում։

Դրեյքը բարձրացրեց ինձ հատակից և բերանքսիվայր դրեց իր մահճակալին։

— Ենոք, ապերիկ,— ասաց նա,— պատերազմը մարդու վայելքն է, վտանգը՝ նրա միխիթարությունը, իսկ մահը՝ սիրեցյալն ամեն մի շնչավոր էակի։

Նա երկար խոսեց։ Ես նստել ու հայացքս հառել էի նրան։ «Պատերազմում,— մտածում էի,— մարդիկ սպանվում են։ Դրեյքը կսպանվի»։

— Քեզ կսպանեն պատերազմում,— ասացի։— Մի՛ գնա, Դրեյք։

— Միգուցե սպանեն, միգուցե և ոչ,— ասաց նա։— Հենց այդ է, որ ես ուզում եմ պարզել։

— Քեզ կսպանեն,— ասացի։

Ես նրան պատկերացրի մեռած, մի մութ, ամայի փոսի մեջ ընկած և սկսեցի լալ։

Նա այնտեղ մենակ կլիներ ու արյունլվա, մարմինը՝ խեղված։ Մայրիկը լսեց իմ լացի ձայնը և ներս եկավ։

— Ինչո՞ւ ես տղային լացացնում,— ասաց նա։

— Նրան կսպանեն,— բղավեցի ես։— Դրեյքը պատերազմ է գնում՝ Իսպանիա, նրան կսպանեն։

Մայրիկը ծղրտաց։

— Դրեյք,— լաց եղավ նա։

Դրեյքը ներս քաշեց սիգարետի ծուխը։

— Դրեյք, Դրեյք, Դրեյք,— հեծեծաց մայրիկը։

Նա շուռ եկավ ու վազեվազ գնաց հայրիկի մոտ։

— Ենոք, ապերիկ,— ասաց Դրեյքը,— ուզում եմ ունեցածս-չունեցածս քո խնամքին հանձնել։ Հրացանս, նվագարկիչս, գրքերս։ Փոչայի հետ հետո կխոսեմ։ Դու առաջինը եկար։

— Ոչ մի բան էլ չեմ ուզում,— բղավեցի ես։— Քեզ կսպանեմ։ Այլ կտեսնեմ։

— Դու իմը տարեկան ես,— ասաց նա։— Իսկ ժամանակն է երաժշտությամբ զբաղվելու համար։ Նկատարկիչն ու ձայնապնակները քեզ եմ թողնում։ Ինչպե՞ս կարելի է...

— Ոչ,— ասացի,— ոչինչ չեմ ուզում։

— Դրքերը կմնան Փոլային,— ասաց Դրեյքը։— Ինձ կանչիր նրան։

Ես ուրախ էի, որ պիտի կանչեմ նրան։ Մանդուղքով վազեցի վեր՝ Փոլայի սենյակը։

— Դրեյքը պատերազմ է գնում,— վրա տվեցի։

Ես չսպասեցի, որ Փոլան բան ասի։ Դուրս թռա սենյակից, և մի վայրկյան անց նա արդեն իջնում էր սանդուղքից։ Հայրիկն ու մայրիկը Դրեյքի սենյակում էին, խոսում էին նրա հետ։ Փոլան Դրեյքի երկվորյակն էր և ամենևին վշտացած տեսք չուներ։ Իմ կարծիքով, Փոլան չափից դուրս լավ էր հասկանում Դրեյքին, որպեսզի համարեր, թե նրա արածը ճիշտ չէ։

Ես նրա ետևից ներս ընկա սենյակ։ Մայրիկը դեռ քալիս էր, բայց հայրիկը լոկ հոգնած տեսք ուներ։

— Դու այնքան մեծ չես, որ կռիվ գնաս,— ասաց նա։

— Ես դրա մասին հոգացել եմ,— ասաց Դրեյքը։

Նա դարձավ Փոլային։

— Դրքերս կմնան քեզ,— ասաց։

— Դու ընդամենը տասնութ տարեկան ես,— ասաց մայրիկը և նրից սկսեց հեծեծալ։

— Ընդամենը,— ասաց Դրեյքը։

— Դու կոմունիստ չես,— ասաց հայրիկը։

— Ուսանող եմ,— ասաց Դրեյքը։

— Մի լար, մայ,— ասաց Փոլան,— ոչինչ էլ չի լինի Դրեյքին։

— Իհարկե,— ասաց Դրեյքը։

— Ինձան կսպանեն,— ասացի ես։

— Ինչո՞ւ ես ուզում զինվոր դառնալ,— ասաց հայրիկը։

Դրեյքը բոլորիս ժպտալով հագավ վերարկուն, դրեց գլխարկը, իսկ մայրիկն սկսեց այնպես բարձրաձայն ողբալ, ինչպես երբևէ։

— Գրողը տանի,— ասաց հայրիկը։

Նա գրկեց մայրիկին ու ասաց.

— Լալիս ես, որ ի՞նչ...

Նա մայրիկին տարավ հյուրասենյակ։

Ահա և բոլորը։ Դրեյքը պատերազմ գնաց։ Մենք այլևս երբեք չտեսանք նրան, և տանը ոչ ոք չէր կարողանում զսպել հեկեկոցը, Փոլայից բացի։ Փոլան անընդհատ կրկնում էր.

— Դրեյքին չեն կարող սպանել, եթե նույնիսկ նա կենդանի չէ։

ՏԱՆԸ՝ ՏԱՔ ՈՒ ԽԱՂԱՂ ՀՈՎՏՈՒՄ

Լույսը դեռ չէր բացվել, երբ զարմիկս իր հին, չխկչխկան ֆորդով մոտեցավ մեր տանը և ձեռքը գցեց պահեստի արգելակին, որովհետև հիմնականը վաղուց էր շարքից դուրս եկել։ Մեքենան ճռնչաց, ցնցվեց ու կանգ առավ։ Զարմիկս դուրս եկավ մեքենայից, շրջանցեց տունը ու մի քիչ կանգնեց բակում՝ գլուխը ետ գցած նայելով երկնքին։ Հետո բարձրացավ արտասանդուղքով ու մտավ խոհանոց։

Ես արդեն համարյա սափրվել էի։

— Փառահեղ օր է լինելու։

— Ավելի լավ,— ասացի ես։

Զարմիկս իրեն սուրճ լցրեց ու նստեց նախաճաշելու։ Հաց ու կարագ, հայկական պանիր, սև ձիթապտուղ։

Ես շորացրի դեմքս, ինձ էլ սուրճ լցրի ու միացա նրան։

Սրճամանը մեծ էր։ Զարմիկս շորս գավաթ խմեց, իսկ ես՝ երեք։ Էլի կխմեի, բայց սրճամանն արդեն դատարկ էր։

Դեռ մութ էր, երբ դուրս եկանք տնից։

— Լույսը բացվի, ավելի փառահեղ նախաճաշ ենք անելու,— ասաց զարմիկս։— Լավ պատրաստություն եմ տեսել։

— Իսկ ի՞նչ ենք խմելու։

— Գարեջուր։ Վեց շիշ վերցրել եմ։ Արկղի մեջ էլ տակից ու վերևից թաց շոր եմ փռել, որ չտաքանան։

— Շոր թրջելու փոխարեն սառույց դնեիր, ավելի լավ չէ՞ր լինի։

— Գուցե,— ասաց զարմիկս։— Բայց սառույցն էլ վերջ ի վերջո նույն ջուրն է դառնալու։

— Ճիշտ է,— ասացի ես։— Բայց գարեջուրը կարելի է ավելի շուտ խմել, քան սառույցը կհալվի։

— Արևը ծագելուն պես շոգ է անում,— ասաց զարմիկս։

— Զզվում եմ գոլ գարեջրից,— ասացի ես։

— Դե լավ,— ասաց զարմիկս։— Ես մի տեղ գիտեմ, ուր այս ժամին էլ սառույց կճարենք։

— Շա՞տ ենք շեղվելու ճամփից։

— Չէ,— ասաց նա։

— Ուրեմն, գնացինք։ Տուր գործի գցեմ շարժիչը։

— Չէ,— ասաց նա,— բան դուրս չի գա։ Այս շարժիչի լեզուն միայն ես եմ հասկանում։

Մինչև շարժիչը կաշխատեր, զարմիկս կարգին քրտնեց։ Մենք նստեցինք մեքենան ու ճամփա ընկանք։

— Չեմ կարծում, թե այդ կողմերում առվի հանդիպենք,— ասացի ես։

— Առու կա,— ասաց նա։— Մի քիչ հեռու է, բայց կա։ Եթե, իհարկե, շոգից չի ցամաքել։

— Իսկ հրացանները վերցրե՞լ ես,— հարցրի ես։

— Վերցրել եմ, գրողը տանի,— ասաց նա։— Բայց եթե քեզ հաջողվի որևէ բան խփել ակոսավորով, իմացիր, որ բախտդ բերել է։

— Ինչո՞ւ։

— Նշանառությանը ինչ-որ բան է պատահել։

— Դուցե աչքի՞դ է ինչ-որ բան պատահել։

— Աչքս կարգին է,— ասաց նա։— Բայց վեց մետրից նշան եմ բռնել հագարին ու վրիպել։

— Ուրեմն, աչքդ կարգին չի,— ասացի ես։— Իսկ մանրագնդակի մասին ի՞նչ կասես։

— Մանրագնդակը սարքին է։

— Նույնիսկ նշանառությո՞ւնը։

— Այո։ Բայց քեզ ամենալավ նշանառությունն էլ չի օգնի։

— Պա՜հ-պա՜հ-պա՜հ,— ասացի ես։

Մեր հին ֆորդը մեծ աղմուկով Վենտուրա ավենյու մտավ ու դանդաղեցրեց ընթացքը։ Զարմիկս նորից ձեռքը պահեստի արգելակին գցեց, մեքենան ցնցվեց ու կանգ առավ «Ածուխ ու սառույց» ցուցանակով հաստատության առաջ, որի վերևում տեղավորված էր գրասենյակը ու որտեղ լույս էր երևում։ Զարմիկս բարձրացավ վերև ու հրեց դուռը, բայց այն փակ էր։ Նա նայեց պատուհանից, տեսավ մի մարդու, որ քնել էր աթոռին բազմած և թակեց դուռը։ Քիչ հետո մարդը բացեց դուռը ու հարցրեց.

— Ի՞նչ եք ուզում։

— Փենսիլվանյան ածուխ,— ասաց զարմիկս։

— Այս շոգ ու տոթին մենք ածուխ չենք ստանում,— ասաց մարդը։

— Ճիշտ եք անում,— ասաց զարմիկս,— մենք էլ սառույց կվերցնենք։

— Ինչքա՞ն։

— Տասը սենթի։

Մարդը ներս գնաց ու շուտով, տոպրակի մեջ դրած, մի մեծ կտոր սառույց բերեց։

— Հենց այդպե՞ս, առանց ջարդելո՞ւ,— ասաց զարմիկս։

— Սառույց տվողը ջարդելու բան էլ կտա,— ասաց մարդը։

Նա սառույցը բերեց մեքենայի մոտ, զարմիկս այն հանեց տոպրակից, դրեց մեքենայի ոտնակին, մարդու ձեռքից վերցրեց մուրճը, սկսեց ջարդել սառույցն ու կտորները գարեջրի շշերի վրա լցնել։

Գրասենյակի մարդը ստացավ իր տասը սենթը ու գնաց նորից բազմելու իր աթոռին, իսկ զարմիկս գործի գցեց մեքենան, և մենք շարունակեցինք ճանապարհը։

Շրջանային հիվանդանոցի մոտից մենք հյուսիս թեքվեցինք։ Լույսը բացվում էր։ Վաղորդյան մաքուր երկնքի տակ հիվանդանոցն ավելի թախծոտ տեսք էր ստացել։

— Երբևէ հիվանդանոցում եղե՞լ ես,— հարցրեց զարմիկս։

— Եղել եմ,— ասացի։

— Ի՞նչ էր պատահել։

— Ինձ՝ ոչինչ։ Հիվանդի էի այցելում։

— Ո՞ւմ։

— Քերոբին հիշո՞ւմ ես,— ասացի ես։— Դու փոքր էիր, երբ նա մեռավ։

— Հիշում եմ։

— Ա՛յ, նրան տեսնելու էի գնում։

— Ինչո՞վ էր հիվանդ։

— Թոքախտ։

— Պարզ է,— ասաց զարմիկս։— Լա՞վ մարդ էր։

— Հրաշալի,— ասացի ես։— Ես նրան խանդում, թուզ ու դեղձ էի տանում։ Ջահել մեռավ։ Քառասուն տարեկան չկար։ Ես տասը կամ տասնմեկ տարեկան էի։

Երբ Կլոմիս հասանք, արևն արդեն բավականին բարձրացել էր, և քաղաքը շատ հաճելի տեսք ուներ։ Զարմիկս չորս թե հինգ պտույտ կատարեց քաղաքում, և մենք սրտներիս ուզածի չափ դիտեցինք այն։

Զարմիկս նորից պահեստի արգելակի օգնությանը դիմեց, և մենք կանգ առանք մի փոքրիկ խանութի առաջ։

— Մի քիչ էլ ոտքով մանք գանք,— ասաց զարմիկս։

— Եկ մի անգամ էլ նախաճաշենք,— ասացի ես։

— Ինչքա՞ն փող ունես։

— Մի դոլար քսան սենթ։

— Փառահեղ նախաճաշ կարելի է անել,— ասաց նա,— բայց որտե՞ղ։

Քաղաքը դեռ չէր արթնացել։ Մենք իջանք մեքենայից ու քայլեցինք գլխավոր փողոցով։ Փոքր, շատ փոքր քաղաք էր։ Ընդամենը մի քանի անշուք փողոցներ՝ միհարկանի ու երկհարկանի փայտյա անշուք տների շարքով, անշուք ցուցափեղկերով խանութներ, նույնքան անշուք դռներ ու ցուցանակներ և տների երկրորդ հարկերից նայող անշուք պատուհաններ։ Իսկ շուրջը խաղողի այգիներ էին փռված։ Ոչ թե քաղաք էր, այլ գյուղական մի համեստ բնակավայր՝ շրջապատված խաղողի այգիներով, և հատկապես հաճելի էր, որ մենք այստեղ էինք գտնվում վաղ առավոտյան։

Մենք գլխավոր փողոց վերադարձանք ու վերջապես ճաշարան գտանք, բայց փակ էր։

Փողոցները դարձյալ ամայի էին, թեև արևը քարձր էր կանգնած ու կարգին շոգ էր։

— Ի՞նչ անենք,— ասաց զարմիկս,— սպասենք բացվի՞, թե գնանք նստենք կանաչների մեջ, մեր նախաճաշն ու գարեջուրը վայելենք։

— Սրա հույսին որ մնանք, երևի շատ սպասենք,— ասացի ես։

— Շատ կուզեի իմանալ, թե ճաշարանն ինչ գործ ունի այստեղ,— ասաց զարմիկս։— Ախր ոչ մեկին պետք չէ։ Շատ կուզեի սրա պիրոջը տեսնել։

— Ի՞նչ ես կարծում, ի՞նչ մարդ է։

— Պիտի որ ցնդած լինի։ Տեսանես ի՞նչ է փչել խելքին, որ ճաշարան է բացել այս քաղաքում։

— Երևի լավ ախորժակ ունի,— ասացի ես։— Երևի իր մասին է մտածում։

— Գլուխս կտրել կտամ, եթե քո ասածը չի,— ասաց զարմիկս։— Դա փոքրիկ մի մարդ է, որը մեծ ախորժակ ունի։ Շարունակ վախենում է, որ քաղցած կմնա։ Եվ ուզում է, որ ձեռքի տակ միշտ ուտելու բան լինի։ Դրա համար էլ ճաշարան է բացել։ Ոչինչը որ չուտի, ինքը կուտի իր եփածը։

— Քանի որ ամեն ինչ պարզ է,— ասացի ես,— ուրեմն, այստեղ քարշ գալն այլևս միտք չունի։

Մենք վերադարձանք մեր չիկչիկանի մոտ, զարմիկս այն գործի ղցեց, և դուրս եկանք քաղաքից։

Ճանապարհն անցնում էր գորշ բլուրների միջով։ Խոտը չորացել էր ու դեղնել։ Բայց մոտ ստաս մղոն հետո պատկերը փոխվեց, և զարմիկս ասաց, որ փառահեղ տեղ ենք հասել։ Տեղը, իրոք, լավն էր։ Բրալանջե-

ին ծառեր կային, խոտն էլ նրանց տակ կանաչ էր։ Եվ, չնայած շոգին, ծառերի տակ զով էր ու հաճելի։ Երեքական սանդվիչ կերանք, մեկական շիշ գարեջուր խմեցինք, ապա վերցրինք հրացաններն ու նախաճաշի մնացորդները և ճամփա ընկանք։

Մենք քայլեցինք մի ժամի չափ ու չհանդիպեցինք ոչ մի այնպիսի բանի, որի վրա կրակելը կարող էր որսորդություն համարվել, այնպես որ զարմիկս վերջիվերջո չդիմացավ, նշան բռնեց մի թիթեռի ու վրիպեց։

— Տեսա՞ր,— ասաց նա։— Նշանառությունը կարգին չի։

— Տուր տեսնեմ,— ասացի ես։

Ես էլ կրակեցի թիթեռի վրա ու նույնպես վրիպեցի։

— Զայնը լավն է,— ասացի։

— Ակոսավոր հրացանի ձայն է,— ասաց զարմիկս։

— Գրողը տանի, իսկ որտե՞ղ է առուն,— ասացի ես։

— Ի՞նչ առու,— ասաց զարմիկս։

— Ինչպես թե՝ ի՞նչ առու։ Առուն։ Որի մասին խոսում էիր առաջվոտյան։

— Շուտով կհասնենք,— ասաց զարմիկս։— Բայց չեմ կարծում, թե ջուր մնացած լինի մեջը։

— Ո՞ւմ է պետք ցամաք առուն,— ասացի ես։

Հանկարծ զարմիկիս ձեռքին որոտաց մանրագնդակ հրացանը, և ես տեսա, որ մի ճագար դուրս թռավ խոտերի միջից և սկսեց փախչել։

— Պարզ է,— ասացի ես։— Մանրագնդակի նշանառությունն էլ է խախտվել։

— Ոչ,— ասաց զարմիկս։— Պարզապես վերջին պահին միտքս փոխեցի։ Անմեղ արարած է, մտածեցի, ի՞նչ օգուտ սպանելուց։

Երկու ժամ քայլելուց հետո վերջապես հասանք զարմիկիս ասած առվին։ Շատ քիչ ջուր էր մնացել մեջը, այն էլ կանգնում՝ կանաչած ու նեխած՝ բայց մենք, միևնույն է, նստեցինք դալար կանաչների վրա ու խոսքով ընկանք։

Զարմիկիս հետաքրքրում էր շրջանային հիվանդանոցում վախճանված մեր ազգականը՝ մեր երրորդ հորեղբայրը, և ես էլի պատմեցի Քերոբի մասին, իսկ նա ինձ մի տղայի մասին պատմեց, որը խեղդվել էր Թոմսոնի ջրանցքում։ Խարլան Բիլ անունով իր ընկերոջ մասին։

— Լավ տղա էր,— ասաց զարմիկս։

Չորս կողմը լուռ էր ու խաղաղ։ Խոտերին փռված երկնքին էի նայում։ Այսքան ու այսքան տարի արդեն ապրում եմ աշխարհիս երեսին և,

տեր իմ աստված, ի՞նչ խելահեղ տարիներ են եղել դրանք։ Ինչե՞ր են անցել գլխովս, խենթանալ կարելի է, այդ տարիների ընթացքում։ Իսկ հիմա նորից սեպտեմբեր է եկել և այնքա՞ն հաճելի է այստեղ։ Շոգ է, բայց, միևնույն է, հաճելի։ Այս հովիտը իմ տունն է, ես այստեղ եմ ծնվել։ Իմ տունն է այս հողն ու այս երկինքը։ Եվ այս շոգ օրը։ Զարմիկս էլ իմ տնից է։ Տունս նրա խոսքերով է լի, նրա ձայնով։ Բնակեցված է այն մարդկանցով, որոնց մենք հիշում ենք։ Շեն է մեր հիշողություններով։ Ես երկնքին էի նայում և Նյու Յորքը մտաբերեցի։ Ընդամենը մի տարի առաջ էի այնտեղից հեռացել, իսկ հիմա թվում էր, որ անցել է տասը, քսան, նույնիսկ հարյուր տարի։ Թվում էր, երբեք այնտեղ չեմ եղել, երազում եմ տեսել նրա ամառն ու ձմեռը՝ հեղձուցիչ տոթն ու շենքերի խելագարեցնող զանգվածները, խելագար ամբոխը, խելագարեցնող ստորերկրյա երկաթուղիները, հետո էլ ձյունն ու քամին և մռայլ, անարև երկինքը։

Զարմիկս անգլերեն էր խոսում, ես՝ մեկ անգլերեն, մեկ հայերեն։ Հետո նա էլ սկսեց անգլերենն ու հայերենը խառնել, և ի վերջո երկուսս էլ հայերենի անցանք։

— Խե՞ղճ Քերոբ,— ասաց զարմիկս։— Խե՞ղճ, խե՞ղճ Քերոբ։ Ասում-խոսում էր, նատոմ-վեր կենում, իսկ հիմա չկա։

Եվ նա ափերն իրար մփացրեց մի շարժումով, որով հայր ուզում է ասել՝ վերջ, ես մի բան անցավ ու գնաց անվերադարձ։

— Արի հաց ուտենք,— ասացի ես։

— Ուտենք մեր հացն ու հիշենք մերոնց,— ասաց զարմիկս։

Մենք կերանք նախաճաշի մնացորդները։

Հետո բռնեցինք ետդարձի ճամփան։

Դարձյալ ոչ մի այնպիսի բան չէր հանդիպում, որի վրա կրակելը իմաստ ունենար։ Մի քանի փոքրիկ, երգեցիկ թռչուններ տեսանք, բայց նրանց վրա կրակելը մեղք կլիներ։

— Արի համազարկ տանք մեր բոլոր-բոլոր ննջեցյալների պատվին,— ասաց զարմիկս։

— Փառավոր միտք է,— ասացի ես։

Մեր հրացանների փողերը դեպի երկինք ուղղեցինք։

— Ննջեցյալների պատվին,— ասաց զարմիկս։

Կրակեցինք։

Խենթ ու տխուր համազարկ էր։

— Քերոբի,— ասացի ես։

Նորից կրակեցինք։

— Խարլան Բիշի,— ասաց զարմիկս, ու մենք կրակեցինք։

— Բոլոր նրանց պատվին, ովքեր երբևիցե ապրել են այս աշխարհում ու մեռել,— ասաց զարմիկս։

Նշի կրակեցինք։

Մանրագնդակի որոտը տատանապատիկ անգամ ավելի ուժեղ էր, քան ակոսավորինը։

— Հիմա էլ մանրագնդակը ինձ տուր,— ասացի ես։

Մենք փոխանակեցինք հրացանները։

— Հիմա ո՞ւմ պատվին,— հարցրեց զարմիկս։

— Հոգս,— ասացի ես։ Եվ քաշեցի ձգանը։ Հետադարձ հարվածը ցնցեց ինձ։

— Իմ հոր,— ասաց զարմիկս։

Կրակեցինք։

— Տատիս,— ասացի ես։

— Եվ իմ տատի,— ասաց զարմիկս։

— Գրիգոր Լուսավորչի,— ասացի ես։

— Պետրոս Դուրյանի,— ասաց զարմիկս։

— Բաֆֆու,— ասացի ես։

Մի քիչ քայլելուց հետո մենք նորից կանգ առանք, նոր անուններ հիշեցինք և համազարկ տվինք նրանց պատվին։

— Անդրանիկի,— ասաց զարմիկս։

— Խեչոյի,— ասացի ես։

— Խի՜ղճ Խեչո,— հայերեն ասաց զարմիկս։

— Մուրադի,— ասացի ես։

Մենք համազարկ տվեցինք ի պատիվ շատ ու շատ ուրիշ հայերի՝ ռազմիկների ու գիտնականների, գրողների ու հոգևորականների։ Ի պատիվ շատ ու շատ մեր մեծերի, որ արդեն մեզ հետ չէին։

Փառահեղ հրաձգություն էր, համազարկը հաջորդում էր համազարկին, բայց այդ բլուրներում մեզնից բացի ուրիշ ոչ ոք չկար, և ամեն ինչ բարեհաջող անցավ։

Երբ վերջապես հասանք մեքենային, գարեջուրը, ինչ խոսք, արդեն նախկին սառնությունը չուներ, բայց, միևնույն է, թարմ էր ու հաճույքով էր խմվում։

Խմեցինք մեր գարեջուրը, հետո զարմիկս գործի գցեց մեքենան, և մենք, բլուրները թողած, գնացինք դեպի մեր տաք, խաղաղ ու սիրելի հովիտը՝ մեր միակ տունը այս աշխարհում։

ԻՄ ԱՆՈՒՆԸ ԱՐԱՄ Է

ԳԵՂԵՑԻԿ ՍՊԻՏԱԿ ՁԻՈՒ ԱՄԱՌԸ

Հին, լավ օրերից մի օր, երբ ես ինքս տարեկան էի և աշխարհը լի էր ամեն տեսակի հրաշալիքներով, իսկ կյանքը գեռևս հաճելի ու խոստումնավոր երազ էր, իմ զարմիկ Մուրադը, որին խելառ էին համարում բոլորը, բացի ինձանից, առավոտյան ժամը չորսին եկավ մեր բակը։ Բախելով սենյակիս լուսամուտը, նա արթնացրեց ինձ։

— Արա՛մ,— ասաց նա։

Անկողնից վեր թռա և լուսամուտից դուրս նայեցի։

Չէի կարող տեսածիս հավատալ։

Արևն ուր որ է պետք է դուրս նայեր երկրի ծայրից։

Դեռևս առավոտ չէր, բայց ամառ էր և բավականին լույս կար, որպեսզի զգայի, թե երազի մեջ չեմ։

Իմ զարմիկ Մուրադը նստել էր մի գեղեցիկ սպիտակ ձի։

Գլուխս լուսամուտից դուրս հանեցի և տրորեցի աչքերս։

— Այո,— ասաց նա հայերեն,— ձի է։ Դու երազի մեջ չես։ Շտապիր, եթե ուզում ես ձի հեծնել։

Ես գիտեի, որ իմ զարմիկ Մուրադը կարողանում է կյանքը վայելել ավելի լավ, քան ուրիշ որևէ մեկը, որ երբևէ սխալմամբ աշխարհ է եկել։ Բայց այս մեկին չէի կարող հավատալ նույնիսկ ես։

Նախ իմ ամենավաղ հիշողությունները կապված էին ձիերի հետ, և իմ տենչանքը ձի հեծնելն էր։

Սա հրաշալի մասն էր։

Երկրորդ՝ մենք աղքատ էինք։

Սա այն մասն էր, որ թույլ չէր տալիս ինձ հավատալ իմ տեսածին։

Մենք աղքատ էինք։ Մենք փող չունեինք։ Մեր ամբողջ տոհմը ծայրահեղ աղքատ էր։ Ղարաղանյանների գերդաստանի բոլոր ճյուղերը ապրում էին աշխարհում ամենաազգամանալի և անհեթեթ չքավորության մեջ։ Ոչ ոք, նույնիսկ մեր ընտանիքի ծերերը, չէին կարող հասկանալ, թե որտեղից էինք մենք բավարար փող ճարում մեր փորը ուտելիքով լցնելու համար։ Ամենակարևորը, սակայն, այն էր, որ մենք հռչակված էինք մեր ազնվությամբ։ Մենք մեր ազնվությամբ հռչակավոր էինք եղել շուրջ տասնմեկ դարեր ի վեր, նույնիսկ այն ժամանակ, երբ ամենա-

հարուստ ընտանիքն էինք մի երկրում, որը մեզ համար և ողջ աշխարհն էր։

Մենք նախ հպարտ էինք, հետո ազնիվ, իսկ բացի դրանից տարբերում էինք ճշմարիտն ու սուտը։ Մեզանից ոչ մեկը ոչ ոքի հաշվին օգուտ չէր արել, ուր մնաց գողություն աներ։

Հետևաբար, թեև ես տեսնում էի ձին, այնքան հրաշալի, թեև առնում էի նրա հոտը, այնքան ախորժելի, թեև լսում էի նրա շնչառությունը, այնքան արբեցնող, բայց չէի կարող հավատալ, որ ձին որևէ կապ ունենար իմ զարմիկ Մուրադի կամ ինձ, կամ մեր ընտանիքի որևէ քնած թե արթուն անդամի հետ, քանի որ Մուրադը չէր կարող ձին գնած լինել և եթե չէր կարող գնած լինել, պետք է այն գողացած լիներ, բայց ես չէի կարող հավատալ, որ նա գողացել էր։

Ղարաղլանյան ընտանիքի ոչ մի անդամ գող լինել չէր կարող։

Ես նախ նայեցի Մուրադին, հետո՝ ձիուն։ Նրանց երկուսի տեսքն էլ անմեղորեն խաղաղ էր ու զվարճալի, որը և՛ ուրախացրեց, և՛ վախեցրեց ինձ։

— Մուրադ,— ասացի ես,— որտեղի՞ց գողացար այդ ձին։

— Եթե ուզում ես ձի նստել, լուսամուտից դուրս թռիր,— ասաց նա։

Ուրեմն ճիշտ էր։ Նա գողացել էր ձին։ Այդ մասին ոչ մի կասկած։ Նա եկել էր իմ հետևից, որ գնամ կամ չգնամ ձի նստելու, ինչպես որ կուզեի։

Դե, ինձ թվում էր, որ մի անգամ հեծնելու համար ձի գողանալը նույնը չէ, ինչ ուրիշ բան գողանալը, ասենք փողը։ Ինչ իմանաս, գուցե դա բոլորովին էլ գողանալ չէր։ Եթե դու գժվում ես ձիու համար, ինչպես իմ զարմիկ Մուրադն ու ես, ապա դա գողանալ չէ։ Դա գողանալ կլիներ, եթե մենք ձին ծախեինք, մի բան, որ վստահ էի, երբեք չէինք անի։

— Սպասիր հագնվեմ,— ասացի ես։

— Լավ,— ասաց նա,— բայց շտապիր։

Ես շտապ հագա շորերս։

Հետո լուսամուտից ցատկեցի բակը և թռա ձիու գավակին՝ իմ զարմիկ Մուրադի ետևը։

Այդ տարի մենք ապրում էինք քաղաքի ծայրամասում Վոլնոյ փողոցի վրա։ Անմիջապես մեր տանից հետո սկսվում էին խաղողի այգիներ, մրգաստաններ, ոռոգման առուներ և գյուղերը տանող ճանապարհներ։ Երեք բոպեից էլ շուտ մենք հասանք Օլիվ փողոցը, իսկ այնուհետև ձին սկսեց արշավել։ Օդը թարմ էր և շնչելն այնպե՞ս հաճելի։ Հրաշալի է, երբ զգում ես ձիու վազքը։ Իմ զարմիկ Մուրադը, որ մեր ընտանիքի ամենախենթ անդամներից էր համարվում, սկսեց երգել։ Ավելի ճիշտ՝ սկսեց գոռալ կոկորդով մեկ։

Յուրաքանչյուր ընտանիք ունենում է ինչ-որ խենթ երակ։ Իմ զարմիկ Մուրադը մեր գերդաստանի այդ խենթ երակի բնական շառավիղն էր։ Այդ հարցում նա զիջում էր միայն իմ Խոսրով քեռուն, որը մի վիթխարի, սև մազերով ծածկված հուժկու գլխով և Սան-Հոակին հովտի ամենահաստ բեղերով մարդն էր, բնավորությամբ այնքան վայրագ, այնքան դյուրաբորբոք, այնքան անզուսպ, որ կտրում էր ամենքի խոսքը՝ բղավելով. «Վնաս չունի, ուշադրություն մի դարձրու»։ Եվ միայն այդքանը, անկախ այն բանից, թե ով ինչ է խոսում։ Մի անգամ, նրա որդին՝ Առաքը, վազել էր ութ թաղամաս մինչև վարսավիրանոց, որտեղ հայրը բեղերն էր հարդարել տալիս, ասելու, որ իրենց տունն այրվում է։ Խոսրովը բարձրանում է տեղից ու բղավում. «Վնաս չունի, ուշադրություն մի դարձրու»։ Սափրիչը միշամտում է. «Բայց տղան ասում է, որ ձեր տունն է այրվում»։ Այդ ժամանակ Խոսրովը բղավում է. «Հերիք է, ասում եմ՝ վնաս չունի»։

Իմ զարմիկ Մուրադը այս մարդու բնական շառավիղն էր համարվում, թեև Մուրադի հայրը Զոհրաբն էր, որը գործնական մարդ էր և ուրիշ ոչինչ։ Այդպես էր մեր տոհմում։ Մեկը կարող է իր որդու հարազատ հայրը լինել, բայց այդ չի նշանակում, թե նրա հոգու հայրն էլ է։ Հոգեկան տարբեր խառնվածքների բաշխումը մեր ցեղում, սկզբից ևեթ, եղել է քմահաճ։

Եվ այդպես մենք ձիավարում էինք, և իմ զարմիկ Մուրադը երգում էր։ Կարծես թե մեր հին հայրենիքում լինեինք, որտեղից մեր հարևանների ասելով ծնունդ էր առել մեր ընտանիքը։

Ի վերջո Մուրադն ասաց.

— Իջիր, ուզում եմ մենակ քշեմ։

— Կթողնե՞ս, որ ես էլ մենակ հեծնեմ։

— Ոնց որ ձին կուզի,— ասաց Մուրադը։— Իջիր։

— Ձին կթողնի,— ասացի ես։

— Կտեսնենք,— պատասխանեց նա,— մի մոռացիր, որ ես ձիերի հետ վարվելու իմ ձևն ունեմ։

— Ձիերի հետ քո իմացած վարվելու ձևը ես էլ գիտեմ։

— Քո ապահովության համար, հուսանք, որ այդպես է։ Իջիր,— ասաց նա։

— Շատ լավ, բայց մի մոռացիր, որ թողնելու ես մենակ հեծնեմ։

Ես ցած իջա, և իմ զարմիկ Մուրադը կրունկներով խթանեց ձիուն և հայերեն բղավեց.

— Վազի՜ր։

Ձին կանգնեց հետևի ոտքերի վրա, խրխնջաց և առաջ սլացավ կա-

տաղի արագությամբ. ես դրանից ավելի գեղեցիկ բան չէի տեսել։

Մուրադը ձին սրընթաց քշեց չոր խոտերի միջով դեպի ոռոգման առուն։ Նա անցավ առուն և հինգ րոպե հետո վերադարձավ քրտինքի մեջ կորած։

Արևը դուրս էր գալիս։

— Հիմա իմ հերթն է,— ասացի ես։

Մուրադը ձիուց ցած իջավ։

— Հեծիր,— ասաց նա։

Ես թռա ձիու գավակին և մի պահ անասելի սարսափ զգացի։ Ձին տեղից չէր շարժվում։

— Խփիր կողերին,— ասաց Մուրադը,— ի՞նչ ես սպասում։ Մենք պետք է ձին եռ տանենք, քանի դեռ մարդիկ չեն արթնացել։

Ես կրունկներով խփեցի ձիու կողերին։ Մի ագամ էլ նա դանդաղեց հետին տոքերի վրա, զիլ խրխնջաց և առաջ նետվեց։ Ես չգիտեի ինչ անեմ։ Փոխանակ դաշտի միջով դեպի ոռոգման առուն վազելու, ձին արշավեց ճանապարհով ցած, դեպի Տիգրան Հալաբյանի վաղուցի այգին և սկսեց որթատունկերի վրայով թռչել։ Նա արդեն թռել էր կոթ որթատունկերի վրայով, երբ ես ցած ընկա։ Ձին շարունակեց վազել։

Իմ զարմիկ Մուրադը վազելով եկավ։

— Ես քո մասին չեմ մտածում,— բղավեց նա,— մենք պետք է ձին բռնենք։ Դու այս կողմով գնա, ես այն կողմով։ Եթե հանդիպես, մեղմ վարվիր։ Ես մոտակայքում կլինեմ։

Ես վազեցի ճանապարհով, իսկ Մուրադը գնաց դաշտի միջով դեպի ոռոգման առուն։

Կես ժամում նա գտավ ձին և բերեց։

— Դե,— ասաց նա,— նստիր։ Ամբողջ աշխարհը արդեն արթուն է։

— Ի՞նչ պիտի անենք,— ասացի ես։

— Կամ պիտի վերադարձնենք, կամ պահենք մինչև վաղը առավոտ,— ասաց նա։

Մուրադը մտահոգված չէր երևում, և ես հասկացա, որ նա ձին պահելու է և ոչ թե վերադարձնելու։ Ամեն դեպքում, հիմա չի վերադարձնելու։

— Որտե՞ղ պիտի պահենք,— ասացի ես։

— Մի տեղ գիտեմ,— ասաց նա։

— Ինչքա՞ն ժամանակ է, որ ձին գողացել ես,— հարցրի ես։

Հանկարծ մտքովս անցավ, որ նա, հավանաբար, բավական ժամանակ է, ինչ վայելում է առավոտյան այդ արշավները և միայն այսօր է եկել իմ հետևից, որովհետև գիտե, թե ես ինչքան եմ փորում ձի նստելու։

— Ո՞վ ասաց, թե գողացել եմ,— ասաց նա։

— Ինչևէ, ինչքա՞ն ժամանակ է, որ դու սկսել ես ամեն առավոտ ձի հեծնել։

— Այս առավոտվանից,— ասաց նա։

— Ճի՞շտ ես ասում։

— Իհարկե ոչ,— ասաց նա,— բայց եթե բռնվենք, դուռ այդպես կասես։ Ես չեմ ուզում, որ մենք ստախոս լինենք։ Դու կասես, որ այս առավոտ սկսեցինք ձի հեծնել։

— Շատ լավ,— համաձայնեցի ես։

Զգուշությամբ նա ձին տարավ մի լքված այգու գոմը։ Այդ այգին մի ժամանակ Ֆեթվաջյան ազգանունով մի ազարակատիրոջ պարծանքն էր եղել։ Գոմում մի քիչ վարսակ և չոր առվույտ կար։

Այնտեղից մենք ոտքով տուն վերադարձանք։

— Հեշտ չէր ձիուն միանգամից այդքան ընտելացնել,— պարծեցավ նա,— սկզբում ուզում էր գժություններ անել, բայց, ինչպես ասացի, ես ձիու հետ վարվելու հատուկ ձև գիտեմ։ Ես կարող եմ նրան անել տալ ինչ-որ կուզեմ։ Ձիերն ինձ հասկանում են։

— Ինչպե՞ս ես անում,— ասացի ես։

— Մենք իրար լեզու հասկանում ենք,— ասաց նա։

— Հա, բայց ի՞նչ լեզու է դա։

— Պարզ և ազնիվ։

— Ես էլ կուզեի իմանալ, թե ինչպես կարելի է ձիու հետ այդպիսի լեզու գտնել,— ասացի ես։

— Դու դեռ երեխա ես, երբ տասներեք տարեկան դառնաս, կիմանաս։

Ես տուն գնացի և ախորժակով նախաճաշեցի։

Նույն օրը կեսօրից հետո մեր տուն եկավ Խոսրով քեռիս՝ սուրճ խմելու և սիգարետ ծխելու։ Նա բազմեց հյուրասենյակում, սուրճ խմեց, ծխեց և վերհիշեց հին երկիրը՝ Հայրենիքը։ Հետո մի ուրիշ այցելու եկավ, Ջոն Բայրոն անունով մի ասորի ազարակատեր, որ մենությունից հայերեն խոսել էր սովորել։ Մենավոր այցելուին մայրս սուրճ և ծխախոտ հյուրասիրեց։ Նա, փաթաթելով սիգարետը, ըմպեց սուրճը, ծխեց և հետո, վերջապես, մի տխուր հառաչ հանելով, ասաց.

— Սպիտակ ձիս, որ անցյալ ամսին գողացել էին, դեռ չի գտնվել։ Չեմ հասկանում։

Խոսրով քեռիս խիստ զրգռվեց և բղավեց.

— Վնաս չունի, ի՞նչ մեծ բան է մի ձիու կորուստը, ամբողջ Հայրենի երկիրն ենք կորցրել. մի ձիու համար եկել ես լաց ես լինում։

— Քեզ համար ասելը հեշտ է, քաղաքի բնակիչ,— ասաց Ջոն Բայրոնը,— բայց ի՞նչ կասես իմ սայլի մասին։ Ինչի՞ է պետք սայլն առանց ձիու։

— Կարևորություն մի տուր,— գոռաց Խոսրով քեռին։

— Այստեղ հասնելու համար տասը մղոն ոտքով եմ եկել։

— Ոչինչ, ոտքեր ունես։

— Ձախ ոտքս ցավում է։

— Ուշադրություն մի դարձրու։

— Այդ ձին ինձ վրա վաթսուն դոլար է նստել,— ասաց Ջոն Բայրոնը։

— Ես թքել եմ փողի վրա,— ասաց Խոսրով քեռին։

Նա վեր կացավ և հպարտ դուրս եկավ մեր տնից՝ դուռը շրխկացնելով։

Մայրս սկսեց բացատրել։

— Հսկա մարդ է, բայց սիրտը շատ է քնքուշ. դա նրանից է, որ հայրենիքին է կարոտել։

Ագարակատերը հեռացավ, իսկ ես շտապեցի զարմիկիս՝ Մուրադի տունը։

Նա նստել էր դեղձենու տակ և աշխատում էր դարմանել թռչելու անզոր մի կարմրալանջի վիրավոր թևը։ Նա խոսում էր թռչունի հետ։

— Ի՞նչ կա,— հարցրեց նա։

— Ագարակատեր Ջոն Բայրոն,— ասացի ես,— մեր տուն էր եկել։ Նրան պետք է իր ձին։ Մի ամիս է, որ դու վերցրել ես։ Խոստացիր, որ չես վերադարձնի, մինչև ես ձի քշել սովորեմ։

— Մի տարի է պետք, որ դու սովորես,— ասաց Մուրադը։

— Մենք կարող ենք ձին մի տարի պահել,— ասացի ես։

Իմ զարմիկ Մուրադը տեղից վեր թռավ։

— Ի՞նչ,— գոռաց նա,— դու ուզո՞ւմ ես Ղարաջլանյան ընտանիքի անդամը գողություն անի։ Ձին պետք է վերադարձվի իր իսկական տիրոջը։

— Ե՞րբ,— ասացի ես։

— Ամենաուշը վեց ամիս հետո,— ասաց նա։

Նա թռչունը օդ նետեց։ Թռչունը մեծ ճիգ գործ դրեց, երկու անգամ քիչ մնաց ընկներ, բայց ի վերջո թռավ բարձր ու ուղիղ։

Երկու շաբաթ, ամեն օր առավոտ շուտ, իմ զարմիկ Մուրադն ու ես ձին դուրս էինք բերում ավերված այգու գոմից, որտեղ թաքցնում էինք այն ու քշում։ Եվ ամեն առավոտ, երբ ձիավարելու իմ հերթն էր հասնում, ձին թռչում էր որթատունկերի և փոքր ծառերի վրայով և ինձ

գետին գցելով վազում էր հեռու։ Այսուհանդերձ, ես հույս ունեի, որ ժամանակի ընթացքում կսովորեմ Մուրադ զարմիկիս պես հեծնել։

Մի առավոտ, Ֆեթվաջյանի ավերված այգու ճանապարհին, մենք դեմ-դիմաց եկանք ագարակատեր Ջոն Բայրոնին, որը քաղաք էր գնում։

— Թող ես խոսեմ,— ասաց Մուրադը,— ես ագարակատերի հետ խոսելու ձևը գիտեմ։

— Բարի լույս, Ջոն Բայրո,— ասաց իմ զարմիկ Մուրադը։

Ագարակատերն ուշադրությամբ ուսումնասիրեց ձին։

— Բարի լույս, իմ բարեկամների որդիներ,— ասաց նա,— ի՞նչ է ձեր ձիու անունը։

— «Սիրտ իմ»,— հայերեն ասաց իմ զարմիկ Մուրադը։

— Սիրուն անուն է սիրուն ձիու համար,— ասաց Ջոն Բայրոն— Կերդվեի, որ դա շաբաթներ առաջ ինձանից գողացված ձին է։ Կարո՞ղ եմ բերանը նայել։

— Անշուշտ,— ասաց Մուրադը։

Ագարակատերը նայեց ձիու բերանը։

— Ատամ առ ատամ նման է,— ասաց նա։— Կերդվեի, որ իմ ձին է, եթե ձեր ծնողներին չճանաչեի։ Ձեր ընտանիքի ազնվության համբավը լավ հայտնի է ինձ։ Երևի այս ձին իմ ձիու երկվորյակն է։ Կասկածում մի մարդ ավելի շուտ իր աչքերին պիտի հավատար, քան սրտին։ Բարով մնաք, իմ պատանի բարեկամներ։

— Հաջողություն, Ջոն Բայրո,— ասաց իմ զարմիկ Մուրադը։

Հաջորդ օրը առավոտ շուտ մենք ձին տարանք Ջոն Բայրոյի այգին և թողեցինք գոմում։ Շները մեզ շրջապատած հետևեցին, առանց ձայն հանելու։

— Շները,— փսփսացի Մուրադի ականջին,— կարծում էի, որ կհաչեն։

— Ուրիշի վրա կհաչեն,— ասաց նա։— Ես գիտեմ շների հետ վարվելու ձևը։

Մուրադը փաթաթվեց ձիուն, քիթը սեղմեց նրա քթին, ափով մեղմ շոյեց, և մենք հեռացանք։

Կեսօրից հետո Ջոն Բայրոն սայլով մեր տուն եկավ և մորս ցույց տվեց գողացված ու վերադարձված ձին։

— Չգիտեմ ինչ մտածեմ,— ասաց նա,— ձին ավելի ուժեղ է, քան առաջ։ Նույնիսկ բնավորությամբ մեղմացել է։ Փառք աստծու։

Իմ խոսքով քեռին, որ հյուրասենյակում էր, զայրացավ և բղավեց։

— Հանգի՜ստ, մա՛րդ, հանգի՜ստ։ Քո ձին վերադարձվել է, վե՛րջ, ուշադրություն մի դարձրու։

Վերջապես հասավ այն օրը, երբ իմ անուղղելի քեռի Ջորջին հեծանիվով պետք է մեկներ քսանյոթ մղոնի վրա գտնվող Հանֆորդ քաղաքը, ուր ասում էին, թե նա մի որևէ աշխատանք կգտնի։ Նրա հետ մեկնեցի նաև ես, չնայած սկզբում մտածում էին, որ պետք է գնա իմ զարմիկ Վասկը։

Մեր գերդաստանն առանձնապես չէր դժգոհում, որ Ջորջիի նման մի խելառ զավակ ունի, բայց դեմ էլ չէր, որ նա գոնե ամռանը աչքից հեռու լիներ։ Հրաշալի բան կլիներ, եթե նրան հաջողվեր Հանֆորդի ձմերուկի բոստաններում մի որևէ գործ ճարել։ Նախ՝ քիչ-միչ փող կվաստակեր, մյուս կողմից էլ՝ տանը չէր լինի։ Շատ կարևոր էր նրան մի առժամանակ հեռու պահելը։

— Գրողի ծոցն անցնեն ինքն էլ, իր կիթառն էլ,— ասաց պապս։

— Եթե դուք որևէ գրքում կարդաք, թե մեկը, որ ամբողջ օրը ծառի տակ նստած կիթառ է նվագում ու երգում, կարող է կարգին ճարդ համարվել, կասկած չունենաք, որ այդ գիրքը ստախոսի մեկն է գրել։ Թող վերցնի իր կիթառն ու գնա արևի տակ մի քիչ քրտնի։

— Դու հիմա ես այդպես խոսում,— ասաց տատս,— մի շաբաթ որ անցնի... մի շաբաթ հետո, երբ նորից երգի վարձք գգաս, այն ժամանակ կտեսնենք։

— Դատարկ բաներ են դրանք,— ասաց պապս։— Ավելի լավ է գնա։ Մինչև Հանֆորդ քսանյոթ մղոն է, բավական խելքի մոտ մի տարածություն։

— Դու հիմա ես այդպես խոսում,— ասաց տատս։— Մի երեք օր անցնի՝ կարոտից կմեռնես։ Կտեսնեմ, թե ինչպես ես քեզ պատեպատ խփում, ոնց որ վագրը վանդակում։ Կտեսնեմ, դա այն մարդն եմ, որ դա կտեսնեմ և քեզ այդ վիճակում տեսնելով, մի լավ կծիծաղեմ։

— Կնիկ արմատ ես, էլի՛,— ասաց պապս։— Եթե դուք հանկարծ մանր տառերով տպված մի հարյուր էջանոց գրքում կարդաք այն մասին, թե կինն իսկապես սքանչելի արարած է, ապա իմացեք, որ այդ գրքի հեղինակը ոչ մի անգամ մարդավարի չի նայել իր կնոջը և միայն երազել է։ Ասացի՝ թող գնա։

— Պարզ է, որ դու չահել չես, թե չէ այդպես չէիր փնթփնթա,— ասաց տատս։

— Զայնդ կտրիր,— բարկացավ պապս։— Լալկվիր, քանի դեռ բերանդ իմ ափով չեմ փակել։

Եվ պապս հայացքը պտտեցրեց սենյակով մեկ, ուր շարված էին նրա զավակներն ու թոռները։

— Ես կարծում եմ, որ նա Հանֆորդ պիտի գնա հեծանիվով։ Դո՞ւք ինչ կասեք։

Ոչ ոք չխոսեց։

— Որոշված՝ է,— ասաց պապս։— Իսկ հիմա տեսնենք, թե ում ենք ուղարկում նրա հետ։ Մեր ամբաններից որի՞ն ենք որպես պատիժ Ջորջի հետ ուղարկում Հանֆորդ։ Եթե դուք մի որևէ գրքում կարդաք, թե երիտասարդ մարդու համար մի քաղաքից մեկ ուրիշ քաղաք գնալը հաճելի բան է, ապա իմացեք, որ այդ գրողը անպայման ութսունինն տարեկան մարդ է, որը երեխա ժամանակ մի անգամ է միայն տանից սայլով մի երկու մղոն հեռացել։ Հը՛, ո՞ւմ ենք պատժում։ Վասկի՞։ Հենց սրա՞ն։ Հապա մի արի մոտիկ, տղա՛։

Իմ զարմիկ Վասկը նստած տեղից վեր թռավ և կանգնեց ծերուկի առաջ։ Պապս վերևից հեգնոտ նայեց նրան, բեղերը ոլորեց, կոկորդը մաքրեց, ապա ձեռքը դրեց նրա դեմքին և ծերուկի ափը ամբողջովին ծածկեց Վասկի դեմքը, գլուխն էլ հետը։

— Ջորջի հետ Հանֆորդ կգնա՞ս,— հարցրեց պապս։

— Եթե իմ պապը կամենում է՝ կգնամ։

Ծերուկը հոնքերը կիտեց և սկսեց մտածել։

— Թողեք մի քիչ մտածեմ,— ասաց նա։— Ջորջին մեր տոհմի ամենադմբո մարդն է։ Դու էլ ես դմբո,— ասաց նա Վասկին։— Խելո՞ք բան կլինի երկու հիմարի իրար հետ որևէ տեղ ուղարկելը։

Հետո դառնալով մյուսներին, ավելացրեց.

— Եկեք ձեր կարծիքն էլ լսենք։ Մի՞թե խելացի բան կլինի, եթե մի հաստունացած դմբոյի հետ նույն տոհմից մի ուրիշ, ավելի տհաս դմբոյի ուղարկենք։ Դրանից ի՞նչ կստացվի։ Դե խոսեք, ես ուզում եմ ամեն բան կշռադատել։

— Ես իմ խելքով կարծում եմ, որ դա ամենաբնական բանը կլինի,— ասաց իմ քեռի Զոհրաբը։— Մի հիմարը մի ուրիշ հիմարի հետ։ Մեծը կաշխատի, իսկ փոքրը տան գործերը կանի։

— Հնարավոր է որ այդպես լինի,— ասաց պապս,— եկեք մի քիչ մտածենք։ Հիմարը հիմարի հետ։ Մեկն աշխատում է, մյուսը տան գործերն է անում։ Տղա, դու եփել-թափել գիտե՞ս։

— Ինչ խոսք, որ գիտի,— ասաց տատս,— գոնե բրինձ եփել կիմանա։

— Բրի՞նձ։ Ճի՞շտ են ասում բրնձի մասին, տղա, կարո՞ղ ես բրնձով փլավ եփել։ Երկու բաժակ ջուր՝ մի բաժակ բրինձ և մի թեյի գդալ

էլ աղ, այդպես չէ՞։ Դու գիտե՞ս, թե որն է էստեղ գաղտնիքը, որպեսզի ուտելու բան ստացվի և ոչ թե շան լափ։

— Անշուշտ, փլավ եփել նա կարող է,— ասաց տատս։

— Իմ ափը պատրաստ պահել եմ, որ բերանդ փակեմ,— ասաց պապս։— Թող ինքը խոսի։ Նա լեզու ունի։ Տղա՛, դու կարո՞ղ ես բրինձ եփել, ասա՛։ Եթե դուք որևէ գրքում կարդաք, թե սրա նման լղճորի մեկը կարող է խելոք պատասխան տալ մի ծեր մարդու, ուրեմն այդ գրողը Աստվածաշունչ կարդացող է եղել և չափազանցելու սովորություն ունի։ Դու կարո՞ղ ես բրինձն այնպես եփել, որ շան լափի փոխարեն ուտելու բան ստացվի։

— Ես բրինձ եփել եմ,— ասաց Վասկը։— Ոչինչ, ուտել կարելի էր։

— Իսկ ա՞ղը... աղը տե՞ղն էր,— ասաց պապս։— Տես, եթե խաբես, ա՛յ, այս գմբուզի հետ գործ կունենաս։

Վասկը մի պահ տատանվեց։

— Պարզ է,— ասաց պապս,— բրնձի հարցում մի քիչ տատանվում ես։ Ի՞նչը չէր ստացվում, ասա, ես ուզում եմ միայն ճշմարտություն իմանալ։ Ասա առանց վախենալու։ Եթե մարդը առանց վախենալու ասում է ճշմարտությունը, այլևս ուրիշ բան պետք չէ։

— Շատ աղի էր ստացվել,— ասաց Վասկը։— Ամբողջ օրը, հետո էլ գիշերը ջուր էինք խմում։

— Մանրուքների կարիք չկա,— ասաց պապս,— միայն եղածն ասա։ Աղը եթե շատ էիր արել, բնական է, որ հետո ջուր պիտի շատ խմեիք։ Բոլորս էլ երբևէ այդպիսի փլավ կերել ենք։ Մի կարծիր, որ եթե դու ամբողջ օրն ու գիշերը ջուր ես խմել, ուրեմն առաջին հայն ես, որի հետ նման բան է պատահել։ Ուղղակի ասա, աղը շատ է եղել։ Թե չէ, ինձ սովորեցնել պետք չէ, այդքան բանը ես գիտեմ։ Ասացիր, բրնձի աղը շատ է եղել և թող որ ես որոշեմ հարմա՞ր է, որ քեզ ուղարկենք։

Պապս շրջվեց դեպի մյուսները և էլի հոնքերը կիտեց։

— Իմ կարծիքով այս տղան կարող է գնալ։ Խոսեք, եթե ասելու բան ունեք։ Աղի փլավը, ինչ խոսք, շան լափից լավ է։ Իսկ փլավը սրրսո՞ւռ էր, տղա։

— Սրսուռ էր։

— Կարծում եմ, սրան կարելի է ուղարկել։ Դե ջուրն էլ աղիքների համար օգտակար է,— ասաց պապս և ավելացրեց.— Հը՛, հիմա ո՞ւմ ենք ուղարկելու՝ Վասկ Ղարաղլանյանին, թե մեկ ուրիշի։

Մի փոքր մտածելով քեռի Զոհրաբն ասաց.

— Ճիշտ է, սրա եփած բրնձից շան լափ չի ստացվել, բայց կար-

ծում եմ, որ երկու հիմարի իրար հետ ուղարկելուց լավ բան դուրս չի գա։ Ավելի լավ է ուղարկենք Արամին։ Կարծում եմ, որ նա ավելի հարմար է, մանավանդ որ արժանի է պատժի։

Բոլորը նայեցին ինձ։

— Արամի՞ն,— ասաց պապս,— դու նկատի ունես մեր Արամի՞ն, նրան, որ այնքան լավ ծիծաղե՞լ գիտի։

— Էլ ո՞ւմ պիտի նկատի ունենա,— ասաց տատս։— Շատ լավ էլ գիտես, թե ում մասին է խոսքը։

Պապս հանգիստ շրջվեց ու մի կես րոպեի չափ նայեց տատիս։

— Եթե դուք ինչ-որ գրքում կարդաք մի մարդու մասին, որը սիրահարվում է և ամուսնանում մի աղջկա հետ, ապա իմացեք, որ խոսքը մի դեղնակտուց պատանու մասին է, որի մտքով անգամ չի անցել, թե այդ աղջիկը ամբողջ կյանքում՝ մինչև իննսունհինգ տարեկան հասակում գերեզման մտնելը, հակառակվելու է իրեն։ Եթե դուք նման բան կարդաք, ապա իմացեք, որ այդ գրողն էլ դեղնակտուցի մեկն է եղել,— ասաց պապս և դիմեց քեռի Զոհրաբին.

— Այսպես, ուրեմն, դու նկատի ունես Արամ Ղարօղլանյանին։

— Այո, հենց նրան,— ասաց քեռի Զոհրաբը։

— Իսկ ինչո՞վ է նա արժանացել նման մի սարսափելի պատժի։

— Ինքը գիտի,— ասաց քեռի Զոհրաբը։

— Արամ Ղարօղլանյան,— կանչեց պապս։

Ես մոտեցա ու կանգնեցի պապիս առաջ։ Նա իր մեծ ձեռքը դրեց դեմքիս և սկսեց շոշափել։ Ես գիտեի, որ նա չի ջղայնանում ինձ վրա։

— Էդ ի՞նչ պիտի արած լինես դու, տղա,— հարցրեց պապս։

Ես հիշեցի, թե ինչ եմ արել և ծիծաղից փոթկացի։ Պապս ծիծաղս լսեց թե չէ, ինքն էլ սկսեց ծիծաղել ինձ հետ։

Միայն նա ու ես էինք ծիծաղում։ Մյուսները չէին համարձակվում։ Պապս չէր թողնում, որ նրանք ծիծաղեն, քանի դեռ մեզ նման ծիծաղել չեն սովորել։ Ղարօղլանյաններից մենակ ես էի, որ ծիծաղում էի իսկ և իսկը պապիս նման։

— Արամ Ղարօղլանյան,— ասաց պապս։— Պատմիր, թե ինչեր ես արել։

— Ո՞ր մի անգամ,— հարցրեցի ես։

Պապս շրջվեց դեպի քեռի Զոհրաբը։

— Լսո՞ւմ ես,— ասաց նա։— Հարցրու տղային, թե ո՞ր մի մեղքի մասին պիտի պատմի։ Երևում է, որ մի քանի մեղք է գործել։

— Նա գիտի, թե որ մեղքի համար,— ասաց քեռի Զոհրաբը։

— Ձեր մտքինն այն է, որ ես հարևաններին ցույց եմ տվել, թե

դուք ինչպես եք ասում խորթո՞ւմ։ Այսինքն երբ մի ձեռքով ծածկում եք մյուս ձեռքի արա՞ծը։

Քեռի Զոհրաբը լուռ էր։

— Թե՞ այն, որ ես ձեր քայլելու ու խոսելու տնաքն էի անում։

— Այ, հենց սրան էլ պիտի Ջորգիի հետ ուղարկել,— ասաց քեռի Զոհրաբը։

— Դու կարո՞ղ ես բրինձ եփել,— հարցրեց պապս։

Նա չուզեց հետաքրքրվել մանրամասներով, թե ես ինչպես եմ ծաղրել քեռի Զոհրաբին։ Եթե փլավ եփել գիտեմ, ուրեմն կգնամ Ջորգիի հետ։ Այսպես էր հարցը դրվում։ Ինչ խոսք, ես ուզում էի գնալ, անկախ նրանից, թե ով էր եղել այն գրողը, որն ինչ-որ բան էր ասել աշխարհ տեսնելու մասին։ Այդ գրողը թեկուզ ստախոս լիներ կամ հիմարի մեկը, միևնույն է, ես ուզում էի գնալ։

— Փլավ եփել գիտեմ,— ասացի ես։

— Աղը շա՞տ ես անում, թե՞ այնքան ես եփում, որ լիկվում, դառնում է խաշիլ,— հարցրեց պապս։

— Պատահում է, որ աղը շատ է լինում, պատահում է, որ խաշիլ է դառնում, մեկ-մեկ էլ կարգին փլավ է ստացվում։

— Եկեք մտածենք,— ասաց պապս։

Նա նորից հենվեց պատին ու սկսեց մտածել։

— Երեք մեծ բաժակ ջուր,— դիմեց նա տատիս։

Տատս գնաց խոհանոց և վերադարձավ երեք բաժակ ջուր մատուցարանի վրա դրած։ Պապս երեք բաժակն էլ խմեց, ապա դառնալով ներկաներին՝ նորից խորիմաստ կնճռոտեց դեմքը։

— Պատահում է, որ աղը շատ է լինում,— ասաց նա,— պատահում է, որ լիկվում դառնում է խաշիլ, մեկ-մեկ էլ կարգին փլավ է ստացվում։ Հիմա ի՞նչ ենք անում, ուղարկո՞ւմ ենք սրան Հանֆորդ։

— Այո՛, հենց դրան,— ասաց քեռի Զոհրաբը։

— Թող արդեն լինի,— ասաց պապս։— Իսկ հիմա ինձ մենակ թողեք։

Այն է, ես էլ էի ուզում գնալ, պապս օձիքիցս պինդ բռնեց։

— Սպասիր,— ասաց նա։

Երբ մենք մնացինք մենակ, ասաց.

— Ցույց տուր, թե քեռի Զոհրաբն ինչպես է քայլում ու խոսում։

Ես ցույց տվեցի, և պապս այնքան ծիծաղեց, որ քիչ մնաց ուշաթափվեր։

— Գնա... գնա Հանֆորդ այդ հիմար Ջորգիի հետ և թող քո փլավը մեկ աղի ստացվի, մեկ դառնա խաշիլ և մեկ-մեկ էլ՝ կարգին բան։

Այ, այսպես, երբ քեռի Ջորջին տաղարկեցին Հանֆորդ, ինձ ընկեր դարձրեցին նրան։

Հաջորդ առավոտ դեռ լույսը չբացված մենք ճամփա ընկանք։ Ես նստեցի հեծանիվի շրջանակին, իսկ հորեղբայր Ջորջին՝ նստոցին։ Երբ հոգնում էի, իջնում քայլում էի ոտքով, հետո իջնում ոտքով էր քայլում ինքը՝ հորեղբայր Ջորջին, իսկ ես հեծանիվով էի գնում։ Երեկոյան կողմ հասանք Հանֆորդ։

Ենթադրվում էր, թե մենք Հանֆորդում կմնանք քանի դեռ աշխատանք կլինի, մինչև ձմերուկի վերջանալը։ Այդպես էին որոշել։ Մենք սկսեցինք բնակարան փնտրել, մի այնպիսի տուն, որտեղ գազօջախ լիներ և ջուր։ Առանց էլեկտրականության մենք էլի կարող էինք յոլա գնալ, բայց ջուրը և գազը մեզ անհրաժեշտ էին։ Մի քանի տուն նայեցինք և վերջապես գտանք մեկը, որ հորեղբայր Ջորջին դուր եկավ։ Այդտեղ էլ տեղավորվեցինք։ Դա տասնմեկ սենյականոց մի տուն էր, գազօջախով, ջրով և ննջարանով, ուր դրված էին մի մահճակալ ու թախտ։ Մյուս սենյակները դատարկ էին։

Քեռի Ջորջին մոմը վառեց, վերցրեց իր կիթառը և նստելով հատակին՝ սկսեց նվագել ու երգել։ Հիասքանչ էր։ Երբեմն տխուր էր երգում, երբեմն ուրախ, միևնույն է՝ հիասքանչ էր։ Չեմ հիշում, շատ երգեց, թե քիչ, մեկ էլ հանկարծ վեր թռավ տեղից ու ասաց.

— Արամ, փլավ եմ ուզում։

Ես այդ երեկո մի ման փլավ եփեցի։ Եվ աղն էր շատ, և լխկել, խաշիլ էր դարձել, բայց հորեղբայր Ջորջին կերավ ու ասաց.

— Շատ համով էր, Արամ։

Առավոտ վաղ մեզ արթնացրին թռչունները։

— Դե, այսօր արդեն աշխատանքը քեզ է սպասում,— ասացի ես։ — Շուտ գնա, հորեղբայր։

— «Այսո՞ր, «այսո՞ր»...— հառաչելով ասաց Ջորջին և, մոայլ դեմք ընդունելով, դուրս եկավ դատարկ տնից, իսկ ես այս ու այն կողմ ընկած սկսեցի ավել փնտրել։ Ավել չգտա, դրա համար էլ դուրս եկա ու նստեցի արտասանդուղքի աստիճաններին։ Ցերեկով այդ վայրն ավելի սիրուն էր երևում։ Դա մի փողոց էր, ուր ընդամենը չորս տուն կար, իսկ քիչ հեռվում եկեղեցու զանգակատունն էր երևում։ Կլիներ մոտ մի ժամ, ինչ ես նստած էի արտասանդուղքին, երբ հեծանվով հայտնվեց քեռի Ջորջին և պտույտներ կատարելով փողոցում՝ անզուսպ ուրախությամբ բացականչեց.

— Փառք աստծո, այս տարի չեղավ։

Այս խոսքերի հետ նա հեծանվով փլվեց վարդի թփի վրա։

— Ի՞նչը չեղավ,— հարցրեցի։

— Աշխատանք չկա,— ասաց նա։— Փառք աստծո, աշխատանք չկա։

Նա մի վարդ պոկեց ու սկսեց հոտոտել։

— Աշխատանք չկա՞,— զարմացած հարցրեցի ես։

— Չկա, չկա, փառք երկնավորին։

Վարդերին նայելով՝ ժպտում էր նա։

— Ինչպե՞ս թե չկա։

— Ձմերուկ չկա։

— Իսկ ո՞ւր կորան ձմերուկները։

— Վերջացել են։

— Լինելու բան չէ,— ասացի ես։

— Վերջացել են, ձմերուկի ժամանակն անցել է,— ասաց քեռի Ջորգին։

— Պապը գլուխդ կթռցնի,— ասացի ես։

— Ձմերուկը վերջացել է, հասկանո՞ւմ ես,— կրկնեց Ջորգին։— Փառք երկնավորին, ձմերուկը լրիվ հավաքել են։

— Ո՞վ ասաց քեզ։

— Ագարակատերը, ինքը ագարակատերն ասաց։

— Զգացել է, որ աշխատել չես ուզում, դրա համար է այդպես ասել։

— Փառք երկնավորին,— ասաց Ջորգին։— Ձմերուկը վերջացել է։ Հասկանո՞ւմ ես, ձմերուկը որ հասնում է, պիտի հավաքեն։

— Հիմա մենք ի՞նչ պիտի անենք, ախր ձմերուկի ժամանակը նոր-նոր սկսել է,— ասացի ես։

— Վերջ,— ասաց քեռիս,— այստեղ կապրենք մեր մի ամիսը, հետո կգնանք տուն։ Բնակարանի համար վեց դոլար վճարել ենք սկզբից, մնացած փողն էլ բրնձի հերիք կանի։ Քաղցր երազնեռով կապրենք այս տանը մի ամիս, հետո տուն կգնանք։

— Առանց մի կոպեկ փողի,— ավելացրեցի ես։

— Դրա փոխարեն ողջ և առողջ կլինենք։ Փառք ստեղծողին, որ այս տարի ձմերուկն այսքան շուտ էր հասունացել։

Քեռի Ջորգին պար գալով տուն մտավ և գնաց դեպի իր կիթառը։ Մինչ ես կհասցնեի մի որևէ բան ասել, նա արդեն նվագում ու երգում էր։ Դա այնքան հիասքանչ էր, որ ես նույնիսկ չմտածեցի էլ վեր կենալ ու նրան տանից դուրս քշել։ Մնացի արտասանդուղքին նստած և լսում էի նրան։

Մենք ապրեցինք Հանֆորդում մի ամիս և վերադարձանք տուն։ Տատս առաջինն էր, որ մեզ տեսավ։

— Ճիշտ ժամանակին եկաք,— ասաց նա։— Պապը վագրի նման կատաղած է։ Տվեք փողերը։

— Փող չկա,— ասացի ես։

— Նա չի՞ աշխատել, ի՞նչ է։

— Ոչ։ Նա ամբողջ ամիս նվագել ու երգել է։

— Իսկ բրինձը ո՞նց էր ստացվում,— հարցրեց տատս։

— Մեկ աղի էր լինում, մեկ դառնում էր խաշիլ, մեկ-մեկ էլ՝ ոնց որ պետք է։ Բայց նա չէր աշխատում։

— Պետք չէ, որ պապն այդ մասին իմանա։ Ես փող ունեմ։

Նա բարձրացրեց փեշը և ինչ-որ տեղից մի քանի թղթադրամ հանելով, դրեց բուռս։

— Պապդ հենց որ տուն եկավ, կտաս։

Նա մի պահ նայեց ինձ և ավելացրեց.

— Արամ Ղարօղլանյան...

— Կանեմ, ինչպես ասացիր։

Հենց որ պապս տուն եկավ, ձայնը գլուխը գցեց.

— Ե՞տ եկաք վերջապես... Աշխատածդ փողերը տեսնեմ։

Փողերը տվեցի։

— Ես թույլ չեմ տա, որ նա ամբողջ օրը երգի-նվագի։ Ամեն բան վերջ կունենա,— գոռգոռում էր պապս։— Եթե դուք երբևէ գրքում կարդաք, թե հայրը կարող է իր հիմար զավակին խելոքներից ավելի շատ սիրել, իմացած եղեք՝ այդ գիրքը անզավակ մարդ է գրել։

Այդ ժամանակ բակում իմ քեռի Ջորգին նշի ծառի տակ նստած սկսեց նվագել ու երգել։ Պապս քարացավ տեղում և ականջ դրեց։ Հետո չստերը հանեց, նստեց թախտին ու նոթերը կիտեց։

Ես վազեցի խոհանոց ու երեկվա փլավից հետո իրար ետևից երեք, թե չորս բաժակ ջուր խմեցի։ Երբ վերադարձա հյուրասենյակ, պապս թախտին մեկնված քնած էր՝ երազի ժպիտը դեմքին, իսկ նրա որդի Ջորգին իր գեղեցիկ ու տխուր ձայնով արար աշխարհի գովքն էր անում։

ՆՈՆԵՆԻՆԵՐԸ

Իմ քեռի Մելիքը թերևս ամենաաախորդ ֆերմերն էր ամբողջ աշխարհում։ Նա չափից ավելի մեծ երազող էր ու պոետ, այնպես որ իր շահի մասին չէր մտածում։ Գեղեցկություն— ահա թե ինչի էր ձգտ-

տում նա։ Նա կուզենար գեղեցկություն ցանել ծաղկի պես և հիանալ նրա աճը տեսնելով։ Պոեզիայի և պատանեկության վաղուց անցած այն հիանալի օրերին ես ինքս մի անգամ հարյուրից ավելի նոնենի տնկեցի նրա համար։ Այն ժամանակ ես «Ջոն Դիր» տրակտորն էի վարում, իմ քեռին՝ նույնպես։ Այդ ամենը զուտ էսթետիկա էր և ոչ թե գյուղատնտեսություն։ Քեռուս հրապուրում էր հենց միայն ծառեր տնկելու և նրանց աճով հիանալու գաղափարը։

Միայն թե ծառերը չէին աճում։ Հողի պատճառով։ Դա անապատային հող էր։ Չոր ու ցամաք։ Մելիք քեռիս ձեռքը մեկնում էր իր գնած վեց հարյուր ութսուն ակր անապատի կողմը և ասում ամենաբանաստեղծական հայերենով, որպիսին դուք երբևէ լսել եք։

— Այստեղ, այս սոսկալի անապատում, այգի կփթթի, գետնից սառնորակ աղբյուրներ կբխեն, և կյանք կառնի ամենը, ինչ որ գեղեցիկ է։

— Այո, սըր,— ասում էի ես։

Ես նրա առաջին ու միակ ազգականն էի, որին վիճակվեց տեսնել նրա գնած հողը։ Նա գիտեր, որ ես հոգով բանաստեղծ եմ, և հույս ուներ, որ կհասկանամ իր վեհաշունչ պոռթկումը, որը նրան տանում էր դեպի փայլուն սնանկացում։ Եվ ես նրան հասկացա։ Ես իրենից վատ չգիտեի, որ նրա ձեռք բերած հողը անպետք էր. անպտուղ անապատ, գրողի ծոցը կորած, լքված մի տեղ՝ Սիերա-Նեվադայի ստորոտում։ Անապատի փշփշոտ բույսերի բոլոր տեսակները դուրս էին ցցվում այդ չոր, խանձված հողից։ Ամենուրեք վխտում էին արջամկներ, կոտոշավոր գոդոշներ, օձեր և էլի ուրիշ մանր կենդանիներ։ Այդ հողի գլխին սավառնում էին միայն արծիվներ, ճուռակներ ու ցիներ։ Դա մենկուսության, ամայության, ճշմարտության ու վեհության թագավորություն էր։ Դա բնությունն էր՝ իր ամենահպարտ, սքանչելի, մենավոր ու չոր արտահայտությամբ։

Ես և քեռիս ֆորդից դուրս եկանք նրա տիրապետության մեջտեղը և սկսեցինք քայլել անշուր անապատով։

— Այս հողը,— ասաց նա,— իմ հողն է։

Նա քայլում էր դանդաղ, կոշիկի քթով քշփորելով չոր հողը։ Կոտոշավոր մի գոդոշ հենց ուղիղ նրա ոտքի տակից գետնի երեսը դուրս եկավ։ Քեռիս իմ ուսը սեղմեց և քար կտրեց երկյուղած անշարժությամբ։

— Այս ի՞նչ կենդանի է,— ասաց նա։

— Այս պստլիկ մողե՞սը,— հարցրի ես։

— Այս կոտոշավոր մուկը,— ասաց քեռիս։— Սա ի՞նչ բան է։

— Հաստատ չգիտեմ,— ասացի։— Մենք դրանց կոչում ենք կոտոշավոր գոդոշ։

Կոտոշավոր դոդոշը կանգ առավ մեղանից մի երեք քայլի վրա և գլուխը մեզ դարձրեց։ Քեռիս կանգնել նայում էր պստլիկ կենդանուն։

— Թունավոր չէ՞,— ասաց նա։

— Եթե ուտելու լինե՞ս,— հարցրի ես։— Թե՞ եթե կծի։

— Եվ մեկ, և մյուս դեպքում,— ասաց քեռիս։

— Հազիվ թե դրանք ուտելի լինեն,— ասացի ես։— Բայց և կարծեմ անվնաս են։ Ես դրանցից շատ եմ բռնել։ Գերության մեջ տխրում են, բայց չեն կծում։ Բռնե՞մ սրան։

— Բռնիր, խնդրեմ,— ասաց քեռիս։

Ես կամացուկ մոտեցա և բռնեցի կոտոշավոր դոդոշը, իսկ քեռիս կանգնած տեղը նայում էր։

— Զգույշ,— ասաց նա։— Դու հավատացա՞ծ ես, որ դա թունավոր չէ։

— Սրանցից շատ եմ բռնել,— ասացի։

Ես կոտոշավոր դոդոշը մեկնեցի քեռուս։ Նա աշխատում էր ցույց տալ, թե ամենևին չի վախենում։

— Ինչ դուրեկան փոքրիկ արարած է,— ասաց նա ոչ հաստատուն ձայնով։

— Կուզե՞ք ձեր ձեռքն առնել,— ասացի ես։

— Ոչ,— ասաց քեռիս։— Ավելի լավ է ինքդ պահիր։ Ես երբեք այսքան մոտիկից դրա նման բան չեմ տեսել։ Աչքեր էլ ունի։ Գուցեև տեսնում էլ է մեզ։

— Իհարկե,— ասացի,— նա ուղիղ ձեզ է նայում։

Մելիք քեռիս նայեց կոտոշավոր դոդոշի աչքերին։ Կոտոշավոր դոդոշը նայում էր քեռուս աչքերին։ Այդպես մի կես րոպե նրանք նայում էին ուղիղ իրար աչքերի մեջ, հետո կոտոշավոր դոդոշը ետ դարձավ ու հայացքը ցած գցեց։ Հորեղբայրս թեթևացած շունչ քաշեց։

— Սրանցից եթե հազարը լինի,— ասաց նա,— երևի կարողանան մարդ հոշոտել։

— Սրանք խմբերով չեն լինում,— ասացի։— Հազիվ թե երկուսը միասին տեսնեք։

— Եթե սրա մեծը պատահի,— ասաց քեռիս,— կարող է մարդուն կծելով սպանի։

— Շատ չեն մեծանում,— ասացի ես։— Սրանից մեծը չի լինում։

— Զարմանալի բան՝ փոքրիկ արարած է, բայց որքան խոշոր աչքեր ունի,— ասաց քեռիս։— Դու համոզվա՞ծ ես, որ դրանք չեն բարկանում, երբ իրենց ձեռքով բռնում են։

— Սրանք, երևի, հենց բաց թողնելուն պես իսկույն ամենը մոռանում են,— ասացի ես։

— Իսկապե՞ս այդ համոզմունքին ես։

— Հավատիվ թե սրանք լավ հիշողություն ունենան։

Քեռիս ուղղվեց և խոր շունչ քաշեց։

— Ապատ արձակիր դրան,— ասաց նա։— Հարկավոր չէ դաժան վարվել աստծո անմեղ արարածի հետ։ Քանի որ սրանք թունավոր չեն և ոչ էլ ոխակալ, մկնից մեծ չեն լինում և խմբեր չեն կազմում, բաց թող գնա այդ խեղճ արարածը։ Լինենք բարի ու խնայող այն բոլոր մանրիկ կենդանիների հետ, որոնք մեզ հետ մեկտեղ են երկրի երեսին։

— Լավ, սբր,— ասացի ես։

Եվ կոտոշավոր դոդոշին բաց թողի։

— Զգույշ լինենք,— ասաց քեռիս։— Վնաս չտանք իմ հողի այդ ուրույն բնակիչներին։

Կոտոշավոր դոդոշը կաղեկաղ հեռացավ։

— Այս կենդանիները,— ասացի ես,— դարերով ապրում են այսպիսի հողերի վրա։

— Դարերո՞վ,— հարցրեց քեռիս։— Դու համոզվա՞ծ ես։

— Համոզվածը համոզված չեմ,— ասացի ես,— բայց կարծում եմ, որ այդպես է։ Համենայն դեպս նրանք դեռ այստեղ են։

Քեռիս նայեց շուրջը՝ իր հողին, կակտուսներին ու փշոտ թփերին, գլխավերևի երկնքին։

— Բայց ինչո՞վ են սնվել այստեղ,— գոչեց նա։

— Չգիտեմ,— ասացի ես։

— Իսկ ի՞նչ ես կարծում։

— Միջատներով, երևի։

— Միջատներո՞վ,— գոչեց քեռիս։— Ինչպիսի՞ միջատներով։

— Բզեզներով, երևի. ի՞նչ իմանամ։ Քի՞չ տեսակի միջատներ են լինում։ Վաղը ես կարող եմ դպրոցում հարցնել։

Մենք շարունակեցինք քայլել չոր անապատով։ Երբ ճամփին ինչ-որ փոսիկներ տեսանք, քեռիս կանգ առավ և հարցրեց.

— Ի՞նչ կենդանիներ են ապրում սրանց մեջ։

— Առնետների նման բաներ են,— ասացի։

— Այսինքն ի՞նչ տեսակի են,— հարցրեց նա։

— Այսինքն կրծողների տեսակից են,— ասացի ես։

— Ախր ի՞նչ են անում այդ բոլոր արարածներն իմ հողի վրա,— ասաց քեռիս։

— Դե նրանք հո չգիտեն, որ հողը ձերն է։ Հնուց ի վեր իրենց համար ապրում են այստեղ։

— Չեմ կարծում, թե այդ կոտոշավոր դոդոշը առաջներում երբևիցե նայած լինի մարդու աչքերին,— ասաց քեռիս։

— Այո, հազիվ թե,— ասացի ես։

— Ի՞նչ ես կարծում, ես նրան վախեցրի՞։

— Հաստատ չգիտեմ,— ասացի ես։

— Եթե նույնիսկ վախեցրել եմ, ապա ոչ դիտումնավոր,— ասաց քեռիս։— Գիտե՞ս, ես այստեղ տուն եմ կառուցելու։

— Մի՞թե,— ասացի։

— Անպայման,— ասաց նա։— Մի հիանալի տուն։

— Կարծես մի քիչ հեռու է,— ասացի ես։

— Քաղաքից ընդամենը մեկ ժամվա ճանապարհ է,— ասաց նա։

— Եթե ժամում հիսուն մղոն ճանապարհ կտրես,— ասացի։

— Այստեղից մինչև քաղաք հիսուն մղոն չկա,— ասաց քեռիս։— Ընդամենը երեսունյոթ է։

— Դե մի քիչ էլ ավելի պիտի հաշվել, որովհետև ճանապարհը վատն է,— ասացի ես։

— Ես սքանչելի տուն կկառուցեմ ինձ համար,— ասաց քեռիս։— Ուրիշ ի՞նչ կենդանիներ են ապրում այս հողում։

— Դե,— ասացի,— մի երեք-չորս տեսակ օձեր։

— Թունավո՞ր։

— Մեծ մասամբ՝ ոչ։ Թեև, այ, օրինակ, բոժոժավոր օձը...

— Ի՞նչ ես ասում։ Մի՞թե այստեղ բոժոժավոր օձեր կան։

— Նրանք սովորաբար հենց այսպիսի հողերի վրա են ապրում,— ասացի ես։

— Եվ շա՞տ կլինեն, հա՞։

— Միջին հաշվով մի ակրի՞ վրա, թե՞ ամբողջ վեց հարյուր ութսուն ակրի վրա,— ասացի ես։

— Միջին հաշվով մի ակրի վրա։

— Ի՞նչ ասեմ. մի ակրի վրա երևի մի երեք հատ կլինի,— ասացի։— Ամենահամեստ հաշիվներով։

— Երեք հատ մի ակրի վրա՞,— գոչեց Մելիք քեռիս։— Համեստ հաշիվներո՞վ։

— Դե միգուցե երկուսը,— ասացի։

— Ուրեմն քանի՞սը կստացվի ամբողջ հողամասի վրա։

— Հիմա հաշվեմ,— ասացի։— Ամեն մի ակրում երկու հատ։ Վեց հարյուր ութսուն ակրում մոտավորապես հազար հինգ հարյուր հատ։

— Հազար հինգ հարյուր հատ բոժոժավոր օ՞ձ,— գոչեց քեռիս։

— Ակրն էլ փոքր բան չէ,— ասացի ես։— Մի ակրում երկու բոժոժավոր օձը այնքան էլ շատ չէ։ Հաճախ չեն երևաս։

— Իսկ էլի ի՞նչ թունավոր բան կա այստեղ։

— Կարծեմ՝ էլ ուրիշ ոչինչ,— ասացի։— Մնացած բոլոր կենդանիներն անվնաս բաներ են։ Ասենք բոժոժավոր օձն էլ վտանգավոր չէ, եթե հանկարծ ոտքով չտրորես։

— Լավ,— ասաց քեռիս։— Դու առաջ անցիր և լավ նայիր ոտքիդ տակ։ Տես, թե որ օձ պատահեց, չտրորես։ Ես ամենևին չեմ ուզում, որ դու տասնմեկ տարեկան հասակում զոհ գնաս։

— Լավ, սըր,— ասացի։— Ես ուշադիր կլինեմ։

Մենք շուտ եկանք և ետ գնացինք դեպի ֆորդը։ Վերադառնալիս ես ոչ մի օձ չտեսա։ Մեքենա նստեցինք, և քեռիս սիգարետ վառեց։

— Այս սարսափելի անապատը ես այլի կդարձնեմ,— ասաց նա։

— Այո, սըր,— ասացի։

— Ես գիտեմ, թե ինչ դժվարություններ կան իմ առաջ, և գիտեմ, թե ինչպես կարելի է հաղթահարել դրանք,— ասաց քեռիս։

— Ինչպե՞ս,— ասացի։

— Դու, իհարկե, մտածում ես կոտոշավոր դոդոշների կամ բոժոժավոր օձերի մասին,— ասաց նա։

— Ես մտածում եմ դժվարությունների մասին,— ասացի։

— Դե, ուրեմն,— ասաց նա,— ամենից առաջ ես կվարձեմ մի քանի մեքսիկացի և այստեղ աշխատանքի կդնեմ։

— Իսկ ի՞նչ են անելու։

— Կմաքրեն խոպանը,— ասաց քեռիս։— Հետո ջրհոր կփորեն։

— Որտե՞ղ։

— Ուղիղ հողի մեջ,— ասաց քեռիս։— Ջուր ունենալուց հետո կհերկենք հողը և կսկսենք մշակել։

— Իսկ ի՞նչ եք մտադիր աճեցնել այստեղ,— ասացի ես։— Ցորե՞ն։

— Ցորե՞ն,— գոչեց քեռիս։— Ցորենն ինչի՞ս է պետք։ Հացը հատը հինգ սենթ արժի։ Ես նռան ծառեր կտնկեմ։

— Իսկ ի՞նչ արժե նուռը։

— Նուռը,— ասաց քեռիս,— փաստորեն անծանոթ բան է այս կողմերում։

— Իսկ էլի ուրիշ բան տնկելո՞ւ եք։

— Տեսակ-տեսակ մրգատու ծառեր կտնկեմ։

— Դեղձի՞։

— Այո, մի տասը ակր։

— Իսկ ծիրա՞ն։

— Օ՜, ինչպես չէ,— ասաց քեռիս։— Միրանը սքանչելի պտուղ է։ Տեսքը՝ գեղեցիկ, համը՝ չքնաղ, կորիզն էլ հիանալի։ Մի քսան ակր ծիրան կտնկեմ։

— Հուսով եմ մեքսիկացիները ջրի գործը կարագացնեն,— ասացի ես։— Այս հողում ջուր կգտնվի՞ արդյոք։

— Իհարկե կգտնվի,— ասաց քեռիս։— Կարևորն սկսելն է։ Բանվորներին ես կասեմ, որ բոժոժավոր օձերից զգուշանան։ Նուռ,— կրկնեց նա։— Դեղձ։ Միրան։ Ուրիշ ի՞նչ կառաջարկեիր։

— Թո՞ւզ,— ասացի ես։

— Երեսուն ակր էլ թուզ,— ասաց քեռիս։

— Իսկ ի՞նչ կասեք թթի մասին։ Թթենին շատ սիրուն ծառ է,— ասացի ես։

— Թութ,— ասաց քեռիս և բավականությունից լեզուն ճլթացրեց։— Սիրուն ծառ է թթենին, ինչ խոսք։ Դեռ հայրենիքում ես շատ էի հավանում այդ ծառը։ Քանի՞ ակր կառաջարկես։

— Մի տասը ակր,— ասացի։

— Շատ լավ է,— ասաց նա։— Է՞լ ինչ։

— Ցիթենին էլ գեղեցիկ է։

— Օ, անշուշտ,— ասաց քեռիս,— ամենագեղեցիկ ծառերից է։ Տասը ակր էլ ձիթենի։ Ուրիշ ի՞նչ։

— Դե, խնձորենին հազիվ թե աճի այսպիսի հողում,— ասացի ես։

— Դժվար թե,— ասաց քեռիս։— Բայց մեկ է՝ խնձոր չեմ սիրում։

Նա նստեց ղեկին, և մենք չոր խոպանով շարժվեցինք դեպի նույնքան չոր ճանապարհ։ Մեքենան թեթևակի ոստոստում էր, մինչև հասանք ճանապարհը, որից հետո արդեն ավելի արագ գնացինք։

— Միայն թե,— ասաց քեռիս,— երբ տուն վերադառնանք՝ մերոնց ոչ մի խոսք այս ֆերմայի մասին։

— Շատ լավ, սըր,— ասացի ես։

«Ֆերմա՞»,— անցավ մտքովս։— Ի՞նչ ֆերմա»։

— Թող սա նրանց համար անակնկալ լինի,— ասաց քեռիս։— Տատիկիդ հո՞ գիտես։ Ավելի լավ է ես ամեն ինչ կանեմ ինչպես մտածել եմ, իսկ երբ արդյունք եղավ, մեր ամբողջ ընտանիքը կտանեմ ֆերմա ու թող նայեն զարմանան։

— Լավ, սըր,— ասացի ես։

— Ոչ ոքի՝ ոչ մի խոսք։

— Լավ, սըր։

Եվ ահա, ժամանակը եկավ, ու մեքսիկացիներն սկսեցին խոպանը մաքրել։ Երկու ամսում նրանք մաքրեցին տասը ակրի չափ մի տարա-

ծությունն։ Յոթ հոգի էին։ Աշխատում էին բահերով ու բրիչներով։ Թե ի՞նչ է գործի իմաստը՝ պատկերացում չունեին։ Տարօրինակ գործ էր, բայց դե դժգոհելու պատճառ չկար։ Փող հո՞ ստանում էին, մնացածն իրե՞նց ինչ։ Երկու եղբայր էին՝ իրենց զավակներով։ Մի անգամ ավագ եղբայր Դիեգոն ամենայն քաղաքավարությամբ հարց տվեց քեռուս, թե արդյոք իրենց արածի նպատակը ո՞րն է։

— Սենյոր,— ասաց նա,— ներեցեք, խնդրում եմ։ Մենք ինչի՞ համար ենք կոտորում այս կակտուսները։

— Ես այս հողը մշակելու եմ,— ասաց քեռիս։

Մյուս եղբայրը Դիեգոյին մեքսիկերեն հարցրեց, թե ինչ ասաց քեռիս, և Դիեգոն նրան բացատրեց։

Նրանք ավելորդ համարեցին քեռուս ասել, որ դրանից բան դուրս չի գա։ Պարզապես շարունակեցին կակտուսների ջարդը։

Սակայն կակտուսները նորից ու նորից գլուխ էին բարձրացնում։ Մաքրված տարածության վրա բուռն թափով աճում էին նոր փշփշոտ շիվեր։ Քեռիս մնացել էր զարմացած։

— Կակտուսներից ազատվելու համար խոր վար է հարկավոր,— ասացի ես։— Հարկավոր է ամբողջ հողամասը մի լավ հերկել։

Քեռիս խորհուրդ հարցրեց Ռայենից, որը գյուղատնտեսական գործիքներ էր վաճառում։ Ռայենի տված խորհուրդը եղավ. դիմել նորագույն միջոցների, այսինքն՝ թող հողամասով տրակտոր անցնի, մի տարվա գործը կանի մի օրում։

Եվ ահա քեռիս գնեց «Ջոն Դիր» արտադրության մի տրակտոր։ Փառավոր մեքենա էր։ Ռայենի ուղարկած մեխանիկը Դիեգոյին սովորեցրեց, թե ինչպես պետք է վարվել տրակտորի հետ, և հաջորդ օրը, երբ ես ու քեռիս եկանք հողամաս, հեռվում տեսանք մենավոր տրակտորը, որը հոնդում էր անապատի անսահման լռության մեջ։ Զարհուրելի տեսարան էր ու հոնդյունն էլ զարհուրելի։ Բայց քեռիս ուղղակի հիացած էր։

— Ահա քեզ առաջադիմություն,— ասում էր նա։— Ահա քեզ դարի նվաճումներ։ Մի տասը հազար տարի առաջ հարյուրավոր մարդիկ ամբողջ մի շաբաթ պիտի աշխատեին, այնինչ տրակտորը նրանց գործը մեկ օրում արեց։

— Տասը հազար տարի՞,— ասացի ես։— Իսկ ինչո՞ւ ոչ՝ երեկ։

— Ինչ որ է,— ասաց քեռիս։— Ժամանակակից հարմարավետությանը ոչինչ չի համեմատվի։

— Տրակտորի ի՞նչն է հարմարավետ,— ասացի ես։

— Հապա ինչպե՞ս, քո կարծիքով։ Մի՞թե քշողը նստած չէ։

— Կանգնած հո չէ՞ր քշելու,— ասացի։

— Եթե քեզ նստելու տեղ է հատկացված,— ասաց քեռիս,— դա ինքնըստինքյան հարմարություն է։ Սուլել կարո՞ղ ես։

— Կարող եմ,— ասացի։— Ի՞նչ եղանակ կուզեիք լսել։

— Եղանա՞կ,— ասաց քեռիս։— Ոչ մի եղանակ հարկավոր չէ։ Ուզում եմ, որ սուլես տրակտորավար մեքսիկացուն։

— Ինչո՞ւ։

— Հենց այնպես։ Թող իմանա, որ մենք այստեղ ենք և գոհ ենք իր աշխատանքից։ Նա երևի արդեն մի քանի ակր հերկած կլինի։

— Լավ, սրբ։

Ես երկու ձեռքերիս երկրորդ և երրորդ մատները բերանս դրի և ամբողջ ուժով սուլեցի։ Սուլոցն ուժեղ էր, բայց, երևում է, Դիեգոն չլսեց. նա բավական հեռու էր։ Քանի որ մենք ինքներս նրա կողմն էինք գնում, չհասկացա՝ քեռուս ինչի՞ն էր պետք, որ ես սուլեմ։

— Էլի,— ասաց նա։

Ես նորից սուլեցի, բայց Դիեգոն չլսեց։

— Ավելի ուժեղ,— ասաց քեռիս։

Այս անգամ ես լարումից քիչ մնաց պայթեի, իսկ քեռիս ականջները փակեց։ Մեքսիկացին սուլոցի ձայնը առավ, շրջեց մեքենան և սկսեց վարել մեր ուղղությամբ։

— Ձեր ուզածն ա՞յդ էր,— ասացի ես։

— Կարևոր չէ,— ասաց քեռիս։

Երկու բոպե չանցած՝ տրակտորը մոտեցավ մեզ։ Մեքսիկացին շատ գոհ էր։ Նա դեմքի ցեխն ու քրտինքը սրբեց և տրակտորից իջավ։

— Սենյոր,— ասաց նա,— փառավոր մեքենա է։

— Ուրախ եմ, որ հավանում եք,— ասաց քեռիս։

— Չէի՞ք ուզենա նստել, քշեմ,— ասաց մեքսիկացին։

Քեռիս չգիտեր, թե ինչ պատասխանի։ Նա ինձ նայեց։

— Առաջ դու փորձիր,— ասաց նա։

Դիեգոն բարձրացավ տրակտորի վրա և ինձ էլ օգնեց բարձրանալ։ Նա նստեց մետաղյա նստատեղին, իսկ ես կանգնեցի նրա հետևը և ուսերից բռնեցի։ Տրակտորը ցնցվեց, ոստնեց ու տեղից շարժվեց։ Նա գնում էր արագ և բարձր աղմկում։ Մեքսիկացին դաշտում մի մեծ շրջան գործեց և նորից տրակտորը քշեց քեռուս մոտ։ Ես ցած թռա։

— Լավ,— ասաց քեռիս մեքսիկացուն,— շարունակիր աշխատանքդ։

Դեռնի տակից ջուր հանել՝ քեռուս հաջողվեց շատ ամիսներ անց միայն։ Հողամասով մեկ բազմաթիվ հորեր փորվեցին, բայց ոչ մի տեղ

Ջուրը գետնի երես չէր դուրս գալիս։ Քեռիս, իհարկե, մեխանիկական պոմպեր էլ ուներ, բայց մեկ է՝ ջուրը չէր դուրս գալիս։ Տեխասից Ռոյ ազգանունով ջրային մասնագետ եկավ իր երկու կրտսեր եղբայրների հետ։ Նրանք հողը հետազոտեցին և քեռուս խոստացան, որ ջուր կհանեն։ Գործը հաջողվեց երեք ամսից, բայց ստացված ջուրը պղտոր էր և քիչ։ Մասնագետը քեռուս ասաց, որ ժամանակի ընթացքում կկարգավորվի, և վերադարձավ Տեխաս։

Այժմ արդեն հողի կեսը հերկված էր, ջուր էլ ունեինք, այնպես որ հասել էր ծառատնկման ժամանակը։

Մենք սկսեցինք նռենիներ տնկել։ Տնկիները ամենաբարձրորակն էին և շատ թանկ։ Տնկեցինք մի յոթ հարյուր հատ։ Ես ինքս մի հարյուր հատ տնկեցի, քեռիս էլ բավական տնկեց։ Այսպիսով, աշխարհից դուրս, կատարելապես վայրի անապատում ստացվեց մի քսան ակր տարածությամբ նռենիների այգի։ Դա ամենաթովիչ անհեթեթությունն էր, որ կարելի է երևակայել, և քեռիս հիացած էր դրանով։ Ցավն այն էր միայն, որ քեռուս փողերը հատնում էին։ Եվ ահա, փոխանակ գործը շարունակելու և ամբողջ վեց հարյուր ութսուն ակրում պտղատու ծառեր տնկելու, նա որոշեց իր բոլոր ջանքերը, ժամանակն ու փողը նվիրել մի միայն նռենիներին։

— Սա միայն սկզբնական շրջանում,— ասաց նա։— Մինչև որ մենք կսկսենք նուռ ծախել և մեր փողը հետ ստանալ։

— Հասկանալի է, սըր,— ասացի ես։

Ես հաստատ համոզված չէի, բայց ինձ թվում էր, թե գոնե առաջիկա երկու-երեք տարում մենք այդ մանրիկ ծառերից ոչ մի պիտանի պտուղ չենք ստանա, այնուամենայնիվ ոչինչ չասացի։

Մեքսիկացի բանվորներին քեռիս արձակեց, և ես ու ինքը տնտեսությունը մեր ձեռքն առանք։ Մենք ունեինք մեր տրակտորն ու հողը, ուստի ժամանակ առ ժամանակ գնում էինք հողամաս, տրակտորը քշում, կուլտուսներն արմատախիլ անում և նռենիների արանքները փխրեցնում։ Այսպես շարունակվեց երեք տարի։

— Շուտով արդեն,— ասում էր քեռիս,— այս անապատի տեղը դու կտեսնես աշխարհի ամենասքանչելի այգին։

Ջրի դրությունը, սակայն, չէր բարելավվում։ Երբեմն հանկարծ ուժեղ ու առատ շիթ էր խփում, և քեռիս անչափ ուրախանում էր, բայց մյուս օրը ջուրը նորից պղտորվում էր ու բարակում։ Նռենիները քաջաբար պայքարում էին կյանքի համար, բայց դե եղած ջուրը բավարար չէր, որ պտուղ տան։

Նրանք ծաղկեցին միայն չորրորդ տարին։ Քեռուս համար դա մի

մեծ տոն էր։ Ուրախությունից խենթացել էր, երբ ծառերը ծաղկած տեսավ։

Բայց այդ ծաղիկներից էլ մի խելքը գլխին բան դուրս չեկավ։ Պարզապես գեղեցիկ ծաղիկներ էին։ Կարմրին էին տալիս միայնակ՝ անապատի չոր գրկում։

Այդ տարվա բերքը եղավ ընդամենը եռեք հատ նուռ, այն էլ մանրիկ։

Մեկը ես կերա, մյուսը քեռիս, իսկ երրորդը դրինք քեռուս աշխատասենյակում՝ ամենաաչքի ընկնող տեղը։

Հաջորդ ամռանը լրացավ իմ տասնհինգ տարին։ Այդ ժամանակամիջոցում ինձ հետ շատ ու շատ զարմանահրաշ բաներ պատահեցին։ Այսպես, ես շատ լավ-լավ գրքեր կարդացի և թոյով էլ քեռուս չափ դարձա։ Ֆերման դեռ էլի մնում էր մեր գաղտնիքը։ Քեռուս վրա այն ահագին փող էր նստում, բայց նա էլի հույսը չէր կտրում, որ շուտով կսկսի նուռ ծախել, կվերադարձնի իր փողերը և կիրականացնի անապատում այգի ստեղծելու ծրագիրը։

Ծառերը լավ չէին աճում։ Նրանք մի քիչ մեծացել էին, բայց դա հազիվ էր նկատվում։ Շատերն էլ չորացել ու փչացել էին։

— Բնական բան է,— ասում էր քեռիս։— Ակրին քսան ծառը բնական կորուստ է։ Բայց մենք առայժմ նորերը չենք տնկի։ Դա ապագայի գործ է։

Այս բոլորից զատ նա դեռ հողի համար էլ փող էր վճարում։

Հետևյալ տարին նա իր այգուց մոտ երկու հարյուր նուռ ստացավ։ Բերքը հավաքեցինք երկուսով։ Նոները բավական սրտաճմլիկ տեսք ունեին։ Դրանք դասավորեցինք գեղեցիկ արկղերի մեջ, և քեռիս ապրանքն ուղարկեց Չիկագո, մեծավաճառ առևտրական մի տուն։ Ընդամենը տասնմեկ արկղ էր։

Մի ամբողջ ամիս մենք այդ առևտրական տանից ոչ մի պատասխան չստացանք, և ահա մի երեկո քեռիս միջքաղաքային խոսակցություն պատվիրեց։ Մեծավաճառ առևտրական դ'Ագոստինոն քեռուս ասաց, որ նուռը վերցնող չկա։

— Արկղին որքա՞ն եք պահանջում,— լսափողի մեջ գոռում էր քեռիս։

— Մեկ դոլար,— գոռում էր դ'Ագոստինոն։

— Դա քիչ է,— գոռում էր քեռիս։— Ես ամեն մի արկղին հինգ դոլար եմ ուզում, ոչ մի սենթ պակաս։

— Արկղը մի դոլարով էլ չեն վերցնում,— գոռում էր դ'Ագոստինոն։

— Ինչո՞ւ չեն վերցնում,— գոռում էր քեռիս։

— Մարդիկ չեն իմանում, թե դա ինչ է,— գոռում էր դ'Ագոստինոն։

— Հապա դո՞ւք էլ ինչ գործ անող եք այդ դեպքում,— գոռում էր քեռիս։— Դա նուռ է, նուռ։ Ես ամեն մի արկղին հինգ դոլար եմ ուզում։

— Անհնար է ծախել,— գոռում էր առևտրականը։— Ես ինքս էլ մի հատ նուռ կերա և չեմ կարող ասել, թե դա մի երևելի բան է։

— Դուք գժվե՛լ եք,— գոռում էր քեռիս։— Աշխարհի երեսին նռան պես լավ պտուղ չկա։ Արկղին հինգ դոլար՝ դա համարյա ձրի է։

— Հիմա ի՞նչ կհրամայեք անել,— գոռում էր դ'Ագոստինոն։— Ես սրանք ծախել չեմ կարող։ Ինձ պետք չեն։

— Հասկացա,— ֆսսացրեց քեռիս։— Ետ ուղարկեցեք շտապ։

Այս խոսակցությունը քեռուս վրա տասնյոթ դոլար նստեց։

Եվ այսպես, տասնմեկ արկղերը ետ եկան։

Համարյա բոլոր նռները ես ու քեռիս կերանք։

Հետևյալ տարին քեռիս այլևս հողի համար վճարել չկարողացավ։ Նա թղթերը վերադարձրեց այն մարդուն, որը ծախել էր նրան հողամասը։ Այդ ժամանակ ես դրասենյակում էի։

— Միստր Գրիֆիտ,— ասաց քեռիս,— ես ստիպված եմ ձեզ վերադարձնել ձեր սեփականությունը, բայց ուզում եմ խնդրել, որ մի զիջողություն անեք։ Քսան ակր ես նռենիներ եմ տնկել և շատ երախտապարտ կլինեի ձեզ, եթե թույլ տայիք ինձ խնամել այդ ծառերը։

— Խնամե՞լ,— ասաց միստր Գրիֆիտը։— Ինչի՞ համար։

Քեռիս փորձեց բացատրել նրան, բայց չկարողացավ։ Շատ դժվար է մի բան մտցնել մարդու գլուխը, եթե նա ձեզ չի կարեկցում։

Եվ ահա քեռիս կորցրեց և հողը, և ծառերը։

Մի երեք տարի անց ես ու քեռիս մեքենայով գնացինք այնտեղ և տեսանք մեր նռենիները։ Բոլոր ծառերը չորացել էին։ Հողը նորից ծածկվել էր կակտուսներով ու փշփշոտ թփուտով։ Եթե չհաշվենք մանրիկ չորացած նռենիները։ Այնտեղ ամեն ինչ ճիշտ և ճիշտ այնպես էր, ինչպես եղել էր միշտ, սկսած աշխարհի ստեղծվելու առաջին օրերից։

Մենք անցանք նռենիների միջով և ետ դարձանք դեպի մեքենան։

Մեքենա նստեցինք ու վերադարձանք քաղաք։

Իրար ոչ մի խոսք չասացինք, որովհետև ասելու շատ ու շատ բան ունեինք, բայց դրա համար բառեր չկային։

Երբ ես երրորդ դասարանի աշակերտ էի, անվճար դպրոցների խնամատար խորհուրդը նստել ու որոշել էր տեսչական այց կատարել Էմերսոնի անվան մեր դպրոցը։ Չեմ հիշում, ես լրացրել էի իմ ութ տարին ու իննի՞ մեջ էի, թե՞ ինը լրացրել ու տասի մեջ էի, բայց լավ հիշում եմ, որ շատ բարետես ու սիրալիր երիտասարդ էի։

Այդ տարիներին խնամատար խորհուրդը առանձնապես չէր մտահոգվում փոքր քաղաքներում սովորող երեխաների մասին, և եթե այդ երեխաների մեջ բթամիտներ կամ տհասներ էին լինում, խնամատար խորհուրդը մտածում էր, որ փոքր քաղաքի համար դա բնական երևույթ է։ Մենք թողնված էինք աստծո խնամքին, և երբեմն մեզ այցելում էին երիցական եկեղեցու քահանաները միայն, կանգնում մեր մանկական դեմքերի ծովի առաջ, ասում.

— Հանձինս ձեզ՝ մենք տեսնում ենք Ամերիկայի ապագա առաջնորդներին, արդյունաբերության գլխավորներին, ապագա պրեզիդենտներին և, կարելի է ասել, ապագա բանաստեղծներին։

Նման ճառերը ինձ միշտ ուրախացնում էին, որովհետև իսկապես ուրախալի էր մաքրասիրտ ու բթամիտ էլ Վիտորեին, Դիք Բասմաժին կամ Ֆրենկի Ազիվեդոյին պատկերացնել արդյունաբերական Ամերիկայի գեներալների դերում։

Սրանք ուրախ, առողջ ու հիմար տղերք էին, լավ բեյսբոլ էին խաղում և բոլորովին չգիտեին՝ որ իրենք Ամերիկայի ապագա առաջնորդներն են. եթե իրենց հարցներիր, թե ապագայում ինչ են դառնալու, ուսները կթոթվեին ու կասեին. «Ես շա՞տ գիտեմ»։

Պաշտոնական տեղեկագրերը մեր թաղամասի ժողովրդի մասին վկայում էին, թե մեր գլխի ձևը՝ սխալ, կուրծքը՝ ներս ընկած, ողնաշարը՝ կոր ու ձայնը խուլ է, մենք ալարկոտ ու դանդաղոշ ենք և այսպիսի դարձյալ վեց կամ յոթ արատի միացություն։

Մեր ուսուցիչների տպավորությամբ՝ պատկերը բոլորովին այլ էր. արվարձանաբնակ աշակերտներիս գլխի ձևը անբասիր, կուրծքը՝ բարձր, կազմվածքը՝ դասականորեն մարզական ու ձայնը զրնգուն էր, և խանգարող միակ արատը մեր վայրենի եռանդն էր, որը ծախսելու համար մենք միշտ առիթ էինք գտնում։ Պաշտոնական տեղեկագրերն ու իրականությունը այսպիսով հակադրվում էին, նրանցից մեկնումեկը սխալ էր, և խնամատար խորհուրդը իր յոթժամյա նիստում որոշեց այց տալ մեր դպրոցին և ստուգել իրականությունը։

Եկավ, քննեց, զննեց ու հաստատեց՝ որ պաշտոնական տեղեկա-

գրերը անվճար դպրոցներում գրել-կարդալու վարժեցվող աշակերտներիս վերաբերյալ հիմնովին սխալվում են։ Խնամատար խորհրդի այդ այցին էր ահա, որ ես համակվեցի կատաղի ուրախությամբ՝ առաջին անգամ տեղեկանալով, որ ես ապագա բանաստեղծ եմ։

Դպրոցական օրերից այդ մի օրը հիշողությանս մեջ ահա առանձնանում է. վեց հարյուր պետական ապագա պաշտոնյաների մեջ ահա կանգնած եմ քննող հանձնախմբի առջև՝ հանդիսությունների սրահում, և ծեր ուսուցչուհի օրիորդ Օգիլվիի ջղային սոպրանոն գեղգեղում է իմ անունը։ Ուրեմն իմ հերթն է՝ բարձրանալ տասնյոթ աստիճան, բեմի կենտրոնում կանգնել, մինչև գոտկատեղը մերկանալ, շնչել-արտաշնչել և թույլ տալ, որ հասակս ու կշիռս չափեն։

Մի վայրկյան ես ինձ կորցրի, բայց հանկարծ ներսս ինձ լավագույն կողմերով դրսևորելու ցանկություն աճեց, որը ես իրականացրի տեղնուտեղը՝ ի սարսափ խնամատար խորհրդի ու բժշկական հանձնախմբի, որ պատկառելի երեք բժիշկ ու մի կես դյուժին բուժքույրեր էին, և ի զարմանք արդյունաբերական Ամերիկայի վեց հարյուր ապագա գեներալների։

Տասնյոթ աստիճանը մեկ առ մեկ բարձրանալու փոխարեն ես բռնեցի ու մի հրաշալի ցատկով հայտնվեցի բեմի կենտրոնում։

Հիշում եմ, որ հարգելի օրիորդ Օգիլվին հակվեց գլխավոր տեսուչ միստր Ռիքենբեքերի կողմը և շշնջաց. «Արամ Ղարաղլանյանն է. սա, կարելի է ասել, մեր ապագա բանաստեղծն է»։

Միստր Ռիքենբեքերի հայացքը վազեց իմ վրայով, ապա նա շշնջաց.

— Երևում է, բայց ո՞վ է նրան այդպես չարացրել։

— Հասարակությունը,— ասաց ծեր ուսուցչուհի օրիորդ Օգիլվին։

— Հասարակությունն ինձ էլ չի գոհացնում, բայց ամենամեծ ցանկության դեպքում անգամ՝ ես չէի կարողանա այդպես վերև թռչել։ Դե լավ, մոռանանք այդ մասին։

Ես նետեցի վերնաշապիկս և մինչև գոտկատեղս մերկ, լայն կուրծքս ամբողջ այդ հանձնախմբից միայն աղվամազով ծածկած՝ կանգնեցի այդքան հայացքի առաջ։

— Տեսնո՞ւմ եք,— ասաց օրիորդ Օգիլվին,— իսկական բանաստեղծ։

— Արտաշնչիր,— ասաց միստր Ռիքենբեքերը։

— Ինչքա՞ն,— հարցրի ես։

— Ինչքան կարողանաս,— ասաց միստր Ռիքենբեքերը։

Ես սկսեցի արտաշնչել։ Անցավ չորս րոպե՝ ես դեռ արտաշնչում էի։

Հանձնաժողովի անդամները, հասկանալի է, շփոթված էին։ Այդ ընթացքում նրանք նույնիսկ մի թռուցիկ խորհրդակցություն գումարեցին, որի ժամանակ ես արտաշնչում էի։ Երկրոպեանոց քննարկումից հետո նրանք որոշեցին խնդրել ինձ՝ դադարեցնել արտաշնչելը։ Հարգելի ուսուցչուհին նրանց հասկացրել էր, որ եթե չդադարեցնեն՝ ես կարտաշնչեմ թերևս մինչև երեկո։

— Այսօր այդքանը բավական է,— ասաց միստր Ռիքենբեքերը։

— Այսքան քի՞չ,— ասացի,— հազիվ սկսել էի։

— Հիմա՝ շնչիր։

— Ինչքա՞ն։

— Տե՛ր աստված,— գոչեց միստր Ռիքենբեքերը։

— Լավ կլիներ պատասխանեիք,— միջամտեց օրիորդ Օգիլվին,— թե չէ ամբողջ օրը կշնչի։

— Դե, մի երեք-չորս րոպե,— ասաց միստր Ռիքենբեքերը։

Ես շնչեցի մաքուր չորս րոպե, որից հետո ինձ խնդրեցին հագնվել ու գնալ։

— Բավարարվա՞ծ եք,— հարցրի ես հանձնաժողովին,— ամեն ինչ կարգի՞ն է։

— Խոսք չկա,— ասաց միստր Ռիքենբեքերը։— Գնացեք։

Մեր դպրոցների խնամատար խորհուրդը այդ օրվանից վճռեց ձեռ քաշել բոլոր տեսակի բժշկական ստուգումներից. բանը քանի դեռ ապագա արդյունաբերողներին ու Ամերիկայի առաջնորդներին էր վերաբերում՝ ամեն ինչ կարգին էր, բայց հենց ապագա բանաստեղծներին էին հասնում՝ բոլորը ցնցվում ու քննարկման նյութը փոխում էին։

ՀԻՍՈՒՆ ՅԱՐԴԱՆՈՑ ՎԱՋՔԸ

Ես տասներկու տարեկան էի այն տարին, երբ Նյու Յորքից նամակ եկավ, որից հետո որոշեցի դառնալ մեր շրջակայքի ամենաուժեղ մարդը։ Այդ նամակը իմ բարեկամ Լայոնել Ստրոնգֆորտից էր։ Դրանից ոչ շատ առաջ ես կտրել էի «Խիզախ ծովագնացներ» ամսագրի կտրոնը, ստորագրել, դրել ծրարի մեջ ու փոստով ուղարկել միստր Ստրոնգֆորտին։ Նա անմիջապես պատասխանեց ինձ։ Անկեղծ հիացմունքի հասնող խանդավառությամբ նա գրում էր, որ իբր ես, անկասկած, բացառիկ խելքի տեր եմ, որ իմ մեջ հսկայական հնարավորություններ կան և, ի տարբերություն սովորական, միջակ մարդկանց,

պարապ դատարկաբանների, ժամանակին ինձնից նշանավոր մարդ դուրս կգա։

Իմ մասին ունեցած նրա կարծիքը շատ էր նման իմ սեփական կարծիքին։ Ինձ համար խիստ հաճելի էր իմ մտքերի այդպիսի պերճախոս հաստատումն ստանալ, հատկապես Նյու Յորքից, այն էլ մի մարդուց, որն աշխարհում ամենալայն կրծքավանդակն ուներ։

Նամակին կցված էին միստր Ստրոնգֆորտի մի քանի լուսանկարներ, որոնցում նա գրեթե մերկ էր, եթե չհաշվենք մի կտոր ընձաղուծի մորթին։ Դա մի հաղթանդամ տղամարդ էր, մինչդեռ, իր ասելով, մի ժամանակ թուլակազմի մեկն էր եղել։ Նա ոտից-գլուխ պատված էր պիրկ մկաններով և, հավանորեն, կարող էր բարձրացնել ու շուռ տալ 1920 թվականի «Ֆորդ» տիպի ավտոմեքենան։

Այդպիսի բարեկամ ունենալը պատիվ էր։

Բայց դժբախտությունն այն էր, որ փողս չէր բավականացնում։ Չեմ հիշում, թե որքան ունեի մեր ծանոթության սկզբում, բայց դա մի գումար էր, որի մասին բոլորովին չարժեր խոսել։ Վառվելով միստր Ստրոնգֆորտին իր հիացմունքի դիմաց շնորհակալություն հայտնելու ցանկությամբ, ես միաժամանակ չգիտեի, թե ինչպես բացատրեմ իմ դրամազրկությունը, որպեսզի մեկն նրա աչքում պարապ դատարկաբան չերևամ։

Ուստի, օրեցօր հետաձգելով իմ պատասխանը, խոսքեր գտնելու համար, որոնք չթունավորեին մեր բարեկամությունը և ինձ ոչնչությունների շարքը չդասեին, որոշեցի խորհրդակցել իմ քեռի Գրիգորի հետ, որն այդ ժամանակ ուսումնասիրում էր արևելյան փիլիսոփայությունը։ Նա ապշեց իմ արտակարգ պատվամոլությունից, բայց լիովին բարեհաճ վերաբերվեց ինձ։

Նա ասաց, որ համաձայն յոգերի ուսմունքի զորության գաղտնիքն այն է, որպեսզի ինքդ քո մեջ արձակես խորհրդավոր կենսական ուժերը, որոնք ամփոփված են յուրաքանչյուր մարդու ներսում։

— Այդ զորությունը,— ասաց նա զարհուրելի անգլերենով, որով սիրում էր պարծենալ ինձ հետ խոսելիս,— աստծուց է։ Ասում եմ քեզ, Արամ, այդ զարմանալի է։

Ես ասացի, որ ուզում եմ մարզվել, ուժեղ մարդ դառնալ, բայց չեմ կարող ձեռք զարկել դրան, մինչև միստր Ստրոնգֆորտին փող չուղարկեմ։

— Փո՞ղ,— ասաց քեռիս արհամարհանքով։— Ասում եմ քեզ, Արամ, փողը ոչինչ է։ Աստծուն կաշառել չես կարող։

Ցնցված չէր կարելի ասել, թե քեռի Գրիգորը թուլակազմ էր, բայց,

իհարկե, նա այնպիսի ուժի տեր չէր, ինչպես Լայոնել Ստրոնգֆորտը։ Թե որ նրանք ֆրանսիական ըմբշամարտի բռնվեին, ամենայն հավանականությամբ միստր Ստրոնգֆորտը կստիպեր քեռուս անձնատուր լինել, կամ էլ տակով կաներ, կսպաներ նրան, կիրառելով որևէ կիսանելսոն կամ գլխակոփում։ Սակայն մյուս կողմից ինչ իմանաս։ Չնայած քեռիս բոլորովին էլ այնպես հաղթանդամ չէր, ինչպես միստր Ստրոնգֆորտը, փոխարենը միստր Ստրոնգֆորտն էլ քեռուս պես կատաղի եռանդ չուներ։ Համենայն դեպս, քեռուս հետ ըմբշամարտելիս միստր Ստրոնգֆորտը հավանորեն բավականաչափ անախորժություններ կունենար, եթե նկատի ունենանք այն խորհրդավոր ուժերը, որոնք մշտապես արձակվում էին քեռուս ներսից, այնպես որ հաճախ նրա կայծակնային հայացքը ստիպում էր որևէ հաղթանդամ մարդու նահանջել կամ խոսակցության կեսին ձայնը կտրել։

Փողի առթիվ միստր Ստրոնգֆորտի հետ բացատրության խոսքեր գտնելուց շատ առաջ ես նրանից երկրորդ նամակն ստացա։ Դա նույնքան սրտագին էր, որքան առաջինը, թերևս նույնիսկ մի փոքր ավելի սրտագին։ Ես հիացած էի և սկսեցի եռանդով արձակել իմ խորհրդավոր կենսական ուժերը. հոլի պես պտտվում էի, գլուխկոնծի տալիս, բարձրանում ծառերը, փորձում շուռ տալ 1920 թվականի ֆորդը՝, ըմբշամարտի հրավիրում բոլոր ցանկացողներին, մի խոսքով, ամեն կերպ գրգռում ու անհանգստացնում էի ծնողներիս ու մեր հարևաններին։

Միստր Ստրոնգֆորտը ոչ միայն չէր նեղացել ինձանից, այլ նույնիսկ իջեցրել էր ուսման վարձը։ Սակայն պահանջվող գումարը դեռևս գերազանցում էր իմ հնարավորությունները։ Ես ամեն օր թերթ էի վաճառում, բայց այդ փողը ծախսվում էր հացի և այլ ուտելիքների վրա։ Մի ժամանակ ես վեր էի կենում ծեգին ու թափառում քաղաքում՝ փողով լի դրամապանակ գտնելու հույսով։ Այդպիսի թափառումների մի շաբաթվա ընթացքում գտա մի հինգսենթանոց ու երկու պեննի։ Պատահեց նաև մի կանացի պայուսակ՝ ինչ-որ գարշահոտ շպարանյութով, բայց առանց փողի, և մի թերթ թղթով, որի վրա անվարժ ձեռքով գրված էր. «Սթիվ Հերթվիգ, Վենտուրա ավենյու, տուն 3764»։

Երկրորդ նամակից երեք օր անց երրորդ ուղերձն ստացա միստր Ստրոնգֆորտից։ Մեր նամակագրությունը դառնում էր միակողմանի։ Իսկապես, ախր ես բոլորովին չէի գրում նրան։ Միստր Ստրոնգֆորտի նամակներն անդիմադրելի էին, բայց առանց փողի դժվար էր պատասխանել դրանց։ Ուղղակի ասենք, բան չկար պատասխանելու։

Առաջին նամակը եկավ դեռևս ձմռանը, և հենց այդ ժամանակ էր, որ ես որոշեցի դառնալ մեր շրջակայքի ամենաուժեղ մարդը։ Իսկ հե-

տագայում, թերևս, աշխարհի ամենաուժեղ մարդկանցից մեկը։ Ես ունեի դրան հասնելու իմ սեփական մտքերը։ Բացի դրանից, ինձ օգնեց Նյույորքցի միստր Ստրոնգֆորտի ջերմ բարեկամությունն ու բարձր հովանավորությունը, իսկ տանը՝ քեռի Գրիգորի խորհրդավոր ու կատաղի խնամակալությունը։

Միստր Ստրոնգֆորտի նամակները շարունակում էին ստացվել երկու-երեք օրը մեկ, ամբողջ ձմռան ընթացքում և հետո գարնանը։ Հիշում եմ, այն օրը, երբ ծիրանները կարգին հասել էին գողանալու համար, ես Նյու Յորքի իմ բարեկամից ստացա նրա ամենահմայիչ նամակներից մեկը։ Դա նոր կյանքի, գարնան, հոգեկան վերածնունդի, թարմ ուժերի, նոր վճռականության և շատ այլ բաների մի հիմն էր։ Դա իսկապես որ հոյակապ մի ուղերձ էր, հավանորեն նույնքան գեղեցիկ, որքան «Ուղերձ հռոմեացիներին» կամ էլի դրա նման մի բան։ Դա ներծծված էր լեգենդի վսեմությամբ, տիեզերքի շնչով, սեփական ուժի հպարտ զգացումով, որն այնքան հատուկ է բիբլիական ժամանակներին։ Այդ զմայլեցուցիչ հիմնի վերջին պարբերության մեջ, վերապահումներով ու ներողություններով, հիշատակվում էր փողի արգահատելի հարցը։ Նախկինի համեմատությամբ գումարն իջեցված էր մի քանի անգամ, իսկ միստր Ստրոնգֆորտի ծրագրերում, որոնք վերաբերում էին իմ՝ լիակատար ոչնչությունից ահավոր ուժի ու կանանց աչքում բացառիկ գրավչության հսկայի վերափոխվելուն, երևան էր եկել ինչ-որ նորություն։ Միստր Ստրոնգֆորտի ասելով, նա մտադիր էր սովորեցնել ինձ՝ «մի հարվածով» կամ դրա նման մի բան։ Համենայն դեպս, նա պատրաստ էր երեք դոլարով, մի ծրարի մեջ դրած՝ իր բոլոր գաղտնիքներն ուղարկել ինձ, որից հետո մնացյալը իմ և պատմության գործն էր։

Ես այդ բանը քննարկեցի քեռի Գրիգորի հետ, որն այդ ժամանակ հասել էր պասի, ինքնահայեցողության, ամենօրյա բազմաժամ ոտքով քայլելու և դողդողալու շրջանին։ Մենք ամբողջ ձմեռ, շաբաթը երկու-երեք անգամ, խոսում էինք, և նա իր աննման կոտրատված անգլերենով հայտնում էր ինձ այն բոլոր գաղտնիքները, որ սովորել էր յոգերից։

— Ասում եմ քեզ, Արամ, ես ամեն ինչ կարող եմ։ Դա զարմանալի է։

Ես հավատում էի նրան, չնայած նա բավական կորցրել էր իր քաշից, քնից զրկվել, իսկ աչքերը մի տեսակ տարօրինակ փայլ էին ստացել։ Այդ ձմեռ նա խիստ արհամարհանքով էր նայում աշխարհին և խորին կարեկցանք տածում հիանալի անխոս կենդանիների հանդեպ, որոնց մարդիկ տանջում են, սպանում, ուտում, ընտելացնում և սովորեցնում ամեն տեսակ օյիններ թափել։

— Արամ,— ասում էր նա,— հանցանք է՝ ստիպել ձիերին աշխա-

տել։ Եվ կովերին մորթել։ Եվ սովորեցնել շներին ցատկել, իսկ կապիկներին՝ ծխամորճ ծխել։

Ես նրան պատմեցի միստր Ստրոնգֆորտի վերջին նամակի մասին։

— Փո՞ղ,— բացականչեց նա։— Նրանք շարունակ փող են ուզում։ Այդ ինձ դուր չի գալիս։

Քեռիս իր ողջ խորհրդավոր թմրությունը ձեռք էր բերել բոլորովին ձրի հանրային գրադարանի աստվածաբանական փիլիսոփայական-աստղագուշական գիր-գրականության բաժնում։ Սակայն նա ինքը հավատում էր, որ այն ուղղակի աստծուց է ստացել։ Առաջ, նախքան յոգերին ձեռք զարկելը, մի հիանալի մարդ էր, զվարճասեր, բրնձաղու սիրահար, բայց երբ շնորհ իջավ վրան, խմելը թողեց։ Ասում էր, որ այժմ շատ ավելի հիանալի խմիչք է ճաշակում, քան բրնձաղին կամ մի ուրիշ բան։

— Ի՞նչն է այդ,— հարցրի ես։

— Արամ,— ասաց նա,— դա իմաստությունն է։

Այսպես թե այնպես, նա միստր Ստրոնգֆորտին բարձր չէր դասում և համարում էր խարդախի մեկը։

— Դե չէ, կարգին մարդ է,— ասացի ես։

Բայց քեռիս կատաղեց, սկսեց ազատ արձակել իր խորհրդավոր կենսական ուժերը և ասաց.

— Ես նրա գլուխը կջարդեմ, որպեսզի պստիկներիդ չխաբի։

— Նա չի խաբում,— ասացի ես։— Նա խոստանում է երեք դոլարով իր բոլոր գաղտնիքները հայտնել ինձ։

— Ասում եմ քեզ, Արամ,— ասաց քեռի Գրիգորը,— նա ոչ մի գաղտնիք էլ չգիտի։ Խաբեբայի մեկն է։

— Չգիտեմ,— ասացի ես։— Դա պետք է ստուգել։

— Լավ,— ասաց քեռի Գրիգորը։— Դա հանցագործություն է։ Բայց ես քեզ երեք դոլար կտամ։

Քեռի Գրիգորը տվեց ինձ այդ երեք դոլարը, որը ես ուղարկեցի միստր Ստրոնգֆորտին։ Եվ ահա Նյու Յորքից եկավ մի ծրար, լցված միստր Ստրոնգֆորտի գաղտնիքներով։ Դրանք տարօրինակ կերպով հասարակ էին։ Այդ բոլորը ես այնպես էլ գիտեի, միայն թե ծուլանում էի կատարել։ Ամբողջ գաղտնիքն այն էր, որ շուտ վեր կենաս և մի կես ժամ զանազան ակրոբատիկ շարժումներ կատարես, որոնք պատկերված էին նկարների մեջ։ Հետո այն էր, որ հարկավոր է կուշտ ջուր խմել, ավելի շատ լինել ազատ օդում, ուտել թարմ, սննդարար մթերքներ և այդպես շարունակել, մինչև որ հսկա դառնաս։

Ես թեթև հիասթափություն ապրեցի, որի մասին և մի կարճ, քա-

դաքավարի նամակով հայտնեցի միստր Ստրոնգֆորտին։ Նա ինձ չպատասխանեց, և այդ օրվանից ես նրանից ոչ մի լուր չունեմ։ Այդ ընթացքում ես հետևում էի նրա խորհուրդներին և օրեցօր ավելի ու ավելի ուժեղանում։ Ասելով «այդ ընթացքում», նկատի ունեմ, որ ուղիղ չորս օր կատարում էի նրա խորհուրդները։ Հինգերորդ օրը որոշեցի քնել, փոխանակ ծեգին վեր թռչելու, իրար խառնելու ողջ տունը և տատիկիս բարկացնելու։ Տատիկս կիսախավարում արթնանում էր ու բղավում, որ ինձանից երբեք առևտրական դուրս չի գա։ Հետո նորից էր ննջում, արթնանում ու բղավում, որ մի թագավոր երեք տղա ուներ. ավագը խելոք էր հոր նման, միջնեկը խելքը թոցրել էր աղջիկների վրա, իսկ կրտսերը հավի պես անխելք էր։ Դրանից հետո նա անկողնուց վեր էր կենում և, մինչ ես իմ վարժությունները կանեի, հեքիաթը բարձրաձայն պատմում էր մինչև վերջ։

*

Հեքիաթը սովորաբար կոչ էր անում ինձ խելամիտ լինել և ամեն օր մութուլուսին չարթնացնել տատիկին։ Սովորաբար միշտ այդպիսին էր լինում խրատականը, չնայած հեքիաթը կարող էր լինել թագավորի երեք տղաների, կամ իրար նման երեք հարուստ ու ագահ եղբայրների, կամ երեք քույրերի, կամ երեք հանելուկների, կամ երեք ճանապարհների, կամ էլ դրանց նման բաների մասին։

Սակայն այդ ամենը ոնց որ քամուն ասած, որովհետև քունը գըլխիս, ես իմ ակրոբատիկ վարժություններից ավելի մեծ բավականություն չէի ստանում, քան ինքը՝ տատիկս։ Քիչ առ քիչ ես հասկացա, որ այդ ամենը պարզապես անմտություն է, և քեռի Գրիգորը միանգամայն իրավացի էր միստր Ստրոնգֆորտին տված իր գնահատականում։

Այնպես որ ես մի կողմ դրի միստր Ստրոնգֆորտի սիստեմը և անցա իմ սեփական սիստեմին, որն ընդհանուր գծերով հանգում էր հետևյալին. իզուր չափից դուրս չջանալ և դառնալ շրջակայքի ամենաուժեղ մարդը առանց ամեն տեսակ հուզմունքների ու վարժությունների։ Այդպես էլ վարվեցի հետագայում։

Այդ գարնան Լոնգֆելլոյի անվան դպրոցը հայտարարեց սպորտային մրցություններ՝ դպրոցը դպրոցի դեմ։

«Ահա թե ես որտեղ կարող եմ ինձ ցույց տալ»,— մտածեցի ես։ Համոզված էի, որ սպորտի բոլոր ձևերում առաջին տեղերը ես կգրավեմ։

Այսպես թե այնպես, թեթև ատլետիկայի մասին մշտական մտածմունքներս վերածվեցին անհանգիստ սպասման, որ տևում էր օր ու գիշեր. մրցումներից դեռ շատ առաջ ես արդեն հարյուրավոր ու հազարավոր անդամներ կատարել էի հիսուն յարդանոց վազք, թռիչք երկարու-

թյուն՝ թափ առած և տեղից, թռիչք բարձրություն, բոլոր դեպքերում հաղթելով մրցակիցներիս։

Իսկական յոգին արժանի ներքին գերադույն այդ լարվածությունը մրցումների օրը փոխարկվեց տենդի։

Վերջապես հասավ այն րոպեն, երբ ես և երեք ուրիշ ատլետներ, որոնցից մեկը հույն էր, պետք է դուրս գայինք մեկնարկ, պատրաստվեինք ու վազեինք։ Եվ ահա ես, աչքերս կկոցելով, առաջ նետվեցի այնպիսի արագությամբ, որպիսին ատլետիկայի պատմության մեջ տեսնված չէր։

Ինձ թվում էր, թե դեռ երբեք որևէ մարդ այդպիսի արագությամբ չէր վազել։ Երևակայությանս մեջ ես արդեն հիսուն անգամ վազել անցել էի այդ հիսուն յարդը, նախքան աչքերս կբանայի համոզվելու համար, թե որքան ետ եմ թողել մնացած վազողներին։ Այն, ինչ տեսա, հիրավի ապշեցրեց ինձ։

Երեք տղաներն էլ չորս յարդով առաջ էին անցել ինձանից և արագորեն հեռանում էին։

Դա ինձ համար անըմբռնելի էր, անհավատալի, բայց այդպես էր։ Երևի տեղի էր ունեցել ինչ-որ սխալ։ Բայց ոչ, ահա նրանք իմ առջևում են և գնալով ավելի են հեռանում։

Ինչ արած, դա նշանակում է միայն, որ ես պետք է աչքերս բաց առաջ անցնեմ նրանցից ու շահեմ վազքը։ Այդպես էլ կանեմ։ Սակայն, անհավատալի բան, չնայած իմ բոլոր ջանքերին, նրանք շարունակում էին ավելի ու ավելի հեռանալ։ Ես կատաղեցի և, որոշելով այդ անամոթներին իրենց տեղը ցույց տալ, սկսեցի ազատ արձակել խորհրդավոր կենսական ուժերի այն ողջ պաշարը, որ ունեի իմ տրամադրության տակ։ Բայց նույնիսկ դա ոչ մի քայլով ինձ չմոտեցրեց նրանց, և ես հասկացա, որ անհայտ մի ձևով ինձ խաբել են։ Թող այդպես լինի, որոշեցի ես, մեկ է, կշահեմ ու ինձ խաբողներին ամոթահար կանեմ։ Եվ մի անգամ էլ իմ ողջ կենսական ուժերը ներդրեցի վազքի մեջ։ Այնքան էլ շատ տարածություն չէր մնացել վազելու, բայց գիտեի, որ դեռ կարող եմ բոլորին անցնել։

Շուտով համոզվեցի, որ այդպես չէ։

Վազքն ավարտվեց։

Ես տեղ հասա վերջինը, տասը յարդ ետ մնալով։

Առանց տատանվելու տեղնուտեղը բողոքարկեցի և վազողներին հրավիրեցի նոր վազքի՝ նույն տարածությունը, այս անգամ հակառակ ուղղությամբ։ Նրանք վճռականապես հրաժարվեցին, իսկ դա, անշուշտ,

նշանակում էր, որ նրանք վախենում են ինձ հետ մրցելուց։ Ես այդպես էլ ասացի՝ նրանք իրենք էլ հիանալի գիտեն, որ ես կհաղթեմ։

Ճիշտ նույնը պատահեց ինձ հետ սպորտի բոլոր մյուս ձևերում։

Տուն դարձա խիստ չարացած և ուժեղ տենդի մեջ։ Ամբողջ գիշեր զառանցում էի և երեք օր հիվանդ պառկեցի։

Տատիկս քնքշությամբ հոգ էր տանում ինձ և, հավանորեն, միայն նրա շնորհիվ ես չմեռա։ Երբ քեռի Գրիգորը այցելեց ինձ, նրա այտերն արդեն առաջվա պես ներս ընկած չէին։ Երևում է, թողել էր պաս պահելը. դրանից առաջ նա մոտավորապես քառասուն օր ու քառասուն գիշեր պաս էր պահել։ Ինքնահայեցողությունը նույնպես թողել էր, որովհետև ըստ էության առարկան սպառել էր մինչև վերջ։ Դա նախկին լավ մարդն էր՝ կոնծաբան, զվարճասեր ու սիրահետող։

— Ասում եմ քեզ, Արամ,— ասաց նա,— մենք մեծ տոհմ ենք։ Մենք կարող ենք ամեն ինչ։

ՀՆԱՈՇ ՍԻՐԱՎԵՊ ՍԻՐԱՅԻՆ ՈՏԱՆԱՎՈՐՆԵՐՈՎ ՈՒ ԱՅԼԵՎԱՅԼ ԲԱՆԵՐՈՎ

Իմ զարմիկ Առաքը մեկուկես տարով փոքր էր ինձանից, կլորադեմ, թուխ, արտակարգ բարեկիրթ։ Եվ դա շինծու չէր. բարեկիրթությունը նրա մոտ նույնքան բնական էր, որքան ինձ մոտ անբարեկրթությունը։ Դպրոցում, այնտեղ, ուր Առաքը հեշտությամբ դուրս էր գալիս ամենադժվարին դրությունից սիրալիր ժպիտի օգնությամբ, որը մերկացնում էր նրա վերևի նոսր ատամները և հալում մեր ուսուցչուհի միսս Դաֆնիի քար սիրտը, ես՝ հակառակը, հայտնվում էի ուղղակի դեպքերի կենտրոնում և աղմկալից եռանդով ապացուցում, որ մեղավոր է միսս Դաֆնին կամ մի ուրիշը, միայն ոչ ես, և պատրաստ էի հասնել նույնիսկ գերագույն դատարան, միայն թե ապացուցեմ իմ անմեղությունը։

Սովորաբար ինձ ճամփում էին դիրեկտորի մոտ։ Երբեմն ես ծեծ էի ուտում մեր դիրեկտոր միստր Դերրինգրի հետ վեճի բռնվելու համար, որն իբրև վիճաբանող անպետքի մեկն էր։ Հենց որ ես նրան դեմ էի անում պատին, նա իսկույն գոտին էր ձեռքն առնում։

Առաքն այդպես չէր. նրա մտքով իսկ չէր անցնում պայքարել հանուն արդարության։ Ոչ խելքով, ոչ աշխուժությամբ նա ինձ չէր հասնի, բայց սովորում էր ինձ հետ միևնույն դասարանում, չնայած մեկուկես տարով փոքր էր ինձանից։ Այդ այնքան էլ վատ չէր լինի, եթե մենք հինգերորդ դասարանցի չլինեինք։ Ուսուցիչների հետ վեճերը ես սովո-

բաբար շահում էի, բայց փոխանակ ուրախությամբ ինձանից ազատվելու, նրանք հրաժարվում էին ինձ վեցերորդ դասարան փոխադրել, երևի հուսալով վեճը երկրորդ տարեցուց շահել և այդպիսով հաշիվները մաքրել ինձ հետ։ Ահա թե ինչու այնպես էր ստացվել, որ հինգերորդ դասարանում ամենատարիքավոր աշակերտը ես էի։

Մի անգամ միսս Դաֆնին փորձեց ամբողջ աշխարհին ապացուցել, որ գրատախտակի վրա գրված ոտանավորի հեղինակը ես եմ։ Ոտանավորի մեջ ասվում էր, որ միսս Դաֆնին սիրահարված է միստր Դերրինգրին և որ նա սարսափելի սֆաթ ունի։ Բայց ոտանավորի հեղինակը ոչ թե ես էի, այլ իմ զարմիկ Առաքը։ Եթե ես ոտանավոր գրելու լինեի, կգրեի ավելի արժանավոր բաների և ոչ թե միսս Դաֆնիի մասին։ Սակայն միսս Դաֆնին, առանց անունը տալու, բայց քանոնը ձեռքին կանգնեց իմ նստարանի մոտ ու ասաց.

— Ես մտադիր եմ պարզել, թե ո՞վ է այդ խայտառակությունը կատարել և կհասնեմ այն բանին, որ այդ տղան կարգին պատժվի։

— Տղա՞ն,— ասացի ես։— Իսկ ի՞նչ գիտեք, որ դա տղա է և ոչ թե աղջիկ։

Միսս Դաֆնին քանոնը շրխկացրեց իմ աջ ձեռքի մատներին։ Ես վեր թռա տեղիցս ու ասացի.

—Դուք իրավունք չունեք խփել իմ մատներին։ Ես կդանգատվեմ։

— Նստիր,— ասաց միսս Դաֆնին։

Ես նստեցի։ Նա բռնեց իմ աջ ականջից, որը վաղուց էր կորցրել իր ձևը, քանի որ միսս Դաֆնին և մյուս ուսուցիչները շարունակ քաշում էին։

Ես նստեցի տեղս ու կամացուկ, համարյա անլսելի ձայնով ասացի.

— Դուք դեռ կլսեք իմ մասին։

— Լեզուդ քե՛զ պահիր,— ասաց միսս Դաֆնին։

Չնայած սարսափելի չարացած էի այդ բոլորից, բայց և այնպես լեզուս դուրս գցեցի ու բռնեցի մատներով։ Փոքրիկ ճապոնացի, մեքսիկացի, հայ, հույն, իտալացի, պորտուգալացի և սովորական ամերիկացի տղաներն ու աղջիկները, որոնք ամեն անգամվա պես սպասում էին ներկայացման, սկսեցին քրքջալ։ Միսս Դաֆնին քանոնը բարձրացրեց ու պատահաբար դիպավ իմ քթին։ Դա խիստ վիրավորական էր, մանավանդ այն պատճառով, որ այն ժամանակ, ինչպես և հիմա, իմ քիթը հիմնավոր քիթ էր։ Քանոնը դեմ չէր առնի փոքր քթին, և ես միսս Դաֆնիի շարժումն ընդունեցի իբրև նուրբ ակնարկ իմ քթի չափերի մասին։

Ծեծված մատներով բռնեցի վիրավոր քիթս ու նորից վեր ցատկեցի։

— Դուք ինքներդ ասացիք, որ լեզուս ինձ պահեմ,— ասացի ես և

սկսեցի պնդել, որ ոչ մի վատ բան չեմ արել, ճշտությամբ կատարել եմ նրա հրամանը, ուստի անմեղ եմ և անտեղի ծեծ կերա։

— Դե, դե, եռանդդ չափավորիր,— ասաց միսս Դաֆնին։— Ես այլևս չեմ ուզում տանել քո հիմարությունները։ Քեզ կարգին պահիր։

Ես ձեռքս իջեցրի քթիցս և սկսեցի ինձ կարգին պահել։ Ես ժպտացի նրան այնպիսի մի ձևով, ասես կարմիր խնձոր էի մատուցում։ Իմ հանդիսատեսները ծիծաղից ոռնում էին, իսկ միսս Դաֆնին քանոնը ցած գցեց, նետվեց դեպի ինձ, նստարանին դիպչելով՝ սայթաքեց ընկավ, վեր թռավ տեղից ու սկսեց հետապնդել ինձ սենյակով մեկ։

«Էլի նույնը,— ասում էի ինքս ինձ, միսս Դաֆնիից ճողոպրելով մեկ ձախ, մեկ աջ։— Էլի հիմար պատմության մեջ ընկա, որն անպայման կվերջանա սպանությամբ, իսկ իմ զարմիկ Առաքը, որն այս ամենի մեղավորն է, ինքն իր համար նստել ու քթի տակ ծիծաղում է։ Արդարություն չկա աշխարհում»։

Երբ վերջապես միսս Դաֆնին բռնեց ինձ, ավելի ճիշտ, երբ ես թույլ տվեցի ինձ բռնելու, որովհետև չէի ուզում ավելի մեծ պատիժ ստանալ միստր Դերբինգրից, իսկական տուրուդմփոց բարձրացավ։ Միսս Դաֆնին փորձում էր աչքերս հանել, պոկել ականջներս, մազերս ու ձեռքերս, իսկ ես ջանում էի համոզել, որ նա պետք է որ մեղմ լինի, քնքուշ ու կանացի։

Երբ նրա փուքը նստեց, ես վերադարձա իմ տեղը, և նորից խոսք բացվեց գլխավոր հանցագործության մասին՝ ո՞վ է գրատախտակի սիրային ոտանավորի հեղինակը։

Միսս Դաֆնին կարգի գցեց մազերն ու շորերը, շունչը ետ բերեց, պահանջեց լռել և, մի քանի ակնթարթ լռությունից հետո, երբ լսելի էր պատի ժամացույցի թիկ-թակը, նորից խոսեց.

— Ես բոլորին հերթով կհարցնեմ՝ դո՞ւ ես այդ խայտառակ ոտանավորը գրել գրատախտակին։ Հուսով եմ, որ կլսեմ ճշմարտությունը։ Եթե ստեք, միևնույն է, ես կգտնեմ հանցավորին, և նա ավելի խիստ կպատժվի։

Նա սկսեց հերթով հարցնել բոլոր տղաներին ու աղջիկներին, թե արդյոք նրանք չե՞ն գրել այդ ոտանավորը և, իհարկե, բոլորը պատասխանեցին, որ ոչ։ Նա հարցրեց իմ զարմիկ Առաքին, ու սա էլ ասաց, որ ոչ։ Հետո ինձ հարցրեց, ես էլ պատասխանեցի «ոչ», և դա ճիշտ էր։

— Գնա դիրեկտորի մոտ,— ասաց նա։— Ստախո՛ս։

— Ես ոչ մի ոտանավոր չեմ գրել գրատախտակին,— ասացի ես։— Եվ բոլորովին էլ ստախոս չեմ։

Միստր Դերրինգրը այնքան էլ հիացմունքով չդիմավորեց ինձ։ Երկու րոպե հետո դասարանից հայտնվեց Սուզի Կոկոմոտոն միսս Դաֆնիի զեկույցով, ուր նկարագրված էր իմ շարադրությունը։ Եվ ոչ միայն նկարագրված, այլև մեջբերում էր արված։ Միստր Դերրինգրը կարդաց զեկույցը, դեմքը ծռմռեց, ժպտաց, շրխնացրեց տաբատակալները, հազաց ու ասաց.

— Ինչո՞ւ ես գրել այս ոտանավորը։

— Չեմ գրել,— ասացի ես։

— Անշուշտ, դու կասես, որ չես գրել, բայց և այնպես ինչո՞ւ ես արել այդ բանը։

— Չեմ արել։

— Մի՛ համառիր,— ասաց միստր Դերրինգրը։— Գիտես, որ չարժե այսպիսի գրգռիչ լուրեր տարածել։ Ո՞րտեղից հնարեցիր, թե միսս Դաֆնին սիրահարված է ինձ։

— Իսկ նա իսկապե՞ս սիրահարված է,— ասացի ես։

— Դե, այստեղ այդպես է ասվում,— ասաց միստր Դերրինգրը։— Ինչի՞ց ես այդպիսի տպավորություն ստացել։ Գուցե նկատե՞լ ես, որ նա ինձ է նայում հիացմունքով կամ մի ուրիշ կերպ։

— Ես բոլորովին էլ չեմ նկատել, թե նա ինչ կերպ է նայում ձեզ,— ասացի ես։— Գուցե ինքնե՞րդ եք սիրահարվել նրան։

— Սրա վրա մտածել է պետք,— ասաց միստր Դերրինգրը։— Ընդհանուր առմամբ ոտանավորը վատը չէ։ Միայն թե մի բան... Դու իսկապե՞ս գտնում ես, որ միսս Դաֆնին այդքան տգեղ է։

— Ոտանավորը ես չեմ գրել,— ասացի։— Ընդհանրապես ես այդպես չեմ գրում։

— Ուզում ես ասել, թե գրատախտակին քո ձեռագիրը չէ՞։

— Այո։ Բացի դրանից, ես այդպիսի ոտանավորներ չեմ գրում։

— Բայց հո ընդհանրապես ոտանավորներ գրո՞ւմ ես։

— Ընդհանրապես գրում եմ, միայն ոչ դրա նման։

— Այդպիսի լուրեր տարածե՞լ,— շարունակեց միստր Դերրինգրը։— Հուսով եմ գիտես, թե դա ինչ է նշանակում։

— Ես միայն մի բան գիտեմ,— ասացի,— այդ ոտանավորը ես չեմ գրել։

— Ինչ վերաբերում է ինձ,— ասաց միստր Դերրինգրը,— ապա ես գտնում եմ, որ միսս Դաֆնին բնավ էլ այնքան տգեղ չէ։ Ընդհակառակը, կարելի է ասել հրապուրիչ է։

— Դե, ուրեմն, հիանալի է,— ասացի ես։— Իմ ուզածը միայն այն է, որ ուրիշի մեղքերը ես չքավեմ։

— Բայց և այնպես այս ոտանավորի հեղինակը կարող էիր դու լինել,— ասաց միստր Դերրինգրը։

— Ո՛չ այդ ոտանավորի,— ասացի ես։— Ես կարող էի գրել միայն լավը։

— Ի՞նչ ես հասկանում ասելով՝ լավը,— հարցրեց միստր Դերրինգրը։— Սրանից գեղեցի՞կը։ Թե՞... վիրավորականը։

— Իհարկե, գեղեցիկը,— ասացի ես։— Միայն ոչ ձեր միսս Դաֆնիի մասին։

— Ահա թե ի՞նչ,— ասաց միստր Դերրինգրը։— Ես պատրաստ էի կասկածելու, թե արդյոք դո՞ւ ես այս ոտանավորի հեղինակը, բայց այժմ ինքդ համոզեցիր ինձ։ Ոտանավորը դու ես գրել։ Ուստի ես պետք է քեզ պատժեմ։

Ես վեր թռա և սկսեցի վիճել։

— Դուք ուզում եք ծեծել ինձ չարած բանի համար։ Լա՜վ, ղեռ կլսեք իմ մասին։

Նա ծեծեց ինձ, և ամբողջ դպրոցում լսեցին իմ ձայնը։ Ես կապտին տալով վերադարձա դասարան։

Գրատախտակի վրայից ոտանավորը ջնջված էր։ Ամեն ինչ այնպես էր, ինչպես հարկն է։ Հանցավորն արժանի պատիժ էր ստացել, ոտանավորը ոչնչացված էր, հինգերորդ դասարանում կարգը՝ վերականգնված։

Իմ զարմիկ Առաքը նստել էր սուսիկ-փուսիկ, զմայլված՝ Ալիս Բովարդի սև խոպոպներով։

Հենց որ ընդմիջումն սկսվեց, ես նրան ցած գլորեցի ու հեծա վրան։

— Քո պատճառով ես ծեծ կերա,— ասացի,— այնպես որ մեկ էլ դրա նման բաներ չգրես։

Սակայն մյուս օրն առավոտյան գրատախտակի վրա հայտնվել էր մի նոր ոտանավոր, գրված, անշուշտ, իմ զարմիկ Առաքի ձեռքով և, անկասկած, նրա ոճով, իսկ միսս Դաֆնին նորից պատրաստվում էր մերկացնել ու պատժել հանցագործին։ Երբ ես դասարան մտա, տեսա ոտանավորն ու հասկացա, թե բանն ինչ է, խիստ վրդովվեցի։ Առաքն արդեն չափ ու սահմանն անցել էր։ Սկսեցի հայհոյել նրան, բայց նա իրեն լրիվ խուլի տեղ էր դրել, ու միսս Դաֆնին էլ ենթադրեց, թե իմ խոսքը իրեն է վերաբերում։

— Ահա թե ի՞նչ,— ասաց նա,— եթե ասելիք ունես, խոսիր բոլորին հասկանալի լեզվով։

— Միայն մի բան ունեմ ասելու, որ այդ ոտանավորը ես չեմ գրել,

ոչ էլ երեկվանը։ Եթե նորից գլխացավանքի մեջ ընկնեմ ոտանավորի պատճառով, ինչ-որ մեկը դեռ կրսի իմ մասին։

— Նստիր,— ասաց միսս Դաֆնին։

Ներկա-բացակայից հետո միսս Դաֆնին մի ամբողջ թերթ թուղթ գրոտեց, մտցնելով այնտեղ նոր ոտանավորը, և կարգադրեց ինձ ուղերձը տանել դիրեկտորին։

— Ինչո՞ւ պիտի ես տանեմ,— ասացի։— Ես ոչ մի ոտանավոր չեմ գրել։

— Սրա, ինչ քեզ ասված է,— հրամայեց միսս Դաֆնին։

Ես մոտեցա նրա սեղանին ու ձեռքս պարզեցի գրությունը վերցնելու։ Միսս Դաֆնին քանոնով խփեց ձեռքիս։ Ես ետ ցատկեցի ու գոռացի.

— Ես ձեր սիրային նամակների փոստատարը չեմ։

Իհարկե, չափն անցա։ Միսս Դաֆնին այլևս չդիմացավ ու նետվեց իմ կողմը։ Ես այնքան էի շարացած, որ դարձա ու նետվեցի Առաքի վրա։ Նա ձևացավ անմեղ գոհ և աչես նույնիսկ չդիմադրեց, բայց այնքան ճարպիկն էր, որ բոլորովին անվնաս դուրս պրծավ, մինչդեռ ես ամբողջ հասակով փռվեցի հատակին։ Հենց այդտեղ էլ միսս Դաֆնին վրա հասավ։ Հաղթանակը նրանն էր։ Երբ ես ներկայացա դիրեկտորին, երեսս ու ձեռքերս ամբողջովին ծածկված էին կապտուկներով ու ճանկռվածքներով, իսկ միսս Դաֆնիի սիրային նամակը ճմռթված էր ու տեղ-տեղ պատռված։

— Ինչո՞ւ ես այսպես ուշացումով երևում,— ասաց միստր Դերրինգրը։— Դե, գրությունը տուր այստեղ։ Տեսնենք այս անգամ ինչ օգին ես սարքել։

Նա վերցրեց գրությունը, հարթեց սեղանի վրա և սկսեց ուշադիր կարդալ։ Կարդաց մի քանի անգամ։ Նա շատ գոհ էր և, որքան կարող էի դատել, սիրահարված։ Նա լայն ժպիտը դեմքին շրջվեց իմ կողմը և պատրաստվում էր հանդիմանություններ տեղալ իմ գլխին, որ ես միսս Դաֆնիին այլանդակ էի համարում։

— Ոտանավորը ես չեմ գրել,— շտապով ասացի ես։— Երեկվանը նույնպես։ Ես ձեզանից ոչինչ չեմ ուզում, միայն թե քիչ ու մի՛չ կրթություն ստանամ։ Որպեսզի ապրեմ և թույլ տամ ուրիշներն էլ ապրեն։

— Լավ, լավ,— ասաց միստր Դերրինգրը։

Նա մի՛անգամայն գոհ էր։

— Եթե դուք սիրահարված եք նրան,— ասացի ես,— դա ձեր գործն է, իսկ ինձ հանգիստ թողեք։

— Ըստ իս, այնուամենայնիվ դու կարող էիր միսս Դաֆնիի ար-

տաքինի մասին ավելի սիրալիր արտահայտվել,— ասաց միստր Դերրինգրը։— Եթե դու նրան տգեղ ես համարում, ուրիշները միգուցե գրտնում են, որ այդպես չէ։

Օ՜, այ թե զզվել էի այս ամենից. ինչ էլ որ ասես, ոչինչ չի ազդում։

— Լավ,— ասացի։— Վաղը ես ավելի սիրալիր կլինեմ։

— Այդ արդեն ավելի լավ է,— ասաց միստր Դերրինգրը։— Իսկ հիմա ես քեզ պիտի պատժեմ։

Նա ձեռքը տարավ դեպի գրասեղանի ներքևի դարակը, ուր դրված էր լինում գոտին։

— Այդ չեղավ,—ասացի։ — Եթե դուք ինձ պատժեք, ես ավելի սիրալիր չեմ լինի։

— Հապա ի՞նչ անենք այսօրվա ոտանավորը,— ասաց միստր Դերրինգրը։— Դրա համար է, որ պիտի պատժեմ քեզ։ Դե, իսկ վաղը կտեսնենք։

— Ոչ, սըր,— ասացի։— Ոչ մի պատիժ։

— Դե լավ,— ասաց միստր Դերրինգրը։— Միայն տես, հա, ավելի սիրալիր եղիր։

— Կաշխատեմ,— ասացի։— Հիմա կարելի՞ է գնալ։

— Այո,— ասաց նա։— Կարծում եմ՝ կարելի է։

Ես դիմեցի դեպի ելքը։

— Մի րոպե սպասիր,— ասաց միստր Դերրինգրը։— Եթե դու չբղավես, ամեն մեկը գլխի կընկնի, որ այստեղ գործը կարգին չէ։ Եա արի ու բղավիր ինչպես հարկն է, հետո գնա, խնդրեմ։

— Բղավե՞մ։— ասացի։— Ինչպե՞ս կարող եմ բղավել, երբ ինձ ձեռք չեն տալիս։

— Կարող ես,— ասաց միստր Դերրինգրը։— Պարզապես գոռա՛ իբրև թե ցավից։

— Դժվար թե կարողանամ,— ասացի ես։

— Ես գոտիով կխփեմ ահա այս աթոռին, իսկ դու գոռա,— ասաց միստր Դերրինգրը։— Տասը անգամ իրար ետևից։

— Կարծում եք կստացվի՞,— ասացի ես։

— Իհարկե, կստացվի,— ասաց նա։— Դե շուտ։

Միստր Դերրինգրն սկսեց գոտիով հարվածել աթոռին, իսկ ես աշխատում էի գոռալ, ինչպես նախորդ օրը, բայց այնքան էլ բնական չէր ստացվում։ Զայնս ինչ-որ կեղծ էր դուրս գալիս։

Մենք տարված էինք այդ արարողությամբ, երբ իր սեփական ան-

ձով առանձնասենյակ մտավ միսս Դաֆնին։ Աղմուկի պատճառով մենք ուշացմամբ նկատեցինք նրան։

Տասներորդ հարվածի վրա ես շուռ եկա դեպի միստր Դերրինգրը և ասացի.

— Կացեք, արդեն տասը լրացավ։

Հենց այդտեղ էլ ես տեսա միսս Դաֆնիին։ Նա կանգնել էր շշմած, բերանը բաց։

— Մի քիչ էլ, տղաս,— ասաց միստր Դերրինգրը։— Որպեսզի հաշիվը լրիվ լինի։

Ես չհասցրի նրան նախազգուշացնել, որ միսս Դաֆնին սենյակում է, և նա նորից սկսեց ձաղկել աթոռը, իսկ ես առաջվա պես դուռում էի։

Սա արդեն պարզապես խենթություն էր։

Միսս Դաֆնին հազաց, միստր Դերրինգրը շուռ եկավ ու նկատեց նրան, իր սիրեցյալին։

Միսս Դաֆնին լուռ էր։ Նրա լեզուն կապ էր ընկել։ Միստր Դերրինգրը ժպտաց։ Նա խիստ շփոթված էր և սկսեց անպատակ թափահարել գոտին։

— Պատժում եմ տղային,— ասաց նա։

— Հասկանալի է,— ասաց միսս Դաֆնին։

Բայց դա բնավ էլ հասկանալի չէր նրան։

— Ես չեմ կարող անպատկառներին հանդուրժել մեր դպրոցում,— ասաց միստր Դերրինգրը։

Նա խենթորեն սիրահարված էր միսս Դաֆնիին։ Գոտին թափահարելով, նա ճիգ էր գործադրում թեկուզ որևէ կերպ իրեն բարձրացնել սիրեցյալի աչքում։ Սակայն միսս Դաֆնին բոլորովին չգնահատեց այդ ձևի պատիժը, երբ տղայի փոխարեն ձաղկում են աթոռը, իսկ այդ միջոցին տղան գոռում է։ Նշանակում է, նրանք երկուսով էլ, և՛ տղամարդը, և՛ տղան պարզապես ծաղրուծանակում են արդարությունն էլ, անձնվեր սերն էլ։ Նա խիստ թունավոր մի հայացք նետեց դիրեկտորի վրա։

— Օ՜,— ասաց միստր Դերրինգրը,— ուզում եք ասել, թե ես թակում էի աթոռը։ Բա՜յց մենք միայն փորձում էինք։ Ճի՞շտ է, տղաս։

— Ոչ, ճիշտ չէ,— ասացի ես։

Միսս Դաֆնին գազազած շուռ եկավ ու անհետացավ, իսկ միստր Դերրինգրը նստեց աթոռին։

— Տես, թե ինչ արիր,— ասաց նա։

— Հապա ո՞նց,— ասացի ես։— Եթե դուք մտադիր եք նրա հետ սիրաբանել՝ խնդրեմ, բայց ինձ մի խառնեք այդ գործին։

— Է՛հ,— ասաց միստր Դերրինգրը,— ինչ որ է...

Նա ընկճված էր ու տխուր։

— Լավ,— ասաց նա,— գնա դասարան։

— Միայն ուզում եմ իմանաք, որ այդ ոտանավորները ես չեմ գրել,— ասացի ես։

— Դա ինչ նշանակություն ունի,— ասաց միստր Դերրինգրը։

— Կարծում էի, թերևս ձեզ կհետաքրքրեր։

— Միևնույն է, շատ ուշ է,— ասաց նա։— Այժմ այլևս նա ինձանով չի հիանա։

— Իսկ ինչո՞ւ դուք ինքներդ ոտանավոր չգրեք նրան,— ասացի ես։

— Ես ոտանավոր գրել չգիտեմ,— ասաց միստր Դերրինգրը։

— Այդ դեպքում փորձեցեք մի ուրիշ ձևով,— ասացի։

Երբ դասարան վերադարձա, միսս Դաֆնին խիստ քաղաքավարի էր ինձ հետ։ Ես էլ նրա հետ։ Նա գիտեր, որ ես ամեն ինչ գիտեմ և հասկանում էր, որ ինձ հետ կատակ անել չի կարելի. չէ որ ես կարող էի կամ խափանել նրա սիրախաղը, կամ այնպես անել, որ ամուսնանար դիրեկտորի հետ։ Ահա թե ինչու նա խիստ բարեհաճ էր իմ նկատմամբ։

Երկու շաբաթ անց պարապմունքները վերջացան, իսկ արձակուրդներից հետո միսս Դաֆնին այլևս չերևաց մեր դպրոցում։ Կամ այն է՝ միստր Դերրինգրը ոտանավորներ չէր գրել նրան, իսկ եթե գրել էր, ապա վատերը, կամ այն է՝ չէր ասել, որ սիրում է նրան, իսկ եթե ասել էր, ապա միսս Դաֆնին անտարբեր էր գտնվել, կամ թերևս միստր Դերրինգրը առաջարկություն էր արել, իսկ նա մերժել էր, որովհետև ես ամեն ինչ գիտեի, և ապա տեղափոխվել էր մի ուրիշ դպրոց, որպեսզի բուժեր իր խորտակված սիրտը։

Դրա նման մի բան։

ԻՄ ԶԱՐՄԻԿ ՀՈՌԵՏՈՐ ՏԻԳՐԱՆԸ

Քսան տարի առաջ Սան Հոաքին հովտի հայերը հռետորությունը համարում էին մեծագույն, կարևորագույն, կարելի է ասել՝ միակ արվեստը։ Ֆրեզնոյի շրջակայքի խաղողագործների մոտ իննսուներկու տոկոսը գտնում էին, որ ճառասացության շնորհք ունեցող մարդն անկասկած կիրթ մարդ կլինի։ Հիմա, շատ տարիներ անց, ես այդ փաստը վերագրում եմ նրան, որ սակավախոս, զուսպ ու ամաչկոտ այդեղործների վրա ցնցող տպավորություն էր գործում ամեն ոք, ով կարող էր ելնել բեմ, ակնոցը շտկել, մի հայացք նետել գրպանի ժամացույցին, քաղաքավարի հազալ, ու, սկսելով հանդարտ ու ցածրաձայն, աստիճա-

նաբար ձայնը բարձրացնելով, հասնել հոգեցունց մի աղաղակի, որը կոչված էր ունկնդիրներին հավաստիացնել իր կրթված լինելու փաստը։

— Որպիսի՜ լեզու, որպիսի՜ եռա՜նդ, ի՜նչ բանիմացություն, ինչպիսի՜ ամպագոռգոռ ձայն,— ասում էին բոլորն իրար։

Հավաքված քաղաքային դահլիճում կամ երեք եկեղեցիներից մեկում, ֆերմերներն, ակնածանքից սարսռալով, իրենց քիթն էին մաքրում, սրբում արցունքները, և, վայրկենական պոռթկումով, փող հանգանակում՝ ով ինչքան կարող էր։ Այն դեպքերում, երբ հանգանակությունը պիտի ծառայեր այս կամ այն ֆերմերին հատկապես սրտամոտ մի գործի, նա ոտքի էր կանգնում ու բացականչում.

— Մկրտիչ Ղասաբյանի, իր կին Արաքսիի և իր երեք որդիներ Գուրգենի, Սիրաքի և Թովմասի կողմից՝ հիսո՜ւն սենթ,— ապա գրավում իր տեղը բուռն ծափերի ներքո, որոնք վերաբերում էին ոչ այնքան նվիրաբերության գումարին, որքան փառավոր խոսելակերպին և այն ընտիր ու գրամատիկ ոճին, որով արտասանվում էին հին երկրի սքանչելի անունները՝ Մկրտիչ, Արաքսի, Գուրգեն, Սիրաք, Թովմաս։

Սովորաբար այգեգործները մրցում էին իրար հետ նման հայտարարություններով ու նվիրաբերություններով և վա՜յ նրան, ով չկարողանար տղամարդու պես տեղից ելնել ու մեջտեղ բերել իր բաժինը՝ ով ոչ փող ուներ, ոչ սիրտ՝ աներկյուղ ոտքի կանգնելու իր հոգու թրթիռը պարպելու։ Այդ մրցության պատճառով նա, ով ամբողջ սրտով ձգտում էր առաջ քաշված գործին նպաստել, բայց ի վիճակի չէր... տարիներ շարունակ մնում էր գամված իր տեղին, մինչև որ, լավ օրերի գալուստով, վերջապես վեր էր ցատկում, սարսռազդու մի հայացք նետում շուրջբոլորն ու գոչում.

— Անցել են նեղության ու կարիքի օրերը Տիգրանակերտ փառավոր քաղաքից սերած մեր տոհմի համար... Փամփալոնյան հինգ եղբայրներ՝ քսանհինգ սենթ,— ապա սրահից դուրս գալիս՝ գլուխը բարձր ու սիրտը հովացած։ Աղքա՜տ— այդ ե՜րբ էր, բայց ո՜չ հիմա։ Ու հինգ ածդահա տղամարդ, իրենց զավակներին առաջն առած, տուն էին գնում, երջանիկ այն հատուկ արևելյան բերկրանքով, որը բխում էր հայրենակիցների աչքում այլևս չիեղճանալու փաստից։

Որևէ մեկի համար սակայն չկար ավելի մեծ պատիվ ու պարծանք, քան սեփական որդուն դպրոցում, վանքում կամ մի այլ տեղ ճառ ասելիս տեսնելը։

— Մի տես ի՜նչ տղա է,— գոռում էր ֆերմերն իր ութսունամյա հոր ականջին։— Լավ լսիր, Վահանն է, իմ որդին, քո թոռը. տասնմեկ տարեկան էլ չկա։ Եվրո՜պայի մասին է խոսում։

Պապը գլուխն սրորում էր ու զարմանում, թե ինչպես է այդ փոքրիկ տղան այդքան լուրջ ու լավատեղյակ դատում Եվրոպայի մասին։ Ներունին հազիվ թե իմանար Եվրոպայի տեղը, սակայն աղոտ հիշում էր, որ Ամերիկա գաղթելիս իրենք դադար էին առել Ֆրանսիայում՝ Հավրում։ Այո, դա էր, որ կար՝ Հավրն էր. երևի Եվրոպան հենց Հավրն էր։ Բայց դե Հավրի ի՞նչը պիտի այդքան հուզած լիներ խեղճ երեխային։

— Ա՜խ,— հոգոց էր քաշում Ներունին,— խելքս էլ բան չի կտրում, մոռացել եմ։ Բայց քաղաքը լավն էր, ծովի ափին, նավերով...

Կանայք երանությունից հալվում էին ու գմայլվում իրենք իրենցով՝ որպես մայրեր։ Նրանք բազմանշանակալից հայացքներ էին փոխանակում, գլուխները տարուբերում և, մի տասը րոպե բալիկի անգլերեն ճառը լսելուց հետո (որից բան չէին հասկանում), սկսում էին քաղցր հիացմունքից անձայն հեկեկալ։ Ինչպես չհեկեկային, երբ փոքրիկ Պերճիկը, որը դեռ երեկ հայերեն երկու բառ չէր կարողանում կապել իրար, էլ չեմ ասում՝ անգլերեն, հիմա բեմից ճառ էր ասում, ձեռքերը թափահարելով ու մատը տնկելով մեկ առաստաղին, մեկ դեպի արևմուտք, մեկ հարավ, մեկ հյուսիս, իսկ մեկ-մեկ էլ՝ սեփական կրծքին։

Նման պայմաններում Ղարաղլանյանների համար ուրիշ ճար չէր մնում, բացի սեփական հոետոր ունենալուց, չնայած իմ պապը նրանց բոլորին անխտիր խաբեբա ու բութ էր կոչում։

— Եթե տեսնեք, որ մի գնդլիկ ակնոցավոր մարդ ձայնը գլուխն է գցել ժողովրդի առաջ, ուրեմն վստահ եղեք, որ նա սուտասան է կամ ավանակի մեկը։

Ներունին դատարկաբանություն տանել չէր կարող։ Նա դեմ չէր իմանալ այն, ինչը դեռ չգիտեր, բայց ո՛չ ավելին, և բոլորովին չէր հանդուրժում խոսելու համար խոսելը։ Ու, չնայած սովորության համաձայն, նա ներկա էր լինում բոլոր ժողովներին, բայց վերջում միշտ դրանցից զահլան գնում էր։ Հոետորները, նրա դեմքին նայելով, չափում էին ծերունու դժգոհության աստիճանը, և եթե նրա շուրթերն անձայն հայհոյանքներ էին շշնջում, ապա սովորաբար զսպում էին իրենց եռանդն ու աշխատում խելքի մոտ խոսել։ Ոմանք էլ, նախօրոք գիտենալով, որ նա իրենց ապուշի տեղ է դնում, փորձում էին հետը հաշիվները մաքրել ու սկսում սովորականից բարձր աղաղակել.

— Մենք գիտենք, որ մեր մեջ կան մարդիկ, որոնք ծաղրում են մեր ջանքերը և իրենց տիեզերական գոռոզության բարձունքից մեզ հիմար անվանում, բայց դա միշտ եղել է և կմնա այն խաչը, որը մենք կոչված ենք կրելու։

Նման դեպքերում պապս նշան էր անում իր որդիներին, սրանք էլ՝

իրենց որդիներին, վերջիններս սկսում էին իրար հրմշտել, կանայք աջ ու ձախ էին նայում, և Ղարաղլանյանների ամբողջ գերդաստանը, թվով երեսունյոթ կամ երեսունութ հոգի, ոտքի էր կանգնում ու լքում դահլիճը։ Ծանապարհին ծերունին կատաղի հայացքներ էր նետում հավաքվածներին ու ասում.

— Սրանք որ նորից սկսեցին իրենց խաչը կրել, լավ է թողնենք գնանք։

Չնայած այդ ամենին, Ղարաղլանյանները, ինչպես ասացի, ուզածչուզած պիտի ունենային իրենց սեփական հռետորը։ Այդ էր ժամանակի պահանջը, ա՛յդ էր ժողովրդի կամքը, և Ղարաղլանյանների տոհմից մեկն ու մեկը վերջապես պիտի ասպարեզ իջներ ու բոլորին ցույց տար, թե ինչպիսին կարող է լինել, եթե կուզեք, իսկական հռետորությունը։

Այդպիսի Ղարաղլանյան հանդիսացավ Տիգրանը, իմ քեռի Զոհրաբի երկրորդ արու զավակը, կրտսեր զարմիկս, որը դեռ ինը տարեկան էր, երբ ավարտվեց պատերազմը՝ ինձնից մի տարով փոքր։ Բայց նա այնքան փոքրամարմին էր, որ ես նրան բանի տեղ չէի դնում։

Այս տղան հենց էն գլխից ողջամիտ ու հումորից իսպառ զուրկ այն մանուկներից էր, որոնք կառչում են ամոթալի ու վիրավորական այն մտքին, թե իմաստությունը ձեռք է բերվում դրսից։ Այդ խայտառակ միտքը հատկապես անարդելի էր Ղարաղլանյանների համար, քանի որ նրանք դարերից ի վեր իմաստությունը քաղում էին ներքին անսպառ պաշարներից։ Պապս շատ էր պարծենում նրանով, որ ցանկացած Ղարաղլանյան մի հայացքից կարող է խարդախին մերկացնել ու հարկ եղածի պես իր տեղը դնել։

— Եթե երբևէ տեսնեք մեկին, որը ձեր աչքերին ուղիղ չի նայում, իմացեք, որ նա լավ մարդ չէ։ Կամ լրտես է, կամ շորթողի մեկը։ Թե մեկ ուրիշին տեսնեք, որի դեմքն ասի. «Ախպեր ջան, ես քո ախպերն եմ», զգուշացեք՝ այդ մարդն իր ծոցում դանակ է պահել։

Ծնված օրից դաստիարակվելով նման հորդորանքներով, միջին Ղարաղլանյանը բնականորեն հասունանում էր աշխարհի ու նրա զարմանալի բնակիչների մասին իմաստուն ու ճիշտ պատկերացումներ կազմելով։

Միակ Ղարաղլանյանը, որից այսուհանդերձ բան դուրս չէր եկել, իմ զարմիկ Տիգրանն էր։ Նա երդվյալ դրքամոլ էր, իսկ դա պապիս աչքին մարդկության ամենից արհամարհելի նմուշներից մեկն էր։ Ուրիշ բան, եթե երեխան (էլ ո՞վ պիտի գիրք կարդար) կարդալուց նկատելիորեն շահեր, բայց Տիգրանի դեպքում պապս ոչ մի բարվոքում չէր տեսնում։ Ընդհակառակը՝ տղան գնալով դմբոյանում էր, մինչև որ, երբ տասնը-

մեկ տարեկան դարձավ, պապին հայտնեցին, որ Տիգրանը Լոնգֆելլոյի անվան դպրոցի լավագույն աշակերտն է՝ ուսուցիչների պարծանքն ու ամենահմուտ ճառասացը։

Երբ Տիգրանի մայրն ավետեց այդ լուրը, խեղճ պապը, որը պառկած էր հյուրասենյակի թախտին, գեմքը շուռ տվեց պատի կողմն ու հառաչեց.

— Թո՜ւ, ափսոս... Տղային ի՞նչ եք տալիս ուտի։

— Ափսո՞ս, չէ որ նա դպրոցի լավագույն աշակերտն է,— ասաց մայրը։

Ծերունին նստեց թախտի վրա ու ասաց.

— Եթե ձեզ ասեն, որ տասնմեկ տարեկան մի տղա հինգ հարյուր հոգիանոց դպրոցի լավագույն աշակերտն է, բանի տեղ մի դրեք։ Աստծու սիրուն, ախր ինչո՞ւմ պիտի լավագույնը լինի։ Թե՞ տասնմեկ տարեկան չի։ Ի՞նչ լավագույն, ինչ բա՜ն։ Բա։ արժե՞, որ երեխան իրեն այդքան կարևորություն տա։ Դու վատ մայր դուրս եկար։ Խեղճ տղային դուրս քշիր փողոց մի քիչ խաղ անի, թող գնա իր զարմիկների հետ լող տա։ Երեխան իսկի ծիծաղել չգիտի, իսկ դու առավոտ գիշերով գալիս ես ինձ ասելու, թե նա լավագույնն է։ Դե լավ՝ հեռացիր։

Չնայած այս ամենին, տղան անշեղորեն առաջադիմում էր, գիշեր ու ցերեկ, տոն օր ու կիրակի անընդհատ գիրք թերթելով, մինչև որ վերջապես ստիպված եղավ քթին ակնոց դնել։ Դրանից նա ավելի խղճուկ տեսք ստացավ, ու պապն արդեն ամեն անգամ ընտանեկան հավաքներին նրան տեսնելիս հոգոց էր հանում։

— Աստվա՜ծ իմ, մի էս փիլիսոփային նայեք։ Լավ, արի տեսնեմ, տղաս։

Տիգրանը մոտենում ու կանգնում էր մեծ պապի առաջ։

— Ուրեմն գրքեր ես կարդում,— ասում էր նա,— շատ լավ է։ Արդեն տասնմեկ տարեկան ես, դրա համար էլ ենք շնորհակալ աստծունից։ Դե հիմա ասա, գրքերից ի՞նչ ես սովորել, ի՞նչ գիտես։

— Հայերեն չեմ կարողանա պատմել,— ասում էր տղան։

— Հա՜,— ծորում էր պապը,— դե լավ, անգլերեն ասա։

Այստեղ իմ տասնմեկամյա զարմիկն իրար էր անցնում ու սկսում ճառել բոլոր այն հրաշալի բաների մասին, որոնք նա քաղել էր տարբեր տեսակի գրքերից։ Նա ջրի պես գիտեր բոլոր թվերը, անունները, տեղերը, պատճառներն ու հնարավոր հետևանքները։

Դա մի սքանչելի, բայց տխուր տեսարան էր։

Հանկարծ պապն ընդհատում էր տղային, գոռալով.

— Հերի՞ք եղավ, թութակ ես ինչ ես։

Այսուհանդերձ ինձ թվում էր, որ Ղարօղլանյանների տոհմի այդ տարօրինակ շառավիղը պապի դուրը գալիս էր։ Դիրք կրծողներն անկասկած հիմար էին հռետորների հետ միասին, բայց ամեն դեպքում մեր գրքասեր հռետորը մնացածներին բոլորովին նման չէր։ Նա հատուկ մի երևույթ էր։ Նախ և առաջ Տիգրանը շատ ավելի ջահել էր, քան բոլոր նրանք, ովքեր իրենց գրքերից ահագին բան են սովորել, և հետո նա մյուսներից անհամեմատ ավելի հստակ էր խոսում։

Այս պատճառներով, ինչպես նաև ելնելով իր հակումներին հետևելու տղայի աննկուն վճռականությունից, բոլորն ընդունեցին նրան որպես Ղարօղլանյանների տոհմի հռետորն ու դպիրը և թույլ տվեցին զբաղվել ինչով որ խելքը փչի։

1920-ին Լոնգֆելլոյի անվան դպրոցը հետևյալ ծրագրով մի երեկույթ կազմակերպեց. 1) Զվարթ երգերի ակումբի ելույթ 2) «Հուլիոս Կեսար» ներկայացում. 3) Տիգրան Ղարօղլանյանի ճառ։ Ճառը կոչվում էր «Արդյո՞ք համաշխարհային պատերազմն ապարդյուն էր»։ Նշված ժամին Ղարօղլանյանները զբաղեցրին իրենց տեղերը դպրոցի դահլիճում, ունկնդրեցին սոսկալի երգեցողությունը, դիտեցին քստմնելի ներկայացումը և սկսեցին լսել Զոհրաբի երկրորդ արու զավակ, Ղարօղլանյանների տոհմի միակ հռետոր Տիգրանի ճառը։

Ճառն անբասիր էր՝ դրամատիկ, սահուն, խելացի ու սարսափելի համոզիչ. եզրակացությունն այն էր, որ համաշխարհային պատերազմն իզուր չի անցել, և Դեմոկրատիան փրկել է աշխարհը։ Ամբողջ լսարանը ցնցված էր ու ծափահարում էր խենթի պես։ Բայց մեծ պապի համար դա արդեն համը հանել եղավ՝ բուռն ծափահարության կեսին նա հանկարծ սկսեց հոհոալ։ Ճառն իհարկե յուրովի հոյակապ էր։ Համենայն դեպս այն ամենից հաջողն էր իր տեսակի մեջ՝ վատթարագույնի լավագույնը։ Իսկ դա արդեն հպարտանալու ինչ-որ առիթ էր։

Տանը պապը Տիգրանին մոտ կանչեց ու ասաց.

— Ես քո ճառը լսեցի՝ լավն էր։ Ինչքան հասկացա, դու խոսում էիր մի պատերազմի մասին, որի ընթացքում միլիոնավոր մարդիկ են սպանվել։ Եթե չեմ սխալվում, դու ապացուցեցիր, որ այդ պատերազմն իզուր չէր։ Պիտի քեզ հայտնեմ, որ ես ընդհանուր առմամբ գոհ եմ։ Այդպիսի մեծ ու գեղեցիկ հայտարարություն անելը վայել էր միայն քեզ պես տասնմեկ տարեկան մի տղայի, որը հավատում է իր ասածին։ Բայց լավ իմացիր, որ հասուն մարդուց ես նման զարհուրելի բան չէի հանդուրժի լսել։ Շարունակիր աշխարհն ուսումնասիրել գրքերի միջոցով։ Վստահ եմ, որ եթե ջանասեր լինես և աչքերդ դիմանան, վաթսունյոթ տարեկանում դու կհասկանաս քո ա՛յն խոսքերի սոսկալի հի-

մարությունը, որոնք ընտիր անգլերենով այսօր այդքան անմեղորեն արտասանեցիր։ Ինչ-որ տեղ ես նույնիսկ հպարտ եմ քեզնով, ինչպես այս ցեղի ցանկացած ուրիշ անդամով։ Հիմա բոլորդ կարող եք գնալ։ Քունս տանում է։ Ես տասնմեկ տարեկան չեմ։ Ես վաթսունյոթ տարեկան եմ։

Բոլորը գնացին, բացի ինձնից։ Ես հապաղեցի ու տեսա, թե ինչպես ծերունին կոշիկները հանեց ու հառաչեց.

— Ախ, այս մազալու խենթ աշխարհի խենթ ու մազալու զավակները։

ԵՐԻՑԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՐԳԻՉՆԵՐԸ

Մեր երկրում ամենահետաքրքրական և զարմանահրաշ բաներից մեկն էլ այն է, թե ինչպիսի թեթևությամբ են մեր հայրենակիցները մի հավատից անցնում մեկ ուրիշ հավատի, կամ էլ՝ չդավանելով որևէ կրոնի, առանց որևէ շահի և ոչինչ չկորցնելով, ընդունում են առաջին պատահած դավանանքը, շարունակելով մնալ միևնույն լիակատար անգիտության մեջ։

Ահա ես, օրինակ, ծնված լինելով կաթոլիկի ընտանիքում, մինչև տասներեք տարեկանս մկրտված չեմ եղել, մի բան, որ սարսափելի զայրացնում էր մեր քահանային ու նա հանդիմանում էր ծնողներիս, թե վերջապես խելքները գլուխներո՞ւմ է, ի՞նչ են մտածում։ Ծնողներս էլ պատասխանում էին. «Մենք իսկի այստեղ չենք էլ ապրել»։

— Տասներեք տարեկան է ու մկրտված չէ,— ձայնը գլուխն էր գցում քահանան,— ի՞նչ մարդ եք դուք։

— Ընդհանրապես մենք հողագործ ժողովուրդ ենք,— պատասխանում էր իմ հորեղբայր Մելիքը,— թեև մեր մեջ էլ նշանավոր դեմքեր եղել են։

Վերջապես շաբաթ օրը ճաշից հետո ինձ հետ էլ այդ բանը տեղի ունեցավ։ Ամեն ինչ ավարտվեց յոթ րոպեում, բայց նույնիսկ մկրտվելուց հետո էլ իմ մեջ որևէ փոփոխություն չէի զգում։

— Դե՛,— ասաց տատս,— հիմա դու մկրտված ես։ Ավելի լավ ես զգում քեզ, չէ՞...

Պետք է ասեմ, որ մկրտվելուց մի քանի ամիս առաջ ես հանկարծ զգացի, որ բավական խելոքացել եմ և դա պատճառ դարձավ, որ տատս սկսի կասկածել, թե մի որևէ խորհրդավոր ցավով չե՞մ հիվանդացել արդյոք կամ խելքս չե՞մ թոցրել։

— Ոնց որ թե առաջվա նման եմ զգում,— պատասխանեցի ես։

— Դու ասա, հիմա հավատո՞ւմ ես,— ձայնը բարձրացրեց տատս,— թե՞ էլի կասկածներ ունես։

— Ինձ համար ամենահեշտ բանն է ասել, որ հավատում եմ, բայց ինչ մեղքս թաքցնեմ, ես էլ չգիտեմ։ Ինչ խոսք, ես ուզում եմ քրիստոնյա լինել։

— Տես, հա՞, հավատա ոնց որ պետքն է,— ասաց տատս ու հետո ավելացրեց.— Դե հիմա գնա գործիդ։

Իսկ իմ գործը բավական տարօրինակ գործ էր, ես կասեի՝ անհավատալի գործ։

Ես երգում էի Տուլարե սթրիթի երիցական եկեղեցու երգչախմբում։ Դրա համար շաբաթը մի դոլար էի ստանում Բալեյֆոլ ազգանունով մի քրիստոնյա տիկնոջից, որը զուսպ ու միայնակ կյանք էր վարում հմ ընկեր Կոլխազյանի տանը կից բաղեղապատ մի տնակում։ Այդ տղան էլ ինձ նման լեզվանի էր։ Այլ կերպ ասած, մենք անընդհատ պիղծ բաներ էինք խոսում ու հայհոյում, իհարկե, առանց հասկանալու, և դրանով այնքան էինք վշտացնում օրիորդ կամ դուցե և տիկին Բալեյֆոլին, որ նա որոշեց քանի ուշ չէ փրկել մեր հոգիները։ Ճիշտն ասած, ես դրան ամենևին էլ դեմ չէի։

Օրիորդ Բալեյֆոլը (սրանից հետո ես նրան միայն օրիորդ կասեմ, քանի որ մեր ծանոթության ժամանակ նա անկասկած միայնակ էր և հաստատ չեմ էլ կարող ասել, թե երբևէ ամուսնացած եղե՞լ էր և, ընդհանրապես, մտածե՞լ էր ամուսնության մասին, արդյոք եղե՞լ էր սիրահարված— ավելի վաղ հասակում իհարկե— եթե եղել էր, ապա անպայման մի սրիկայի, որն անշուշտ լուրջ չի ընդունել այդ բանը)... ինչպես ասացի, օրիորդ Բալեյֆոլը կրթված կին էր, կարդացել էր Ռոբերտ Բրաունինգի և այլ բանաստեղծների ոտանավորները և զգայուն հոգի ուներ։ Այնպես որ, մի անգամ արտասանդուղք դուրս գալով և մեր խոսակցությունը լսելով՝ չէր կարող չբացականչել. «Տղանե՞ր, տղանե՞ր, աստվածապիղծ խոսքեր մի՛ ասեք»։

Պանդրո Կոլխազյանը մի կողմից թեև անտաշ տղա էր երևում, բայց իրականում խելամիտ և շատ քաղաքավարի մարդ էր, մի բան, որի համար ես նրան սիրում էի։

— Լավ, օրիորդ Բալեյֆում,— ասաց նա։

— Բալեյֆոլ,— ուղղեց նրան լեզին։— Խնդրում եմ ինձ մոտ եկեք... երկուսդ էլ։

Մենք մոտեցանք օրիորդ Բալեյֆոլին և հարցրինք, թե ի՞նչ է կամենում։

— Ի՞նչ եք կամենում, օրիորդ Բալեյֆում,— հարցրեց Պանդրոն։

Օրիորդ Բալեյֆոլը ձեռքը վերարկուի գրպանը տարավ, մի տրցակ գրքույկ հանեց և առանց նայելու մի-մի հատ մեկնեց մեզ։ Իմ գրքույկը կոչվում էր «Քավություն։ Մի հարբեցողի պատմություն», իսկ Պանդրոյի գիրքը կոչվում էր «Թե ինչպես հանգստություն ձեռք բերել։— Մի հարբեցողի պատմություն»։

— Ի՞նչ անենք սրանք,— հարցրեց Պանդրոն։

— Ես ուզում եմ, տղաներ, որ դուք կարդաք այդ գրքերը և աշխատեք ուղղվել,— ասաց օրիորդ Բալեյֆոլը։— Ես ուզում եմ, որ դուք այլևս աստվածապիղծ խոսքեր չասեք։

— Այստեղ ոչինչ չկա աստվածապղծության մասին,— ասաց Պանդրոն։

— Այդ գրքերի մեջ լավ դաս կա ձեզանից յուրաքանչյուրի համար,— ասաց լեդին։— Կարդացեք և այլևս աստվածապիղծ բաներ չխոսեք։

— Լավ, մեմ,— ասացի ես։— Ուրիշ ոչի՞նչ։

— Մի բան էլ,— ասաց օրիորդ Բալեյֆոլը։— Դուք ինձ չէի՞ք օգնի նվագարանը ճաշասենյակից հյուրասենյակ տեղափոխելու։

— Անշուշտ, օրիորդ Բալեյֆոմ,— ասաց Պանդրոն։—Երբ որ ցանկանաք։

Եվ ահա մենք մտանք նրա տունը, և քանի դեռ նա մեզ խելք ու խրատ էր սովորեցնում, թե ինչպես անենք, որ գործիքը չջարդենք ու մենք էլ մեզ չքերծրտենք, կամաց-կամաց նվագարանը ճաշասենյակից տարանք հյուրասենյակ։

— Դե, ուրեմն, այդ գրքերը կկարդաք,— ասաց օրիորդ Բալեյֆոլը։

— Այո, մեմ,— ասաց Պանդրոն։— Ուրիշ ոչի՞նչ։

— Գիտե՞ք ինչ. ես կուզեի, որ դուք երգեք, իսկ ես էլ ձեզ համար կնվագեմ։

— Ես երգել չգիտեմ, օրիորդ Բալեյֆոմ,— ասաց Պանդրոն։

— Հիմարություն,— ասաց լեդին։— Իհարկե գիտեք, Պեդրո։

— Պանդրո և ոչ թե Պեդրո,— ասաց Պանդրոն։— Պեդրո իմ զարմիկի անունն է։

Իրականում Պանդրոյի անունը Պանթալո էր, որը հայերեն վարտիք էր նշանակում՝ պանթալոն։ Երբ Պանթալոն սկսեց դպրոց գնալ, ուսուցչուհուն, ըստ երևույթին, այդ անունը դուր չեկավ և նա իր ցուցակում «Պանդրո» գրեց։ Իսկ Պանդրոյի զարմիկի անունը Պետրոս էր։ Նրան էլ դպրոցում Պեդրո կնքեցին։ Ամեն ինչ կարգին էր, հասկանալի է, և դրանից ոչ օրի վնաս չհասավ։

Պանդրոյին չպատասխանելով, հարգարժան լեդին նստեց աթոռակին, ոտքերը դրեց գործիքի ոտնակներին և առանց մեզ որևէ բան ասե-

լու, սկսեց ինչ-որ մի երգ նվագել, որը, դատելով միապաղաղությունից, անշուշտ հոգևորական երգ էր։ Հետո նա սկսեց երգել։ Այստեղ Պանդրոն բավական անվայել, եթե չասենք անպատկառ, բան շշնջաց, որը բարեբախտաբար օրիորդ Բալեյֆոլը չլսեց։ Օրիորդ Բալեյֆոլի ձայնը, ինչպես ասում են, այնքան էլ տպավորիչ չէր։ Ոտնակներն այնպես էին ճռճռում, որ խլացնում էին նրա երգը, նվագարանի տոներն էլ ընկած էին և չնայած այդ ամենին, էլի երևում էր, որ օրիորդ Բալեյֆոլի ձայնը հրապուրիչ չէ։

— Գալիլե՛յ, լուսաշող Գալիլե՛յ,— երգեց նա և շրջվելով մեր կողմը, ասաց.

— Դե երգե՛ք, տղաներ, երգե՛ք։

Մենք ոչ բառերը գիտեինք, ոչ էլ եղանակը, բայց քաղաքավարությունը պահանջում էր, որ փորձենք, մի բան, որ մենք արեցինք՝ ամեն կերպ աշխատելով հարմարվել նվագարանից դուրս եկող երաժշտությանը և օրիորդ Բալեյֆոլի խոսքերին։

Մենք ընդամենը երեք երգ փորձեցինք երգել։ Ամեն մեկից հետո Պանդրոն ասում էր.

— Շնորհակալություն, օրիորդ Բալեյֆում։ Հիմա կարո՞ղ ենք գնալ։

Վերջապես օրիորդը ոտքի ելավ և ասաց.

— Հավատացած եմ, որ սա ձեզ համար օգտավետ կլինի։ Եթե ձեր շատ ընկերները կանչեն ձեզ խմելու, երես դարձրեք նրանցից։

— Մենք երես կդարձնենք նրանցից, օրիորդ Բալեյֆում,— ասաց Պանդրոն։— Ճի՞շտ է, Արամ։

— Ես որ երես կդարձնեմ,— ասացի։

— Ես էլ,— ասաց Պանդրոն։— Կարո՞ղ ենք գնալ։

— Այդ գրքերը կարդացեք,— ասաց նա։— Դեռ ուշ չէ։

— Կկարդանք,— ասաց Պանդրոն։— Հենց որ ազատ ժամանակ եղավ՝ կկարդանք։

Մենք հեռացանք օրիորդի տանից, եկանք Պանդրոյենց բակն ու սկսեցինք կարդալ նրա տված գրքերը։ Դեռ գրքի կեսին չէինք հասել, երբ լեդին դուրս եկավ արտասանդուղք և շատ բարձր ու հուզված ձայնով ասաց.

— Այդ ո՞ր մեկն էր ձեզանից։

— Ի՞նչն էր մեզանից որ մեկը,— հարցրեց Պանդրոն շփոթված։

— Ձեզանից ո՞ր մեկն էր երգում,— հարցրեց օրիորդ Բալեյֆոլը։

— Երկուսս էլ երգում էինք,— ասացի ես։

— Այդ դո՞ւ էիր,— դիմելով ինձ ասաց օրիորդ Բալեյֆոլը։— Ցուջին, դո՞ւ էիր երգում։

— Արամ, ոչ թե Ցուջին,— առարկեցի ես։— Չէ, չեմ կարծում, թե ես լիներ։

— Տղաներ, եկեք այստեղ,— ասաց օրիորդ Բալեյֆոլը։

— Մեզանից ո՞ր մեկը,— հարցրեց Պանդրոն։

— Երկուսդ էլ եկեք,— ասաց լեդին։

Երբ նորից հայտնվեցինք նրա տանը և օրիորդ Բալեյֆոլը նորից նստեց նվագարանի մոտ, Պանդրոն ասաց.

— Ես չեմ ուզում երգել։ Դա իմ դուրը չի գալիս։

— Դու երգիր,— ասաց ինձ լեդին։

Ես սկսեցի երգել։

Օրիորդ Բալեյֆոլը ոտքի թռավ.

— Դու ես, որ կաս,— ասաց նա։— Դու պիտի երգես եկեղեցում։

— Չե՛մ երգի,— ասացի ես։

— Անվայել բաներ մի՛ խոսիր,— ասաց նա։

— Ես անվայել բաներ չեմ խոսում,— ասացի ես։— Եվ խոստանում եմ՝ մինչև կյանքիս վերջը անվայել բաներ չեմ ասի, միայն թե եկեղեցում չեմ երգի։

— Քո ձայնը իմ լսած ձայներից ամենաքրիստոնեական ձայնն է,— ասաց օրիորդ Բալեյֆոլը։

— Ո՛չ,— պատասխանեցի ես։

— Այո՛,— պնդեց նա։

— Միևնույն է, ես չեմ երգի,— ասացի։

— Դու պարտավոր ես, պարտավոր ես,— կրկնում էր նա։

— Խորին շնորհակալություն, օրիորդ Բալեյֆոլ,— ասաց Պանդրոն։— Մենք հիմա կարո՞ղ ենք գնալ։ Նա եկեղեցում երգել չի ուզում։

— Նա պարտավոր է, պարտավո՛ր է։

— Ինչի՞ համար,— հարցրեց Պանդրոն։

— Հոգու փրկության համար,— ասաց լեդին։

Այստեղ Պանդրոն էլի անվայել բառ շշնջաց։

— Հապա մի ասա,— ինձ դիմեց լեդին։— Անունդ ի՞նչ է։

Ես ասացի։

— Դու. ինչ խոսք, քրիստոնյա՞ ես։

— Երևի։

— Երիցակա՞ն ես, իհարկե։

— Էդ մեկը չգիտեմ։

— Այո,— ասաց լեդին,— ինչ խոսք, երիցական ես։ Ես ուզում եմ, որ դու եկող կիրակի երգես Տուլարե սթրիթի վրա գտնվող երիցական եկեղեցում, պատանիների երգչախմբում։

— Ինչո՞ւ,— նորից հարցրեց Պանդրոն։

— Մենք լավ ձայնի կարիք ունենք,— բացատրեց լեդին։— Մեզ մատղաշ ձայներ են պետք։ Մենք խմբերգիչների կարիք ունենք։ Նա եկող կիրակի պետք է երգի։

— Ես երգել չեմ սիրում,— ասացի։— Եվ եկեղեցի գնալ էլ չեմ սիրում։

— Տղաներ,— ասաց օրիորդ Բալեյֆոլը,— նստեցեք, ես ձեզ հետ խոսելիք ունեմ։

Մենք նստեցինք։ Օրիորդ Բալեյֆոլն ամենաքիչը մի երեսուն րոպե խոսեց։

Մենք նրա ոչ մի բառին չհավատացինք, թեև բարեկրթորեն պատասխանում էինք նրա բոլոր հարցերին այնպես, ինչպես երևի ինքը կցանկանար լսել։ Բայց երբ նա առաջարկեց ծունկի իջնել, մինչև որ ինքը կաղոթի, մենք հրաժարվեցինք։ Օրիորդ Բալեյֆոլն ամեն կերպ աշխատում էր համոզել մեզ, բայց մենք, միևնույն է, չուզեցինք ծնկի իջնել։ Պանդրոն ասաց, որ մենք դեմ չենք նրա նվաստարանը ժամանակ առ ժամական մի տեղից մյուսը տեղափոխել, կամ նման մի ուրիշ բան անել նրա համար, բայց ծունկի իջնել չենք կարող։

— Դե լավ,— ասաց օրիորդ Բալեյֆոլը։— Իսկ կարո՞ղ եք աչքերդ փակել։

— Ինչի՞ համար,— ասաց Պանդրոն։

— Այդպես ընդունված է,— ասաց օրիորդ Բալեյֆոլը։— Երբ որևէ մեկն աղոթում է՝ աչքերը փակում է։

— Իսկ ո՞վ է աղոթում,— հարցրեց Պանդրոն։

— Հիմա դեռ ոչ ոք,— ասաց օրիորդ Բալեյֆոլը։— Եթե դուք խոստանաք աչքերդ փակել, ես կաղոթեմ։ Միայն թե դուք պետք է խոստանաք, որ կփակեք։

— Ինչի՞ մասին եք ուզում աղոթել,— հարցրեց Պանդրոն։

— Ձեզ համար կաղոթեմ, տղաներ,— ասաց նա։

— Ինչո՞ւ,— հարցրեց Պանդրոն։

— Մի փոքրիկ աղոթքը ձեզ վնաս չի տա,— ասաց օրիորդ Բալեյֆոլը։— Խնդրում եմ, փակեք ձեր աչքերը։

— Օ, շատ բարի,— ասաց Պանդրոն։

Մենք մեր աչքերը փակեցինք, և օրիորդ Բալեյֆոլն սկսեց աղոթել։ Աղոթքն այնքան էլ կարճ չէր, իհարկե։

— Ամեն,— ասաց լեդին վերջապես։— Հը՛, երեխաներ, դուք ձեզ ավելի լավ չզգացի՞ք։

Ճիշտն ասած, մենք բոլորովին էլ մեզ ավելի լավ չզգացինք։

— Այո, իհարկե,— ասաց Պանդրոն։— Օրիորդ Բալեյֆում, հիմա կարո՞ղ ենք գնալ։ Ցանկացած ժամանակ երբ ձեզ անհրաժեշտ լինի նվագարանը տեղից-տեղ շարժել, կանչեք, մենք կգանք։

— Երգիր ամբողջ հոգով,— ասաց ինձ օրիորդ Բալեյֆոլը։— Եվ երեսդարձրու քո այն վատ ընկերներից, որոնք կկանչեն քեզ խմելու։

— Լավ, մեմ,— ասացի ես։

— Դու գիտե՞ս, թե որտեղ է այդ եկեղեցին,— ավելացրեց նա։

— Ո՞ր եկեղեցին։

— Տուլարե սթրիթի երիցական եկեղեցին։

— Գիտեմ։

— Պարոն Շերվինը կիրակի առավոտյան ծամը ինն անց կեսին քեզ կսպասի,— ասաց նա։ Պարզ էր, որ ինձ վերջնականապես պատին են սեղմել։

Կիրակի օրը Պանդրոն ինձ հետ եկեղեցի եկավ, բայց դեռահասների երգչախմբում երգել չուզեց։ Նստած եկեղեցու վերջին նստարանին՝ նա հետևում էր մեզ ու լսում։ Ինչ վերաբերում է ինձ, ապա թեև երգում էի, բայց երբեք ինձ այդքան դժբախտ չէի զգացել։

— Ես այլևս այստեղ չեմ գա,— ասացի Պանդրոյին, երբ ամեն ինչ վերջացել էր։

Մյուս կիրակի ես, իհարկե, չգնացի, բայց դա չօգնեց ինձ, քանի որ օրիորդ Բալեյֆոլը նորից մեզ կանչեց իր տուն, սկսեց նվագել, երգել և մեզ էլ ստիպեց երգել, աղոթեց և պարզ երևում էր, որ ամեն գնով ուզում է ինձ պահել տղաների երգչախմբում։ Ես կտրականապես հրաժարվեցի, և օրիորդ Բալեյֆոլը որոշեց գործը դնել երկրային հիմքերի վրա։

— Դու արտակարգ քրիստոնեական ձայն ունես,— ասաց նա։— Մի ձայն, որի կարիքն զգում է եկեղեցին։ Դու ինքդ խորապես հավատացյալ ես, թեև դեռ չես գիտակցում այդ։ Քանի որ այդպես է, ես քեզ շատ եմ խնդրում, կիրակի օրերը երգիր ինձ համար։ Ես քեզ կվճարեմ։

— Ինչքա՞ն,— հարցրեց Պանդրոն։

— Հիսուն սենթ,— ասաց օրիորդ Բալեյֆոլը։

Սովորաբար տղաները չորս, հինգ սաղմոս էին երգում։ Դա ընդամենը մի կես ժամ էր տևում, բայց էլի պիտի մի ժամ նստեիր, քանի դեռ քահանան քարոզ էր կարդում։

Սարսափ ասած, դա ավելի թանկ արժեր։

Դրա համար էլ ես չկարողացա պատասխանել։

— Ցոթանասունհինգ սենթ,— առաջարկեց օրիորդ Բալեյֆոլը։

Եկեղեցու օդը տամուկ էր, քահանան տաղտկալի, մի խոսքով մահացու ձանձրույթ էր տիրում այնտեղ։

— Մի դոլար,— ասաց օրիորդ Բալեյֆոլը։— Եվ ոչ մի սենթ ավելի։

— Ավելացրեք ևս մի քառորդ դոլար,— առաջարկեց Պանդրոն։

— Մի դոլար և ոչ մի սենթ ավել,— ասաց լեդին։

— Երգչախմբում նրա ձայնն ամենալավն է,— ասաց Պանդրոն։— Մի դոլա՞ր։ Այդքան սքանչելի ձայնին ցանկացած եկեղեցում երկու դոլար կտան։

— Ես իմ առաջարկն արել եմ,— ասաց օրիորդ Բալեյֆոլը։

— Ուրիշ կրոններ էլ կան,— նկատեց Պանդրոն։

Դա հարգարժան լեդիին շատ վիրավորեց.

— Նրա ձայնը քրիստոնեական է, ավելին, երիցական ձայն է։

— Մկրտականները շատ ուրախ կլինեին երկու դոլարով նրա ձայնը ստանալու համար,— ասաց Պանդրոն։

— Մկրտականնե՞րը,— արհամարհանքով գոչեց օրիորդ Բալեյֆոլը։

— Նրանք երիցականներից բոլորովին էլ վատ չեն,— առարկեց Պանդրոն։

— Մի դոլար,— ասաց օրիորդ Բալեյֆոլը։— Մի դոլար և քո աղգանունը կլինի ծրագրի մեջ։

— Ես երգել չեմ սիրում, օրիորդ Բալեյֆոլ,— ասացի ես։

— Ոչ, սիրում ես,— առարկեց նա։— Այդ քեզ է թվում, թե չես սիրում։ Եթե դու երգելիս տեսնեիր քո դեմքը...

— Նա հրեշտակային ձայն ունի,— ասաց Պանդրոն։

— Հիմա էնպես կհասցնեմ որ,— ասացի Պանդրոյին հայերեն։

— Դա մի դոլարանոց ձայն չէ,— ասաց Պանդրոն։

— Լավ, տղաներ,— ասաց Բալեյֆոլը։— Մի դոլար և տասնհինգ սենթ և ոչ ավելին։

— Մեկ ու մի քառորդ դոլար,— ասաց Պանդրոն,— կամ էլ կգնանք մկրտականների մոտ։

— Թող այդպես լինի,— համաձայնեց օրիորդ Բալեյֆոլը։— Բայց պետք է ասեմ, որ լավ առևտուր անողներ եք։

— Մի բոպե,— միջամտեցի ես։— Ես չեմ երգի ոչ մեկ ու մի քառորդ դոլարով, ոչ էլ որևէ ուրիշ բանով։

— Պայմանը պայման է,— ասաց օրիորդ Բալեյֆոլը։

— Ես ոչ մի պայման էլ չեմ կապել,— ասացի։— Դա Պանդրոն է արել ու թող ինքն էլ երգի։

— Նա երգել չի կարող,— ասաց օրիորդ Բալեյֆոլը։

— Իմ ձայնն աշխարհի ամենազզվելի ձայնն է,— ասաց Պանդրոն։

— Նրա խղճուկ ձայնի համար ոչ ոք նույնիսկ տասը սենթ չի տա,— ասաց օրիորդ Բալեյֆոլը։

— Հինգ սենթ էլ չեն տա,— ասաց Պանդրոն։

— Ինչ որ է, ես եկեղեցում երգողը չեմ, ոչ մեկ ու մի քառորդ դոլարով և ոչ էլ սի որևէ ուրիշ բանով։ Ինձ ոչ մի փող պետք չէ։

—Դուք պայման կնքեցիք,— ասաց օրիորդ Բալեյֆոլը։

— Այո, կնքեցինք,— հաստատեց Պանդրոն։

Ես հենց այդտեղ, օրիորդ Բալեյֆոլի հյուրասենյակում նետվեցի Պանդրոյի վրա և մենք սկսեցինք կռվել։ Տարիքն առած քրիստոնյա լեդին փորձում էր մեզ բաժանել, բայց քանի որ կռվի մեջ չէր երևում, թե մեզանից որն է հրեշտակային ձայնով պատանին, նա սկսեց աղոթել։ Կռիվը շարունակվեց այնքան ժամանակ, մինչև որ սենյակում բացի նվագարանից ամեն ինչ տակն ու վրա եղավ։ Պայքարն ավարտվեց ոչ ոքի, հոգնած ու ջարդված ըմբիշները տապալված էին հատակին։

Օրիորդ Բալեյֆոլը դադարեցրեց աղոթքը և ասաց.

— Ուրեմն կիրակի օրը մեկ և քառորդ դոլարով։

— Օրիորդ Բալեյֆոլ,— ասացի ես։— Ես եկեղեցում կերգեմ, եթե միայն Պանդրոն էլ երգի։

— Բայց նա սարսափելի ձայն ունի,— ասաց օրիորդ Բալեյֆոլը։

— Իմ գործը չէ,— ասացի ես։— Եթե ես երգելու եմ, նա էլ պիտի երգի։

— Վախենամ թե նա ամբողջ երգչախումբը փչացնի,— նկատեց լեդին։

— Նա ամեն կիրակի պիտի ինձ հետ այնտեղ գնա, թե չէ գործը գլուխ չի գա։

— Լավ, թողեք մտածեմ,— հառաչելով ասաց օրիորդ Բալեյֆոլը։ Նա սկսեց բարձրաձայն խորհրդածել.

— Ընդունենք, թե Պանդրոն էլ կգնա ու կկանգնի երգչախմբի հետ,— ասաց նա,— բայց չի երգի։ Ընդունենք, որ նա միայն կձևացնի, թե երգում է։

— Ինձ համար մեկ է,— ասացի ես։— Միայն թե նա միշտ պիտի այնտեղ լինի։

— Իսկ ես ի՞նչ կստանամ դրա համար,— հարցրեց Պանդրոն։

— Ո՞նց թե... այդ էր պակաս, որ դրա համար ես քեզ վճարեի,— ասաց օրիորդ Բալեյֆոլը։

— Եթե ես գնալու եմ՝ դրա համար պիտի փող ստանամ,— ասաց Պանդրոն։

— Լավ,— ասաց օրիորդ Բալեյֆոլը։— Մի դոլար նրան, ով պիտի երգի, քառորդ դոլար էլ նրան, ով պիտի լռի։

— Իմ ձայնն աշխարհի ամենավատ ձայնն է,— հիշեցրեց Պանդրոն։

— Դու պիտի խելացի լինես,— ասաց օրիորդ Բալեյֆոլը։— Վերջիվերջո դու միայն պիտի կանգնես մյուս տղաների կողքին։

— Քսանհինգ սենթը քիչ է,— ասաց Պանդրոն։

Մենք հատակից բարձրացանք ու սկսեցինք կահույքը կարգի բերել։

— Լավ,— ասաց օրիորդ Բալեյֆոլը։— Մի դոլար՝ երգողին, երեսուն սենթ՝ լսողին։

— Գոնե հիսուն սենթի հասցրեք,— խնդրեց Պանդրոն։

— Շատ լավ,— ասաց օրիորդ Բալեյֆոլը։— Մի դոլար՝ քեզ, հիսուն սենթ՝ քեզ։

— Մենք սկսում ենք աշխատել հաջորդ կիրակի՞,— հարցրեց Պանդրոն։

— Այո,— ասաց լեդին։— Ես ձեզ կվճարեմ այստեղ, եկեղեցուց հետո։ Եվ երգչախմբի տղաներից ոչ ոքի չասեք։

— Մենք ոչինչ չենք ասի,— խոստացավ Պանդրոն։

Այսպիսով, իմ կյանքի տասնմեկերորդ տարում ես ինչ-որ չափով երիցական դարձա, գոնե կիրակի օրերը։ Դա փողի համար չէր, այլ միայն նրա համար, որ պայմանը պայման է և մեկ էլ նրա համար, որ օրիորդ Բալեյֆոլը մտքին դրել էր, որ ես պիտի երգեմ հանուն հավատի։

Ինչպես քիչ առաջ ասացի, զարմանահրաշ բան է, թե մեր երկրում մարդիկ ինչպիսի հեշտությամբ են փոխում իրենց հավատը առանց որևէ կորստի ու որևէ բան շահելու։

Տասներեք տարեկան էի, երբ ինձ կնքեցին հայկական կաթոլիկ եկեղեցում, չնայած որ ես դեռ երգում էի երիցական երգչախմբում, քննադատաբար էի վերաբերվում եկեղեցական ծիսակատարություններին և ձգտում էի յուրովի բացատրվել տեր աստծու հետ և ամենակարողի հետ համաձայնության գալ իմ սեփական ճանապարհով։ Նույնիսկ մկրտվելուց հետո ես իմ հոգում խոր անբավարարվածություն ունեի։ Մկրտվելուց երկու ամիս անց ձայնս կտրվեց և օրիորդ Բալեյֆոլի հետ կնքած պայմանը ի չիք եղավ։ Ինձ համար դա մեծ թեթևություն էր, իսկ նրա համար՝ սարսափելի հարված։

Ինչ վերաբերում է Վենտուրա ավենյուի վրայի հայկական կաթոլիկ եկեղեցուն, ապա ես այնտեղ լինում էի միայն Ննդյան և Զատկի տոներին։ Մնացած ժամանակ ես մի կրոնից մյուսն էի անցնում, և, վերջի-

վերջո, դրանից ավելի վատը չդարձա, այնպես որ հիմա ամերիկացիների մեծամասնության նման ես էլ ցանկացած դավանանքը ընդունում եմ, իմ սեփականն էլ հետը, առանց որևէ մեկի նկատմամբ չարակամություն ունենալու, քանի որ մեկ է՝ հավատում ես, չես հավատում, միայն թե լավ մարդ լինես։

ԿՐԿԵՍԸ

Բավական էր կրկեսը գար մեր քաղաք, որպեսզի ես ու իմ հին ընկեր Ջո Բենան, ինչպես ասում են, թոկից փախչեինք։ Ցանկապատերին ու ցուցափեղկերին կպցրած ազդագրերը տեսնելուն պես մենք բոլորովին ձեռքից գնում էինք ու մեր ուսումն էլ բանի տեղ չէինք դնում։ Կրկեսը դեռ քաղաք չհասած՝ ես ու Ջոն արդեն սկսում էինք կասկածի տակ առնել ուսումնառության որևէ մեկին երբևէ տված օգուտը։

Էլ չեմ ասում՝ երբ կրկեսն իսկապես քաղաք էր մտնում։ Այստեղ մենք արդեն խելքներս կորցնում ու առավոտից իրիկուն նախ կայարանում ցցված նայում էինք, թե ինչպես են իջեցնում կենդանիներին, հետո Վենտուրա փողոցն ի վեր ուղեկցում էինք առյուծների ու վագրերի վանդակները և, վերջապես, զվռնելով կրկեսի շուրջը, փորձում շահել վարժեցնողների, բանվորների, ակրոբատների ու ծաղրածուների սիրտը։

Կրկեսը մեզ համար այն ամենն էր, ինչ մնացած ամեն ինչը չէր։ Այն արկած էր, վտանգ, ճանապարհ, շնորհք, անուրջներ, զավեշտ, նուշ, ադի-բուդի, ծամոն ու գաղով ջուր։ Մենք փղերի համար ջուր էինք քարշ տալիս ու հետո ոտքներս կախ գցում, որ գոնե թվար, թե ինչ-որ կապ ունենք այդ ամբողջ հրաշագործությանը՝ ահռելի տաղավարը կանգնեցնելուն, ամեն ինչ կարգի բերելուն ու աշխարհ տեսածների պես սպասելուն, որ հանդիսականները գան քամուն տալու իրենց փողերը։

Մի օր Ջոն տասը բոպե ուշացումով ներխուժեց էմերսընի անվան մեր գպրոցի հինգերորդ դասարանն ու, առանց գլխարկը հանելու կամ իր ուշացումը բացատրելու, գոռաց.

— Հո չես գժվել, Արամ, ինչ գործ ունես էստեղ՝ կրկեսն արդեն եկել է։

Բոլորովին մտքիցս թռել էր։ Ես վեր ցատկեցի ու դասարանից դուրս թռա, մինչ խեղճ միս Ֆլիբբին հետևիցս ճչում էր.

— Արամ Ղարոզլանյան, չհամարձակվես դուրս գալ։ Լսո՞ւմ ես ինձ, Արամ Ղարոզլանյան։

Ես իհարկե լսում էի և գիտեի, թե փախուստս ինչ պիտի նշանակեր՝ ևս մի լավ ծեծ ծերուկ Դոուսընի ձեռքից։ Բայց ինչ անեի, ուրիշ ճար չկար։ Կրկեսի համար խելքս գնում էր։

— Մեռա քեզ փնտրելով,— վրա տվեց Ջոն փողոցում,— ո՞ւր էիր կորել։

— Մոռացել էի,— ասացի,— գիտեի, որ գալու են, բայց օրը չէի հիշում։ Հիմա ո՞ւր են։

— Հինգին կայարանում դիմավորեցի,— ասաց Ջոն,— յոթից արդեն տեղում էինք և ես նրանց հետ նախաճաշեցի։

— Ճի՞շտ, Ջո,— ասացի,— Ո՞նց էին։

— Լավ տղերք են, ասացին մի երկու տարուց արդեն ինձ էլ հետները կտանեն։

— Որպես ի՞նչ,— հարցրի,— առյուծ վարժեցնո՞ղ։

— Երևի չէ,— ասաց Ջոն,— սկզբում երևի բանվոր վերցնեն, մինչև սովորեմ ծաղրածուություն անել կամ դրա պես մի բան։ Խելքս չի կըտրում, թե հենց սկզբից առյուծներից գլուխ կհանեմ։

Մենք Վենտուրա փողոցով մոտենում էինք կրկեսին, որը սովորաբար հանգրվանում էր հիվանդանոցի ու տոնավաճառի հրապարակի միջև։

— Այ թե նախաճա՞շ էր,— հիշեց Ջոն,— կարկանդակներ, ապուխտով ձվածեղ, երշիկ ու սուրճ։

— Ու ինձ չասեցիր, չէ՞։

— Ես ինչ իմանայի, որ դու չգիտես։ Ես կարծում էի անցյալ տարվա նման կայարանում կսպասես։ Բա ես չէի՞ ասի, որ իմանայի։ Իսկ ո՞նց պատահեց, որ մոռացար։

— Չգիտեմ,— ասացի,— պատահեց էլի։

Ճիշտ չէի ասում, բայց այդ պահին ճիշտը ինքս էլ դեռ չգիտեի։ Ես ոչինչ չէի մոռացել։ Ավելի շուտ՝ հիշել էի որոշ բաներ։ Ճիգ էի գործադրել ու հիշել անցյալ տարի կրկես փախչելու համար ծերուկ Դոուսընից կերած փառավոր ծեծը։ Այդ հուշը ստիպել էր ինձ քնած մնալ առավոտյան չորսն անց կեսին, երբ ես օրենքով պիտի հագնվելիս լինեի ու կայարանի ճամփան բռնած։ Ես այդ ժամանակ դեռ չէի հասկանում, որ պատճառը ծեծի հիշողությունն էր։ Սովորաբար ես ու Ջոն ծեծն ընկալում էինք որպես մեր արարքների բնական հետևանք՝ եթե դասից անհարգելի բացակայելն ապօրինի էր և դրա համար ըստ խնամակալ խորհրդի պատիժ էր հասնում, և եթե մենք գործում էինք դասից փախչելու հանցանքը, ուրեմն խնամակալ խորհուրդն իրավասու էր քեֆն ուզածի պես մեր հախից գալ։ Սովորաբար նրանք ընտրում էին ծեծը։

Ճիշտ է, մեկ-մեկ էլ սպառնում էին ինձ ու Ջոյին Ուղղիչ դպրոց ուղարկել, բայց դե երբեք չէին ուղարկում։

— Կրկե՞ս,— ասում էր ծերուկ Դոուսընը,— Հա՜, կրկե՜ս, ապա մի կռացիր, տղաս։

Սկզբից կռանում էր Ջոն, հետո էլ՝ ես ու ծերուկ Դոուսընը սկսում էր մի լավ մարզել իր ուսերը, մինչ մենք աշխատում էինք լոռնալ։ Մի հինգ-վեց հարված դեռ դիմանում էինք, բայց հետո սկսում էինք մարտական ճիչ արձակող հնդկացիների պես ոռնալ։ Մեր ձայնը լսվում էր ամբողջ դպրոցով մեկ, ու ծերուկ Դոուսընը, երբ մեր հանդիպումներն արդեն սկսեցին կանոնավոր բնույթ ստանալ, ամեն անգամ մեզ քաղաքավարի խնդրում էր քիչ աղմկել, քանի որ մենք դպրոցում ենք գտնըվում և մարդիկ այստեղ սովորելու են գալիս։

— Պետք է ուրիշների մասին էլ մտածել,— հորդորում էր ծերուկը,— չէ՞ որ նրանք ջանում են ինչ-որ բան սովորել։

— Ինչ անենք,— ասում էր Ջոն,— ցավում է, չէ։

— Գիտեմ,— ասում էր ծերուկ Դոուսընը,— բայց իմ կարծիքով գոյություն ունի չափավորություն կոչված բանը, և ես վստահ եմ, որ ուրիշների մասին չմտածող տղան կարող է նաև չափազանցել իր աղաղակը։ Աշխատեք փոքր-ինչ մեղմացնել ձեր սոսկալի ոռնոցը, ինձ թվում է դա ձեր ուժերից վեր չէ։

Ապա նա Ջոյին քսան հարված էր հասցնում, ու Ջոն աշխատում էր ինչքան կարելի է քիչ ոռնալ։ Մեծից հետո Ջոյի դեմքը կարմրում էր, իսկ ծերուկ Դոուսընն ուժասպառ էր լինում։

— Ո՞նց էր,— ասում էր Ջոն։

— Շատ ավելի լավ,— ասում էր Դոուսընը,— քեզնից իմ երբևէ լսած ամենից բարեկիրթ ոռնոցն էր։

— Ես ջանք չէի խնայում,— ասում էր Ջոն։

— Շնորհակալ եմ քեզնից,— ասում էր ծերուկ Դոուսընը։ Նա շատ հոգնում էր ու շունչը ոչ մի կերպ չէր կարողանում տեղը բերել։ Իսկ ես մոտենում էի նրա առջևի աթոռին, որը նման դեպքերում ծառայում էր մեր տանջանքները թեթևացնելու նպատակին, և համապատասխան դիրք ընդունում։

— Սպասիր, Արամ,— ասում էր ծերուկ Դոուսընը,— թող մի քիչ շունչ քաշեմ, ես քսաներեք տարեկան չեմ, ես վաթսուներեք եմ։ Թող հանգստանամ։

— Լավ,— ասում էի,— բայց ես կուզեի շուտ վերջացնել։

— Շատ բարձր չոռնաս,— զգուշացնում էր նա,— փողոցի ան-

ցորդները կմտածեն, թե այստեղ իսկական մի զնդան է։ Մի՞թե այդքան շատ է ցավում։

— Ջոյին հարցրեք,— ասում էի ես։

— Ի՞նչ կասես, Ջո,— դիմում էր նրան Դոուսընը,— դուք չե՞ք շափսազանցում, տղաներ։ Գուցե ուզում եք դասարանցիներից մեկնումեկի վրա տպավորությո՞ւն գործել։ Ասենք, որևէ աղջկա։

— Մենք ոչ մի տպավորություն գործել չենք ուզում, միստր Դոուսըն,— ասում էր Ջոն,— ընդհակառակը, մենք ամաչում ենք մեր ոռնոցներից և չէինք ոռնա, եթե ճար լիներ։ Թող Արամն ասի։

— Այդ ոռնոցներից հետո մենք նույնիսկ անհարմար ենք զգում դասարան մտնել,— ասում էի ես։— Մենք չէինք ոռնա, եթե դիմանայինք։

— Դե լավ,— ասում էր ինձ ծերուկ Դոուսընը,— եթե քեզնից գլխից վեր բան չեմ ուզում, փորձիր միայն մի քիչ ցածր գոռալ։

— Կաշխատեմ, միստր Դոուսըն,— ասում էի ես։— Տեղն ընկա՞վ ձեր շունչը։

— Հիմա,— ասում էր ծերուկ Դոուսընն ու, մի քիչ էլ հանդստանալով, հացնում էր ինձ իմ քսան հարվածը։ Ես Ջոյից բարձր էի ոռնում, իսկ հետո միասին վերադառնում էինք մեր դասարանն ու ամոթից կարմրում, որովհետև բոլորը մեզ էին նայում։

— Էլ ի՞նչ կուզեիք,— ընդվզում էր Ջոն,— մեր կերած քսան հարվածից ձեզնից ով ասես տեղնուտեղը շանսատակ կլիներ։ Դուք ոչ թե մի քիչ կոռնայիք, այլ շունչներդ կփչեիք։

— Բավական է,— ասում էր միսս Ֆլիբբթին։

— Ինչ, կարո՞ղ է սուտ եմ ասում,— շարունակում էր Ջոն,— մեկդ մյուսից թուլամորթ եք։ Կրկեսը եկել է, իսկ սրանք ո՞ւր գնան, որ լավ լինի՝ գնում են դպրոց։ Ոչ թե կրկես, այլ՝ դասի։

— Հերի՛ք եղավ,— կրկնում էր միսս Ֆլիբբթին։

— Մի սրանց նայեք, ի՞նչ են աչքները մեզ վրա չռել,— գրգռվում էր Ջոն։

Միսս Ֆլիբբթին բարձրացնում էր ձեռքը, որ Ջոյին խաղաղեցնի։

Հիմա կրկեսը նորից է եկել, մի ամբողջ տարի անցավ, նորից ապրիլ է ու մենք միասին դասից փախել ենք կրկես։ Միայն թե այս անգամ ամեն ինչ ավելի վատ է դասավորվում, որովհետև դպրոցում մեզ տեսել են ու հաստատ գիտեն, որ փախել ենք կրկես։

— Ինչ ես կարծում, Սթաֆբրդին մեր հետևից կուղարկե՞ն,— ասացի ես։

Սթաֆբրդը հատուկ դասից փախչողներով զբաղվող վերակացուն էր։

Ուղարկեն չուղարկեն, միշտ էլ կարող ենք տոմիկ տալ,— ասաց Ջոն,— եթե գա, ես մի կողմ կծլկեմ, դու՝ մյուս։ Նա հո չի կարող երկուսիս հետևից էլ ընկնել։ Գոնե մեկնումեկս կփրկվի։

— Լավ,— ասացի ես,— իսկ մյո՞ւսը։

— Մի բան կմտածենք,— ասաց Ջոն,— ասենք մեկը բռնվեց, մյուսը կարող է մեղա գալ կամ էլ փչացնել Սթաֆբրդի մեքենան։

— Ես քվեարկում եմ փչացնելու օգտին։

— Ես էլ,— ասաց Ջոն,— ուրեմն փչացնում ենք։

Երբ մենք հասանք կրկեսի տեղը, մի երկու փոքր վրան արդեն խփված էր, իսկ մեծ տաղավարը դեռ նոր էին կանգնեցնում։ Մենք լուռ նայում էինք ու զմայլվում։ Մի բուռ թափառականների տեսքով մարդիկ գլուխ էին բերում երևի մի հարյուր հոգու աշխատանք և այն էլ ինչպե՞ս։ Հանկարծ նրանցից մեկը, որին բոլորը Կյաժ էին կանչում, բղավեց ինձ ու Ջոյին.

— Հեյ, փսլնքոտներ, ապա մի օգնեք։

Ես ու Ջոն մոտ վազեցինք։

— Այո, սըր։

Նա մի կարճահասակ լայնաթիկունք մարդ էր՝ շատ մեծ ձեռքերով։ Բայց հնչ կարճահասակի տեսք չուներ, որովհետև շատ մկանուտ էր ու գլխին էլ լիքը կարմիր մազ ուներ։ Մի խոսքով, մեր աչքին հսկա էր երևում։

Նա ինձ ու Ջոյին մի պարան տվեց, որի մյուս ծայրը կապած էր գետնին փռած բրեզենտի ծածկին։

— Եղածը մի բան չի,— բացատրեց նա,— հիմա տղաները կբռնկեն սյունը, իսկ դուք պիտի այս պարանը քաշեք, որ բրեզենտը սյունի հետ բարձրանա։

— Պարզ է, սըր,— ասաց Ջոն։

Մեկ էլ գործի ամենաթեժ պահին տեսանք Սթաֆբրդին։

— Հիմա հո չե՞նք փախչելու,— ասացի ես։

— Թող գա,— ասաց Ջոն,— մենք Կյաժին խոսք են տվել օգնել՝ պիտի օգնենք։

— Իմացա,— ասացի ես,— մենք նրան կասենք, որ հենց ծածկը ձգեցինք, կգանք։ Հետո կծլկենք։

— Եղավ,— պատասխանեց Ջոն։

Սթաֆբրդը զուսպ կոստյում հագած, ճակնդեղի պես կարմիր դեմքով խոշոր մի տղամարդ էր, որն ասես ծնված լիներ փաստաբան կամ դրա պես մի բան լինելու համար։

— Բռնվեցիք, խուլիգաններ,— ասաց նա,— դե, շուտ եկեք ինձ հետ։

— Մենք խոստացել ենք օգնել,— ասաց Ջոն,— ծածկը ձգենք թե չէ, անպայման կգանք։

Սայթաքելով ու վայր ընկնելով, ես ու Ջոն ամբողջ ուժով ձգում էինք պարանը։ Ոչ ոք գլուխ չէր պահում, իսկ Կյաժն անընդհատ հրահանգներ էր տալիս։ Վերջապես գործը հաջողվեց, և դրա մեջ կար նաև մեր վաստակը։

Մենք նույնիսկ չսպասեցինք, թե Կյաժը մեզ ինչ կասի՝ գուցե նույնիսկ հրավիրեր մեզ իրենց հետ ճաշելու։

Ջոն նետվեց մի կողմ, իսկ ես՝ մյուս, և Սթաֆըրդն ընկավ իմ հետևից։ Կրկեսի ժողովուրդը քիչ էր մնում ծիծաղից պայթեր, իսկ Կյաժը սկսեց գոռալ.

— Հուպ տուր, տղաս, փախիր։ Նա քեզ կյանքում չի բռնի, թուլամորթի մեկն է, փուքսը չի հերիքի։ Մի լավ վազացրու, թող յուղերը հալի։

Հետևիցս լսվում էր Սթաֆըրդի փնչոցն ու զայրացկոտ հայհոյանքները։

Բայց ես նրանից խույս տվեցի ու մնացի թաքնված, մինչև համոզվեցի, որ նա իր ֆորդով թողեց-գնաց։ Հետո վերադարձա կրկես ու գտա Ջոյին։

— Այս անգամ մեր բանը բուրդ է,— ասաց նա։

— Երևի արդեն Ուղղիչ դպրոց ուղարկեն,— ասացի ես։

— Չէ, ավելի շուտ երեսուն հատ կերցնեն։ Ո՞նց ենք ոռնալու։ Երեսունն արդեն հանաք բան չի, նույնիսկ եթե վաթսուներեք տարեկան մեկից ստանաս։ Առանձնապես մի թույլն էլ չի։

— Երեսո՞ւն,— ասացի ես,— հաստատ զոռցս գցելու եմ։

— Ես էլ երևի զոռամ,— ասաց Ջոն,— սկզբում կարծում ես տասից էլ լաց կլինես, հետո դիմանում ես մինչև տասնմեկը, հետո տասներկուսը ու հա մտածում, որ հաջորդին էլ չես դիմանա։ Ինչ որ է, մենք դեռ ոչ մի անգամ չենք զոռացել։ Բայց դե երեսունն ուրիշ բան է։

— Վաղը կտեսնենք,— ասացի ես։

Կյաժը մեզ ուրիշ գործեր էլ տվեց անելու, իսկ հետո իր հետ նրատեղերեց ճաշի։ Հոյակա՜պ ճաշ էր։ Հետո մի քիչ զավզակություն արինք իսպանացի ակրոբատների ու մի իտալացի ընտանիքի հետ, որը ձիեր էր վարժեցնում։ Մենք նայեցինք և՛ ցիրեկային, և՛ երեկոյան ներկայացումները, հետո նորից օգնեցինք կրկեսը քանդել, ճանապարհ դրինք

մինչև կայարան ու գնացինք տուն։ Ես շատ ուշ տուն հասա ու առավոտյան դասի գնալուց դեռ քունը գլխիս էր։

Մեզ արդեն սպասում էին։ Միսս Ֆլիբբթին նույնիսկ մեզ չթողեց նստել ներկա-բացակային ու տեղնուտեղն ուղարկեց տնօրենի մոտ։ Ծերուկ Դոուսընն էլ սպասում էր մեզ գազազած Սթաֆբրդի հետ միասին։

Ես մտածեցի՝ այ էստեղ մեզ հաստատ ուղարկեցին Ուղղիչ դպրոց։

— Խնդրեմ, ժամանեցին,— ասաց Սթաֆբրդին Դոուսընը,— կարող եք տանել, եթե ուզում եք։

Իսկույն երևում էր, որ մեր գալուց առաջ նրանք արդեն խոսել էին և իրար հետ չէին բարիշել։ Ծերուկ Դոուսընը գրգռված էր, իսկ Սթաֆբրդը կարծես զայրացած լիներ նրա վրա։

— Այս դպրոցում ե՞ս եմ սահմանում պատիժը,— ասաց Դոուսընը,— և ուրիշ ոչ մեկը։ Սակայն ես իհարկե չեմ կարող ձեզ արգելել նրանց Ուղղիչ դպրոց տանել։

Սթաֆբրդն առանց մի բառ ասելու դուրս եկավ։

— Դե, տղաներ,— դիմեց մեզ Դոուսընը,— եղած չեղածը պատմեք։

— Մենք նրանց հետ միասին ճաշեցինք,— վրա տվեց Ջոն։

— Ապա տեսնենք սա ձեր որերորդ զանցանքն է, տասնվե՞ցերորդ, թե տասնյո՞թերորդ։

— Ի՞նչ եք ասում,— առարկեց Ջոն,— հազիվ տասնմեկ կամ տասներկուերորդը լինի։

— Համենայն դեպս ես համոզված եմ, որ սա այն դեպքն է,— ասաց ծերուկ Դոուսընը,— երբ ձեզ արդեն երեսուն հարված է հասնում։

— Ինձ թվում է,— ասաց Ջոն,— որ դա երևի հաջորդ անգամը պիտի լինի։

— Այդ մեկը չեղավ,— ասաց ծերուկ Դոուսընը,— մենք իհարկե հաշիվն արդեն կորցրել ենք, բայց ես վստահ եմ, որ երեսունի հերթը հենց հիմա է։ Ո՞վ կլինի առաջինը։

— Ես,— ասացի։

— Լավ, Արամ, ամուր բռնվիր աթոռից, պինդ կաց ու աշխատիր ոռնոցդ կառավարել։

— Եղավ, սըր,— ասացի ես,— ես կաշխատեմ, բայց դե երեսունը երեսուն է։

Զարմանալի բան պատահեց։ Ես իմ հասանելիք հարվածները կերա ու հետն էլ ինչպես հարկն է ոռնացի, բայց՝ չափավոր։ Դա իմ երբևէ

ոռնած ամենից չափավոր ոռնոցն էր, որովհետև ծեծն էլ թեթև էր։ Ես ուղիղ երեսուն հարված հաշվեցի, բայց ոչ մեկը չէր ցավում, ու ես չզուացի, ինչպես կարծում էի։

Նույնն էլ Ջոյի հետ եղավ։ Վերջում կանգնած սպասում էինք, որ մեզ բաց թողնեն։

— Անչափ երախտապարտ եմ ձեզ, տղաներ,— ասաց ծերուկ Դոուսընը,— ձեր ոռնոցն այդքան հաջող ղեկավարելու համար։ Ես չէի ցանկանա, որ լսողները կարծեին, թե ձեզ այստեղ մորթում են։

Մենք նույնպես ցանկացանք շնորհակալություն հայտնել նրան մեզ այդքան մեղմ ծեծելու համար, բայց ոչ մի բառ ասել չկարողացանք։ Երևի նա մեր վիճակը հասկացավ, որովհետև ժպտաց հատուկ մի ժպիտով, ասես ամեն ինչ գիտեր։

Մենք դասարան վերադարձանք սքանչելի տրամադրությամբ, որովհետև գիտեինք, որ այսուհետև ամեն ինչ լավ է լինելու։ Մինչև սեպտեմբերի տոնավաճառը։

ԿՐԹՎԱԾ ՆՊԱՐԱՎԱՃԱՌԸ ԼՈՂՈՐԴ ԵՐԵՔ ՏՂԱՅԻ ԱՌՋԵՎ

Մեծ հովտի հեղեղատները կլոր տարի ցամաք էին, բայց գարնան մի կարճ ժամանակ լցվում ու խեղդվում էին։ Սիեռա-Նեվադայի բլուրներում գարնան ձնհալը հազիվ սկսված՝ ամբողջ հովիտը զարթնում ու որոտում էր, աստված գիտի որտեղից կրիաներ էին գալիս, գորտեր, ջրաօձեր, ձկներ։ Գարնան ջրերը հորդում էին և ջրերի հետ սրտերն էին շտապում, ապա ծաղկունքը փոխվում էր խոնարհ պտուղների, հովիտը խամրում էր, մեղմ արևը ծանր շոգ էր դառնում, ջրերը նվազում էին և մեր սրտերը՝ թմրում։

Լեռնային ձնհալի ջրերը սառն ու անհյուրընկալ էին, և գետափի մենակ տղան, եթե անգամ հրապուրվել ու հանվել էր, հազիվ թե ջուրը նետվեր։ Տղաների խումբը սովորաբար գետափին գալիս մոլորվում ու երկար նայում էր ջրին և հետո հանկարծ հմայվելով՝ մեկն արագ մերկանում ու վազքի միջից գետն էր սուզվում, շնչահատ ելնում երես և լող տալիս դեպի մյուս ափը։ Նրա ետևից խմբի տղաներն առանց մտածելու ջուրն էին ցատկում, որպեսզի հետո գետից տրտում չհեռանային։ Ջրի միայն սառնությունը չէր վանող. գարնան գետը ամբողջ հովտի ջրերը քշելու իր ծանր հոգսին էր, տղայական բաների հետ ասես գլուխ չուներ, իրեն բարեկամի պես չէր պահում։

Մի ապրիլի ես Թոմսոնի խրամ գնացի իմ զարմիկ Մուրադի ու

նրա Ջոն Բեթթենքուրթ ընկերոջ հետ։ Ջոն պորտուգալացի էր և ազատությունից ու մաքուր օդում թափառելուց զատ աշխարհում ուրիշ բան չէր սիրում։ Դպրոցն ու դասարանը նրան ճնշում ու բթացնում էին։ Բայց հենց դպրոցից ու նրա սահմաններից դուրս էինք գալիս, Ջոն բացվում, բարիանում, դառնում էր նույն լավ ընկերը։ Իմ զարմիկ Մուրադն ասում էր. «Ջոն բթամիտ չի, Ջոն ուղղակի չի ուզում սովորել»։ Շաբաթ օրվա մի արև առավոտ էր։ Մենք երեքով տասը սենթ ունեինք և ապխտերշիկի երկուական սանդվիչ։ Որոշել էինք ճամփա ընկնել այն հաշվով, որ մինչև խրամ հասնելը կեսօր լիներ ու ջուրն արդեն տաքացած։ Մենք գնացինք Մալագայի խճուղով՝ Կալվա տանող երկաթգծի կողքով, հետո խաղողի այգիների միջով կտրեցինք դեպի արևելք։

Թոմսոնի խրամ մենք գետի կանգնած տեղին էինք ասում. դա սկսվում էր գյուղական ճանապարհների խաչմերուկից, ուր փայտե կամուրջն ու արդելափակոցն էին, և հոսանքն ի վար մոտ երկու մղոն ձորով էր գնում, ուր ամբարտակի պատնեշը և փայտե մյուս կամուրջն էին։ Ամբարտակից արևմուտք արոտներ էին, չափարների մեջ ձիեր ու կովեր էին արածում, արևելյան կողմով միջգյուղային ճանապարհների մայրուղին էր անցնում ու գետի հետ երկար մղոններ հարավ ձգվում։ Եթե ամռան ծանծաղը խանգարում էր լողալ խրամն ի վար մինչև կամուրջ, խոտերին պառկած այնտեղ շունչ առնել և հոսանքն ի վեր ետ լողալ՝ ինչն արդեն մի փառահեղ շարշարանք էր, լողի բավականությունը թերատ էր համարվում։

Երբ տեղ հասանք, առավոտյան արևոտ օրը ձմռան ցերեկի պես մռայլ էր, երկինքը մթնում ու ամպրոպ էր կուտակում, ջուրը խուլ վընգում էր, օդը սառն ու տհաճ էր, Թոմսոնի խրամն անմարդաբնակ ամայություն էր թվում։

— Այսքան ճանապարհն անցնելուց հետո անձրև գա չգա՝ ես միևնույն է լողանալու եմ,— ասաց Ջոն Բեթթենքուրթը։

— Ես էլ։

— Դու դեռ սպասիր,— ասաց Մուրադ զարմիկս,— մենք մտնենք տեսնենք ինչ է լինում՝ դու հետո կմտնես։ Բայց դու իրո՞ք լողալ գիտես։

— Քիչ խոսիր,— ասացի ես։

Ես միշտ այդպես էի պատասխանում, երբ ինձ թվում էր՝ թե իմ խոսքությունը լավ չեն ճանաչում։

— Չէ, լուրջ, գիտե՞ս,— հարցրեց Ջոն Բեթթենքուրթը։

— Դա ինչ է, որ չիմանամ։

— Որ նրան հարցնելու լինես՝ աշխարհի երեսին բան չկա որ չիմանա։

Նրանք երկուսն էլ չէին պատկերացնում, որ ես ինքս էլ մի կարգին չգիտեի՝ գիտե՞մ արդյոք այնքան լողալ, որ տրվեմ գետի այդ սառն ու վնգացող զանգվածին և կտրեմ դեպի մյուս ափը։ Ճիշտն ասած, երբ կանգնեցինք այդ պղտոր ու ծանր մռնչացող զանգվածի մոտ՝ սարսափն ինձ պատեց, բայց ես ձևացրի՝ թե գետն ինձ լավ չի ճանաչում և ասացի.

— Քիչ մոթմոթայիր՝ լավ կլիներ։

Ես հանեցի սանդվիչներից մեկը և սկսեցի ուտել։ Իմ զարմիկ Մուրադը խփեց ձեռքիս, սանդվիչը քիչ մնաց ջուրն ընկներ, ասաց.

— Լողանալուց հետո ենք ուտելու, թե՞ ուզում ես փորացավ ընկնես։

Ես վախից մոռացել էի, որ այդ այդպես է։

— Մի սանդվիչից փորացավ չեն ընկնում։

— Լողանալուց հետո ախորժակով կլինի,— ասաց Ջոն։

Նա բարի տղա էր, նա գիտեր, որ ես վախեցած եմ ու այդ պատճառով եմ ձգձգում։ Ինքն էլ էր վախեցած, ես այդ գիտեի, բայց ինքը վախից չէ՛ր բթացել։

— Ուրեմն կտրում ենք մյուս ափը,— ասաց նա,— հանգստանում ու ետ ենք լողում։ Հագնվում ու նախաճաշում ենք, բայց եթե անձրև է անում՝ միանգամից գնում ենք տուն, եթե չի անում՝ էլի ենք լողում։

— Անձրև որ՝ հաստատ լինելու է,— ասաց Մուրադը,— եթե լողանալու ենք՝ լողանանք։

Ջոն շորերն արագ նետեց վրայից, Մուրադը՝ նույնպես, և ես էլ սկսեցի հանվել։ Մերկ՝ մենք կանգնել էինք ափին և տատամսելով նայում էինք անհյուրընկալ գետին՝ որ բացեիբաց վանում էր իրենից, չէր հրապուրում թռիչքի, բայց մենք միևնույն է ցատկելու էինք։ Եթե ջուրն ես մտնում կամաց քայլելով՝ ուրեմն լողորդ չես, եթե սուզվում ես ոչ գլխիվայր, այլ ոտքերիդ վրա՝ դա արդեն լողորդի ոճ է, շատ էլ գեղեցիկ չէ, բայց ամոթալի էլ չէ, մանավանդ որ ինքը՝ այդ անհմա, անհյուրընկալ, անբարյացակամ, լավ ոչինչ չխոստացող գետը այլ ոճի արժանի էլ չէր։ Հոսանքի արագ փախուստից՝ մյուս ափը մեզ ինքն իրենից հեռու էր թվում։

Ջոն լուռ ցատկեց, նույնը նույնությամբ Մուրադ զարմիկս արեց։ Նրանց երկու չլմփոցի արանքի ակնթարթներն ինձ ձմռան երազի գիշերներ թվացին, ձմռան՝ քանի որ վախենալուց բացի ես նաև մրսում էի։ Աշխարհի ամենասարսափելի բաները մտքիս մեջ խեղդված՝ ես ջուրը թռա։

Հաջորդ բանը, որ հիշում եմ և որ եղավ երեք վայրկյան անց, մեր

գոռոցն էր՝ Ջոյի, Մուրադ զարմիկիս ու իմ սեփական։ Ի՞նչ էր եղել, այն էր եղել, որ երեքս էլ մինչև թեատակերը ցեխն էինք խրվել, սարսափած պոկվել ցեխի կալանքից և յուրաքանչյուրս ուզում էր իմանալ, թե ինչ է եղել մյուս երկուսին. մենք երեքս էլ կանգնած էինք պղտոր սառցագետի ծնկահար տիղմի մեջ։ Լավ էր՝ ոտքերի վրա էինք ցատկել, եթե լավագույն ոճով թռչեինք՝ գլխիվայր տնկվելու էինք ցեխի մեջ ու այդպես մնալու մինչև ամառ ու դեռ ավելի։ Վախեցած էինք, բայց նաև ուրախ՝ որ կենդանի ենք մնացել։ Մինչ գետում մենք այդպես սառը ցեխ էինք հունցում, ամպրոպը պայթեց։

— Գիտե՞ք ինչ անենք,— ասաց Ջոն,— դուրս գանք՝ անձրևը թրջելու է, ուրեմն լավ է դեռ մնանք ջրում։

Երեքս էլ ցրտից դողում էինք, բայց մեզ թվում էր, որ ճիշտը հիմա լողալն է։ Ջուրը հազիվ մեր ծնկներին էր հասնում, բայց Ջոյին հաջողվեց պոկվել ցեխից ու այնուամենայնիվ լող տալ մյուս ափ։ Մենք ջրում մնացինք մի տասը րոպե, չնայած մեզ թվում էր, թե երկար ժամանակ ենք այդտեղ։ Հետո դուրս եկանք գետից, հագնվեցինք ու ծառի տակ կանգնած՝ անցանք մեր սանդվիչները ուտելու գործին։ Հանդարտվելու փոխարեն անձրևը խփեց նոր ուժով, և մենք որոշեցինք արդեն վերադառնալ։

— Մեքենա լիներ,— ասաց Ջոն։

Մինչև Մալագա ոչ մի մեքենա չպատահեց, խճուղին ամայի էր։ Եվ Մալագայում ահա՝ մենք մտանք մի նպարեղենի խանութ, վառարանի մոտ չորացանք, հետո գնեցինք մի պահածո լոբի ու ֆրանսիական բոքոն։ Խանութի տիրոջ անունը տարօրինակորեն Դարկուս էր, բայց ինքը օտարերկրացի չէր։ Նա բացեց պահածոն, թղթե երեք ափսեի մեջ բաժանեց լոբին, մեզնից յուրաքանչյուրին փայտի մի պատառաքաղ տվեց ու կտրատեց հացը։ Նա տարեց մարդ է, բայց աշխույժ ու երիտասարդ էր թվում։

— Ո՞րտեղից եք գալիս, տղերք,— հարցրեց նա։

— Լողանալու տեղից,— ասաց Ջոն։

— Լողանալո՞ւ։

— Լողանալու,— հաստատեց Ջոն։— Գետին գնացինք տիրացանք։

— Այ քեզ բա՜ն, թող սերմ դառնամ ու ինձ թաղեն,— ասաց նպարավաճառը։— Հետո՞, ինքն ի՞նչ բանի էր։

— Սառը սառույց էր քշում։

— Խո՞րն էր։

— Ծանծաղ, հազիվ ծնկներիս էր հասնում։

— Պա՜հ, թող ինձ ջրեն ու խնամեն։ Հետո՞, լա՞վ ուրախացաք։

Ջոն ինքը չգիտեր՝ ուրախացե՞լ էինք մենք թե ոչ։

— Ի՞նչ ես կարծում,— դիմեց Ջոն իմ զարմիկ Մուրադին,— ուրախացա՞նք։

— Չգիտեմ,— ասաց Մուրադը,— հիշում եմ, որ թռանք ու մինչև պորտներս ցեխը խրվեցինք։ Տիղմից դժվար դուրս եկանք, բայց դուրս եկանք։

— Թող ինձ էտեն,— ասաց նպարավաճառը։ Նա բացեց երկրորդ պահածոն, բերանը մի մեծ գդալ լոբի առավ, մնացածը բաժանեց մեր երեքին։

— Մենք էլ փող չունենք,— ասացի ես։

— Իսկ հիմա ասեք, տղերք, թե ի՞նչը ձեզ ստիպեց գնալ լողանալու։

— Ոչինչը,— բերանը լիքը լոբի՝ կարճ կտրեց Ջոն այն մարդու նման, որը այնքան շատ արդարացում ունի, որ թվելն անիմաստ է։

— Թող իմ ճյուղերը կտրեն, դարսեն ու կրակի տան,— ասաց նպարավաճառը։— Հիմա ասացեք, տղերք, դուք ա՞յս աշխարհից եք, ի՞նչ պտուղ ու ի՞նչ արմատ եք։ Կալիֆոռնիայի՞ց եք, թե բոլորովին ուրիշ երկրացի։

— Բոլորս էլ բնիկ ենք, Կալիֆոռնիայից,— ասաց Ջոն։— Ես Ֆրեզնո եմ ծնվել՝ Չի փողոցում, Մուրադը ծնվել է Ընկուզենու փողոցում՝ Հարավ-խաղաղօվկիանոսյան մեծ ճանապարհից դենը, իր զարմիկը կարծեմ նույնպես այդ կողմերն է ծնվել։

— Թող իմ վրայով ջրանցքներ քաշեն ու առուներ տանեն։ Հիմա, տղերք, կրթության հարցին ենք պատասխանում, դուք դպրոց գնո՞ւմ եք։

— Մենք կրթություն չունենք,— ասաց Ջոն։

— Թող ինձ քաղեն ճյուղերից ու զամբյուղ դնեն։ Բայց դուք ի՞նչ լեզվով եք խոսում։

— Ես պորտուգալերեն գիտեմ,— ասաց Ջոն։

— Եվ դո՞ւ ես ասում, թե կրթություն չունես։ Տղա, ես Եյլի համալսարանն եմ ավարտել, բայց պորտուգալերեն չգիտեմ։ Իսկ դո՞ւ, տղաս, քո կրթության գործերն ինչպե՞ս են։

— Ես հայերեն գիտեմ,— ասաց Մուրադ զարմիկս։

— Այ քեզ հրա՜շք, թող պարմանուհին ինձ քաղի խաղողի թփից ու հատիկ առ հատիկ ուտի։ Ես, որ 1892-ին քոլեջ եմ վերջացրել, հայերենից բառ անգամ չգիտեմ։ Քո՞ անունն ինչ է, տղաս։

— Ես Արամ Ղարօղլանյանն եմ։

— Տես ճի՞շտ լսեցի՝ Ղար-օղ-լան-յան։

— Ճիշտ է, սըր։

— Արամ։

— Այո, սըր։

— Դո՞ւ քանի օտար լեզու գիտես։

— Ես էլ հայերեն գիտեմ։ Մուրադն իմ զարմիկն է՝ Ղարօղլանյան։

— Այ քեզ հրա՞շք։ Թող ինձ թաղեն, ջրեն, մշակեն, էտեն, կիտեն ու կրակի տան, թող ինձ պոկեն իմ ծառից։ Է՞լ ինչ անեն, թող ինձ զամբյուղներում դարսեն, ու թող քաղի ինձ փոքրիկ աղջիկը իմ վազից ու հատիկ-հատիկ ուտի։ Այո, սըր, թող հենց այդպես լինի, եթե չափն իհարկե չանցա։ Դուք հանդիպեցի՞ք սողուններին։

— Ի՞նչ սողուն էինք տեսնելու,— հարցրեց Ջոնն։

— Օձեր։

— Ջուրը շատ էր պղտոր, ոչինչ չէր երևում։

— Այ թե ինչ, ջուրը պղտոր է եղել։ Իսկ ձո՞ւկ։

— Չենք տեսել,— ասաց Ջոնն։

Նպարեղենի խանութի դիմաց մի ֆորդ կանգնեց, և ֆորդից մի տղամարդ իջավ ու փայտե աստիճաններով բարձրացավ խանութ։

— Էբբոթ, ինձ համար շիշ բացիր,— ասաց այդ մարդը։

— Դատավոր Հարմոն,— դիմեց նպարավաճառը նրան,— ես նախ ուզում եմ այս Կալիֆոռնիա երկրի երեք ամենաքաջարի բնիկներին ներկայացնել ձեզ։

Նպարավաճառը ձեռքը պարզեց դեպի Ջոն, և Ջոն ներկայացավ.

— Ջոզեֆ Բեթթենքուրթ, ես պորտուգալերեն գիտեմ։

— Ստեֆան Լ. Հարմոն,— ներկայացավ դատավորը,— ես մի քիչ ֆրանսերեն գիտեմ։

Նպարավաճառը ներկայացրեց Մուրադին, և Մուրադն ասաց.

— Մուրադ Ղարօղլանյան։

— Դո՞ւք միջազգային ինչ լեզուներ գիտեք,— հարցրեց դատավորը։

— Հայերեն,— ասաց Մուրադ զարմիկս։

Նպարավաճառը շիշ բացեց ու մատուցեց դատավորին, դատավորը շիշը բերանին տարավ, խմեց երեք կում, ձեռքը կրծքին խփեց ու ասաց.

— Ես շատ հպարտ եմ, որ Կալիֆոռնիայում հանդիպեցի մի մարդու, որ հայերեն է խոսում։

Նպարավաճառը ներկայացրեց ինձ։

— Արամ Ղարօղլանյան,— ասացի ես։

— Դուք եղբա՞յր եք,— հարցրեց դատավորը։

— Զարմիկներ,— ասացի ես։

— Տարբերություն չկա, եղբայր եք։ Էբբոթ, հիմա թույլ տվեք տե-

ղեկանալ, թե ինչն է այս սրտառուչ խնջույքի իմաստը, եթե իհարկե բանաստեղծական հուզումը առհասարակ որևէ իմաստ կունենա։

— Այս նորելուկները քիչ առաջ այստեղ մտան փորձված գետի հախից եկած,— ասաց նպարավաճառը,— ահա այս խնջույքի իմաստը։

Դատավորը դարձյալ երեք կում արեց, և երեք անգամ ձեռքը դանդաղ կրծքին խփեց և կրկնեց.

— Ո՞ւմ-ո՞ւմ հախից եկած։

— Նրանք հենց նոր եկել են լողանալուց։

— Եվ ոչ մեկը չի՞ գողում,— հարցրեց դատավորը։

— Դողո՞ւմ,— ասաց Ջոնն։— Մենք հիվանդ չենք։

— Ի՞նչ, հիվա՞նդ,— պայթեց նպարավաճառի բարձր ծիծաղը։— Այս տղաները հանվել ու ձմռան պղտոր սառցաջրի մեջ թաղվել են, բայց երբ այստեղ մտան՝ ամռան օր էին բուրում։

Մենք վերջացրել էինք լորին ու հացը և շատ ծարավ էինք, բայց ամաչում էինք ջուր ուզել ու նրանց աչքում պնդերես թվալ։ Ես որ՝ իրոք ամաչում էի, բայց Ջոյի ամոթը շատ էլ չդիմացավ։

— Միստր Էբբոթ,— ասաց նա,— կարելի՞ է ջուր խնդրել։

— Ջո՞ւր,— ասաց նպարավաճառը,— ջուրը լողանալու համար է, տղա։

Նա թղթի երեք ըմպանակ առավ, մոտեցավ տակառին, ծորակը բացեց ու բաժակները պարզ ոսկեշող ըմպելիք լցրեց։

— Ահա ձեր ըմպելիքը, տղերք, ոսկեխնձորի արևային, դեռ մաքուր ու միամիտ հյութերն են, վայելեցեք։

Դատավորն իր խմիչքից լցրեց նպարավաճառի բաժակը, շիշը բարձրացրեց ու մաղթեց.

— Ձեր կենացը, ջենտլմեններ։

— Այո, սըր,— ասաց Ջոն։

Բոլորս խմեցինք։

Դատավորը խցեց շշի բերանը, դրեց ետևի գրպանը, ուշադիր, մեկառմեկ, ասես մեզ իր հայացքն էր առնում մնացյալ ողջ կյանքում պահելու համար՝ նայեց և ասաց.

— Ցտեսություն, ջենտլմեններ։ Դատավարությունը կես ժամից սկսվում է։ Ես պետք է դատավճիռ կայացնեմ մի մարդու, որ ապացուցում է, որ ինքը ոչ թե գողացել է ձին, այլ տարել է վերադարձնելու մտադրությամբ։ Նա մեքսիկացիների իսպաներենն է խոսում, իսկ մյուսը, որ պնդում է, թե ձին նա գողանալու մտքով է տարել, խոսում է իտալերեն։ Ուրեմն՝ մինչև հանդիպում։

— Մինչև հանդիպում,— ասացինք մենք։

Մեր շորերն արդեն չորացել էին, բայց անձրևը չէր դադարում։

— Շատ շնորհակալություն, միստր էբբոթ,— ասաց Ջոնը։— Մենք տուն ենք գնում։

— Ի՞նչ շնորհակալություն,— ասաց նպարավաճառը,— ես եմ ձեզ շնորհակալ։

Այդ մարդու վրա հանկարծ մի տարօրինակ լռություն իջավ, և մեզ այնպես թվաց, թե քիչ առաջվա աղմկոտ մարդը չի մեր առաջ։

Մենք լուռ թողեցինք խանութը և գնացինք խճուղին ի վար։

Անձրևը նոր միայն բարակում էր։ Ես չգիտեի ինչ մտածեմ եղած այդ ամբողջի մասին։

Առաջինը Ջոն խոսեց.

— Այդ միստր էբբոթը արժանավոր մարդ էր։

— Խանութի ճակատին նրա ազգանունը Դարկուս էր նշված,— ասացի ես,— էբբոթը նրա անունն է։

— Անունն էր էբբոթ թե ազգանունը՝ չգիտեմ,— ասաց Ջոնը,— միևնույն է արժանավոր մարդ էր։

— Դատավորը՝ նույնպես,— ասաց Մուրադ զարմիկը։

— Երևում էր, որ կրթված է,— ասաց Ջոնը։— Ես էլ ֆրանսերեն կսովորեի, բայց հետո ու՞մ հետ խոսեմ։

Մենք լուռ գնացինք մեր ճանապարհը, քիչ հետո մութ ամպերը ցրվեցին, արևը բացվեց և մեր առջև հեռու արևելքում Սիեռա-Նևադայի վրա ծիածան կապեց։

— Մենք իրոք հաղթեցինք այդ փորձված գետին,— ասաց Ջոնը։— Իսկ այդ մարդու խելքը մի քիչ ցնդա՞ծ էր։

— Չգիտեմ,— ասաց Մուրադ զարմիկը։

Մեր տուն հասնելը դեռ մի ժամ քաշեց։ Երեքս էլ մտածում էինք մեզ հանդիպած այդ երկու մարդու մասին, և այն մասին, թե նպարավաճառը ցնդա՞ծ էր թե ոչ։ Իմ անձնական կարծիքն այն էր, որ այդ մարդը ցնդածի վարք էր ցույց տալիս, բայց ամենևին էլ ցնդած չէր։

— Ցտեսություն,— ասաց Ջոնը։

Նա գնաց փողոցն ի վար, բայց հիսուն յարդ չանցած մեր կողմը դարձավ ու ինքը իրեն ինչ-որ բան ասաց։

— Ի՞նչ,— գոռաց Մուրադը։

— Այդպես էլ կա,— ասաց Ջոնը։

— Ի՞նչ կա,— գոռացի ես։

— Ցնդածի մեկն էր։

— Որտեղի՞ց իմացար։

— Աղջիկը մարդուն հապա ինչպե՞ս կքաղի խաղողի թփից ու կուտի հատիկ-հատիկ։

— Թեկուզ հենց ցնդած էր, հետո՞ ինչ,— ասաց Մուրադը։

Ջոն ձեռքը ծնոտին դրեց ու սկսեց մտածել։ Երկինքը հիմա ծայրեծայր բաց էր, մաքուր արևը շողում էր և ողջ աշխարհը լցված էր պայծառ լույսով։

— Չէ, երևի խելառ չէր,— գոռաց Ջոն։

— Հենց խելառից էլ խելառ էր,— ասաց Մուրադ զարմիկս։

— Բայց ես կարծում եմ,— ասացի,— որ նա իրեն միշտ չի այդպես պահում։

Մենք որոշեցինք այդ մասին մինչև մյուս լողանալը այլևս չխոսել։ Այն փորձված գետին հաղթելուց հետո կգնայինք խանութ ու կպարզեինք՝ ինչն ինչոց է։

Բայց մի ամիս հետո, երբ լողատեղից վերադառնալիս մտանք խանութ, միստր Էբբոթը չկար, նրա տեղը հիմա մի երիտասարդ էր կանգնած։ Սա նույնպես օտարերկրացի չէր և հարցրեց շատ հստակ.

— Ի՞նչ եք կամենում։

— Տասը սենթի երշիկ և ֆրանսիական բոքոն,— ասաց Ջոն։

— Իսկ ո՞ւր է միստր Դարկուսը,— հարցրեց Մուրադը։

— Քաշվել է իր տուն։

— Իր տունը որտե՞ղ էր։

— Կարծեմ Քոննեքթիկուտի կողմերը։

Մեր բոքոնը մենք երեք մասի բաժանեցինք, հացի մեջ երշիկի միջուկներ դրեցինք և սկսեցինք ուտել։ Ջոն վերջապես լդիմացավ ու հարցրեց.

— Նա խելագա՞ր էր։

— Դժվար թե,— ասաց երիտասարդը։— Սկզբում ինձ էլ այդպես թվաց, բայց հետո տեսա, որ այդպես չի։ Նրա առևտուրը մարդու շփոթեցնում էր, կարծում էիր ցնորված է, նա շատ ավելի նվիրում էր՝ քան ծախում։ Մյուս բաների մեջ արդեն՝ շատ հասկանալի մարդ էր։

— Շնորհակալություն,— ասաց Ջոն, և մենք դուրս եկանք ու շարժվեցինք տուն։

Նպարեղենի խանութը հիմա բավական մաքուր ու կարգին էր և շատ տաղտկալի ու մեռած։

— Ցնորվածն ինքն է,— ասաց Ջոն։

— Ո՞վ,— հարցրի ես։

— Որ Դարկուսի տեղը կանգնել ու կարծում է ինքը կարգին է։

— Խանութի օրինակելի՞ն։

— Ինքը։ Միստր Էրքոթի փոխարեն կանգնել է ու կրթությունից ոչ մի գաղափար չունի։

— Ճիշտ ես,— ասաց Մուրադը։

Վերադարձի ամբողջ ճանապարհին մենք հիշում էինք մեր կրթված նպարավաճառին։

— Թող ինձ չտեն,— բաժանվելիս ասաց Ջոն և գնաց իրենց փոզոցն ի վար։

— Թող պոկեն իմ ծառից ու զամբյուղ դնեն,— ասաց Մուրադ զարմիկը։

— Իմ վազից թող ինձ պոկի պարմանուհին և ուտի հատիկ առ հատիկ,— ասացի ես։

Մեզ իսկապես հրաշալի մարդ էր պատահել։ Քսան տարի հետո, ես իմ մեջ հասկացա, որ նա բանաստեղծ մարդ էր և աստծուց մոռացված այդ վայրերում նպարեղենի խանութ էր բացել ոչ թե փող ժողովելու, այլ ուրախություն ու հիացում բաժանելու։

ԼՈԿՈՄՈՏԻՎ—38 ՕՋԻԲՎԵՅԶ

Մի անգամ մեր քաղաքը ավանակի վրա մի մարդ մտավ ու սկսեց հաճախել հասարակական գրադարան, որտեղ այդ տարի ես անց էի կացնում իմ օրվա մեծ մասը։ Երիտասարդ ու բարձրահասակ այդ մարդը հյուսիսամերիկյան հնդկացիների օջիբվեյ ցեղից էր և ինձ ասաց, որ ինքը Լոկոմոտիվ—38-ն է, իրեն Լոկոմոտիվ—38 են ասում։ Քաղաքում բոլորը համոզված էին, որ նա գժանոցից փախած սովորական խելագար է։ Այդ ժամանումի վեցերորդ օրը նրա ավանակը Թուլարե փոզոցում բախվել էր տրոլեյբուսին ու խիստ վնասվել, Մարիփոզա և Ֆուլթոն փոզոցների խաչմերուկում մյուս օրը խեղճ կենդանին սատկեց՝ երևի ներքին վնասվածքներից։ Ավանակը փռվեց մայթին՝ տակը գցելով հեծյալի ոտքը, տխուր թառանչեց ու ավանդեց հոգին։ Ոտքն ավանակի տակից հնդկացին դուրս քաշեց, կանգնեց, կաղին տալով խուժեց անկյունի դեղատուն և հեռախոսի միջքաղաքային զրույց պահանջեց։ Նա Օկլահոմա՝ եղբորն էր զանգահարում։ Նրանց այդ զրույցը մեծ գումար նստեց հնդկացու վրա, որը հեռախոսավարուհու ցուցումով նա գանձատուփ լցրեց այնքան անվրդով, կարծես միշտ այդ բանին էր եղել։

Այդ ժամանակ ես մանրած ընկույզի ու բանանի պաղպաղակ էի ուտում դեղատանը։ Լոկոմոտիվ—38-ը հեռախոսախցից դուրս եկավ ու

ինձ տեսավ ըմպելիքների բարձր վաճառասեղանի առաջ նստած այդ փառահեղ ուտեստը վայելելիս։

— Ողջույն, Վիլլի,— ասաց։

Նա գիտեր, որ իմ անունը Վիլլի չէ, նրան ուղղակի դուր էր գալիս ինձ Վիլլի ասել։ Կաղալով նա դեպի բուֆետը գնաց, որտեղ ծամոնների էին, երեք տուփ ծամոն ու հյութեր վերցրեց, հետո եկավ ու ասաց.

— Դու ի՞նչ ես ուտում, շատ ախորժելի է երևում։

— Ծեծած ընկույզով բանանի հատուկ։

Հնդկացին հեծավ իմ կողքի ազատ նստարանին։

— Ինձ էլ սրանից տվեք,— ասաց ըմպելիքի մատակարարուհուն։

— Լավ չեղավ,— ասացի ես,— խեղճ կենդանին սատկեց։

— Կենդանիների համար աշխարհում արդեն տեղ չի մնացել։ Հիմա՝ ի՞նչ մեքենա առնեմ, ինչ խորհուրդ կտայիր։

— Դուք ուզում եք մեքենա՞ գնել։

— Արդեն քանի րոպե ես այդ եմ մտածում։

— Ես չգիտեի, որ դուք փող ունեք, կարծում էի աղքատ եք։

— Ինձ ոչ միայն աղքատի՝ նաև ցնդածի տեղ են դնում։

— Ես ձեզանից ցնդածի տպավորություն չեմ առել, բայց նաև հարուստի տպավորություն չեք թողնում։

— Բայց ես հարուստ եմ։

— Եթե ես էլ հարուստ լինեի...

— Ք ո ինչի՞ն է պետք հարստությունը։

— Երեք տարի է ուզում եմ Մենդոտ ձկնորսության գնալ՝ ձկնորսի պիտույք ու մեքենա չունեմ։

— Դու մեքենայից արդեն գլո՞ւխ ես հանում,— հարցրեց հնդկացին։

— Ես ամեն բանից էլ գլուխ եմ հանում։

— Ղեկին երբևէ նստե՞լ ես։

— Դեռ՝ ոչ։ Դեռ չեմ ունեցել՝ որ քշեմ, իսկ գողանալը՝ մեր հավատը թույլ չի տալիս։

— Բայց ասում ես՝ ղեկը կբռնես ու մեքենան քեզ կլսի, այո՞։

— Այո, սրբ։

— Հիշո՞ւմ ես գրադարանից իջնելիս քեզ ինչ էի ասում։

— Մեքենայի դարի՞ մասին։

— Ահա հիշում ես։

— Հիշում եմ։

— Հնդկացին ուրեմն ծնվում է ձիավարությունը, թիավարությունը, որսորդությունը, լողն ու ձկնորսությունն արդեն սովորած, ամերիկացին ծնվում է մեքենա քշելն արդեն սովորած, այո՞։

— Ես ամերիկացի չեմ։

— Գիտեմ, հայ ես, հիշում եմ, ես քեզ հարցրի՝ դու ասացիր։ Դու Ամերիկայում ծնված հայ ես, դու տասնչորս տարեկան ես և վստահ ես՝ որ ղեկին կնստես ու անմիջապես կքշես մեքենան։ Դու մաքուր ամերիկացի ես, Վիլլի, չնայած ինձ նման թուխ ես։

— Մեքենա քշելուց հեշտ բա՞ն,— ասացի,— էշ քշելուց էլ հեշտ է։

— Լավ, ուրեմն այդպես։ Հիմա այստեղից դուրս գամ ու մեքենա գնեմ՝ դու կքշե՞ս ինձ համար։

— Այո, սըր։

— Եվ՝ վարձը, ի՞նչ եմ վճարելու։

— Մեքենա քշելո՞ւ վարձը։

— Այո, իհարկե։

— Դուք շատ բարի եք, բայց դրա համար ես որևէ վարձ չեմ վերցնի։

— Ճամփորդություններից մի երկուսը գուցե երկարի։

— Որքան երկար՝ այնքան լավ։

— Չեմ հասկանում, դու հոգնե՞լ ես այստեղից։

— Ես ծնվել ու ամբողջ կյանքում միայն այս նեղլիկ քաղաքում եմ ապրել։

— Դու չե՞ս սիրում քո ծննդավայրը։

— Ես լեռներ, գետեր ու լեռնային լճեր եմ սիրում։

— Լեռներում երբևէ եղե՞լ ես։

— Դեռ չեմ եղել, բայց մի օր անպայման կլինեմ։

— Հասկացա։ Հիմա՝ քո կարծիքով մեզ ո՞ր մեքենան հարմար կլինի։

— Ի՞նչ կասեիք Ֆորդի ռոդսթերին։

— Դա՞ է ամենալավը։

— Դուք ամենալա՞վն եք ուզում։

— Իսկ ինչու ոչ։

— Երևի՝ որ ամենալավին մի գեղ փող եք տալու։

— Բայց ո՞րն է ամենալավը։

— Ոմանք կադիլլակն են գովում, ուրիշները պակկարդը։ Երկուսն էլ շատ են լավը։ Պակկարդը երթուղու վրա հրաշալի է, բայց կադիլլակը՝ նույնպես։ Ես դրանցից շատ եմ տեսել երթուղիներում, հրաշքի պես թռչում են։

— Ի՞նչ արժե պակկարդը։

— Մոտ երեք հազար դոլար կամ մի քիչ ավելի։

— Հիմա մենք կարո՞ղ ենք գնել այդ մեքենան։

Ես նստարանից իջա. այդ Լոկոմոտիվ—38-ը ինձ ցնորված էր թվում, չնայած գիտեի՝ որ ամենևին էլ այդպես չի։

— Միստր Լոկոմոտիվ, դուք հիմա իսկապե՞ս եք ուզում վերցնել այդ մեքենան։

— Ինքդ տեսար, որ երկու րոպե առաջ իմ ավանակը սատկեց։

— Տեսա, ճիշտ է։ Ձեզ ամեն րոպե կարող են ձերբակալել։

— Ջեն ձերբակալի։

— Եթե սատկած էշը փողոցում թողնելու դեմ օրենք կա՝ կձերբակալեն։

— Այդպիսի բան չի լինի։

— Ինչո՞ւ չի լինի։

— Այս երկրի մարդիկ փողը շատ են հարգում, իսկ ես փողատեր եմ։ Չէ, մտածեցի ես, սրա գլխին իսկապես խփել են։

— Իսկ որտեղի՞ց է ձեր այդ փողը,— ասացի։

— Ես հող ունեմ Օկլահոմայում, մի հիսուն հազար ակր է։

— Եկամտաբե՞ր է։

— Քսան ակրը։ Մնացյալը բանի պետք չի։ Այդ քսանի տակ նավթ կա, պոմպերը նավթ են քաշում երկրի տակից։ Այդ նավթաքաշները իմն ու եղբորս են։

— Ինձ միշտ թվացել է, թե օջիբվեյ ձեր ցեղը հյուսիսում՝ Մեծ լճերի շրջանում էր լինելու, դուք ուրեմն ինչպե՞ս եք Օկլահոմա ընկել։

— Մերոնց մշտական տեղը, այո, Մեծ լճերի շրջանն է։ Բայց իմ պապը տեղում հանգիստ նստողներից չէր, երբ արևմուտքը բոլորին քաշեց՝ պապս առաջիններից էր, որ պոկվեց ու դուրս եկավ Օկլահոմա։

— Հիմա արդեն հասկանում եմ, թե սատկած կենդանին փողոցում թողնելու համար նրանք ինչու ձեզ չեն նեղի։

— Ոչինչի համար նրանք ինձ չեն նեղի։ Դա իհարկե միայն փողի շնորհիվ չէ։ Քեզանից բացի, այս քաղաքում ոչ մեկը չգիտի՝ որ ես հարուստ եմ։ Ջեն նեղի, որովհետև այս քաղաքում բոլորը ինձ խելագարի տեղ են գնում։ Դու գիտե՞ս այն տեղը, որտեղից մենք հիմա մեքենա ենք վերցնելու։

— Պակկարդի գործակալությունը Բրոդվեյի վրա է, գրադարանից երկու փողոց դենը։

— Եղավ։ Եթե դու չես հրաժարվել քշելու մտքից՝ արի գնանք ու ձեր այդ պակկարդը վերցնենք։ Լավ կլինի՝ որևէ վառ գույնի, ասենք՝ կարմիր։ Ի՞նչ ես կարծում, մեր ճամփորդություններն ինչի՞ց սկսենք։

— Կարելի՞ է՝ Մենդոտում ձուկ բռնելուց։

— Եղավ։ Ուրեմն ձկնորսական սարքուկարգը որտեղի՞ց ենք գնում։

— Անկյունի ետևը Հոմանի խանութն է։

Մենք մտանք Հոմանի խանութ, և հնդկացին ինձ համար քսանյոթ դոլարի պիտույք գնեց։ Հետո գնացինք Բրոդվեյի «Պակկարդ» գործակալություն։ Նրանք կարմիր մեքենա չունեին, փոխարենը մի հոյակապ կանաչ պակկարդ կար, բաց կանաչ՝ գարնան խոտի գույն մեքենա էր, որ այդտեղ կանգնած էր 1922 թվից։ Դա մի կառուցիկ մարզական մարմին էր՝ որ ստեղծված էր զուտ սլացքի համար։

— Դու իրո՞ք կարծում ես, որ այս փառահեղ մեքենան կարողանալու ես կառավարել։

— Այո, սըր, վստահ եմ։

Ոստիկանությունը մեզ գտավ «Պակկարդի» գործակալությունում և սատկած էշը փողոցում թողնելու համար ցանկացավ ձերբակալել հընդկացուն։ Նա նրանց առաջ ինչ-որ թղթեր դրեց, և ոստիկանությունը պարտավորվեց ինքը հոգալ փողոցում սատկած ավանակի մասին, անհանգստացնելու համար նրանից ներողություն խնդրեց ու հեռացավ։

— Ոչինչ, ոչինչ,— ասաց հնդկացին։

Նա շուտ եկավ գործակալության տնօրենին, Ջիմ Լյուիսին, որ բոլոր ընտրությունների ժամանակ իրեն առաջադրում էր քաղաքագլխի պաշտոնի։

— Այս մեքենան ես վերցնում եմ,— ասաց նա։

— Ձեզ համար ես անմիջապես համապատասխան փաստաթղթեր կկազմեմ,— ասաց Ջիմը։

— Ի՞նչ թուղթ, ես հիմա տալիս ու մեքենան վերցնում եմ։

— Ուզում եք ասել՝ դուք հենց հիմա՞ եք վճարում երեք հազար երկու հարյուր տասնյոթ դոլար վաթսունհինգ սենթը։

— Այո։ Մեքենան պատրաստ է քշելու։

— Իհարկե։ Հիմա կասեմ տղաներին, որ մեքենայի փոշին վերցնեն, ստուգեն շարժիչը, վառելիք լցնեն։ Դա տասը րոպեից շատ չի տևի։ Դրասենյակ համեցեք՝ հենց հիմա կձևակերպեմ գործարքը։

Ջիմը և հնդկացին մտան գրասենյակ։

Մի քանի րոպեից վերջնականապես շշմած Ջիմը մոտեցավ ինձ։

— Արամ,— ասաց,— ո՞վ է այս երիտասարդը։ Ես խելագար էի կարծում, ես ասացի Ջոնին՝ որ զանգահարի Հարավ-արևելքի խաղաղօվկիանոսյան ընկերություն, և այնտեղից պատասխանեցին, թե նրա ընթացիկ հաշիվը Օկլահոմայի բանկերից է գալիս։ Ասացին, որ նրա անձնական հաշիվը միլիոնից ավելի է։ Իսկ ես նրան ցնդածի տեղ էի դրել։ Դու նրան ճանաչո՞ւմ ես։

— Նա ինձ ասել է, որ անունը Լոկոմոտիվ—38-է,— պատասխանեցի ես։— Այդպիսի անուն չի լինում։

— Դա նրա հնդկական անունի թարգմանությունն է,— ասաց Ջիմը։— Ես նրա իսկական անունը գրեցի գործարքի փաստաթղթերում։ Դուք իրար վաղո՞ւց եք ճանաչում։

— Ավանակի վրա ինչ մեր քաղաք է մտել՝ ամեն օր մենք զրուցել ենք։ Ավանակը փողոցում այս առավոտ սատկեց, ես տեսա, բայց երբեք մտքովս չէր անցնում, որ նա այդքան փող կունենա։

— Ասում է՝ դու ես քշելու մեքենան։ Վստահ ես, կկարողանա՞ս կառավարել այս հսկային, քեզ համար դեռ մի քիչ շո՞ւտ չի։

— Ներեցեք, միստր Լյուիս, բայց ինչո՞ւ եք ուզում իմ բախտը ինձնից հեռացնել,— ասացի։— Այս քաղաքում որևէ մեկից ես ինչո՞վ եմ պակաս, ես ինչո՞ւ չեմ կարող կառավարել այս հիանալի մեքենան։

— Տղաս, իմ խոսքը քո բախտը քեզնից հեռացնելու մասին չէ։ Ես ուղղակի չեմ ուզում, որ դու այստեղից պոկվես ու տեղնուտեղը վեցյոթ մարդ սպանես կամ էլ ջարդուփշուր անես մեքենան։ Ղեկի մոտ անցիր՝ մի երկու բան սովորեցնեմ։ Դու գաղափար ունե՞ս արագությունները փոխելու մասին։

— Ես ոչնչից գաղափար չունեմ, բայց հիմա կունենամ։

— Լավ, միայն թույլ տուր քեզ մի փոքր օգնեմ։

Ես բացեցի մեքենայի դուռն ու նստեցի ղեկին, Ջիմը տեղավորվեց կողքիս։

— Այսուհետև, տղաս,— ասաց նա,— ինձ համարիր քո այն բարեկամը՝ որ վերջին շապիկը վրայից կհանի ու քեզ կտա։ Ես ուզում եմ քեզ շնորհակալություն հայտնել այդ հնդկացի ջենտլմենին իմ խանութը բերելու համար։

— Գիտե՞ք, դա ինքնիրեն եղավ, պակկարդ տեսնելիս իմ ուշքն ուղղակի գնում էր։ Հիմա ասացեք, թե ինչն այստեղ ինչի համար է։

— Ուրեմն սկսենք։

Նա նայեց ոտքերիս։

— Տե՛ր աստված, բայց քո ոտքերը, տղաս, չեն հասնում սեղմիչներին։

— Ոտքերը՝ ոչինչ։ Դուք ասեք՝ արագությունն ինչպե՞ս են բացում։

Մինչ գործակալության տղաները կփայլեցնեին, կլիցքավորեին ու կստուգեին շարժիչը, Ջիմն ինձ ամեն ինչ բացատրեց։ Երբ հնդկացին ելավ գրասենյակից ու տեղավորվեց իր օթինական տեղը՝ ետևի բազմոցին, շարժիչն արդեն հնդում էր։

— Նա ասում է, որ գիտի մեքենա վարել,— ասաց հնդկացին Ջիմ Լյուիսին։— Ի ծնե գիտի, ես նրան հավատում եմ։

— Արամի վրա կասկած չունենաք,— ասաց Ջիմը,— նա լավ է քշում։ Ճանապարհ տվեք, տղերք, մեքենայի համար տեղ բացեք։

Ես դանդաղ շրջեցի հսկա մեքենան, արագությունը միացրի ու գործակալությունից դուրս թռա ժամում հիսուն մղոն արագությամբ։ Ջիմը մեր հետևից վազում ու բղավում էր.

— Ի՞նչ ես անում, տղա, արագությունը մի բացիր մինչև երթուղի, քաղաքում սահմանը ժամում քսանհինգ մղոն է։

Իմ հնդկացուն ես ջարդուխուրդ էի անում, բայց նա աչքն էլ չէր թարթում։ Դա իմ կամքից իհարկե անկախ էր լինում, ես ուղղակի չգիտեի մեքենան ինչ է ու ինչպես է ղեկավարվում։

— Դու լավ ես քշում, Վիլլի,— ասաց հնդկացին,— այդպես էլ պատկերացնում էի։ Տեխնիկական հնարքներին ի ծնե սովորած եք աշխարհ գալիս ամերիկացիներդ։

— Մի տասնհինգ րոպեից Մենդոտում կլինենք,— ասացի ես,— և դուք կտեսնեք, թե ձուկն այնտեղ ինչ լավ է բռնվում։

— Ինչքա՞ն է այստեղից Մենդոտ։

— Մի երեսուն մղոն։

— Երեսուն մղոնը տասնհինգ րոպեի համար մի քիչ երկար ճանապարհ է, արի մի ժամ տանք։ Գեղեցիկ տեսարաններ կպատահեն՝ կնայենք, ես կուզենայի նայել ու տեսնել։

— Կարելի է, բայց Մենդոտ ձկնորսության ենք գնում։

— Ճիշտ է,— ասաց հնդկացին,— ուրեմն ուզածիդ պես հուպ տուր։ Բայց մյուս անգամ քեզ խնդրելու եմ մի քիչ դանդաղ գնալ, թե չէ տեսարանները թռչում են ու չեմ հասցնում նայել։ Չեմ հասցնում տեսնել՝ թե ցուցանակներն ինչ են ասում։

— Եթե ուզում եք, ես հիմա էլ կարող եմ դանդաղեցնել։

— Ոչ, այս անգամ թող ինչպես գնում է՝ գնա։

Ընդամենը կես ժամից մենք Մենդոտ էինք։ Ես կարող էի ավելի լավ արդյունք ցուցաբերել, եթե ճանապարհի մեծ մասը ցեխ չլիներ։ Մեքենան քշեցի ուղիղ գետափ։ Հնդկացին ինձ խնդրեց մեքենայի ծածկը ետ քաշել, որպեսզի կարողանա իր բազմոցի միջից ազատ նայել իմ ձկնորսությանը։ Ես տեղյակ չէի, որ ծածկը շարժական է, բայց կարողացա, քսան րոպե շարչարվեցի ու ետ քաշեցի ծածկը։

Ես կարթ էի նետում, կարթի ետևից երկու անգամ ինքս ջուրը ընկա և վերջապես հաջողեցրի մի հիմար ձկնիկ բռնել։

— Դու ձկնորսությունից գաղափար չունես,— ասաց հնդկացին։

— Ի՞նչն եմ սխալ անում։

— Ամեն ինչը։ Դու երբեք ձուկ բռնե՞լ ես։

— Ոչ։ Բայց ի՞նչն եմ սխալ անում։

— Հատկապես՝ ոչինչը։ Դու ուղղակի կարծում ես ձուկը մեքենա է, ինչպես ուզենաս՝ այնպես էլ կբռնես։

— Դրա ի՞նչն է սխալ։

— Դա այնքան էլ սխալ չի։ Միայն թե այդպես հազիվ թե երբեք ձուկ բռնես և մեկ էլ այդպես միշտ ջուրը կընկնես։

— Ես չէի ընկնում, իրենք էին քաշում։ Ձկներն ուժեղ ձիգ են տալիս և խոտն էլ սահուն է, ոտքդ չի բռնում ու փախչում է։

Այդ բոպեին իմ կարթը մի ավելի փոքրիկ ձկնիկ կտցեց, ես մեծ խնամքով վեր հանեցի և հարցրի հնդկացուն՝ գուցե նա արդեն վերադառնալ է ուզում։ Նա ասաց, որ եթե ես ցանկանում եմ՝ կարող ենք վերադառնալ։ Իմ որսորդական պիտույքներն ու երկու ձկնիկը ես հավաքեցի, ղեկի մոտ անցա, և մենք քաղաք վերադարձանք։

Օջիբվեյ ցեղի Լոկոմոտիվ—38 ասված այդ հնդկացու փառահեղ պակկարդը ես քշեցի այնքան ժամանակ, քանի դեռ հնդկացին մեր Ֆրեզնոյում էր՝ ամբողջ ամառը, որ նա անցկացրեց հյուրանոցում։ Ամբողջ այդ ամառը ես ջանում էի նրան համոզել, թե ինքը կարող է մեքենա վարել, որ քշելը դժվար չի, բայց նա լսել անգամ չէր կամենում։ Սան Հոակին հովտով մեկ այդ ամբողջ ամառ փառահեղ պակկարդը ես դեսուդեն քշեցի, և իմ հնդկացին ետևի բազմոցին նստած մի տասը տուփ ծամոն ծամեց։ Նա լրիվ ինձ էր թողել մեր գնալիք տեղերի ընտրությունը, և ես էլ ընտրում էի այնպիսի տեղեր, ուր կարող էի ձուկ բռնել կամ որս անել։ Նա ասում էր, որ ես ոչ մի գաղափար չունեմ ոչ ձուկ բռնելուց, ոչ էլ որս խփելուց, բայց իմ համառությունը իրեն դուր է գալիս։ Մեր այդ ընկերության ընթացքում նա երբեք չծիծաղեց ինձ վրա, բացի այն անգամից, երբ ես տասներկու տրամաչափի որսորդականով նշան բռնեցի նապաստակին, սպստիկ ետհարված կերա ու ագռավ խփեցի։ Նա սկսեց ինձ համոզել, թե բոլոր ամերիկացիներն այդ են՝ նապաստակին նշան են բռնում ու ագռավ խփում։

— Դու ամերիկացի ես, Վիլլի,— ասաց նա,— թե չէ ինչպե՞ս զլուխ կհանեիր այս վիթխարի մեքենայից։

Նոյեմբերյան մի օր նրա եղբայրը եկավ մեր քաղաք, և հաջորդ օրը, երբ գնացի հյուրանոց նրան վերցնելու, ինձ ասացին, որ եղբոր հետ նա մեկնել է Օկլահոմա։

— Իսկ պակկարդն ի՞նչ եղավ։

— Պակկարդը տարան,— ասաց հյուրանոցի ծառայողը։

— Ո՞վ քշեց։

— Հնդկացին ինքը։

— Երկուսն էլ հնդկացի էին, ո՞ր հնդկացին։

— Որ հյուրանոցում էր ապրում։

— Դուք համոզվա՞ծ եք։

— Իմ աչքերով տեսա, որ ղեկին նստեց ու քշեց։

— Դուք ուզում եք ինձ համոզել, որ նա արագության լծակի տեղը գիտե՞ր։

— Երևի գիտեր՝ որ քշեց,— ասաց ծառայողը։— Իմ կարծիքով փորձվածից էլ փորձված վարորդ էր։

— Շնորհակալություն։

Տունդարձի ճանապարհին ես սկսեցի գլխի ընկնել, որ իմ հնդկացին մեքենայից իրեն անտեղյակ էր ձևացրել, որպեսզի վազքի ու ճանապարհի կարոտ մի պատանի ղեկի մոտ նստի, սլանա և մեքենայից արագություն ու հրճվանք քամի։ Կյանքի սպանիչ տաղտուկը կամ գուցե թախիծի պես մի բան պարապ այդ երիտասարդին իր երկրից գցել էին մեր նեղլիկ քաղաքը, ուր մեծ կյանքի ծարավից ես էի խեղդվում, և մեր հանդիպումը նա առիթ էր դարձրել ինձ ուրախացնելու և իմ ուրախության վրա զվարճանալու։ Ցնորվածության մասին քաղաքի միասնական եզրահանգումը բացառելով, ահա այս էր նրա վարքի իմ միակ բացատրությունը։

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԱՄԵՐԻԿԱՑԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԻՆ

Իմ Մելիք քեռին մեր Ֆրեզնոյից Նյու Յորք իր առաջին ճամփորդությանն էր ելնելու, և ուղևորվելուց առաջ նրա Կարո քեռին, իհարկե, եկավ նստեց ու նկարագրեց ճանապարհի դժվարությունները։

— Գնացք ես բարձրացել, վագոնում ես,— ասաց ծերունին,— ապահով մի տեղ ես ընտրում ու նստում, դեսուդեն չես նայում, եղա՞վ։

— Եղավ, սըր,— ասաց Մելիք քեռիս։

— Գնացքը դեռ նոր է շարժվել՝ երկաթուղայինի համազգեստով երկու մարդ մոտենում ու տոմս են հարցնում։ Բանի տեղ չես դնում, թողնում անցնում են։ Ուրեմն հասկացան, որ իրենց իսկությունը գիտես։ Խաբեբա են, գնացքի սպասավոր չեն։

— Բայց ե՞ս ինչպես հասկացա՝ որ խաբեբա են։

— Հենց մոտեցան ու հարցրին՝ դու հասկացար, դու միամիտ երեխա չես։

— Լավ, սըր։

— Քսան մղոն արդեն անցել ես, եղա՞վ, տեսքից բարի մի երիտասարդ մոտենում ու քեզ սիգարետ է մեկնում։ Չես վերցնում, «ծխող չեմ», չես ծխում։ Սիգարետի մեջ թմրախոտ է։

— Այո, սըր։

— Գնացիր վագոն-ռեստորան. հենց դռների մեջ մի շատ սիրունատես ու թարմ արարած իբր թե պատահաբար դիպչում, քեզ համարյա թե փաթաթվում ու հետո շփոթվում, ժպտում ու հազար ներողություն է խնդրում։ Այդ րոպեին նա հմայիչ է, քեզ խելքահան է արել, ուզում ես քո մտերիմը լինի։ Չի՛ կարելի։ Քո այդ դավաճան խռովքը ճնշում ու քեզ համար ճաշելու ես գնում։ Այդ կինը խարդախ կին է։

— Ինչ է՞,— հարցրեց Մելիք քեռին։

— Լի՛րբ է, լի՛րբ։— բղավեց ծերունին։— Մտել ես ռեստորան, ճաշում ես։ Մի մոռացիր, որ ախորժելի ուտելիք ես պատվիրել։ Ռեստորանը լեփ-լեցուն է, և այդ կինը իբր թե պատահաբար քո սեղանակիցն է. մի՛ նայիր աչքերին, գլուխդ կախ քո ուտելիքին կաց, հետդ ահա ուզում է խոսել՝ խուլ ես, չես լսում։

— Հասկացա, սըր։

— Խուլ ես, իր երգեցիկ ձլվլոցը չես լսում, պոկվելու միակ միջոցը խլանալն է։

— Ինչի՞ց պոկվելու։

— Թակարդից,— ասաց ծերունին։— Ես ճամփորդել եմ ու գիտեմ, կանանց թակարդից։

— Այո, սըր։

— Ուրեմն այս մասին՝ էլ վերջ։

— Այո, սըր։

— Էլ խոսք չլինի, վերջ։ Ես կյանք եմ ապրել ու գիտեմ, ես հացի կարոտ չեմ քաշել ու աչքս ուրիշի ունեցածին չեմ գցել։ Ես յոթ ժառանգ եմ մեծացրել։ Ես հող ունեմ, այգի, ծառեր, փող ու անասուն։ Ամեն ինչ աշխատանքով ու կամաց-կամաց է լինում, չի կարելի հանկարծ գտնել ու ասել՝ գտա։

— Իհարկե, սըր։

— Ռեստորանից քո տեղին դառնալիս հայտնվեցիր ծխարանում, թղթախաղն այնտեղ տաքացել է։ Քառասունհինգ-հիսուն տարու երեք մարդ թուղթ են խաղում, մատներին իբր թե թանկարժեք քարերով փայլուն մատանիներ են։ Քեզ բարեկամաբար ողջունեցին ու մեջները քեզ համար տեղ բացեցին։ Անգլերեն չես հասկանում. «Չեմ հասկանում անգլերեն»։

— Այո, սըր։

— Այսքան բան։

— Անչափ շնորհակալ եմ,— ասաց Մելիք քեռիս։

— Եվս մի կարևոր խորհուրդ,— պատվիրեց ծերունին.— գիշերը, երբ քնելու լինես՝ փողը գրպանիցդ հանիր ու կոշիկիդ մեջ դիր։ Կոշիկը դիր բարձիդ տակ ու գիշերը գլուխդ բարձից մի կտրիր։ Աչքդ փակ քնած ձևացիր, բայց հանկարծ չքնես։

— Լավ, սըր։

— Այսքան բան, քեզ բարի ճամփա։

Կարո քեռին գնաց, և իմ Մելիք քեռին մյուս օրը գնացքով ուղևորվեց ամբողջ Ամերիկայի մյուս ծայրը՝ Նյու Յորք։ Այն, որ երկաթուղայինի համազգեստով երկու խաբեբա էին լինելու՝ գնացքի սպասավորներ էին եղել, թմրախոտով սիգարետ առաջարկող երիտասարդը չէր երևացել, խարդախ հմայուհու տեղը ռեստորանում այդպես էլ ոչ մի կին չէր հայտնվել, և ծխարանում էլ ոչ ծխող էր եղել ու ոչ էլ տաք թղթախաղ։ Գիշերը խեղճ Մելիք քեռիս փողը խցկել էր կոշիկի մեջ, կոշիկը՝ բարձի տակ և գլուխն էլ պինդ դրել բարձին ու մինչև լուսաբաց աչք չէր փակել, բայց մյուս օրը իր կարգը ինքն էր խառնել։

Մյուս օրը ինքն էր սիգարետ մեկնել մի երիտասարդի և սա վերցրել էր շնորհակալությամբ, վագոն-ռեստորանում ընթրողների մեջ ինքն էր նստել գեղեցիկ կնոջ սեղանին, ծխարանում ինքն էր սկսել ու տաքացրել թղթախաղը և մինչև Նյու Յորք հասնելը ինքը ծանոթացել բոլոր ուղևորների հետ և գնացքում բոլորը մեկառմեկ բարեկամացել էին իրեն։ Իսկ Օհայո քաղաքով անցնելիս՝ սիգարետը հաճույքով ընդունած երիտասարդը, ինքը Մելիք քեռիս և պարմանի երկու օրիորդ քառյակ կազմած միաբերան «Վոբոշյան բլյուզ» էին երգել։

Փառահեղ ճամփորդություն էր եղել։

Երբ այս Մելիքը վերադարձավ Նյու Յորքից, իր Կարո քեռին տեսության եկավ։

— Տեսքդ հիանալի է, քրոջ տղա,— ասաց,— երևի թե իմ խորհուրդներով ես շարժվել, այո՞։

— Միայն խորհուրդներով,— ասաց Մելիք քեռիս։

Ծերունին հայացքը հեռու հորիզոններին հառեց։

— Ես գոհ եմ, որ կյանքիս փորձը մեկին պետք եկավ։

Խոսրով քեռիս, ինքը զայրացկոտ և արտակարգ տխուր մարդ, մի տարի բարեկամացավ հին երկրից գաղթած կարճահասակ մի մարդու հետ, որ ներքուստ ժայռի նման հանդարտ էր, և որի տխրությունը արտահայտվում էր ծնկից փոշու հատիկ թոցնելով ու երբեք չխոսելով։

Այս մարդը արաբ էր, անունը՝ Խալիլ։ Ութ տարեկան տղայից խոշոր չէր նա, բայց, ինչպես իմ Խոսրով քեռին, շատ խոշոր բեղեր ուներ։ Վաթսունը անց էր հավանաբար։ Չնայած բեղերին, սակայն, նա հոգով ավելի երեխայի, քան հասուն մարդու նման լինելու տպավորություն էր թողնում։ Աչքերը երեխայի աչքեր էին, բայց ասես լցված էին տարիների հուշերով, երկար տարիների, որոնց ընթացքում բաժանված էր եղել խորապես սիրելի բաներից, ինչպես գուցե իր բնիկ երկրից, իր հորից, մորից, եղբորից, իր ձիուց կամ մի որևէ այլ բանից։ Գլխի մազերը փափուկ էին, խիտ, այնքան սև, որքան եղել էին միշտ, և ձախ կողմից բաժուկ արած, ճիշտ այնպես, ինչպես հին երկրից դեռ նոր Ամերիկա գաղթած ծնողները սովորեցնում էին իրենց փոքր տղաներին։ Նրա գլուխը իրոք որ դպրոցականի գլուխ էր, բացի բեղերից, այդպիսին էր նաև մարմինը, բացի լայն ուսերից։ Անգլերեն չգիտեր, միայն մի քիչ թուրքերեն էր խոսում, մի քանի բառ քրդերեն և շատ քիչ հայերեն, բայց բերանն էլ հազիվ էր բացում ընդհանրապես։ Ու երբ բացեր, խոսում էր մի ձայնով, որ ասես ոչ այնքան իրենից էր գալիս՝ որքան հին երկրից։ Նաև խոսում էր այնպես, որ կարծես թե խոսելու անհրաժեշտությունը ցավ էր պատճառում իրեն, կարծես թե սրտաճմլիկ բան է, որ մարդ աշխատի արտահայտել այն, ինչ երբեք չի կարելի արտահայտել, կարծես թե իր ամեն մի ասածը կարող էր միայն ավելացնել այն վիշտը, որ արդեն կար իր մեջ։

Թե ինչպես էր նա շահել իմ Խոսրով քեռու համակրանքը, մի մարդու, որ գեթ մի բան ուներ ասելու, այնպես էլ մեզանից ոչ ոք չիմացավ երբևիցե։ Մարդ քիչ բան է իմանում միշտ խոսող մարդկանցից, էլ ուր մնաց իմանա նրանցից, ովքեր հազիվ են մեկ-մեկ շրթունքները շարժում, այն էլ միայն հայհոյելու համար կամ պահանջելու, որ մի ուրիշը դադարի խոսելուց, ինչպես իմ Խոսրով քեռին էր։ Խոսրով քեռիս հավանաբար «Արաքս» սրճարանում էր հանդիպել արաբին։

Խոսրով քեռիս իր բարեկամներին ու թշնամիներին ջոկում էր նրանց թավլի խաղալու եղանակից։ Ամեն տեսակ խաղ մարդկային վարմունքի քննությունն է լարված վիճակում, ու թեև Խոսրով քեռիս

աշխարհի ամենավատ տարվողն էր, բայց արհամարհում էր որևէ այլ մարդու, որ տարվելիս շենք-շնորհք չէր պահում իրեն։

— Ի՞նչ ես ախուվախ անում,— գոռում էր նա այդպիսի տարվողի երեսին։— Եղած-չեղածը խաղ չէ՞։ Կյա՞նքդ ես կորցնում դրանով։

Ինքը, երբ տարվում էր, կորցնում էր իր կյանքը, բայց չէր կարող պատկերացնել, որ ուրիշ որևէ մեկը իր նման խոր ընկալեր խաղի խորհուրդը։ Իրեն հարցնեիր՝ ուրիշների համար խաղը միայն խաղ էր։ Իր համար, սակայն, խաղը ճակատագիր էր՝ սեղանին դրված խաղատախտակի վրա, որի մյուս կողմը մի որևէ աննշան մարդ շրխկացնում էր զառերը, թուրքերեն խոսքեր ասում դրանց, շողոքորթում, փսփսում, գոռում և ուրիշ շատ ձևերով ստորանում դրանց առաջ։

Խոսրով քեռիս արհամարհում էր զառերը, իր անձնական թշնամիները համարում և երբեք չէր խոսում դրանց հետ. շպրտում էր պատուհանից դուրս կամ սենյակի ծայրը, խաղատախտակն էլ սեղանից դեն հրում։

— Շունե՛ր,— գոռում էր նա։

Եվ հետո, մոլեգնած, մատը տնկում էր հակառակորդին ու բղավում.

— Իսկ դո՞ւ։ Հայրենակի՞ցս։ Ջես էլ ամաչում։ Ստորանում ես դրանց առաջ։ Պաղատո՞ւմ ես։ Ե՛ս եմ ամաչում քո տեղը։ Թքե՛լ եմ շնորի վրա։

Բնական է, ոչ ոք երկրորդ անգամ թավլի չէր խաղում Խոսրով քեռուս հետ։

Այս սրճարանը իր ժամանակին մեծ համբավ ու կշիռ ունեցող վայր էր։ Այսօր էլ նույնն է, թեպետ քսան տարի առաջ հաճախորդներից շատերը մահացել են։

Մեծ մասամբ հայերն էին հաճախում այնտեղ, բայց գալիս էին նաև ուրիշները։ Բոլոր նրանք, ովքեր հիշում էին հին երկիրը։ Բոլոր նրանք, ովքեր հին երկիրը սիրում էին։ Բոլոր նրանք, ովքեր հին երկրում թավլի էին խաղացել կամ սկամբիլ թղթախաղը։ Բոլոր նրանք, ովքեր ճաշակել էին հին երկրի կերակուրը, գինին, ռաֆրն և փոքրիկ բաժակներով սուրճը կեսօրից հետո։ Բոլոր նրանք, ովքեր սիրում էին երգերն ու պատմությունները։ Եվ բոլոր նրանք, ովքեր սիրում էին լինել ընտանի բույր ունեցող մի վայրում, հայրենիքից հազարավոր մղոններ հեռու։

Խոսրով քեռիս առավելապես կեսօրից հետո ժամը երեքի մոտ էր մտնում սրճարան։ Մի բոպե կանգնում էր, հայացքը ման ածում մարդկանց վրա, հետո առանձին նստում էր մի անկյունում։ Սովորաբար մեկ

ժամ նստում էր անշարժ, ապա դուրս գնում սոսկալի բարկացած, թեև ոչ ոք նրան մի բառ անգամ չէր ասել։

— Խե՜ղճ տղաներ,— ասում էր նա։— Խեղճուկրա՜կ որբեր։

Խեղճուկրակ... Անկարելի է այս մի բառը անգլերեն թարգմանել։ Չկա սակայն ավելի վշտալի բան կյանքում և աշխարհում, քան խեղճուկրակը։

Շատ հավանաբար մի օր, այս սրճարանում նստած, Խոսրով քեռիս նկատել էր կարճահասակ արաբին և տեսել, որ արժանավոր մարդ է։ Գուցե մարդը նստած թավլի խաղալիս էր եղել, իր լայն ուսերը խաղատախտակից վեր պահած, երեխայի իր գլուխը տխուր բռնած, հասկացող ու վշտոտ արտահայտությամբ, և գուցե խաղից հետո, երբ նա վեր էր կացել ու կանգնել, Խոսրով քեռիս տեսել էր, որ նա երեխայի հասակ ունի։

Գուցե նույնիսկ մարդը սրճարան էր եկել և, չճանաչելով Խոսրով քեռուս, մի խաղ թավլի խաղացել նրա հետ, տարվել էր, բայց չէր գանգատվել, հասկացել էր իրոք, թե ով է իմ Խոսրով քեռին, թեև մարդ բան չէր ասել նրան։ Գուցե նույնիսկ արաբը չէր աղաչել զառերին։

Ինչ էլ որ էր նրանց բարեկամության հիմքը, ինչպիսի փոխհասկացողություն էլ որ կար երկուսի միջև, ինչպես էլ որ հաղորդվում էին իրար, համենայն դեպս մերթ ընդ մերթ միասին գալիս էին մեր հյուրասենյակը և բարի էին գալիս։

Առաջին անգամ երբ արաբին բերեց մեր տունը, Խոսրով քեռիս հարկ չհամարեց նրան ներկայացնել։ Մայրս ենթադրեց, որ արաբը մեր հայրենակիցն է, գուցե հեռավոր մի ազգական, թեև նա մի քիչ ավելի թուխ էր, քան մեր ցեղի անդամների մեծ մասը, և ավելի կարճահասակ։ Դա կարևոր չէր անշուշտ. մի ժողովրդի հմայքն էր միայն, ուրիշ ոչինչ. տեսակը. այն հատկությունը, որով մարդս մարդկային է դառնում և արժանի՝ ժամանակի մեջ հարատևելու։

Այդ առաջին օրը մայրս մի տասը անգամ խնդրեց նրան իր տանն զգալ իրեն, ու հետո միայն արաբը նստեց։

«Խո՞ւլ է արդյոք»,— մտածեց մայրս։

Չէ, պարզ երևում էր, որ խուլ չէ, այնքան ուշադիր լսում էր։

Գուցե չէր հասկանում մեր բարբառը։ Մայրս հարցրեց՝ ո՞ր քաղաքից է։ Նա չպատասխանեց, միայն փոշի թոցրեց իր բաճկոնի թևից։ Հետո մայրս թուրքերեն ասաց.

— Հա՞յ եք։

Այս մեկն արաբը հասկացավ. թուրքերեն պատասխանեց, որ արաբ է։

— Խեղճուկրակ որբ,— շշնջաց Խոսրով քեռիս։

Մայրս մի բոպե մտածեց, թե արաբը կուզենար խոսել, բայց շուտով հայտնի եղավ, որ նրան էլ, ինչպես իմ Խոսրով քեռուն, ոչինչ այնքան չէր դառնացնում, որքան խոսելը։ Անհրաժեշտ լիներ, կարող էր խոսել, բայց ճիշտն այն է, որ պարզապես ասելու բան չկար։

Մայրս ծխախոտ ու սուրճ բերեց երկուսին և ինձ նշան արեց, որ դուրս գամ։

— Ուզում են խոսել,— ասաց նա։

— Խոսե՞լ,— ասացի։

— Ուզում են առանձին լինել,— ասաց մայրս։

Ես ճաշասենյակում նստեցի սեղանի առաջ և սկսեցի թերթել «Սեթերդեյ իվնինգ փոստ»-ի մի հին օրինակ, որն արդեն անգիր գիտեի։ Հատկապես նկարները. ավտոմեքենաներ, որոնց շուրջ կանգնել են նորաձևության սիրահար մարդիկ. գրպանի լապտերներ, որոնք լույս են գցում մութ անկյուններին. սեղաններ՝ ապուրի ամաններով, որոնցից գոլորշի է բարձրանում. երիտասարդներ, որոնք վերջին մոդայի պատրաստի կոստյում ու վերնազգեստ են հագել. և ամեն տեսակի այլ նկարներ։

Բայց երևի արագ էի դարձնում էջերը։

Խոսրով քեռիս գոռաց.

— Կամաց, օղո՛ւլ, կամաց։

Ես ճիշտ վայրկյանին հյուրասենյակ նայեցի ու տեսա, որ արաբը ծնկից փոշի է թոցնում։

Նրանք մեկ ժամ նստեցին հյուրասենյակում, հետո արաբը քթով շատ խորունկ շունչ քաշեց և առանց բառ ասելու թողեց գնաց։

Ես հյուրասենյակ մտա ու նստեցի այնտեղ, ուր արաբն էր նստել։

— Կամա՛ց,— ասաց Խոսրով քեռիս։

— Է՞, ի՞նչ է նրա անունը,— ասացի։

Խոսրով քեռիս այնպես ջղայնացավ, որ չգիտեր ինչ աներ։ Այնպես կանչեց մորս, որ կարծես իրեն սպանում էին։

— Մարիա՞մ,— բղավեց նա։— Մարիա՞մ։

Մայրս շտապ հյուրասենյակ վազեց։

— Ի՞նչ կա,— ասաց նա։

— Դուրս արա սրան, խնդրում եմ,— ասաց Խոսրով քեռիս։

— Ի՞նչ է պատահել։

— Ուզում է արաբի անունն իմանալ։

— Լավ, ի՞նչ կա որ,— ասաց մայրս։— Երեխա է։ Հետաքրքրվում է։ Ասա։

— Հասկացա՞նք,— տնքաց Խոսրով քեռիս։— Դո՜ւ էլ։ Իմ հարազա՜տ քույրս։ Իմ խե՜ղճուկրակ քույրիկս։

— Է լավ, ի՞նչ է արաբի անունը,— ասաց մայրս։

— Չե՛մ ասի,— ասաց Խոսրով քեռիս։— Պրծա՛վ։ Չե՛մ ասի։

Նա վեր կացավ ու գնաց տնից։

— Չգիտի մարդու անունը,— բացատրեց մայրս։— Իսկ դու իզուր ես նրան ջղայնացնում։

Երեք օր հետո, երբ Խոսրով քեռիս և արաբը մեր տունը եկան, ես հյուրասենյակում էի։

Խոսրով քեռիս ուղիղ ինձ մոտեցավ ու ասաց.

— Նրա անունը Խալիլ է։ Դե հիմա դուրս գնա։

Ես տնից դուրս ելա և բակում սպասեցի, որ իմ զարմիկներից մեկն ու մեկը գա։ Անցավ տասը րոպե, ոչ ոք չեկավ, և ես գնացի Մուրադ զարմիկիս տունը, ամբողջ մեկ ժամ նրա հետ վիճեցի, թե մեզանից ով է ավելի ուժեղ լինելու հինգ տարի հետո։ Երեք անգամ ըմբշամարտի բռնեցինք ու երեք անգամ պարտվեցի, բայց մեկ անգամ գրեթե հաղթանակ պիտի տանեի։

Երբ տոնն վերադարձա, երկու բարեկամները գնացել էին արդեն։ Տան ետևից ուղիղ հյուրասենյակ վազեցի, բայց նրանք այնտեղ չէին։ Միայն նրանց հոտը կար սենյակում և ծխախոտի հոտը։

— Ինչի՞ մասին խոսեցին,— հարցրի մորս։

— Մտիկ չարեցի,— ասաց մայրս։

— Խոսեցի՞ն որ,— ասացի։

— Չգիտեմ,— ասաց մայրս։

— Չխոսեցին,— ասացի ես։

— Ոմանք, երբ ասելու բան ունեն, խոսում են,— ասաց մայրս,— ոմանք էլ չեն խոսում։

— Ինչպե՞ս կարող ես խոսել, եթե բերանդ չես էլ բացում,— ասացի։

— Կխոսես առանց բառերի։ Մենք միշտ խոսում ենք առանց բառերի։

— Ուրեմն բառերն ինչի՞ են պետք։

— Շատ անգամ այնքան էլ պետք չեն։ Շատ անգամ պետք են միայն նրա համար, որ բուն ասելիքդ ծածկես կամ էլ թաքցնես այն, ինչ չես ուզում ուրիշներն իմանան։

— Իսկ նրանք խոսո՞ւմ են,— ասացի։

— Կարծում եմ՝ այո,— ասաց մայրս։— Հենց նստում սուրճ են խմում և սիգարետ ծխում։ Բերանները երբեք չեն բացում, բայց անընդհատ խոսում են։ Իրար հասկանում են և կարիք չունեն բերանները բացելու։ Թաքցնելու բան չունեն։

— Եվ իրոք գիտե՞ն, թե ինչի մասին են խոսում,— ասացի։

— Անշուշտ,— ասաց մայրս։

— Ինչի՞ մասին,— ասացի։

— Չգիտեմ ինչ ասեմ քեզ,— ասաց մայրս,— որովհետև բառերի մեջ չէ նրանց խոսածը։ Բայց իրենք գիտեն։

Մի ամբողջ տարի խոսրով քեռիս ու արաբը մերթ ընդ մերթ գալիս էին մեր տուն և նստում հյուրասենյակում։ Երբեմն մեկ ժամ էին նստում, երբեմն՝ երկու։

Մի անգամ խոսրով քեռիս հանկարծ դուռաց արաբին՝ «Ուշ մի՛ դարձրու դրան, ասում եմ քեզ», թեև արաբը ոչինչ չէր ասել։

Բայց առհասարակ բոլորովին չէին խոսում, մինչև հասնում էր գնալու ժամանակը։ Հետո խոսրով քեռիս հանգիստ ասում էր՝ «խե՜ղճուկրակ որբեր» և արաբը ծնկից փոշի էր թոցնում։

Մի օր, երբ խոսրով քեռիս առանձին եկավ, ես հանկարծ անդրադարձա, որ արաբը մի քանի ամիս չէր այցելել մեր տունը։

— Ո՞ւր է արաբը,— ասացի։

— Ի՞նչ արաբ,— ասաց խոսրով քեռիս։

— Խեղճուկրակ արաբը, որ քեզ հետ գալիս էր այստեղ,— ասացի։— Ո՞ւր է։

— Մարիա՜մ,— դուռաց խոսրով քեռիս։

Սարսափած կանգնել էր։

«Օհո՜,— մտածեցի։— Ի՞նչ պատահեց նորից։ Ի՞նչ արեցի որ»։

— Մարիա՜մ,— դուռաց նա։— Մարիա՜մ։

Մայրս հյուրասենյակ եկավ։

— Ի՞նչ կա,— ասաց։

— Խնդրում եմ,— ասաց խոսրով քեռիս։— Քո տղան է։ Դու իմ քույրիկն ես։ Խնդրում եմ, դուրս արա նրան։ Ամբողջ հոգով նրան սի-

րում եմ։ Ամերիկացի է։ Այստեղ է ծնվել։ Մի օր մեծ մարդ է դառնալու։ Տարակույս չունեմ։ Խնդրում եմ դուրս արա նրան։

— Ինչո՞ւ, ի՞նչ կա,— ասաց մայրս։

— Ինչ կա՞։ Ինչ կա՞։ Խոսում է։ Հարցեր է տալիս։ Սիրում եմ նրան։

— Արա՜մ,— ասաց մայրս։

Ես կանգնած մնում էի, և եթե խոսրով քեռիս ինձ վրա բարկացել էր, ես ավելի էի բարկացել նրա դեմ։

— Ո՞ւր է արաբը,— ասացի։

Խոսրով քեռիս, հուսահատ, մատով ցույց տվեց ինձ մորս։ «Ահա՞ քեզ,— ասում էր նրա այդ շարժումը։— Քո տղան։ Իմ քեռորդին։ Իմ միսն ու արյունը։ Տեսա՞ր։ Մենք բոլորս խեղճուկրակ որբեր ենք։ Բոլորս, բացի նրանից»։

— Արա՜մ,— ասաց մայրս։

— Լավ, եթե չխոսես,— ասացի,— բան չեմ հասկանա։ Ո՞ւր է արաբը։

Խոսրով քեռիս առանց բառ ասելու գնաց տնից։

— Արաբը մեռել է,— ասաց մայրս։

— Ե՞րբ ասաց քեզ,— հարցրի։

— Ոչինչ չասաց ինձ։

— Ուրեմն ինչպե՞ս իմացար,— ասացի։

— Էլ չգիտեմ ինչպես,— ասաց մայրս,— բայց մեռել է։

Նորից Խոսրով քեռիս օրերով չայցելեց մեր տունը։ Մի որոշ ժամանակ մտածեցի, թե նա էլ երբեք չի գալու։ Երբ վերջապես եկավ, հյուրասենյակում կանգնեց գլխարկը գլխին և ասաց.

— Արաբը մեռավ։ Որբ մեռավ օտար աշխարհում, հայրենի տնից վեց հազար մղոն հեռու։ Ուզում էր տուն գնալ ու մեռնել։ Ուզում էր նորից տեսնել իր տղաներին։ Ուզում էր նորից խոսել նրանց հետ։ Ուզում էր նրանց հոտն առնել։ Ուզում էր նրանց շունչը լսել։ Դրամ չուներ։ Անընդհատ մտածում էր նրանց մասին։ Հիմա մեռած է այլևս։ Դե, էլ դուրս գնա։ Սիրում եմ քեզ։

Ես ուզում էի գեռ մի քանի հարց էլ տալ, հատկապես արաբի տղաների մասին՝ քանի՞ տղա ուներ, որքա՞ն ժամանակ նրանցից հեռու էր ապրել և այլն, բայց որոշեցի, որ ավելի լավ է գնամ այցելեմ իմ զարմիկ Մուրադին և տեսնեմ՝ կկարողանա՞մ հիմա նրան գետնով տալ։

առանց մի բառ ասելու թողեցի գնացի, և դա հավանաբար շատ դուր եկավ իմ Խոսրով քեռուն, երևի նա զգաց, որ ես այնքան էլ անհուսալի մարդ չեմ վերջապես։

ՈՒՂԵՐՁ ՉՆՉԱՀԱՎԱՏՆԵՐԻՆ

Ռենոյից Սոլթ-Լեյք-Սիթի ճանապարհորդելիս ավտոբուսի լուսամուտից միայն մի բան ես տեսնում՝ անապատ և միայն մի բան ես զգում՝ օգոստոսի չոր շոգը։ Անապատ ասածը՝ բոլոր կողմերի վրա փռվող անվերջ ավազ է, անձանձիր կերպով ամենատարբեր ձևեր ու տեսակներ դարձող կակտուս ու համատարած արև։ Ավազը երբեմն սպիտակ է երևում, երբեմն դարչնավուն, մայրամուտի տակ այդ դարչինը կամ սպիտակը նարնջին է տալիս և ապա սևանում։ Դա ուրեմն գիշերն է՝ անապատային քո օրվա ամենալավ ժամը. խավարն ու անապատը միանում են և աչքերիդ առաջ փռվում է մի անսահման ու անհնչյուն ՈՉԻՆՉ։ Դա այն ոչինչն է, որ հավիտյան ծվարում է քո մեջ, և դրա հուշը իր հետ բերում է խորհրդավոր լռություն։

Ես իմ ապրածն եմ ասում. իմ առաջին ուղևորությունը Նյու Յորք՝ Ռենոյից մինչև Սոլթ-Լեյք-Սիթի ավտոբուսով, օգոստոսի չոր անապատով եղավ։ Իսկ Նյու Յորք ընկնելու՝ աշխարհ տեսնելու գաղափարը իմ դատարկ գլուխը Գիքո քեռիս էր մտցրել։ «Քեզ բան եմ ասում, տղա՛, քո ինչի՞ն է պետք այս փոքրիկ քաղաքը, քո տեղը Նյու Յորքն է, գնա մարդ դարձիր», ասել էր։

Այդպես էլ եղավ, ես Ռենոյում ավտոբուս նստեցի և ահա Սոլթ-Լեյք-Սիթիի ճանապարհին եմ, աշխարհ եմ տեսնում՝ որի նմանը ոչ տեսել եմ, ոչ էլ պատկերացրել։ Շուրջբոլորը ամայի չորություն է և այդ ծավալուն ամայության վրա՝ ոչինչը։ Գիշեր-ցերեկ ես աչք չեմ թարթում՝ որ տեսանելի ամեն բան տեսնեմ, բայց բան չկա՝ որ տեսնեմ։

Ավտոբուսը Ռենոյից շարժվեց կեսգիշերից անմիջապես հետո։

Ռենոն մարդկանց արատների վրա բարգավաճող քաղաք է՝ մոլախոտերի ու ծախու կանանց քաղաք, իր լույսերն ահա թե ինչու են այդպես շողում։ Դու դեռ խաղատան մուտքի դռներում՝ քարտ բաշխող խաղամոլի քթին տնկված երեք հատ սև մազը դահլիճի հեռավոր ծայրից երևում է, ահա թե ինչպես են շողում այդ քաղաքի լույսերը։

Ավտոբուսը մեզ Ռենոյից մեկեն անապատ հանեց։ Խաղատան կուրացուցիչ լույսի կողքին՝ անապատի կույր խավարը, շշմելի հակա-

դրություն էր։ Ամբողջ գիշերը մինչև առավոտ ես մտածում էի զգացածիս մասին, բայց այդպես էլ չգտա գոնե երեք այն բառը՝ որ ինձ համար պարզելու էին այդ հարադիր լույսի ու խավարի իմաստը։ Այդ մասին մի հորանջից բացի ես առավոտյան ոչինչ չունեի գտած։

Ավտոբուսը հազիվ էր կանգնել՝ ես դուրս թռա անապատի իմ պատկերացումը ամբողջացնելու, բայց դարձյալ նույնն էր՝ ինչ որ ավտոբուսի լուսամուտից՝ նույն ավազը, փոշոտ երկինքը, բարձրացող արևը։ Եվ ես դարձյալ չգտա այդ վիճակի բառերը և ասելու բան չկար էլ։ Համատարած ամայություն, բացարձակ պարապ— ոչ փողոցներ, ոչ շենքեր, խաշմերուկ, մուտքի դռներ, պատուհաններ, ստվերներ, ցուցատախտակ, ոչ մի բան։ Իմ Գիքո քեռու մեծ պատվիրանը ինձ՝ ապագա չտեսնել ծննդավայրի նեղվածքում և առհասարակ մանր քաղաքներում։ Եվ իմ համբերությունն ահա չէր դիմանում՝ որով ավտոբուսը շարժվի ու անապատից հասնի մեծ քաղաք, ուր ես կսկսեի որոշ բաներ նորից ըմբռնել։ Բայց շատ ավելի մտածում էի, որ այնքան էլ վատ չէր լինի, եթե Գիքո քեռիս ինքը թողներ մեր փոքրիկ բնակավայրը և մեծ քաղաքի ճանապարհին իմ փոխարեն ինքն ընկներ այս անապատ։ Վստահ չեմ, թե չոր անապատի կլորությա այս գերության մեջ ինքը պիտի կարողանար անել իր խորիմաստ դատողությունները, որոնց պատասխանը այս անհյուրընկալ լռությունն էր լինելու։ Ինքն ի վերջո ինձանից խելոք չէր, քանի որ կարդում էր, ճիշտ է, շատ հանգամանալից և միշտ ամբողջ էջեր ու գլուխներ մտապահում, բայց տառապանքով էր կարդում ու ինձնից վաղուց ետ էր մնացել և մտապահածն էլ այն հեռու Եվրոպայի երկհարյուրամյա հեղինակների շարադրանքն էր։ Իր պատ անգլերենով ինքը երբեմն բարձրաոճ բառեր էր քաղաբերում սեփական հորինվածքներից, որոնք ամբողջ հասարակարգեր ու վարդապետություններ էին դատափետում, իրեն նախապես իհարկե մի կողմ կանգնեցնելով մարդուն ինքը ոչխար և ժողովրդի հոտ էր համարում, բայց այդքանը, և դեռ մաքուր անգլերենով, կարող էի ինքս էլ ասել։ Մեր բնի նեղվածքից թռչելու, մեծ քաղաքների աշխարհը տեսնելու պատվիրանը ահա այս Գիքո քեռունն էր։

Թող ուրիմն ինքը թռչեր ու տեսներ, թե ինչ է զգում անապատի այս ամայության մեջ։ Իմ մասին՝ ես ավելի ու ավելի էի կորցնում դատելու կամ գոնե մտածելու իմ կարողությունը։ Ես կորցնում էի իմ աչքաբացությունն ու եռանդը, որ ինձ պետք էին գալու մեծ քաղաքում։ Եվ ամենավատը՝ ես ինձ լքված որբ էի զգում։ Այս էր ահա պատճառը և ոչ

թե քաղաքավար զրույցների գայթակղությունը, որ ես փորձեցի խոսքի բռնվել միակ ուղևորուհու հետ։

— Ինչպե՞ս է կոչվում այս վայրը,— հարցրի ես։

Նվազեցրած՝ նա մի երեսունհինգ տարեկան շատ տգեղ աղջիկ էր։

— Ո՞ր վայրը,— ասաց նա։

— Այս համատարած ավազը։

— Չգիտեմ,— ասաց աղջիկը։

Այդպիսով մեր զրույցն ընդհատվեց մինչև մյուս երեկո, երբ նա հարցրեց, թե ժամը քանիսն է, և ես պատասխանեցի, որ չգիտեմ։ Ես չգիտեի անգամ, թե շաբաթվա որ օրն էր, ուր մնաց՝ ժամը։ Ինձ սկսել էր արդեն թվալ, թե միակ բանը՝ որ ես գիտեմ, այն է՝ որ ոչինչ չգիտեմ։ Իմ մեջ միայն մի ցանկություն էր մնացել՝ շուտ Սոլթ-Լեյք-Սիթի ընկնել, նորից փողոցներ տեսնել, շենքեր, շարժուն մարդկանց, որոնց շնորհիվ ես պիտի որ նորից գտնեի գրքային փորձը, որ այս անապատում իր իմաստը կորցրել էր։

Միայն թե քաղաք ընկնեմ, ինձ հուսադրում էի ես, դարձյալ նույն մարդը կլինեմ, գուցեև ավելի խելոքացած. խավարի այս գերությունից միայն թե դուրս պրծնեմ, և ինքներդ կտեսնեք, թե աջուձախ ինչ զվարթ մտքեր եմ շռայլում։

Քաղաքի դերը ես չափազանցրել էի. անապատից ավելի ինձ Սոլթ-Լեյք-Սիթին կաշկանդեց, որ ինչպես ծրագրել էի, հիսուն սենթով սենյակ չտվեց և ոչ էլ տասնհինգ սենթով՝ փառահեղ ռեստորանում փառավոր ընթրիք։ Ես ընկճված, քաղցած ու հոգնած էի, ես քնել էի ուզում և շարանում էի ամեն ինչի վրա՝ շենքերի ու մարդկանց, ինձ վրա՝ որ հեռացել էի տնից։

Հին հյուրանոցի նեղլիկ սենյակին ես ի վերջո իմ ծրագրածի կրկնակին տվեցի և հենց այն սենյակն էի վարձել, ուր ապրում էին այդ հյուրանոցի բոլոր ուրվականները։ Ուրիշ ոչ մի տեղ ու ոչ մի անգամ ինձ այդքան սարսափելի սենյակ չի վիճակվել, բայց այն ժամանակ ես ինքնասածի տղա էի և այդ սենյակում համառեցի այնքան, մինչև որ անձամբ տեսա մեկառմեկ բոլոր ուրվականները, որոնք մարդկության երկար կյանքի ընթացքում չէին հասցրել գոնե մի անգամ կերպարանք առնել, և իմ ականջներով անձամբ լսեցի նրանց սահմռկելի ձայների բոլոր ելևէջները, որոնք ըստ գիտության իրականում իբր թե չկան, գոյություն չունեն։

Սենյակի կենտրոնում ճոճաթոռի մեջ երկյուղից կծկված՝ ամբողջ

երկու ժամ ես քարացել էի. դեպի դուռը կամ լուսամուտը հենց որևէ շարժում անեի՝ ինձ բռնելու ու խեղդելու էին, սենյակի բոլոր անկյուններում շունչները պահած ոգիները միայն իմ շարժումին էին սպասում։ Մինչև հիմա էլ չեմ հասկանում, թե այնտեղից ինչպես կարողացա անխաթար դուրս պրծնել, բայց կարողացա։

Սոլթ-Լեյք-Սիթիի փողոցներով մեկ ես փնտրեցի այն ճաշարանը՝ որ իմ ծրագրած գնով կկերակրեր ինձ, անշան մի խորտկարանում ձվածեղի մեջ տապակած մի լավ կտոր միս կերա քսանհինգ սենթով և իմ կացարանին դարձա։

Ես անկողին մտա գլխարկը գլխիս և կոշիկներս հեռատեսորեն ֆհարկե չհանած. վերահաս աղետի՝ երկրաշարժի, հրդեհի, ապստամբության, ջրհեղեղի, ժանտախտի ազդը դեռ չհնչած, ես ոտքի վրա փախուստի մեջ էի լինելու։ Լույսը մարելուց առաջ ես պոկվելու ու սլացքի մի քանի փորձ արեցի անկողին-դուռ-միջանցք վազքուղու վրա և պետք է ասեմ, որ արդյունքը վատ չէր. դռանը մի ոստյունով էի հասնում, միջանցքով փողոց նետվելու վրա ծախսվում էր երեք, ամենաշատը չորս վայրկյան։

Գիշերն իմ մենաստանից ես դուրս ընկա միայն երեք անգամ և լուսաբացին փողոցում ողջ-առողջ կանգնած էի։ Այդ ժամը հինգին ինն անց կեսի ավտոբուսին պատրաստ սպասելը, ճիշտ է, մի քիչ շուտ էր, բայց ճշմարիտ է նաև, որ ես չէի ցանկանում ավտոբուսից ետ ընկնել։

Այս ինն անց տասնհինգին ահա... ավտոկայանում կանգնել, հինգսենթանոց սիգար եմ փստացնում արտաքուստ շատ հանգիստ տեսքով ու ջանում տեղավորվել ջահել հեթանոսի իմ մաքուր կեղևում, որպեսզի նախկին անհոգ ազատը լինեմ, երբ հիսնամյա լողլողի մեկը ձեռքիս մի գրքույկ է դնում ու ասում. «Զավակս, փրկվա՞ծ է արդյոք քո հոգին»։

Աշխատանքային արտահագուստից երկար ձեռքերն ու ոտքերը դուրս են պրծել, հարյուր իննսուն սանտիմ բարակ ամբողջ հասակը լինի հազիվ քառասունութ, ամենաշատը հիսուն կիլո, մորուքից ուղղակի հավատ է ծորում, ասում ես անգործ մուրացկանն ահա մոտենում է ողորմության, բայց ողորմության փոխարեն ահա կրոնական մի գրքույկ է մեկնում ու դեռ հարցնում տրտում սրբի արտահայտությամբ՝ թե փրկվա՞ծ է արդյոք իմ հոգին։ Գրքույկի անունը՝ «Ուղերձ չնչահավատներին», այսինքն ճիշտ ինձ, հավատի առաջ բացարձակ անգետիս, հոգու փրկության խնդիրներից իսպառ անտեղյակիս, ցաքուցրիվ մտքերի խառնաշփոթի մեջ ավտոկայանում կանգնածիս։ Հինգսենթանոց սիգարը լրջմտորեն փստացնում ու պատասխանում եմ.

— Ինքս դրան գեմ չէի լինի, բայց իմ հոգին հազիվ թե փրկվի։

Այդ թափառական քարոզիչն ասում է.

— Բարեկամս, քո հոգին ես փրկում եմ Բրինգհեմ Ցանգի մորմոնական ավետարանով։

— Բայց ես միայն տասնհինգ րոպե եմ այստեղ,— ասում եմ։

— Ոչինչ,— ասում է,— մի մոլորյալի մի անգամ ես չորս րոպեում եմ փրկել։

— Այդքան արա՞գ,— ասում եմ։— Եվ ո՞րն է իմ անելիքը։

— Դու անելիք չունես, զավակս,— ասում է,— առանձնապես ոչինչ չես անելու։ Մտքիդ ծայրով էլ չի անցնի, թե բոլորն անխտիր որքան մոտ են կանգնած փրկությանը, բոլորն անխտիր։ Մի ժամանակ ես էլ էի անհույս մոլորյալ, կյանքս՝ հագուստներն ու խմիչքներն էին, թանկ սիգարներ, թղթախաղ, զառ, ձիարշավ, աղջիկներ և ոգի, և այլն։ Եվ ամբողջի վրա մի գիշերում քար քաշեցի։

— Ինչո՞ւ,— ասում եմ,— այդ ինչպե՞ս կլինի։

— Իմ բախտը լքեց ինձ, ամբողջ գիշեր ես տառապեցի ու տեսա, որ ես նա չեմ՝ ով ճշմարտությանը դեմ է գնում։

— Այդ ի՞նչ ճշմարտություն էր,— ասում եմ։

— Աստծո սուրբ ճշմարտությունը,— ասում է։— Իր հոգու խորքում մարդկանցից ոչ մեկը թշնամի չէ ճշմարտության։ Աշխարհում տիրող այս ողջ խառնաշփոթի պատճառը այն է, որ մարդիկ չգիտեն, թե իրենք ըստ էության ինչ են ուզում։

— Եվ ի՞նչ են ուզում,— ասում եմ։

— Ճշմարտություն,— ասում է։— Բոլորը ճշմարիտն են փնտրում, բոլորը՝ ովքեր կանանց հետ քարշ են գալիս ու խաղաթղթերը խարդախում, ովքեր կորչում են խմիչքների ու ճամփորդությունների մեջ, ովքեր դրամատուն են կողոպտում ու տեղները չեն նստում, այս բոլոր-բոլորը ճշմարտություն են որոնում։ Ահա նաև դու ես ճանապարհ ընկել, զավակս, և ո՞ւր ես գնում։

— Նյու Յորք,— ասում եմ։

— Է՜,— ասում է,— այնտեղ դու ճշմարտություն իհարկե չես գտնի։ Ես գիտեմ,— ասում է,— վերջին երեսուն տարում ես վեց անգամ եղել եմ Նյու Յորքում։ Այդպես ճշմարտություն չեն գտնում, այդպես թեկուզ ողջ աշխարհը ոտքի տակ կտաս ու ոչինչ չես տեսնի, քանի որ, զավակս, ոչ թե տեղը, այլ հայացքը փոխելով են տեսնում ճշմարիտը։ Դու պետք է փոխես հայացքդ, զավակս։

— Երևի դա դժվար չէ, այո՞,— ասում եմ։

— Հեշտից էլ հեշտ է։

— Ուրեմն սովորենք,— ասում եմ,— մեկ է կորցնելու բան չունեմ։ Ես ինչպե՞ս եմ փոխելու իմ աշխարհայացքը։

— Այսպես ուրեմն,— ասում է,— աշխարհը քննելու փորձերդ թո՞ղ ու հավատա՛, հավատա առանց քննելու։

— Հավատա՞մ,— ասում եմ,— ինչի՞ն։

— Քո շուրջը ինչ որ կա՝ քեզ շրջապատող ամեն ինչին՝ հարավին և հյուսիսին, արևելքին ու արևմուտքին, քո ձախին ու քո աջին, գլխիդ վերևի երկնքին և ոտքիդ տակի երկրին, քեզանից թաքունին և քեզ տեսանելիին, չարին ու բարուն, վատին և լավին, եթե ոչ վատին՝ ապա լավին, իսկ եթե կարող ես՝ երկուսին միաժամանակ։ Ահա իմ փոքրիկ գաղտնիքը, որ ես գտել եմ իմ հիսուն տարում։

— Ամբողջ եղածը ա՞յդ է,— ասում եմ։

— Այս է, զավակս։

— Հիանալի է,— ասում եմ,— հիմա ես հավատացյալ եմ։

— Զավակս,— ասում է թափառական քարոզիչը,— հիմա քո հոգին փրկված է, հիմա հանդիստ կարող ես Նյու Յորք էլ, աշխարհի ուզածդ տեղն էլ գնալ, ոչ ոք ու ոչինչ քո ճանապարհը չի փակի։

— Հուսամ, որ դա հենց այդպես էլ լինելու է։

— Կապրես ու կհիշես։

Մինչ մենք այդպես խոսում ենք, երկար ճանապարհորդությունների մեծ ավտոբուսը կայանի մատույց է մտնում, ես սրահ եմ բարձրանում և տեղավորվում բազկաթոռի մեջ։ Լողլող իմ քարոզիչը հպարտ ժպիտով մոտենում է լուսամուտին ու ասում.

— Դու իմ հիասքանչերորդ փրկածն ես։

— Մնաք բարով,— ասում եմ ես,— ձեր փոքրիկ գաղտնիքի համար երախտապարտ եմ։

— Ուրախ եմ, որ կարողացա օգնել մերձավորիս։ Միայն հիշիր՝ որ պետք է ուղղակի հավատաս։

— Ջեմ մոռանա, կտեսնեմ ու կհավատամ։

Ավտոբուսի շարժիչը հիմա հռնդում է։

— Ամեն ինչին,— ասում է։

Ավտոբուսը ծխի շիթ է խփում ու տեղից դանդաղ շարժվում։

— Աշխարհում ինչ որ կա՝ ամեն ինչին,— ասում եմ։

Հիմա ինչ եմ ասում. ինձ թվում էր, թե ես խաղում եմ Սոլթ-Լեյք-Սիթիի այդ լողլող քարոզիչի հոգու հետ և շուտով իմ սթափ մտքին ու գրքային իմաստությանը կդառնամ։ Բայց ես շարաշար սխալվում էի, գրքային այդ խելքից իմ հոգին իսկապես էր փրկվել։ Սոլթ-Լեյք-Սիթիից ավտոբուսի ուղևորվելուց տասը րոպե էլ չէր անցած, ես սկսեցի հավատալ իմ աջին և իմ ձախին, քարոզչի բառերով՝ իմ վերևի երկնքին և իմ տակի երկրին և մինչև այսօր էլ աշխարհը հենց այդպես եմ տեսնում։

ՄԵՐԻ-ԿԱՅԻՆ ԿԱՏԱԿԵՐԳՈՒՄԻՆ



ԱՅՍ ՎԻՊԱԿԸ ԹԱԳՈՒՀԻ ՍԱՐՈՅԱՆԻ ՀԱՄԱՐ Է ԳՐՎԱԾ

Վաղուց էի պատրաստվում մի վիպակ գրել հատուկ քեզ համար։ Ես ուզում էի, որ այն լիներ լավագույնը, որ երբևէ կարողանալու եմ գրել։ Եվ այժմ, վերջապես, թեկուզև մի քիչ հապճեպ, անում եմ այդ փորձը։ Կարող էի ավելի երկար սպասել, բայց որովհետև դժվար է գուշակել, թե ինչ կլինի հետագայում կամ ինչ հմտություն ու ճաշակ կմնա եղածից, մի քիչ շտապեցի և փորձեցի գրել իմ այժմյան ճաշակով ու հմտությամբ։ Հուսով եմ, որ շուտով մի մարդ վիպակը կթարգմանի հայերեն, ու այն կտպագրվի քո լավ իմացած լեզվով։ Թարգմանված վիճակում վիպակը գուցե ավելի հաջող ստացվի, քան անգլերենով, և դու, ինչպես հաճախ պատահել է, գուցե ցանկանաս կարդալ ինձ որոշ կտորներ, թեև ես եմ գրել այն։ Եթե այդպես լինի, խոստանում եմ ունկնդրել քեզ և սքանչանալ մեր լեզվի գեղեցկությամբ, որն այնքան քիչ է ծանոթ ուրիշներին և որը քեզնից բացի ոչ ոք չգիտի գնահատել։ Ու քանի որ դու չես կարող կարդալ ու հիանալ անգլերենով այնպես, ինչպես կարդում ու հիանում ես հայերենով, և քանի որ ես բոլորովին չեմ կարող ոչ կարդալ և ոչ էլ գրել հայերեն, ապա մենք մեր հույսը պետք է դնենք մի լավ թարգմանչի վրա։ Համենայն դեպս, այս վիպակը քեզ համար է գրված։ Հույս ունեմ, որ կհավանես։ Գրել եմ հնարավորին չափ պարզ, լրջության ու զվարթամտության այն շաղախով, որ հատուկ է մեր ընտանիքին և հատկապես քեզ։ Գիտեմ, վիպակում ամեն ինչ չի ասված, բայց ի՞նչ արած։ Միևնույն է, քեզ անպայման պիտի թվա, որ այնտեղ ամեն ինչ ասված է, քանի որ գրել է քո որդին և գրել ամենալավ ու բարի մտքով։

Գլուխ 1

ՅՈՒԼԻՍԻՍ

Յուլիսիս Մաքոլի անունով փոքրիկ տղան մի օր կանգնեց խլուրդի նոր բացած անցքի առաջ, իրենց տան բակում, որը գտնվում էր Կալիֆոռնիայի Իթաքա քաղաքի Սանթա Կլարա փողոցի վրա։ Խլուրդը

խոնավ, թարմ հողը դուրս հրեց և աչքի տակով նայեց տղային, որը, իհարկե, անծանոթ էր, բայց գուցեև թշնամի չէր։ Մինչ տղան այս հրաշքը ամբողջությամբ կվայելեր, իթաքայի թռչուններից մեկը թռավ դեպի բակի մեծ ընկուզենին և, տեղավորվելով մի ճյուղի վրա, սկսեց երգել՝ տղայի հափշտակությունը հողից դեպի ծառը գրավելով։ Հետո, այդ բոլորից ավելի հրաշալի, հեռվում մի հին գնացք ֆշշաց և շարժվեց։ Տղան լսեց ֆշշոցը և զգաց, որ գնացքի շարժվելուց երերաց ոտքի տակի հողը։ Դրանից նա սկսեց վազել ավելի արագ (նրան այդպես թվաց), քան որևէ կենդանի էակ ամբողջ աշխարհում։

Նա ճիշտ ժամանակին հասավ երկաթգծին. տեսավ անցնող գնացքը՝ շոգեքարշից մինչև բեռնատար վագոնը։ Նա ձեռքով ողջունեց մեքենավարին, բայց մեքենավարը չպատասխանեց։ Նա ողջունեց նաև գնացքի մեջ եղող ուրիշ հինգ հոգու, բայց նրանցից ոչ մեկը չպատասխանեց տղայի ողջույնին։ Նրանք կարող էին այդ անել, բայց չարեցին։ Վերջապես երևաց մի նեգր՝ հենված բեռնատար վագոնի եզրին։ Կառաշարի աղմուկի մեջ Ցուլիսիսը լսեց այդ մարդու երգը.

Այլևս մի լար, մի լար, լեռի, այսօր մի լար,
Եկ մի երգ երգենք մեր Քենթքիի տան պատվին,
Եկ այդ հեռավոր տան երգը երգենք։

Ցուլիսիսը ողջունեց նրան, իսկ հետո մի հրաշալի և անսպասելի բան պատահեց։ Այդ մարդը, որ սև էր և մյուսներից տարբեր, ձեռքով ողջունեց Ցուլիսիսին՝ բղավելով.

— Տուն եմ գնում, փոքրիկ, գնում եմ իմ ծննդավայրը։

Փոքրիկ տղան և նեգրը ձեռքով էին անում իրար, մինչև որ գնացքը կորավ տեսադաշտից։

Ապա Ցուլիսիսը նայեց շուրջը։ Ահա իր աշխարհը. տարօրինակ, զարմանալի, անիմանալի, բայց և այնքան գեղեցիկ։ Ճանապարհով բեռը շալակին մի ծերուկ անցավ։ Ցուլիսիսը նրան էլ ձեռքով արեց, բայց ծերուկն այնքան զառամյալ էր և հոգնած, որ չէր կարող հրճվել փոքրիկ տղայի բարեկամական ցույցից։ Ծերունին նայեց Ցուլիսիսին այնպես, կարծես ինքն էլ, տղան էլ վաղուց մեռած լինեին։

Փոքրիկ տղան շրջվեց և դանդաղ քայլեց դեպի տուն։ Նրա ականջում դեռ գնացքի ձայնն էր, նեգրի երգն ու զվարթ խոսքերը՝ տուն եմ գնում, փոքրիկ, գնում եմ իմ ծննդավայրը։

Նա այլևս այդ ամենի մասին չէր մտածում, երբ հասավ չինա ծառի տակ և ոտքով խփեց ծառից ընկած դեղին, հոտած պտուղին։ Իսկ մի

րոպե հետո նա ժպտաց Մաքոլիների ժպիտով, այն մեզմ, իմաստուն, թաքուն ժպիտով, որը այո է ասում ամեն ինչին։

Երբ շրջվեց փողոցի անկյունը և տեսավ Մաքոլիների տունը, սկսեց ցատկոտել՝ ոտքով քշելով փողոցում ընկած կոշիկի մի կրունկ։ Այս զվարճանքից նա սայթաքեց ու ընկավ, բայց վեր կացավ ու շարունակեց քայլել։

Մայրը բակում հավերին կուտ էր տալիս։ Նա տեսավ որդու սայթաքելը, ընկնելն ու վեր կենալը։ Տղան արագ հասավ մորը և լուռ կանգնեց կողքին, իսկ հետո հավաբուն մտավ ձու փնտրելու։ Մի հատ գտավ, վերցրեց նայեց և զգուշությամբ հանձնեց մորը։ Դրանով նա ուզեց ասել մի բան, որ մեծերից ոչ մեկը չի կռահի, երեխան էլ չի հիշի, որ պատմի։

Գլուխ 2

ՀՈՄԵՐ

Նրա Հոմեր եղբայրը, մի հին հեծանիվ նստած, արիաբար պայքարում էր գյուղական ճանապարհի ցեխի ու փոշու դեմ։ Հոմեր Մաքոլիի հադին հեռագրատան ցրիչի բաճկոն էր, որ շատ էր մեծ և մի գլխարկ, որ բավական փոքր էր։ Արևը մայր էր մտնում երեկոյան քնկոտ խաղաղությամբ, որ շատ սիրելի էր Իթաքայի բնակիչներին։ Հեռագրացրիչի շուրջը պտղատու և խաղողի այգիներ էին՝ ծուլորեն փռված Կալիֆոռնիայի հինավուրց հողի վրա։ Թեև Հոմերը շտապում էր, բայց նրա աչքից չէր վրիպում շրջապատի հրապույրից և ոչ մեկը։ «Նայիր, ասում էր նա իրեն՝ հողը, ծառը, արևը, խոտը և ամպը ցույց տալով, նայիր դրանց, խնդրեմ»։ Նա սկսեց հեծանիվով զարդագծեր քաշել՝ մարմնի շարժումները հարմարեցնելով այդ նախշերին, երգել ինչ-որ պարզ, սրտահույզ եղանակ։ Նրա մտքում այս եղանակը հնչեց նվագախմբով, հետո նվագախմբին միացան մոր տավիղն ու քրոջ՝ Բեսի դաշնամուրը։ Եվ վերջապես, որպեսզի ընտանիքը ամբողջական դառնա, խմբին միացավ ակորդեոնը՝ երաժշտությունը դաշնավորելով զուսպ և զվարթ քաղցրությամբ. Հոմերը հիշեց իր Մարկուս եղբորը։

Հոմերի երաժշտությունը խլացավ երկնքով սլացող երեք անհավատալի առարկաների աղմուկից։ Ցրիչը զարմանքով վերև նայեց և ընկավ մի փոքր, անջուր առվի մեջ։

— Ինքնաթիռնե՞ր,— ասաց Հոմերն ինքն իրեն։ Ագարակի մի շուն արագ ու մեծ հանդիսավորությամբ հարձակվեց նրա վրա և կարևոր

պատգամ ունեցողի տեսքով սկսեց հաչել։ Հոմերը ուշադրություն չդարձրեց շանը։ Մի անգամ միայն շրջեց գլուխը և կենդանուն գրգռեց. «հաֆ, հաֆ», նորից նստեց հեծանիվը և ճանապարհը շարունակեց։

Երբ հասավ քաղաքի ծայրամասը, առանց կարդալու անցավ մի ցուցանակի կողքով, որի վրա գրված էր.

Իթաքա, Կալիֆոռնիա։
Ուր ուզում ես գնա, տնից լավ տեղ չկա.
Բարի գալուստ, օտարական։

Հաջորդ փողոցի անկյունում նա կանգնեց, սպասելով զորակոչիկներով լցված ավտոշարասյան անցնելուն։ Նա ողջունեց այդ մարդկանց ճիշտ այնպես, ինչպես իր Ցուլիսիս եղբայրն էր ողջունել մեքենավարին և թափառաշրջիկներին։ Բազմաթիվ զինվորներ պատասխանեցին ցրիչի ողջույնին։ Եվ ինչո՞ւ չպատասխանեին։ Ի՞նչ ունեին կորցնելու...

Գլուխ 3

ՀԵՌԱԳՐԱՏՈՒՆԸ

Իթաքայում երեկո էր, երբ Հոմերը վերջապես հասավ հեռագրատուն։ Լուսամուտին դրված ժամացույցը յոթ անց երկու րոպե էր ցույց տալիս։ Դրասենյակում Հոմերը տեսավ հեռագրատան վարիչ միստր Սփանգլերին, որը զբաղված էր հեռագրի բառերը հաշվելով։ Այդ հեռագիրը հենց նոր նրան էր հանձնել հոգնած տեսքով, քսան տարեկանի մոտ մի հուզված երիտասարդ։ Դրասենյակ մտնելիս, Հոմերը լսեց միստր Սփանգլերի և երիտասարդի զրույցը։

— Տասնութ բառ՝ գանձել հասցեատիրոջից,— ասաց Սփանգլերը։ Նա մի պահ լռեց, նայեց պատանուն։— Ինչ է, փող չունե՞ս։

Պատանին անմիջապես չկարողացավ պատասխանել, բայց շուտով ասաց.

— Մի քիչ ունեմ, բայց մայրս տուն հասնելու համար փող կուղարկի։

— Անշուշտ,— ասաց Սփանգլերը։— Ո՞ւր էիր, չէիր երևում։

— Կարելի է ասել՝ ոչ մի տեղ,— ասաց տղան և սկսեց հազալ։— Ինչքա՞ն ժամանակում հեռագիրը կհասնի մորս։

— Արևելքում հիմա բավական ուշ է,— ասաց Սփանգլերը,— ուշ գիշերին փող ճարելը երբեմն այնքան էլ հեշտ չէ։ Բայց հեռագիրը անմիջապես կուղարկեմ։

Առանց տղային նայելու, Սփանգլերը քրքրեց գրպանները, հանեց մի բուռ մանր դրամ և մի թղթադրամ և մի խաշած ձու։

— Վերցրու,— ասաց,— կարող է պետք գալ,— նա տղային մեկնեց թղթադրամը։— Կվերադարձնես, երբ մայրդ փող կուղարկի,— ասաց նա և ցույց տվեց ձուն։— Յոթ օր առաջ մի գինետնից վերցրի ու գրպանս դրեցի։ Երշանկություն է բերում։

Տղան նայեց դրամին։

— Այդ ի՞նչ եք անում,— ասաց նա։

— Դատարկ բան է,— պատասխանեց Սփանգլերը,— վերցրու։

— Շնորհակալություն,— ասաց տղան։ Նա կանգնեց զարմացած և շփոթված,— շնորհակալություն,— կրկնեց նա և գրասենյակից դուրս շտապեց։

Սփանգլերը հեռագիրը տարավ գիշերային հեռագրող Վիլյամ Գրոգանին։

— Վճարովի է, Վիլլի,— ասաց նա,— ինքս կվճարեմ։

Միստր Գրոգանը միացրեց մեքենան և սկսեց տառ առ տառ հաղորդել հեռագիրը։

Տիկին Մարգրրեթ Սթրիքման
1874 Բիթլ փողոց
Յորք Փենսիլվանիա

Սիրելի մայրիկ, խնդրում եմ հեռագրով փոխանցիր երեսուն դոլար։ Ուզում եմ տուն գալ. լավ եմ, ամեն ինչ կարգին է։

Ջոն

Հոմեր Մաքոլին նայեց առաքման սեղանին. չկա՞, արդյոք, առաքման կամ էլ հեռախոսային կանչերի հեռագիր։ Միստր Սփանգլերը հետևում էր նրան, իսկ հետո հարցրեց.

— Քեզ դո՞ւր է գալիս ցրիչի աշխատանքը։

— Այն էլ ինչպե՞ս,— ասաց Հոմերը,— ամեն ինչից շատ եմ սիրում. տարբեր մարդկանց ես տեսնում, տարբեր տեղեր ես գնում։

— Ճիշտ է,— ասաց Սփանգլերը, հետո սևեռուն նայեց տղային։

— Ինչպե՞ս քնեցիր երեկ գիշեր։

— Հրաշալի,— ասաց Հոմերը,— շատ հոգնած էի, բայց հրաշալի քնեցի։

— Դպրոցում մի քիչ ննջեցի՞ր այսօր։

— Մի քիչ։

— Ո՞ր դասին։

— Հին պատմության։

— Իսկ սպո՞րտը,— ասաց Սփանգլերը,— ուզում եմ ասել, որ այս գործի պատճառով երևի չես կարողանա մասնակցել ֆիզկուլտուրայի դասերին։

— Մասնակցում եմ,— ասաց Հոմերը,— ամեն օր ֆիզկուլտուրա ունենք։

— Իսկապե՞ս,— ասաց Սփանգլերը,— երբ ես Իթաքայի միջնակարգ դպրոցում էի, մասնակցում էի երկու հարյուր քսան յարդ արգելավազքին։ Մեր հովտի չեմպիոնն էի,— հեռագրատան վարիչը լռեց, հետո շարունակեց։— Դու իսկապե՞ս սիրում ես այս գործը։

— Ես ուզում եմ լինել ամենալավ ցրիչը, որ այս գրասենյակը երբևէ ունեցել է,— պատասխանեց Հոմերը։

— Շատ լավ,— ասաց Սփանգլերը,— միայն թե քեզ մի տանջիր, այդքան արագ մի գնա, շուտ տեղ հասիր, բայց շատ արագ մի գնա։ Քաղաքավարի եղիր բոլորի հետ, վերելակի մեջ գլխարկդ հանիր և, ամենից կարևորը, աշխատիր ոչ մի հեռագիր չկորցնել։

— Այո, սըր։

— Գիշերվա աշխատանքը ցերեկային աշխատանքից տարբեր է,— շարունակեց Սփանգլերը։— Գիշերով չինական թաղամասը կամ քաղաքի ծայրամասը ոչ բոլորը կհամարձակվեն հեռագիր տանել, բայց դու մի վախեցիր։ Մարդիկ ամեն տեղ էլ մարդիկ են. նրանցից մի վախեցիր։ Քանի՞ տարեկան ես։

Հոմերը թուքը կուլ տվեց.

— Տասնվեց,— ասաց նա։

— Հա, գիտեմ, երեկ ասացիր,— ասաց Սփանգլերը։— Մենք իրավունք չունենք 16 տարեկանը չլրացած երեխաներին աշխատանքի ընդունել, բայց մտածեցի, որ կարելի է քեզ փորձել։ Քանի՞ տարեկան ես։

— Տասնչորս,— ասաց Հոմերը։

— Ոչինչ, երկու տարուց տասնվեց կդառնաս։

— Այո, սըր,— ասաց Հոմերը։

— Եթե որևէ բան չհասկանաս,— ասաց Սփանգլերը,— ինձ մոտ արի։

— Կգամ, սըր,— ասաց Հոմերը։ Նա լռեց, հետո հարցրեց,— իսկ ի՞նչ բան են երգող հեռագրերը։

— Ոչինչ, մենք դրանցից շատ չենք ստանում։ Բավականին լավ ձայն ունես, չէ՞։

— Ես Իթաքայի առաջին երիցական եկեղեցու կիրակնօրյա դպրոցում երգում էի,— ասաց Հոմերը։

— Հրաշալի է,— ասաց Սփանգլերը,— դա ճիշտ այն ձայնն է, որ մեզ պետք է։ Հիմա, ասենք, միստր Գրոգանը ծննդյան շնորհավորագիր է ստացել, ինչպե՞ս պիտի անեա։

Հոմերը մոտեցավ միստր Գրոգանին և երգեց.

Երջանիկ ծննդյան օր,
Բախտավոր ծննդյան օր։
Երջանիկ ծննդյան օր, սիրելի Գրոգան,
Բախտավոր ծննդյան օր։

— Շնորհակալ եմ,— ասաց միստր Գրոգանը։

— Հրաշալի է,— ասաց Սփանգլերը Հոմերին,— բայց դու չպետք է «սիրելի Գրոգան» ասես, այլ պետք է ասես «սիրելի միստր Գրոգան»։ Իսկ ի՞նչ պիտի անես շաբաթական տասնհինգ դոլարը։

— Մայրիկիս պիտի տամ,— պատասխանեց Հոմերը։

— Շատ լավ,— ասաց Սփանգլերը,— այսօրվանից դու աշխատում ես, դու այս հիմնարկության անդամ ես. լավ նայիր, ուշադիր լսիր, աչքերդ ու ականջներդ բաց պահիր։

Հեռագրատան վարիչը մի որպես ցրված հայացքով նայեց, հետո ասաց.

— Ապագայում ի՞նչ ես երազում դառնալ։

— Ապագա՞յում,— հարցրեց Հոմերը։ Նա մի քիչ շփոթված էր, որովհետև ամեն օր, իր ամբողջ կյանքի ընթացքում, շարունակ զբաղված էր ապագայի մասին երազելով, նույնիսկ, եթե ապագա ասելով նա հաջորդ օրն էր հասկանում։— Հաստատ չգիտեմ,— ասաց նա,— բայց ինձ թվում է, որ կուզենայի ապագայում ինչ-որ բան դառնալ, գուցե կոմպոզիտոր կամ դրա նման մի բան։

— Հրաշալի է,— ասաց Սփանգլերը,— հենց այստեղից էլ պիտի սկսես։ Սա ամենահարմար տեղն է։ Շուրջդ ամբողջ երաժշտություն է, իսկական երաժշտություն, հենց կյանքից եկող, մարդկանց սրտից բխող երաժշտություն։ Լսո՞ւմ ես հեռագրի ձայնը, գեղեցի՞կ է։

— Այո, սըր,— ասաց Հոմերը։

Հանկարծ Սփանգլերը հարցրեց.

— Գիտե՞ս որտեղ է Ջաթերթոնի թխվածքների խանութը, Բրոդվեյի վրա. վերցրու այս քառորդ դոլարը և ինձ համար խնձորով և հնդկընկույզի սերուցքով պատրաստված երկու կարկանդակ բեր։ Երկուսը մեկ քառորդով են տալիս։

— Լավ, սըր,— ասաց Հոմերը և, օդի մեջ բռնելով մետաղադրամը, գրասենյակից դուրս վազեց։

Սփանգլերը նայեց նրա ետևից՝ հետո ընկավ մոռացության գիրկը։ Երբ սթափվեց, դարձավ դեպի հեռագրիչը և ասաց.

— Ի՞նչ կարծիք ունես նրա մասին։

— Լավ տղա է,— ասաց միստր Գրոգանը։

— Ես էլ եմ կարծում, որ լավն է,— ասաց Սփանգլերը։— Սանթա Կլարա պողոտայի վրա ապրող մի լավ, աղքատ ընտանիքից է։ Հայր չունի, եղբայրը բանակում է։ Մայրը պահեստում ամառները միրգ է փաթեթավորում, քույրը նահանգային քոլեջ է գնում։ Միայն թե երկու տարով փոքր է աշխատանքի համար անհրաժեշտ տարիքից, ուրիշ ոչինչ։

— Իսկ ես երկու տարով անհրաժեշտից մեծ եմ,— ասաց միստր Գրոգանը,— յոլա կգնանք։

Սփանգլերը վեր կացավ։

— Եթե իմ կարիքը զգաս,— ասաց նա,— ես Կորբետի մոտ եմ. կարկանդակները ձեր մեջ բաժանեք,— խոսքը չավարտած, նա զարմացած կանգ առավ, երբ տեսավ Հոմերին, որը վազելով գրասենյակ մտավ՝ փաթեթը ձեռքին։

— Անունդ ի՞նչ է,— Սփանգլերը համարյա բղավեց տղայի վրա։

— Հոմեր Մաքոլի,— ասաց Հոմերը։

Հեռագրատան վարիչը ձեռքը դրեց նոր ցրիչի ուսին։

— Ապրես, Հոմեր Մաքոլի,— ասաց նա,— դու ճիշտ այն տղան ես, որ պետք է այս գրասենյակին գիշերային աշխատանքի համար. դու հավանաբար, ամենաարագ շարժվող էակն ես ամբողջ Սան Հոակին հովտում։ Դու շատ մեծ մարդ կդառնաս մի օր, եթե ապրես։ Այնպես արա, որ ապրես։

Մինչ Հոմերը աշխատում էր հասկանալ այդ մարդու ասածը, նա շրջվեց և դուրս եկավ գրասենյակից։

— Լավ, մանչուկ, —ասաց միստր Գրոգանը,— բեր տեսնենք։

Հոմերը կարկանդակները դրեց նրա սեղանին, իսկ միստր Գրոգանը դեռ շարունակում էր խոսել.

— Հոմեր Մաքոլի իմ անունը Վիլյամ Գրոգան է, բայց ինձ Վիլլի են ասում։ Թեև վաթսունյոթ տարեկան եմ։ Շատ հին հեռագրիչ եմ, աշխարհում ձեռքի ապարատով ամենավերջին հեռագրիչներից մեկը։ Ես նաև այս գրասենյակի գիշերային գլխավոր հեռագրիչն եմ։ Ես նաև մի մարդ եմ, որն աշխարհում կատարված հրաշալի գործերից հիշողություններ ունի։ Ես նաև քաղցած եմ։ Արի հարձակվենք խնձորով ու սերուցքով պատրաստված այդ կարկանդակների վրա։ Այսօրվանից ես ու դու բարեկամներ ենք։

— Այո, սըր,— ասաց Հոմերը։

Մեր հեռագրիչը կարկանդակներից մեկը չորս մասի բաժանեց, և նրանք սկսեցին ուտել հնդկական ընկույզով ու սերուցքով պատրաստված կարկանդակը։

— Անհրաժեշտության դեպքում քեզնից կխնդրեմ, որ ինձ համար որևէ հանձնարարություն կատարես,— ասաց միստր Գրոգանը,— երգելիս ինձ ընկերակցես կամ պարզապես նստես ու ինձ հետ զրուցես։ Երբ հարբած լինեմ, քեզնից մեծ նրբանկատություն է պահանջվում, մի բան, որ չի կարելի սպասել տասներկու տարեկանից բարձր մարդկանցից։ Քանի՞ տարեկան ես։

— Տասնչորս,— ասաց Հոմերը,— բայց կարծում եմ, որ բավարար չափով զգայուն եմ։

— Բարի, —ասաց միստր Գրոգանը,— քո խոսքին հավատում եմ։ Հույսս դնում եմ քեզ վրա, վստահ լինելով, որ դու ամեն գիշեր կհսկես, որպեսզի ես իմ պարտականությունները կարողանամ կատարել։ Սառը ջուր շաղ կտաս երեսիս, եթե կարգին չարթնացա, դրան պետք է հաջորդի մի բաժակ տաք սև սուրճը, որ պետք է բերես Կորբետի մոտից։

— Կանեմ, սըր,— ասաց Հոմերը։

— Փողոցում բոլորովին այլ կերպ պետք է վարվես,— շարունակեց միստր Գրոգանը։— Եթե ինձ տեսնես ալկոհոլի գիրկն ընկած, բարև տուր և անցիր, թող ինձ երանության մեջ։ Շատ զգայուն մարդ եմ և նախընտրում եմ հոգածության առարկա չլինել։

— Սառը ջուր և սուրճ՝ գրասենյակում,— ասաց Հոմերը,— ողջույն՝ փողոցում. հասկացա, սըր։

Միստր Գրոգանը շարունակեց՝ բերանը լիքն էր սերուցքով։

— Կարծում ես, որ այս աշխարհը ավելի լա՞վ է լինելու պատերազմից հետո։

Հոմերը մի պահ մտածեց, ապա ասաց.

— Այո, սըր։

— Հնդկընկույզի սերուցք սիրո՞ւմ ես,— հարցրեց միստր Գրոգանը։

— Այո, սըր,— ասաց Հոմերը։

Հեռագրատուփը ծղրտաց։ Միստր Գրոգանը պատասխանեց կանչին և, նստելով գրամեքենայի առաջ, շարունակեց խոսել.

— Ես նույնպես շատ եմ սիրում։ Սիրում եմ նաև երաժշտություն, հատկապես՝ երգ։ Կարծեմ դու ասացիր, որ մի ժամանակ երգել ես կիրակնօրյա դպրոցում։ Խնդրում եմ, բարի եղիր կիրակնօրյա մի երգ երգել, մինչև ես Վաշինգտոնից ստացված այս հեռագիրը մեքենագրեմ։

Հոմերը երգեց «Դարերի ապառաժը», մինչ միստր Գրոգանը մեքենագրում էր հեռագիրը, որը միսիս Ռոզա Սանդովալին էր ուղղված,

1129 գ փողոց, Իթաքա, Կալիֆոռնիա։ Հեռագրում ռազմական բաժանմունքը տեղյակ էր պահում միսիս Սանդովալին, որ նրա որդին, Ժուան-Դոմինիկո Սանդովալը, սպանվել է ռազմադաշտում։

Միստր Գրոգանը հեռագիրը մեկնեց Հոմերին, հետո մի մեծ կում խմեց աթոռի կողքի դարակում պահած շշից։ Հոմերը վերցրեց հեռագիրը, դրեց ծրարի մեջ, կնքեց, ծրարը դրեց գլխարկի մեջ և գրասենյակից դուրս եկավ։ Երբ ցրիչը մեկնել էր, ծեր հեռագրիչը բարձրաձայն երգեց «Դարերի ապառաժը» երգը։ Չէ՞ որ ինքն էլ մի ժամանակ երիտասարդ էր եղել։

Գլուխ 4

ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԸ ԿՆԱԽԱՆՁԻ ԻՆՁ

Երաժշտությունը գալիս էր Սանթա Կլարա պողոտայի վրա գտնվող Մաքոլիների բնակարանից։ Բեսը և միսիս Մաքոլին նվագում էին «Ամբողջ աշխարհը կնախանձի ինձ» երգը։ Նրանք զինվոր Մարկուսի համար էին նվագում, որտեղ էլ որ նա գտնվելիս լիներ այժմ, որովհետև դա նրա ամենասիրելի երգն էր։ Հարևան տնից եկավ Մերի Արենան, կանգնեց Բեսի կողքին և սկսեց երգել։ Նա նույնպես երգեց Մարկուսի համար, որը նրա ամբողջ աշխարհն էր։ Փոքրիկ Ցուլիսիսը լսում էր ու նայում։ Ինչ-որ բան, ինչ-որ տեղ խորհրդավոր էր թվում նրան և, չնայած քունը տանում էր, նա ուզում էր հասկանալ... Ի վերջո հաղթահարեց քունը և հարցրեց.

— Մարկուսն ո՞ւր է։

Միսիս Մաքոլին նայեց տղային։

— Դու պետք է հասկանաս... — սկսեց նա, ապա լռեց։

Ցուլիսիսը փորձեց հասկանալ, բայց չգիտեր, թե ինչը պետք է հասկանար։

— Ի՞նչը հասկանամ,— հարցրեց նա։

— Մարկուսը,— ասաց միսիս Մաքոլին,— Իթաքայից հեռու է գնացել։

— Ինչո՞ւ,— հարցրեց Ցուլիսիսը։

— Մարկուսը բանակում է,— ասաց միսիս Մաքոլին։

— Ե՞րբ է տուն գալու,— հարցրեց փոքրիկ տղան։

— Երբ պատերազմն ավարտվի,— ասաց միսիս Մաքոլին։

— Վա՞ղը։

— Չէ, վաղը չէ։

— Ե՞րբ։

— Չգիտենք, սպասում ենք։

— Իսկ որտե՞ղ է հայրիկը,— ասաց Ցուլիսիսը,— եթե սպասենք, նա՞ էլ Մարկուսի պես տուն կդառնա։

— Ոչ,— պատասխանեց միտիս Մաքոլին,— նա չի դառնա տուն այդպես։ Նա չի քայլի, փողոցի սանդուղքով չի բարձրանա, չի մտնի տուն։

Այսքանը շատ էր փոքրիկ տղայի համար, և որովհետև միայն մի բառ կար, որով հույս ուներ հասնել ճշմարտության կամ էլ հանգստություն ձեռք բերել, նա արտասանեց այդ բառը.

— Ինչո՞ւ։

Միսիս Մաքոլին դարձավ Բեսին և Մերիին.

— Նույնիսկ մեծերի համար հեշտ չէ մահը հասկանալը,— ասաց նա,— ուր մնաց թե երեխան հասկանա, բայց ամեն մի կյանք մի օր պիտի ավարտվի։

Նա նայեց Ցուլիսիսին։

— Այդ օրը քո հոր համար եկավ երկու տարի առաջ։

Նա նորից նայեց Բեսին և Մերիին։

— Բայց քանի դեռ մենք ապրում ենք, քանի դեռ միասին ենք, քանի դեռ մեզնից թեկուզ երկուսը կան և հիշում են նրան, աշխարհում ոչ մի բան չի կարող խլել նրան մեզնից։ Մարմինը միայն կարող են խլել, բայց ոչ նրան։ Դուք ձեր հորը ավելի լավ կճանաչեք, երբ մեծանաք և ինքներդ ձեզ ավելի լավ ճանաչեք։ Նա մեռած չէ, որովհետև դուք ողջ եք։ Ժամանակը և պատահականությունը, հիվանդությունն ու հոգնությունը նրա մարմինը տարան, բայց դուք նրան արդեն վերադարձրել եք՝ ավելի երիտասարդ և ավելի կենսունակ։ Չեմ կասկածում, որ ասածներիցս շատ բան հասկացաք, բայց գիտեմ, որ այս մեկը պիտի հիշեք՝ բարին երբեք չի մահանում։ Եթե մահանար՝ աշխարհում մարդիկ գոյություն չէին ունենա, ոչ մի տեղ կյանք չէր լինի։ Իսկ աշխարհը լեցուն է մարդկանցով և հրաշալի կյանքով։

Երեխան այդ մասին մի պահ խորհեց, հետո հիշեց առավոտյան տեսածը.

— Խլուրդներն ի՞նչ են,— հարցրեց նա։

Մայրը պատրաստ էր նման հարցի։ Նա գիտեր, որ տղան աչքեր ունի, ավելին՝ տեսողություն, սեր և ծարավի է ամեն ինչ իմանալու։

— Գետնի տակի խլուրդները,— պատասխանեց մայրը,— երկնքի թռչունները, ծովի ձկները բոլորը կյանքի մասն են, մեր կյանքի մասը։

Ապրող ամեն ինչ մեզնից յուրաքանչյուրի մասն է։ Նույնիսկ շատ բաներ, որոնք մեզ նման չեն շարժվում, մեր մասնիկներն են։ Արևը մեր մասն է, ինչպես նաև հողը, երկինքը, աստղերը և օվկիանոսները։ Այդ ամենը մեր մասն են, և մենք ստեղծվել ենք, որպեսզի դրանք վայելենք և դրանց համար աստծուն շնորհակալ լինենք։

Փոքրիկ տղան ընդունեց այս նորությունը։

— Այդ դեպքում որտե՞ղ է Հոմերը,— ասաց նա։

— Քո Հոմեր եղբայրը աշխատում է,— պատասխանեց միսիս Մաքոլին,— նա երեկ գործ ճարեց դասերից հետո աշխատելու համար։ Նա տուն կգա կեսգիշերին, երբ դու արդեն քնած կլինես։

Տղան դա չկարողացավ հասկանալ։ Ի՞նչ է աշխատանքը։ Ինչո՞ւ է եղբայրը աշխատում։ Ի՞նչ հաճույք է մարդ ստանում աշխատելուց։

— Հոմերն ինչո՞ւ է աշխատում,— հարցրեց նա։

Աղջիկները համբերությամբ սպասում էին, իսկ միսիս Մաքոլին պատասխանում էր.

— Քո Հոմեր եղբայրը աշխատում է, որովհետև քո Մարկուս եղբայրը բանակում է։ Որովհետև մենք պետք է փող ունենանք, որ կարողանանք մթերք և հագուստ գնել, տան վարձ վճարել և օգնել ուրիշներին, ովքեր մեզնից ավելի կարիքավոր են։

— Ո՞ւմ,— հարցրեց Ցուլիսիսը։

— Որևէ մեկին,— ասաց միսիս Մաքոլին,— աղքատին, օրինակ։

— Ո՞վ է աղքատը,— հարցրեց տղան։

— Բոլորը,— պատասխանեց միսիս Մաքոլին՝ ինքն իրեն ժպտալով։

Ցուլիսիսը ուզում էր արթուն մնալ, բայց էլ չկարողացավ։

— Հիշեցեք,— ասաց մայրը բոլորին,— ձեր ունեցած ամեն ինչից պետք է բաժին հանեք ուրիշներին։ Դուք պետք է տաք նույնիսկ, երբ թվում է, թե տալը խենթություն է։ Այդ ժամանակ ոչ ոք և ոչ մի բան ձեզ խաբելու ուժ չի ունենա, որովհետև եթե գողին տաք, նա ձեզնից չի գողանա, և արդեն գող չի լինի։ Եվ ինչքան շատ տաք, այնքան ավելի շատ բան կունենաք տալու համար։

Միսիս Մաքոլին դարձավ տղայի քրոջը՝ Բեսին։

— Նրան անկողին դիր։

Բեսը և Մերին տղային ննջարան տարան։ Երբ նրանք գնացել էին, մայրը ոտնաձայն լսեց և շրջվեց, նրան թվաց, թե այնտեղ, դռան մոտ, տեսավ Մաթյու Մաքոլիին, որ կարծես մեռած չլիներ։

— Քնել էի,— ասաց ամուսինը,— քունս շատ էր տանում, Քեթի, ներիր ինձ, խնդրում եմ։

Ամուսինը ծիծաղեց ճիշտ Ցուլիսիսի նման։ Իսկ հետո վերադարձավ Բեսը և ասաց.

— Հենց ուզում էին անկողին դնել՝ ծիծաղեց։

Գլուխ 5

ԴՈՒ ՔՈ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ԳՆԱ, ԵՍ ԻՄ

Միսիս Ռոզա Սանդովալի տան առաջ իջնելով հեծանիվից, ցրիչը գնաց դեպի դուռը, կամաց թակեց և անմիջապես զգաց, որ ներսը մարդ կա։ Նա ոչինչ լսել չէր կարողանում, բայց վստահ էր, որ թակոցը մեկին դեպի դուռն է բերում։ Նա շատ էր ուզում տեսնել, թե ո՞վ է այդ կինը, Ռոզա Սանդովալը, որը հիմա կլսի, որ աշխարհում սպանություն է կատարվել, և դա կզգա սեփական սրտում։ Դուռը երկար ժամանակ չէր բացվում, բայց բացվելիս էլ ոչ մի շտապողականություն չզգացվեց։ Դուռն այնպես բացվեց, կարծես աշխարհում ոչինչ տեղի չէր ունեցել, որից վախենար այդ կինը։ Եվ ահա նա, այդ կինը։

Մեքսիկացի կինը Հոմերին գեղեցիկ թվաց։ Տղան տեսնում էր, որ այդ կինը իր ամբողջ կյանքում ստիպված է եղել այնքան համբերել, որ այժմ, տարիներ հետո, նրա շուրթերը սեղմվել են բարի և անմեղ ժպիտով։ Բայց, բոլոր այն մարդկանց նման, ովքեր երբեք հեռագիր չեն ստանում, ցրիչի դռան առաջ երևալը կնոջը թվաց սարսափելի, անակնկալներով լեցուն մի բան։ Հոմերը հասկացավ, որ իրեն տեսնելով միսիս Սանդովալը սարսռաց։ Նրա առաջին բառը բոլոր զարմանքների առաջին բառն էր։ Նա «օհ» ասաց, կարծես ցրիչի փոխարեն դռան առաջ կանգնած լիներ մի մարդ, որին վաղուց ճանաչում էր և որի հետ հաճույքով կարող էր զրուցել։ Խոսելուց առաջ կինը զննեց Հոմերի աչքերը, և ցրիչը զգաց, որ նա հասկացավ հեռագրի բարեգուշակ չլինելը։

— Հեռագի՞ր ես բերել,— հարցրեց նա։

Հոմերը մեղք չուներ։ Նրա գործը հեռագրեր բաժանելն էր։ Հակառակ դրան, տղային թվաց, որ ինքը մասնակից է ամբողջ սխալին։ Նա վատ զգաց, կարծես ինքը լիներ կատարվածի պատասխանատուն։ Նա ուզեց անմիջապես ասել. «Ես միայն ցրիչ եմ, միսիս Սանդովալ, շատ եմ ցավում, որ ստիպված եմ այսպիսի հեռագիր բերել, բայց այդ բոլորը ես անում եմ իմ գործի բերումով»։

— Ո՞ւմ համար է,— հարցրեց մեքսիկացի կինը։

— Միսիս Ռոզա Սանդովալի, 1129 Դ փողոց,— ասաց Հոմերը։

Նա հեռագիրը մեկնեց մեքսիկացի կնոջը, բայց կինը նույնիսկ ձեռքը չերկարեց։

— Դո՞ւք եք միսիս Սանդովալը,— հարցրեց Հոմերը։

— Խնդրեմ, խնդրեմ, ներս եկ,— ասաց կինը,— անգլերեն կարդալ չեմ կարող. մեքսիկացի եմ, ես միայն «Լա պրենսա» թերթն եմ կարդում, որը Մեխիկո Սիթիից է գալիս։— Նա լռեց մի պահ և նայեց տղային, որը կանգնել էր դռանն այնքան մոտիկ։

— Խնդրում եմ,— ասաց կինը,— ի՞նչ է գրված հեռագրում։

— Միսիս Սանդովալ,— ասաց ցրիչը,— հեռագրում գրված է...

Կինն ընդհատեց նրան.

— Բայց դուք նախ պետք է բացեք հեռագիրը և կարդաք նախքան ինձ ասելը,— ասաց նա,— դուք հեռագիրը դեռ չեք բացել։

— Ճիշտ եք, տիկին,— ասաց Հոմերը։ Նա կարծես ուսուցչուհու հետ էր խոսում, որը հենց նոր ուղղել էր իր սխալը։

Դողացող մատներով նա բացեց հեռագիրը։ Մեքսիկացի կինը հատակից վերցրեց պատռված ծրարը, ապա ուղղվեց ու հարցրեց.

— Ո՞վ է ուղարկել հեռագիրը, իմ որդի Խուան Դոմինգո՞ն։

— Ոչ, տիկին,— ասաց Հոմերը,— հեռագիրը ռազմական բաժանմունքից է։

— Ռազմական բաժանմունքի՞ց,— հարցրեց մեքսիկացի կինը։

— Միսիս Սանդովալ,— ասաց Հոմերն արագ,— ձեր որդին մեռած է։ Գուցե դա սխալ է։ Ամեն մարդ սխալվում է, միսիս Սանդովալ։ Գուցե ձեր որդին չէ։ Գուցե մի ուրիշն է։ Հեռագիրն ասում է, որ Խուան Դոմինգոն է, բայց գուցե հեռագիրը սխալ է։

Մեքսիկացի կինը ձևացրեց, թե չլսեց։

— Մի քաշվիր,— ասաց նա,— ներս արի, ներս արի։ Ես քեզ համար կոնֆետ կբերեմ։— Նա բռնեց տղայի թևից և բերեց սենյակի մեջտեղի սեղանի մոտ ու նստեցրեց։— Բոլոր տղաները կոնֆետ սիրում են,— ասաց նա,— ես քեզ համար կոնֆետ կբերեմ։— Նա մի ուրիշ սենյակ մտավ և շուտով վերադարձավ՝ ձեռքին շոկոլադի մի հին տուփ։ Տուփը բացեց, և Հոմերը դրա մեջ տեսավ անծանոթ տեսակի կոնֆետներ։

— Ահա,— ասաց նա,— կեր այս կոնֆետը, բոլոր տղաները կոնֆետ սիրում են։

Հոմերը մեկ հատ վերցրեց, դրեց բերանը և փորձեց ծամել։

— Դու ինձ համար վատ լուր չէիր բերի,— ասաց նա,— դու լավ տղա ես, ճիշտ իմ փոքրիկ Խունիտոյի նման, երբ նա երեխա էր։ Մի հատ էլ կեր։— Եվ նա ցրիչին ստիպեց նորից մի կոնֆետ վերցնել։

Հոմերը նստած ծամում էր չոր կոնֆետը, երբ մեքսիկացի կինը խոսեց.

— Մեր կոնֆետն է, կակտուսի է։ Ես այն պատրաստել եմ Խուանիտոյին համար, որպեսզի երբ տուն գա, ուտի, բայց դու կեր։ Դու նույնպես իմ տղան ես։

Եվ հանկարծ սկսեց հեծկլտալ, աշխատելով իրեն զսպել, կարծես արտասվելը ամոթ լիներ։ Հոմերն ուզեց վեր կենալ և փախչել, բայց զգաց, որ պետք է մնալ։ Նա նույնիսկ մտածեց, որ կարող է իր ամբողջ կյանքի ընթացքում մնա այդտեղ։ Ուղղակի չէր իմանում ինչ անի, որ կինը նվազ դժբախտ զգա իրեն։ Եվ եթե կինը խնդրեր իր որդու տեղը գրավել, Հոմերը չէր կարողանա մերժել, որովհետև չէր գիտենա, թե ինչպես մերժի։ Նա մնաց, կարծես դրանով ուզում էր ուղղել այն, ինչ անհնարին էր ուղղել և հետո ըմբռնելով իր արածի ամբողջ անհեթեթությունը, ամաչեց։ Մտքում նա անընդհատ կրկնում էր. «Ի՞նչ կարող եմ անել, գրողը տանի, ի՞նչ կարող եմ անել։ Ես ընդամենը ցրիչ եմ»։

Կինը հանկարծ նրան իր թևերի մեջ առավ, ասելով.

— Իմ տղա՜ս, իմ փոքրիկ մա՜նչս։

Չգիտես ինչու, այդ բոլորից տղան վիրավորվեց, ամբողջ հոգով դառնացավ և զգաց, որ ուզում է սիրտը ետ տալ։ Նա այդ կնոջից կամ որևէ մեկից չէր զզվում, բայց այն, ինչ կատարվում էր այդ կնոջ հետ, այնքան սխալ էր թվում և տգեղ, որ ինքը վատ էր զգում և չէր կարողանում որոշել, թե արժե՞ր արդյոք այլևս ապրել։

— Եկ,— ասաց կինը,— նստիր այստեղ։— Կինը նրան ստիպեց նստել մի ուրիշ աթոռի վրա և կանգնեց մոտը,— թող որ քեզ նայեմ,— ասաց նա և նայեց տարօրինակ, օտարոտի հայացքով։

Թեև ցրիչը վատ էր զգում իրեն, բայց շարժվել չէր կարողանում։ Նա ոչ սեր էր զգում, ոչ ատելություն, նրան համակել էր զզվանքի նման մի բան, բայց միևնույն ժամանակ մեծ կարեկցանք. կարեկցանք ոչ միայն այդ խեղճ կնոջ, այլ ամեն ինչի նկատմամբ։ Հեռավոր անցյալի մեջ նա տեսավ երիտասարդ, գեղեցիկ մի կին, որը նստել էր որդու օրորոցի մոտ։ Նա տեսավ կնոջ հայացքը՝ ուղղված այդ հրաշալի մարդկային մարմնին, որը թեև անխոս էր ու անօգնական, բայց լեցուն էր գալիք մի ողջ աշխարհով։ Նա տեսավ, թե ինչպես կինը օրորում է երեխային և երգում։ «Տես այդ կնոջը»,— ինքն իրեն ասաց նա։ Եվ ահա նա արդեն հեծանիվի վրա էր։ Մութ փողոցով սուրում էր գժի նման։ Աչքերից արցունքներ էին հոսում, իսկ շուրթերը արտասանում էին մանկական ու խենթ հայհոյանքներ։ Երբ հեռագրատուն հասավ, արցունքներն արդեն չորացել էին, բայց հոգում ծնունդ էին առել նոր բաներ, և տղան զգում

էր, որ դրանք անհնար է կասեցնել. «Եվ պետք էլ չէ, այլապես ես նույնպես մեռած կլինեմ,— բղավեց նա այնպես, կարծես խուլի հետ խոսելիս լիներ»։

Գլուխ 6

ԵՐԳ ՄԻՍՏՐ ԳՐՈԳԱՆԻ ՀԱՄԱՐ

Հոմերը նստեց միստր Գրոգանի դիմացի սեղանի առաջ։ Հեռագրալարերը լուռ էին, բայց հանկարծ տուփը սկսեց տկտկալ։ Հոմերը սպասեց, որ միստր Գրոգանը պատասխանի, բայց նա չէր պատասխանում։ Հոմերը վազեց սենյակի մյուս կողմը։

— Միստր Գրոգան,— ասաց նա,— ձեզ են կանչում։— Նա սկսեց զգուշությամբ քաշել նրա թևը։

— Միստր Գրոգան, արթնացեք, արթնացեք։

Հոմերը վազեց դեպի ջրամանը և թղթյա բաժակը լցրեց ջրով։ Նա վազեց դեպի ծեր հեռագրիչը, բայց վախեցավ տրված հրահանգները կատարելուց։ Բաժակը դրեց սեղանին և նորից թափահարեց միստր Գրոգանին։

— Միստր Գրոգան,— ասաց նա,— արթնացեք, ձեզ են կանչում։

Հոմերը բաժակի ջուրը շաղ տվեց հեռագրիչի դեմքին։ Միստր Գրոգանը անմիջապես նստեց, աչքերը բացեց, նայեց Հոմերին, լսեց հեռագրի ձայնը և պատասխանեց.

— Ճիշտ այդպես,— ասաց նա տղային,— հիմա արագ մի բաժակ սև սուրճ բեր, շտապիր։

Հոմերը գրասենյակից դուրս վազեց դեպի Կորբետի խորտկարանը։ Երբ վերադարձավ, ծեր հեռագրիչի աչքերը կրկին փակվում էին, բայց նա շարունակում էր աշխատել։

— Ճիշտ այդպես,— տղաս,— ասաց նա,— մի մտահոգվիր, մի վախեցիր, ճիշտ այդպես պետք է անել։

Միստր Գրոգանը գծի մյուս ծայրի հեռագրիչին խնդրեց սպասել և սկսեց սուրճ խմել։

— Սկզբում սառը ջուրը շաղ տալ, իսկ հետո՝ սև սուրճ,— ասաց նա։

— Այո, սըր,— պատասխանեց Հոմերը,— կարևո՞ր հեռագիր է։

— Ոչ,— ասաց միստր Գրոգանը,— կարևոր չէ։ Բիզնես։ Փողի կուտակում։ Դիշերն է եկել, սակայն անպայման չէ այս գիշեր հանձնել։ Բայց ես պետք է ընդունեի։

Նա ձայնը բարձրացրեց, որովհետև արթուն էր և իրեն նորից ուժեղ էր զգում։

— Արդեն քանի տարի է՝ ուզում են ինձ թոշակի ուղարկել,— բղավեց նա,— ուզում են իմ փոխարեն մեքենաներ դնել։ Բազմացնողներ և հեռագրամեքենաներ,— ասաց նա արհամարհանքով,— մեքենաներ՝ մարդկանց փոխարեն։— Նա այժմ խոսում էր մեղմ, կարծես ինքն իր հետ կամ այն մարդկանց հետ, որոնք ուզում էին իրեն հանել իր տեղից, իր աշխարհից։— Ի՞նչ կլինի իմ վիճակը, եթե զրկվեմ այս աշխատանքից։ Երևի մի շաբաթից կմեռնեմ։ Ամբողջ կյանքումս աշխատել եմ և հիմա չեմ կարող չաշխատել։

— Այո, սըր,— ասաց Հոմերը։

— Գիտեմ, որ կարող եմ ապավինել քո օգնությանը, մանչուկ,— ասաց միստր Գրոգանը,— որովհետև դու արդեն օգնեցիր ինձ։ Շնորհակալ եմ, փոքրիկ։

Նա մի քայլ արեց մեքենան։ Պատասխանը լսվեց, և նա սկսեց հեռագիրը մեքենագրել, բայց միաժամանակ խոսեց մի տեսակ հպարտությամբ և աշխույժով, որը Հոմերին շատ դուր եկավ։

— Ինձ աշխատանքից հանել,— բղավեց նա,— ինչո՞ւ, ես աշխարհի ամենաարագ հեռագրիչն եմ։ Վոլինսկուց էլ արագ հեռագրեր եմ ուղարկել և ստացել առանց սխալի։ Վիլլի Գրոգան. աշխարհի բոլոր հեռագրողները գիտեն այդ անունը։ Նրանք գիտեն, որ Վիլլի Գրոգանը բոլորից լավն է։

Նա լռեց և ժպտաց ցրիչին, քաղաքի աղքատ ու կեղտոտ փողոցներից եկած այն տղային, որ անցյալ գիշեր և ճիշտ ժամանակին էր աշխատանքի ընդունվել։

— Մի ուրիշ երգ էլ երգիր, փոքրիկ,— ասաց նա,— որովհետև դու և ես դեռևս ողջ ենք։

Հոմերն անմիջապես սկսեց երգել։

Գլուխ 7

ԵԹԵ ՄԻ ԼՈՒՐ ԳԱ

Միսիս Մաքոլին նստել էր Սանթա Կլարա փողոցում գտնվող իրենց տան հյուրասենյակի հին, ճռճվող բազկաթոռին և սպասում էր որդուն։ Տղան տուն հասավ կեսգիշերից մի քիչ ուշ։ Նա մռայլ էր, հոգնած, քնատ, միաժամանակ հուզված էր ու անհանգիստ։ Մորը թվաց,

որ եթե տղան խոսեր, նրա ձայնը պիտի հնչեր խուլ, ինչպես իր ամուսնու՝ այս տղայի հոր ձայնը։ Տղան երկար մնաց մութ սենյակում և հետո, փոխանակ սկսելու ամենակարևոր բաներից, ասաց.

— Ամեն ինչ լավ է, մայրիկ, ես չեմ ուզում, որ դու ամեն գիշեր այսպես սպասես ինձ,— նա լռեց, հետո նորից ասաց,— ամեն ինչ լավ է։

— Գիտեմ,— պատասխանեց մայրը,— նստիր։

Նա ուզեց նստել հին, մաշված աթոռին, բայց ուղղակի դրա վրա ընկավ։ Մայրը ծիծաղեց.

— Տեսնում եմ, հոգնած ես, բայց կարծես հուզված էլ ես։ Ի՞նչ կա։

Տղան մի պահ սպասեց, հետո սկսեց խոսել արագ, բայց և հանգիստ։

— Ես հեռագիր տարա մի տիկնոջ, որ ապրում է Գ փողոցում,— ասաց նա։— Մեքսիկացի մի տիկին էր,— նա հանկարծ լռեց և վեր կացավ։

— Չգիտեմ, ինչպես քեզ ասեմ,— շարունակեց նա,— հեռագիրը ռազմական բաժանմունքից էր... Նրա տղան սպանվել է, բայց նա չէր հավատում։ Նա պարզապես չէր ուզում հավատալ։ Ես դեռ ոչ մեկին չեմ տեսել այդպես սիրտը կոտրված։ Նա ինձ կակտուսի կոնֆետ հյուրասիրեց, պինդ գրկեց և ասաց, որ ես իր որդին եմ։ Ես լուռ էի, քանի որ նա դրանով իրեն բախտավոր էր զգում։ Ես նույնիսկ կոնֆետի մասին չէի մտածում։— Տղան նորից լռեց։— Նա շարունակում էր ինձ այնպես նայել, կարծես իսկապես նրա որդին լինեի։ Ես ինձ շատ վատ զգացի և որոշ ժամանակ ինձ էլ էր թվում, թե նրա որդին եմ։ Երբ նորից գրասենյակ վերադարձա, ծեր հեռագրիչը՝ միստր Գրոգանը, հարբած էր, ճիշտ այնպես, ինչպես ինձ նախազգուշացրել էր, որ կարող է լինել։ Վարվեցի այնպես, ինչպես պատվիրել էր։ Երեսին ջուր շաղ տվեցի և սև սուրճ բերեցի, որ խմի և չքնի։ Եթե նա այդ աշխատանքը չկատարի, նրան գործից կվտարեն, իսկ նա այդ չի ուզում։ Նրան ուշքի բերեցի, և նա իր գործը կատարեց։ Այնուհետև պատմեց իր մասին, որից հետո մենք երգեցինք։ Գուցե հիմարություն է, բայց այդ բոլորն ինձ տխրեցնում է։

Նա լռեց և սկսեց քայլել սենյակում։ Բայց դռան առաջ կանգ առավ, հայացքը փախցրեց մորից և շարունակեց պատմել։

— Հանկարծ ինձ տխրություն համակեց,— ասաց նա,— երբեք այդպիսի բան ինձ հետ չի պատահել։ Նույնիսկ, երբ հայրիկը մահացավ, ես նման զգացում չունեցա, որովհետև մենք բոլորս քեզ ապավինեցինք, և դու թույլ չտվեցիր, որ մենք որևէ փոփոխություն զգանք։ Եվ ոչինչ չփոխվեց։ Ամեն ինչ շատ լավ էր։ Բայց այժմ, չգիտեմ ինչից է... ամեն ինչ

փոխված է։ Ամեն ինչ,— ավելացրեց նա պատանեկան ամբողջ վճռականությամբ։

Նա շրջվեց բաց դռնից և նայեց մորը։

— Երկու օրվա ընթացքում ամեն ինչ փոխվել է։ Ես ինձ մենակ եմ զգում և չգիտեմ ինչու։— Նա մոտեցավ մորը և ասաց,— մայրի՛կ։

Մայրը չպատասխանեց, սպասելով, որ նա շարունակի։

— Չգիտեմ աշխարհում ինչ է կատարվում,— շարունակեց տղան,— կամ ինչո՞ւ է կատարվում, բայց ինչ էլ որ պատահի, թույլ մի տուր, որ որևէ բան թեզ այդպես վիրավորի։ Ամեն ինչ փոխված է, բայց թույլ մի տուր, որ մեզ համար այդքան շատ փոխվի։

Կինը ժպտաց և սպասեց, թե որդին էլ ուրիշ ինչ կասի։

Եվ որովհետև տղան շարունակում էր լռել, ինքը սկսեց խոսել.

— Քեզ համար ամեն ինչ փոխված է, բայց միաժամանակ նույնն է։ Մենությունն ու թախիծը, որ դու զգում ես, այն պատճառով է, որ այլևս երեխա չես։ Բայց ամբողջ աշխարհը միշտ լեցուն է եղել այդ մենությամբ ու թախիծով։ Մենությունը պատերազմից չէ։ Պատերազմը չէ, որ այն ստեղծեց։ Ընդհակառակը, մենությունից ու թախիծից առաջացավ պատերազմը։ Ամեն ինչի մեջ գոյություն ունեցող հուսահատության զգացումն է այդ, աստծո շնորհի պակասը։ Մենք միասին կլինենք։ Մենք շատ չենք փոխվի։— Նա մի պահ մտածեց և հետո ասաց այն, ինչ բոլորովին անսպասելի էր։— Եթե ինձ էլ մի այնպիսի լուր գա, ինչպիսին մեքսիկացի կնոջն է եկել այս գիշեր, ես կհավատամ դրա խոսքերին, բայց ոչ իմաստին։ Լաց լինելու կարիք չեմ զգա, որովհետև գիտեմ, որ իմ որդուն մահ չկա։— Նա լռեց, հետո շարունակեց համարյա զվարթ։— Ընթրիքին ի՞նչ կերար։

— Խնձորով ու սերուցքով կարկանդակ։ Գրասենյակի պետը վճարեց. իմ հանդիպած ամենանշանավոր մարդն է նա,— ասաց Հոմերը։

— Վաղը Բեսի հետ նախաճաշ կուղարկեմ,— ասաց միսիս Մաքոլին։

— Նախաճաշ չեմ ուզում,— ասաց Հոմերը,— մենք սիրում ենք դուրս գնալ, մի բան գնել և նստել միասին ուտել։ Դու մի անհանգստացիր։ Դուրս գնալն ու մի բան ուտելը ավելի հետաքրքիր է ինձ համար, իսկ այս աշխատանքն ամենահրաշալի բանն է, ու դրանից դպրոցը մի տեսակ անմիտ է դառնում։

— Անշուշտ,— ասաց միսիս Մաքոլին,— դպրոցները երեխաներին փողոցից կտրելու համար են միայն. բայց վաղ թե ուշ նրանք պիտի փողոց գնան, սիրեն կամ չսիրեն այն։ Բնական է, որ հայրերն ու մայրերը

իրենց երեխաների համար աշխարհից վախենան, բայց վախենալու բան չկա։ Աշխարհը լեցուն է վախեցած փոքրիկ երեխաներով։ Վախենալով, նրանք իրար են վախեցնում։ Դու փորձիր հասկանալ,— շարունակեց նա,— փորձիր սիրել քեզ հանդիպած բոլոր մարդկանց։ Այս հյուրասենյակում ես ամեն գիշեր քեզ կսպասեմ։ Բայց պարտադիր չէ, որ գաս և ինձ հետ խոսես, եթե ցանկություն չունես։ Ես կհասկանամ։ Ես գիտեմ, որ պահեր կլինեն, երբ քո սիրտը անկարող կլինի քո լեզվին բառեր ներշնչել։

Նա լռեց և նայեց որդուն։

— Դու հոգնած ես, գիտեմ, գնա քնիր։

— Շատ լավ, մայրիկ,— ասաց որդին և գնաց իր սենյակը։

Գլուխ 8

ՆԵՐԿԱ ԵՂԻՐ ՄԵՐ ՍԵՂԱՆԻՆ, ՈՎ ՏԵՐ

Առավոտյան ժամը յոթին, հենց որ զարթուցիչը զնգաց, Հոմեր Մարոլին վեր թռավ։ Նա լռեցրեց ժամացույցի զանգը։ Ապա անկողնուց դուրս եկավ և հանելով Նյու Յորքից բերած մարմնամարզության գիրքը, սկսեց օրվա հրահանգները կարդալ։ Նրա Յուլիսիս եղբայրը Հոմերի հետ արթանում էր զարթուցիչի առաջին իսկ զնգոցից. Հոմերը ոչ մի դեպքում չէր թողնում, որ զանգը մինչև վերջ հնչի։ Նյու Յորքից բերած մարմնամարզության ձեռնարկը տպագրված մի գրքույկ էր և առաձգական մի փոկ։ Հոմերը բացեց յոթերորդ դասը, իսկ Յուլիսիսը մոտել էր նրա թևի տակ, որպեսզի ավելի մոտիկից տեսնի հեքիաթային այդ առարկան։ Սովորական մարզանքից հետո, ներառյալ խոր շնչառությունը, Հոմերը կռնակի վրա պառկեց՝ ոտքերը ուղղահայաց դիրքով բարձրացրած։

— Դա ի՞նչ է,— ասաց Յուլիսիսը։

— Մարզանք։

— Ինչի՞ համար։

— Մկանների։

— Ուզում ես աշխարհի ամենաուժեղ մա՞րդը դառնալ,— ասաց Յուլիսիսը։

— Չէ,— ասաց Հոմերը։

— Ապա ի՞նչ ես ուզում դառնալ։

— Դու գնա նորից քնիր,— ասաց Հոմերը։

Յուլիսիսը հնազանդ վերադարձավ իր անկողինը, բայց նստեց ու նայեց։ Վերջապես Հոմերը սկսեց հագնվել։

— Ո՞ւր ես գնում,— հարցրեց կրտսեր եղբայրը։

— Դպրոց,— ասաց ավագ եղբայրը։

— Գնում ես որևէ բա՞ն սովորելու։

— Գնում եմ երկու հարյուր քսան յարդ արգելավազքի։

— Ո՞ւր պիտի վազեցնես դրանց։

— Ես դրանց ոչ մի տեղ չեմ վազեցնելու։ Դրանք փայտյա արգելքներ են, իրարից տասը կամ տասնհինգ յարդ հեռավորությամբ, որոնց վրայից պետք է ցատկել վազելու ընթացքում։

— Ինչո՞ւ։

— Մի խոսքով,— ասաց Հոմերը համարյա անհամբերությամբ,— դա արշավ է։ Երկու հարյուր քսան յարդ վազք։ Այս քաղաքում ծնված ամեն մարդ վազում է երկու հարյուր քսան յարդը, ցածր արգելքներով։ Դա Իթաքայի ամենամեծ մրցությունն է։ Հեռագրատան վարիչը տասնամյակում սովորելու ժամանակ մասնակցել է երկու հարյուր քսան յարդ արգելավազքին։ Նա մեր հովտի չեմպիոնն է եղել։

— Ի՞նչ բան է չեմպիոնը,— հարցրեց Յուլիսիսը։

— Ամենալավը։

— Դու գնում ես ամենալա՞վը դառնալու։

— Ուզում եմ փորձել,— ասաց Հոմերը,— դե, հիմա գնա և քնիր։

Յուլիսիսը սահեց անկողնի մեջ, բայց հարցրեց.

— Վազը,— ապա ուզեց իրեն,— երեկ ես տեսա գնացքը։

Հոմերը հասկացավ, թե եղբայրն ինչ էր ուզում ասել։ Նա ժպտաց, հիշելով մի ժամանակվա իր հափշտակությունը։

— Ինչպե՞ս էր,— ասաց նա։

Յուլիսիսը հիշեց.

— Մի սև մարդ կար, ինձ ողջունեց,— ասաց նա։

— Դու նրա ողջույնին պատասխանեցի՞ր,— ասաց Հոմերը։

— Առաջինը ես բարևեցի,— ասաց Յուլիսիսը,— իսկ հետո առաջինը նա բարևեց։ Հետո ես, հետո նա։ Նա երգում էր. «Այլևս մի լար, մի լար, լեռի...»։

— Ճի՞շտ։

— Նա ասաց. «Տուն եմ գնում»,— շարունակեց Յուլիսիսը և նայեց եղբորը։— Մենք ե՞րբ ենք տուն գնալու։

— Մենք հիմա տանն ենք,— ասաց Հոմերը։

— Հապա ինչո՞ւ նա այստեղ չեկավ։

— Ամեն մարդ իր տունն ունի։ Ոմանք արևելքում են ապրում,

ոմանք՝ արևմուտքում, ոմանք՝ հյուսիսում, ոմանք՝ հարավում։ Մեր տունը արևմուտքում է։

— Իսկ արևմուտքը ամենալա՞վն է։

— Չգիտեմ,— ասաց Հոմերը,— ես ուրիշ տեղերում չեմ եղել։

— Իսկ պիտի գնա՞ս։

— Մի օր։

— Որտե՞ղ։

— Նյու Յորք։

— Որտե՞ղ է Նյու Յորքը։

— Արևելքում։ Նյու Յորքից հետո կգնամ Լոնդոն, Լոնդոնից հետո՝ Փարիզ, Փարիզից հետո՝ Բեռլին, ապա՝ Վիեննա, Հռոմ, Մոսկվա, Ստոկհոլմ։ Մի օր ես կլինեմ աշխարհի այդ բոլոր մեծ քաղաքներում։

— Հետո կվերադառնա՞ս։

— Անպայման։

— Ուրախ կզգա՞ս։

— Անպայման։

— Ինչո՞ւ։

— Ուրախ կլինեմ,— ասաց Հոմերը,— որովհետև պիտի տեսնեմ մայրիկին, Մարկուսին և Բեսին։— Ապա նայեց եղբորը։— Ուրախ պիտի լինեմ քեզ, հարևան Մերի Արենային և նրա հորը՝ միստր Արենային տեսնելուս համար։ Պիտի ուրախանամ, որովհետև տուն վերադարձած պիտի լինեմ, և միասին նստած պիտի խոսենք ու մի քիչ երաժշտություն լսենք, երգենք և միասին ընթրենք։

Փոքրիկ եղբայրը պաղատագին խնդրեց։

— Մի գնա,— ասաց նա,— Հոմեր, մի գնա։

— Հիմա չեմ գնում,— պատասխանեց մեծ եղբայրը,— ես հիմա գպրոց եմ գնում։

— Երբե՞ք մի գնա,— խնդրեց Յուլիսիսը,— հայրիկը գնաց և ետ չեկավ, Մարկուսը գնաց։ Հոմեր, գո՛ւ գոնե մի գնա։

— Շատ երկար ժամանակ կա մինչև իմ գնալը,— ասաց Հոմերը,— դու քնիր։

— Շատ լավ,— ասաց Յուլիսիսը,— ուրեմն գնում ես քսաներկուսը վազելու։

— Երկու հարյուր քսանը,— ասաց Հոմերը,— երկու հարյուր քսան յարդ ցածր արգելքներով վազքը։

Երբ Հոմերը նախաճաշի եկավ, նրա Բես քույրն ու մայրիկը սպասում էին նրան։ Ընտանիքի անդամները մի պահ խոնարհեցին գլուխները, հետո սկսեցին ուտել։

— Դու ինչ աղոթք ասացիր,— հարցրեց Բեսն իր եղբորը։

— Իմ մշտական աղոթքը,— ասաց Հոմերը և կրկնեց աղոթքը, բառերն արտասանելով ճիշտ այնպես, ինչպես սովորել էր ասել, երբ հաշիվ սկսել էր խոսել.

«Ներկա եղիր մեր սեղանին, ով տեր.
Այստեղ և ամենուր պաշտելի եղիր,
Օրհնիր ամենքիս և տար մեզ քո տուն,
Որ խնջույքի նստենք քեզ հետ դրախտում։
Ամեն»։

— Է, դա հին է,— ասաց Բեսը,— և բացի այդ, դու նույնիսկ քո ասած բառերը չես հասկանում։

— Շատ լավ էլ հասկանում եմ,— ասաց Հոմերը,— ես մի քիչ արագ ասացի, որովհետև շատ քաղցած եմ. բայց գիտեմ, թե ինչ է նշանակում։ Բոլոր դեպքերում ոգին է կարևորը։ Դո՞ւ ինչ աղոթեցիր։

— Նախ դու բացատրիր, թե ինչ են նշանակում քո խոսքերը,— ասաց Բեսը։

— Ինչպես թե, ինչ են նշանակում,— ասաց Հոմերը,— նշանակում են ճիշտ այն, ինչ որ նշանակում են։

— Իսկ ինչ են նշանակում,— պնդեց Բեսը։

— «Ներկա եղիր մեր սեղանին, ով տեր»,— բացատրեց Հոմերը,— դա նշանակում է մեր սեղանին ներկա եղիր, ով տեր։ «Տեր» պետք է որ շատ բան նշանակի, բայց ինչ որ նշանակում է, լավ է. «Այստեղ և ամենուր պաշտելի եղիր». նշանակում է, թող լավ բաները սիրելի լինեն այստեղ և ամեն տեղ։ «Օրհնիր ամենքիս». նշանակում է մեզ, այսինքն՝ ամեն մարդու։ «Օրհնիր»... «Օրհնիր». օրհնիր գուցե նշանակում է ներիր, կամ գուցե սիրիր, կամ հսկիր և կամ դրա նման մի բան։ Վստահ չգիտեմ, հավանաբար դրա նման մի բան է։ «Եվ տար մեզ քո տուն, որ խնջույքի նստենք քեզ հետ դրախտում». նշանակում է այն, ինչ նշանակում է, այսինքն՝ շնորհ արա, որ քեզ հետ դրախտը վայելենք։

— Ով է «Քեզը»,— հարցրեց Բեսը։

Հոմերը նայեց մորը.

— Մի՞թե աղոթքը չի ասում, որ եթե մարդիկ բարի լինեն, ամեն անգամ ճաշի նստելիս իրենց կզգան դրախտում։ «Քեզը» լավ բաներն են, չէ՞։

— Անշուշտ,— հաստատեց միսիս Մաքոլին։

— Բայց մի՞թե «Քեզը» մի մարդ է։

— Անշուշտ,— պատասխանեց Հոմերը,— բայց ես էլ մի մարդ եմ։

Մայրիկը, դու և բոլոր մյուսները մարդիկ են։ Ենթադրենք, որ այս աշխարհը դրախտ է, և ամեն ոք, ում հետ էլ մենք նստենք ճաշի, մարդ է, Բեսս,— ասաց Հոմերը անհամբերությամբ,— դա սեղանի աղոթքն է, և դու էլ լավ գիտես, թե ինչ է նշանակում։ Դու պարզապես ուզում ես ինձ շփոթեցնել։ Մի մտահոգվիր, դու կարող ես։ Ես կարծում եմ, որ ամեն մարդ կարող է ինձ շփոթեցնել, բայց դա ինձ համար կարևորություն չունի, որովհետև հավատում եմ։ Ամեն մարդ հավատում է, այնպես չէ՞, մայրիկ։

— Անշուշտ, հավատում է,— ասաց միսիս Մաքոլին,— եթե դու չհավատաս, չես ապրի և ոչ մի տեղ չես կարողանա խնջույքի նստել, մի կողմ թողած դրախտը նույնիսկ, եթե քո սեղանը լցված լինի ամենահրաշալի կերակուրներով։ Հավատքն է ամեն ինչ հրաշալի դարձնողը։

— Հասկացա՞ր,— Հոմերը դարձավ Բեսսին և վեճը վերջնականապես ավարտված համարեց։— Ես այսօր երկու հարյուր քսան յարդ արգելավազքին պիտի մասնակցեմ,— ասաց նա։

— Ճի՞շտ,— հարցրեց միսիս Մաքոլին,— ինչո՞ւ։

— Մայրիկ, դա շատ կարևոր մրցություն է,— ասաց Հոմերը։— Միստր Սփանգլերը դրան մասնակցել է Իթաքայի տասնամյա դպրոցում սովորելու ժամանակ։ Պետք է միաժամանակ և՛ վազել, և՛ ցատկել։ Միստր Սփանգլերը խաչած ձու է ման տալիս հետը, ասում է երջանկություն է բերում։

— Հետը խաչած ձու ման տալը սնոտիապաշտություն է,— ասաց Բեսը։

— Հետո ինչ,— ասաց Հոմերը,— թող լինի։ Նա ինձ ուղարկեց Ջաթերթոնից խնձորի և հնդկընկույզի սերուցքով կարկանդակ գնելու. երկուսը մի քառորդով առա։ Թարմը մեկ քառորդ արժե, այնպես որ, եթե դու միայն մեկ քառորդ ունես, միայն մեկը կարող ես գնել։ Նախորդ օրվանը երկուսը մի քառորդ արժեն, այնպես որ նույն փողով կարող ես երկուսը գնել։ Ցուրաքանչյուրի կեսը ինձ, կեսը միստր Գրոգանի համար։ Բայց նա հազիվ մեկ կամ երկու կտոր է կարողանում ուտել։ Եվ ես ստիպված եմ լինում շատ ուտել։ Միստր Գրոգանը ավելի շատ սիրում է խմել, քան ուտել։

Հարևանի աղջիկը՝ Մերի Արենան, ետևի դռնից խոհանոց մտավ և սեղանին դրեց մի փոքրիկ սկահակ։ Հոմերը վեր կացավ։

— Մերի,— ասաց նա,— նստիր և նախաճաշիր մեզ հետ։

— Հենց նոր հայրիկի հետ նախաճաշեցի և նրան աշխատանքի ուղարկեցի։ Շատ շնորհակալ եմ։ Մի քիչ շորացած դեղձի կոմպոտ եմ բերել, որ հայրիկի համար էի պատրաստել, միսիս Մաքոլի։

— Շնորհակալ եմ, Մերի, ինչպես է հայրիկը,— ասաց միսիս Մաքոլին։

— Հայրիկը լավ է,— ասաց Մերին,— միայն թե անընդհատ ինձ ձեռ է առնում։ Ամեն սեղան նստելիս ասում է՝ «Նամակներ չկա՞ն, Մարկուսից նամակ չկա՞»։

— Շուտով նոր նամակ կստանանք,— ասաց Բեսը և սեղանից վեր կացավ։— Մերի, գնանք, ժամանակն է։

— Գնանք, Բես,— ասաց Մերին և հետո միսիս Մաքոլիին դառնալով, ավելացրեց,— ձեզ ճիշտն ասեմ, միսիս Մաքոլի, քոլեջ գնալը արդեն ձանձրալի է դարձել։ Տասնամյակի պես մի բան է։ Ես արդեն բավական մեծ եմ, ամբողջ կյանքս դպրոց պիտի գնամ։ Ժամանակները փոխվել են։ Անկեղծ եմ ասում, կուզենայի դուրս գալ և մի տեղ աշխատանք գտնել։

— Ես նույնպես,— ասաց Բեսը։

— Հիմարություն է,— ասաց միսիս Մաքոլին,— դուք դեռ երեխա եք, ընդամենը տասնյոթ տարեկան։ Քո հայրը լավ աշխատանք ունի, Մերի, ինչպես նաև քո եղբայրը, Բես։

— Բայց թվում է, թե ճիշտ չէ, միսիս Մաքոլի,— խոսեց Մերին,— թվում է, որ ճիշտ չէ դպրոց գնալը, երբ Մարկուսը բանակում է, և աշխարհում իրար աչք են հանում։ Երբեմն այնպես եմ ուզում տղամարդ լինել, Մարկուսի հետ բանակ գնայի։ Գրազ եմ գալիս, որ երկուսով շատ ուրախ ժամանակ կանցկացնեինք։

— Մի մտահոգվիր, Մերի,— ասաց միսիս Մաքոլին,— այս բոլորը կանցնի։ Ամեն ինչ կլինի այնպես, ինչպես միշտ եղել է։

— Հույս ունեմ,— ասաց Մերին և իր ընկերուհու՝ Բես Մաքոլիի հետ գնաց դպրոց։

Հոմերը նայեց աղջիկների ետևից։ Մի քիչ հետո նա հարցրեց.

— Իսկ ի՞նչ կասես այդ մասին, մայրիկ։

— Դե, դա շատ բնական է,— ասաց միսիս Մաքոլին,— աղջիկներ են, ուզում են դուրս պրծնել և թռչել։

— Թռչելու մասին չեմ ակնարկում,— ասաց Հոմերը,— խոսքը Մերիի մասին է։

— Մերին ազնիվ, երեխայի պես անբիծ աղջիկ է,— ասաց միսիս Մաքոլին։— Նա ամենալավ աղջիկն է, որ ես երբևէ տեսել եմ. ուրախ եմ, որ Մարկուսը նրան է սիրում։ Մարկուսը նրանից լավին չէր կարող գտնել։

— Մայրիկ,— անհամբերությամբ խոսեց Հոմերը,— ես դա գիտեմ. խոսքս այդ մասին չէ, մի՞թե դու ինձ չես հասկանում։— Նա լռեց, ապա

հանկարծ փոխեց նյութը, մտածելով, որ կարիք չկա խոսելու իր զգացածի մասին, որ պատերազմը այդքան վիշտ է պատճառում այնպիսի մարդկանց, որոնք նույնիսկ ռազմադաշտից հեռու են գտնվում։— Լավ, կտեսնվենք գիշերը,— ասաց նա,— ցտեսություն։

Միսիս Մաքոլին նայեց նրա ետևից, մտածելով, թե որդին ինչ էր ուզում իրեն ասել։ Հանկարծ աչքի ծայրով տեսավ մի փոքրիկ էակի։ Ցուլիսիսն էր իր գիշերազգեստով։ Նա նայեց մորը համարյա այնպես, ինչպես փոքր կենդանին կնայեր իր նմանին, որպես միակ աղբյուրը իր երջանկության ու հանգստի։ Նրա դեմքի արտահայտությունը ծայրաստիճան լուրջ էր, անհավատալիորեն գրավիչ։

— Ինչու է նա ասում «Այլևս մի լար, լեդի...»,— հարցրեց Ցուլիսիսը։

— Ո՞վ,— ասաց միսիս Մաքոլին։

— Գնացքի վրայի սև մարդը։

— Դա երգ է, Ցուլիսիս,— ասաց միսիս Մաքոլին և բռնեց նրա ձեռքը,— իսկ հիմա շորերդ հագիր։

— Այդ սև մարդը նորից գնացքի մեջ կլինի՞,— հարցրեց փոքրիկ տղան։

Միսիս Մաքոլին մի պահ մտածեց, հետո ասաց.

— Այո։

Գլուխ 9

ԱՅՍ ԿՈՂՄԵՐՈՒՄ ՊԵՏՔ Է ՈՐ ՃԱԳԱՐՆԵՐ ԼԻՆԵՆ

Դպրոցի ճանապարհին, Սան Բենիդո փողոցում Հոմեր Մաքոլին անցավ մի ցանկապատի կողքով, որը շրջապատել էր մոլախոտերով լցված մի տարածություն։ Ցանկապատը հին էր, խարխլված և ծիծաղելիորեն փոքր, անպետք տարածություն պահպանելուց բացի, ուրիշ բանի չէր ծառայում, իսկ այդ տարածությունը պաշտպանության ոչ մի կարիք չէր զգում։ Ցերեկային դպրոցի աշակերտն ու գիշերային ցրիչը հեծանիվը միանգամից կանգնեցրեց, կարծես ուզում էր չափազանց հետաքրքիր մի բան գտնել, որը կարող էր կորչել, եթե չշտապեր։ Ցանկապատը մոտ մեկ ոտնաչափ բարձր էր արգելավազքի համար ընդունված չափից։ Աշխարհում եթե որևէ բան անցողիկ է և անհետանալու դատապարտված, ապա այդ ցանկապատն էլ, թեև անհետանում էր, բայց այնպիսի արագությամբ, որ կարող էր մի դար էլ հարատևել։

Հոմերը զննեց ցանկապատը, դրա ետևի տարածությունը, առջևի

ազատ մասը, հետո չափեց բարձրությունը, որը բավական բարձր էր։ Ցատկելու փորձ արեց. տասը յարդ հեռացավ, ապա արագ ետ դարձավ և վազեց դեպի ցանկապատը։ Երբ բավական մոտ էր, մի գեղեցիկ ոստյուն կատարեց, ոտքով հարվածեց ցանկապատին, մի մասը գետին գլորեց և ընկավ մոլախոտերի մեջ։ Բայց անմիջապես վեր կացավ և ետ գնաց՝ մի անգամ էլ փորձելու։ Այս անգամ ցանկապատի փայտը շատ հեշտությամբ չարդվեց, այնպիսի ձայն հանելով, որը ամենևին տեղին չէր և, հետևաբար, ծիծաղելի էր։ Հոմերը յոթ փորձ կատարեց, որոնցից ոչ մեկը հաջող չէր։ Նա կանգ առավ, երբ ամբողջ ցանկապատն արդեն գետին էր փլվել։

Ձեռնափայտով մի ծերունի դուրս եկավ փողոցի դիմացի տնից և սկսեց դիտել Հոմերին։ Ճիշտ այն ժամանակ, երբ Հոմերը վեր էր կենում վերջին անգամ և շորերն էր թափ տալիս, ծերունին խոսեց։

— Ի՞նչ ես անում,— հարցրեց նա։

— Արգելք եմ հաղթահարում,— ասաց Հոմերը։

— Որևէ տեղդ ցավե՞ց։

— Ոչ,— ասաց Հոմերը,— ցանկապատը մի քիչ բարձր է, մի քիչ էլ խոտերը սահուն են։

Ծերունին մի րոպե նայեց մոլախոտերին, ապա ասաց.

— Սրանք կաթնախոտեր են. ճագարների համար հրաշալի կեր են։ Ճագարները սիրում են դրանք։ Մի ժամանակ, մոտ տասնմեկ տարի առաջ, մի մեծ խումբ ճագար ունեի, բայց ինչ-որ մեկը գիշերվա կեսին բացեց ճագարանոցի դուռը, և բոլորը փախան։

— Ինչո՞ւ բացեց դուռը,— հարցրեց Հոմերը։

— Չգիտեմ,— ասաց ծերունին,— այդպես էլ չիմացա, թե ով արեց. երեսուներեք գլուխ ճագար կորցրի, որոնք իմ տեսածների մեջ ամենագեղեցիկներն էին, փայլուն աչքերով, կատվի դեմքերով, բելգիական և երկու-երեք այլ տեսակներ։ Այլևս չգտա դրանք։

— Դու ճագար սիրո՞ւմ ես,— հարցրեց Հոմերը։

— Ազնիվ, փոքրիկ կենդանիներ են,— ասաց ծերունին,— ընտանի ճագարները շատ քնքուշ են։

Ծերունին շուրջը նայեց՝ ամայի տարածություն մոլախոտով ծածկված։

— Երեսուներեք ճագար տասնմեկ տարի աղատության մեջ են,— ասաց նա։— Նկատի ունենալով նրանց արագ աճը, դժվար է ասել, թե որքան են բազմացել։ Ո՞վ գիտե, գուցե վայրենացել են։ Ջրի զարմանալի թե ամբողջ քաղաքը հիմա ճագարներով լցված լիներ։

— Ես անձամբ ոչ մի հատ չեմ տեսել,— ասաց Հոմերը։

— Գուցե չես տեսել, բայց դրանք այս կողմերում են,— ասաց Ժերոնին։— Ամբողջ քաղաքը, հավանաբար, դրանցով է լցված։ Մի քանի տարի առաջ, և դրանք լուրջ խնդիր կդառնան։

Ցավով, բայց Հոմերը նստեց հեծանիվը։

— Լավ,— ասաց նա,— ես հիմա պետք է գնամ. նորից կերևամ...

— Խնդրեմ, ուրախ կլինեմ,— ասաց Ժերոնին։— Իմ անունը Չարլզ է, բայց ինձ պարզապես Չարլի անվանիր։ Երբ ցանկանաս, անցիր ինձ մոտ։

— Շնորհակալ եմ, սեր,— ասաց Հոմերը, ապա վերադարձավ իրեն հուզող թեմային,— այսօր կեսօրից հետո դպրոցում մասնակցելու եմ երկու հարյուր քսան յարդ արգելավազքին,— ասաց նա Ժերոնին։

— Ես երբեք դպրոց չեմ գնացել,— ասաց Ժերոնին,— բայց իսպանա-ամերիկյան պատերազմում կռվել եմ։

— Ի՞նչ եք ասում,— ասաց Հոմերը,— գե, ցտեսություն։

— Օ՜, այո,— ասաց Ժերոնին, բայց արգեն նա ինքն իր հետ էր խոսում,— իսպանա-ամերիկյան պատերազմի կեսը,— շարունակեց նա,— նապաստակի նման փախչելով անցկացրի։

Հոմերը հեծանիվ նստած անհայտացավ անկյունում։ Ժերոնին քայլեց դեպի կիսաքանդ տունը՝ ծխելով ծխամորճը և շուրջը նայելով։ Նա ձեռնափայտը խրեց խոտերի մեջ։

— Այս կողմերում պետք է որ ճագարներ լինեն,— ասաց նա,— հիմա էլ, երևի ,այն չեն, ինչ որ առաջ։

Գլուխ 10

ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ի թաքայի միջնակարգ դպրոցի ֆիզկուլտուրայի վազքուղիներում դրված էին երկու հարյուր քսան յարդ մրցավազքի արգելքները։ Զորս տղաները մարզվում էին։ Բոլորն էլ, ուժերը ճիշտ բաշխելով և թռիչքներ կատարելով ըստ կանոնների, լավ վազեցին։ Մարզիչ Բայֆիլդը խրոնոմետրը ձեռքին մոտեցավ հաղթողին։

— Այս անգամ ավելի լավ էր, էքլի,— ասաց նա մի տղայի, որը, անշուշտ, անշնորհք տղաներից չէր, բայց, այնուամենայնիվ, այնքան էլ արտակարգ չէր։ Նա ուներ ինքնավստահ շարժուձևերը այն մարդու, որի ընտանիքը վերջին տասնամյակների ընթացքում ոչ միայն չի զգացել ապրուստի, հագուստի և բնակարանի նեղություն, այլև, ընդհակառակը,

առիթը ներկայանալու դեպքում, իրեն նման ուրիշ բախտավոր ընտանիքների հյուրասիրել է։

— Դեռևս շատ բան ունես սովորելու,— ասաց մարզիչը տղային,— բայց կարծում եմ, որ կկարողանաս այսօր շահել մրցույթը։

— Կաշխատեմ, սըր,— ասաց տղան։

— Գիտեմ,— ասաց մարզիչը,— այսօր որևէ մրցակից չես ունենա, բայց երկու շաբաթ հետո Հովտի մրցությանը ախոյաններ շատ կլինեն։ Այժմ գնա ցնցուղ ընդունիր և հանգստացիր։

— Այո, սըր,— պատասխանեց տղան։ Նա հեռացավ, հետո հանկարծ կանգնեց։— Ներեցեք, սըր,— ասաց նա,— ինչքան ժամանակում վազեցի։

— Վատ չէր,— ասաց մարզիչը,— բայց այնքան էլ լավ չէր. ժամանակի մասին չեմ մտահոգվում։ Դու միայն վազիր ինչպես սովորեցրել եմ և կարծում եմ, որ առաջինը կլինես։

Մյուս երեք վազողները մի կողմ կանգնած ունկնդրում էին խոսակցությունը։

— Նա տիկնիկի պես է,— ասաց տղաներից մեկը մյուսներին,— բայց միշտ առաջինն է վազքն ավարտում։ Ինչո՞ւ ես ետ մնում, Սամ։

— Ի՞նչ, ինչո՞ւ եմ ետ մնում,— ասաց Սամը,— իսկ քեզ ի՞նչ է պատահել, դո՞ւ ինչու չես հաղթում նրան։

— Ես երկրորդը տեղ հասա։

— Երկրորդը կամ երրորդը. ի՞նչ տարբերություն,— ասաց մյուս տղան։

— Հյուբերդ էքլի Երրորդը հաղթում է մեզ,— ասաց Սամը,— պետք է ամաչենք։

— Ճիշտ է, բայց ելք չունենք,— ասաց երկրորդ տղան,— ինչ անենք, նա պարզապես մեզնից լավ է վազում և վերջ։

Մարզիչը դարձավ այս երեքին և բոլորովին տարբեր տոնով ասաց.

— Իսկ դուք, տղաներ, ձեզ թափ տվեք, դուք այնքան էլ լավ չեք վազում, որ իրավունք ունենաք կանգնելու և ձեզանով հպարտանալու։ Գրավեցեք ձեր դիրքերը և մի անգամ էլ փորձեք։

Տղաները լռությամբ գնացին դեպի իրենց դիրքերը։ Մարզիչը նրանց մի անգամ էլ վազել տվեց։ Դրանից հետո մարզիչը որոշեց մրցությունից առաջ նրանց մի քանի անգամ ևս վազեցնել։ Ըստ երևույթին, նա ուզում էր, որ Հյուբերդ էքլի Երրորդը մրցությունը շահի։

Հին պատմության դասասենյակն արագորեն լցվում էր։ Ուսուցչուհին՝ պառավ օրիորդ Հիքսը, սպասում էր վերջին զանգին և կարդ ու

կանոնի հաստատմանը, դա նշան էր, որ նա մեկ անգամ ևս փորձում է դաստիարակել Իթաքայի տղաներին ու աղջիկներին, որոնք միջնակարգում էին, սակայն շուտով, գոնե տեսականորեն, պետք է կյանք մտնեին։ Հոմեր Մաքոլին, պաշտամունքի հասնող մի զգացումով նայում էր Հելեն Էլիոթ անունով մի աղջկա, որը դռնից դեպի դրասեղանն էր գալիս։ Անկասկած, այս աղջիկը աշխարհի ամենագեղեցիկ աղջիկն էր։ Միևնույն ժամանակ նա մեծամիտ էր, սակայն Հոմերը չէր հավատում, որ այդ մեծամտությունը բնական կամ էլ արմատացած լիներ նրա մեջ։ Թեև Հոմերը պաշտում էր նրան, սակայն աղջկա մեծամտությունը իր դպրոցական կյանքի ամենադառն վիշտն էր։ Աղջկա ետևից եկավ Հյուբերդ Էքլի Երրորդը։ Երբ Հյուբերդը հասավ Հելենին, երկուսը մի պահ շշնջացին, խորապես հուզելով Հոմերին։ Վերջին զանգը հնչեց, և ուսուցիչն ասաց.

— Բավական է, լռություն, խնդրում եմ։ Ո՞վ է բացակա։

— Ես,— ասաց մի տղա։ Նրա անունը Ջո Տերանովա էր։ Նա դասարանի խեղկատակն էր։

Ջոյի շորս կամ հինգ հավատարիմները, նրա ծաղրածուական տաղանդի երկրպագուները, արձագանքեցին և գնահատեցին նրա սրամիտ պատասխանը։ Բայց Հելեն Էլիոթն ու Հյուբերդ Էքլին շրջվեցին և խստությամբ նայեցին դասարանի այս կատակաբանների խմբին, աղքատ հյուղակներում ապրողների ժառանգներին։ Այս հայացքը Հոմերին այնքան վշտացրեց, որ երբ բոլորը դադարել էին ծիծաղելուց, նա պայթեց արհեստական «Հա, հա, հա», քրքիջով ուղղակի Հյուբերդի երեսին, որին արհամարհում էր, և Հելենի, որին պաշտում էր։ Ապա արագ դառնալով Ջոյին, ասաց.

— Իսկ դու, Ջո, լռիր, երբ միսս Հիքսն է խոսում։

— Վերջ տուր հիմարություններիդ, Ջոզեֆ,— ասաց միսս Հիքսը և դարձավ Հոմերին,— դու էլ, երիտասարդ։

Նա մի բոպե լռեց և դասարանին նայեց։

— Այժմ,— ասաց նա,— ասորեստանցիների մասին շարունակեք կարդալ մեր երեկվա թողած տեղից. խնդրում եմ կենտրոնացեք, լարեք ուշադրություններդ։ Նախ մենք կկարդանք մեր հին պատմության դասագրքից մի հատված, բարձրաձայն կքննարկենք մեր կարդացածը։

Կատակասերը չկարողացավ դիմանալ սրամտելու այս առիթին։

— Ոչ, միսս Հիքս,— առաջարկեց նա,— եկեք բարձրաձայն չքննարկենք, եկեք մտքում քննարկենք, որ ես կարողանամ քնել։

Նրան շողոքորթողները նորից ծիծաղից պայթեցին, իսկ մեծամիտները արհամարհանքով շրջվեցին։ Միսս Հիքսը կատակաբանին անմի-

ջապես չպատասխանեց, որովհետև նախ՝ դժվար էր տղայի սրամտությունը չգնահատել, իսկ հետո՝ չէր կարելի նրա հետ վերաբերվել այնպես, որ զվարթ մթնոլորտը վերանա։ Բայց անպայմանորեն անհրաժեշտ էր նրան կարգի հրավիրել։ Ի վերջո, խոսեց։

— Ջոզեֆ, դու պետք է բարի լինես,— ասաց նա,— մանավանդ այն դեպքերում, երբ դու իրավացի ես, իսկ ես՝ սխալ։

— Ճիշտ է, միսս Հիքս, ներողություն,— ասաց կատակաբան տղան,— պարզապես չեմ կարողանում ինձ զսպել։ Ասում եք բարձրաձայն քննարկենք, ուրիշ ինչ տեսակ քննարկում կարող է լինել, դե, օ քեյ, ներողություն եմ խնդրում։

Հետո, մի տեսակ ինքնավստահությամբ ու իր արժեքի գիտակցությամբ, գլուխը դարձրեց դեպի ուսուցչուհին և ասաց հովանավորողի տոնով.

— Շարունակեցեք, միսս Հիքս։

— Շնորհակալություն,— ասաց ուսուցչուհին։— Դե, բոլորդ արթուն պահեք ձեզ։

— Երիվ արթուն,— ասաց Ջոն,— մի պրանց նայեք, բոլորը համարյա քնած են։

Թեև ծեր ուսուցչուհուն դուր էին գալիս Ջոյի սրամտությունները, բայց, այնուամենայնիվ, զգուշացրեց նրան.

— Եթե մի անգամ էլ ինձ ընդհատես, Ջոզեֆ, ես ստիպված կլինեմ քեզ ուղարկելու գիրեկտորի մոտ։

— Ես աշխատում եմ գոնե մի քիչ գիտելիք ձեռք բերել,— ասաց կատակաբանը,— սրանց նայեցեք, համարյա քնած են, չէ՞։— Ապա, մի հայացք նետելով դասընկերներին, ավելացրեց,— նրանց թողնես միայն բեյսբոլ խաղան։

— Ջո, լռիր,— ասաց Հոմերը ընկերոջը,— հերիք է անընդհատ քեզ ցույց տաս։ Բոլորն էլ գիտեն, որ սրամիտ ես։

— Բավական է,— ասաց միսս Հիքսը,— երկուսդ էլ լռեք։ Բացեք 117-րդ էջը, երկրորդ պարբերությունը։— Բոլորը բացեցին այդ էջը և կտան տեղը։— Հին աշխարհի պատմությունը,— շարունակեց ուսուցչուհին,— ձեզ կարող է ձանձրալի ու ավելորդ գիտություն թվալ մեր ժամանակներում, երբ հասարակության պատմության մեջ այսքան իրադարձություններ են տեղի ունենում, վաղուց ավարտված մի ուրիշ աշխարհի պատմությունը սովորելն ու հասկանալը կարող է անօգտակար թվալ։ Բայց դա սխալ տպավորություն է։ Մեզ համար շատ կարևոր է իմանալ ուրիշ ժամանակների, ուրիշ մշակույթների, ուրիշ ժողովուրդ-

ների և ուրիշ աշխարհների մասին։ Ո՞վ է ցանկանում գրատախտակի մոտ գալ և կարդալ։

Երկու աղջիկ և Հյուբերդ էքլի Երրորդը ձեռքերը բարձրացրին։

Կատակաբան Ջոն շրջվեց դեպի Հոմերը և ասաց.

— Մի էդ տղային նայիր, խնդրում եմ։

Կարդալու ցանկություն հայտնած երկու աղջիկներից ուսուցչուհին Հելեն Էլիոթին ընտրեց՝ գեղեցկուհուն և մեծամիտին։ Հոմերը հիացած նայում էր, թե ինչպես է նա մոտենում գրատախտակին։ Աղջիկը կանգնեց, մի պահ շատ ավելի գեղեցկացավ, ապա աշխարհի ամենամաքուր և ամենագրավիչ ձայնով սկսեց կարդալ։ Հոմերը ամբողջ ժամանակ հիանում էր նրա մարմնի և ձայնի անհավատալի հրաշքով։

— Ասորեստանցիները,— կարդաց Հելեն Էլիոթը,— երկար քթով, մազերով և մորուքով այդ մարդիկ, հյուսիսում շենացրին Նինվեն և դարձրին զորավոր տերություն։ Մի քանի պատերազմներից հետո՝ հիթիթների, եգիպտացիների և այլ ցեղերի դեմ, նրանք նվաճեցին Բաբելոնը Թիկլատ Պալասար Առաջինի ժամանակ, հազար հարյուր տարի մեր թվարկությունից առաջ։ Դրանից հետո, շատ հարյուրամյակներ իշխանությունը երերում էր քարից կառուցված Նինվեի և աղյուսից կառուցված Բաբելոնի միջև։ Ոչ մի ընդհանրություն չկա Սիրիա և Ասիրիա բառերի միջև, որովհետև ասորիները կռվում էին սիրիացիների դեմ, մինչև որ Թիկլատ Պալասար Երրորդը նվաճեց դրանց և աքսորեց Իսրայելի տասը ցեղերը։

Հելենը կանգ առավ շունչ քաշելու համար, որ կարողանա կարդալ հաջորդ պարբերությունը, բայց նախքան կարդալ սկսելը, Հոմեր Մաքուին ասաց.

— Իսկ ինչ կասեք Հյուբերդ էքլի Երրորդի մասին։ Նա ո՞ւմ նվաճեց կամ ի՞նչ երևելի գործ կատարեց։

Բարեկիրթ տղան անմիջապես ոտքի կանգնեց և քաղաքավարի խստությամբ ասաց.

— Միսս Հիքս, չեմ կարող թույլ տալ, որ դիտավորյալ կերպով հասցված այդպիսի վիրավորանքը անպատիժ մնա.ստիպված եմ ձեզ խնդրել, որ հրամայեք միստր Մաքդիին գնալ դիրեկտորի կաբինետը... կամ... — ասաց նա շատ վճռաբար,— այդ գործը ինքս կվերցնեմ իմ ձեռքը։

Հոմերը նստարանից վեր թռավ.

— Ավելի լավ է, լռիր,— ասաց նա,— մի՞թե քո անունը Հյուբերդ էքլի Երրորդ չէ։ Լավ, ինչո՞վ ես դու երևելի, կամ ինչ է երբևէ արել Հյուբերդ էքլի Առաջինը։— Նա մի պահ լռեց, ապա դարձավ միսս Հիքսին,

հետո Հելեն Էլիոթին,— կարծեմ, խելացի հարց է,— ասաց նա։ Այնուհետև նորից դիմեց Հյուբերդ Էքլիին և կրկնեց իր հարցը.— ի՞նչ երեվելի գործ եք կատարել։

— Գիտե՞ս ինչ,— պատասխանեց Հյուբերդը,— առնվազն ոչ մի էքլի բռի չի եղել,— նա սպասեց, փնտրելով մի ավելի հարմար, խարանող բառ, հետո ասաց,— ճամարտակ։— Այսպիսի բառ Իթաքայում ոչ ոք լսած չկար։

— Ճամարտա՞կ,— ասաց Հոմերը։ Նա շրջվեց դեպի ուսուցչուհին։ — Այդ ի՞նչ է նշանակում, միսս Հիքս,— հարցրեց նա։ Եվ որովհետև ուսուցչուհին հապաղեց, Հոմերը դարձավ Հյուբերդ Էքլիին և շարունակեց,— լսիր, Էքլի համար երեք, ինձ այնպիսի անուններով մի կոչիր, որ երբևէ լսած չկամ։

— Ճամարտակ,— ասաց Հյուբերդը,— նշանակում է սնապարծ, անպետք, ավելորդություն,— նա սկսեց փնտրել ուրիշ, ավելի վիրավորական բառ։

— Զայնդ կտրի՛ր,— սպառնաց Հոմերը։

Նա դարձավ դեպի Հելեն Էլիոթը և ժպտաց Մաքոլիների նշանավոր ժպիտով։— Ճամարտակ,— կրկնեց նա։— Դա ի՞նչ տեսակ հայհոյանք է,— և նստեց։

Հելեն Էլիոթը սպասեց ուսուցչուհու նշանին՝ ընթերցումը շարունակելու համար։ Բայց միսս Հիքսը լուռ էր։ Հոմերը վերջապես հասկացավ։ Նա վեր կացավ և ասաց Հյուբերդ Էքլի Երրորդին։

— Լավ, ներողություն եմ խնդրում։

— Շնորհակալություն,— պատասխանեց բարեկիրթ տղան և նստեց։

Հին պատմության դասատուն մի պահ նայեց դասարանին և ասաց.

— Հոմեր Մաքոլին և Հյուբերդ Էքլին դասերից հետո կմնան սենյակում։

— Բայց, միսս Հիքս,— ասաց Հոմերը,— խսկ դպրոցական վազքի մրցումնե՞րը։

— Դպրոցական վազքի մրցումները ինձ չեն հետաքրքրում,— պատասխանեց ուսուցչուհին,— ձեր բարոյական դաստիարակությունը նույնքան կարևոր է, որքան և ֆիզիկականը։ Գուցեև ավելի կարևոր։

— Միսս Հիքս,— ասաց Հյուբերդ Էքլին,— Իթաքայի տասնամյակը ինձ վրա հույս է դրել, որ ես կհաղթեմ երկու հարյուր քսան յարդ արգելավազքում, իսկ երկու շաբաթ հետո՝ լավ արդյունք ցույց կտամ Հովտի մրցումներում։ Մարդիչ Բայֆիլդը կպնդի, որ ես մասնակցեմ մրցությանը։

— Ես չգիտեմ, թե ինչ կպնդի մարդիչ Բայֆիլդը,— ասաց Հոմերը,—

բայց կեսօրից հետո կատարելու եմ երկու հարյուր քսան յարդ արգելավաղքը, անպայմա՛ն։

Հյուբերդ էքլին նայեց Հոմերին։

— Ես չգիտեի, որ դու մասնակցելու ես մրցմանը։

— Դե իմացիր,— ասաց Հոմերը. նա դարձավ ուսուցչուհուն,— միսս Հիքս, եթե դուք այսօր մեզ թույլ տաք գնալ, խոստանում եմ այլևս ոչ մի անգամ անկարգություն չանել, անհնազանդ չլինել և որևէ նման բան չկատարել։ Նույնը խոստանում է նաև Հյուբերդը, այդպես չէ՞, Հյուբերդ։

— Այո, խոստանում եմ, միսս Հիքս,— ասաց Հյուբերդը։

— Երկուսդ էլ դասերից հետո կմնաք,— ասաց հին պատմության ուսուցչուհին։— Հելեն, խնդրում եմ, շարունակեք կարդալ։

«Դաշնակից բանակները,— կարդաց Հելենը,— խալդերը հարավից, մեդացիներն ու պարսիկները հյուսիսից, պաշարեցին Ասորեստանի կայսրությունը, և Նինվեն խոնարհվեց նրանց հզորության առաջ։ Նաբուգոդոնոսոր Երկրորդը կառավարեց Բաբելոնյան երկրորդ կայսրությունը։ Հետո եկավ մեծ Կյուրոսը՝ Պարսկաստանի թագավորը, իր հորդաներով։ Նրա հաղթանակը, սակայն, երկար չտևեց, որովհետև նրա հաջորդներին հետագայում պարտության մատնեց Ալեքսանդր Մեծը»։

Հոմերը, ձանձրացած, նախորդ գիշերվա աշխատանքից հոգնած և գերված աղջկա քաղցր ձայնից, աղջիկ, որը, ինչպես ինքն էր կարծում, ստեղծված էր միայն իր համար, գլուխը դրեց ծալած թևերին և սուզվեց նիրհի մեջ։ Բայց շարունակում էր լսել աղջկա ընթերցումը։

«— Այս խառնարանից,— կարդաց աղջիկը,— աշխարհը թանկարժեք ժառանգություն ստացավ։ Հին կտակարանի Մովսեսի պատգամները իրենց սկզբունքների մի մասի համար պարտական են Համուրաբիի օրենքներին, որոնց շնորհիվ նա կոչվում է օրենսդիր։ Նրանց թվաբանական սիստեմից, որտեղ օգտագործում էր տասներկուսի աղյուսակը և մեզ ծանոթ տասնորդականը, մենք ժառանգեցինք ժամ կազմող վաթսուն րոպեն և շրջանակի 360 աստիճանները։ Արաբիան մեզ տվեց մեր թվանշանները, որոնք մինչև այժմ էլ կոչվում են արաբական, ի տարբերություն հռոմեական թվանշանների։ Ասորեստանցիները գտան արևի ժամացույցը։ Ժամանակակից դեղագործական խորհրդանիշերն ու Զոդիակի նշանները բաբելոնցիներից են գալիս։ Համեմատաբար վերջերս Փոքր Ասիայում կատարված պեղումները ցույց են տալիս, որ այնտեղ եղել է մի հրաշալի կայսրություն»։

— Մի հրաշալի կայսրությո՛ւն,— երազում էր Հոմերը,— որտե՞ղ։ Իթաքայո՞ւմ, Կալիֆոռնիայի Իթաքայո՞ւմ։ Եվ այդ բոլորը անհետացա՞վ,

դժոխքի բաժի՞ն դարձավ։ Առանց մեծ մարդկանց, առանց մեծ գյուտերի, առանց արևի ժամացույցի, առանց թվերի ու առանց ուրախության ու առանց որևէ բանի։ Որտե՞ղ էր այդ մեծ կայսրությունը։

Նա որոշեց գլուխը բարձրացնել ու փնտրել այն։ Սակայն միայն Հելենն Էլիոթի դեմքը տեսավ, որը գուցե բոլոր կայսրություններից ավելի հրաշալի էր. նա լսեց աղջկա հրաշալի ձայնը, որը գուցե մարդկության ամենազարմանալի և ամենամեծ նվաճումներից մեկն էր։

«— Հիթիթները,— շարունակեց աղջիկը,— ծովերով իջան ցած, դեպի Եգիպտոս։ Նրանք իրենց արյունը խառնեցին հրեաների արյան և հրեաներին տվեցին հիթիթիական քիթը»։

Հելենը դանդաղեցրեց ընթերցումը և դարձավ հին պատմության դասատուն։

— Գլխի վերջն է, միսս Հիքս,— ասաց նա։

— Շատ լավ, Հելեն,— ասաց միսս Հիքսը,— շնորհակալություն հիանալի ընթերցանության համար։ Կարող եք նստել։

Գլուխ 11

ՇԱՌ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՔԹԻ ՄԱՍԻՆ

Միսս Հիքսը սպասեց Հելենի նստելուն, ապա նայեց աշակերտների դեմքերին։

— Դե,— ասաց նա,— մենք ի՞նչ սովորեցինք։

— Որ աշխարհի բոլոր մարդիկ քիթ ունեն,— ասաց Հոմերը։

Այս պատասխանից միսս Հիքսը անակնկալի չեկավ։

— Ուրիշ ի՞նչ,— հարցրեց նա։

— Այն, որ քթերը ոչ միայն շնչելու և մրսելու համար են, այլ նաև հին պատմության փաստերը ճիշտ հասկանալու համար։

Միսս Հիքսը Հոմերից շրջվեց և ասաց.

— Մի ուրիշը թող ասի։ Ըստ երևույթին քթերը Հոմերին շատ հեռուներն են տարել։

— Գրքում է գրված, այդպես չէ՞,— ասաց Հոմերը,— հապա ինչո՞ւ են գրել, պետք է որ կարևոր լինի։

— Միստր Մաքոլի, գուցե դուք ուզում եք քթերի մասին հանպատրաստից ճա՞ռ արտասանել,— ասաց միսս Հիքսը։

— Լավ,— ասաց Հոմերը,— գուցե ոչ իսկական ճառ, բայց հին պատմությունը մեզ մի բան սովորեցնում է,— դանդաղ, առանց ան-

հրաժեշտության բառերը շեշտելով, նա շարունակեց,— մարդիկ միշտ քիթ են ունեցել. այդ ապացուցելու համար բավական է, որ դասարանում գտնվող յուրաքանչյուր ոք նայի մյուսներին,— նայեց շուրջը,— ամեն տեղ քիթ։— Նա մի պահ կանգ առավ, որոշելու համար, թե այդ թեմայով ուրիշ ի՞նչ կարելի էր ասել, ապա շարունակեց,— քիթը մարդկային դեմքի գուցե ամենածիծաղելի մասն է։ Այն միշտ մի տեսակ շփոթության մեջ է գցել մարդկանց, և հիթիթները, հավանաբար, հաղթում էին բոլորին, որովհետև նրանց քթերը շատ մեծ էին և կեռ։ Կարևոր չէ, թե ո՞վ հնարեց արևի ժամացույցը, որովհետև վաղ թե ուշ որևէ մեկը հնարելու էր։ Կարևորն այն է, թե ո՞վ հնարեց քիթը։

Կակատաբան Զոն լսում էր մեծ հետաքրքրությամբ, նույնիսկ նախանձով։ Հոմերը շարունակեց.

— Որոշ մարդիկ խոսում են քթի մեջ։ Շատերը խոմփացնում են քթով, իսկ ոմանք էլ սուլում կամ երգում են քթով։ Կան մարդիկ, որոնց առաջնորդում են քթից բռնած, ոմանք էլ իրենց քիթը օգտագործում են ուրիշի գործերն ուսումնասիրելու և անթույլատրելի տեղեր մտցնելու համար։ Կատաղած շներն ու դերասանները քթեր են ջարդել սիրային վիպեր բեմադրելու ժամանակ։ Դոներ են փակվել քթերի վրա, եղել են քթեր, որ բռնվել են ձու խփող մեքենաների և նույնիսկ պատեֆոնների մեջ։ Քիթը անշարժ է ինչպես ծառը, բայց լինելով շարժական առարկայի՝ գլխի վրա, մեծ տանջանքների է ենթարկվում, տարվելով այնպիսի տեղեր, ուր նա միայն խանգարում է։ Քթի խնդիրը հոտառելն է, բայց որոշ մարդիկ քիթը տնկում են ուրիշ մարդկանց նպատակների, կենցաղի և արարքների վրա։— Նա շրջվեց և նայեց Հյուբերտ Էքլի Երրորդին և ապա Հելեն Էլիոթին, որի քիթը փոխանակ դեպի վեր տնկվելու, լգիտես ինչու փոքր-ինչ ներքև էր թեքվել։— Այդ մարդիկ իրենց քթերը սովորաբար երկինք են տնկում, կարծելով, որ այդպիսով կարող են երկնային արքայություն մտնել։ Բազմաթիվ կենդանիներ ունգներ ունեն, բայց նրանցից քչերը ունեն քիթ, այդ բառի իսկական իմաստով։ Սակայն կենդանիների հոտառության զգայարանը ավելի զարգացած է, քան այն մարդկանց, որոնք քիթ ունեն, բայց խելք՝ ոչ։— Հոմեր Մաքոլին խոր շունչ քաշեց և որոշեց եզրափակել ճառը։— Քթի մասին ամենակարևորն այն է, որ վեճեր է առաջացնում, պատերազմների պատճառ դառնում, հին ընկերություններ քանդում, խորտակում է բազմաթիվ երջանիկ ընտանիքներ։ Այժմ, միսս Հիքս, ես կարո՞ղ եմ մրցության գնալ։

Հին պատմության ուսուցչուհին թեև գոհ էր այս աննշան թեմայի շուրջ արտասանված երևակայությամբ հարուստ ճառից, բայց չէր կա-

բող թույլ տալ, որ հռետորական արվեստը խանգարեր դասարանի կարգ ու կանոնը։

— Միստր Մաքոլի, դասերից հետո կմնաք դասարանում,— ասաց նա,— ինչպես նաև դուք, միստր Էքլի։ Քանի որ մենք վճռեցինք քթերի հարցը, այժմ մեկ ուրիշը թող արտահայտվի մեր կարգացածի մասին։

Ոչ ոք չխոսեց։

— Դե՛, դե՛,— ասաց միսս Հիքսը,— մի ուրիշը թող արտահայտվի, որևէ մեկը։

Կատակաբան Ջոն ընդունեց հրավերը։

— Քթերը կարմիր են, մանուշակները՝ կապույտ։ Այս դասարանը մեռած է, և շատ հավանաբար՝ նաև դուք։

— Ուրիշ խոսող չկա՞,— հարցրեց միսս Հիքսը։

— Մեծ քթեր են ունենում սովորաբար նավաստիներն ու ճանապարհորդները,— ասաց մի աղջիկ։

— Բոլոր երկգլխանի տղաները ունենում են երկու քիթ,— ասաց Ջոն։

— Քիթը երբեք գլխի եռևի մասում չի լինում,— ասաց Ջոյի երկրորդականներից մեկը։

— Ուրի՞շը,— ասաց միսս Հիքսը և դառնալով մի տղայի, տվեց անունը,— Հենրի, դու ի՞նչ կասես։

— Քթի մասին ես ոչինչ չգիտեմ,— ասաց Հենրին։

Ջոն դարձավ Հենրիին։

— Ինչպե՞ս թե,— զարմացավ նա,— իսկ ո՞վ էր Մովսեսը։

— Մովսեսը Աստվածաշնչում էր,— ասաց Հենրին։

— Նա քիթ ունե՞ր,— հարցրեց Ջոն։

— Իհարկե, ուներ,— պատասխանեց Հենրին։

— Շատ լավ, ուրեմն ինչո՞ւ չես ասում. «Մովսեսը մի քիթ ուներ, այ, այսպիսի մի ահագին քիթ»,— ասաց Ջոն,— սա հին պատմության դաս է. ինչո՞ւ չես փորձում մի որևէ բան սովորել։ Մովսես— քթի դեզ, հնություն— պատմություն։ Հասկացա՞ր։

Հենրին փորձեց հասկանալ։

— Մովսես, քթի դեզ,— ասաց նա,— ոչ, սպասիր, Մովսեսի քիթը մեծ քիթ էր։

— Է՛,— ասաց Ջոն,— դու երբեք ոչինչ չես սովորի։ Դու պիտի մեռնես անկելանոցում։ Մովսեսը մի մեծ քիթ ուներ, մի ահագին քիթ, շատ քթերի պես։ Հենրի, այդ շատ պարզ բանը պետք է հասկանաս։ Այժմ մտածիր այդ մասին։

— Բավական է, թողեք այդ,— ասաց միսս Հիքսը,— ուրի՞շ։

— Ձեռքը ավելի արագաշարժ է, քան աչքը,— ասաց Ջոն,— բայց միայն քիթն է վազում։

— Միսս Հիքս,— ասաց Հոմերը,— դուք պետք է թույլ տաք ինձ մասնակցել երկու հարյուր քսան յարդ արգելավազքին։

— Ինձ որևէ վազքի մրցում չի հետաքրքրում,— ասաց միսս Հիքսը։— Ուրիշ խոսող չկա՞։

— Բայց, միսս Հիքս,— ասաց Հոմերը,— մի՞թե ես այս քնած դասասարանին ձեր փոխարեն կյանք չներշնչեցի։ Մի՞թե ես նրանց չստիպեցի, որ խոսեն քթի մասին։

— Դա նյութից դուրս է,— ասաց հին պատմության դասատուն։— Ուրի՞շ։

Բայց արդեն ուշ էր։ Զանգը հնչեց։ Բոլորը վեր կացան և ուղղվեցին դեպի մարզադաշտ, բայի Հոմեր Մաքոլիից և Հյուբերդ Էքլի Երրորդից։

Գլուխ 12

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՔՍԱՆ ՅԱՐԴ ԱՐԳԵԼԱՎԱԶՔԸ

Իթաքայի միջնակարգ դպրոցի ֆիզկուլտուրայի դասատուն կանգնած էր Իթաքայի միջնակարգ դպրոցի դիրեկտորի առաջ։ Դիրեկտորի ազգանունը Իք էր, մի հանգամանք, որի մասին միստր Ռոբերտ Ռիբլեյը տեղական օրաթերթում ծաղրանկար էր տպել «Հավատա՞լ, թե ոչ» վերնագրով։ Միստր Իքի անունը Օսկար էր, իսկ դա ուշադրության արժանի չէ։

— Միսս Հիքսը,— ասաց Իթաքայի միջնակարգ դպրոցի դիրեկտորը,— ամենահին և ամենալավ դասատուն է, որ երբևէ ունեցել է այս դպրոցը։ Նա իմ ուսուցչուհին էր, երբ ես հաճախում էի Իթաքայի միջնակարգ դպրոցը, նմանապես ձեր ուսուցչուհին էր, միստր Բայֆիլդ։ Ցավում եմ, որ չեմ կարող նրա գլխի վրայով թռչել և ներել երկու տղաների, որոնք անկարգություն են արել։

— Հյուբերդ Էքլի Երրորդը անկարգ տղա չէ,— ասաց դասատուն։— Հոմեր Մաքոլին, այո, անկարգ է, իսկ Հյուբերդ Էքլին՝ ոչ։ Նա օրինակելի փոքրիկ ջենտլմեն է։

— Այո,— ասաց դիրեկտորը,— Հյուբերդ Էքլին հարուստ ընտանիքից է։ Բայց եթե միսս Հիքսը նրան ասել է դասերից հետո մնալ, ուրեմն պետք է մնա։ Կասկած չկա, որ նա մի փոքրիկ, օրինակելի ջենտլմեն է։

Ես նրա հորը հիշում եմ։ Օրինակելի էր։ Բայց միսս Հիքսը հին պատմության դասատու է, և նա երբեք չի պատժի որևէ մեկին, եթե նա պատժվելու արժանի չլինի։ Հյուբերդ էքլին թող մեկ ուրիշ անգամ վազի։

Դիրեկտորը հարցը փակված համարեց։ Ֆիզկուլտուրայի դասատուն գրասենյակից դուրս եկավ։ Բայց նա ֆիզկուլտուրայի հրապարակ չգնաց, այլ մտավ հին պատմության դասասենյակը։ Այստեղ նա գտավ Հոմերին, Հյուբերդին և միսս Հիքսին։ Նա խոնարհվեց ծեր ուսուցչուհու առաջ և ժպտաց.

— Միսս Հիքս,— ասաց նա,— այս խնդրի կապակցությամբ ես խոսել եմ միստր Իքի հետ— Նա հասկացնել տվեց, որ ինքը իրավունք էր ստացել գալու և Հյուբերդ էքլի Երրորդին տանելու։ Սակայն այս խոսքի վրա անմիջապես Հոմեր Մաքոլին տեղից վեր թռավ, կարծես խոսքը իր ազատվելու մասին էր։

— Ես քեզ համար չեմ եկել,— ասաց դասատուն տհաճությամբ։ Նա շրջվեց դեպի մյուս տղան ու ասաց,— միստր էքլի։

— Ի՞նչ եք ուզում ասել,— ասաց հին պատմության դասատուն։

— Միստր էքլին,— ասաց ֆիզկուլտուրայի դասատուն,— պետք է անմիջապես հագնի իր սպորտային շորերը և գնա երկու հարյուր քսան յարդ ցածր արգելքներով վազելու։ Մենք նրան սպասում ենք։

— Այ թե ինչ,— ասաց Հոմերը։ Նա վառվում էր արդար զայրույթից։

— Լավ,— ասաց նա,— իսկ ես, միստր Մաքոլի՞ն։— Դասատուն առանց պատասխանելու դասարանից դուրս վազեց։ Նրա ետևից, մի տեսակ հուզված և ամաչելով, դուրս գնաց Հյուբերդ էքլի Երրորդը։

— Տեսա՞ք, միսս Հիքս,— բղավեց Հոմեր Մաքոլին,— կողմնապահությո՞ւն է, թե ոչ։

Հին պատմության դասատուն այնպես էր հուզվել, որ հազիվ կարողացավ խոսել։

— Միստր Բայֆիլդը,— շշնջաց նա,— ընդունակ է ֆիզկուլտուրա դասավանդելու միայն իր նման ավանակներին։— Նա լռեց, զգալով իր նկատողության անհարմարությունը,— ներեցեք,— ասաց նա,— բայց այդ մարդը ոչ միայն տգետ է, այլ նաև ստախոս։

Հրաշալի էր միսս Հիքսի բնական և անդուսպ բարկությունը։ Հոմերը զգաց, որ նա աշխարհի լավագույն ուսուցչուհին է։

— Ես նրան երբեք չեմ հավանել,— ասաց Հոմերը,— լավ է, որ դուք ևս չեք համակրում։

— Երեսունհինգ տարի է, որ Իթաքայի միջնակարգ դպրոցում հին պատմություն եմ ավանդում,— ասաց միսս Հիքսը,— դաստիարակել եմ

Ռթաքայի հարյուրավոր տղաների ու աղջիկների։ Դաս եմ տվել քո եղբորը՝ Մարկուսին, քրոջդ՝ Բեսին, և եթե տանը փոքր եղբայրներ ու քույրեր ունես, մի օր նրանց էլ դաս կտամ։

— Միայն մի եղբայր, միսս Հիքս,— ասաց Հոմերը,— Նրա անունը Ցուլիսիս է։ Ինչպե՞ս էր սովորում Մարկուսը դպրոցում։

— Մարկուսը և Բեսը,— ասաց միսս Հիքսը,— երկուսն էլ լավն էին՝ ազնիվ և քաղաքավարի։ Այո,— ավելացրեց նա,— բարեկիրթ էին,— և նա հատկապես շեշտեց այդ բառը։— Հին ժողովուրդների քաղաքակիրթ կենցաղի ժառանգությունը նրանց դարձրել էր քաղաքակիրթ հենց ծնված օրից։ Մարկուսն էլ քեզ նման երբեմն ավելորդ խոսում էր, բայց երբեք չէր ստում։ Մարդկության այս ստոր արարածները, աշխարհի այս Բայֆիլդները, որոնք միշտ էլ հիմար են եղել, կարծում են, որ պառավ կին եմ և ոչինչ չեմ հասկանում։ Նա այստեղ եկավ և բացարձակապես ստեց, ինչպես ստել է բազմաթիվ անգամներ, երբ դեռ երեխա էր և նստում էր այս դասարանում։ Նա ոչինչ չի սովորել, բացի անամոթ կերպով նրանց քծնելուց, ովքեր, իր կարծիքով, իրենից բարձր են։

— Ի՞նչ եք ասում,— ասաց Հոմերը հին պատմության ուսուցչուհուն՝ մղելով շարունակելու իր քննադատությունը։

— Ես ճանաչում եմ այնպիսի լավ մարդկանց, որոնց նրա նմանները շահագործում են,— ասաց նա։— Այս մարդիկ կյանքում առաջ են գնում ստելով, խաբելով և ճնշելով նրանց, ովքեր ստոր արարքներից բարձր են կանգնած։ Երկու հարյուր քսան յարդ վազք՝ ցածր արգելքներով։ Իսկապե՞ս ցածր։

Հին աշխարհի պատմության դասատուն սարսափելի վիրավորված էր։ Նա խոր շնչեց և թաշկինակով սրբեց աչքերը։

— Բան չկա, մի հուզվեք, միսս Հիքս,— ասաց Հոմերը։— Ես կմբնամ։ Դուք կարող եք ինձ պատժել ավելորդ խոսելուս համար։ Երևի չկարողացա ինձ զսպել, բայց այսուհետև կաշխատեմ ինձ լավ պահել։ Երբեք չէի մտածի, որ ուսուցիչները բոլոր մարդկանց նման են, նույնիսկ ավելի լավը։ Ոչինչ, միսս Հիքս, դուք կարող եք ինձ պատժել։

— Ես քեզ պատժելու համար չէի պահում, Հոմեր Մաքոլի,— ասաց հին պատմության ուսուցչուհին,— ես միշտ դասերից հետո պահել եմ նրանց, ովքեր ինձ համար թանկ են... Պահել եմ՝ նրանց ավելի մոտ լինելու համար։ Դեռ որ սխալվել եմ Հյուբերդ էքլիի նկատմամբ։ Միստր Բայֆիլդն էր, որ նրան անհնազանդության մղեց։ Ձեր երկուսին էլ քիչ հետո դաշտ էի ուղարկելու։ Դուք պատժվելու համար չէիք պահվել, այլ՝ դաստիարակվելու։ Ես հետևում եմ աշակերտների հոգու աճին և ուրախանում եմ այդ աճի յուրաքանչյուր նոր փաստով։ Դու ներողու-

թյուն խնդրեցիր Հյուբերդ էքլիից, և թեև քո այդ վարմունքը նրան ամաչեցրեց, որովհետև զգաց, որ արժանի չէ դրան, նա խելացիորեն ընդունեց քո ներողությունը։ Ես ձեզ դասերից հետո պահեցի, որովհետև ուզեցի խոսել ձեր երկուսի հետ։ Ձեզնից մեկը լավ ու հարուստ ընտանիքից է, իսկ մյուսը լավ ու աղքատ ընտանիքից։ Կյանքին հարմարվելը գուցե նրա համար ավելի դժվար լինի, քան քեզ համար։ Դա շատ կարևոր է։ Ուզեցի խոսել ձեր երկուսի հետ։

— Ինձ թվում է, որ սիրում եմ Հյուբերդին,— ասաց Հոմերը,— միայն թե, նա ինչո՞ւ է կարծում, որ ինքն ավելի լավն է, քան մյուս տղաները։

— Այո, գիտեմ,— ասաց հին պատմության ուսուցչուհին,— ես քեզ հասկանում եմ, բայց այս աշխարհում, ի վերջո, յուրաքանչյուր մարդ ուրիշներից և լավ է, և վատ։ Ջո Տերանովան ավելի խելացի աշակերտ է, քան Հյուբերդը, բայց Հյուբերդն էլ իր հերթին, նույնքան պարկեշտ է։ Դեմոկրատական երկրում բոլոր մարդիկ հավասար պետք է լինեն։ Դրանից հետո այդ արդեն իրենք գիտեն լավը կլինեն թե վատը, ազնիվ թե անազնիվ։ Ես աշխատում եմ, որ իմ տղաներն ու աղջիկները իրենց դրսևորեն լավ գործերով և առաքինի մեծանան։ Թե արտաքինից ինչպե՞ս են երևում իմ աշակերտները, ինձ համար նշանակություն չունի։ Ես չեմ խաբվում ոչ բարեկիրթ և ոչ էլ վատ ձևերից։ Ինձ հետաքրքրում է, թե իսկապես ինչ կա այդ ձևերի տակ։ Ինձ համար կարևորը այն չէ, որ իմ աշակերտը հարուստ է, թե աղքատ, կաթոլիկ է, բողոքական, թե հրեա, սպիտակ է, սև թե դեղին, սրամիտ՝ թե բթամիտ, հանճարեղ՝ թե պարզամիտ։ Կարևորն այն է, որ նա մարդ լինի, ունենա սիրտ, սիրի ճշմարտությունն ու պատիվը, հարգի նրանց, ովքեր իրենից ցածր են գտնվում, և նրանց՝ ովքեր իրենից բարձր են։ Եթե իմ աշակերտները մարդ լինեն, այդքանը բավական է։ Ես չեմ ուզում, որ նրանք նման լինեն իրար։ Ես ուզում եմ, որ իմ աշակերտներից յուրաքանչյուրն իր դեմքն ունենա։ Չեմ ուզում, որ դու, Հոմեր, լինես ուրիշի նման՝ ինձ հաճոյանալու կամ իմ աշխատանքը հեշտացնելու համար։ Զանձրալի է այն դասարանը, որտեղ բոլորը փոքրիկ օրիորդներ ու ջենտլմեններ են միայն։ Ուզում եմ, որ իմ երեխաները մարդ լինեն, յուրաքանչյուրը՝ տարբեր, յուրաքանչյուրը՝ յուրահատուկ, յուրաքանչյուրը՝ հաճելի և հետաքրքրական տարբերակը բոլոր մյուսների։ Ուզում էի, որ Հյուբերդ էքլին այս բոլորը քեզ հետ լսեր, քեզ հետ հասկանար, որովհետև, եթե այժմ դու չես սիրում նրան, և ինքը չի սիրում քեզ, դրանում անբնական բան չկա։ Ուզում էի իմանար, որ ձեզնից յուրաքանչյուրը իսկական մարդ կլինի այն ժամանակ, երբ հակառակ ձեր փոխադարձ չսիրելուն

կարողանաք իրար հարգել։ Ահա թե ինչ է նշանակում դաստիարակված լինել, ահա թե ինչ է սովորեցնում մեզ հին աշխարհի պատմությունը։

Դասատուն մի վայրկյան դադար առավ և նայեց տղային, որը իրեն անհասկանալի ինչ-որ պատճառով քիչ էր մնում լաց լինի։

— Ուրախ եմ, որ հենց քեզ հետ խոսեցի,— ասաց ուսուցչուհին,— և ոչ թե ուրիշ որևէ աշակերտի։ Երբ թողնես դպրոցը, ինձ մոռանալուց շատ հետո էլ, աշխարհում ես կհետևեմ քեզ և բնավ չեմ զարմանա այն լավ գործերի համար, որ, վստահ եմ, պիտի կատարես։

Հին պատմության ուսուցչուհին նորից խոր շնչեց և թաշկինակը տարավ աչքերին։

— Իսկ հիմա վաղիր մարզահրապարակ,— ասաց նա,— մրցիր Հյուբերդ էքլիի հետ երկու հարյուր քսան յարդ արգելավազքում։ Եթե ժամանակ չլինի շորերդ փոխելու, փույթ չէ, վաղիր, նույնիսկ եթե բոլորը ծիծաղեն քեզ վրա։ Աշխարհում, նախքան ոտքի կանգնելդ, դեռ հաճախ կլսես այդ ծիծաղը։ Ոչ միայն մարդկանց ծիծաղը, այլ նույնիսկ դառը ծիծաղը իրերի, որոնք պիտի փորձեն շփոթեցնել քեզ և շեղել ճանապարհիցդ, բայց, ես վստահ եմ, ուշադրություն չես դարձնի այդ ծիծաղին։

Ուսուցչուհին հոգոց հանեց և ասաց հոգնած.

— Վաղիր դաշտ, Հոմեր Մաքոլի։ Ես կգամ քեզ դիտելու։— Կալիֆոռնիայի Իթաքա քաղաքի Սանթա Կլարա փողոցում ապրող Մաքոլիների ընտանիքի երկրորդ որդին շրջվեց և դուրս եկավ սենյակից։

Մարզահրապարակում Հյուբերդ էքլին և երեք տղաները, որոնք այդ օրը նրա հետ արդեն վազել էին, իրենց տեղերն էին գրավում, երկու հարյուր քսան յարդ արգելավազքի համար։ Հոմերը հասավ հինգերորդ վազքուղուն ճիշտ այն ժամանակ, երբ դատավորը, ատրճանակը ձեռքին, վազքի մեկնարկն էր տալիս։ Հոմերը մյուսների հետ վազեց։ Նա իրեն շատ լավ էր զգում, բայց խիստ զայրացած էր ու հավատում էր, որ աշխարհում ոչ մի բան իրեն չէր կարող խանգարել՝ շահելու համար այս մրցությունը. ոչ անհարմար կոշիկները, ոչ վազքի համար անհարմար շորերը, ոչ փորձ չունենալը, ոչ մի բան։ Նա պարզապես պիտի հաղթեր, և վերջ։

Նրա կողքի վազքուղու վրա գտնվող Հյուբերդ էքլին շրջվեց Հոմերի կողմը և ասաց.

— Դու այդ վիճակով չես կարող վազել։

— Ինչո՞ւ,— ասաց Հոմերը,— կտեսնես։

Տրիբունայում նստած միստր Բայֆիլդը դարձավ կողքի մարդուն և հարցրեց.

— Ո՞վ էր եզրային գծից առանց համաղգեստի մեկնարկ վերցնողը։— Եվ անմիջապես հիշեց, թե ով էր։

Նա ուզեց կանգնեցնել վազքը, որպեսզի հեռացնի հինգերորդ վազողին, բայց շատ ուշ էր։ Ատրճանակը կրակված էր, և մրցողները սլանում էին։ Հոմերը և Հյուբերդը առաջին արգելքը հաղթահարեցին մյուսներից շուտ. երկուսն էլ հաջողությամբ թռչելով։ Երկրորդ արգելքի մոտ Հոմերը մի քիչ անցավ Հյուբերդից և առջևում մնաց երրորդ, չորրորդ, հինգերորդ, վեցերորդ, յոթերորդ ու ութերորդ արգելքները հաղթահարելիս։ Բայց Հյուբերդ էքլին նրան կպած գալիս էր։ Տղաները վազելիս բառեր էին փոխանակում։ Առաջին արգելքին Հյուբերդը բղավեց.

— Որտե՞ղ ես սովորել այդպես վազել։

— Ոչ մի տեղ,— ասաց Հոմերը,— հիմա եմ սովորում։

Երկրորդ արգելքին Հյուբերդը ասաց.

— Ինչո՞ւ ես շտապում, լավ չէ այդքան արագ վազելը։

— Ես մրցությունը շահելու եմ,— ասաց Հոմերը։

Երրորդ արգելքին էքլին հարցրեց.

— Ո՞վ ասաց։

Իսկ չորրորդ արգելքին Հոմերը պատասխանեց։

— Ես եմ ասում։

Հինգերորդ արգելքին Հյուբերդը ասաց.

— Դանդաղեցրու, սա երկար վազք է, կհոգնես։— Հետո հանկարծ բղավեց,— էհե՛յ, ուշադրություն, Բայֆիլդը գալիս է։

Հոմերը իններորդ արգելքին հասավ ճիշտ այն ժամանակ, երբ Իթաքայի տասնամյա դպրոցի ֆիզկուլտուրայի դասատուն հակառակ կողմից վրա հասավ։ Այնուամենայնիվ, Հոմերը թռավ։ Նա թռավ ուղիղ ֆիզկուլտուրայի դասատուի բաց թևերի մեջ, և նրանք երկուսով գետին ընկան։ Հյուբերդ էքլին կանգ առավ և դարձավ մյուսներին։

— Կանգնեք,— բղավեց նա,— թող վեր կենա։ Նա հրաշալի էր վազում, բայց խանգարեցին։

Հոմերն արագ վեր կացավ և շարունակեց վազել։ Նույն վայրկյանին սկսեցին վազել նաև մյուսները։

Դաշտում բոլոր գտնվողները, նույնիսկ Հելեն Էլիոթը, զարմացել էին կատարվածից։ Հին աշխարհի պատմության դասատու միսս Հիքսը կանգնած էր վերջնագծի մոտ։ Նա թափահարում էր ձեռքը և անխտիր քաջալերում բոլորին, տղաներից յուրաքանչյուրին.

— Շտապիր, Հոմեր,— ասում էր նա,— շուտ արա, Հյուբերդ, վազեցեք, Սա՛մ, Ջո՛րջ, Հե՛նրի։

Նախավերջին արգելքի մոտ Հյուբերդ էքլին հասավ Հոմեր Մաքոլիին։

— Ցավում եմ,— ասաց նա,— ստիպված եմ անցնել։

— Անցիր,— պատասխանեց Հոմերը,— եթե կարող ես։

Հյուբերդ էքլին Հոմերից մի քիչ առաջ անցավ, իսկ վազքը ավարտվում էր։ Հոմերը վայր գցեց վերջին արգելքը և գրեթե հասավ առջևից վազողին։ Վերջնագծում նրանք այնքան մոտ էին իրար, որ ոչ ոք չէր կարող ասել, թե ով շահեց մրցությունը՝ Հյուբերդ էքլի՞ն թե Հոմեր Մաքոլին։ Սամը, Ջորջը և Հենրին հասան նրանցից անմիջապես հետո, և միսս Հիքսը, հին աշխարհի պատմության դասատուն, բոլորին գրկեց։

— Հրաշալի էր, բոլորդ էլ շատ լավ վազեցիք,— ասաց նա։

— Դուք ինձ ներեցեք, միսս Հիքս,— ասաց Հյուբերդ էքլին,— ես պետք է Հոմերի հետ դասարանում մնայի։

— Հիմա դա կարևոր չէ,— ասաց միսս Հիքսը,— լավ է, որ սպասեցիր մինչև Հոմերը բարձրանա, երբ նրան խանգարեցին։

Բարկացած, դառնացած և մի քիչ էլ ամաչելով իր ընկնելու համար, Իթաքայի տասնամյա դպրոցի ֆիզկուլտուրայի դասատուն վազելով գալիս էր դեպի տղաների խումբը, որին միսս Հիքսը հավաքել էր իր շուրջը։

— Մաքոլի,— բղավեց նա տասնհինգ յարդ հեռվից,— քո արածի համար այս կիսամյակում զրկվում ես դպրոցի սպորտային միջոցառումներին մասնակցելու իրավունքից։

Մարզիչը հասավ խմբին, կանգ առավ և սպառնալից հայացքով նայեց Հոմեր Մաքոլիին։ Հին պատմության դասատուն դարձավ նրան.

— Միստր Բայֆիլդ,— ասաց նա,— ինչո՞ւ եք պատժում Հոմեր Մաքոլիին։

— Ներեցեք, միսս Հիքս,— ասաց դասատուն,— ես իմ որոշումները ընդունում եմ առանց հին պատմության ամբիոնի օժանդակության։— Նա դարձավ Հոմերին և ասաց,— հասկացա՞ր։

— Այո, սըր,— պատասխանեց Հոմերը։

— Այժմ գնա իմ առանձնասենյակը և առանց թույլտվության դուրս չգաս այնտեղից,— հրամայեց Բայֆիլդը։

— Ձեր առանձնասենյա՞կ,— հարցրեց Հոմերը,— բայց ես գործ ունեմ,— նա հանկարծ հիշեց, որ ժամը չորսին աշխատանքի պետք է գնա։— Ժամը քանի՞սն է,— հարցրեց նա։

Հյուբերդ էքլին նայեց ձեռքի ժամացույցին։

— Չորսից քառորդ պակաս,— ասաց նա։

— Գնա իմ առանձնասենյակ,— բղավեց նա։

— Բայց դուք չեք հասկանում, միստր Բայֆիլդ,— ասաց Հոմերը,— ես գնալու տեղ ունեմ, ես կուշանամ։

Ջո Տերանովան մոտեցավ խմբին։

— Իսկ ինչո՞ւ նա պետք է մնա դասերից հետո,— ասաց Ջոն,— նա ոչ մի վատ բան չի արել։

Դասատուն արդեն շատ էր բարկացել.

— Դու քո ստահակի կեղտոտ ռեխը փակիր, մակարոնի ճուտ,— բղավեց նա Ջոյի վրա։

Ապա մի կողմ հրեց տղային, որը երերալով ետ-ետ գնաց ու գետին չընկած՝ բղավեց.

— Ի՞նչ, մա-կա-րոն...

Հոմերը հարձակվեց միստր Բրայֆիլդի վրա, կարծես ֆուտբոլի դաշտում լիներ, միաժամանակ ասելով.

— Չհամարձակվեք ընկերոջս անուններ կպցնել։

Մինչ Հոմերը և Բայֆիլդը նորից գետնի վրա էին, Ջո Տերանովան վեր կացավ և կատաղությամբ այնպես նետվեց Բայֆիլդի վրա, որ վերջինս գետին թավալվեց։ Շնչակտուր և հուզված՝ վազելով եկավ դպրոցի դիրեկտոր միստր Իքը։

— Պարոններ,— ասաց նա,— տղաներ, տղաներ։— Նա Ջո Տերանովային քաշեց մարզիչի վրայից, որն այդպես էլ մնաց գետնին պառկած։

— Միստր Բայֆիլդ,— խստությամբ նրան դիմեց դպրոցի դիրեկտորը,— ի՞նչ է նշանակում այս ամենը։

Բայֆիլդը առանց բառ արտասանելու մատնացույց արեց միս Հիքսին։

Միս Հիքսը կանգնած էր Բայֆիլդի գլխավերևը։

— Ձեզ բազմիցս ասել եմ, միստր Բայֆիլդ, որ մարդկանց հետ այդպես չվարվեք,— ասաց միս Հիքսը,— նրանց այդ դուր չի գալիս։— Նա դարձավ դպրոցի դիրեկտորին.— միստր Բայֆիլդը պարտավոր է Ջո Տերանովայից ներողություն խնդրել։

— Մի՞թե, իսկապե՞ս, միստր Բայֆիլդ,— հարցրեց միստր Իքը։

— Ջոյի ծնողները Իտալիայից են եկել,— ասաց միս Հիքսը,— բայց դա չի նշանակում նրանց պետք է մակարոն անվանել։

Ջո Տերանովան ասաց.

— Ինձ պետք չէ նրա ներողությունը։ Եթե նա ինձ անուններ կպցրնի, ես նրա մռութին կհասցնեմ։ Եթե ծեծի, եղբայրներիս կկանչեմ։

— Ջոզեֆ,— ասաց միս Հիքսը,— դու պետք է թույլ տաս, որ միս-

տրը Բայֆիլդը ներողություն խնդրի. նա քեզնից կամ քո ծնողներից չէ, որ ներողություն է խնդրելու։ Նա ներողություն է խնդրելու մեր երկրից։ Դու պետք է թույլ տաս, որ նա վերստին փորձի ամերիկացի դառնալ։

— Ճիշտ է,— հաստատեց դպրոցի դիրեկտորը,— սա Ամերիկան է, և միակ օտարականը նա է, ով մոռանում է, որ սա Ամերիկան է։— Նա դարձավ մարզչին, որ դեռ նստած էր գետնին։— Միստր Բայֆիլդ։

Ինթաքայի տասնամյա դպրոցի ֆիզկուլտուրայի դասատուն ոտքի ելավ։

— Ներողություն եմ խնդրում,— ասաց նա, խոսքը առանց որևէ մեկին ուղղելու և շտապեց հեռանալ։

Ջո Տերանովան և Հոմեր Մաքոլին միասին գնացին։ Ջոն հանգիստ քայլում էր, իսկ Հոմերը կաղում էր։ Նա վնասել էր իր ձախ ոտքը, երբ Բայֆիլդը փորձել էր կանգնեցնել նրան։

Միսս Հիքսն ու միստր Իքը դարձան երեսուն թե քառասուն տղաներին ու աղջիկներին, որոնք հավաքվել էին իրենց շուրջը։ Նրանք տարբեր դիմագծեր ունեին և տարբեր ազգությունների էին պատկանում։

— Այժմ տուն գնացեք,— ասաց միսս Հիքսը, բայց քանի որ երեխաները դեռ մի քիչ հուզված էին, նա շարունակեց,— աշխուժացե՛ք, քթներդ մի կախեք, այս բոլորը դատարկ բաներ են։

— Այո,— ավելացրեց դպրոցի դիրեկտորը,— աշխուժացե՛ք, պատերազմը հավիտյան չի շարունակվելու։

Երեխաները խմբերի բաժանվեցին և հեռացան։

Գլուխ 13

ԹԱԿԱՐԴԸ, ԱՍՏՎԱԾ ԻՄ, ԹԱԿԱՐԴԸ

Մինչ Հոմեր Մաքոլին իր հեծանիվն էր քշում, որպեսզի որքան հնարավոր է շուտ հասնի աշխատանքի, Մեծ Քրիս անունով մի մարդ մտավ Տուլարի փողոցում գտնվող Քովինգտոնի սպորտային իրերի խանութը։ Նա մի վիթխարի մարդ էր՝ խարտյաշ մորուքով, արտասովոր կերպով բարձրահասակ, նիհար ու ջլուտ։ Նա նոր էր իջել Պիեդրայի շրջակա բլուրներից՝ պարեն, փամփուշտ և թակարդներ գնելու։

Միստր Քովինգտոնը, խանութի տերն ու հիմնադիրը, անմիջապես սկսեց Մեծ Քրիսին ցույց տալ մի նոր թակարդ, որը վերջերս հնարել էր մի ֆրիանդեցի։ Թակարդը մեծ էր և բարդ կառուցվածքի։ Այն սարքված էր պողպատից, կիտրոնի փայտից, պարաններից և զսպանակներից։

Այդ թակարդը գազանին բռնում է, գետնից բարձրացնում և այդպես պահում՝ մինչև որսորդի գալը։

— Վերջին գյուտերից է,— ասաց միստր Քովինգտոնը,— Սաֆբրթի անունով մի ֆրիանդեցի է հնարել։ Նա դիմել է մենաշնորհի իրավունք ստանալու համար և առայժմ երկու օրինակ է միայն սարքել։ Մեկը որպես նմուշ ուղարկել է գյուտարարության գրասենյակ, իսկ այս մեկը ուղարկել է ինձ՝ վաճառելու։ Թակարդը չորքոտանի որսալու համար է։ Միստր Սաֆբրթին այն կոչում է «գազանին բարձրացնող, չորս կողմից բռնող և պահող Սաֆբրթիի թակարդ»։ Նա քսան դոլար է պահանջում դրա համար։ Թակարդը դեռևս չի փորձարկվել, բայց ինչպես ինքներդ տեսնում եք, ամուր է և ամենայն հավանականությամբ առանց որևէ դժվարության կարող է գետնից բարձրացնել, չորս կողմից բռնել և պահել մի մեծ արջ։

Մեծ Քրիսը սպորտային իրերի վաճառատան տիրոջը լսում էր երեխայի հափշտակությամբ, իսկ նրա ետևում կանգնած Յուլիսիս Մաքոլին էր լսում նրան նույն հափշտակությամբ։ Նա գլուխը մտցրել էր երկու մարդկանց արանքը՝ թակարդն ավելի լավ տեսնելու համար։ Միստր Քովինգտոնը մտածում էր, թե Յուլիսիսը Մեծ Քրիսի որդին է, իսկ Մեծ Քրիսը կարծում էր, թե Յուլիսիսը Քովինգտոնի որդին է։ Այնպես որ՝ երկուսն էլ չէին նկատում փոքրիկ տղայի ներկայությունը։ Ինչ վերաբերում էր Յուլիսիսին, ապա նա միայն այն գիտեր, որ իր տեղը հենց այնտեղ է, ուր տեսնելու որևէ հետաքրքրական բան կա։

— Այս թակարդի առավելությունն այն է,— ասաց միստր Քովինգտոնը,— որ չի վիրավորում կենդանուն, մորթը անվնաս է թողնում։ Միստր Սաֆբրթին երաշխավորում է տասնմեկ տարվա անխափան աշխատանք։ Այդ վերաբերում է նաև թակարդի առանձին մասերին՝ փայտյա հենակների, թոկերի դիմացկունությանը, պողպատին, զսպանակներին և մյուս մասերին։ Միստր Սաֆբրթին թեև որսորդ չէ, բայց վստահ է, որ դա աշխարհի ամենագործնական և նվազագույն անգութ թակարդն է։ Յոթանասունի մոտ մարդ է նա, խաղաղ ապրում է Ֆրիանդում, գրքեր է կարդում և ամեն տեսակ բաներ հնարում։ Ընդհանուր առմամբ նա հնարել է երեսունյոթ տարբեր տեսակի գործիքներ, որոնք բոլորն էլ օգտակար են։— Միստր Քովինգտոնը թակարդի մասին իր ասելիքն ավարտեց։— Դե,— ասաց նա,— կարծում եմ, որ թակարդը լարված է։

Ավելի լավ տեսնելու համար Յուլիսիսը այնքան մոտեցավ, որ թակարդը մեղմ, բայց և արագ նրան իր մեջ առավ, բարձրացրեց, շուռ տվեց և պահեց ոտքերը գետնից բարձր, հորիզոնական դիրքով։ Տղան ոչ մի

ձայն չհանեց, թեև մի քիչ այլայլվեց։ Մեծ Քրիսը, սակայն, այդ բանը սրտին մոտ ընդունեց։

— Զգույշ,— բղավեց նա Քովինգտոնին,— նայեցեք, որ ձեր որդին չվնասվի։

— Իմ որդի՞ն,— զարմացավ Քովինգտոնը,— կարծում էի, որ նա ձեր որդին է։ Կյանքումս չեմ տեսել այդ տղային։ Նա ձեզ հետ ներս մտավ։

— Ճի՞շտ,— ասաց Մեծ Քրիսը,— չնկատեցի։ Ինչ-որ է, շտապեք։ Նրան թակարդից դուրս հանեք, դուրս բերեք, խնդրում եմ։

— Այս րոպեին, սըր,— ասաց Քովինգտոնը,— ապա տեսնեմ։

Մեծ Քրիսը մտահոգ էր և շփոթված։

— Անունդ ի՞նչ է, մանչուկ,— հարցրեց նա։

— Յուլիսիս,— թակարդի միջից պատասխանեց տղան։

— Իմ անունը Մեծ Քրիս է,— ասաց բլուրներից իջած մարդը։— Մի քիչ համբերիր, Յուլիսիս, մի վախեցիր, այս մարդը քեզ հիմա դուրս կհանի այդտեղից։— Մեծ Քրիսը դարձավ միստր Քովինգտոնին։— Դե, շտապեք,— ասաց նա,— տղային դուրս հանեք։ Նրան դուրս բերեք, խնդրում եմ։

Միստր Քովինգտոնը պակաս շփոթված չէր, քան Մեծ Քրիսը։

— Լավ չեմ հիշում, թե միստր Սաֆըրթին ինչպես բացատրեց թակարդի այդ մասի կառուցվածքը,— ասաց նա,— Միստր Սաֆըրթին չփորձարկեց իր թակարդը, հասկանո՞ւմ եք, որովհետև... մի խոսքով ոչ մի գաղան չունեինք այն փորձարկելու համար։ Միստր Սաֆըրթին միայն բացատրություններ տվեց։ Կարծեմ, այս մասը հարկավոր է դուրս քաշել... Ոչ, կարծես թե այդ մասը շարժական չէ։

Միստր Քովինգտոնն ու Մեծ Քրիսը գործի անցան։ Մեծ Քրիսը բռնել էր Յուլիսիսին, որպեսզի նա երեսի վրա գետին չընկնի, եթե թակարդը հանկարծակի բացվի, իսկ մյուսը թակարդի տարբեր մասերն էր քաշքշում, հույս ունենալով, թե որևէ մաս կշարժվի։

— Շտապի՛ր, շո՛ւտ,— ասաց Մեծ Քրիսը,— հո չի կարելի ամբողջ օրը երեխային օդում գլխիվայր պահել։ Չի ցավում, այնպես չէ՞, Յուլիսիս։

— Ոչ, սըր,— ասաց Յուլիսիսը։

— Ոչինչ, դու միայն պինդ կաց,— ասաց Մեծ Քրիսը,— քեզ այդտեղից կհանենք։— Նա նայեց տղային և հետո ասաց,— ինչո՞ւ այդքան մոտ գնացիր։

— Ուզում էի լավ տեսնել,— ասաց Յուլիսիսը։

— Այո, շատ հետաքրքրական գործիք է,— ասաց Մեծ Քրիսը։—

Շուտով այս մարդը քեզ դուրս կհանի, իսկ ես չեմ թողնի, որ գետին ընկնես։ Քանի՞ տարեկան ես։

— Չորս,— ասաց Ցուլիսիսը։

— Չո՞րս, ուրեմն ես քեզնից հիսուն տարով մեծ եմ։ Այս մարդը քեզ շուտով դուրս կհանի, այնպես չէ՞,— Մեծ Քրիսը շրջվեց միստր Քովինգտոնին,— ձեր անունն ի՞նչ է,— հարցրեց նա։

— Ուոլտըր Քովինգտոն,— ասաց միստր Քովինգտոնը,— խանութի տերն եմ։

— Շիանալի է,— ասաց Մեծ Քրիսը,— ուրեմն, Ուոլտըր, տղային թակարդից դուրս հանիր։ Քաշիր այդ փայտյա մասը։ Տղային ես պահում եմ։ Մի վախենա, Ցուլիսիս։ Հորդ անունն ի՞նչ է։

— Մաթյու,— ասաց Ցուլիսիսը։

— Նա շատ բախտավոր մարդ է, որ քեզ նման տղա ունի,— ասաց Մեծ Քրիսը,— աչքաբաց մի տղա։ Ամբողջ աշխարհը կտայի քեզ նման տղա ունենալու համար, Ցուլիսիս, բայց դժբախտաբար ինձ համար կնոջ չհանդիպեցի։ Օկլահոմայում, երեսուն տարի առաջ, մի աղջկա հանդիպեցի, բայց նա ուրիշ մարդու հետ գնաց։ Գնա՞ր, Ուոլտըր։

— Դեռ ոչ,— ասաց միստր Քովինգտոնը,— բայց կգնեմ։ Կարծեմ, այս պետք է լինի... Ոչ... Միստր Սաֆերթին բացատրեց, թե ինչպես պետք է գազանին դուրս հանել թակարդից, բայց, ըստ երևույթին, չեմ կարողանում ճիշտ տեղը գտնել։ Գուցե ամեն ինչ փոխվում է, երբ գազանի փոխարեն փոքր երեխա է թակարդն ընկնում։

Երկու տղամարդ, մի կին՝ իր փոքրիկ աղջկա հետ, և ինը-տասը տարեկան երկու տղաներ վաճառատուն մտան՝ կատարվածը դիտելու։

— Ի՞նչ է պատահել,— հարցրեց տղաներից մեկը։

— Թակարդի մեջ երեխա է ընկել,— ասաց միստր Քովինգտոնը,— Ցուլիսիս անունով մի տղա։

— Ինչպե՞ս է ընկել,— հարցրեց տղամարդկանցից մեկը։— Բժիշկ կանչե՞մ։

— Ոչ, վիրավորված չէ,— ասաց Մեծ Քրիսը,— տղան ողջ և առողջ է։ Պարզապես գետնից բարձրացված է, ուրիշ ոչինչ։

— Գուցե ոստիկան կանչեք,— ասաց կինը։

— Ոչ, տիկին,— ասաց Մեծ Քրիսը,— տղան պարզապես թակարդն է ընկել։ Այս մարդը, Ուոլտըրը, տղային շուտով դուրս կբերի։

— Խայտառակություն է, փոքր երեխաներին տանջում են ամեն տեսակի հիմար բաներով,— ասաց տիկինը։

— Տղան շատ լավ է զգում իրեն, տիկին,— ասաց Մեծ Քրիսը,— նա չի տանջվում։

Տիկինն ասաց.

— Եթե նա իմ տղան լիներ, ես անմիջապես ոստիկան կկանչեի։— Նա արագ շրջվեց և իր փոքր աղջկան ետևից քարշ տվեց։

— Ուզում եմ տեսնել, ուզում եմ տեսնել,— լաց եղավ փոքրիկ աղջիկը,— բացի ինձնից բոլորը նայում են։— Կինը քաշեց փոքր աղջկան և վաճառատնից դուրս բերեց։

— Մի անհանգստանա, Յուլիսիս,— ասաց Մեծ Քրիսը,— հիմա քեզ դուրս կհանենք այդտեղից։

Միստր Քովինգտոնը, այնուամենայնիվ, հուսահատվեց։

— Գուցե ավելի լավ է զանգահարեմ միստր Սաֆերթիին,— ասաց նա,— տղային չեմ կարողանում դուրս հանել։

— Այստե՞ղ պիտի մնամ,— հարցրեց Յուլիսիսը։

— Ոչ, չես մնա, մանչուկ,— ասաց Մեծ Քրիսը,— ոչ, այդտեղ չես մնա։ Մենք քեզ դուրս կհանենք։

Մի տղա, թևի տակ տասնյակ երեկոյան լրագրեր, մտավ վաճառատուն։ Նա խցկվեց ժողովրդի մեջ, շարժվեց դեպի բեմը, նայեց Յուլիսիսին, նայեց ժողովրդին, նորից նայեց Յուլիսիսին և հետո ասաց.

— Հելլո, Յուլիսիս, այդտեղ ի՞նչ ես անում։

— Հելլո, Օգի,— ասաց Յուլիսիսը,— բռնվել եմ։

— Ինչի համար,— ասաց Օգին։

— Բռնեցին,— ասաց Յուլիսիսը։

Լրագրավաճառ տղան փորձեց օգնել Մեծ Քրիսին, բայց ավելի շատ խանգարում էր։ Նա սարսափահար շուրջը նայեց և բոպեական շփոթությունից հետո փողոց նետվեց և վազեց հեռագրատուն։ Հոմերը այդտեղ չէր, նորից փողոց դուրս եկավ, այս ու այն կողմ ընկավ՝ մարդկանց բախվելով և միաժամանակ գոռալով օրվա նորությունները։

Մի կին, որին բախվել էր, կիսաձայն ասաց.

— Գիժ է. գժվել է թերթ ծախելու մոլուցքից։

Օգին մի ամբողջ թաղամաս վազեց, դուրս եկավ փողոցի մեջտեղը, որպեսզի կարողանա նայել չորս կողմը ու գտնել Հոմերին։ Եվ ուղղակի հրաշք էր, որ անկյունում երևաց Հոմերը՝ հեծանիվի վրա։ Օգին վազեց Հոմերին ընդառաջ, ամբողջ ուժով բղավելով.

— Հոմեր, դու պետք է անմիջապես գաս։ Հոմեր, դու պետք է...

Հոմերը հեծանիվից իջավ։

— Ի՞նչ է պատահել, Օգի,— ասաց նա։

— Հոմեր, գիտե՞ս ինչ է պատահել,— բղավեց Օգին, թեև Հոմերը կանգնած էր իր կողքին,— դու պետք է ինձ հետ գաս, Հոմեր,— նա բռնեց Հոմերի թևը։

— Բայց ի՞նչ է պատահել,— ասաց Հոմերը։

— Քովինգտոնի մոտ, այնտեղ,— ասաց Օգին,— շտապիր... դու պետք է ինձ հետ գաս։

— Ինչ է,— ասաց Հոմերը,— ուզում ես ինչ-որ ձկնորսական կա՞րթ ցույց տալ ինձ կամ ցուցափեղկում դրված հրացան։ Բայց ես այլևս չեմ կարող առաջվա պես անպատակ թափառել, Օգի։ Ես հիմա աշխատում եմ, պարտավոր եմ աշխատանքի գնալ։

Հոմերը նորից հեծանիվ նստեց և սկսեց քշել, բայց Օգին բռնեց հեծանիվի նստոցից և վազեց՝ հեծանիվը հրելով դեպի Քովինգտոնի խանութի կողմը։

— Հոմեր,— բղավեց նա,— դու պարտավոր ես ինձ հետ գալ։ Նա բռնված է։ Նա չի կարողանում դուրս գալ։

— Ինչի՞ մասին ես խոսում,— ասաց Հոմերը։

Նրանք հասան Քովինգտոնի խանութը։ Վաճառատան առաջ մի փոքրիկ բազմություն էր հավաքված, և Հոմերը սկսեց մի քիչ վախենալ։ Օգին ցույց տվեց մարդկանց։ Երկու տղաները մխրճվեցին ժողովրդի մեջ, մտան խանութ, հասան թակարդին։ Այնտեղ, թակարդի մեջ էր Հոմերի եղբայրը՝ Յուլիսիսը, իսկ թակարդի շուրջը կանգնած էին Մեծ Քրիսը, միստր Քովինգտոնը և մի քանի օտար մարդիկ՝ կանայք ու երեխաներ։

— Յուլիսիս,— բղավեց Հոմերը։

— Հելլո, Հոմեր,— ասաց Յուլիսիսը։

Հոմերի դարձավ բազմությանը։

— Ի՞նչ գործ ունի եղբայրս այս վանդակի մեջ,— հարցրեց նա։

— Նա բռնվեց,— ասաց միստր Քովինգտոնը։

— Իսկ այս մարդիկ ինչ են անում,— հարցրեց Հոմերը։— Գնացեք, տուն, գնացեք,— ասաց նա մարդկանց,— մի՞թե չի կարող փոքրիկ երեխան թակարդի մեջ ընկնել, առանց ամբողջ աշխարհը իր շուրջը հավաքելու։

— Ճիշտ է,— ասաց միստր Քովինգտոնը։— Ովքեր հաճախորդ չեն, թող հեռանան այստեղից։— Միստր Քովինգտոնը մի հայացք գցեց ներկաների վրա։— Միստր Ուալլաս,— ասաց նա,— դուք կարող եք մնալ։ Դուք նույնպես ինձ մոտ եք գնումներ կատարում, միստր Սիքերտ, Ջորջ, դուք նույնպես միստր Սպինդալ, Շորթի։

— Ես էլ եմ այստեղ առևտուր անում,— ասաց մի մարդ,— մի շաբաթ էլ չկա, որ այս խանութից կարթեր գնեցի։

— Ճիշտ է,— ասաց միստր Քովինգտոնը,— ձկան կարթեր։ Մյուսները, խնդրում եմ, թող հեռանան։

Միայն երկու հոգի մի քիչ հեռացան։

— Մի վախեցիր, Ցուլիսիս,— ասաց Հոմերը։— Հիմա ինչ որ պետքն է կանեմ։ Լավ էր, որ Օգին գտավ ինձ։ Օգի, վազիր հեռաբրատուն և ասա միստր Սփանգլերին, որ Ցուլիսիս եղբայրս թակարդի մեջ է ընկել Քովինգտոնի մոտ, և ես փորձում եմ նրան դուրս բերել։ Արդեն ուշացել եմ, բայց ասա նրան, որ այդտեղ կլինեմ անմիջապես, հենց որ Ցուլիսիսին թակարդից դուրս հանեմ։ Դե, շտապիր։

Օգին դուրս վազեց։ Նա բախվեց մի ոստիկանի, որը վաճառատուն էր մտնում, և նրան համարյա գետին գցեց։

— Այս ի՞նչ իրարանցում է,— հարցրեց ոստիկանը։

— Մի փոքր երեխա է թակարդի մեջ ընկել,— ասաց միստր Քովինգտոնը։— Չենք կարողանում դուրս հանել։

— Հիմա կտեսնենք,— ասաց ոստիկանը։

Նա նայեց Ցուլիսիսին, ապա դարձավ ժողովրդին։

— Դե լավ,— ասաց նա,— բոլորդ հեռացեք։ Այսպիսի բաներ ամեն օր պատահում են։ Ի՞նչ է, գործ չունե՞ք, ինչ եք աչքներդ չռել թակարդի մեջ ընկած մի երեխայի։— Ոստիկանը ժողովրդին վաճառատնից դուրս հանեց և փակեց գլխավոր դուռը։ Նա շրջվեց դեպի միստր Քովինգտոնը և Մեծ Քրիսը։— Այժմ տղային դուրս հանեք ու շտապ տուն ուղարկեք,— ասաց նա։

— Ճիշտ է,— ասաց միստր Քովինգտոնը,— և ինչքան արագ, այնքան լավ։ Թե չէ խանութս փակեցիք, իսկ դեռ ժամը չորսն անց կես է։

— Ինչպե՞ս է աշխատում այս գործիքը,— ասաց Հոմերը։

— Սա նոր տեսակի թակարդ է,— ասաց միստր Քովինգտոնը,— որ վերջերս հնարել է Ֆրիանդեցի միստր Վիլֆրեդ Սաֆրրթին։ Նա քսան դոլար է պահանջում սրա համար և դիմել է՝ մենաշնորհի իրավունք ստանալու։

— Կամ ինքներդ եղբորս դուրս հանեք,— ասաց Հոմերը,— կամ էլ գտեք մեկին, որ կարողանա հանել։ Կանչեք միստր Սաֆրրթիին։

— Փորձեցի զանգահարել միստր Սաֆրրթիին, բայց հեռախոսը փչացել է,— ասաց միստր Քովինգտոնը։

— Փչացե՞լ,— բղավեց Հոմերը։ Այդ պատմությունը նրան շատ էլ զայրացրել։— Իմ ի՞նչ գործն է, որ հեռախոսը փչացել է,— ասաց նա։— Շուտ այդ մարդուն այստեղ բերեք և եղբորս թակարդից ազատեք։

— Այո, լավ կլինի, այդպես էլ անենք,— ասաց ոստիկանը միստր Քովինգտոնին։

— Պարոն ոստիկան,— ասաց միստր Քովինգտոնը,— ես աշխատում եմ օրինավոր առևտուր անել։ Ես օրենքին հլու քաղաքացի եմ և վճարում եմ իմ բոլոր հարկերը, որից և, կարող եմ ասել, դուք ստանում

եք ձեր աշխատավարձը։ Ես արդեն փորձեցի հեռախոսով գտնել միստր Սաֆբրթիին։ Հեռախոսը, ըստ երևույթին, փչացել է։ Ես չեմ կարող օրը ցերեկով թողնել խանութը և գնալ նրան փնտրելու։

Հոմերն ուղիղ նայեց միստր Քովինգտոնի աչքերին և մատը թափ տվեց նրա քթի տակ։

— Գնացեք գտեք այս տանջանքի մեքենան հնարողին,— ասաց նա,— և եղբորս դուրս հանեք այդտեղից։ Հասկացա՞ք։

— Դա տանջանքի մեքենա չէ,— ասաց միստր Քովինգտոնը,— վաճառքում եղած լավագույն թակարդն է։ Այն ողջ է պահում գազանին, առանց վնասելու նրա մորթը և մարմինը։ Ոչ ճզմում է, ոչ էլ քերծվածք, կտրվածք պատճառում։ Այս գործիքը գազանին տեղից հանում է և օդում պահելով՝ անվնաս դարձնում։ Բացի այդ, միստր Սաֆբրթիին գուցեև տանը չէ։

— Ի՞նչ,— ասաց Հոմերը,— այդ ինչե՞ր ես ասում։

Ոստիկանը որոշեց ուսումնասիրել թակարդը։

— Դուցե,— ասաց նա,— ավելի լավ է պողպատը սղոցել և այդ ձևով դուրս հանել տղային։

— Պողպատը սղոցե՞լ,— զարմացավ միստր Քովինգտոնը,— ինչպե՞ս։

— Յուլիսիս,— հարցրեց Հոմերը,— որևէ բան ուզո՞ւմ ես։ Լա՞վ ես։ Քեզ ի՞նչ բերեմ։

Մեծ Քրիսը, թակարդի վրա աշխատելուց քրտնած, նախ մի եղբորը նայեց, ապա մյուս եղբորը՝ խորապես հուզվելով թակարդի մեջ եղողի հանգստությունից ու մեծ եղբոր նվիրվածությունից։

— Յուլիսիս,— հարցրեց Հոմերը,— որևէ բան ուզո՞ւմ ես։

— Հայրիկին,— ասաց Յուլիսիսը։

— Իսկ հայրիկից բացի ուրիշ բան չե՞ս ուզում,— հարցրեց Հոմերը։

— Մարկուսին,— ասաց տղան։

— Մարկուսը բանակում է,— ասաց Հոմերը։— Պաղպաղակ կամ դրա նման մի բան ուզո՞ւմ ես։

— Ոչ,— ասաց Յուլիսիսը,— միայն Մարկուսին։

— Մարկուսը բանակում է,— ասաց Հոմերը։ Նա դարձավ Քովինգտոնին։— Եղբորս դուրս հանեք այս թակարդից, շտապեք— բղավեց նա։

— Մի բոպե սպասիր,— ասաց Մեծ Քրիսը։— Հապա, տղա, եղբորդ պահիր, որ չընկնի։— Մեծ Քրիսը սկսեց տենդորեն զբաղվել թակարդով։

— Դուք կ՝տրում եք թակարդը,— բղավեց միստր Քովինգտոնը,—

ոչնչացնում, իսկ դա իր տեսակի մեջ միակն է ամբողջ աշխարհում։ Չհամարձակվեք կոտրել այն։ Ես կգտնեմ միստր Սաֆերթիին։ Դուք մի մեծ գյուտ եք ջարդում։ Գուցե նա այլևս չկարողանա դրա նման մի ուրիշը սարքել։ Երեխան իրեն շատ լավ է զգում։ Նա անվնաս է։ Ես կգնամ և միստր Սաֆերթիին կգտնեմ։ Դա շատ-շատ մեկ կամ երկու ժամ կտևի։

— Մեկ կամ երկու ժամ,— բղավեց Հոմերը։ Նա աշխարհի ամենասարսափելի հայացքով նայեց միստր Քովինգտոնին և ապա ամբողջ վաճառատանը։— Ամբողջ այս խանութը ջարդուփշուր կանեմ,— ասաց նա ու դարձավ Մեծ Քրիսին։— Շարունակեք, միստր,— ասաց նա,— ջարդեցեք թակարդը, ջարդեցեք։

Մեծ Քրիսը իր մատների, թևերի, ուսերի և թիկունքի բոլոր մկաններով ընկավ թակարդի վրա, և թակարդը կամաց-կամաց սկսեց տեղի տալ նրա ուժի առաջ։

Յուլիսիսը շուտ եկած դիտում էր այդ մարդուն։ Ի վերջո, Մեծ Քրիսը կոտրեց թակարդը։

Յուլիսիսը փրկվեց։

Բռնելով եղբորը, որպեսզի չընկնի դեմքի վրա, Հոմերը նրան ոտքի կանգնեցրեց։ Վաճառատան դիմացի ամբոխը «ուռռա» գոռաց, բայց ոչ այնքան միասնական, որովհետև կազմակերպված չէր և առաջնորդ չուներ։ Յուլիսիսը փորձեց քայլել։ Եվ քանի որ ամեն ինչ կարգին էր թվում, Հոմերը գրկեց եղբորը։ Յուլիսիսը նայեց Մեծ Քրիսին։ Այդ հսկա մարդը գրեթե ուժասպառ էր եղել։

— Իսկ ո՞վ պետք է վճարի թակարդի համար,— ասաց միստր Քովինգտոնը,— գործիքը ջարդված է։ Մեկնումեկը պետք է վճարի դրա համար։

Առանց որևէ խոսքի, Մեծ Քրիսը գրպանից փող հանեց, հաշվեց քսան դոլար և նետեց սեղանի վրա։ Նա բռնեց Յուլիսիսի գլուխը և շոյեց նրա մազերը, ինչպես հայրն էր երբեմն անում։ Հետո խանութից դուրս եկավ։

Հոմերը հարցրեց եղբորը։

— Ինչպե՞ս ես,— ասաց նա,— ինչպե՞ս ընկար այդ սարսափելի բանի մեջ։— Հոմերը նայեց ջարդոտված թակարդին և ոտքով խփեց դրան։

— Զգույշ,— ասաց ոստիկանը,— դա ինչ-որ նոր գյուտ է։ Մեկ էլ տեսար մի բան մոգոնեց։

Միստր Քովինգտոնը փողոց դուրս եկավ և դիմեց ժողովրդին։

— Վաճառատունը նորից բաց է գնորդների առաջ,— հայտարարեց նա,— Քովինգտոնի խանութը բացվում է ամեն առավոտ ժամը ութին և

փակվում է ամեն երեկո ժամը յոթին։ Շաբաթ օրերը բաց է մինչև ժամը տասը, իսկ կիրակի օրերը փակ է։ Սպորտային ամեն ինչ ունենք։ Զբկնորսական ուղևաններ, վառոդ և մարմնամարզական գործիքներ։ Տիկնայք և պարոնայք, խանութը բաց է։ Ներս համեցեք։

Ժողովուրդը դանդաղ հեռացավ։

Խանութից դուրս գալով, Հոմերը դարձավ ոստիկանին։

— Ո՞վ էր եղբորս թակարդի միջից հանող մարդը,— հարցրեց նա։

— Առաջին անգամ եմ տեսնում այդ մարդուն,— պատասխանեց ոստիկանը։

— Մեծ Քրիսն է,— ասաց Ցուլիսիսը Հոմերին։

— Դա նրա անո՞ւնն է, Մեծ Քրիս,— հարցրեց Հոմերը։

— Այո,— ասաց Ցուլիսիսը,— նրա անունը Մեծ Քրիս է։

Այդ ժամանակ վազելով խանութ մտավ Օգին։ Նա նայեց Ցուլիսիսին։

— Դո՞ւրս եկար, Ցուլիսիս,— ասաց նա զարմացած,— ինչպե՞ս դուրս եկար, Ցուլիսիս։

— Մեծ Քրիսը օգնեց,— ասաց Ցուլիսիսը։

— Հոմեր, ինչպե՞ս դուրս եկավ,— հարցրեց Օգին,— ի՞նչ պատահեց։ Ի՞նչ եղավ թակարդը։ Որտե՞ղ է մորուքով մեծ մարդը։ Ի՞նչ եղավ իմ բացակայության ժամանակ։

— Ամեն ինչ կարգին է, Օգի,— ասաց Հոմերը,— դու իմ խնդիրքը հայտնեցի՞ր միստր Սփանգլերին։

— Հա, ասացի,— ասաց Օգին,— իսկ ինչպե՞ս պատահեց, Հոմեր։ Թակարդն աշխատո՞ւմ է։ Գազան կբռնի՞։

— Դատարկ բան է,— ասաց Հոմերը,— թակարդ չէ, թյուրիմացություն է։ Ի՞նչ օգուտ դրանից, երբ բռնված որսը չես կարող դուրս հանել։ Միստր Քովինգտոն,— դիմեց նա վաճառատան տիրոջը,— դուք շատ անխիղճ մարդ եք։ Դուք միստր Քրիսից քսան դոլար վերցրիք այսպիսի անպետքության համար։

— Քսան դոլարը սակագինն է,— ասաց միստր Քովինգտոնը։

— Սակագի՞նը,— ասաց Հոմերը,— ինչե՞ր եք ասում։ Արի, Օգի, արի այստեղից դուրս գանք։

Երեք տղաները թողեցին վաճառատունը և գնացին հեռագրատուն։ Միստր Սփանգլերը հենվել էր սեղանին և փողոցն էր դիտում։ Միստր Գրոգանը հեռագիր էր ուղարկում։ Երկու հարյուր քսան յարդ արգելավազքի ժամանակ ֆիզկուլտուրայի դասատու միստր Բայֆիլդի հետ ունեցած միջադեպի պատճառով Հոմերն այժմ ավելի շատ էր կաղում։ Նա կանգ առավ, որ խոսի հեռագրատան վարիչի հետ։

— Միստր Սփանգլեր, սա իմ Ցուլիսիս եղբայրն է,— ասաց նա։— Մենք հենց նոր նրան հանեցինք մի ինչ-որ թակարդից՝ Քոլինգտոնի խանութում։ Մեծ Քրիսը նրան հանեց։ Նա ստիպված եղավ ջարդել թակարդը և վճարել քսան դոլար... Ուղիղ քսան դոլար։ Սա Օգին է։ Նա հայտնե՞ց, թե ինչու ուշացա։

— Ամեն ինչ կարգին է,— ասաց Սփանգլերը։— Մի քանի հեռագրեր են կուտակվել, պետք է տեղ հասցնես, բայց ոչինչ։ Ուրեմն սա քո եղբա՞րն է, Ցուլիսի՞սը։

Ցուլիսիսը կանգնել էր հեռագրիչի ետևը ու դիտում էր նրա աշխատանքը։ Հեռագրիչի առջև, սեղանի մյուս կողմը կանգնել էր Օգին և լսում էր հեռագրամեքենայի աղմուկը։

— Մի քանի զանգեր էլ եղան,— ասաց Սփանգլերը։— Մոտիկ տեղերը ես գնացի։ Մյուս երկուսի հասցեները պահարանի դարակում են։ Առաջ այդ կանչերին գնա, հետո հեռագրերը բաժանիր։

— Լավ, սըր,— ասաց Հոմերը,— հենց հիմա։ Դուք ինձ ներեցեք, միստր Սփանգլեր։ Կարո՞ղ եք նայել Ցուլիսիսին մինչև իմ վերադառնալը։ Քիչ հետո, երբ աշխատանքը խաղաղի, ես նրան հեծանիվով տուն կտանեմ։

— Ես կնայեմ եղբորդ,— ասաց Սփանգլերը։— Դու գնա։

— Շնորհակալ եմ, սըր,— ասաց Հոմերը,— Ցուլիսիսը ձեզ նեղություն չի տա։ Նա պարզապես հետաքրքրությամբ կդիտի, ուրիշ ոչինչ։

Հոմերը կաղալով շտապ հեռացավ հեռագրատնից։

Գլուխ 14

ԴԻԱՆԱ

Մինչ Օգին լսում էր հեռագրական ապարատի տկտկոցը, Ցուլիսիսը ավելի մոտեցավ միստր Գրոգանին։

— Ինչի՞ համար է սա,— հարցրեց Օգին՝ միստր Սփանգլերին ցույց տալով ապարատը։

— Միստր Գրոգանը հեռագիր է ուղարկում,— ասաց Սփանգլերը։

— Ո՞ւր է ուղարկում,— հարցրեց Օգին։

— Նյու Յորք,— պատասխանեց Սփանգլերը։

— Այստեղից Նյու Յորք,— զարմացավ Օգին,— իսկ ինչպե՞ս է այդքան երկար ճանապարհ գնում։

— Հեռագրալարերով,— ասաց Սփանգլերը։

— Սյուների վրայի հեռագրալարերո՞վ,— հարցրեց Օգին։— Այստեղից մինչև Նյու Յորք հեռագրալարե՞ր կան։ Իթաքիայից մինչև Նյու Յո՞րք։

— Այո,— պատասխանեց Սփանգլերը։

— Իսկ ո՞վ է այդ հեռագիրը ուղարկում,— հարցրեց Օգին։

— Տարբեր մարդիկ,— պատասխանեց Սփանգլերը։ Լրագրավաճառը մի պահ մտածեց, հետո ասաց.

— Կյանքումս ոչ մի հեռագիր չեմ ստացել։ Ինչպե՞ս են ստանում։

— Որևէ մեկը պետք է ուղարկի, որ ստանաս,— ասաց Սփանգլերը։

— Ոչ մի հատ չեմ ստացել,— ասաց Օգին,— իսկ ո՞վ կուղարկի։

— Բարեկամդ, կամ ուրիշ որևէ մեկը,— ասաց Սփանգլերը։

— Իմ ճանաչած բոլոր մարդիկ այստեղ են ապրում, Իթաքայում,— ասաց Օգին։ Մի կանաչ լույս անցավ գործիքի վրայով։

— Ինչի՞ համար է այդ կանաչ լույսը,— հարցրեց Օգին։

— Ազդարարում է, որ գիծը ազատ է,— ասաց Սփանգլերը։

— Ո՞ր գիծը,— հարցրեց Օգին։

— Սան Ֆրանցիսկոյի գիծը,— ասաց Սփանգլերը։

— Աա՜... Քանի տարեկան պետք է լինել հեռագրի ցրիչ դառնալու համար,— ասաց Օգին։

— Տասնվեց,— ասաց Սփանգլերը։

— Ես ինը տարեկան եմ,— ասաց Օգին,— ինչո՞ւ պետք է այդքան երկար սպասել։ Տասնյոթ տարեկանում կարող ես նավատորմ ընդունվել։

— Դա օրենք է,— ասաց Սփանգլերը։

— Ինչո՞ւ են ստեղծվել բոլոր այդ օրենքները,— հարցրեց Օգին։

Սփանգլերը սկսեց հեռագրերը դասավորել։

— Ինչպես քեզ ասեմ,— պատասխանեց նա,— օրենքը նրա համար է, որ երեխաները չաշխատեն։

— Ինչո՞ւ,— ասաց Օգին։

— Որ չհոգնեն,— ասաց Սփանգլերը,— որ կարողանան խաղալ։ Այդ օրենքը երեխաներին պաշտպանելու համար է։

— Պաշտպանելու ինչի՞ց,— հարցրեց Օգին։

— Ինչպես ասեմ,— ասաց Սփանգլերը,— պաշտպանելու ծանր աշխատանքից։ Պաշտպանելու տերերից, որոնք երեխաներին շատ են աշխատեցնում և քիչ վճարում։

— Իսկ եթե երեխան չի ուզում, որ իրեն պաշտպանեն,— ասաց Օգին,— իսկ եթե նա ուզում է աշխատել։

— Բոլոր դեպքերում օրենքը նրան կպաշտպանի,— ասաց Սփանգլերը։

— Քանի՞ տարեկան պետք է լինես, որ կարողանաս ինքդ քեզ պաշտպանել, կամ էլ անես ուզածդ գործը։

— Տասնվեց տարեկան պետք է լինես հեռագրատան ցրիչ դառնալու համար,— ասաց Սփանգլերը։

— Հոմերն աշխատում է, այնպես չէ՞,— հարցրեց Օգին։— Այդ երբվանի՞ց է Հոմերը տասնվեց տարեկան դարձել։

— Հոմերը բացառություն է,— ասաց Սփանգլերը,— նա տասնչորս տարեկան է, բայց ուժեղ է և խելացի։

— Ի՞նչ եք ուզում ասել խելացի ասելով,— ասաց Օգին.— մի՞թե ցրիչ դառնալու համար անպայման պետք է խելացի լինել։

— Ոչ,— ասաց Սփանգլերը,— բայց դա օգնում է։ Խելացի լինելը օգնում է, անկախ նրանից, թե ինչ ես անում։

— Լավ,— ասաց Օգին,— իսկ ինչի՞ց կարող եք իմանալ, որ մարդը խելացի է։

Սփանգլերը նայեց լրագրավաճառ տղային և ժպտաց։

— Նրա հետ մի քանի րոպե խոսելով կարելի է հասկանալ,— ասաց նա։

— Ինչո՞ւ եք այդ թղթերը դնում այդտեղ,— հարցրեց Օգին։

— Սրանք երեկ ուղարկված հեռագրերն են,— ասաց Սփանգլերը,— դասավորում ենք ըստ քաղաքների՝ մեր հաշվեմատյանների և արխիվի համար։ Այս հեռագրերը Սան Ֆրանցիսկոյի համար են, ուրեմն՝ դնում եմ այստեղ։ Այստեղի բոլոր հեռագրերը Սան Ֆրանցիսկոյի համար են։

— Այդ աշխատանքը ես էլ կարող եմ անել,— ասաց Օգին,— ես կարող եմ նաև հեծանիվ քշել... միայն թե հեծանիվ չունեմ։ Եթե հեծանիվ ունենամ, միստր Սփանգլեր, կարո՞ղ եմ ես էլ ցրիչ դառնալ, դուք ինձ աշխատանք կտա՞ք։

Տղային նայելու համար Սփանգլերը մի պահ դադարեցրեց աշխատանքը։

— Այո, կտամ, Օգի,— ասաց նա,— բայց ոչ հիմա։ Ինը տարեկանը դեռ մեծ չէ։ Տասներեքում կամ երբ լրանա տասնչորսդ, լա՞վ։

— Գուցե տասներկուսո՞ւմ,— հարցրեց Օգին։

— Գուցե,— ասաց Սփանգլերը,— բայց դու ինչո՞ւ ես ուզում ցրիչ լինել։

— Որ տարբեր բաներ սովորեմ,— ասաց Օգին։— Հեռագրեր կարդամ։— Նա մի պահ լռեց։— Երեք տարի հետո տասներկու տարեկան կդառնամ,— ասաց նա։

— Երեք տարին անկատելի կանցնի,— ասաց Սփանգլերը։

— Չեմ կարծում,— ասաց Օգին,— արդեն ինչքան ժամանակ է, սպասում եմ։

— Այ, կտեսնես, որ տասներկու տարեկան կդառնաս և չես էլ իմանա, թե ինչպես անցավ,— ասաց Սփանգլերը,— ինչպե՞ս է քո ազգանունը։

— Գոթլիբ,— ասաց Օգին,— Օգյուստ Գոթլիբ։

Հեռագրատան վարիչը և լրագրավաճառ տղան նայեցին իրար, յուրաքանչյուրը զգույշ և լուրջ։

— Օգյուստ Գոթլիբ,— ասաց Սփանգլերը,— քեզ խոստանում եմ։ Երբ ժամանակը գա...

Սփանգլերը ընդհատեց զրույցը՝ դիմավորելու համար վազքով գրասենյակ մտնող Դիանա Սթիդ անունով երիտասարդ կնոջը։ Գրասենյակի դիմացը՝ փողոցում, կանգնած էր նրան բերող մեքենան։ Ղեկի մոտ նստած էր արտահագուստով վարորդը։ Ցուրահատուկ, մի փոքր անբնական, բայց հմայիչ ձայնով աղջիկը դիմեց Սփանգլերին.

— Ահա թե որտեղ ես դու, սիրելի՞ս,— և քնքշալից զայրույթով հարձակվեց Սփանգլերի վրա, գրկեց նրան և համբուրեց այնպես, որը իբրև իրականություն շատ անհավատալի էր, բայց փոքր-ինչ ավելի լավ էր, քան իրականը։

— Սպասիր,— ասաց Սփանգլերը։ Նա աղջկան ետ պահեց, ձեռքի հեռագրատուփը դրեց սեղանին և շրջվեց նրա կողմը։ Երիտասարդ կինը նորից ուզեց մոտենալ, բայց Սփանգլերը հեռացրեց նրան։

— Սպասիր,— ասաց նա,— ծանոթացիր, սա Օգյուստ Գոթլիբն է։

— Ինչպե՞ս ես, փոքրիկ,— ասաց երիտասարդ կինը։

— Ծանոթացիր, Օգյուստ,— ասաց Սփանգլերը,— սա միսս Սթիդն է։

— Հելլո,— ասաց Օգին։ Եվ չիմանալով, թե ուրիշ ինչ ասի, շարունակեց,— թերթ ուզո՞ւմ եք, տիկին։

— Ի՞նչ, այո, անշուշտ,— ասաց Դիանան,— ի՞նչ արժի։

— Հինգ սենթ,— ասաց Օգին,— տեղական հրատարակություն է։ Ջիարշավի արդյունքները, բոքսայի փակումը և ռազմական վերջին նորությունները։

— Իսկապե՞ս,— ասաց Դիանան,— ահա քեզ հինգանոց։ Շատ շնորհակալ եմ։

Օգին վերցրեց հինգանոցը և միսս Սթիդին մի թերթ տվեց։ Բայց նախքան թերթը տալը, ծալեց այն մեծ ճարպկությամբ և գործնականորեն թերթը զարկեց ծնկին, ծալեց, կիսածալ թերթը նորից զարկեց ծնկին, նորից ծալեց, ապա մեկնեց երիտասարդ կնոջը, նման գլխապտույտ առաջացնող համար կատարած ճպարարի։

— Շնորհակալ եմ, տիկին,— ասաց նա։— Չորեքշաբթի օրերը «Սաթըրդեյ իվնինգ փոստ» և «Լիբերթի» եմ վաճառում, ուրբաթ օրերը՝ «Քուլիերս»։ Ամբողջ քաղաքն եմ մատակարարում։

— Վատ չէ,— ասաց Դիանան,— հույս ունեմ, որ շատ փող ես աշխատում, մանչուկ։

— Օրական, միջին հաշվով, քառասուն սենթ, թերթերն ու ամսագրերը միասին վերցրած,— պատասխանեց Օգին,— երբ Նահանգային տոնավաճառներին էլ գազով ջուր եմ ծախում։

— Լավ է, միշտ զբաղված ես, ճի՞շտ է,— ասաց Դիանան իր հրաշալի, ուրախ ձայնով։

— Այո,— ասաց Օգին,— և նոր բաներ եմ սովորում։ Ես շատ լավ եմ կարողանում մարդկանց ճանաչել։— Օգիին թվում էր, որ ինքը ճանաչել էր միսս Սթիդին, և գոհ էր դրանից։

— Անշուշտ ճանաչում ես,— ասաց աղջիկը,— վստահ եմ, որ ճանաչում ես։— Նա դարձավ Սփանգլերին,— սպասեցի քո զանգին, սիրելիս,— ասաց նա,— դու ինձ ասացիր, որ ժամը հինգին զանգ կտաս, այդպես չէ՞։

— Օհ, այո,— ասաց Սփանգլերը։— Մոռացել եմ։ Այստեղ խոսակցության բռնվեցի Օգիի հետ։ Նա ուզում է ցրիչ դառնալ, և հենց նոր նրան խոստացա, որ երբ ժամանակը գա, կընդունենք աշխատանքի։

— Ուրեմն, շնորհակալություն, միստր Սփանգլեր։ Ես ձեզ նորից կհանդիպեմ,— ասաց Օգին։— Մնաս բարով, Յուլիսիս։

— Յուլիսի՞ս,— ասաց Դիանան Սփանգլերին,— ի՞նչ յուրահատուկ անուն։ Յուլիսի՞ս։ Յուլիսիսը Իթաքայում։ Սիրելիս, ես ընդամենը մի րոպե ժամանակ ունեմ։ Ճաշի գալու ես, չէ՞։ Պետք է գաս, հասկացա՞ր։

Սփանգլերը փորձեց պատասխանել, բայց երիտասարդ կինը կանչեց նրան։

— Ոչ,— ասաց նա,— դու խոստացար։ Այո, խոստացար։ Մայրիկն ու հայրիկը մեռնում են քեզ տեսնելու համար։ Ուղիղ ժամը յոթին։

— Մի րոպե սպասիր,— ասաց Սփանգլերը,— մի րոպե սպասիր։

— Սիրելիս,— ասաց Դիանան,— հո չես ուզում ինձ նորից հիասթափեցնել, չես ուզում, ճի՞շտ է։

— Աշխարհում ոչ մի բան քեզ հիասթափեցնել չի կարող,— ասաց Սփանգլերը,— այնպես որ՝ հանգիստ եղիր։ Ժամը ուղիղ յոթի՞ն։ Ի՞նչ ես ուզում ասել՝ ուղղակի ասա։ Ինչո՞ւ ես ինձ ընթրիքի հրավիրում։

— Որովհետև քեզ սիրում եմ, սիրելիս,— համբերատարությամբ ասաց երիտասարդ կինը, այնպես, կարծես Սփանգլերը երեխա լիներ,— ես քեզ սիրում եմ, սիրում եմ, լսո՞ւմ ես,— ասաց նա երջանիկ ծիծաղով։

— Դե, հանգստացիր,— ասաց հեռագրատան կառավարիչը։— Հանգստացիր...

— Բայց ես քեզ սիրում եմ, սիրելիս,— ասաց երիտասարդ կինը։

Սփանգլերը հոգոց հանեց։

— Իմ կյանքում ես երկու անգամ եմ ընթրիքի հրավիրվել, և երկուսին էլ ձանձրացել եմ,— ասաց նա։

— Մայրիկն ու հայրիկը քեզ դուր կգան,— ասաց Դիանան,— մենք հատուկ զգեստներ չենք հագնում, միայն երեկոյան զգեստներ։

— Ի՞նչ ես հասկանում երեկոյան զգեստ ասելով,— ասաց Սփանգլերը,— ես ցերեկն էլ, երեկոյան էլ նույն զգեստով եմ։

— Ժամը յոթին,— ասաց Դիանան։ Այդ պահին նա նկատեց Սփանգլերի սեղանի վրայի եփած ձուն։— Ահ, սիրելիս,— ասաց նա,— ի՞նչ է դա։

— Ձու է,— ասաց Սփանգլերը,— սովորական ձու։ Երշանկություն է բերում։

— Ի՞նչ լավ է,— ասաց Դիանան,— բայց սիրելիս, ես պետք է վազեմ։— Նա մոտեցավ հրաժեշտի համբույր տալու, բայց Սփանգլերը նրան մեղմորեն հեռու վանեց, ու աղջիկը գրասենյակից դուրս եկավ։

Միստր Գրոգանը ավարտեց հեռագրի մեքենագրությունը։ Սփանգլերը Յուլիսիսին տարավ ծերուկի մոտ։

— Վիլլի,— ասաց նա,— ես գնում եմ Կորբերտի մոտ մի բաժակ խմելու։ Ծանոթացիր, սա Յուլիսիս Մաքոլին է, Հոմերի փոքր եղբայրը։ Այսօր նա մեծ փորձություն է ձեռք բերել։ Ընկել է ինչ-որ թակարդի մեջ։ Յուլիսիս, սա միստր Վիլլի Գրոգանն է։

— Մենք արդեն հին ծանոթներ ենք,— ասաց միստր Գրոգանը,— նա դիտում էր իմ աշխատանքը։

Յուլիսիսը գլխով արեց։

— Մի բաժակ խմեմ ու անմիջապես հետ գամ,— ասաց Սփանգլերը։

Գլուխ 15

ԱՆԿՅՈՒՆԻ ԱՂՋԻԿԸ

Սփանգլերը շրջվեց, որ գնա, բայց կանգ առավ հեռագրային գործիքի ձայնից, այն ազդանշանից, որը հնչեց և անմիջապես նշանները սկսեցին տպագրվել ժապավենի վրա։ Սփանգլերը մոտեցավ գործիքին և սկսեց տպագրված նշանագրերը կարդալ։

— Իթաքա գինու ընկերությունից են կանչում,— ասաց նա Գրոգանին,— անտառի մեջ կորած այդ վայրից։ Եթե Հոմերը գա, թող սպասի, մինչև որ «Բնական չամիչ» ընկերությունից էլ կանչ լինի, ինչպես ամեն երեկո կանչում են։ Հոմերը արևմտյան ընկերությանը հոպթեց երկու անգամ։ Եթե կարողանա այսօր նորից հաղթել, այս ամիս շատ լավ գործ արած կլինենք։ Երեկ քանի՞ հեռագիր ստացանք նրանցից։

— Վաթսունյոթ,— ասաց Գրոգանը։

— Վաթսունութ հեռագրից վաթսունյոթը,— ասաց Սփանգլերը։— Առաջինը հասնող տղան ստանում է բոլոր հեռագրերը, բացի մեկից։ Երկրորդ հասնողը՝ միայն մեկը։ Լավ, ես գնամ մի բաժակ խմեմ։

Բայց այդ պահին մի ուրիշ ազդանշան տրվեց. կետ... կետ... գիծ... կետ... կետ... կետ... Երբ հեռագրատան վարիչը լսեց առաջին երկու կետերը, հասկացավ, որ «Բնական չամիչից» է, և որովհետև Հոմերը գրասենյակում չէր, բղավեց Գրոգանին։

— Ես կգնամ պատվերը բերելու, առաջինը այնտեղ ես պիտի հասնեմ։

Մինչ ազդանշանը կրկնվում էր երրորդ անգամ, Սփանգլերը վազելով, ինչպես ֆոտոբոլիստը դաշտում, արդեն հասել էր հաջորդ թաղամասի կեսին։ Դիմացի անկյունում, երեսուն յարդ հեռավորության վրա, կանգնել էր ամոթխած, տխուր տեսքով տասնութ կամ տասնինը տարեկան մի աղջիկ։ Սիրուն էր նա, հոգնած, լուռ և հրաշալի։ Նա ավտոբուսի էր սպասում՝ աշխատանքից տուն գնալու համար։ Թեև Սփանգլերը շտապում էր, բայց, միևնույն է, չէր կարող չնկատել միայնակ աղջկան, որը նրան թվաց, մենության մատնացում է աշխարհի վրա։ Առանց կանխամտածության, առանց կոտրատվելու, նա արագ հասավ աղջկան, մի պահ կանգ առավ և համբուրեց նրա այտը։ Հեռանալուց առաջ նա աղջկան ասաց միակ բանը, որ հնարավոր էր ասել այդ պահին։

— Դուք աշխարհի ամենասիրուն կինն եք։

Ու շարունակեց վազել։ Երբ «Բնական չամիչ» ընկերության սանդուղքով վեր էր բարձրանում, միանգամից թուլելով երեքական աստիճան, Արևմտյան ընկերության ցրիչը ուշացած, որովհետև առաքման քարտուղարը ազդանշանները անգիր չգիտեր ինչպես Սփանգլերը, նոր էր հեծանիվից իջնում շենքի առաջ։ Երբ Սփանգլերը արդեն գրասենյակ էր մտնում, Արևմտյան ընկերության ցրիչը սպասում էր վերելակի իջնելուն։

Կարծես դեռևս ցրիչ լիներ, Սփանգլերը մոտեցավ սեղանի առաջ նստած կնոջը.

— Փոսթալ թելեգրաֆ,— հայտարարեց նա։

— Թոմ,— ասաց ծեր կինը ուրախացած և զարմացած,— մի՞թե դու հիմա նորից ցրիչ ես։

— Ով ժամանակին ցրիչ է եղել, միշտ էլ ցրիչ կմնա,— ասաց Սփանգլերը, բոլորովին չշփոթվելով այս անիմաստ խոսքերից։ Նա ժպտաց ծեր կնոջը և ասաց։— Բայց ամենից շատ ես ցանկանում էի ձեզ տեսնել, տիկին Բրոքինգտոն։

Արևմտյան ընկերության ցրիչը գրասենյակ մտավ։

— Արևմտյան ընկերությունը,— հայտարարեց նա։

— Ցավում եմ, որ նորից պարտվեցիր, Հարի,— ասաց միսիս Բրոքինգտոնը և ցրիչին մի հեռագիր մեկնեց,— գուցե հաջորդ անգամ բախտդ բերի,— ասաց նա։

Արևմտյան ընկերության տղան նոր պարտությունից փոքր-ինչ շփոթված, թեև այս անգամ պարտվել էր ոչ թե ուրիշ ցրիչից, այլ Փոսթալ թելեգրաֆի վարիչից, վերցրեց հեռագիրը և ասաց.

— Բոլոր դեպքերում շնորհակալ եմ, տիկին, Բրոքինգտոն,— և գրասենյակից դուրս եկավ։

Ծեր կինը Սփանգլերին տվեց մի տրցակ հեռագիր։

— Այս բոլորը ձեզ, Թոմ,— ասաց նա,— հարյուր քսանվեցը գիշերային հեռագիր-նամակներ են, երկրի բոլոր ծայրերը ուղարկելու համար, բոլորն էլ կանխիկ վճարված։

— Հարյուր քսանի՞նը,— ասաց Սփանգլերը,— այդ նշանակում է, որ այս ամիս գործերս վատ չեն։ Նա կռացավ վանդակորմին և համբուրեց ծեր կնոջը։

— Դե, խելոք, Թոմ,— ասաց միսիս Բրոքինգտոնը։

— Մի ընդդիմացեք,— ասաց Սփանգլերը,— դուք չպետք է վատ զգաք։ Ես ձեզ համբուրել եմ ցանկացել դեռ այն օրվանից, երբ առաջին անգամ եկա այստեղ և ձեզ տեսա. հիշո՞ւմ եք։ Քսան տարի է անցել, և դուք ամեն տարի գնալով ավելի եք գեղեցկանում։

— Օ՜, ի՞նչ եք ասում, Թոմ,— ասաց ծեր կինը,— ծեր կնոջը ձեռ առնելը լավ չէ։

— Ծեր,— ասաց Սփանգլերը,— դուք ծեր չեք։

— Դու աղնիվ ես, Թոմ,— ասաց տիկին Բրոքինգտոնը,— այդպես են քո բոլոր ցրիչները։ Որտե՞ղ է այն նորեկը։

— Հոմե՞րը,— ասաց Սփանգլերը։— Ուզում եք ասել Հոմեր Մաքոլի՞ն։ Դուք նրան ամեն օր կտեսնեք, և միշտ առաջինը։ Այսօր ցերեկը մենք մի քիչ դանդաղեցրինք մի միջադեպի պատճառով, որ պատահել էր նրա փոքր եղբորը՝ Յուլիսիսին։ Նա ընկել էր ինչ-որ թակարդի մեջ՝

Քովինգտոնի խանութում։ Հոմերը ստիպված էր գնալ և նրան դուրս հանել այնտեղից։ Բայց դուք սրանից հետո նրան հաճախ կտեսնեք։— Նա լռեց և ժպտաց ծեր կնոջը։— Ցտեսություն, Էմիլի,— ասաց նա։

— Ի՞նչ լավ է, որ հիշում եք իմ անունը,— ասաց ծեր կինը։

Փողոցում Սփանգլերը թեթևություն զգաց։ Նա գոհ էր Հոմերից, որ Ցուլիսիսին դուրս էր հանել թակարդից, Գրոգանից՝ որ հակառակ թոշակի տարիքը վաղուց անցած լինելուն, իր գործը հրաշալի էր կատարում, Ցուլիսիսից, որը հափշտակվում էր հեռագրատան ամեն ինչով, Օգիից, որն ուզում էր արագ մեծանալ և ցրիչ դառնալ, և նույնիսկ Դիանա Սթիդից։ Բայց ամենից ավելի ուրախանում էր այն աղջկա մասին մտածելով, որ քիչ առաջ, փողոցի անկյունում կանգնած, ավտոբուսի էր սպասում։ Երբ հասավ փողոցի անկյունը, նա մի պահ կանգ առավ ու ինքն իրեն ասաց.

— Ճիշտ այստեղ էր սպասում։ Շատ հավանական է նրան այլևս չեմ տեսնի այնպես, ինչպես տեսա այսօր, կեսօրից հետո։

Նա սուլելով քայլեց փողոցն ի վար։ Երբ հասավ Կորբետի խորտկարան, դաշնամուրի ձայն լսեց։ Նվագում էին «Իմ միակ ուղածը դու ես» հին վալսը։ Նա առաջացավ դեպի դահլիճի պտտվող դուռը, մի րոպե ակամա դրեց, ապա ներս մտավ։ Կորբետը կանգնած էր բուֆետի առաջ։ Սփանգլերին նկատելով, նա անմիջապես գործի անցավ, բերեց նրա սովորական խմիչքը՝ շոտլանդական վիսկի և ջուր։

— Հելլո, Ռալֆ,— ասաց Սփանգլերը,— ինչպե՞ս են գործերը,— նա նայեց երաժշտություն լսող երեք զինվորներին։

— Ոչ լավ, ոչ վատ,— ասաց Կորբետը։— Զինվորներ են գալիս, որոնք վատնելու շատ ժամանակ ունեն, բայց ծախսելու՝ քիչ փող։ Նրանց մեկ դոլարի դիմաց ես երեքն եմ դնում, և երբ նրանց փողը վերջանում է և պատրաստվում են գնալու, փողը վերադարձնում եմ իրենց։ Ինչ արած։

— Կարո՞ղ ես այդքան շռայլություն թույլ տալ,— հարցրեց Սփանգլերը։

— Ոչ,— ասաց Կորբետը,— բայց ինչ արած։ Պատերազմից հետո գուցե դրա մի մասը վերադարձնեն։ Խորտկարանում աշխատելը պարզապես իմ բանը չէ։ Միշտ մնում եմ նույն երիտասարդ Կորբետը։— Նա մի րոպե լռեց՝ ինչ-որ մտահոգող մի բան հիշելով։

— Երեկ գիշեր, Թոմ,— ասաց նա,— ըմպելարանի առջև աշխատում էի, երբ ինքն իրեն մեծ բանի տեղ դնող մի տղա բղավեց վրաս. «Հեյ, հաստատելուխ, մի բաժակ էլ խմիչք բեր»։ Նա զինվոր չէր։ Ինչ-որ տեղացի էր, Իթաքայից։ Նայեցի շուրջս, ինձնից բացի ուրիշ սպասար-

կող չկար։ «Հաստագլո՞ւխ։ Դու ի՞նձ հետ ես այդպես խոսում»,— ասում եմ նրան։ «Հո ես ինձ հետ չեմ խոսում, հաստագլուխ»— պատասխանում է լակոտը։ Լավ, ի՞նչ պետք է անեի։ Չէի կարող նրան խփել, որովհետև բռնցքամարտիկ եմ եղել։ Գնացի մոտը և նրան այսպես բռնեցի։— Կորբետը մի ձեռքով բռնեց Սփանգլերի օձիքից, իսկ մյուս ձեռքը բարձր պահած, սպասեց մի պահ, որ ցասումն անցնի, հետո ասաց այն, ինչ ասել էր նախորդ գիշեր այն խմած մարդուն։

— Դու երիտասարդ Կորբետի հետ ես խոսում։ Եթե քեզ խփեմ, շունչդ կփչես, իսկ ես չեմ ուզում, որ որևէ մեկը մեռնի իմ խորտկարանում։ Հիմա կորիր այստեղից և այլևս չերևաս։ Քանի դեռ ապրում ես, էլ չհամարձակվես ոտքդ այստեղ դնել։ Ու երբ կորչես-գնաս, ուրախ եղիր, որ ողջ ես մնացել։

Կորբետը թողեց Սփանգլերի օձիքը։ Նա կատաղությունից դողում էր։

— Դրանից հետո ձեռքերս ամբողջ գիշեր դողում էին,— ասաց նա,— բայց երեկ գիշերվա դեպքը միակը չէ։ Համարյա ամեն գիշեր պատահում է։ Եվ ամեն անգամ ես ինձ ասում եմ. հերիք է, պետք է փակել սա ու հեռանալ։ Սկսում եմ վախենալ։ Վախենում եմ, որ մի գիշեր կկորցնեմ գլուխս և մեկին կսպանեմ։ Խորտկարան պահելը հեշտ գործ չէ։ Խորտկարանատերը պետք է մի քիչ կոշտ մարդ լինի, իսկ ես չափից դուրս լավ սիրտ ունեմ։

Հեռագրատան վարիչն ու մրցանակ շահած նախկին բռնցքամարտիկը մի հինգ րոպե էլ խոսեցին, որից հետո Սփանգլերը վերադարձավ գրասենյակ։ Երբ նա հեռանում էր խորտկարանից, երեք զինվորները սկսեցին դաշնամուրը ավելի բարձր նվագել։ Այժմ նվագում էին «Սպիտակ կոկոն» երգը։ Զինվորները կարդում էին նոտայի տակի բառերը և փորձում էին դաշնամուրի նվագակցությամբ երգել։ Սփանգլերը մի րոպե լսեց։ Նրանք այնքան լավ չէին երգում, բայց երգում էին մի զգացմունքով, որ բոլորովին վատը չէր։

Գլուխ 16

ՔԵԶ ՆՈՐԻՑ ՏՈՒՆ ԿՏԱՆԵՄ

Կալիֆոռնիայի Իթաքա քաղաքի հեռագրատան կառավարիչ Սփանգլերը գրասենյակ մտավ։ Առաքման սեղանի մոտ նա տեսավ երկու եղբայրներին, Հոմերին և Յուլիսիսին. ցրիչը հեռագիր էր ծալում և

ծրարների մեջ տեղավորելով, դասավորում, իսկ կրտսեր եղբայրը մեծ հիացմունքով դիտում էր նրան։ Ցրիչը դարձավ իր աջակցին.

— «Բնական չամիչ» ընկերության հեռագիրը կարողացա՞ք ստանալ, միստր Սփանգլերը,— հարցրեց նա։

— Այո, ստացա,— ասաց Սփանգլերը,— հարյուր քսանինը հեռագիր։— Նա հեռագրերը ցույց տվեց ցրիչին։

— Հարյուր քսանինը,— ասաց Հոմերը,— ինչպե՞ս եղավ, որ դուք առաջինը հասաք։

— Վազեցի,— ասաց Սփանգլերը։

— Եվ վազելով հաղթեցի՞ք Արևմտյան ընկերությանը,— հարցրեց Հոմերը։

— Անշուշտ,— ասաց Սփանգլերը։— Դա հասարակ բան է։ Ճանապարհին նույնիսկ կանգ առա գեղեցկությանն ու անմեղությանը հարգանքներս մատուցելու։

Հոմերը չհասկացավ, բայց Սփանգլերը շարունակեց.

— Ոչ, ոչ, չեմ բացատրի,— ասաց նա։— Դու Ցուլիսիսին տուն տար։

— Լավ, սըր,— ասաց Հոմերը,— մեզ կանչել են Գյուգենհեյմից։ Դա մեր ճանապարհի վրա է, այնպես որ ես Ցուլիսիսին հեծանիվով տուն կտանեմ, հետո կհանդիպեմ Գյուգենհեյմ և այդտեղից կգնամ Իթաքա Գինու ընկերություն, հետո Ֆոլի և անմիջապես կվերադառնամ։ Անհապաղ կվերադառնամ։

Ցրիչը դուրս եկավ գրասենյակից, և Սփանգլերը տեսավ, թե ինչպես է նա եղբորը զգուշությամբ նստեցնում հեծանիվի առջևը։ Ավագ եղբայրը իրեն գցեց հեծանիվի վրա և սկսեց քշել փողոցն ի վար։ Երբ նրանք քաղաքի կենտրոնից հեռացել էին, Ցուլիսիսը շուռ եկավ և նայեց եղբորը։ Այդ օրը առաջին անգամ նրա դեմքը պայծառացավ Մաքոլիների նշանավոր ժպիտով։

— Հոմե՞ր,— ասաց նա։

— Ի՞նչ ես ուզում,— հարցրեց Հոմերը։

— Ես կարող եմ երգել,— ասաց Ցուլիսիսը։

— Դա լավ է,— ասաց Հոմերը։

Ցուլիսիսը սկսեց երգել։ «Մենք պիտի երգենք մի երգ»։ Նա լռեց և նորից սկսեց։ «Մենք պիտի երգենք մի երգ...», բայց նորից լռեց և անմիջապես նորից վերսկսեց։ «Մենք պիտի երգենք մի երգ»։

— Դա երգ չէ, Ցուլիսիս,— ասաց Հոմերը,— դա երգի մի մասն է միայն։ Այժմ լսիր ինձ ու հետո ինձ հետ երգիր։— Ավագ եղբայրը սկսեց երգել, իսկ փոքր եղբայրը լսում էր.

Այլևս մի լար, մի լար, լեզի, այսօր մի լար,
Եկ մի երգ երգենք մեր Քենթբքիի տան պատվին,
Եկ այդ հեռավոր տան երգը երգենք։

— Նորից երգիր, Հոմեր,— խնդրեց Ցուլիսիսը։

— Օ քեյ,— ասաց Հոմերը և սկսեց նորից երգել, բայց այս անգամ փոքր եղբայրը երգեց մեծի հետ և մինչ նրանք երգում էին, Ցուլիսիսը նորից տեսավ գնացքը, նեգրին, որը հենվել էր վագոնի եզրին ու ժրպտալով ձեռքով էր անում։ Դա ամենահրաշալի բաներից մեկն էր, որ երբևէ պատահել էր Ցուլիսիս Մաքոլիին՝ աշխարհում ապրած նրա չորս տարվա կյանքի ընթացքում։ Նա ձեռքով արեց այդ մարդուն, և մարդը պատասխանեց նրա ողջույնին, ոչ թե մի անգամ, այլ բազմաթիվ անգամներ։ Նա այդ կհիշի իր ողջ կյանքում։

Մաքոլիների տան առջև Հոմերը իջավ հեծանիվից և Ցուլիսիսին զգուշությամբ ցած բերեց։ Նրանք մի պահ կանգնեցին, ողջունեցին իրենց մոր ու քրոջ տավիղն ու դաշնամուրը և հարևանուհի Մերի Արենայի երգը։

— Դե լավ, Ցուլիսիս,— ասաց Հոմերը,— այժմ դու տանն ես։ Ներս գնա։ Մայրիկն այդտեղ է, ինչպես նաև Բեսն ու Մերին։ Ես պետք է աշխատանքս շարունակեմ։

— Աշխատանքդ շարունակե՞ս,— զարմացավ Ցուլիսիսը։

— Այո,— ասաց Հոմերը,— բայց գիշերը տանը կլինեմ։ Ներս գնա, Ցուլիսիս։

Փոքր եղբայրը սկսեց սանդուղքով բարձրանալ։ Երբ հասավ դռանը, մեծ եղբայրը նստեց հեծանիվը և փողոցն ի վար քշեց։

Գլուխ 17

ԵՐԵՔ ԶԻՆՎՈՐ

Երբ Սթիդների ընտանիքը և նրանց հյուրերը, ներառյալ Թոմաս Սփանգլերը, նստած էին ընթրիքի, Իթաքայում ուժեղ անձրև էր գալիս։ Բես Մաքոլին և Մերի Արենան, անձրևանոցներ և կրկնակոշիկներ հագած, Հոմերի ճաշը հեռագրատուն էին տանում։ Դեղատան առջևով անցնելիս, դռան մոտ կանգնած մի երիտասարդ նրանց աչքով արեց։

— Է՛յ, սիրուն,— ասաց նա Բեսին,— ինչպե՞ս ես։

Բեսը, սեղմվելով Մերիին, ուշադրություն չդարձրեց երիտասարդի ասածին։ Նրանց դիմացից գալիս էին երեք երիտասարդ զինվորներ,

որոնք փողոցում երջանկությունից գժություններ էին անում, նոր-նոր խաղեր հնարում։ Նրանք երջանիկ էին, որովհետև այդ գիշեր ազատ էին, որովհետև իրենց շուրջը ազնիվ և ծիծաղելի աշխարհն էր՝ իր հավիտենական կատակերգությամբ, երջանիկ էին նույնիսկ տեղացող անձրևի պատճառով։ Նրանք իրար հրմշտկում էին և ծաղրում, անդուսպ ծիծաղից պայթում, իրար մականուններ կպցնում. Հաստլիկ, Տեխաս և Ջի։ Երբ երեք տղաները տեսան Մերիին և Բեսին, հարգալիր կանգ առան և մեկը մյուսի ետևից գլուխները ցած խոնարհեցին։ Աղջիկներին այդ բանը դուր եկավ, բայց նրանք չգիտեին, թե ինչ է հարկավոր անել, ինչ վերաբերմունք է պետք ցույց տալ։

— Նրանք տնից և ընտանիքից հեռու զինվորներ են, Բես,— շշնջաց Մերին։

— Արի կանգ առնենք,— ասաց Բեսը։

Աղջիկները կանգ առան երեք զինվորների առջև։

Նա, որ Հաստլիկ էր կոչվում, որպես խմբի պաշտոնական ներկայացուցիչ, զինվորների դեսպանը ամերիկացի աղջիկների մոտ, առաջ եկավ։

— Լեդիներ,— ասաց նա,— մենք՝ դեմոկրատական մեծ բանակի մարտիկներս, ձեր հլու ծառաները, մենք, զինվորներս, որ այսօր այստեղ ենք և հույս ունենք, որ այստեղ կլինենք նաև վաղը, շնորհակալ ենք ձեր գեղեցիկ դեմքերի համար, ինչպես պարզ, այնպես էլ այս անձրևոտ եղանակին։ Թույլ տվեք ներկայացնել ձեզ իմ ընկերներին և ձեր հավատարիմ երկրպագուներին։ Սա Տեխասն է, Նյու Ջերսիից։ Այս մեկը Ջին է՝ Տեխասից։ Իսկ ես Հաստլիկն եմ՝ քաղցի աշխարհից։ Սակայն այժմ, ամեն ինչից ավելի, ես զգում եմ ամերիկացի գեղեցիկ աղջիկների ընկերակցության քաղց։ Ի՞նչ կասեք այս առթիվ։

— Մենք կինո ենք գնում,— ասաց Բեսը։

— Կինո՞,— բացականչեց Հաստլիկը ողբերգական ձայնով,— արդ, կարո՞ղ ենք մենք՝ զինվորներս, որ այսօր այստեղ ենք, իսկ վաղը գուցե մեկնած կլինենք այստեղից, ընկերակցել ձեզ՝ ամերիկացի աղջիկներիդ։ Այս գիշերն այս գիշեր է, իսկ վաղը՝ վաղն է, բայց վաղը մենք՝ պետք է վերադառնանք մեր զորանոցները, պետք է վերադառնանք պատերազմի զզվելի, բայց անհրաժեշտ ու սուրբ գործին՝ ոչնչացնելու համար մարդու մեջ այն մանրէն, որը ձգտում է կործանել մարդու ազատ ոգին։ Այս գիշեր մենք ձեր եղբայրներն ենք՝ հեռու քշված մեր տաք անկյուններից ու տխուր։ Այո, թեև երջանիկ ենք և հպարտ, բայց տխուր ենք, որովհետև Իթաքան մեր հայրենի հողը չէ։ Ամերիկյան զինվորի այս զգեստի մեջ եմ մտել Չիկագո վայրագ քաղաքի խուլ փողոցներից,

Իլինոյսի այդ հին երկրից։ Այս գիշեր հիշողությամբ եմ տարել ինձ դեպի այդ քաղաքն ու այդ ժողովուրդը, և իմ բարի եղբայրներից յուրաքանչյուրին նույնպես տարել իրենց հարազատ վայրերը։ Բարի սրտով ընդունեցեք մեր համեստ խնդրանքը, որովհետև մենք բոլորս մարդկային նույն ընտանիքից ենք, և եթե պատերազմը չլիներ, մենք իրար երբեք չէինք հանդիպի։ Այս պահը կանխորոշված էր բոլոր դարերի կողմից։— Զինվորը, որ Հաստլիկ էր կոչվում, խոնարհվեց, հետո ուղիղ կանգնելով, ասաց,— Ի՞նչ է ձեր որոշումը։

— Նա խե՞նթ է,— շշնջաց Մերին։

— Ոչ,— ասաց Բեսը,— նա պարզապես տխուր է։ Արի նրանց հետ կինո գնանք։

— Շատ լավ, Բես,— ասաց Մերին,— բայց դու ասա նրանց։ Ես չեմ կարող։

Բեսը դարձավ զինվորին.

— Շատ լավ,— ասաց նա։

— Շնորհակալություն, լեդիներ,— ասաց Հաստլիկ կոչված զինվորը։— Շնորհակալություն։— Նա թեև առաջարկեց Բեսին։— Ուրեմն գնա՞նք,— ասաց նա։

— Նախ ես պետք է եղբորս ընթրիքը տանեմ,— ասաց Բեսը,— նա հեռագրատանն է աշխատում։ Մի րոպե էլ չի տևի։

— Հեռագրատո՞ն,— ասաց Հաստլիկ կոչվող զինվորը,— ուրեմն ես էլ մի հեռագիր կուղարկեմ,— նա դարձավ մյուսներին,— դու ի՞նչ կասես, Տեխաս։

— Ի՞նչ արժե Նյու Ջերսի հեռագիր ուղարկելը,— հարցրեց Տեխասը։

— Ավելի քիչ, քան կգնահատեն ստացողները,— ասաց Հաստլիկը։ Նա դարձավ մյուս զինվորին։— Իսկ դո՞ւ, Ջի։

— Այո,— ասաց Ջի կոչվող զինվորը,— կարծեմ լավ կլինի հեռագիր ուղարկել մայրիկին, Ջոյին և Քեթիին։ Դա իմ աղջիկն է,— դարձավ նա Բեսին։

— Աշխարհի յուրաքանչյուր աղջիկ իմ աղջիկն է,— ասաց Հաստլիկը,— և քանի որ ես չեմ կարող հեռագիր ուղարկել նրանցից յուրաքանչյուրին, կուղարկեմ միայն մեկին։ Այդ մեկ հեռագրի մեջ ես միլիոնավոր հեռագրեր կուղարկեմ։

Մեր հեռագրիչ Վիլլի Դրոգանը մենակ էր գրասենյակում, երբ երկու դեռատի աղջիկները և երեք զինվորները ներս մտան։

Մերունին կանգնեց սեղանի եռև։

— Ես Հոմերի քույր Բեսն եմ,— ասաց Բեսը։— Ես նրա ընթրիքն եմ բերել։— Նա ճաշը դրեց սեղանին։

— Ինչպե՞ս եք, միսս Մաքոլի,— ասաց Գրոգանը։— Շուտով Հոմերը կգա։ Ես ճաշը կհանձնեմ նրան։

— Իսկ այս տղաներն ուզում են հեռագիր ուղարկել,— ասաց Բեսը։

— Շատ լավ, երիտասարդներ,— ասաց Գրոգանը,— ահա ձեզ հեռագրի բլանկներ և մատիտներ։

— Ի՞նչ արժե Ջերսի Սիթի հեռագիր ուղարկելը,— ասաց Տեխասը։

— Քսանհինգ բառը հիսուն սենթ,— ասաց Գրոգանը,— գումարած մի փոքր հարկ։ Բայց հասցեն և ստորագրությունը մի հաշվեք։ Հեռագիրը տեղ կհասնի վաղ առավոտ։

— Հիսուն սե՞նթ,— ասաց Տեխասը,— դա այնքան էլ սարսափելի չէ,— նա սկսեց հեռագիրը գրել։

— Իսկ ի՞նչ արժե Սան Անտոնիոյի համար հեռագիրը,— ասաց Ջոն։

— Ջերսի Սիթիի արժեքի կեսը,— ասաց Գրոգանը,— Սան Անտոնիոն Իթաքային ավելի մոտ է, քան Ջերսի Սիթին։

Հաստլիկ կոչվող զինվորը հեռագիրը գրելուց հետո մեկնեց ծերունուն։ Գրոգանը կարդաց այն՝ բառերը հաշվելով.

«Էմմա Դանա,
Չիկագոյի Համալսարան,
Չիկագո, Իլինոյս

Սիրելիս, քեզ սիրում եմ, քեզ կարոտում եմ, միշտ քո մասին եմ մտածում, շարունակիր գրել։ Շնորհակալ եմ սվիտրի համար։ Այժմ ես փսկական, գործնական քաղաքատնտեսություն եմ սովորում։ Շուտով ռազմաճակատ կմեկնենք։ Մի մոռացիր կիրակի օրը եկեղեցի գնալ և աղոթել մեզ համար։ Ես երջանիկ եմ։ Սիրում եմ քեզ։

ՆՈՐՄԱՆ»։

Այնուհետև իր հեռագիրը տվեց Տեխաս կոչվող զինվորը։

«Տիկին Էդիթ Անթոնի
1702½ Վիլմինգտոն փողոց
Ջերսի Սիթի, Նյու Ջերսի

Սիրելի մայրիկ։ Ինչպե՞ս ես։ Ես հրաշալի եմ։ Ստացա նամակդ և լոր մրգերը։ Շնորհակալություն։ Ոչ մի բանի մասին մի մտածիր։ Ցտեսություն։ Սիրով՝

Բեռնար»

Հետո, Զի կոչվող զինվորը ծերունի հեռագրողին մեկնեց իր հեռագիրը։

«Տիկին Հարվեյ Գիլֆորդ
211 Սանդիֆորդ բուլվար
Սան Անտոնիո, Տեխաս

Բարև, մայրիկ։ Պարզապես ուզում եմ ողջունել քեզ արևոտ Կալիֆոռնիայի Իթաքա քաղաքից։ Միայն թե անձրև է գալիս։ Հա, հա։ Բարևներ հաղորդիր բոլորին։ Ասա Ջոյին, որ կարող է իմ հրացանն ու փամփուշտները օգտագործել։ Մի մոռանա գրել։

Քվենտին»։

Զինվորներն ու աղջիկները հեռացան գրասենյակից, իսկ միստր Գրոգանը գնաց իր սեղանի մոտ՝ հեռագրերն ուղարկելու։

Երբ երեք զինվորներն ու ամերիկացի երկու աղջիկները «Կինեմա» կինոթատրոնի կենտրոնական մուտքից ներս մտան, էկրանի վրա երևաց Անգլիայի պրեմիեր-մինիստր Ուինսթոն Չերչիլը, որը ելույթ էր ունենում Կանադայի պառլամենտի առաջ, մեր թվարկության 1942 թվականին։ Մինչ երիտասարդները նստում էին, միստր Չերչիլը իրար ետևից երեք բան ասաց, որը մեծ ուրախություն պատճառեց Կանադայի պառլամենտի անդամներին և Իթաքայի «Կինեմա» կինոթատրոնի հանդիսատեսներին։ Հաստլիկ կոչվող զինվորը թեքվեց դեպի Բես Մաքլին։

— Ահա,— ասաց նա,— մեր ժամանակի ամենամեծ մարդկանցից մեկը և միևնույն ժամանակ՝ մեծ ամերիկացի։

— Ես կարծում էի, որ Չերչիլը անգլիացի է,— նկատեց Զի կոչվող զինվորը։

— Անշուշտ,— ասաց Հաստլիկը,— բայց նաև ամերիկացի է։ Այսուհետև աշխարհի յուրաքանչյուր նշանավոր մարդուն մենք պետք է ամերիկացի համարենք։— Նա մի փոքր մոտեցավ մյուս կողմի աղջիկան՝ Մերի Արենային։— Շատ շնորհակալություն, որ թույլ տվեցիք ձեզ հետ կինո գալ,— ասաց նա։— Մարդ իրեն լավ է զգում, երբ կողքին աղջիկներ կան։ Նրանք ավելի լավ են բուրում, քան զինվորները։

— Միևնույն է, մենք կինո էինք գնում,— ասաց Մերին։

Այնուհետև էկրանի վրա երևաց Ֆրանկլին Դելանո Ռուզվելտ կոչվող մարդը, Միացյալ Նահանգների պրեզիդենտը, որը Հայդ Պարկի իր բնակարանից ռադիոելույթ էր ունենում ազգի առաջ։ Նա խոսում էր իրեն հատուկ լուրջ և հումորով համեմված ոճով։ Հինգ երիտասարդները

ուշադիր լսեցին նրան, և երբ ճառն ավարտվեց, ամբողջ սրահը ծափահարեց։

— Ահա այդ մեծերից ամենամեծը,— ասաց Զի կոչվող զինվորը։

Այդ պահին էկրանի վրա երևաց Ամերիկայի դրոշը, ու հանդիսատեսների մի զգալի մասը սկսեց ծափահարել։

— Եվ ահա,— ասաց Տեխաս կոչվող զինվորը,— աշխարհի ամենամեծ դրոշը։

— Զարմանալի բան է,— ասաց Հաստլիկ կոչվող զինվորը Բեսին,— մարդ սկսում է ավելի շատ սիրել հայրենիքը, երբ այն վտանգի մեջ է։ Ուրիշ ժամանակ հայրենիքը շատ սովորական է թվում, ինչպես ընտանիքը։

— Իմ կոկորդը լցվում է ամեն անգամ, երբ տեսնում եմ այդ դրոշակը,— ասաց Բեսը։— Առաջ այն ինձ մտածել էր տալիս Վաշինգտոնի և Լինքոլնի մասին, իսկ այժմ մտածել է տալիս եղբորս՝ Մարկուսի մասին։ Նա նույնպես զինվոր է։

— Ուրեմն դու բանակում զինվոր եղբա՞յր ունես,— ասաց Հաստլիկը։

— Այո,— ասաց Բեսը,— վերջին անգամ, երբ նրանից լուր ստացանք, նա գտնվում էր ինչ-որ տեղ՝ Հյուսիսային Կարոլինայում։

— Ինձ թվում է,— ասաց Հաստլիկը,— որ դրոշակը յուրաքանչյուր մարդուն հիշեցնում է այն, ինչը նրա համար ամենամեծն է և ամենաթանկը։ Դրոշակը ինձ հիշեցնում է Չիկագոն, իսկ Չիկագոն ինձ համար ամեն ինչ է, որ իր մեջ ունի և լավ, և վատ բաները։ Օրինակ, իմ ընտանիքը, իմ սիրած աղջիկը՝ դրանք լավ բաներն են, իսկ խուլ, կեղտոտ ետնախորշերն ու քաղաքական խարդավանքները՝ դրանք վատ բաներ են, բայց ես այդ բոլորը սիրում եմ։ Մի օր մենք կազատվենք և ետնախորշերից, և՛ քաղաքականությունից։

— Իմ կարծիքով Իթաքայում ետնախորշեր չկան,— ասաց Բենը,— պարզապես աղքատ մարդիկ են։ Մենք կարծես ինչ-որ քաղաքային կառավարություն ունենք, բայց չեմ կարծում, որ նա այնքան է զբաղվում քաղաքականությամբ, որ արժե դրա մասին խոսել։ Համենայն դեպս, մեր ընտանիքը նման բաներով չի զբաղվում։ Մենք երաժշտություն ենք սիրում։ Ես գրազ կգամ, որ հենց հիմա իմ Մարկուս եղբայրը մի ինչ-որ տեղ ակորդեոն է նվագում։

Այդ պահին նրա Մարկուս եղբայրը գտնվում էր Հյուսիսային Կարոլինայի փոքրիկ քաղաքներից մեկի՝ «Սուզվող սավառնակ» կոչվող գինետանը։ Նրա հետ էին Թոբի Ջորջ անունով ընկերը և ուրիշ երեք զինվորներ։ Մարկուսը նվագում էր «Մի երազ» երգը, իսկ Թոբին երգում էր

Դահլիճում երկու զինվոր պարում էին երկու աղջիկների հետ, որ նման էին Մերիին և Բեսին։ Երգից հետո Թոբին նստեց Մարկուսի մոտ և խնդրեց, որ մի քիչ էլ պատմի Իթաքայի և Մաքոլիների ընտանիքի մասին։

Այն ժամանակ, երբ Մարկուսը սկսեց Թոբի Ջորջին պատմել Իթաքայի մասին, Թոմաս Սփանգլերն ու Դիանա Սթիդը մտան «Կինեմա» կինոթատրոնի դահլիճը։ Կինոնկարը սկսվեց։ Երբ նրանք նստած էին, էկրանը նկարների փոխարեն լցվեց բառերով, որ նշում էին կինոնկարի անվանումը և այն մարդկանց անունները, որ մասնակցել էին կինոնկարի ստեղծմանը։ Բազմաթիվ բառեր հարգանքի տուրք տվեցին բազմաթիվ մարդկանց աշխատանքին։ Դրան ուղեկցում էր հանդիսավոր, բայց անտեղի մի երաժշտություն, որը հատուկ ստեղծված էր այդ առթիվ։

Սփանգլերն ու Դիանան էկրանին շատ մոտ նստեցին, երրորդ կարգում, Բեսից, Մերիից և երեք զինվորներից տասը կարգ առաջ։ Նրանց աթոռները շարքի կենտրոնում էին. կողքի աթոռները զբաղեցնում էին փոքր երեխաներ։ Էկրանի վրա երևաց Հիվանդանոցի սրահը, որի հատակը ծածկված էր նոր լինոլիումով։ Սրահի ծայրում դրված բարձրախոսից հնչեց մի մաղձոտ բուժքրոջ խռպոտ ձայն, որի խոսքը խիստ շեշտված էր։

— Դոկտոր Կավանա՛կ,— բղավեց նա,— շտապ վիրաբուժության բաժանմունք։ Դոկտոր Կավանա՛կ։

Թոմաս Սփանգլերը հենց որ այդ ձայնը լսեց, վեր կացավ։ Նա մի քանի բաժակ խմել էր, և այդ երեկո, որ բավական հաճելի էր անցել նրա համար, կոչված էր կարևոր դեր խաղալ նրա կյանքում։ Այդ օրը նա բավականին մտատանջություններ էր ունեցել, բայց այդ բոլորն արդեն անցել էին։ Այնպես որ, ոչ մի պատճառ չկար, որ նա իրեն պահեր այնպես, ինչպես պահում էին իր պատանի հարևանները։

— Օ՜ֆ,— ասաց նա։— Սխալ տեղ ենք ընկել,— նա բռնեց Դիանայի ձեռքը և ասաց,— գնանք։

— Բայց, սիրելիս, ֆիլմը դեռ չի ավարտվել,— շշնջաց երիտասարդ կինը։

Սփանգլերը նրան քաշեց։

— Ինձ համար ավարտվել է,— ասաց նա։— Արի։— Նրանք անցան մի փոքրիկ տղայի մոտով, որը էկրանին էր նայում մեծ հափշտակությամբ։

— Դու դրախտ կգնաս,— ասաց Սփանգլերը տղային, հետո դարձավ Դիանային,— դե արի գնանք, մի կանգնիր տղայի առաջ։

— Բայց, սիրելիս, ֆիլմը նոր է սկսվում,— ասաց Դիանան։

Տղան խոսեց Սփանգլերի հետ։

— Դուք ի՞նչ ասացիք, միստր,— հարցրեց նա։

— Դրախտ, դրախտ,— ասաց Սփանգլերը,— ասում եմ, որ դու դրախտ պիտի գնաս։

Երեխան վստահ չէր, թե հասկացավ Սփանգլերին։

— Ժամը քանի՞ն է,— հարցրեց նա։

— Չգիտեմ,— պատասխանեց Սփանգլերը,— բայց դեռ շուտ է։

— Անշուշտ, սըր,— համաձայնեց տղան։

Սփանգլերն ու երիտասարդ կինը անցնում էին դահլիճով։

— Գնանք Կորբետի մոտ,— ասաց Սփանգլերը։— Մի քանի բաժակ կխմենք, դաշնամուր կլսենք և հետո դու կարող ես տուն գնալ։— Էկրանին նայելով, նա սկսեց դուրս գալ դահլիճից։

— Դոկտոր Կավանակին տես,— ասաց նա։— Ձեռքի այդ զույգ աքցաններով նա հիմա մի բան կանի։ Հավանաբար սխալմամբ առողջ ատամը կհանի, նայիր նրան։

Երբ հասան կինոթատրոնի առաջամասը, երիտասարդ կինը այլևս չէր մտածում կինոյից այդքան շուտ դուրս գալու մասին։

— Դու ինձ սիրում ես, չէ՞,— ասաց նա Սփանգլերին։— Այո, սիրում ես։ Ինքդ գիտես, որ սիրում ես։

— Սիրո՞ւմ,— Սփանգլերը համարյա բղավեց։— Հապա ինչպես, չէ՞ որ քեզ կինո տարա։

Նրանք փողոց դուրս եկան և ուղղվեցին դեպի Կորբետի գինետունը։ Տեղացող անձրևից խուսափելու համար նրանք քայլում էին պատերի տակով։

Գլուխ 18

ՄԻՍՏՐ ԳՐՈԳԱՆԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Այն պահին, երբ Սփանգլերն ու Դիանան անձրևի տակ վազում էին դեպի Կորբետի խորտկարանը, Հոմեր Մաքոլին, մինչև ոսկորները թրջված, հեծանիվը կանգնեցրեց հեռագրատան առաջ և ներս մտավ։ Նա նայեց առաքման սեղանին։ Ոչ մի տեղից պատվեր չկար, միայն մի հեռագիր կար հանձնելու։

Միստր Գրոգանն ավարտեց հեռագրի մեքենագրությունը ու վերջ կացավ։

— Քո քույր Բեսը ճաշ բերեց,— ասաց նա։

— Ճի՞շտ,— ասաց Հոմերը։— Էհ, դրա կարիքը չկար։ Ես ուզում էի մեզ համար երկու կարկանդակ գնել։— Նա վերցրեց կապոցը և ասաց։ — Բավական էլ շատ է։ Միստր Գրոգան, չե՞ք ցանկանա ինձ հետ ընթրել։

— Շնորհակալ եմ,— պատասխանեց ծերունի հեռագրիչը,— քաղցած չեմ։

— Գուցե թե սկսեք ուտել,— ասաց Հոմերը,— և ձեր ախորժակը բացվի, միստր Գրոգան։

— Ոչ,— պատասխանեց ծերունին,— շատ շնորհակալ եմ։ Բայց դու չուր ես կտրել։ Լսիր, մենք անձրևանոցներ ունենք։

— Գիտեմ,— ասաց Հոմերը,— ես անձրևի տակ ընկա։— Հոմերը մի սանդվիչ կծեց։— Միայն այս մեկը կուտեմ,— ասաց նա,— հետո հեռագիրը կտանեմ։— Նա մի պահ ծամեց, հետո նայեց ծեր հեռագրիչին։

— Իսկ ի՞նչ հեռագիր է,— ասաց նա։

Միստր Գրոգանը չպատասխանեց։ Հոմերը հասկացավ, որ մահվան գույժ է։ Նա դադարեց ծամելուց և հացը չոր-չոր կուլ տվեց։

— Կուզենայի այդպիսի հեռագիր չհանձնել,— ասաց ցրիչը հեռագրիչին։

— Գիտեմ,— պատասխանեց միստր Գրոգանը։ Նա լռեց, իսկ ցրիչը ձեռքին պահում էր կիսատ թողած սանդվիչը։

— Շարունակիր, տղա,— ասաց միստր Գրոգանը,— ճաշդ կեր։ Քույրդ մի ուրիշ աղջկա հետ էր, մի շատ գեղեցիկ աղջկա։

— Օ, դա Մերին կլինի,— ասաց Հոմերը,— նա մեր հարևանուհին է, բանակում գտնվող իմ եղբայր Մարկուսի նշանածը։ Պատերազմից հետո պիտի ամուսնանան։

— Քո քույրը և Մերին երեք զինվորների հետ էին, որոնք հեռագրեր ուղարկեցին,— ասաց ծերունի հեռագրիչը։

— Ճի՞շտ,— ասաց Հոմերը,— որտե՞ղ են հեռագրերը։

Միստր Գրոգանը ցույց տվեց երկաթե ձողիկը, որի վրա շարված էին հեռագրերը։ Հոմերը վերցրեց և մեկ առ մեկ կարդաց, ապա նայեց ծեր հեռագրիչին։

— Միստր Գրոգան,— ասաց ցրիչը,— երբ որևէ մեկը պատերազմում մեռնում է, կարևոր չէ, թե ով՝ ծանոթ, թե անծանոթ, դրանից աշխարհում որևէ բան բարելավվո՞ւմ է։ Սա միայն հիթաքան է։ Սա միայն մի փոքրիկ քաղաք է Ամերիկայում։ Իսկ այսպիսի հեռագրեր ամեն տեղ ստանում են, հարուստ թե աղքատ, յուրաքանչյուր տուն։ Ի՞նչ կասեք այդ մարդկանց մասին։ Գուցե նրանք իզուր են մահանում։

Ծեր հեռագրիչը պատասխանելուց առաջ մի պահ սպասեց և մտա-

ծելով, որ միևնույն է, չի կարող ճշգրիտ պատասխան տալ, մոտեցավ իր սեղանին և դարակից հանեց շիշը։ Նա մի մեծ կում խմեց և նայեց ցրիչին։

— Ես բավական երկար եմ ապրել աշխարհում,— ասաց նա,— զուցե շատ երկար։ Թույլ տուր ասել քեզ, որ պատերազմում կամ խաղաղ ժամանակ ոչ մի բան իզուր չի կատարվում, ուր մնաց մեռնելը։— Ներունին փոքր-ինչ լռեց, որպեսզի մի կում ևս խմեր, ապա շարունակեց.— Մարդկությունը մի ամբողջություն է, ինչպես դու,— ասաց նա,— ինչպես քո մեջ լավի կողքին կա վատը, այնպես էլ մարդկանց մեջ կա և լավը, և վատը։ Դրանք բոլորի մեջ կան անբաժան վիճակում, բոլոր ազգերի միլիոնավոր մարդկանց մեջ։ Այո, մեր ազգի մեջ նույնպես։ Եվ ինչպես որ մարդու խիզճը պայքարում է իր բնավորության հակասությունների դեմ, այնպես էլ այդ հակասությունները պայքարում են ապրող ամեն մի մարմնի մեջ, մարդկային հասարակության մեջ, ամբողջ աշխարհի մեջ։ Դրանից էլ առաջանում են պատերազմները։ Մարդկությունը ձգտում է ազատվել հիվանդությունից։ Բայց դու մի մտահոգվիր, որովհետև լավը անպարտելի է, իսկ վատը, ի վերջո, պարտվում է և փախուստի դիմում։ Հիվանդ մարմինն ու հիվանդ հոգին առողջանում են։ Նրանք կարող են նորից հիվանդանալ, բայց նրանք միշտ պիտի ապաքինվեն, իսկ յուրաքանչյուր նոր հիվանդությունից ու տարաբինությունից մարմինն ու հոգին ամրապնդվում են և ի վերջո այնքան ուժեղ կդառնան, որ զերծ կլինեն կեղտերից, կլինեն ավելի նուրբ, ավելի ազնիվ, ավելի գեղեցիկ և վարակից հեռու։ Աշխարհում ապրող յուրաքանչյուր մարդ, արդար է նա թե անարդար, այդ նպատակին է ձգտում։— Ներունը մի փոքր հոգնած էր։— Նույնիսկ գողը և մարդասպանը ձգտում են հասնել այդ բանին,— հառաչեց նա։— Ոչ ոք իզուր չի մեռնում։ Մարդիկ մեռնում են՝ ձգտելով դրախտի, տենչալով անմահություն, տենչալով ճշմարտություն ու արդարություն։ Կգա օրը, երբ բոլոր մարդիկ, մենք բոլորս, մեզնից ամենահետինն անգամ, կհասանեն վերջնական օթևանի, կհանգստանան, կսփոփվեն, կհասնեն անմահության, շարությամբ լեցուն այս աշխարհը կդառնա բարության մի աշխարհ։

Ներունին ավելի խոր հառաչեց։ Նա մի պահ լռեց, ապա բաճկոնի գրպանից մի թղթի կտոր հանեց և մեկնեց ցրիչին։

— Խնդրում եմ, նորից դեղատուն գնա,— ասաց նա։

— Իսկույն, սըր,— ասաց Հոմերը և իրեն գրասենյակից դուրս շպրտեց։

Վիլյամ Գրոգանը հեռագրատանը մենակ մնաց։ Նա շուրջը նայեց գորովանքի տարօրինակ հայացքով, ինչ-որ ցասումով ու սիրով։ Դրժ-

վարությամբ բարձրացնելով ձեռքը, նա բռնեց սիրտը, կարծես համբերությամբ սպասելիս լիներ ուժեղ մի նոպայի, որը այլևս չէր կարող զարմացնել նրան։ Նա գնաց դեպի իր աթոռը և նստեց սարսափելի ինքնազսպումով, մինչև որ նոպան սկսեց մեղմանալ։

Ցրիչը վերադարձավ դեղատնից և հեռագրիչին տվեց փոքրիկ տուփը։

— Ջո՞ւր,— ասաց ծերուկը։

Հոմերը լիքը լցրեց թղթե բաժակը և տվեց ծերուկին, որը փոքրիկ տուփից երեք դեղահատ հանեց, դրեց բերանը և վրայից ջուր խմեց։

— Շնորհակալ եմ,— ասաց նա,— շնորհակալ եմ, տղաս։

— Ջարժե, սըր,— ասաց Հոմերը։

Նա մի պահ նայեց ծերունուն և վստահ լինելով, որ նա իրեն լավ է զգում, գնաց դեպի առաքման սեղանը, վերցրեց մահվան հեռագիրը։ Մի փոքր կանգնեց, նայեց հեռագրին, հետո բացեց ծրարը, որ հեռագիրը կարդա։ Ապա հեռագիրը դրեց նոր ծրարի մեջ, կնքեց և տեղացող անձրևի տակ գրասենյակից դուրս եկավ։ Ներ հեռագրիչը վեր կացավ և մինչև փողոց հետևեց տղային։ Նա կանգնեց մայթին և դիտեց տղայի պայքարը քամու և անձրևի դեմ։ Գրասենյակի ներսում հեռագրատուփն սկսեց տկտկալ, բայց ծերուկը չլսեց։ Հեռախոսը զնգաց, բայց ծերուկը այդ էլ չլսեց։ Նա այն ժամանակ միայն շրջվեց, և գրասենյակ մտավ, երբ հեռախոսն արդեն յոթ անգամ զանգ էր տվել։

Գլուխ 19

ՄԱՅՐԻԿԻՆ՝ ՍԻՐՈՎ

Տասնհինգ րոպե հետո Հոմեր Մաքոլին հեծանիվից իջավ մի մեծ, գեղեցիկ հին տան առջև։ Այդ տանը ինչ-որ տոնախմբություն էր։ Լուսամուտներից երևում էին պարող երիտասարդ զույգեր։ Նրը տեսավ, որ այդ հարկի տակ երջանկություն է տիրում, տղան վատ զգաց։ Նա ուղղվեց դեպի դուռը և, մի պահ կանգնելով, ունկնդրեց ներսից եկող երաժշտությունը։ Նրա մատը դողաց դռան զանգի վրա, հետո անզոր ցած ընկավ։

— Ես գրասենյակից կվերադառնամ,— ասաց նա իրեն։— Ես կփախչեմ։ Ես այսպիսի աշխատանք չեմ ուզում։

Նա նստեց տան աստիճաններին։ Երկար ժամանակ հետո վեր կա-

ցավ, մոտեցավ դռանը և մատը սեղմեց կոճակին։ Երբ դուռը բացվեց, նա տեսավ մի երիտասարդ կնոջ և առանց մտածելու, թե ինչ է անում, ետ դարձավ ու վազեց դեպի հեծանիվը։ Երիտասարդ կինը նախամուտք դուրս եկավ և կանչեց.

— Է՛յ, ի՞նչ է պատահել։

Հոմերը փչավ հեծանվից և դանդաղ քայլեց դեպի նախամուտք։

— Ներողություն,— ասաց նա երիտասարդ կնոջը,— ես հեռագիր եմ բերել միսիս Քլոդիա Բոֆրերին։

— Մայրիկի ծննդյան օրն է,— ասաց երիտասարդ կինը ուրախացած։ Նա սրահ վերադարձավ։— Մայրի՛կ,— կանչեց նա,— քեզ հեռագիր են բերել։

Դեպի դուռը եկավ աղջկա մայրը։

— Վստահ եմ, որ Ալանից է,— ասաց նա։— Ներս արի, երիտասարդ,— ասաց նա Հոմերին,— դու իմ ծննդյան տորթից մի կտոր պետք է ուտես։

— Շնորհակալ եմ, տիկին,— ասաց Հոմերը,— ես պետք է աշխատանքի վերադառնամ։— Նա հեռագիրը մեկնեց կնոջը, որը այն վերցրեց այնպես, կարծես բացի շնորհավորագրից ուրիշ բան լինել չէր կարող։

— Միևնույն է,— ասաց նա ցրիչին,— ես քեզ բաց չեմ թողնի, մինչև որ մի կտոր տորթ չուտես և մի բաժակ փունջ չխմես։— Նա բռնեց Հոմերի թևից և նրան քաշեց դեպի սենյակ՝ սեղանի մոտ, որը բեռնված էր խմորեղենով, սանդվիչներով և փունջով։ Երաժշտությունն ու պարը շարունակվեցին։— Իմ ծննդյան օրն է, տղաս,— ասաց կինը։— Աստված իմ,— ծիծաղեց նա,— ծերանում եմ, բայց դու ինձ պետք է երջանկություն ցանկանաս, տղաս։— Նա Հոմերին մի բաժակ փունջ տվեց։

— Ես ձեզ ցանկանում եմ,— սկսեց Հոմերը։ Նա լռեց և հետո նորից սկսեց։— Ես ձեզ ցանկանում եմ,— բայց շարունակել չկարողացավ։ Նա փունջի բաժակը դրեց սեղանին և ուղղվեց դեպի դուռը։ Մայրը նայեց սենյակի չորս կողմը, հետո մի անկյուն քաշվեց, որտեղ կարող էր աննկատ մնալ, իսկ աղջիկը, հայացքը մորից չբաժանելով, գնաց դիմացի անկյունը։ Հոմերը իր հեծանիվի վրա էր արդեն և անձրևի տակ շտապում էր հեռագրատուն։ Սրահի պատի վրա, մոր դիմաց, սիրունատես, խարտյաշ գլխով մի տղայի դիմանկար էր կախված։ Նկարի անկյունում գրված էր. «Մայրիկին՝ սիրով Ալանից, իր 12-րդ տարեդարձի առթիվ»։ Մայրը բացեց հեռագիրը, կարդաց և սկսեց անձայն հեկեկալ։ Պատեֆոնը շարունակում էր նվագել «Իմ սևուկի համար» երգը, իսկ

երջանիկ հյուրերը շարունակում էին պարել։ Աղջիկը նայեց մորը, հետո խելագարի նման վազեց դեպի պատեֆոնը և լռեցրեց այն։

— Մայրի՜կ,— բղավեց աղջիկը և ամբողջ ուժով վազեց դեպի սրահում կանգնած կինը։

Գլուխ 20

ԴԱ ՁԵՐ ԴԺԲԱԽՏՈՒԹՅՈՒՆՆ Է, ՈՉ ԹԵ ԻՄ

Վերջին սեանսն ավարտվեց, և «Կինեմա» կինոթատրոնը դատարկվեց։ Փողոցում Բեսը դարձավ Հաստլիկ կոչվող զինվորին և ասաց.

— Մենք այդեղ պետք է տուն գնանք։

— Շնորհակալություն, լեդիներ,— ասաց Հաստլիկ մականունով զինվորը։

Ժամանակն էր, որ նրանք հրաժեշտ տային իրար, բայց փողոցում կանգնել էին և կարծես սպասում էին ինչ-որ մի հրաշալի, լինելության սահմանի վրա գտնվող անբացատրելի բանի։ Հաստլիկ մականունով զինվորը նայեց Բեսին ու Մերիին, հետո, շատ պարզ ու անմեղ, համբուրեց նախ Բեսին, հետո՝ Մերիին։

Այդ ժամանակ Ձի մականունով զինվորը գոռաց.

— Օհո, բա մե՞նք, բա ես ու Տեխա՞սը։ Մե՞նք ինչով ենք վատ, մենք էլ ենք զինվոր։

Նա էլ համբուրեց Բեսին ու Մերիին։ Այնուհետև Տեխասը համբուրեց նրանց։ Փողոցով անցնող մի կին նայեց նրանց դժգոհությամբ։ Աղջիկներն արագ շրջվեցին և շտապեցին փողոցով ցած։ Ձի մականունով զինվորը ցատկեց և հրեց Տեխաս անունով զինվորին, որն իր հերթին հրեց Հաստլիկին։ Նրանք պոկվեցին տեղից՝ իրար կանչելով։

— Հուռռա՜։ Քեզ տեսնեմ, Տեխաս, քեզ տեսնեմ, Հաստլիկ,— գոռում էր Ձին։

— Ոսկի խոսքեր ես ասում, տղա,— Տեխասը գոռաց Հաստլիկին։— Ոսկի խոսքեր, ով Չիկագոյի համալսարանի մեծարգո սենատոր, Հաստլիկ։

Հաստլիկ կոչվող զինվորը բարձրաձայն ծիծաղեց։

Նրանք գնում էին մութ փողոցով, իրար հրմշտելով, ծիծաղելով և գոռալով։

— Է՛յ, տղաներ,— բղավեց Հաստլիկ կոչվող զինվորը,— երբ կոնգրես հասնեմ, ես նրանց մի երկու խոսք պիտի ասեմ։

— Ցիպի-այ-այ,— բղավեց Զին,— քայլեք, շան որդիներ, դա ձեր դժբախտությունն է, ոչ թե իմ։

Զինվորներն սկսեցին իրար վրայից թռչել, իրար հրել ու խենթորեն խորասուզվել մութ, անվտանգ փողոցի մեջ՝ ընդառաջ գնալով պատերազմին։

Գլուխ 21

ԱՎԵԼԻ ԼԱՎ ԱՇԽԱՐՀ, ԱՎԵԼԻ ԼԱՎ ՄԱՐԴԻԿ

Երբ դժբախտ ցրիչը Բոֆրերների տնից վերադարձավ հեռագրատան գրասենյակը, անձրևը դադարել էր, լուսինը փայլում էր, և դատարկված ու հոգնած ամպերը, այժմ սպիտակած, քշվում էին երկնքով։ Ցրիչը շատ էր հոգնած ու կաղալով գրասենյակ մտավ։

— Ի՞նչ է պատահել ոտքիդ, այ տղա,— հարցրեց ծեր հեռագրիչը,— առավոտվանից կաղում ես։

— Դատարկ բան է,— ասաց Հոմերը,— նոր հեռագրեր կա՞ն։

— Չկան, մաքրված է,— ասաց միստր Գրոգանը,— շուտով կարող ես տուն գնալ ու քնել։ Այժմ ասա, ի՞նչ է պատահել ոտքիդ։

— Կարծես ծնկիս հոդը խախտել եմ կամ դրա նման մի բան,— ասաց Հոմերը։ Նա փորձեց ոտքը ձգել։— Երկու հարյուր քսան յարդ արգելավազքի մասնակցեցի,— ասաց նա,— պարզվում է, որ Իթաքայի միջնակարգ դպրոցի մարզիչը ինձ չի սիրում։ Ես առաջինն էի վազում, երբ նա մտավ վազքուղի և փորձեց կանգնեցնել ինձ։ Ես եմ մեղավորը։ Ես տեսա նրան և եթե ուզենայի, կարող էի կանգնել, բայց չուզեցի։ Նա իրավունք չուներ ինձ կանգնեցնելու, դրա համար էլ վազեցի, և երկուսով վայր ընկանք։ Նրա այդ միջամտությունը տեսնելով, մյուս տղաները դադարեցրին իրենց վազքը։ Մի տղա, որի անունը Հյուբերդ Էքլի Երրորդ է, կանգնեցրեց նրանց։ Այդ տղան ինձ երբեք դուր չի եկել։ Նա հարուստ ընտանիքից է և ինչ-որ շատ լավ դաստիարակված։ Եվ, բացի այդ, նա դուր է գալիս Հելեն Էլիոթին, այն աղջկան, որն ինձ դուր է գալիս։ Որքան նա Հելենին դուր է գալիս, այնքան ես վառվում եմ և ավելի սիրում այդ աղջկան։ Ես կարծում եմ, որ այդ աղջիկը ինձ պարզապես չի նկատում։ Այսինքն՝ նա չի կարող ընդհանրապես ինձ չնկատել, բայց, ինձ թվում է, որ, նրա կարծիքով, ես ինձ շատ խելացի եմ համարում։ Ըստ երևույթին, ես այդ աղջկան բոլորովին դուր չեմ գալիս։ Գուցե նա ինձ ատում է, բայց ամբողջ աշխարհում, բացի հարազատներից, ամե-

նից շատ նրան եմ սիրում։ Ուրեմն, միստր Գրոգան, Բայֆիլդ անունով այդ դասատուն, իհարկե, վատը չէ, եթե նրան հասկանաս, բայց ես չգիտեմ որևէ մեկին, որ կարողանա հասկանալ նրան։ Նա միշտ անախորժություններ է փնտրում։ Միսս Հիքսն ասում է, որ նա սուտ էլ է խոսում։ Միսս Հիքսը մեր հին պատմության դասատուն է։ Նա երեսունհինգ տարուց ավելի է՝ դաս է տալիս Իթաքայում։ Նա դաս է տվել իմ Մարկուս եղբորը և Բես քրոջս։ Ընկնելուց հետո ես, իհարկե, վեր կացա և սկսեցի նորից վազել։ Մյուս տղաները նույնպես սկսեցին վազել։ Արդարացի մրցում էր, հավասար պայմաններում։ Զգացի, որ ինչ-որ բան կատարվեց իմ սրունքի հետ, բայց չկանգնեցի, որովհետև ուզում էի հաղթել։ Ես չէի ուզում հաղթել՝ պարզապես հաղթելու համար, չէի ուզում նույնիսկ էքլիին հաղթել։ Այդ տղան ինձ զարմացրեց։ Նա կանգնեցրեց մյուսներին, երբ միստր Բայֆիլդը խանգարեց ինձ։ Ըստ երևույթին, էքլին լավ տղա է, պարզապես մի քիչ շատ է բարեկիրթ և վերջ։ Ձեզ ճիշտն ասեմ, միստր Գրոգան, իմ երկու հարյուր քսան յարդ արգելավազքին մասնակցելու գլխավոր շարժառիթը սկզբում այն էր, որ միստր Սփանգլերը մասնակցել է այդ վազքին, Իթաքայի դպրոցը հաճախած ժամանակ, և հետո, ես ուզում էի հաղթել միսս Հիքսի համար։

— Գիտե՞ք ինչպես եղավ. հասկանալի է, էքլին և ես դասարանում մի փոքր վիճեցինք, և ուսուցչուհին ստիպված եղավ դասերից հետո մեզ պահել։ Այնուհետև Բայֆիլդը, այդ մարզիչը, եկավ միսս Հիքսի մոտ, ստեց և էքլիին մրցության տարավ, իսկ ինձ չտարավ։ Միսս Հիքսը ասաց, որ Բայֆիլդը աշակերտ եղած ժամանակ նույնպես ստում էր։ Միսս Հիքսը խորապես վիրավորված էր։ Ինձ թվում է, որ նա պարզապես չի կարողանում հանդուրժել ստող մարդկանց։ Նա ինձ պատմեց իմ Մարկուս եղբոր մասին և ապա թույլ տվեց, որ գնամ և մասնակցեմ վազքին։ Միստր Սփանգլերը Հովտի չեմպիոնն է եղել։ Ես նույնպես ուզում եմ Հովտի չեմպիոնը դառնալ, թեև, ճիշտն ասած, չեմ կարծում, որ այս տարի կկարողանամ հասնել իմ նպատակին։— Ցրիչը ոտքը մի քանի անգամ ձգեց։— Երևի այս գիշեր պետք է ինչ-որ դեղ քսել։ Երևո՞ւմ է, որ կաղում եմ։

— Ոչ,— ասաց միստր Գրոգանը,— չէ, բայց մի քիչ նկատելի է։ Ձե՞ս դժվարանում հեծանիվ քշելիս։

— Այո,— ասաց Հոմերը,— մի քիչ ցավում է, հատկապես երբ ձախ ոտքս եմ բարձրացնում։ Աշխատում եմ աջ ոտքով քշել հեծանիվը և թողնել, որ ձախ ոտքս պարզապես հետևի աջին։ Երբեմն ոտքս ոտնակից հանում եմ և կախում։ Այդ ձևով հանգստանում է։ Երևի մի բան է պատահել հոդի հետ, հարկավոր է դեղով շփել։

Լռություն տիրեց։ Հետո հին հեռագրիչն ասաց.

— Երեք օրվա ընթացքում բավականին փոխվել ես։

— Նկատե՞լ եք, միստր Գրոգան,— ասաց ցրիչը։— Այո, ինձ էլ է թվում, որ բավական փոխվել եմ, կարծես մեծացել եմ։ Արդեն ժամանակն է, որ մեծանայի։ Մինչև այստեղ աշխատելս ես ոչինչ չգիտեի։ Անշուշտ, շատ բաներ գիտեի, բայց այս բոլորի կեսն էլ չգիտեի, և, հավանաբար, եթե չաշխատեի, չէի էլ իմանա։ Բայց անհրաժեշտ էր իմանալ։ Եթե որևէ մեկը պիտի իմանար, ուրեմն ես էլ պետք է իմանայի։ Բոլորը, նաև նրանք, ովքեր ինձ չեն սիրում, ասում են, որ Իթակայի դպրոցի ամենաաչքաբաց տղան եմ։ Բայց ես այնքան էլ խելացի չեմ։ Ինձ թվում է, որ շատ բաներում, նույնիսկ կարևոր բաներում, ես նույնքան հետամնաց եմ, որքան մյուսները։ Բայց ուզում եմ ամեն ինչ հասկանալ և միշտ պիտի ձգտեմ հասկանալ։ Բայց ինչպե՞ս անել, մարդ ինչի՞ց կարող է իմանալ, որ արդեն հասկանում է։

— Ինչպե՞ս բացատրեմ,— ասաց ծեր հեռագրիչը,— ես ինքս էլ չգիտեմ, թե ինչպես կարելի է ամեն ինչ հասկանալ։ Բայց ուրախ եմ, որ դու որոշել ես անպայման հասնել դրան, ձգտում ես հասնել։

— Հապա ինչպե՞ս,— ասաց ցրիչը։— Գիտե՞ք, միստր Գրոգան, ես ուրիշ մարդկանց չեմ ճանաչում, և չգիտեմ, թե արժե արդյոք այս մասին ձեզ ասել, բայց ես այն տղան չեմ, ինչ որ մարդիկ կարծում են։ Ես միաժամանակ ուրիշ մարդ եմ, ավելի լավը։ Երբեմն նույնիսկ ինքս չգիտեմ, թե դա ինչպես է ստացվում։— Ցրիչը շարունակեց խոսել, որովհետև հոգնած էր, ոտքը ցավում էր, մահվան գույժ էր տարել մի երջանիկ տուն և որովհետև գիտեր, որ ծեր հեռագրիչը շատ լավ մարդ էր։— Երբեմն մտածում եմ,— շարունակեց նա,— որ աշխարհում ամեն ինչ ուրիշ ձևով պետք է լինի, աշխարհը պետք է ավելի լավը լինի, մարդիկ պետք է ավելի լավը լինեն և աշխարհի գործերը չպետք է այնպես ընթանան, ինչպես ընթանում են։— Նա մի պահ լռեց, հետո շարունակեց։— Այս մասին, բացի ձեզնից, ուրիշ որևէ մեկին կամաչեի ասել, միստր Գրոգան, բայց մի օր ես կաշխատեմ և կձգտեմ մի բան անել։ Չգիտեմ, թե ինչ կանեմ, բայց մի բան անպայման կանեմ։ Ես ոչինչ չգիտեի և ապրում էի երջանիկ երազանքի մեջ։ Մեր ամբողջ ընտանիքը երջանիկ է։ Մենք երջանիկ մարդիկ ենք, բայց ես ոչինչ չգիտեի։ Այժմ սկսել եմ քիչ-քիչ հասկանալ... Ամեն օր մի քիչ ավելի, և ամեն անգամ՝ տարբեր բան։— Ցրիչը նորից լռեց, ստուգեց սրունքը, տեսնելու, թե խոսելու ընթացքում չի՞ լավացել. չէր լավացել։— Ինձ դուր չի գալիս աշխարհի դրվածքը, միստր Գրոգան,— ասաց նա,— չգիտեմ

ինչու, բայց ուզում եմ, որ ավելի լավ լինենք։ Ես համոզված եմ, որ ավելի լավը կլինենք։ Այժմ այնքան եմ սովորել, որ թվում է, թե ոչինչ չգիտեմ, բայց սրանից հետո պիտի ջանամ միշտ ավելին սովորել։ Սրանից հետո միշտ պիտի դիտեմ։ Պիտի միշտ մտածեմ իմ տեսածի մասին։ Դա մարդուն տխուր է դարձնում, բայց հոգ չէ։ Մենք, ճիշտ է, գոհ ու երջանիկ մարդիկ ենք, բայց և միաժամանակ՝ արի ու տոկուն։ Հոգ չէ, որ տխուր կլինեմ։ Ես մտածում եմ այն մարդկանց մասին, որոնք տխուր են և անարգված, բայց դիմացկուն չեն, և ինձ թվում է, որ աշխարհը լեցուն է նման մարդկանցով։ Ես այդ առաջ չգիտեի։ Հիմա ես չեմ էլ մտածի, եթե նույնիսկ Հելեն Էլիոթը ինձ չսիրի։ Կուզենայի, որ սիրեր, բայց եթե չսիրի, փույթ չէ։ Ես նրան սիրում եմ։ Ես նրան սիրում եմ ամբողջ սրտով, բայց եթե նա ուզում է իմ փոխարեն Հյուբերդ Էքլի Ներրորդին սիրել, թող սիրի, հոգ չէ։ Նա լավ տղա է, և ինձ թվում է, որ Հելեն Էլիոթի նման նուրբ մեծացած աղջիկը պետք է Հյուբերդ Էքլի Ներրորդի նման բարեկիրթ տղային սիրի։ Ես պարզապես անում եմ այն, ինչ իմ կարծիքով ճիշտ է և պարտավոր եմ անել։ Դպրոցում ես շատ ծիծաղելի բաներ եմ ասում, բայց ոչ ուսուցիչների գործը դժվարացնելու համար։ Ես դրանք ասում եմ, որովհետև անհրաժեշտ է ասել։ Բոլորը այնքան տխուր ու շփոթված են, և ամեն ինչ այնքան թերի է, սխալ ու խառնակ, որ ես ստիպված եմ երբեմն ծիծաղելի բաներ ասել։ Ինձ թվում է, որ բացի ողջ լինելուց մենք պետք է մի քիչ էլ ծիծաղենք։ Ես չեմ կարծում, որ կարող եմ նպատակադրված ձևով քաղաքավարի կամ բարեկիրթ լինել, նույնիսկ եթե ուզենամ։ Ես չեմ կարող քաղաքավարի լինել, եթե դա իմ ներսից չի բխում։

Ցրիչը նորից ոտքը ձգեց և խոսեց այնպես, կարծես իր ոտքը չլիներ։

— Սրան ինչ-որ բան է պատահել։— Հետո նայեց ժամացույցին։— Ժամը տասներկուսն անց է հինգ րոպե։ Միստր Գրոգան,— ասաց նա,— երևի պետք է տուն գնամ, թեև քունս այնքան էլ չի տանում։ Վաղը շաբաթ է։ Առաջ շաբաթ օրը ինձ համար ամենալավ օրն էր։ Բայց այսուհետև այդպես չի լինի։ Հավանաբար գրասենյակ կգնամ։ Գուցե օգնեմ մի քիչ։— Առաքման սեղանից նա վերցրեց ճաշի ամանը։— Մի սանդվիչ չէի՞ք ցանկանա, միստր Գրոգան,— հարցրեց նա։

— Ճիշտն ասած,— պատասխանեց ծեր հեռագրիչը,— վատ չէր լինի։ Լավ, լավ, կուտեմ, ես արդեն քաղցած եմ։— Միստր Գրոգանը բաց տուփից մի սանդվիչ վերցրեց և կծեց։

— Խնդրում եմ մորդ իմ շնորհակալությունը հայտնես։

— Ոչինչ,— ասաց ցրիչը։

— Ոչ,— ասաց միստր Գրոգանը,— դա ոչինչ չէ։ Խնդրում եմ իմ կողմից շնորհակալություն հայտնես նրան։

— Շատ լավ, սըր,— պատասխանեց Հոմերը և, դուրս գալով գրասենյակից, տուն գնաց։

Գլուխ 22

ԵՂԻՑԻ ԼՈՒՅՍ

Հեռագրատանը մենակ մնալով միստր Վիլլի Գրոգանը, որը մի ժամանակ երիտասարդ էր եղել և աշխարհի ամենաարագաշարժ հեռագրիչը, առանց շտապելու սկսեց իր սեղանը կարգի բերել։ Նա շատ մեղմ մի երգ էր մրմնջում, որը նրա հիշողության մեջ մնացել էր վաղ մանկությունից։ Մինչ ծերունին իր գործն էր անում, գրասենյակ մտավ Թոմաս Սփանգլերը։ Նա նոր էր դուրս եկել Կորբետի խորտկարանից և ալկոհոլի ազդեցության տակ իրեն երջանիկ էր զգում։ Մոտենալով սեղանին, նա նայեց ծեր հեռագրիչին, բայց ոչինչ չասաց։ Նրանք իրար հասկանում էին։ Հաճախ նրանք մի քանի ժամ աշխատում էին առանց որևէ բառ փոխանակելու։ Սփանգլերը հեռագրերի վրայից վերցրեց նվիրական ձուն և ուշադիր նայեց։ Հետո նորից այն դրեց հեռագրերի վրա և հաճույքով հիշեց աղջկան։ Նրա շուրթերը բնազդաբար ստացան աղջկա շուրթերի ձևը և ակամա կրկնեց այն խոսքերը, որ աղջիկն ասաց.

— Դու ինձ սիրում ես, չէ՞,— ասաց նա։— Այո, սիրում ես։

Ծեր հեռագրիչը նայեց գրասենյակի վարիչին։

— Ինձ հե՞տ ես, Թոմ,— ասաց նա։

— Վիլլի,— ասաց Սփանգլերը,— ի՞նչ կմտածեիր, եթե մի երիտասարդ կին քեզ այսպես ասեր. դու ինձ սիրում ես, այնպես չէ՞, այո, սիրում ես, սիրում ես։ Դու գիտես, որ սիրում ես։

— Ճիշտն ասած,— պատասխանեց Գրոգանը,— չգիտեմ, ինչ կմտածեի։

— Այդ կնոջը կսիրեի՞ր, Վիլլի,— հարցրեց Սփանգլերը և շարունակեց ընդօրինակել աղջկան. «Դու ինձ սիրո՞ւմ ես, չէ՞։ Նա միշտ այսպես է ասում»։

Սփանգլերը շփեց երեսը, կարծես երջանկությունը հաղթահարելու համար, հետո ասաց.

— Ինչպե՞ս են գործերը։

— Ամեն ինչ նույնն է,— պատասխանեց միստր Գրոգանը,— բացի անձրևից։

— Իսկ ինչպե՞ս է նոր ցրիչը,— հարցրեց Սփանգլերը,— լա՞վ է աշխատում։

— Իմ տեսածների մեջ լավագույնն է,— ասաց հեռագրիչը,— դու ի՞նչ կարծիքի ես նրա մասին։

— Ես նրան սիրեցի հենց այն պահից, երբ նա եկավ և աշխատանք խնդրեց,— պատասխանեց Սփանգլերը։ «Դու ինձ սիրում ես, չէ՞»։— Նա չէր կարողանում աղաղակել Դիանա Սթիդից։ Ուրախ եմ, որ սիրում ես ցրիչին,— շարունակեց Սփանգլերը,— գրասենյակը փակելու մասին մի մտածիր, Վիլլի. ես ինքս կփակեմ։ Մի քիչ գործ ունեմ։ Այդ ցրիչը ինչ-որ նշանավոր անուն ունի, չէ՞, Հոմեր Մաքոլի։ Ի՞նչ ես կարծում, ինչու նրա հայրը նրան Հոմեր անվանեց, փոխանակ Թոմաս, Վիլյամ, Հենրի կամ դրանց նման մի բան։ Սփանգլերը պատասխանի չսպասեց։ «Այո, դու սիրում ես»։

— Հոմերի եղբոր անունը Ցուլիսիս է, իսկ քրոջ անունը Բես է։

— Հոմեր, Ցուլիսիս, Բես,— ասաց Սփանգլերը։

— Մի ուրիշ եղբայր էլ ունի,— ասաց միստր Գրոգանը։— Մարկուսը ծառայում է բանակում։

— Մարկուս, Հոմեր, Ցուլիսիս և Բես,— կրկնեց Սփանգլերը,— իսկ դու ինչո՞ւ տուն չես գնում, Վիլլի։

— Տո՞ւն,— ասաց միստր Գրոգանը և ժպտաց։— Եթե չես նեղանա, Թոմ, ես ուզում եմ քեզ հետ այստեղ նստել։ Գնալու ոչ մի տեղ չունեմ, անելու ոչինչ չունեմ, բացի քնելուց, իսկ քնելն այլևս ինձ հաճույք չի պատճառում։

— Լսիր, Վիլլի,— ասաց Սփանգլերը այնպիսի տոնով, կարծես խոսում էր երեխայի հետ,— չեմ ուզում, որ դու մտահոգվես. գիտեմ, որ դու մտահոգվում ես, բայց կարիք չկա։ Դու ծեր չես, և աշխարհում ոչ ոք չի կարող քեզ թոշակի ուղարկել։ Դու շատ լավ գիտես, որ այս գրասենյակում առանց քեզ կորած եմ։ Դու հարյուր տարի պիտի ապրես և ամեն օր պիտի աշխատես։

— Շնորհակալություն,— ասաց ծեր հեռագրիչը։ Նա լռեց մի պահ։ Ապա ցածրաձայն շարունակեց։— Այս գիշեր ես մի փոքր նոպա ունեցա։ Էհ, լուրջ բան չէր։ Նախօրոք զգացի։ Տղան այստեղ էր։ Նրան դեղի ուղարկեցի։ Դու գիտես, որ ես լպետք է դեղ խմեմ։ Ինձ բուժում է պետք և հանգիստ։

— Բժիշկները ամեն ինչ չեն հասկանում, իսկ դու և ես ապրում ենք հոգով։— Հետո հանկարծ ասաց.— «Դու ինձ սիրո՞ւմ ես, չէ՞»։ Բժիշկ-

ները մարմնից բացի ոչինչ չեն հասկանում,— ասաց նա,— և, այնուամենայնիվ, գուցե դու մի քիչ հանգստանաս։

— Է՛հ, կհանգստանամ,— ասաց միստր Գրոգանը,— շուտով մեծ հանգստի կգնամ, Թոմ։

— Վիլլի,— ասաց Սփանգլերը,— գնա Կորբետի մոտ և մի բաժակ խմիր, դաշնամուր լսիր, հետո կխոսենք անցած ժամանակների մասին, Վոլինսկու, Թոմլինսոնի, ծերուկ Դեյվընփորթի, հեռագրալարերը ձգող Հարրի Բուլի, խենթուկ Ֆրեդ Մքինտայրի և զարմանալի Ջերի Բիթիի մասին։ Վեր կաց, Վիլլի։ Մեկ-երկու բաժակ խմիր և երբ վերադառնաս, անցյալը կքքրենք։

— Ինձ արգելված է խմել, Թոմ,— ասաց միստր Գրոգանը,— դու գիտես, որ ես չպետք է խմեմ։

— Անշուշտ, գիտեմ, որ չպետք է խմես,— ասաց Սփանգլերը,— բայց գիտեմ նաև, որ սիրում ես խմել. պետք է անել այն, ինչ սիրում ես, և դա հաճախ ավելի կարևոր է, քան այն, ինչ պարտավորված ես անել։ Գնա և մի բաժակ խմիր։

— Շատ լավ, Թոմ,— պատասխանեց միստր Գրոգանը և գրասենյակից դուրս եկավ։

Վերջին մի քանի րոպեներին, գրասենյակի դռան մոտ՝ մայթի վրա ետուառաջ էր անում մի երիտասարդ և գրասենյակից հաճախ ներս էր նայում։ Վերջապես նա ներս մտավ և կանգնեց սեղանի առաջ։ Սփանգլերը նկատեց նրան և մոտ գնաց։

— Ինչպե՞ս ես,— ասաց Սփանգլերը, հիշելով տղային,— ինձ թվում էր, որ դու վաղուց Փենսիլվանիայի ճանապարհին ես։ Չէ՞ որ մայրդ փող ուղարկեց։ Պարտքդ վերադարձնելու կարիք չկա։

— Պարտքը վերադարձնելու չեմ եկել,— ասաց երիտասարդը,— եկել եմ էլի վերցնելու և չեմ պատրաստվում խնդրել։— Նա հազաց։— Եկել եմ բռնի վերցնելու։

— Քեզ ի՞նչ է պատահել,— հարցրեց Սփանգլերը։

— Ահա թե ինչ է պատահել,— ասաց երիտասարդը և բաճկոնի աջ գրպանից մի ատրճանակ հանելով պահեց դողացող ձեռքերում։ Թոմաս Սփանգլերը, որը դեռևս մի քիչ հարբած և երջանիկ էր, չէր կարողանում կատարվածից բան հասկանալ։

— Դե, շուտ,— ասաց երիտասարդը,— փող տուր, քո ունեցած ամբողջ փողը։ Ամենուրեք մարդիկ իրար սպանում են, և փույթ չէ, եթե ես էլ քեզ սպանեմ կամ սպանվեմ։ Հուզված եմ և ոչ մի անախորժություն չեմ ուզում, բայց եթե հիմա քո ունեցած ամբողջ փողը չտաս, կկրակեմ։ Դե, փողը տուր, շուտ արա։

Սփանգլերը բացեց դրամարկղը և փողերը դուրս հանեց։ Նա փողերը դասավորեց՝ մանրը, մեծ թղթադրամները և այլն, ու դրեց սեղանին՝ տղայի առջև։

— Առանց այն էլ քեզ փող պիտի տայի,— ասաց նա,— բայց ոչ թե նրա համար, որ ինձ վրա ատրճանակ ես ուղղել։ Քեզ փող պիտի տայի, որովհետև դու դրա կարիքն ունես։ Ահավասիկ։ Եղած ամբողջ փողն այս է։ Վերցրու և տուն գնա։ Դնա ձերոնց մոտ։ Դողության մասին ոչ ոքի չեմ հայտնի։ Ինքս կփակեմ այդ հաշիվը։ Այստեղ մոտավորապես յոթանասունհինգ դոլար կա։

Նա սպասեց, որ տղան վերցնի փողը, բայց վերջինս ձեռքը չմեկնեց։

— Լուրջ եմ ասում,— ասաց Սփանգլերը,— վերցրու փողը և գնա։ Դու դրա կարիքն ունես։ Դու հանցագործ չես և ոչ էլ այնքան հիվանդ, որ չկարողանաս բուժվել։ Քո մայրը սպասում է քեզ։ Այդ փողը ինձնից թող նվեր լինի նրան։ Դու դրանով գող չես դառնա։ Պարզապես վերցրու փողը, ատրճանակը մի կողմ դիր և տուն գնա։ Զենքը գցիր, այդպես ավելի լավ կզգաս։

Երիտասարդը ատրճանակը դրեց գրպանը։ Այն ձեռքով, որով զենքն էր բռնել, ծածկեց դողացող շուրթերը։

— Ինձ մնում է ինքնասպան լինել,— ասաց նա։

— Հիմար բաներ մի ասա,— խոսեց հեռագրատան վարիչը։ Նա վերցրեց փողերը և մեկնեց երիտասարդին։— Դե՛, վերցրու,— ասաց նա,— եղած ամբողջ փողը սա է։ Վերցրու և տուն գնա։ Եթե ուզում ես, զենքը թող այստեղ, ինձ մոտ։ Վերցրու քո փողը։ Այո, դա քոնն է, քանի որ դու դրա համար զենք բարձրացնելու անհրաժեշտություն զգացիր։ Ես գիտեմ, թե դու ինչ ես ուզում, որովհետև ես ինքս նույնը զգացել եմ։ Մենք բոլորս էլ այդ նույն բանը զգացել ենք։ Գերեզմանատներն ու բանտերը լեցուն են ամերիկացի ազնիվ տղաներով, որոնց վատ բախտ և դժվարին պայմաններ են վիճակվել։ Նրանք ոճրագործներ չեն։ Վերցրու,— ասաց նա մեղմորեն,— վերցրու այս փողը։ Տուն գնա։

Երիտասարդը զենքը գրպանից հանեց և սեղանի վրայով հրեց դեպի Սփանգլերը, որը այն գցեց դարակի մեջ։

— Չգիտեմ ով եք դուք,— ասաց նա,— բայց ոչ ոք ինձ հետ այդպես չի խոսել, ինչպես դուք։ Ես զենքը չեմ ուզում և փողը չեմ վերցնի, բայց տուն կգնամ։ Մի կերպ այստեղ հասա, մի կերպ էլ կվերադառնամ։— Մի պահ նա հազաց, ապա ասաց։— Չգիտեմ մայրս որտեղից էր ճարել այդ երեսուն դոլարը։ Գիտեմ միայն, որ նա խնայած փող չուներ։ Դրա մի մասը խմեցի, մի մասն էլ տարվեցի, իսկ...

— Նստիր,— ասաց Սփանգլերը։ Մի պահ հետո երիտասարդը նստեց Սփանգլերի աթոռին։ Սփանգլերը նստեց սեղանին։

— Քեզ ի՞նչ է պատահել,— հարցրեց նա երիտասարդին։

— Ճիշտն ասած, չգիտեմ,— պատասխանեց երիտասարդը։— Կարծեմ հիվանդ եմ, գուցեև թոքախտ։ Եթե նույնիսկ չեմ, շուտով կլինեմ։ Չեմ սիրում գանգատվել։ Շատ անառողջ եմ, բայց դա իմ մեղքն է։ Հիմա կգնամ։ Շատ շնորհակալ եմ, կաշխատեմ մի օր ձեզ երախտահատույց լինել։— Երիտասարդը վեր կացավ և ուղղվեց դեպի գրասենյակի դուռը։

— Մի բոպե սպասիր,— ասաց Սփանգլերը,— նստիր։ Հանգստացիր։ Դու հիմա շատ ժամանակ ունես։ Շտապելու կարիք չկա։ Այսուհետև մի քիչ դանդաղ շարժվիր։ Ի՞նչն է քեզ հետաքրքրում։

— Չգիտեմ,— ասաց երիտասարդը,— չգիտեմ, որ կողմը գնամ և ինչ անեմ, ինչին հավատամ ու ինչին չհավատամ։ Հայրս քարոզիչ էր, բայց մահացավ, երբ ես երեք տարեկան էի։ Պարզապես չգիտեմ ինչ անեմ։— Նա նայեց Սփանգլերին։— Ի՞նչ կարելի է անել,— հարցրեց նա։

— Առանձնապես ոչինչ,— ասաց Սփանգլերը,— որևէ հարմար գործ։ Կարևոր չէ, թե մարդ ինչ է անում։ Որևէ լավ, պատվավոր աշխատանք։

— Ես միշտ անհանգիստ ու դժգոհ եմ եղել,— ասաց երիտասարդը,— չգիտեմ թե դա ինչից է։ Ինձ համար ոչ մի բան նշանակություն չունի։ Ես մարդկանց չեմ սիրում։ Չեմ սիրում նրանց հետ լինել։ Նրանց չեմ վստահում։ Չեմ սիրում նրանց ապրելը, խոսելը, այն բաները, որոնց հավատում են, այն, որ իրար անընդհատ հրմշտկում են։

— Ամեն ոք աշխարհում վաղ թե ուշ ապրում է այդ զգացումը,— պատասխանեց Սփանգլերը։

— Ես ինձ շատ լավ եմ ճանաչում,— ասաց երիտասարդը,— ես իմ արժեքը գիտեմ։ Արդարանալու պատճառներ էլ չունեմ։ Ամեն ինչի պատասխանատուն ես եմ։ Այժմ պարզապես հոգնած եմ ու հիվանդ։ Ոչինչ ինձ չի հետաքրքրում։ Ամբողջ աշխարհը գժվել է։ Չեմ կարողանում իմ ուզած ձևով ապրել և ուրիշ կերպ ապրել չեմ ուզում։ Իմ ուզածը փողը չէ։ Գիտեմ, որ կարող եմ որևէ գործ գտնել, մանավանդ հիմա, բայց չեմ սիրում այն մարդկանց, որոնցից կարելի է աշխատանք ստանալ։ Նրանք լավ մարդիկ չեն։ Չեմ ուզում նրանց առաջ գլուխ խոնարհել և թույլ չեմ տա, որ որևէ մեկը ինձ վիրավորի։ Փորձեցի մի քանի տեղ ծորքում, Փենսիլվանիայում։ Միշտ կռվել եմ և ինձ վտարել են։ Երեք կամ չորս օր, մի շաբաթ կամ մի շաբաթուկես։ Անենաերկարը, որ դիմացել եմ՝ մի ամիս էր։

Յորքում փորձեցի բանակ գնալ, մտածեցի, որ այդպես լավ կլինի։ Ինչ-որ տեղ կգնաս և գուցե սպանվես։ Եթե բանակում քեզ ճնշում են, ապա գոնե ասում են, որ դա ինչ-որ նպատակի համար է, ինչ-որ չափով անհրաժեշտ։ Չգիտեմ, իսկապե՞ս անհրաժեշտ է, թե ոչ, բայց այդպես են ասում։ Նրանք ինձ մերժեցին։ Չկարողացա բժշկական քննությունից անցել։ Միայն թոքերս չէին, ուրիշ բաներ էլ կային։ Չհետաքրքրվեցի։

Երիտասարդը սկսեց նորից հազալ, բայց այս անգամ համարյա մի ամբողջ րոպե։ Սփանգլերը սեղանի գզրոցից մի շիշ հանեց։

— Վերցրու,— ասաց նա,— մի կում խմիր։

— Շնորհակալություն,— ասաց երիտասարդը,— թեև ես չափից շատ եմ խմում, բայց այժմ խմելու պահանջ եմ զգում։— Նա շշից մի կում խմեց, ապա վերադարձրեց Սփանգլերին։— Շնորհակալություն,— կրկնեց նա։

Սփանգլերը որոշեց, որ ավելի լավ է երիտասարդը խոսի։

— Ի՞նչ ես կարդում,— հարցրեց նա։

— Էհ, տարբեր բաներ,— ասաց երիտասարդը,— գոնե այդպես էր, երբ տանն էի։ Հայրս շատ գրքեր ուներ, ոչ միայն կրոնական, այլև լավ գրքեր՝ իսկական գրողների։ Իմ սիրած հեղինակը Վիլյամ Բլեյկն էր։ Գուցե ձեզ ծանոթ են նրա գործերը։ Սիրում էի նաև Շեքսպիր, Միլտոն, Պոպ, Դոնն, Դիկենս, Թեքերեյ։ Կարդացել եմ իմ հոր ունեցած բոլոր գրքերը, մի մասը երկու անգամ, մի քանիսը՝ երեք։ Սիրում էի կարդալ, իսկ հիմա՝ ոչ։ Հիմա ես չեմ ուզում նույնիսկ թերթերի երեսը տեսնել։ Նախապես գիտեմ բոլոր լուրերը։ Ապականություն ու սպանություն է ամեն տեղ, ամեն օր, և աշխարհում ոչ մի մարդ չի ազդվում դրանից։— Նա գլուխն առավ ափերի մեջ և շարունակեց ցածրաձայն խոսել՝ առանց գլուխը բարձրացնելու։— Չեմ կարող շնորհակալություն չհայտնել ձեր արածի համար,— ասաց նա,— պետք է ասեմ, որ կսպանեի ձեզ, եթե դուք վախենայիք ինձնից կամ կոպիտ վերաբերվեիք ինձ հետ։ Աշխարհում բոլորը կամ վախկոտ են, կամ՝ կոպիտ։ Հիմա գիտակցում եմ, որ այստեղ փողի համար չէ, որ եկա։ Չգիտեմ, կհասկանա՞ք ինձ, բայց ես այստեղ եկա վերջնականապես համոզվելու, որ իմ ճանաչած բոլոր մարդկանց մեջ աշխարհի միակ պատվավոր մարդը դուք էիք, որ բարի եք եղել մի ուրիշի նկատմամբ։ Ուզում էի իմանալ, թե արդյո՞ք բարի եղաք պարզապես այդպիսին լինելու համար։ Եկա պարզելու, թե արդյո՞ք դա պատահականություն չէ։ Չէի կարողանում հավատալ, թե երևի մեկը կարող է իսկապես լավ լինել, որովհետև այդպիսով մարդկանց մասին ունեցած իմ ամբողջ պատկերացումը սխալ է դուրս գա-

լիս։ Երկար ժամանակ այնպես էի կարծում, որ մարդկային ցեղը անհուսալիորեն ապականված է, որ աշխարհում ոչ մի մարդ չկա, որը իսկապես մարդ լինի, արժանի հարգանքի։ Երկար ժամանակ ատում էի ոչ միայն այս աշխարհի հզորներին, այլև անարգվածներին։ Եվ ահա, տնից հազարավոր կիլոմետրեր հեռու, օտար քաղաքում հանդիպեցի մի մարդու, որ արժանապատվություն ունի։ Երկար ժամանակ մտածում էի այդ մասին։ Չէի կարողանում հավատալ։ Ուզում էի ստուգել։ Ուզում էի հավատալ, որովհետև տարիներ շարունակ ես ինձ ասում էի. «Թող աշխարհում չապականված գեթ մի մարդ գտնեմ, որպեսզի ես ինքս էլ անբասիր լինեմ, որպեսզի հավատամ և ապրեմ»։ Առաջին անգամ, երբ մենք հանդիպեցինք, վստահ չէի դրան, բայց այժմ վստահ եմ։ Ձեզնից ուրիշ բան չեմ ուզում։ Դուք իմ ամբողջ ուզածը տվեցիք։ Ավելին տալ չեք կարող։ Հասկանո՞ւմ եք։ Հիմա ես վեր կկենամ և ձեզ մնաք բարով կասեմ։ Իմ մասին մի մտահոգվեք։ Տուն եմ գնում։ Այս հիվանդությունից չեմ մահանա, կապրեմ։ Եվ հիմա գիտեմ, թե ինչպես պետք է ապրել։— Երիտասարդը մի պահ գլուխը բարձրացրեց, հետո դանդաղ վեր կացավ և նայեց Սփանգլերին։— Շատ շնորհակալ եմ,— ասաց նա։

Սփանգլերը հայացքով ճանապարհեց երիտասարդին։ Վերադարձավ դրամարկղի մոտ և փողը տեղը դրեց։ Նա վերցրեց երիտասարդի զենքը և դատարկեց։ Նա զենքը ետ դրեց դարակի մեջ, իսկ փամփուշտները դրեց գրպանը։ Հետո մոտեցավ պողպատե տուփին, որտեղ օրվա հեռագրերն էին պահվում, և մի ծրարի մեջ գտավ տղայի մորը ուղարկած հեռագիրը։ Հեռագրատան վարիչը հեռագրի մի թերթիկ վերցրեց և սկսեց գրել։

Միսիս Մարգրեթ Սթրիքման
Բիթլ փողոց, 1874
Յորք, Փենսիլվանիա

Սիրելի մայրիկ, շնորհակալություն դրամի համար, շուտով տանը կլինեմ, ամեն ինչ լավ է։

Նա կարդաց հեռագիրը, հետո որոշեց «լավ» բառը փոխել «հրաշալի» բառով։ Հետո մի պահ հիշեց երիտասարդին և ավելացրեց. «Սիրով, Ջոն»։ Նա գնաց միստր Գրոգանի տեղը՝ հեռագրի սեղանի մոտ և աղդանշան ուղարկեց գծի մյուս ծայրը։ Մի քանի վայրկյան հետո նրա կանչին պատասխանեցին, և Սփանգլերը ժպտալով հեռագիրն ուղարկեց գծի մյուս ծայրը։ Երբ ավարտեց հաղորդումը, վեր կացավ և գնաց իր սեղանի մոտ։

Վիլյամ Գրոգանը ներս մտավ և նստեց իր աթոռին, որտեղ երիտասարդն էր նստել։

— Այժմ ինչպե՞ս ես,— հարցրեց Սփանգլերը ծեր հեռագրիչին։

— Ավելի լավ, անշուշտ,— ասաց միստր Գրոգանը։— Երկու բաժակ խմեցի, Թոմ։ Լսեցի զինվորների երգը։ Նրանք սիրում են այդ դաշնամուրը և այդ հին երգերը, երգեր, որոնք երբեք լսելու առիթ չեն ունեցել։

— «Դու ինձ սիրում ես, այնպես չէ՞»,— ասաց Սփանգլերը,— «Այո, սիրում ես, ինքդ գիտես, որ սիրում ես»։ Ահա թե ինչ է ասում նա, Վիլլի,— ասաց Սփանգլերը ծեր հեռագրիչին,— և թե ինչ ձևով է ասում։ Ինձ թվում է, որ ես կամուսնանամ նրա հետ։

Սփանգլերը մի պահ դադարեց Դիանա Սթիդի մասին երազելուց և ուշադիր նայեց իր հին ընկերոջ դեմքին։

— Հին երգերը,— ասաց նա,— հրաշալի են։

— Թոմ,— ասաց միստր Գրոգանը,— հիշո՞ւմ ես, թե Դեյվընպորթը ինչպիսի էր այդ բալլադները երգում։

— Անշուշտ,— պատասխանեց Սփանգլերը,— քանի դեռ կա այս գրասենյակը, իմ ականջներում կհնչի նրա ձայնը։ Հենց հիմա էլ ես լսում եմ նրան։ Բայց ոչ միայն հին բալլադները, այլև եկեղեցական երգերը։ Մի մոռանա այն սաղմոսները, որ ծեր Դեյվընպորթը երգում էր ամեն կիրակի։

— Ես դրանք չեմ մոռացել,— ասաց միստր Գրոգանը,— բոլորն էլ հիշում եմ։ Նա սիրում էր ցույց տալ, որ անհավատ է, բայց ամեն կիրակի կրոնական հիմներ էր երգում, ծխախոտ ծամելով, հեռագրեր ուղարկելով, երգելով և ծխախոտի մնացորդը թքամանի մեջ գցելով։ Առավոտ շուտ երգում էր. «Բարի գալուստ, հրաշալի արշալույս, ամբողջ օրը թող սուրբ լինի»։ Նա մեծ մարդ էր, Թոմ։ Հետո բղավում էր. «Այս օրը լույսի օր է. եղիցի լույս»։

— Հիշում եմ,— պատասխանեց Սփանգլերը,— հիշում եմ։ «Եղիցի լույս»։ Եվ հետո ծամած ծխախոտը թքում էր թքամանի մեջ։

— Դրանից հետո,— ասաց միստր Գրոգանը,— երգում էր. «Տեր, առավոտվա և գիշերվա աստված, շնորհակալ ենք քո պարգևի՝ լույսի համար»։ Մեծ անհավատ էր, ամեն ինչից առավել սիրում էր լույսը և կյանքը։ Եվ հետո, օրվա վերջում, դանդաղ վեր էր կենում աթոռից, թեվերը տարածում էր ու մեղմաձայն երգում. «Այժմ օրը ավարտված է, գիշերն է մոտենում»։ Նա գիտեր բոլոր հին հրաշալի երգերը և բոլորն էլ սիրում էր։ «Փրկիչ», գոռում էր նա, ձևացնելով, իբրև թե անհավատ է և ծաղրում է։ «Փրկիչ, օրհնիր մեր երեկոն նախքան մեր հոգիների

հանգստանալը։ Մեր ցանկություններն ու մեղքը խոստովանում ենք քեզ. դու կարող ես փրկել և ամոքել մեզ»։

Հեռագրիչը լռեց՝ հիշելով իր ընկերոջը, որը տարիներ առաջ մահացել էր։

— Ճշմարիտ է, Թոմ,— ասաց նա,— ճշմարիտ է։ Հեռագրատան վարիչը ժպտաց իր ծերունի ընկերոջը և խփեց նրա ուսին, ապա գնաց լույսը հանգցնելու և գրասենյակը փակելու։

Գլուխ 23

ՄԱՀ, ԻԹԱՔԱ ՄԻ ԳՆԱ

Հոմեր Մաքոլին վերջապես պառկեց, բայց անկողնում անհանգիստ շուռումուռ էր գալիս։ Երազում տեսավ, որ ինքը նորից վազում էր ցածր արգելքներով երկու հարյուր քսան յարդ արգելավազքը, բայց ամեն անգամ արգելքին մոտենալիս Բայֆիլդը դեմն էր ելնում և ուզում էր կանգնեցնել։ Այնուամենայնիվ, նա փորձում էր թռչել, և երկուսով ընկնում էին։ Հաջորդ թռիչքին Բայֆիլդը դարձյալ այդտեղ էր։ Ի վերջո, Հոմերի ոտքը այնպես ցավեց, որ երբ նորից փորձեց թռչել, ընկավ։ Նա վեր կացավ, խփեց Բայֆիլդի դնչին ու գոռաց.

— Բայֆիլդ, դուք չեք կարող ինձ կանգնեցնել։ Երբեք չեք կարող ինձ կանգնեցնել. ինչ տեսակ վազք էլ որ լինի՝ ցածր արգելքներով, թե բարձր։

Նա նորից սկսեց վազել, սկզբում կաղալով, հետո ավելի ու ավելի թեթև, բայց հաջորդ արգելքը շատ բարձր էր, գրեթե ութ ոտնաչափ։ Այնուամենայնիվ, Հոմեր Մաքոլին, Իթաքայի, գուցեև ամբողջ Կալիֆորնիայի ամենամեծ մարդը, հրաշալի կերպով հաղթահարեց այդ արգելքը։

Մյուս երազում նա հեռագրիչի համազգեստ էր հագել և հեծանիվը արագ քշում էր փողոցն ի վար։ Հանկարծ Բայֆիլդը հայտնվեց նրա ճանապարհին։ Բայց Հոմերը նրան թափով մի կողմ հրեց։

— Բայֆիլդ,— բղավեց նա,— ես ձեզ ասացի, որ դուք չեք կարող ինձ կանգնեցնել։— Նա բարձրացրեց ղեկը, և հեծանիվը գետնից բարձրանալով թռավ Բայֆիլդի գլխի վրայով ու թեթև ցած իջավ մյուս կողմում։ Սակայն հենց որ հասավ գետնին, Բայֆիլդը նորից կտրեց նրա ճանապարհը։ Հեծանիվը նորից բարձրացավ գետնից և սկսեց պտտվել

նրա գլխի վերև։ Բայց այս անգամ այն մնաց վերևում։ Բայֆիլդի գլխից քսան ոտք բարձր։ Նա կանգնեց փողոցում զարմացած և դժգոհ.

— Դու իրավունք չունես, դու խախտում ես ձգողականության օրենքը։

— Իմ ի՞նչ գործն է ձգողականության կամ միջին հավասարության, պահանջի ու հատուցման օրենքները և կամ մեկ այլ որևէ օրենք։ Դուք ինձ կանգնեցնել չեք կարող։ Դուք չեք կարող ինձ կանգնեցնել, հասկացա՞ք։ Ճիճու, փոշի, կեղտ, ահա թե ինչ եք դուք, ես ձեզ հետ գործ չունեմ։— Ցրիչը շարունակեց իր թռիչքը՝ փողոցում մենակ թողնելով այդ խայտառակ և ստոր մարդուն։

Այնուհետև Հոմերը հեծանիվով թռավ բարձր, սև ամպերի միջով։ Երբ ցրիչը թռչում էր երկնքով, նա տեսավ ցրիչի համազգեստով մի ուրիշ հեծանվորդի, որը սև ամպերի մեջ ավելի արագ էր սլանում, քան ինքը։ Երկրորդ ցրիչը զարմանալիորեն նման էր Հոմերին, կարծես նա հենց ինքն էր, բայց միևնույն ժամանակ Հոմերը վախենում էր նրանից։ Հոմերը սուրաց նրա ետևից, որպեսզի պարզի նրա ով լինելը։

Երկու հեծանվորդները երկար տարածություն անցան, մինչև որ Հոմերը բավական մոտեցավ նրան։ Հանկարծ մյուս ցրիչը շուռ եկավ Հոմերին նայելու, և Հոմերը զարմանքով նկատեց, թե ինչպես մյուս ցրիչը հար և նման էր իրեն։ Ոչ այնքան արտաքին նմանությունը, որքան ինչ-որ ներքին նախազգացում Հոմերին ասում էր, թե իր ախոյանը Մահվան սուրհանդակն է։ Հեծանվորդները արագ մոտենում էին Իթաքային։ Հոմերը արշավեց Մահվան սուրհանդակի ետևից, ավելի արագ շարժվելով, քան երբևէ։ Հեռվում նա տեսնում էր քաղաքի հատուկենտ լույսերը և գեղեցիկ, դատարկ փողոցները։ Հոմերը վճռեց անցնել այդ ախոյանից ու թույլ չտալ, որ նա մտնի Իթաքա։ Աշխարհում ոչ մի բան ավելի կարևոր չէր, քան թույլ չտալ, որ Մահվան սուրհանդակը Իթաքա մտնի։

Երկու հեծանվորդները արշավում էին ուժգնորեն և պատշաճության սահմաններում, առանց որևէ խարդախության։ Արդեն երկուսն էլ հոգնած էին, բայց, ի վերջո, Հոմերը հասավ մյուս հեծանվորդին և սկսեց նրան Իթաքայից հեռու վանել։ Սակայն հանկարծական արագությամբ Մահվան սուրհանդակը վերադարձավ քաղաք։ Խորապես հուսախաբված, բայց դեռևս ամբողջ ուժգնությամբ քշելով հեծանիվը, Հոմերը տեսավ, թե ինչպես մյուս համբավաբերը հասավ Իթաքա։ Այնուհետև Հոմերն այլևս չկարողացավ առաջանալ։ Մահվան սուրհանդակին վանելու համար ուժ չէր մնացել նրա մեջ։ Տղան համարյա ընկավ հեծանիվի վրա և

դառն արտասվեց։ Հեծանիվն սկսեց սրընթաց ցած ընկնել, և Հոմերը գոռաց մյուսին։

— Ետ վերադարձի՛ր, Իթաքա մի՛ գնա, նրանց հանդիստ թող, նա դարձի՛ր։

Ահավոր վշտից տղան լաց եղավ։

Սանթա Կլարա փողոցի տանը փոքրիկ Յուլիսիսը կանգնած էր Հոմերի կողքին և լսում էր նրա երազի մեջ արտասվելը։ Մութ սենյակի միջով նա գնաց մոր անկողնի մոտ և արթնացրեց նրան։ Երբ մայրը վեր կացավ, տղան բռնեց նրա ձեռքից, և նրանք լռությամբ եկան Հոմերի մահճակալի մոտ։ Միսիս Մաքոլին մի պահ լսեց որդուն, Յուլիսիսին պառկեցրեց, վերմակով ծածկեց, ապա նստեց արտասվող որդու կողքին։ Շատ քնքշությամբ նա խոսեց որդու հետ։

— Հանգստացիր, Հոմեր,— ասաց նա,— հանգստացիր։ Շատ ես հոգնել, պետք է հանգստանալ։ Դե, քնիր, հանգիստ քնիր։

Ցրիչը դադարեց արտասվելուց, և շուտով նրա դեմքի հուզված արտահայտությունը չքացավ։

— Դե, քնիր,— ասաց մայրը նրան,— խաղաղ քնիր։

Տղան քնեց։ Մայրը նայեց կրտսեր որդուն, որը նույնպես քնել էր։ Եվ հանկարծ սենյակի անկյունում տեսավ Մաթյու Մաքոլին, որը նայում էր նրան ու ժպտում։ Կինը կամացուկ վեր կացավ, վերցրեց զարթուցիչը և վերադարձավ իր սենյակը։

Քունը ցրիչին սարսափի տիրապետությունից փոխադրեց ջերմության, լույսի և հանգստի թագավորություն։ Հոմեր Մաքոլին այս անգամ իրեն գտավ մի աղբյուրի մոտ, թզենու տակ մեջքի վրա պառկած։

— Այս վայրը,— երազում ասաց նա ինքն իրեն,— պետք է Ռիվերդեյլում լինի, որտեղ առվակի մոտ տեսել եմ թզենին և արևը, որն այնպես հրճվագին այրում էր, և որտեղ ամեն ինչ ժպտում էր շուրջը։ Հիշում եմ այս վայրը։ Անցյալ ամառ Մարկուսն ու ես եկանք այստեղ լողանալու, որից հետո նստեցինք առվակի մոտ և զրուցեցինք, թե ինչ ենք անելու, երբ մեծանանք։— Եվ այժմ, գիտակցելով այդ վայրի հաճելիությունը և հիշողությամբ զգալով այդ ջերմությունը, Հոմերը հանգիստ մեկնվեց ծառի տակի կանաչին և լրիվ մոռացավ, որ ինքը քնած է։

Նրա հագին նորից այն հնամաշ կոստյումն էր, որը հագել էր այն ամառ՝ Մարկուսի հետ այդտեղ եղած ժամանակ։ Իր առջև, փիրուզի հողի մեջ խրված, նա տեսավ ձկնորսական ձողը, բայց այդ ձողը ամառվա այդ օրվա հետ ոչ մի կապ չուներ և այստեղ գտնվում էր շատ հին ժամանակներից։ Այժմ, առատորեն աճած խոտի մեջ, Հոմեր Մաքոլին տեսավ հրաշագեղ Հելեն Էլիոթին, իր նման բոբիկ և թեթև հագնված,

որը մի նեղ կածանով դեպի իր կողմն էր գալիս։ «Դա Հելեն Էլիոթն է,— ասաց Հոմերը ինքն իրեն,— դա իմ սիրած աղջիկն է»։

Նա ժպտաց, ապա վեր կացավ ու գնաց նրան ընդառաջ։ Առանց մի բառ արտասանելու և հանդիսավորությամբ Հոմերը բռնեց աղջկա ձեռքը, և նրանք միասին քայլեցին դեպի թզենին։ Այստեղ նա հանեց իր շապիկն ու տաբատը և սուզվեց առվի մեջ։ Աղջիկը գնաց ծառի բնի ետև ու հանեց զգեստը։ Հոմերը դիտեց, թե նա ինչպես գնաց դեպի առուն, մի պահ կանգ առավ և հետո սուզվեց ջրի մեջ։ Նույն հանդիսավորությամբ նրանք լող տվեցին և, կարճ ժամանակ անց դուրս գալով, պառկեցին ավազի վրա՝ արևի տակ ու քնեցին։

Գլուխ 24

ԾԻՐԱՆԻ ԾԱՌԸ

Յուլիսիս Մաքոլին շատ վաղ արթնացավ և արևի տակ առաջին ճառագայթների տակ թուլկոտելով գնաց կով ունեցող հարևանի բակի ուղղությամբ։ Բակ հասնելով, Յուլիսիսը տեսավ կովը։ Փոքրիկ տղան կանգնեց և երկար դիտում էր։ Վերջապես կովատերը դուրս եկավ անակից՝ ձեռքին մի դույլ և մի աթոռակ։ Մարդը մոտեցավ կովին և սկսեց կթել։ Յուլիսիսը ավելի մոտեցավ և կանգնեց մարդու ճիշտ ետևը։ Եվ, որովհետև դեռևս լավ չէր տեսնում, նա ծունկի եկավ համարյա կովի տակ։ Մարդը տղային տեսավ, բայց ոչինչ չասաց։ Նա շարունակեց կթել։ Իսկ կովն ահա շրջվեց և նայեց Յուլիսիսին, Յուլիսիսն էլ նայեց կովին։ Ըստ երևույթին, կենդանուն դուր չեկավ տղայի այդքան մոտ լինելը։ Յուլիսիսը ելավ կովի տակից, հեռացավ և շարունակեց դիտել։ Կովը իր հերթին նայում էր Յուլիսիսին այնպես, որ փոքրիկ տղան հասկացավ, որ իրենք բարեկամացան։

Տուն վերադառնալու ճանապարհին Յուլիսիսը կանգ առավ դիտելու, թե ինչպես է մյուս հարևանը ամբար շինում։ Այդ մարդը շատ բարձրահասակ էր, նյարդային և անհամբեր. նա չպետք է ձեռնարկեր այդպիսի աշխատանք։ Նա կատաղությամբ էր աշխատում, ամեն տեսակ սխալներ թույլ տալիս, Յուլիսիսը դիտում էր նրան ու ոչինչ չէր հասկանում։

Յուլիսիսը Սանթա Կլարա պողոտա վերադարձավ ճիշտ այն ժամանակ, երբ միստր Արենան հեծանիվով աշխատանքի էր գնում։ Մերի Արենան դռնից ձեռքով հրաժեշտ տվեց հորը և տուն մտավ։

Շաբաթ էր, Իթաքայի դպրոցականների ամենասիրելի օրը։ Փոքր-

ինչ հեռու գտնվող մի տնից դուրս եկավ ութ-ինը տարեկան մի տղա։ Յուլիսիսը ձեռքով ողջունեց այդ տղային և տղան պատասխանեց։ Այդ տղան Լայոնել Քեբոտն էր, որին թեև հարևանները հիմար էին համարում, սակայն մարդկային մի մեծ էակ էր, հավատարիմ, բարի և վեհանձն։ Մի պահ հետո Լայոնելը նորից նայեց Յուլիսիսին և, չիմանալով անելիքը, դարձյալ ձեռքով ողջունեց։ Յուլիսիսը պատասխանեց։ Այսպես այդ փոխադարձ ողջույնը շարունակվեց կանոնավոր ընդմիջումներով, մինչև որ Արայի մթերային խանութի կողքի տնից դուրս եկավ Օգյուստ Գոթլիբը։

Օգին թաղի երեխաների առաջնորդն էր դարձել այն օրվանից, ինչ Հոմեր Մաքոլին, տասներկու տարեկան դառնալով, հրաժարվել էր այդ դիրքից։ Նոր առաջնորդը նայեց շուրջը, տեսնելու համար, թե հետևորդներից ովքեր են ներկա։ Նա արհամարհեց Լայոնելին՝ իբրև հիմարի և Յուլիսիսին՝ իբրև փոքրի, սակայն ողջունեց երկուսին էլ։ Ապա գնաց փողոցի կենտրոնը և սուլեց՝ լրագրավաճառ տղաներին հատուկ ոճով։ Դա մի զիլ սուլոց էր, շատ հեղինակավոր, խիստ հրամայական ու անպայմանորեն վճռական։ Օգին սպասեց այն մարդու վստահությամբ, որը գիտե, թե ինչ է անում և ինչ արդյունքի պիտի հասնի։ Անմիջապես լուսամուտներ բացվեցին և պատասխան սուլոցներ լսվեցին։ Շուտով մի խումբ երեխաներ վազելով եկան փողոցի անկյունը։ Մի քանի րոպեում խումբը հավաքված էր։ Օգի Գոթլիբը՝ առաջնորդը, Նիքի Փալոդան, Ալֆ Ռայֆը և Շեկ Մանուկյանը։

— Ո՞ւր եք գնում, Օգի,— ասաց Նիքին։

— Գնում ենք տեսնելու, թե Հենդերսոնի ծիրանները հասե՞լ են,— ասաց Օգին։

— Ես կարո՞ղ եմ գալ, Օգի,— հարցրեց Լայոնելը։

— Արի, Լայոնել,— ասաց Օգին,— եթե հասած լինեն, մի քիչ կողանա՞ս։

— Գողանալը մեղք է,— ասաց Լայոնելը։

— Ճիշտ է, բայց դա չի վերաբերում ծիրաններին,— հանդիսավոր ասաց Օգին,— իսկ դու, Յուլիսիս,— ասաց նա,— գնա տուն։ Սա փոքր տղաների գործը չէ։ Վտանգավոր է։

Յուլիսիսը երեք քայլ հեռացավ, կանգնեց և դիտեց։ Նա վիրավորված չէր Օգիի հրամաններից։ Նա հասկանում էր օրենքը։ Նա պարզապես դեռ պետք եղածին չափ մեծ չէր։ Ու թեև ուզում էր հարգել օրենքը, բայց չէր կարողանում դիմանալ խմբի մեջ լինելու ցանկությանը։

Տղաները շարժվեցին դեպի Հենդերսոնի այգին։ Փոխանակ փողոց-

ներով ու մայթերով գնալու, նրանք անցնում էին դատարկ բակերով, մագլցում էին ցանկապատերի վրայով։ Նրանք ուզում էին այդտեղ հասնել դժվարին, արկածախնդրական ճանապարհով։ Որոշ հեռավորությունից նրանց հետևում էր Յուլիսիսը։

— Հասած ծիրանը աշխարհի ամենահամեղ միրգն է,— ասաց Օգին իր խմբի անդամներին։

— Մի՞թե ծիրանը մարտին է հասնում,— հարցրեց Նիքի Փալոդան։

— Նախ, համարյա թե ապրիլն է,— ասաց Օգին,— և երկրորդ, վաղահաս ծիրանը շատ կարճ ժամանակում հասնում է, եթե արև է լինում։

— Վերջերս անձրև էր գալիս,— ասաց Ալֆ Ռայֆը։

— Քո կարծիքով, որտեղի՞ց է ծիրանը սնունդ առնում,— ասաց Օգին,— ջրից և անձրևից։ Ծիրանի համար անձրևը նույնքան անհրաժեշտ է, որքան արևը։

— Ցերեկը՝ արև, գիշերը՝ անձրև,— ասաց Շեկ Մանուկյանը,— տաքացրու և ջուր տուր։ Ես գրազ կգամ, որ այդ ծառի վրա բազմաթիվ հասած ծիրաններ կլինեն։

— Երանի այդպես լինի,— ասաց Ալֆ Ռայֆը։

— Ծիրանների համար դա դեռ շատ շուտ է,— ասաց Նիքի Փալոդան։— Անցյալ տարի հունիսին հազիվ հասան։

— Դա անցյալ տարի էր,— ասաց Օգին,— այս տարին ուրիշ է։

Շուրջ հարյուր մետր հեռավորության վրա տղաները կանգնեցին՝ հիանալու համար այդ հռչակավոր ծիրանի ծառով, որը ամբողջությամբ կանաչ էր, գեղեցիկ, շատ հին՝ շատ մեծ։ Այն կանգնած էր Հենդերսոնի բակի անկյունում։ Տասը տարի էր, ինչ թաղի տղաները հարձակվում էին ծերուկ Հենդերսոնի ծիրանի ծառի վրա։ Հին, կիսաքանդ տան մեջ միստր Հենդերսոնը ամեն գարնան ուրախ անհամբերությամբ սպասում էր նրանց գալուն, միշտ զոհացնելով մանուկներին, որովհետև երևում էր վերջին բոպեին ու, վախեցնելով, փախցնում էր նրանց։ Եվ հիմա էլ, լուսամուտի վարագույրի ետևից, միստր Հենդերսոնը գլուխը բարձրացրեց գրքից.

— Օհո՞, մի տեսեք,— ասաց նա ինքն իրեն։— Մարտի մեջ, համարյա ձմռանը, ծիրան գողանալու են գալիս։ Մի սրանց նայեցեք։— Նա նորից նայեց տղաներին, շշնջալով, կարծես թե ինքը դրանցից մեկը լիներ։— Գալիս են ծերուկ Հենդերսոնի ծառից ծիրան գողանալու,— ասաց նա։— Ահա, գալիս են, կամացուկ մոտենում են, հա, հա,— ծիծաղեց նա,— մի դրանց նայիր, նայիր այդ պուճուրին։ Հավատացնում եմ՝ չորս տարեկանից մեծ չի լինի։ Նորելուկ է։ Եկեք, եկեք, մոտեցեք իմ

հրաշալի ծառին։ Եթե կարողանայի այս պահին ձեզ համար ծիրանները հասցնել, անպայման կանեի...

Միստր Հենդերսոնը դիտում էր, թե ինչպես Օգին հրահանգում, ուղղություն էր տալիս տղաներին, առաջնորդում էր հարձակումը։ Տղաները աշալրջությամբ շրջապատեցին ծառը։ Նրանց սրտերում վախի ու հույսի խառնուրդ կար։ Եթե նույնիսկ ծիրանները խակ լինեին, գործի էությունը չէր փոխվում, նշանակություն չուներ՝ իրենք հասած ծիրանի գողության էին ելել, թե՝ խակ։ Իհարկե, լավ կլիներ, որ ծիրանները հասած լինեին։ Նրանք վախենում էին Հենդերսոնից, վախենում էին մեղքից, բռնվելու վտանգից և հանցանքից, վախենում էին, որ մի բիչ շուտ են եկել, և ծիրանները կարող են խակ լինել։

— Գուցե տանը չէ, Օգի,— շշնջաց Նիքի Փալոդան, երբ տղաները համարյա հասել էին ծառին։

— Տանն է,— ասաց Օգին,— նա միշտ տանն է։ Պարզապես թաքնվում է։ Դա ծուլակ է։ Նա ուզում է մեզ բռնել։ Բոլորդ ուշադիր եղեք։ Դժվար է ասել, թե նա որտեղ կլինի։ Իսկ դու, Յուլիսիս, անմիջապես տուն գնա։

Յուլիսիսը հնազանդությամբ երեք քայլ ետ գնաց և կանգնեց դիտելու արտասովոր մենամարտը արտասովոր ծառի հետ։

— Հասա՞ծ են, Օգի,— ասաց Շեկը,— ինչ-որ դեղնավուն բան տեսնո՞ւմ ես։

— Միայն կանաչ,— պատասխանեց Օգին։— Դրանք տերևներ են։ Ծիրանները տակն են լինում։ Բոլորդ հանգիստ մնացեք։ Որտե՞ղ է Լայոնելը։

— Ես այստեղ եմ,— շշնջաց Լայոնելը։ Նա սարսափելի վախեցել էր։

— Լավ,— ասաց Օգին,— պատրաստ եղեք։ Հենց որ ծերուկ Հենդերսոնին տեսնեք, փախեք։

— Իսկ որտե՞ղ է նա,— ասաց Լայոնելը այնպես, կարծես Հենդերսոնը կարող էր անտեսանելի լինել և կամ նապաստակից ոչ մեծ մի բան, որը կարող է խոտերի միջից հանկարծ վրա ցատկել։

— Ի՞նչ է նշանակում որտեղ է,— ասաց Օգին,— նա հավանաբար տանն է, բայց երբեք չի կարելի հասկանալ Հենդերսոնին։ Կարող է թաքնված լինել դրսում, ինչ-որ տեղ, սպասելով, որ մեզ անակնկալի բերի։

— Դո՞ւ ես ծառը բարձրանալու, Օգի,— հարցրեց Ալֆ Ռայֆը։

— Հապա էլ ո՞վ,— ասաց Օգին,— իհարկե ես, բայց նախ պետք է տեսնենք ծիրանը հասա՞ծ է։

— Հասած թե խակ,— ասաց Շեկ Մանուկյանը,— մենք պետք է գոնե մի քանի հատ գողանանք։

— Անշուշտ,— ասաց Օգին։— Անշուշտ պետք է գողանանք։ Իսկ եթե հասած է, պետք է շատ գողանանք։

— Իսկ վաղը, կիրակնօրյա դպրոցում, ի՞նչ պետք է ասես, Օգի,— հարցրեց Լայոնելը։

— Ծիրան գողանալը այն գողությունը չէ, որ գրված է Ավետարանում,— ասաց Օգին։— Սա ուրիշ բան է։

— Այդ դեպքում ինչո՞ւ ես վախենում,— հարցրեց Լայոնելը։

— Ո՞վ է վախենում,— ասաց Օգին։— Մենք պետք է պարզապես զգույշ լինենք և վերջ։ Ինչո՞ւ բռնվենք, երբ կարող ենք փախչել։

— Ես ոչ մի հասած ծիրան չեմ տեսնում,— ասաց Լայոնելը։

— Դու ծառը տեսնում ես, չէ՞,— հարցրեց Օգին։

— Ծառը շատ լավ տեսնում եմ,— ասաց Լայոնելը,— բայց միայն այդքանը։ Պարզապես մի մեծ ծառ է, ամբողջությամբ կանաչ։ Բայց, իրոք, շատ գեղեցիկ ծառ է, այնպես չէ՞, Օգի։

Խումբն արդեն ծառի տակ էր։ Յուլիսիսը, մի քիչ հեռվից, հետևում էր նրանց։ Նա բոլորովին չէր վախենում։ Նա ամենևին բան չէր հասկանում, բայց վստահ էր, որ սա շատ կարևոր գործ է՝ և կապված ծառի հետ, և ծիրանի։ Տղաները ուսումնասիրեցին ծիրանենու ճյուղերը, որոնք կանաչ էին, մատղաշ տերևներով։ Ծիրանները բոլորն էլ փոքր էին, շատ խակ և հավանաբար շատ պինդ։

— Դեռ չեն հասել,— ասաց Ալֆ Ռայֆը։

— Ճիշտ է,— ընդունեց Օգին։— Ինձ թվում է, որ մի քանի օր էլ պետք է սպասել։ Գուցե հաջորդ շաբաթ։

— Հաջորդ շաբաթ, անպայման,— ասաց Շեկը։

— Բայց շատ առատ է,— ասաց Օգին։

— Մենք չենք կարող դատարկ ձեռքով վերադառնալ, Օգի,— ասաց Շեկը։— Գոնե մի հատ պիտի քաղենք, խակ թե հասած, գոնե մի հատ, անպայման։

— Օ քեյ,— ասաց Օգին։— Ես մի հատ կքաղեմ, իսկ դուք պատրաստ եղեք փախչելու։— Օգին թռավ, կախվեց մի ցածր ճյուղից։ Խումբը, միստր Հենդերսոնը և Յուլիսիսը հետևում էին նրան հիացումով, զարմանքով և հափշտակությամբ։ Այդ պահին միստր Հենդերսոնը տնակից դուրս եկավ ու կանգնեց աստիճանների վրա։ Բոլոր տղաները ճընճղուկների երամի նման շաղ եկան։

— Օգի՜,— բղավեց Շեկ Մանուկյանը,— Հենդերսոնը։

Ինչպես վախեցած օրանգուտանգը ջունգլիում, Օգին ծառի վրայից

նայեց շուրջը, կախվեց մի ճյուղից և իրեն ցած գցեց։ Նա վազել սկսեց ոտքը դեռ գետնին չառած, բայց նկատելով Ցուլիսիսին, հանկարծ կանգ առավ և գոռաց տղայի վրա.

— Ցուլիսի՛ս, վազի՛ր, փախի՛ր։

Սակայն Ցուլիսիսը տեղից չշարժվեց։ Նա ոչինչ չէր հասկանում։ Օգին ետ դարձավ, վազեց դեպի տղան, գրկեց նրան ու ետ վազեց, իսկ Հենդերսոնը նայում էր։ Երբ տղաները անհայտացել էին, ու ամեն ինչ նորից խաղաղվել էր, ծերունին ժպտաց, նայեց ծառին։ Հետո շրջվեց ու տուն մտավ։

Գլուխ 25

ԵՐՋԱՆԻԿ ԵՂԻՐ, ԵՐՋԱՆԻԿ ԵՂԻՐ

Երուկ Հենդերսոնի այգուց փախչելուց հետո Օգյուստ Գոթլիբի գաղտնի ընկերության անդամները մեկը մյուսի ետևից վերադարձան և հավաքվեցին Արայի խանութի առջև՝ սպասելով իրենց առաջնորդին։ Ի վերջո, մի նրբանցքից դուրս եկավ այդ մեծ մարդը՝ Ցուլիսիսի ձեռքից բռնած։ Գաղտնի ընկերության անդամները լուռ սպասեցին առաջնորդի մոտենալուն։ Երբ նա հասավ, բոլորը հարցական նայեցին նրա դեմքին, և Ալֆ Ռայֆը վերջապես հարցրեց.

— Ծիրան կարողացա՞ր քաղել, Օգի։

Առաջնորդը նայեց Թերահավատին և ասաց.

— Իզուր ես հարցնում։ Դու ինքդ տեսար, որ ես ծառի վրա էի, ուրեմն պիտի իմանաս, որ քաղել եմ։

Խմբի բոլոր անդամները սկսեցին խոսել։ (Բոլորը, բացի Լայոնելից, որը, ըստ երևույթին, խմբի անդամ չէր)։ Նրանք հիացմունքով բացականչեցին.

— Տեսանենք, Օգի։ Ցույց տուր ծիրանը։

Փոքրիկ Ցուլիսիսը նայում էր նրանց, բայց լրիվ չէր ըմբռնում կատարվածի խորհրդավոր իմաստը, թեև վստահ էր, որ այն, ինչ կատարվում է, այդ պահին ավելի կարևոր է, քան աշխարհում որևէ ուրիշ բան։

— Ցույց տուր տեսնենք գողացածդ ծիրանը, Օգի— նորից ասացին խմբի անդամները,— դե ցույց տուր։

Օգյուստ Գոթլիբը առանց բառ արտասանելու ձեռքը մտցրեց վերնազգեստի գրպանը և, դուրս հանելով սեղմված բռունցքը, առաջ մեկ-

նեց։ Հետևորդները շրջապատեցին նրան՝ հայացքները բռունցքից չհեռացնելով։ Երբ բոլորը հարգալից լռեցին, Օգյուստ Գոթլիբը բացեց ափը։

Այնտեղ, ափի մեջ, կար մի փոքրիկ, կանաչ, լորի ձվի մեծության ծիրան։

Մեծ մարգարեի հետևորդները ժպտացին, ափի մեջ տեսնելով այդ հրաշքը, և Լայոնելը, բոլորի մեջ ամենաբարին, որը թեև կրոնական այդ աղանդի լիիրավ անդամը չէր, բարձրացրեց Յուլիսիսին, որպեսզի նա էլ կարողանար զմայլվել այդ կանաչավուն գնդով։ Տեսնելով կանաչ ծիրանը, Յուլիսիսը ցնցվեց, ցած իջավ և վազեց դեպի տուն։ Նա ոչ թե հիասթափվել էր, այլ ուզում էր տեսածը որևէ մեկին պատմել։

Այդ ժամանակ խանութից դուրս եկավ ինքը Արան, այն մարդը, որը յոթ տարի առաջ, Կալիֆոռնիայի Ինթաքա քաղաքի այդ անկյունում հիմնել էր «Արայի շուկա» կոչվող կրպակը։ Սպիտակ գոգնոցով նպարավաճառը բարձրահասակ, նիհար, թախծոտ, բայց միաժամանակ զվարթ մարդ էր։

Նա մի պահ կանգնեց խանութի շեմքին, դիտեց նոր մեսիային, և նրա աշակերտներին, լսեց նրանց հիացական բացականչությունները։ այբբազան կուռքի առաջ, ապա ասաց.

— Է՜յ, Օգի, դո՛ւ, Շեկ, Նիքի, Ալֆա, դո՛ւ, Լայոնել. այդ ի՞նչ բան է՝ Միացյալ Նահանգների կոնգրե՞սը Վաշինգտոնում։ Գնացեք և ուրիշ տեղ գումարեցեք ձեր այդ կարևոր հավաքույթը։ Սա խանութ է, ոչ թե կոնգրես։

— Այս րոպեին, միստր Արա,— պատասխանեց Օգյուստ Գոթլիբը,— մենք անմիջապես կգնանք փողոցի մյուս կողմը։ Ուզո՞ւմ եք ծիրան տեսնել։

— Դու ծիրա՞ն ունես,— ասաց խանութպանը,— որտեղի՞ց։

— Ծառի վրայից,— ասաց Օգին,— ուզո՞ւմ եք տեսնել։

— Հիմա ծիրանի ժամանակը չի,— ասաց խանութպանը։— Ծիրանը կլինի երկու ամիս հետո, մայիսին։

— Սա մարտի ծիրան է,— խանութպանին ասաց Օգյուստ Գոթլիբը՝ թափառող դերվիշների առաջնորդը։— Ա՜յ, նայեցեք։— Նա դարձյալ բացեց բռունցքը, մեջտեղ հանելով կանաչ, կարծր պտուղը։— Նայեցեք, միստր Արա,— ասաց Օգին և ավելացրեց,— գեղեցիկ է, այնպես չէ՞։

— Լավ, լավ,— ասաց միստր Արան,— գեղեցիկ է, շատ գեղեցիկ ծիրան է։ Այժմ գնացեք և ուրիշ տեղ գումարեցեք Միացյալ Նահանգների կոնգրեսը։ Այսօր շաբաթ է։ Թույլ տվեք առևտուր անել։ Ի՞նչ եք

առավոտ վաղ հավաքվել այս փոքրիկ խանութի առջև։ Փոքրիկ խանութ է, հաճախորդները կվախենան, կփախչեն։

— Շատ լավ, միստր Արա,— ասաց Օգին,— մենք չենք խոնվի ձեր խանութի առաջ։ Մենք փողոցի մյուս կողմը կգնանք։ Եկեք, տղաներ։

Միստր Արան դիտեց ֆանտիկոս աղանդավորների հեռանալը։ Նա ուզում էր խանութ վերադառնալ, երբ մի փոքրիկ տղա, շատ նման իրենն, խանութից դուրս եկավ և կանգնեց կողքին։

— Հայրիկ,— ասաց փոքրիկը։

— Ի՞նչ է, Ջոն,— հայրը պատասխանեց իրենց մայրենի լեզվով։

— Ինձ խնձոր տուր,— ասաց նա լրջությամբ, համարյա տխուր։

Հայրը բռնեց որդու ձեռքը, նրանք մտան խանութ և մոտեցան այն արկղին, որի մեջ թարմ մրգեր կային։

— Խնձո՞ր,— հարցրեց հայրը տղային։ Նա վերցրեց արկղի լավագույն խնձորը և տվեց տղային,— ահա քեզ խնձոր։

Հայրը վաճառասեղանի ետևն անցավ մի հաճախորդի սպասարկելու և միաժամանակ նայեց որդուն, որը նույնքան թախծոտ էր, որքան ինքը, թեև առնվազն քառասուն տարվա տարբերություն կար նրանց միջև։ Տղան մի մեծ պատառ կծեց, դանդաղ ծամեց, կուլ տվեց և մի պահ հորը թվաց, որ նա էլ է մտածում խնձորի մասին, ինչպես ինքը։ Խնձորը, սակայն, տղային երջանիկ չդարձրեց։ Նա այն դրեց սեղանին, հոր առջև, և հետո նայեց նրան։ Ահավասիկ նրանք, հայր և որդի, Կալիֆոռնիայի Իթաքա քաղաքում, հավանաբար յոթ հազար մղոն հեռու այն վայրից, որը դարերով իրենց հայրենիքն էր եղել։ Բնական է, որ թախիծ կար նրանցից յուրաքանչյուրի աչքերում։ Բայց արդյո՞ք նույն թախիծը չէր լինելու, եթե նրանք ապրեին այստեղից յոթ հազար մղոն հեռու՝ իրենց տանը, հայրենիքում։ Հայրը նայում էր որդուն և նրա մեջ տեսնում էր իր սեփական դիմագծերը։ Իր իսկ աչքերն էին և աչքերի խորքում՝ իր իսկ դժբախտությունը։ Փոքրիկը նույն մարդն էր, միայն ավելի երիտասարդ։ Հայրը վերցրեց մերժված խնձորը, մի պատառ կծեց և սկսեց աղմուկով ծամել և կուլ տալ։ Գուցե ուտելու արագության և ծամելու աղմուկի մեջ խեղդեր վիշտը։ Բացի այդ, խնձորը վատնելու և փչացնելու համար չի ստեղծված, հետևաբար, եթե որդին չէր ցանկանում ուտել, ինքը պետք է ուտեր, թեև ախորժակ չուներ ու խընձոր չէր սիրում։ Նա պարզապես գիտեր, որ սխալ է որևէ բան փչացնելը։ Նա շարունակեց կծել խնձորը, ծամել ու կուլ տալ։ Բայց զգաց, որ այլևս չի կարող, խնձորը շատ մեծ էր։ Ստիպված էր դրա մի մասը

դեն նետել։ Եվ իրեն ոչ հատուկ անհոգությամբ, գուցե մի քիչ ափսոսալով, նա խնձորի մնացորդը գցեց աղբարկղը։

Այդ ժամանակ տղան նորից խոսեց.

— Հայրի՛կ։

— Ի՞նչ է, Ջոն,— պատասխանեց հայրը։

— Ինձ նարինջ տուր,— ասաց տղան։

Հայրն ընտրեց ամենամեծ նարինջը և մեկնեց որդուն։

— Նարի՞նջ ես ուզում,— ասաց նա,— շատ լավ, ահա քեզ նարինջ։

Տղան կծեց նարնջի կեղևը, հետո սկսեց մատներով հեռացնել կեղևը։ Սկզբում մատները դանդաղ էին աշխատում, բայց վարպետորեն, հետո սկսեցին շարժվել այնպիսի արագությամբ, որ ոչ միայն տղային, այլև հորն էլ թվաց, որ կեղևի տակ ոչ թե ծառի պտուղն է, ոչ թե սովորական մի նարինջ, այլ նրա սրտի բոլոր ցանկությունների իրականացումը։ Տղան նարնջի կեղևները դրեց սեղանին, հոր առջև, նարինջը կիսեց, մի շերտ անջատեց, դրեց բերանը, ծամեց և կուլ տվեց։ Բայց ափսոս։ Դա պարզապես նարինջ էր և ոչ սրտի ցանկությունների իրականացում։ Տղան մի պահ սպասեց, ապա նարնջի մնացորդը դրեց հոր առջև։ Նորից հայրը փորձեց ավարտել որդու անավարտ գործը։ Բայց շուտով հոգնեց և նարնջի համարյա կեսը նետեց աղբարկղը։

— Հայրիկ,— մի րոպե հետո նորից խոսեց տղան, և հայրը նորից պատասխանեց։

— Ասա, Ջոն։

— Ինձ կոնֆետ տուր,— ասաց տղան։

— Կոնֆե՞տ,— հարցրեց հայրը,— շատ լավ, ահա քեզ կոնֆետ։

Կոնֆետի բաժնից հայրը ընտրեց երեխաների շատ սիրած հինգ սենթանոց կոնֆետը և տվեց որդուն։ Տղան լավ զննեց այն, հանեց վրայի թուղթը, մի մեծ կտոր կծեց շոկոլադով պատած կոնֆետից, նորից դանդաղ ծամեց ու կուլ տվեց։ Բայց դա էլ նրա ուզածը չէր. պարզապես կոնֆետ էր, քաղցր, այո, բայց ուրիշ ոչինչ, ոչինչ։ Տղան հորը վերադարձրեց այդ կոնֆետը, որը, ավաղ, նրան երջանկություն չէր բերել։ Հայրը համբերությամբ իր վրա վերցրեց այն չփչացնելու պարտականությունը։ Նա վերցրեց կոնֆետի կտորը, կծեց, հետո փոխեց միտքը։ շրջվեց և կոնֆետը նետեց աղբարկղ։ Չգիտես ինչու, նա հանկարծ համակվեց զայրույթով և մտքում անիծեց այն մարդկանց, որոնք այժմ ապրում են յոթ հազար մղոն հեռու, և մի ժամանակ, թեև հարևան էին, իրենց նկատմամբ եղել էին անմարդկային, անողոք, կամ առնվազն տգետ. «Ախ, շներ», հայհոյեց նա սրտի խորքից։

Որդին դարձյալ խոսեց հոր հետ.

— Հայրի՛կ,— ասաց նա։

— Հա, Ջոն,— պատասխանեց հայրը։

— Ինձ բանան տուր,— ասաց տղան։

Հայրն այս անգամ ծանր հառաչեց, բայց հույսը չկորցրեց.

— Բանա՞ն,— ասաց նա,— շատ լավ, բանան տամ։— Նա ուշադիր զննեց մրգերի կույտերի վրա կախված բանանի ողկույզը և վերջապես գտավ այն մեկը, որը նրա կարծիքով լավագույնն էր, ողկույզի ամենահասուն և ամենաքաղցր բանանը։ Նա այդ բանանը պոկեց և մեկնեց որդուն։

Այդ պահին խանութ մտավ մի հաճախորդ, մի մարդ, որին միստր Արան երբեք չէր տեսել։ Մի օտարական։ Խանութպանն ու ճանապարհորդը գլխով իրար թեթևակի բարևեցին, հետո անծանոթն ասաց.

— Բլիթ ունե՞ք։

— Բլի՞թ,— հարցրեց խանութպանը պատրաստակամությամբ,— ի՞նչ տեսակ բլիթ եք ուզում։

Մի ուրիշ հաճախորդ էլ մտավ խանութ։ Այս հաճախորդը Յուլիսիս Մաքոլին էր։ Նա մի կողմ կանգնեց և սկսեց դիտել շուրջը։ Նա լսում էր ամեն ինչ և իր հերթին սպասում։

— Ջամիչով բլիթ ունե՞ք,— հարցրեց օտարականը նպարավաճառին։

— Ջամիչով բլի՞թ,— հարցրեց խանութպանը։ Դժվար հարց էր։— Բլիթ չամիչո՞վ,— նորից ասաց նպարավաճառը՝ համարյա շշնջալով։— Ջամիչով բլիթ,— կրկնեց նա։ Խանութպանն իր շուրջը նայեց։ Նրա որդին բանանը դրեց սեղանին, հոր առջև։

— Հայրիկ,— կանչեց տղան։

Հայրը հայացքը սևեռեց որդու վրա, հետո ասաց արագ.

— Դու խնձոր ուզեցիր, ես քեզ խնձոր տվեցի, նարինջ ուզեցիր, ես քեզ նարինջ տվեցի, կոնֆետ ուզեցիր, ես քեզ կոնֆետ տվեցի, բանան ուզեցիր, ես քեզ բանան տվեցի։ Հիմա՞ ինչ ես ուզում։

— Բլիթ,— ասաց տղան։

— Ի՞նչ տեսակ բլիթ ես ուզում,— ասաց հայրը որդուն, առանց մոռանալու հաճախորդին և փաստորեն պատասխանելով նրան, բայց և միևնույն ժամանակ դիմելով բոլորին, բոլորին, բոլոր նրանց, ովքեր որևէ բան են ուզում։

— Բլիթ, որի մեջ չամիչ լինի,— ասաց տղան։

Կատաղությունից ատամները սեղմելով, հայրը իր պատասխանը

համարյա շշնջաց որդուն, բայց փոխանակ որդուն նայելու, նայեց հաճախորդին։

— Բլիթ չունեմ,— շշնջաց նա,— ոչ մի տեսակի չունեմ։ Ինչի՞ համար եք բլիթ ուզում։ Ես ամեն ինչ ունեմ, բայց ոչ բլիթ։ Ի՞նչ է բլիթը, ի՞նչ եք ուզում։

— Բլիթ,— ասաց օտարականը համբերությամբ,— փոքր երեխայի համար է։

— Բլիթ չունեմ,— նորից ասաց նպարավաճառը։— Ես նույնպես փոքր երեխա ունեմ,— խանութպանը ցույց տվեց որդուն,— ես նրան խնձոր եմ տալիս, նարինջ, կոնֆետ, բանան, շատ ընտիր բաներ,— նա նայեց հաճախորդի աչքերի մեջ և ասաց համարյա բարկությամբ.

— Ի՞նչ եք ուզում։

— Իմ եղբոր տղան,— պատասխանեց հաճախորդը,— հիվանդ է։ Նա լաց է լինում, բլիթ է ուզում, բլիթ, որի մեջ չամիչ լինի։

Բայց որովհետև ամեն մարդ իր կյանքով է ապրում և յուրաքանչյուր կյանք իր պահանջն ունի, ուստի նպարավաճառի որդին նորից նայեց հորը և ասաց.

— Հայրի՛կ։

Բայց այս անգամ հայրը նույնիսկ չնայեց որդուն։ Նա նայեց այն մարդուն, որի եղբորորդին հիվանդ էր և չամիչով բլիթ էր ուզում։ Նա այդ մարդուն նայեց հասկացողությամբ, համակրանքով և, միաժամանակ, գեղջկական ինչ-որ զայրույթով, ոչ թե այդ մարդու դեմ, այլ աշխարհի դեմ, հիվանդության, վշտի դեմ, թախիծի դեմ, որը ուզում է այն, ինչ երբեք չի կարող ունենալ։ Խանութպանը բարկացած էր նաև ինքն իր դեմ, որովհետև չնայած ինքն այս խանութը բացել էր Կալիֆոռնիայի Իթաքա քաղաքում, իր հայրենիքից յոթ հազար մղոն հեռու, բայց չամիչով բլիթ չուներ, չուներ այն, ինչ հիվանդ երեխան է ուզում։ Խանութպանը նայեց որդուն և ասաց անծանոթին.

— Խնձոր, նարինջ, կոնֆետ, բանան... խնդրեմ, բայց ոչ բլիթ։ Նա իմ որդին է։ Երեք տարեկան է, հիվանդ չէ, բայց շատ բաներ է ուզում։ Խնձոր է ուզում, նարինջ, կոնֆետ է ուզում, բանան է ուզում։ Չգիտեմ ինչ է ուզում, ոչ ոք չգիտե, թե ինչ է ուզում։ Նա պարզապես ուզում է։ Նայում է աստծուն և ասում՝ տուր ինձ այս, տուր ինձ այն, բայց երբեք գոհ չէ։ Միշտ ուզում է և միշտ դժգոհ է։ Իսկ խեղճ աստվածը ոչինչ չունի տխրությունը ամոքելու համար։ Նա մարդկանց տվել է ամբողջ աշխարհը, արևի լույս, մայր, հայր, եղբայր, քույր, հորեղբայր, զարմիկ, տուն, հող, վառարան, սեղան, մահճակալ, խեղճ աստ-

ված ամեն ինչ տվել է, բայց ոչ ոք երջանիկ չէ. բոլորը այդ հիվանդ փոքրիկի նման են, բոլորն ասում են՝ «Չամիչով բլիթ տվեք»։— Խանութպանը մի պահ լուռ մնաց, հոգոց հանեց, ապա գոռաց.

— Չամիչով բլիթ չունեմ։

Նպարավաճառն սկսեց անհամբերությամբ և համարյա վեհասքանչ քայլել խանութում։ Նախ՝ մի թղթե տոպրակ վերցրեց, լայն բացեց, ապա սկսեց զայրույթով տոպրակը լցնել մրգով։

— Ահա նարինջ,— ասաց նա,— շատ գեղեցիկ է։ Ահա խնձոր՝ հրաշալի բան է։ Ահա բանան, շատ լավ համ ունի։— Եվ մեղմորեն, այդ մարդու և նրա հիվանդ եղբորորդու նկատմամբ անսահման համակրանքով լցված, խանութպանը տոպրակը մեկնեց հաճախորդին։— Տարեք փոքր երեխային,— ասաց նա,— գուցե նա լաց չլինի։ Ահա, տարեք սրանք փոքրիկ տղային։ Մի վճարեք։ Ես փող չեմ ուզում։— Եվ ապա հազիվ լսելի ձայնով կրկնեց.— Չամիչով բլիթ չունեմ։

— Նա լաց է լինում,— ասաց անծանոթը,— նա շատ վատ է զգում։ Ասում է՝ չամիչով բլիթ եմ ուզում։ Շատ շնորհակալ եմ, բայց մենք փոքրիկ տղային խնձոր, նարինջ և ուրիշ բաներ արդեն տվել ենք։— Մարդը տոպրակը դրեց սեղանին։— Հիվանդ տղան ասում է՝ «Ինձ չամիչով բլիթ տվեք»։ Ոչ խնձորը, ոչ էլ նարինջը չեն օգնում։ Ներեցեք,— ասաց մարդը։— Գնամ մյուս խանութը փորձեմ։ Գուցե այնտեղ չամիչով բլիթ գտնվի։

— Շատ լավ, բարեկամս,— շշնջաց խանութպանը,— շատ լավ։ Դուք գնացեք այդ խանութում էլ փնտրեցեք, բայց նրանք էլ չամիչով բլիթ չունեն։ Ոչ ոք չունի։

Համարյա ամաչելով, օտարականը խանութից դուրս եկավ։ Ամբողջ մի րոպե նպարավաճառը իր սեղանի ետևում կանգնած նայում էր որդուն։ Եվ հանկարծ սկսեց խոսել իր մայրենի լեզվով, հայերեն։

— Աշխարհը գժվել է,— ասաց նա փոքր տղային,— պատերազմի այս օրերին, Ռուսաստանում, որ այնքան մոտ է մեր հայրենիքին, մեր հրաշալի փոքր ազգին, միլիոնավոր մարդիկ, միլիոնավոր երեխաներ սոված են մնում։ Նրանք մրսում են, թափառում են խեղճ, ոտաբոբիկ, անօթևան, նրանք աղոթում են մի կտոր չոր հացի համար, քնելու ու հանգստանալու տեղի համար, մի գիշեր խաղաղ լուսացնելու համար։ Իսկ մե՞նք։ Ինչո՞վ ենք մենք զբաղված այստեղ՝ Կալիֆոռնիայի Իթաքա քաղաքում. այս մեծ երկրում՝ Ամերիկայում։ Ինչո՞վ ենք զբաղված մենք։ Մենք լավ զգեստներ ենք հագնում։ Ամեն առավոտ, հենց որ ելնում ենք անկողնուց, հագնում ենք գեղեցիկ կոշիկներ, հանգիստ քայլում ենք փողոցներով, և ոչ ոք զենքով չի սպառնում, չի այրում մեր տները, չի

պատանում մեր երեխաներին, եղբայրներին, հայրերին։ Մեքենայով շրջում ենք և հիանում գեղեցիկ բնությունով, ուտում ենք համեղ բաներ, ամեն գիշեր անկողնում հանգիստ քնում ենք, և ի՞նչ։ Դժգոհում ենք։ Մենք դեռ դժգոհ ենք։— Նպարավաճառը այս ապշեցուցիչ ճշմարտությունը գոռաց իր տղայի երեսին հայրական տանջալից սիրուց զբրդված։— Մեզ պետք չէ,— ասաց նա,— ո՛չ խնձոր, ո՛չ նարինջ, ո՛չ կոնֆետ, ո՛չ բանան, վախեցիր աստծուց, տղաս, այդ բանը մի արա։ Եթե ես այսպիսին եմ, դու իմ որդին ես, պետք է ինձնից լավը լինես։ Երջանիկ եղիր։ Ես դժբախտ եմ, բայց դու պետք է բախտավոր լինես։— Նա որդուն մատնացույց արեց ետնադուռը, որ խանութից տուն էր տանում, և որդին հնազանդ, մռայլ դեմքով դուրս եկավ խանութից, մտավ տուն։

Նպարավաճառը մի պահ փորձեց տիրապետել իրեն։ Ի վերջո հանդարտվեց՝ և կարող էր հանգիստ խոսել խանութում սպասող հաճախորդի՝ Յուլիսիս Մաքոլիի հետ։ Նա շրջվեց դեպի տղան և աշխատեց զվարթ լինել։ Նույնիսկ ժպտաց.

— Ի՞նչ ես ուզում, փոքրիկ Յուլիսիս։

— Ձավար,— ասաց Յուլիսիսը։

— Ի՞նչ տեսակի ձավար ես ուզում,— հարցրեց նպարավաճառը։

— Վարսակի,— ասաց Յուլիսիսը։

— Երկու տեսակ ձավար ունեմ, փոքրիկ Յուլիսիս տղա,— ասաց խանութպանը,— սովորական և շուտ եփվող։ Երկու տեսակ՝ հին և նոր, դանդաղ եփվող և արագ եփվող։ Մայրդ ո՞ր տեսակից է ուզում, փոքրիկ Յուլիսիս։

Յուլիսիսը մի պահ մտածեց, ապա ասաց.

— Վարսակի ձավար։

— Հի՞ն, թե նոր տեսակը,— հարցրեց նպարավաճառը։

Բայց փոքրիկ տղան չգիտեր, թե ինչ պատասխանի։ Խանութպանը նրա փոխարեն որոշեց։

— Շատ լավ,— ասաց նա,— ես քեզ նոր տեսակի կտամ, նոր։ Վըճարիր խնդրեմ տասնութ սենթ, փոքրիկ Յուլիսիս։

Յուլիսիսը բացեց ափը և ձեռքը մեկնեց նպարավաճառին, որը վերցրեց քառորդ դոլարը։ Խանութպանը Յուլիսիսին վերադարձրեց փոդի մանրը՝ ասելով.

— Տասնութ սենթ, տասնինը, քսան և մի հինգանոց, քսան և հինգ։ Շնորհակալություն, փոքրիկ Յուլիսիս։

— Շնորհակալություն, սըր,— պատասխանեց Յուլիսիսը։ Նա վերցրեց ձավարի տուփը և խանութից դուրս եկավ։ Շատ դժվար էր նրա հա-

մար այդ ամենը հասկանալ։ Սկզբում ծիրաններն էին՝ ծառի վրա, հետո չամիչով բլիթը և ապա՝ նպարավաճառը, որ իր որդու հետ խոսում էր անծանոթ լեզվով։ Այդ ամենը շատ հետաքրքրական էր։ Փողոցում փոքրիկ տղան ոստոստաց, ինչպես անում էր միշտ, երբ շատ ուրախ էր լինում, և տուն վազեց՝ ձեռքին նպարավաճառի տված փաթեթը։

Գլուխ 26

ԿՅԱՆՔՈՒՄ ՄԻՇՏ ՅԱՎ ԿԼԻՆԻ

Միսիս Մաքոլին խոհանոցում պատրաստել էր սեղանը և սպասում էր իր Հոմեր որդուն, որը նախաճաշելու պիտի գար։ Նա ձավարով ճաշ էր դնում սեղանին, երբ որդին խոհանոց մտավ։ Մոր հայացքը շատ արագ սահեց որդու վրայով, ու նա հասկացավ, որ որդին դեռևս նախորդ գիշերվա երազի ազդեցության տակ է։ Թեև Հոմերը չէր հիշում, որ քնի մեջ լաց էր եղել, բայց նրա տրամադրությունը ընկած էր, ինչպես սովորաբար լինում է վշտից հետո։ Նույնիսկ նրա ձայնը ավելի խորն էր և մեղմ։

— Շատ քնեցի,— ասաց նա,— արդեն ինն անց է քսան րոպեն։ Ի՞նչ է պատահել ժամացույցին։

— Դու շատ ես աշխատում,— ասաց միսիս Մաքոլին,— պետք է նաև հանգստանաս։

— Ես շատ չեմ աշխատում,— ասաց Հոմերը,— և հետո վաղը կիրակի է։

Նա առավոտյան աղոթքն արեց, միայն թե այդ օրը աղոթքը կրկնակի երկար թվաց։ Հետո վերցրեց գդալը և երբ պատրաստվում էր ուտել, կանգ առավ տարօրինակ ձևով և սկսեց ուսումնասիրել գդալը։ Տղան նայեց մորը, որ զբաղված էր խոհանոցում։

— Մայրի՛կ,— ասաց նա։

— Ի՞նչ է, Հոմեր,— պատասխանեց միսիս Մաքոլին, առանց շրջվելու։

— Երեկ գիշեր, աշխատանքից գալուց հետո, քեզ հետ չխոսեցի,— ասաց նա,— բայց դու ինձ նախազգուշացրել էիր, որ այդպես կարող է լինել։ Ես չէի կարող խոսել։ Տուն գալու ճանապարհին ես հանկարծ սկսեցի լաց լինել։ Դու գիտես, որ ես երբեք լաց չեմ եղել, նույնիսկ երբ փոքր էի, նույնիսկ դպրոցում, երբ ինձ հետ որևէ տհաճ բան էր պատահում։ Ես միշտ ամաչել եմ լաց լինելուց։ Յուլիսիսը նույնպես լաց չի

լինում, որովհետև ի՞նչ օգուտ դրանից։ Բայց երեկ գիշեր ես պարզապես չկարողացա ինձ զսպել։ Լաց եղա և նույնիսկ չամաչեցի իմ լացից։ Եվ որովհետև հեկեկում էի՝ չկարողացա ուղիղ տուն գալ։ Հասա մինչև «Իթաքայի գինիները» և հետո, որովհետև դեռ լաց էի լինում՝ հեծանիվս քշեցի քաղաքի միջով, մինչև միջնակարգ դպրոցը։ Ճանապարհին անցա մի տան մոտով, որտեղ երեկ երեկոյան մարդիկ ուրախանում էին, իսկ այդ ժամին տունը մութի մեջ էր։ Ես այդ մարդկանց մի հեռագիր էի տարել։ Հասկանում ես, թե դա ինչ հեռագիր էր։ Հետո քաղաք վերադարձա և հեծանիվս քշեցի փողոցներով, նայելով ամեն ինչին, բոլոր շենքերին, որոնք մանկությունից ծանոթ են ինձ։ Այդ ժամանակ, կարծես առաջին անգամ, ես իսկապես տեսա Իթաքան և իսկապես ճանաչեցի այն մարդկանց, որոնք ապրում են Իթաքայում։ Բոլորը լավ մարդիկ են։ Ես ցավ զգացի բոլորի համար և նույնիսկ աղոթեցի, որ նրանց ոչինչ չպատահի։ Դրանից հետո դադարեցի լալ։ Կարծում էի, որ մարդ երբեք լաց չի լինի, երբ մեծանա, չափահաս դառնա, բայց պարզվում է, որ հենց այդ ժամանակ է մարդը սկսում լաց լինել, որովհետև այդ ժամանակ է, որ նա սկսում է հասկանալ ամեն ինչ։— Նա մի պահ լռեց, հետո նրա ձայնը նույնիսկ ավելի զուսպ դարձավ։— Գրեթե ամեն ինչ, որ մարդ ճանաչում է, կամ վատ է, կամ տխուր,— ասաց նա և սպասեց, որ մայրը մի բան ասի, բայց մայրը չխոսեց, նույնիսկ գլուխը չբարձրացրեց։

— Ինչո՞ւ է այդպես,— հարցրեց որդին։

Միսիս Մաքոլին սկսեց խոսել, բայց տղայի կողմը չդարձավ։

— Ժամանակը կգա կհասկանաս,— ասաց նա,— ոչ ոք չի կարող քեզ բացատրել։ Ամեն մարդ ինքն իր խելքով պիտի հասկանա։ Եթե կյանքը տխուր է, ազնիվ կամ անմիտ, դրա պատճառը մարդն է։ Եթե հարուստ է և գեղեցկությամբ լեցուն, ուրեմն ինքը մարդն է այդպիսին և ոչ թե նրա շրջապատը։ Այդպես է։ Եթե որևէ բան վատ է, տգեղ կամ խեղճ, միշտ ինքը մարդն է այդպես, և յուրաքանչյուր մարդ ինքն իր մեջ մի աշխարհ է։ Յուրաքանչյուր մարդ մի ամբողջական աշխարհ է, նա այդ աշխարհը կարող է վերակառուցել և սիրելի մարդկանցով բնակեցնել, եթե նրա սիրտը ընդունակ է սիրո, կամ լցնել ատելի մարդկանցով, եթե նրա սիրտը ընդունակ է ատելության։ Աշխարհը պետք է վերակառուցվի նրա մեջ ապրող յուրաքանչյուր անհատի կողմից։ Վերակառուցվի ամեն օր, ինչպես անկողինն ու այն տունը, որտեղ նույն մարդիկ են ապրում։ Այդ մարդիկ միշտ նույնն են, բայց և միշտ փոխվում են։

Մայրն այժմ ինչ-որ գործով էր զբաղված բակ տանող մուտքի մոտ. Հոմերը չէր տեսնում նրան, բայց շարունակում էր խոսել։

— Ինչո՞ւ երեկ գիշեր տուն գալիս ես լաց եղա,— հարցրեց նա։— Ես երբեք այդպիսի զգացում չեմ ապրել։ Չեմ հասկանում։ Եվ երբ դադարեցի լաց լինելուց, ինչո՞ւ չէի կարողանում խոսել, ինչո՞ւ ասելու ոչինչ չունեի ոչ քեզ, ոչ էլ ինձ։

Միսիս Մաքոլին պատասխանեց հեռվից, բայց այնքան հստակ ձայնով, որ տղան նրա յուրաքանչյուր բառը անսխալ լսեց։

— Կարեկցանքն էր, որ քեզ ստիպեց լաց լինել,— ասաց նա,— կարեկցանքը. կարեկցանքը ոչ թե այս կամ այն անհատի նկատմամբ, որ տառապում է, այլ ամեն ինչի նկատմամբ։ Եթե մարդը խիղճ չունի, նա մարդ չէ, նա դեռ իսկական մարդ չէ, որովհետև կարեկցանքից է ծնվում բուժիչ բալասանը։ Միայն բարի մարդիկ են լաց լինում։ Այն մարդը, որը լաց չի լինում աշխարհի ցավի համար, նա վատ է, քան կեղտը, որի վրայով քայլում է, որովհետև կեղտը դեռ սնում է սերմը, արմատը, ծիլը և ծաղիկը, իսկ առանց խղճի ու կարեկցանքի մարդու հոգին անպտուղ է, ոչինչ չի կարող սնուցել, բացառությամբ ամբարտավանության, որը, ի վերջո, կարող է մարդուն առաջնորդել սպանության, գազանի սպանության կամ նույնիսկ մարդկային կյանքի սպանության։

Միսիս Մաքոլին խոհանոց վերադարձավ և սկսեց նոր գործով զբաղվել, մի գործ, որի ավելորդությունը նույնիսկ Հոմերը հասկացավ։

— Կյանքում միշտ էլ ցավ կլինի,— ասաց միսիս Մաքոլին,— սակայն այդ բանի գիտակցությունը չպետք է մարդուն հուսահատեցնի։ Լավ մարդը աշխատում է հաղթահարել այդ ցավը։ Իսկ հիմարը այդ նույնիսկ չի տեսնում, քանի դեռ չի զգացել իր մարմնի վրա։ Իսկ չար մարդը այն ավելի կխորացնի և կտարածի իր շուրջը։ Սակայն բոլորն էլ անմեղ են, որովհետև ինչպես չար մարդը, այնպես էլ հիմարն ու լավը իրենց կամքով չեկան այստեղ և ոչ էլ իրենք իրենց ստեղծվեցին ոչնչից։ Նրանք ծնունդ են բազմաթիվ աշխարհների և բազմաթիվ սերունդների։ Չարիքը չգիտեն, որ իրենք չար են և, հետևաբար՝ անմեղ են։ Չար մարդուն պետք է ներել։ Նրան պետք է սիրել, որովհետև մեր յուրաքանչյուրից ինչ-որ բան կա աշխարհի ամենաչար մարդու մեջ, ինչպես որ նրանցից ինչ-որ բան՝ մեր մեջ։ Նա մերն է, մենք՝ նրանը։ Մեզնից յուրաքանչյուրը մյուսներից անջատ չէ։ Գեղջուկի աղոթքը՝ իմ աղոթքն է, մարդասպանի ոճիրը՝ իմ ոճիրը։ Անցյալ գիշեր դու լաց եղար, որովհետև սկսեցիր հասկանալ այս բաները։

Հոմեր Մաքոլին ձավարի վրա կաթ լցրեց և սկսեց նախաճաշել։ Նա հանկարծ զգաց, որ վերջապես կարող է ուտել։

ԲՈԼՈՐ ՀՐԱՇԱԼԻ ՍԽԱԼՆԵՐԸ

Յուլիսիս Մաքոլին և աշխարհում նրա լավագույն ընկերը՝ Լայոնել Քեբոտը՝ Մեծն Լայոնելը, մտան Մաքոլիների խոհանոցը։ Բոլորովին չպետք է կասկածել այս բարեկամության վրա, թեև Լայոնելը ամբողջ վեց տարով Յուլիսիսից մեծ է։ Նրանք միասին էին ման գալիս և միշտ իրար հետ էին լինում, ինչպես անում են լավագույն բարեկամները՝ այսինքն հանգիստ ու անհոգ, առանց նույնիսկ իրար հետ խոսելու կարիք զգալու։

— Միսիս Մաքոլի,— ասաց Լայոնելը,— ես եկա հարցնելու՝ կարո՞ղ է Յուլիսիսը ինձ հետ հանրային գրադարան գալ։ Քրոջս՝ Լիլիանի գիրքը պետք է փոխեմ։

— Շատ լավ, Լայոնել,— ասաց միսիս Մաքոլին,— բայց ինչո՞ւ դու մյուսների հետ չես, ինչո՞ւ Օգիի, Ալֆի, Շեկի և մյուս տղաների հետ չես խաղում։

— Նրանք,— սկսեց Լայոնելը և հանկարծ կանգ առավ շփոթված ու ամոթահար։ Մի րոպե հետո նա նորից սկսեց։— Նրանք ինձ վռնդեցին,— ասաց նա,— նրանք ինձ չեն սիրում, որովհետև ես հիմար եմ։— Նա նորից լռեց և նայեց իր լավագույն ընկերոջ մորը։— Ես հիմար չեմ, չէ՞, միսիս Մաքոլի։

— Ոչ, Լայոնել, դու հիմար չես,— ասաց միսիս Մաքոլին,— դու մեր թաղի ամենալավ տղան ես։ Բայց մի նեղացիր մյուս տղաներից, որովհետև նրանք նույնպես հրաշալի տղաներ են։

— Չեմ նեղանում,— ասաց Լայոնելը,— ես նրանց բոլորին էլ սիրում եմ։ Սակայն ամեն անգամ, երբ խաղի ընթացքում մի փոքր սխալ եմ անում, նրանք ինձ վռնդում են, նրանք ինձ նույնիսկ հայհոյում են, միսիս Մաքոլի։ Անգամ իմ ամենափոքր սխալի համար նրանք բարկանում են վրաս։ «Բավական է, Լայոնել», ասում են նրանք։ Եվ հենց որ այդպես են ասում, ես հասկանում եմ, որ իմ հեռանալու ժամանակն է։ Երբեմն ես նույնիսկ հինգ րոպե չեմ դիմանում։ Երբեմն ես սխալ եմ թույլ տալիս խաղի հենց սկզբից։ Եվ նրանք անմիջապես ասում են. «Հերիք է, Լայոնել»։ Ես նույնիսկ չեմ հասկանում, թե ինչ սխալ եմ արել, ի՞նչ պետք է անեմ։ Ես ուզում եմ իմանալ իմ սխալը, բայց ոչ ոք ինձ չի բացատրում։ Ամեն շաբաթ նրանք ինձ վռնդում են։ Յուլիսիսը միակն է, որ չի լքում ինձ։ Իմ միակ խաղընկերը նա է։ Բայց մի օր նրանք պիտի զղջան։ Կգա ժամանակ, երբ նրանք ինձ մոտ կգան, որ

ագնեմ իրենց, այո, միսիս Մաքոլի, ես անպայման պիտի օգնեմ նրանց, և այդ ժամանակ նրանք պիտի զղջան, որ միշտ վռնդել են ինձ։ Մի քիչ ջուր կտա՞ք։

— Խնդրեմ, Լայոնել,— ասաց միսիս Մաքոլին և տղային մի բաժակ ջուր տվեց, որը նա ագահորեն խմեց։ Խմելիս նա այնպիսի ձայն էր հանում, ինչպես բոլոր երեխաները, երբ նրանց համար ջուրը դեռևս աշխարհի ամենալավ խմիչքն է։

Լայոնելը դարձավ ընկերոջը։

— Դու ջուր չե՞ս ուզում, Յուլիսիս,— հարցրեց նա։

Յուլիսիսը գլխով արեց, և միսիս Մաքոլին մի բաժակ էլ նրան տվեց։ Երբ նա խմեց ջուրը, Լայոնելն ասաց.

— Այժմ կարո՞ղ ենք հանրային գրադարան գնալ, միսիս Մաքոլի։

Երկու ընկերները տնից դուրս եկան։

Հոմեր Մաքոլին նախաճաշելիս երկար նայում էր եղբորը։ Երբ երկու տղաները գնացին, նա ասաց միսիս Մաքոլիին.

— Մարկուսը փոքր ժամանակ նմա՞ն էր Յուլիսիսին։

— Ի՞նչ ես ուզում ասել,— հարցրեց միսիս Մաքոլին։

— Դու գիտես,— ասաց Հոմերը,— թե ինչպիսին է Յուլիսիսը, ամեն ինչով հետաքրքրվող, միշտ ինչ-որ բանով տարված։ Երբեք ոչինչ չի ասում, բայց ամեն ինչից մի բան եզրակացնում է։ Սիրում է բոլորին, և բոլորն էլ սիրում են նրան։ Նա շատ բառեր չգիտի։ Նա չի կարող կարդալ, բայց նրան միշտ կարող ես հասկանալ, պարզապես դիտելով նրա դեմքը։ Գրեթե միշտ կարելի է հասկանալ, թե ինչ է ասում, նույնիսկ այն դեպքում, երբ ոչ մի բառ չի արտասանում։ Մարկո՞ւսն էլ այդպես էր։

— Մարկուսն ու Յուլիսիսը հարազատ եղբայրներ են,— ասաց միսիս Մաքոլին,— այնպես որ, բնական է, որ Յուլիսիսը նման լինի եղբորը, բայց ոչ ամեն ինչում։

— Յուլիսիսը մի օր մեծ մարդ է դառնալու, ճիշտ չէ՞, մայրիկ,— ասաց Հոմերը։

— Ոչ,— ժպտաց միսիս Մաքոլին,— ոչ, ես այդ կարծիքին չեմ, բոլոր դեպքերում ոչ աշխարհի համար, բայց անշուշտ նա մեծ է լինելու, որովհետև նա այժմ էլ մեծ է։

— Մարկուսը նույնպես մե՞ծ էր, երբ փոքր էր,— ասաց Հոմերը։

— Դուք բոլորդ էլ ինչ-որ բանով նման եք իրար,— ասաց միսիս Մաքոլին,— բայց ոչ ամեն ինչով։ Մարկուսը քեզ նման անհանգիստ չէր։ Նա էլ, իհարկե, անհանգիստ էր, բայց յուրովի։ Յուլիսիսը սիրում է դուրս գալ, նայել մարդկանց, իսկ նա ամաչկոտ էր և հաճախ մենակ էր

մնում։ Մարկուսը սիրում էր կարդալ, երաժշտություն լսել, երբեմն էլ պարզապես պարապ նստել կամ գնալ ինչ-որ հեռու տեղ զբոսանքի։

— Յուլիսիսը անշուշտ սիրում է Մարկուսին,— ասաց Հոմերը։

— Յուլիսիսը բոլորին է սիրում,— նկատեց միսիս Մաքոլին։— Նա աշխարհի բոլոր մարդկանց սիրում է։

— Ճիշտ է,— ասաց Հոմերը,— բայց նա Մարկուսի հանդեպ յուրահատուկ սեր ունի, և ես գիտեմ, թե ինչու. որովհետև Մարկուսը նրա նման դեռ երեխա է, թեև բանակում է։ Ինձ թվում է, որ երեխան միշտ ինչ-որ մանկական բան է որոնում մեծերի մեջ։ Եվ եթե գտնում է դա որևէ մեկի մեջ, այդ մարդուն մյուսներից ավելի է սիրում։ Ես կուզենայի հետո էլ, երբ մեծանամ, նման լինեմ Յուլիսիսին։ Ինձ թվում է, որ աշխարհում բոլորից ավելի ես նրանով եմ հիացած, բացի մեր ընտանիքի անդամներից։ Նա քեզ ասա՞ց, թե երեկ ինչ պատահեց իր հետ։

— Ոչ մի բառ չի ասել,— ասաց միսիս Մաքոլին։— Այդ մասին Օգին եկավ ու պատմեց։

— Լավ,— ասաց Հոմերը,— իսկ նա ի՞նչ ասաց, երբ նրան տուն բերեցի հեռագրատնից։

— Ոչինչ չասաց,— ասաց միսիս Մաքոլին։— Նա պարզապես նստեց, երաժշտություն լսեց, ապա ընթրեցինք։ Երբ նրան անկողին դրեցի, նա ասաց՝ «Մեծ Քրիս»։ Միայն այդքանը և քնեց։ Ես չհասկացա, թե ով էր Մեծ Քրիսը, մինչև որ Օգին եկավ ու պատմեց։

— Մեծ Քրիսը Յուլիսիսին թակարդից դուրս հանեց,— ասաց Հոմերը,— և հետո Քովինգտոնին քսան դոլար վճարեց այդ հիմար գյուտի դիմաց, որովհետև թակարդը կոտրել էր։ Իբրև թե թակարդ է, բայց կասկածում եմ։ Ես կարծում եմ, որ այդ թակարդը որևէ բան որսալ չի կարողանա, բացի Յուլիսիսից։ Ոչ մի կենդանի այդքան բարդ գործիքի չի մոտենա։ Յուլիսիսը ամենից շատ ո՞ւմ է նման,— հարցրեց Հոմերը։

— Հորը,— պատասխանեց միսիս Մաքոլին։

— Իսկ դու հայրիկին ճանաչո՞ւմ էիր, երբ նա փոքր էր,— ասաց Հոմերը։

— Ամաչած իմ, իհարկե ոչ,— ասաց միսիս Մաքոլին։— Ինչպե՞ս կարող էի ես նրան ճանաչել։ Քո հայրը ինձնից յոթ տարով մեծ էր։ Յուլիսիսը այնպիսին է, ինչպիսին ձեր հայրն էր՝ ամբողջ իր կյանքի ընթացքում։— Միսիս Մաքոլին հանկարծ լցվեց երջանկության հորդ զգացումով, հակառակ ամեն ինչի, որ եղել էր, կամ ամեն ինչի, որ կարող էր լինել։— Է, ես բախտավոր եմ եղել,— ասաց նա,— ես շնորհակալ եմ աստծուց։ Իմ երեխաները, երեխաներ լինելուց բացի, լավ մարդ են։ Նրանք կարող էին միայն երեխա լինել, այդ ժամանակ ես

այսքան բախտավոր չէի լինի։ Երեկ գիշեր դու լաց եղար, որովհետև մարդ ես դարձել, մեկը միլիոններից, որովհետև քեզ համար սկսվել է պատահարներով լեցուն կյանքը, մտել ես մի աշխարհ, որը լի է դժվար հասկանալի բաներով՝ վատ, գեղեցիկ, տգեղ, բարի և վայրագ, բայց որոնք բոլորը միասին մի ամբողջություն են կազմում՝ մեր կյանքը։— Նա մի պահ լռեց, նայելու համար որդուն, հետո շատ մեղմ ասաց,— երեկ գիշեր դու լաց էիր լինում նույնիսկ երազում։

— Իսկապե՞ս,— ասաց Հոմերը։ Նա զարմացավ, որ չէր զգացել։

— Այո,— ասաց միսիս Մաքոլին,— քո լացը արթնացրեց Ցուլիսիսին, իսկ նա եկավ և ինձ արթնացրեց։ Ես լսեցի, թե ինչպես էիր դու լալիս, բայց դա իսկապես քո լացը չէր։

— Ո՞ւմն էր, հապա,— հարցրեց Հոմերը։

— Այդ լացը ինձ ծանոթ է,— ասաց միսիս Մաքոլին,— ես այն առաջներում էլ լսել եմ։ Դա քո լացը չէ։ Ոչ էլ մեկ ուրիշինը։ Դա ամբողջ աշխարհի լացն է։ Ճանաչելով աշխարհի վիշտը, դու այժմ կանգնեցիր քո ճանապարհի վրա, և բնական է, որ բազմաթիվ սխալներ գործես, այն բոլոր հրաշալի սխալները, որ դու պետք է գործես և գործելու ես։ Նախաճաշի այս սեղանի առաջ օրը ցերեկով ես քեզ ասում եմ այն, ինչ վարանում եմ ասել նույնիսկ գիշերը, և որովհետև դու այժմ առույգ ես ու վշտից թեթևացած, կարող եմ ասել, որովհետև պարտավոր եմ այդ բանը ասել քեզ։ Կարևորը չէ, թե ինչ սխալներ կգործես կյանքում, մի վախեցիր գործած սխալներիդ համար կամ նորերը գործելուց։ Դու բարի սիրտ ունես, վստահիր սրտիդ, ունկնդրիր նրան և շարունակիր ճանապարհդ առանց կանգ առնելու։ Եթե ընկնես, խաբված կամ հալածված ուրիշներից կամ ինքդ քեզնից, վեր կաց և ետ մի նայիր։ Բազմաթիվ անգամներ պիտի ծիծաղես և բազմաթիվ անգամներ պիտի լաց լինես, այդ ծիծաղն ու արտասուքը շարունակ անբաժան պիտի լինեն իրարից։ Քո կյանքում դու ոչ մի բոպե չես ունենա ստոր, նենգ կամ փոքրոգի լինելու։ Այդ բաները քեզնից ցածր են, շատ փոքր՝ քո ոգու առույգության առաջ, շատ աննշան՝ քո տեսադաշտը խափանելու համար։

Միսիս Մաքոլին ժպտաց և փոքր-ինչ շփոթված եկավ կանգնեց որդու կողքին։

— Ներիր ինձ,— ասաց նա,— որ միշտ, գիշեր ու ցերեկ քեզ ասում եմ այնպիսի բաներ, որ յուրաքանչյուր մարդ ինքը կուզենար իմանալ, բայց գիտեմ, որ դու կներես ինձ։

— Ահ, մայր,— դա միակ բանն էր, որ կարողացավ պատասխանել Հոմերը։

Նա վեր կացավ սեղանից և կաղալով գնաց դեպի լուսամուտը։ Այդտեղից նա դիտեց դատարկ տարածությունը, Օգյուստ Գոթլիբին և նրա ընկերներին, որոնք ֆուտբոլի տարերքի մեջ էին։

— Ոտքիդ ի՞նչ է եղել,— հարցրեց միսիս Մաքոլին։

— Ոչինչ,— պատասխանեց Հոմերը,— մի թեթև ընկա։— Առանց մորը նայելու նա շարունակեց,— գիտե՞ս ինչ, մա, ինձ թվում է, որ դու հաստատ աշխարհի ամենահրաշալի մարդն ես։— Նա սկսեց ծիծաղել՝ դիտելով ֆուտբոլի խաղը։— Ահա, Օգին գնդակը խլեց,— ասաց նա։— Իսկ ինձ այլևս ոչ մի խաղ չի գրավում,— շարունակեց նա։— Հեռագրատուն եմ գնում։ Նրանց ասացի, որ կգամ, գուցե իմ կարիքը զգան։— Նա շրջվեց, որ գնա, բայց կանգնեց։— Ո՛հ,— ասաց նա,— քիչ էր մնում մոռանայի։ Միստր Գրոգանը՝ գիշերային հեռագրիչը, երեկվա քո ուղարկած սանդվիչներից մեկը կերավ։ Նա պատվիրեց, որ իր կողմից շնորհակալություն հայտնեմ։ Այնպես որ, մա, շնորհակալություն միստր Գրոգանից։

Հոմերը տնից դուրս եկավ։ Մայրը տեսավ, թե ինչպես նա ստուգեց հեծանիվի դողերը, ապա նստեց և ուղղվեց հեռագրատուն։ Այդ ժամանակ շրջվեց դեպի որդու աթոռը և այնտեղ տեսավ Մաթյու Մաքոլիին, որը ճիշտ Հոմերի նման զննում էր գդալը։ Քիչ հետո նա հայացքը բարձրացրեց.

— Քեթի,— ասաց նա։

— Ի՞նչ է, Մաթյու,— հարցրեց Քեթին։

— Քեթի,— ասաց Մաթյուն,— Մարկուսը շուտով գալու է իմ ետևից։

Լռություն տիրեց։

— Գիտեմ, Մաթյու,— ասաց Քեթին և անցավ իր գործին։

Գլուխ 28

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ

Երկու լավ ընկերները, Լայոնելն ու Յուլիսիսը, իրենց քայլերն ուղղեցին դեպի հանրային գրադարան։ Նրանց դիմացից, Իթաքայի առաջին երիցական եկեղեցուց դուրս եկավ հուղարկավորների մի թափոր։ Մի հասարակ դագաղ էին տանում դեպի հին ավտոմեքենան, որը դիակառքի տեղ էր ծառայում։ Դագաղի ետևից մի փոքրիկ խումբ սգավորներ էին գնում։

— Արի, Յուլիսիս,— ասաց Լայոնելը,— հուղարկավորություն է։ Ինչ-որ մեկը մեռել է։

Նրանք վազեցին։ Լայոնելը բռնել էր Յուլիսիսի ձեռքից։ Շուտով նրանք հուղարկավորների մեջ էին արդեն։

— Դա դագաղ է,— շշնջաց Լայոնելը,— մեռած մարդը դրա մեջն է։ Կուզենայի իմանալ, թե ով է։ Տեսնո՞ւմ ես ծաղիկները։ Մեռոնողներին ծաղիկներ են բերում։ Արտասվողներին տես։ Դրանք մահացածի ծանոթներն են։

Լայոնելը դարձավ մի մարդու, որը այնքան էլ աղեկտուր չէր լալիս։ Մարդը հենց նոր մաքրել էր քիթը և թաշկինակը տարել աչքերի անկյուններին։

— Ո՞վ է մեռել,— հարցրեց Լայոնելը։

— Խեղճ Ջոնի Մերիվեթերը, փոքրիկ կուզը,— պատասխանեց մարդը։

Լայոնելը դարձավ Յուլիսիսին.

— Փոքրիկ Ջոնի Մերիվեթերն է մահացել, փոքրիկ կուզը,— ասաց Լայոնելը։

— Յոթանասուն տարեկան էր,— ասաց մարդը։

— Յոթանասուն տարեկան էր,— ասաց Լայոնելը Յուլիսիսին։

— Մերիփոզա և Բրոդվեյ փողոցների անկյունում խարկած եգիպտացորեն էր ծախում մոտ երեսուն տարի,— ասաց մարդը։

— Խարկած եգիպտացորեն էր ծախում Մերիփո...— Լայոնելը հանկարծ կանգ առավ և նայեց մարդուն։ Նա համարյա գոռաց,— ինչ, դու ուզում ես ասել եգիպտացորեն ծախող ծերունի՞ն։

— Այո,— ասաց մարդը,— Ջոնի Մերիվեթերը հանգավ ի տեր։

— Ախր ես նրան ճանաչում էի,— գոռաց Լայոնելը,— քանի-քանի անգամ ես նրանից խարկած եգիպտացորեն եմ գնել։ Նա մեռա՞վ։

— Այո,— ասաց մարդը,— և շատ խաղաղ մեռավ։ Մեռավ քնի մեջ։ Գնաց իր արարչի մոտ։

— Ես Ջոնի Մերիվեթերին ճանաչում էի,— ասաց Լայոնելը՝ համարյա լաց լինելով։— Ես չգիտեի, որ նրա անունը Ջոնի Մերիվեթեր էր, բայց լավ էի ճանաչում։

Լայոնելը դարձավ Յուլիսիսին և թեը դրեց ընկերոջ ուսին։

— Ջոնին է,— ասաց նա՝ համարյա հեկեկալով։— Ջոնի Մերիվեթերը, իր արարչի մոտ է գնացել։ Իմ լավագույն բարեկամներից մեկը գնացել է հավիտենական հանգստի։

Հուղարկավորները հեռացան և շուտով եկեղեցու առաջ ոչ ոք չմնաց, բացի Լայոնելից և Յուլիսիսից։ Լայոնելին անպատշաճ էր թվում լքել այս վայրը, որտեղ ինքը իմացել էր, թե մեռոնողը, դագաղի միջի

այդ մարդը իր ծանոթն է, թեև չգիտեր, որ նրա անունը Ջոնի Մերիվեթեր է եղել։ Ի վերջո, նա որոշեց, որ չի կարող ընդմիշտ մնալ եկեղեցու առջև, որքան էլ խարկած եգիպտացորեն գնած լիներ Ջոնի Մերիվեթերից։ Եվ հիշեց եգիպտացորենը, համարյա զգաց դրա համը, ու իր ծուլիսիս ընկերոջ հետ քայլեց փողոցն ի վար, դեպի հանրային գրադարան։

Երբ երկու տղաները մտան համեստ, բայց տպավորիչ շենքից ներս, զգացին, որ խոր և գրեթե երկյուղ ազդող լռություն էր տիրում այդտեղ։ Թվում էր, որ նույնիսկ պատերը, հատակն ու սեղանները պապանձվել էին, կարծես լռությունը կլանել էր բովանդակ շենքը։ Այնտեղ կային ծերունիներ, որոնք թերթ էին կարդում։ Քաղաքային փիլիսոփաներ կային, միջնակարգ դպրոցի տղաներ ու աղջիկներ, որոնք պրպտումներ էին կատարում, բայց բոլորը լուռ էին, որովհետև իմաստություն էին որոնում։ Բոլորն էլ գրքերի մոտ էին, բոլորն էլ ուզում էին մի բան հայտնաբերել գրքերի մեջ։ Լայոնելը ոչ միայն շշնջալով էր խոսում, այլև ոտքի մատների վրա էր քայլում։ Նա շշնջալով էր խոսում, որովհետև կարծում էր, որ պակաս հարգանք դրսևորած կլինի ոչ միայն ընթերցողների, այլև գրքերի հանդեպ։ Ծուլիսիսը հետևում էր նրան, նույնպես ոտքի մատների վրա քայլելով։ Նրանք զննում էին գրադարանը, և յուրաքանչյուրն իր համար անթիվ գանձեր էր հայտնաբերում. Լայոնելը՝ գրքեր, իսկ Ծուլիսիսը՝ մարդիկ։ Լայոնելը գրքեր էր կարդում և հանրային գրադարան չէր եկել գիրք վերցնելու համար։ Նա պարզապես սիրում էր նայել դրանց։ Նա իր բարեկամին ցույց տվեց մի ամբողջ շարք գրքեր և շշնջաց.

— Տես, ինչքա՞ն շատ են։ Ահա սրանք։ Մի այստեղ նայիր։ Սա կարմիր է։ Այնտեղ մի հատ էլ կանաչը կա։ Եվ դեռ ինչքա՞ն գրքեր կան։

Ի վերջո միսիս Գալահերը՝ ծեր գրադարանավարուհին, նկատեց երկու երեխաներին և մոտեցավ նրանց։ Նա խոսեց առանց շշնջալու, խոսեց բարձրաձայն, կարծես բոլորովին էլ հանրային գրադարանում չգտնվեր։ Այդ մեծապես զարմացրեց Լայոնելին և ստիպեց, որ ընթերցողներից մի քանիսը գլուխները բարձրացնեն գրքերից։

— Քեզ ի՞նչ է հարկավոր, տղա,— ասաց միսիս Գալահերը Լայոնելին։

— Գրքեր,— կամացուկ փսփսաց Լայոնելը։

— Ինչպիսի՞ գրքեր,— հարցրեց գրադարանավարուհին։

— Բոլորը,— ասաց Լայոնելը։

— Բոլո՞րը,— հարցրեց գրադարանավարուհին։— Ի՞նչ ես ուզում ասել։ Մի աբոնեմենտով միայն չորս գիրք կարելի է վերցնել։

— Ես ոչ մի գիրք էլ չեմ ուզում վերցնել,— ասաց Լայոնելը։

— Հապա ի՞նչ ես ուզում,— հարցրեց գրադարանավարուհին։

— Պարզապես դիտել եմ ուզում,— ասաց Լայոնելը։

— Դիտե՞լ,— ասաց գրադարանավարուհին։— Հանրային գրադարանը դիտելու համար չի ստեղծված։ Եթե կարդալ չգիտես, կարող ես գրանք թերթել, կարող ես նկարները նայել. բայց ինչո՞ւ ես ուզում միայն գրանց կազմերը տեսնել։

— Սիրում եմ,— շշնջաց Լայոնելը,— չի՞ կարելի։

— Ինչո՞ւ չէ,— ասաց գրադարանավարուհին,— դրա դեմ օրենք չկա,— կինը նայեց Յուլիսիսին։— Իսկ սա ո՞վ է,— հարցրեց նա։

— Սա Յուլիսիսն է,— ասաց Լայոնելը,— նա կարդալ չգիտի։

— Իսկ դու գիտե՞ս,— հարցրեց գրադարանավարուհին։

— Ոչ,— ասաց Լայոնելը,— բայց նա էլ չգիտի։ Դրա համար էլ մենք ընկերներ ենք։ Իմ ծանոթների մեջ նա միակն է, որ չի կարող կարդալ։

Ծեր գրադարանավարուհին մի պահ նայեց երկու ընկերներին և հիացմունքից հայհոյեց մտքում։ Հանրային գրադարանում, երկար տարիների իր աշխատանքի ընթացքում սա բոլորովին անսովոր մի դեպք էր։

— Լավ,— ասաց նա վերջապես,— գուցեև լավ է, որ դուք չեք կարող կարդալ։ Ես կարող եմ կարդալ։ Վերջին վաթսուն տարիներին շատ գրքեր եմ կարդացել և չեմ կարող ասել, թե ինչ-որ բան կփոխվեր, եթե կարդացած չլինեի։ Դե, այժմ գնացեք և ձեր ուզածի չափ դիտեցեք գրքերը։

— Շնորհակալություն, տիկին,— ասաց Լայոնելը։

Երկու ընկերները շարժվեցին դեպի գաղտնիքի և արկածների ավելի մեծ ոլորտներ։ Լայոնելը ավելի շատ գրքեր ցույց տվեց Յուլիսիսին։

— Սրանք,— ասաց նա,— և դրանք՝ վերևում եղածները, բոլորը գրքեր են, Յուլիսիս։— Նա մի պահ մտքերի մեջ ընկավ։— Արդյոք ի՞նչ է ասվում բոլոր այդ գրքերի մեջ,— նա ցույց տվեց գրքերով լեցուն հինգ դարակ։— Հետաքրքիր է, ի՞նչ է գրված այս բոլորի մեջ,— ասաց նա։ Վերջապես նա գտավ մի գիրք, որը արտաքինից շատ գեղեցիկ էր երևում։ Նրա կազմը կանաչ էր, թարմ խոտի նման։— Իսկ այս մեկը,— ասաց նա,— այս մեկը տես ինչքան գեղեցիկ է, Յուլիսիս։

Փոքր-ինչ վախենալով իր արածից, Լայոնելը այդ գիրքը հանեց դարակից, մի քիչ պահեց ձեռքում, հետո բացեց։

— Տես, Յուլիսիս,— ասաց նա,— սա գիրք է։ Նայիր։ Մեջը ինչ-որ բան կա ասված։— Նա ցույց տվեց տպագրված տողերը։— Ահա «ա»...ն,— ասաց նա,— սա է «ա»-ն։ Սա էլ ուրիշ տառ է, բայց չգիտեմ, թե որն է։ Բոլոր տառերը տարբեր են, Յուլիսիս, բառերն էլ են

տարբեր։— Չեմ կարծում, որ ես երբևէ կարդալ կսովորեմ,— ասաց նա,— բայց այնքան եմ ուզում իմանալ, թե ինչ է ասված այս բոլոր գրքերի մեջ։ Ահա նկար է,— ասաց նա,— աղջիկ է նկարված։ Տեսնո՞ւմ ես։ Գեղեցիկ է, չէ՞։— Նա թերթում էր էջերը,— տեսնո՞ւմ ես, էլի տառեր և բառեր, մինչև գրքի վերջը։ Սա հանրային գրադարան է, Ցուլիսիս,— ասաց նա,— ամենուր գրքեր են,— նա ակնածանքով նայում էր տպագիր տողերին, շարժում շուրթերը, կարծես փորձում էր կարդալ։ Հետո գլուխն օրորեց։— Չես կարող իմանալ, թե ինչ է գրված գրքում, Ցուլիսիս, մինչև որ կարդալ չիմանաս, իսկ ես կարդալ չգիտեմ,— ասաց նա։

Կամացուկ փակեց գիրքը, դրեց տեղը, և երկու ընկերները ոտքի թաթերի վրա դուրս եկան գրադարանից։ Դրսում Ցուլիսիսը սկսեց ցատկոտել, որովհետև ուրախ էր։ Նրան թվում էր, թե ինչ-որ բան է սովորել։

Գլուխ 29

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱԿՈՒՄԲՈՒՄ

Ի թաքայի դասախոսական ակումբի դիմաց Հոմեր Մաքոլին իջավ հեծանիվից։ Դա մի սպիտակ շենք էր, ճարտարապետական մի խառնուրդ՝ գաղթապետական տան և անգլիական եկեղեցական ոճերի։ Ժամը երկուսն անց կես էր, կեսօրից հետո, և շաբաթ օրվա դասախոսությունը սկսվելու վրա էր։ Ներս էին մտնում փափլիկ, նորաձևության հետևող անորոշ և միջին տարիքի տիկնայք, մեծ մասամբ՝ մայրեր։ Ցրիչը մի հեռագիր հանեց գլխարկից և հասցեն կարդաց։ Հեռագիրն ուղղված էր Ռոզալի Սիմս-Փիբիթիին՝ Ի թաքայի դասախոսական ակումբ, Ի թաքա, Կալիֆոռնիա։ Հանձնել՝ անձամբ։

Երբ ցրիչը մտավ դահլիճ, ակումբի նախագահը մոտ հիսուն տարեկան գեղեցիկ և կլորիկ դեմքով մի տիկին, սկսել էր ներկայացնել օրվա դասախոսին, որը չէր երևում։ Ակումբի նախագահը հնչեցրեց սեղանի վրայի փոքրիկ զանգը, և ունկնդիրները սկսեցին լսել նրան։ Հոմեր Մաքոլին, սակայն, Ռոզալի Սիմս-Փիբիթիին փնտրելիս, չկարողացավ փոքր-ինչ շաղմկել։ Մի ինչ-որ տիկին, մոտ իննսուն կիլոգրամ ծանրությամբ, սիրալիր ժպտալով, նրան սաստեց։

— Ես հեռագիր ունեմ Ռոզալի Սիմս-Փիբաթիի համար,— շշնջաց Հոմերը։— Անձամբ պետք է հանձնեմ նրան։

— Ռոզալի Սիմս-Փիբիթի,— լեդին ուղղեց տղային։— Այո, Ռոզալի Սիմս-Փիբիթին հեռագիր է սպասում։ Դու հեռագիրը նրան կհանձնես այն ժամանակ, երբ նա բեմում կերևա։

— Իսկ այդ ե՞րբ կլինի,— հարցրեց Հոմերը։

— Այս րոպեին,— ասաց Լեդին,— նստիր և սպասիր։ Երբ Ռոզալի Սիմս-Փիբիթին երևա, վազիր բեմ և բղավիր բարձր ու հստակ ձայնով. «Հեռագիր Ռոզալի Սիմս-Փիբիթի համար»։ Փիբաթի չասես, հա՞։

— Շատ լավ, տիկին,— ասաց Հոմերը։

Ցրիչը նստեց, իսկ լեդին հեռացավ ոտքի թաթերի վրա, հպարտորեն ժպտալով, կարևոր գործ կատարած մարդու տեսքով։

— Իթաքայի դասախոսական ակումբի անդամներ,— սկսեց խոսել ակումբի նախագահը,— այսօր մեզ մեծ անակնկալ է սպասում։ Մեր դասախոսն է Ռոզալի Սիմս-Փիբիթին։— Այս անվան հայտարարությունից հետո ակումբի նախագահը լռեց, որպեսզի ժամանակ տա սովորական ծափահարության։ Ծափահարությունից հետո նա շարունակեց։— Ես կարիք չեմ զգում ձեզ ասելու, թե ո՞վ է Ռոզալի Սիմս-Փիբիթին։ Նա հռչակավոր է միջազգային առումով։ Նա մեր ժամանակի ամենամեծ կանանցից մեկն է։ Բոլորս լսել ենք նրա անունը և բոլորս գիտենք, որ նա հռչակավոր է։ Բայց արդյոք մենք գիտե՞նք, թե ինչու է նա հռչակավոր։— Եվ ինքն էլ պատասխանեց այս հարցին։— Ցավոք, չգիտենք,— ասաց նա և մի պահ լսարանում գտնվող իր ընկերներին՝ Կալիֆոռնիայի Իթաքա քաղաքի կանանց նայելուց հետո, սկսեց այդ մեծ անձնավորության կենսագրությունը պատմել.— Ռոզալի Սիմս-Փիբիթիի կյանքի պատմությունը առանձնապես ոգևորիչ է կանանց համար,— ասաց ակումբի նախագահը այնպիսի եղանակով, կարծես պատմում էր անանման մի բան, որը նվազ հրաշապատում չէր, քան Ոդիսևսի պատմությունը։— Սիմս-Փիբիթին, նա նախընտրում է, որ իրեն այդպես կոչեն, ապրել է մի վիպական կյանք՝ արկածներով, վտանգներով ու գեղեցկությամբ լեցուն։ Ի դեպ, նա այսօր էլ տղամարդկանց խելքահան անող, համարձակ ու գեղեցիկ անգլիացի մի աղջիկ է, աղջիկ, որ պողպատի նման տոկուն է և շատ տղամարդկանցից ուժեղ։ Փաստորեն քիչ մարդիկ կան, որոնք ապրած լինեն այնպիսի արկածային կյանք, ինչպիսին Սիմս-Փիբիթիի կյանքն է։— Տխրության մի մեղմ շեշտ զգացվեց Իթաքայի դասախոսական ակումբի նախագահի ձայնի մեջ, մինչ նա շարունակում էր պատմել այդ մեծ հերոսական կնոջ կյանքի դյուցազնավեպը։

— Գալով մեզ,— ասաց նա տխրորեն,— տանը նստողներիս, մայրերիս, այսպես ասած՝ երեխա բերող-մեծացնողներիս, Սիմս-Փիբիթիի կյանքը թվում է երազ. այդ մեր երազն է, չիրականացած երազը. մեզ-

Դից յուրաքանչյուրի, որ տանը նստած երեխաներ է ծնել և իր տան գործերը կարգավորել։ Ահա մի գեղեցիկ կյանք, որ ամեն մեկս պիտի նախընտրեր, եթե ունենար համարձակություն ու արիություն, բայց ճակատագիրը այդպիսի արկածներ չի վերապահել մեզ համար և այդ պատճառով էլ ամբողջ աշխարհում կա միայն մեկ Սիմս-Փիբիթի։ Միայն մեկը։

Ակումբի նախագահը նորից նայեց իր ունկնդիր ընկերների դեմքերին։

— Ինչ սխրագործություններ է կատարել Սիմս-Փիբիթին, որը նրան այդքան բացառիկ է դարձրել կանանց մեջ,— շարունակեց նա,— նրա արկածները շատ են, և եթե կարդամ այդ ցուցակը, դուք հազիվ թե հավատաք, որ որևէ կին կարող է այդպիսի բաներ անել և ողջ մնալ, բայց նա ողջ է, մեր մեջ է ահա և խոսելու է մեզ հետ։ Սիմս-Փիբիթին խոսելու է մեզ հետ պարզ լեզվով, որից ոմանք պետք է սարսռան։ Բայց նախ թույլ տվեք այդ արկածները համառոտակի թվել, որովհետև նրանց լրիվ շարադրանքը կարող է մի ամբողջ օր տևել և գուցե նաև մի ամբողջ գիշեր, քանի որ յուրաքանչյուր օրը նոր արկած է ուղեկցել նրան՝ որտեղ որ գնում է, և մենք կարող ենք վստահ լինել, որ մեր անծանոթ փոքր քաղաքից, Իթաքայից չմեկնած, նա կհայտնաբերի այնպիսի բաներ, որոնք մենք ինքներս չենք նկատում։ Բայց խոսենք արկածների մասին։ 1915—1917 թվականներին Սիմս-Փիբիթին ռազմաճակատում շտապ օգնության մեքենավար է եղել։ 1917 և 1918 թվականների ընթացքում մի ուրիշ աղջկա հետ շրջել է աշխարհի շուրջը շոգեմակուկով, անասուններ փոխադրող նավերով, ոտքով և ձիով, ապրելով բազմաթիվ օտար վայրերում, երբեմն նույնիսկ ընիկների հյուղակներում։ Նա այցելել է 27 տարբեր երկրներ. ձերբակալվել է հարավային բանակի կողմից՝ Չինաստանում, երբ փորձում էր Կանտոնից Հանկոյ անցնել։

Ակումբի նախագահը մի պահ կանգ առավ՝ տեսնելու համար այդ մոգական խոսքերի ազդեցությունը, հետո կրկնեց դրանք, համարյա շշնջալով։

— Կանտոն և Հանկոյ։ Սիմս-Փիբիթին Սիան փրփրաբաշ գետի վրայով անցնելով փախել է գերությունից ձմռանը, երբ ոչ ոք այդպիսի բան չէր համարձակվի։

1919-ին, Հյուսիսային Աֆրիկայի վրայով Մարոկկոյից գնացել է Հաբեշստան։ 1920-ին նա որպես հետախույզ ծառայել է Սիրիայում։ Դամասկոսում նա հանդիպել է Ֆեյսալ թագավորին, որը օգնել է նրան ուսումնասիրելու Կուֆարան, որտեղ, մինչ այդ, ոչ մի սպիտակամորթ ոտք չէր դրել, մի վայր, որ Սինուսի աղանդի գաղտնի և սուրբ մայրա-

քաղաքն է և գտնվում է Լիվիայի անապատի խորքերում։ Սիմս-Փիբիթին այնտեղ գնացել է ծպտված՝ որպես եգիպտուհի, ուղտով անցնելով հազար մղոն տարածություն, ուղեկից ունենալով միայն բնիկներին, որոնք անգլերեն մի բառ անգամ չեն իմացել։— Իթաքայի դասախոսական ակումբի նախագահը այս խոսքից հետո աչքերը բարձրացրեց և նայեց իր ամենամտերիմ երկու ընկերուհիներին։ Հոմեր Մաքոլին զարմացավ, թե ինչ էր ուզում ասել նա այդ հայացքով և հետո մտածեց, թե նա ինչքան երկար պիտի խոսի այս անհավատալի և զարմանալի անձնավորության՝ Ռոզալի Սիմս-Փիբիթիի մասին։

— 1923 թվականին,— շարունակեց խոսողը,— Սիմս-Փիբիթին ութսունչորս օր նավարկել է արաբ անձնակազմ ունեցող քսան տոննանոց մի առագաստանավի վրա և Կարմիր ծովով գնացել է Ջեյսանի արգելված նավահանգիստը։ Այս անգամ նա ծպտված էր արաբ կնոջ կերպարանքով։ 1925-ին նա մագլցել է Մարոկկոյի Ատլաս լեռը։ 1926 թվականին Հաբեշստանի միջով անցել է հազար հարյուր մղոն, որը, հավանաբար, համաշխարհային ռեկորդ է։— Այստեղ նախագահը իր և Իթաքայի իր բարեկամների համար սարսափելի վշտով ասաց։— Իսկ մենք, մեր հաճույքի համար երբևիցե քայլո՞ւմ ենք այնպիսի մի կարճ տարածություն, ինչպիսին է Գոդչոքից մինչև Ռեդինգ զբոսայգին։— Նա հառաչեց և ապա, չիմանալով ինչպես պատասխանել այդ հարցին, ասաց.— Վատ չէր լինի, եթե քայլեինք. մեր առողջության համար գուցե շատ օգտակար լիներ։— Ապա վերադարձավ օրվա դասախոսին ներկայացնելու գործին, նայելով ձեռքում բռնած թղթին։

— 1923-ին Սիմս-Փիբիթին անցել է Բալկաններով՝ լոնդոնյան մի թերթի հանձնարարությամբ,— շարունակեց նա,— մերթ մի երկրի բնիկ կնոջ կերպարանքով ծպտված, մերթ մի ուրիշ երկրի։

Զանձրանալով, անհամբերությամբ սպասելով, ձգտելով վերադառնալ հեռագրատուն, իր գործին, Հոմեր Մաքոլին զարմացած մտածում էր. «Ինչո՞ւ է նա անընդհատ ծպտվում»։

Իթաքայի դասախոսական ակումբի նախագահը շարունակեց.

— 1930-ին Սիմս-Փիբիթին մի հետաքրքրական ճանապարհորդություն է կատարել Թուրքիայով և հանդիպել մի թուրքի՝ Մուստաֆա Քեմալին։ Այստեղ Սիմս-Փիբիթին ծպտվել է լեռնաբնակ թուրք աղջկա կերպարանքով։ Ձիով անցել է ավելի քան հազար մղոն, ամբողջ Մերձավոր Արևելքը։ Ադրբեջանում ականատես է եղել կոմունիստական կարմիր բանակի կռիվներին կովկասյան ապստամբների դեմ։ 1931 թվականին շրջել է Հարավային Ամերիկայում, Բրազիլիայի ջունգլիներում, բնիկների ընկերակցությամբ, որոնցից մեկի անունը, ես այդ իմացել եմ հենց

իրենից՝ Սիմս-Փիբիթիից, Մեքս էր։— Իթաքայի դասախոսական ակումբի նախագահն արդեն մոտենում էր իր ճառի ավարտին։ Նա շունչ քաշեց և ասաց.— Սակայն Սիմս-Փիբիթիի արկածները անվերջանալի են, իսկ դուք ուզում եք տեսնել և լսել նրան և ոչ թե ինձ.— Այս հաճելի համեստությունը հրաշալի ակումբի հրաշալի նախագահի մեջ ուղեկցվեց մի նյարդային ծիծաղով՝ համակրական սրտագին ծիծաղ առաջացնելով նրա բարեկամ ունկնդիրների մեջ։ Երբ պատշաճ հանդարտությունը իջավ ունկնդիրների վրա, նախագահը իր ճառը եզրափակեց թատերական մի ուժգին ձայնով.— Ինձ համար, որպես Իթաքայի դասախոսական ակումբի նախագահի, մեծ պատիվ է ծանոթացնել ձեզ Ռոզալի Սիմս-Փիբիթիի հետ։

Ծափահարություններն այս անգամ վերածվեցին խսկական օվացիայի։ Ակումբի նախագահը դարձավ դեպի բեմի մուտքը, ողջունելու համար օրվա հռչակավոր այցելուին, բայց, ավաղ, այցելուն ոչ մի տեղ չէր երևում։ Ունկնդիրները, այդ ուշացումից օգտվելով, սաստկացրին ծափահարությունը և հավանաբար լրիվ երկու րոպե տևող ծափահարությունից հետո, որի ընթացքում մի քանի կանայք խոստովանեցին, թե իրենց ձեռքերը ցավեցին, վերջապես մեծ տիկինը երևաց։

Հոմեր Մաքոլին կարծում էր, թե ինքը կտեսնի մի այնպիսի կնոջ, որ բոլորովին տարբեր կլինի աշխարհում տեսած բոլոր կանանցից։ Նա չէր կարողանում ճշգրտորեն պատկերացնել, թե ինչ տեսք պիտի ունենար այդ արարածը, բայց վստահ էր, որ նա առնվազն հետաքրքրական կլիներ, և իսկապես չէր սխալվել։ Ռոզալի Սիմս-Փիբիթին, կարճ ասած, մի բանաձ մարտական նժույգ էր, սեռազուրկ, չորացած, բարձրահասակ, ոսկրոտ, ծիծաղելի և տգեղ։ Հոմերը վեր կացավ ոչ թե նրա համար, որ հասել էր հեռագիրը տալու ժամանակը, այլ, ավելի շատ, զարմանքից։ Եվ տարօրինակ չէր, որ նա չվազեց դեպի բեմը հեռագիրը հանձնելու, ինչպես իրեն սովորեցրել էին։

Այդ ժամանակ, նույն սիրալիր տիկինը, որը նրան սովորեցրել էր սնելիքը, վազելով եկավ, և մինչ Հոմերը ուշքի կգար, տղային սրահով հրեց դեպի բեմ՝ ականջին փսփսալով բավականաչափ բարձր, որ բոլորը լսեն.

— Դե, տղա, ժամանակն է, հանձնիր հեռագիրը։

Բեմի վրայի մեծ տիկինը իրեն այնպես էր պահում, կարծես տեղյակ չէր այդ բոլորին։

— Լեդիներ,— սկսեց նա,— Իթաքայի դասախոսական ակումբի անդամներ,— նրա ձայնը նույնքան անդուր էր, որքան և արտաքինը։

Հոմեր Մաքոլին բեմ վազեց և շատ հստակ ձայնով հայտարարեց.

— Հեռագիր Ռոզալի Սիմս-Փիբիթիի համար։

Նշանավոր տիկինը դադարեցրեց ճառը և դարձավ լրաբերին, կարծես նրա երևալը բոլորովին պատահական էր։

— Այստեղ արի, մանչուկ,— ասաց նա,— ես եմ Սիմս-Փիբիթին,— նա դարձավ ունկնդիրներին և ասաց,— ներեցեք լեդիներ։— Նա ստորագրեց, վերցրեց հեռագիրը և ցրիչին մի արծաթ դրամ տվեց՝ ասելով.— Վերցրու քո վարձը, մանչուկ։

Հոմերի համար վիրավորական էր այդ դրամն ընդունելը, բայց միևնույն ժամանակ ամեն ինչ այնպես ծիծաղելի էր և շփոթեցնող, որ նա չկարողացավ մերժել։ Նա վերցրեց արծաթե դրամը և շատ այլայլված, բեմից ցած շտապելով, շենքից դուրս եկավ։ Դուրս շտապելիս նա լսում էր երևելի տիկնոջ ձայնը. նա վերսկսել էր իր ճառը։

— Ուրեմն, 1939 թվականին,— ասում էր նա,— այս նոր պատերազմի նախօրյակին ես գտնվում էի Բավարիայում, գաղտնի միսիայով, ալզասցի կաթնավաճառուհու կերպարանքով ծպտված։

Փողոցում, մայթի վրա Հոմերը տեսավ Հենրի Վիլկինսոնին, որ դեռ երիտասարդ հասակում զրկվել էր երկու ոտքից, երկաթուղային աղետի պատճառով։ Եվ ահա, երեսուն տարի է գլխարկի մեջ լցրած մատիտներ էր ծախում։ Հոմերը նրան անունով չէր ճանաչում, բայց միշտ տեսել էր նրան, թեև երբեք նրանից մատիտ չէր գնել կամ նրա գլխարկի մեջ արծաթե դրամ գցել։ Ռոզալի Սիմս-Փիբիթիի տված արծաթը նա գցեց այդ մարդու գլխարկի մեջ և շտապեց դեպի իր հեծանիվը։ Արդեն նստել էր հեծանիվը և քսան յարդ հեռացել, երբ զգաց, որ ինչ-որ վատ բան կար իր արարքի մեջ։ Ետ դառնալով, նա հեծանիվը նետեց մայթի վրա և վազեց այն մարդու մոտ, որը երկու ոտքերն էլ կորցրել էր երեսուն տարի առաջ։ Այս անգամ Հոմերը նրա գլխարկի մեջ մի քառորդանոց գցեց, իր սեփական քառորդանոցը։

Գլուխ 30

ԲԵԹՀԵԼ, ՀՅՈՒՐԱՍԵՆՅԱԿՆԵՐՈՒՄ...

Կես ժամ հետո ցրիչը հեծանիվից իջավ Այ փողոցի վրա գտնվող Բեթհել հյուրանոցի առջև և վազեց աստիճաններն ի վեր։ Ընդարձակ ընդունարանի անկյունում գրասեղանի փոխարեն դրված էր մի պարզ սեղան։ Սեղանի վրա մի փոքր զանգակ կար, իսկ պատի վրա գրված էր. «Զանգահարել»։ Ցրիչը նայեց շուրջը և տեսավ փոքր հյուրա-

նոցի բուզմաթիվ փակ դռները։ Հետո նայեց հեռագրին, որն ուղղված էր Դոլի Հաուիթորնին։ Սենյակներից մեկում նվագում էր պատեֆոնը և լսվում էր երկու երիտասարդ կանանց ու երկու տղամարդկանց խոսակցությունն ու ծիծաղը։ Մի վայրկյան անց մի ուրիշ սենյակից դուրս եկավ քառասունի մոտ մի տղամարդ և կանգնեց դռանը, խոսելով մի երիտասարդ կնոջ հետ, որի միայն գլուխն էր երևում։ Հետո դուռը արագ փակվեց, և տղամարդն աստիճաններով ցած իջավ։ Հոմերը սեղանի վրայի զանգը սեղմեց։ Քիչ առաջվա փակված դուռը նորից բացվեց, և աղջիկը կայտառ ձայնով բղավեց.

— Հիմա, այս րոպեիս։

Երբ աղջիկը երևաց, ցրիչը զարմացավ, որ աղջիկը այդքան գեղեցիկ ու երիտասարդ էր։ Նա Մերիից կամ Բեսից շատ տարբեր չէր։

— Հեռագիր՝ Դոլի Հաուիթորնի համար,— ասաց ցրիչը երիտասարդ կնոջը։

— Նա դուրս է եկել,— ասաց երիտասարդ կինը,— կարո՞ղ եմ նրա փոխարեն ստորագրել։

— Այո, տիկին,— պատասխանեց Հոմերը։ Երիտասարդ կինը ստորագրեց և հետաքրքրությամբ նայեց Հոմերին։

— Մի րոպե սպասիր, կարելի՞ է,— ասաց նա հանկարծ։ Նա շուտ եկավ և վազեց մի ուրիշ սենյակ։ Նրա գնալուց հետո մի տղամարդ բարձրացավ աստիճաններով և կանգնեց Հոմերի մոտ։ Նա և Հոմերը մի քանի անգամ իրար նայեցին։ Երբ աղջիկը վերադարձավ և տեսավ այդ տղամարդուն, կանչեց Հոմերին, և նրանք մտան այն սենյակը, որտեղից աղջիկը առաջին անգամ դուրս էր եկել։ Սենյակում անծանոթ, տարօրինակ հոտ էր տարածված։

Երիտասարդ կինը ցրիչին մի նամակ տվեց.

— Այս նամակը փոստ կգցե՞ս,— ասաց նա, նայելով ցրիչի աչքերին։— Շատ կարևոր է,— շարունակեց նա։— Իմ քրոջն է ուղղված. նամակատուն տար, օդային հատուկ հանձնում, պատվիրած։ Նամակի մեջ փող կա։ Իմ քույրը փողի կարիք է զգում։ Նամականիշ չունեմ։— Երիտասարդ կինը մի պահ լռեց, որպեսզի Հոմերը ժամանակ ունենա հասկանալու, թե ինչքան կարևոր է այդ նամակը գցելը։— Այդ բանը կանե՞ս ինձ համար։

Իրեն անհասկանալի ինչ-որ պատճառով ցրիչը վատ զգաց։ Դա նման էր ճիշտ այն զգացումին, որ նա ունեցել էր մեքսիկացի կնոջ տանը, որի տղան պատերազմում սպանվել էր։

— Այո, տիկին,— ասաց Հոմերը,— ես հենց հիմա նամակը ուղիղ

նամակատուն կտանեմ, պատվիրած, օդային, հատուկ հանձնում կանեմ։ Հենց հիմա կտանեմ,— կրկնեց նա։

— Ահա մի դոլար,— ասաց երիտասարդ կինը,— նամակը գլխարկիդ մեջ դիր։ Ոչ ոք թող չտեսնի։ Ոչ ոքի այդ մասին մի ասա։

— Շատ լավ, տիկին,— ասաց Հոմերը,— ոչ ոքի չեմ ասի։— Նա նամակը դրեց գլխարկի մեջ։— Ես այն ուղիղ նամակատուն կտանեմ, հետո կբերեմ ձեր փողի մնացորդը։

— Կարիք չկա, ետ մի դա,— ասաց երիտասարդ կինը։— Դե, շտապիր և հիշիր, որ ոչ ոք չպետք է իմանա։

— Չեմ ասի,— ասաց Հոմերը և սենյակից դուրս եկավ։ Նա աստիճաններին հասավ ճիշտ այն ժամանակ, երբ աղջիկը մոտեցել էր վաճառասեղանի մոտ կանգնած մարդուն։ Աստիճանի առաջին անկյունադարձին նա դեմ-դիմաց ելավ մի շքեղ հագնված փարթամ կնոջ, որը հիսուն-հիսունհինգ տարեկան կլիներ։ Կինը, ցրիչին տեսնելով, կանգնեց և ժպտաց նրան.

— Ինձ հեռագի՞ր ես բերել,— ասաց նա,— Դոլի Հաութորնին։

— Այո, տիկին,— ասաց Հոմերը,— վերևում թողեցի։

— Ապրես,— ասաց Դոլի Հաութորնը։ Նա մի պահ նայեց Հոմերին, հետո ասաց,— դու նոր ցրիչ ես, ճիշտ է։ Ես բոլոր ցրիչներին ճանաչում եմ։ Նրանք բոլորն էլ լավ, բարի տղաներ են, թե Արևմտյան ընկերության և թե փոսթալ թելեգրաֆի տղաները։ Բոլոր ցրիչները ինձ հետ լավ են, և ես նրանց նկատմամբ լավ եմ տրամադրված։— Դոլի Հաութորնը բացեց ձեռքի թանկարժեք պայուսակը և մի քանի այցետոմս հանեց։

— Վերցրու,— ասաց նա ու Հոմերին մեկնեց մոտ քսան այցետոմս։

— Այդ ինչի՞ համար է,— ասաց Հոմերը։

— Դու ամեն տեղ հեռագիր ես տանում,— ասաց Դոլի Հաութորնը,— դու լինում ես նաև գինետներում։ Դրանք պարզապես թող այդ տեղերում, դուրս գալու ժամանակ։ Այդ այցետոմսերը դիր ուղևորների, զինվորների և նավաստիների մոտ, որոնք կարող են մի գիշերվա համար սենյակի կարիք զգալ։ Այս սարսափելի պատերազմի ընթացքում մենք պետք է աշխատենք մեր տղաներին երջանկացնել, քանի դեռ նրանք մեզ մոտ են գտնվում։ Ոչ ոք ինձնից լավ չգիտի, թե որքան կարող է թախծել զինվորը, երբ չգիտի, թե ինչ է սպասվում իրեն, ո՞ղջ է դիմելու, թե՞ մեռած։

— Այո, տիկին,— ասաց Հոմերը։

Նա փողոց դուրս ելավ, իսկ միսիս Դոլի Հաութորնը շարունակեց բարձրանալ Բեթհելի հյուրասենյակները։

ՄԱՐԴ-ՄԵՔԵՆԱՆ

Հանրային գրադարանում կատարած արկածային ուղևորությունից հետո Լայոնելն ու Յուլիսիսը շարունակեցին ճանապարհորդել Իթաքայում։ Երեկոյան նրանք անգործների և անցորդների մի փոքրիկ բազմության առջև էին, որը դիտում էր երրորդ կարգի մի դեղատան ցուցափեղկի մեջ կանգնած մարդուն։ Մարդը շարժվում էր մեքենայի նման, թեև, ըստ երևույթին, շնչավոր էակ էր։ Նրա նայվածքն այնպիսին էր, կարծես մեղրամոմից շինված լիներ։ Նա անմարդկային էր թվում և կանգնած վիճակում նման էր չթաղված մի դիակի, որը դեռևս կարողանում է շարժվել։ Այդ մարդը ամենաանհավատալի բանն էր, որ Յուլիսիսը երբևէ տեսել էր աշխարհում իր ապրած չորս տարիների ընթացքում։ Այդ տարօրինակ մարդու աչքից ոչ մի լույս չէր ճառագում։ Նրա շուրթերը փակվել էին այնպիսի ձևով, որ կարծես երբեք չէին բացվելու։

Այդ մարդը բժիշկ Բրադֆորդի կենաց բուժադեղն էր ռեկլամում։ Նրա կողքերին երկու ցուցատախտակներ էին փակցված։ Մեկի վրա գրված էր հետևյալ հայտարարությունը. «Միստր Մեշանա՝ մարդ-մեքենա, կիսամեքենա-կիսամարդ։ Ավելի շատ մեռած, քան կենդանի։ Հիսուն դոլար մրցանակ կստանաս, եթե կարողանաս շարժել նրա ժպիտը, հինգ հարյուր՝ եթե կարողանաս ծիծաղեցնել»։ Մյուս տախտակի վրա միստր մարդ-մեքենան դնում էր թղթերը, որոնք նա մեքենաբար վերցնում էր տախտակի առջևի փոքր սեղանից։ Այս թղթերի վրա տպագրված էին տարբեր հայտարարություններ, որոնցով կոչ էր արվում ժողովրդին՝ գնելու բժիշկ Բրադֆորդի՝ մարդու օրգանիզմը ավելի կենսունակ դարձնող հայտնագործած դեղը։ Յուրաքանչյուր թերթը տախտակի վրա տեղավորելուց հետո մարդ-մեքենան ձեռքի փայտիկով ցույց էր տալիս գրվածը։ Երբ բոլոր տասը թերթերը դասավորվում էին տախտակի վրա, մարդ- մեքենան վերցնում էր դրանք, և դնում սեղանին, ապա այդ ամբողջ գործողությունը սկսում նորից։

— Դա մարդ է, Յուլիսիս,— ասաց Լայոնելն ընկերոջը։— Հավատացնում եմ։ Մեքենա չէ, Յուլիսիս, ազնիվ խոսք, մարդ է։ Նայիր աչքերին։ Նա ողջ է։ Տեսնո՞ւմ ես։

Մարդ-մեքենայի այդ պահին դրած թղթի վրա կարելի է կարդալ. «Ի՞նչ ես կիսամեռ վիճակում քարշ գալիս։ Վայելիր կյանքը։

Գնիր բժիշկ Բրադֆորդի կենաց դեղը, և դու քեզ բոլորովին երիտասարդ կզգաս»։

— Տես, մի ուրիշ թերթ դրեց,— ասաց Լայոնելը,— վրան ինչ-որ բան է գրված։— Հանկարծ նա ձանձրացավ և ուզեց տուն գնալ։— Եկ գնանք, Յուլիսիս,— ասաց նա,— բոլոր այդ թղթերն արդեն երեք անգամ դրել է։ Տուն գնանք, արդեն երեկո է։— Նա բռնեց ընկերոջ թևից, բայց Յուլիսիսը նրա ձեռքը մի կողմ հրեց։

— Եկ, Յուլիսիս,— ասաց Լայոնելը,— եկ տուն գնանք, ես քաղցած եմ։— Բայց Յուլիսիսը գնալ չէր ուզում։ Նա կարծես չէր էլ լսում Լայոնելի ասածը։

— Ես գնում եմ, Յուլիսիս,— սպառնաց Լայոնելը։ Նա սպասեց, որ Յուլիսիսը իրեն հետևի, բայց տղան տեղից չշարժվեց։ Մի քիչ վիրավորված և զարմացած այս դավաճանությունից, Լայոնելը տուն գնաց՝ յուրաքանչյուր երեք կամ չորս քայլից հետո ետ դառնալով՝ տեսնելու համար, թե վերջապես ընկերը չի՞ միանում իրեն։ Բայց ոչ, Յուլիսիսը ուզում էր մնալ և նայել մարդ-մեքենային։ Լայոնելը խորապես վիրավորված զգաց։ «Ես կարծում էի, թե ամբողջ աշխարհում նա իմ լավագույն ընկերն է»,— ասաց նա՝ ճանապարհը շարունակելով։

Յուլիսիսը կանգնել էր մի փոքր խումբ մարդկանց մեջ և նայում էր մարդ-մեքենային, մինչև որ, ի վերջո, մնացին ինքը և մի ծերունի։ Մարդ-մեքենան շարունակում էր թղթերը հավաքել և նորից դնել տախտակի վրա։ Նա շարունակում էր թղթերի վրայի յուրաքանչյուր բառը ցույց տալ։ Շուտով ծերունին էլ գնաց և մայթի վրա մնաց միայն Յուլիսիսը, որը դեռ նայում էր գեղատան ցուցափեղկի տարօրինակ էակին։ Արդեն մութ էր։ Երբ փողոցի լույսերը վառվեցին, Յուլիսիսը դուրս եկավ այն կախարդական հափշտակությունից, որի մեջ գցել էր նրան այդ մարդ-մեքենան։ Նա ասես հմայված լիներ։ Սթափվելով, Յուլիսիսը նայեց շուրջը։ Օրը ավարտվել էր, և բոլորը գնացել էին։ Միակ բանը, որ մնացել էր շուրջը, այն էր, որի անունը նա չգիտեր։ Մահ։

Փոքրիկ տղան հանկարծ նայեց մեքենա-մարդուն։ Նրան թվաց, որ այդ մարդը իրեն է նայում։ Տղան հանկարծ ուժեղ սարսափ զգաց և սկսեց փախչել։ Փողոցների հատուկենտ անցորդները նրան նույնպես մեռած թվացին, ինչպես այդ մարդ-մեքենան։ Մարդիկ հանկարծ նրան թվացին տգեղ, ոչ այնպես գեղեցիկ, ինչպես առաջներում։ Յուլիսիսը վազեց մինչև շնչասպառ լինելը։ Նա կանգ առավ՝ դժվար շնչելով և համարյա արցունքներ թափելով։ Նայեց շուրջը, զգալով մի խոր, անհողդողդ լռություն ամեն ինչի մեջ՝ մարդ-մեքենայի մահվան սար-

սափը։ Մինչև այժմ նա վախ չէր զգացել, մանավանդ այդպիսի մեծ վախ։ Նրա համար այժմ ամենադժվարին բանն այն էր, թե ինչ պիտի անի հետո։ Նրա հոգեկան անդորրը ալեկոծվել էր, սարսափը պատել էր նրան։ Նա նորից սկսեց վազել։ Վազելիս ինքն իրեն ասում էր համարյա արտասվելով. «Հայրիկ, մայրիկ, Մարկուս, Բես, Հոմեր, հայրիկ, մայրիկ, Մարկուս, Բես, Հոմեր»։

Աշխարհը, անշուշտ, հրաշալի էր և անշուշտ՝ լի լավ բաներով, որոնք կարելի էր նորից ու նորից տեսնել, բայց այժմ աշխարհն այնպիսին էր, որից փախչել էր պետք, միայն թե Ցուլիսիսը չգիտեր՝ թե ո՞ր ուղղությամբ։ Նա ուզում էր շուտ հասնել իր ընտանիքի անդամներից մեկնումեկին։ Նա մի պահ սարսափահար կանգ առավ և հետո սկսեց դիտել իր շուրջը՝ զգալով անհավատալի աղետի ներկայությունը, մի աղետ, որից կարող էր խուսափել միայն հասնելով հորը, մորը, եղբայրներից մեկին կամ քրոջը։ Եվ այդ ժամանակ նրանցից որևէ մեկին հասնելու փոխարեն, փողոցի հեռու ծայրում նա տեսավ իրենց թաղի խմբի ղեկավարին՝ Օգյուստ Գոթլիբին։ Լրագրավաճառ տղան կանգնել էր ամայացած փողոցի անկյունում և թերթերի վերնագրերն էր բղավում, կարծես գտնվում էր մի մարդաշատ վայրում և պարտավոր էր ասել, թե աշխարհում այդ օրը ինչեր էին տեղի ունեցել։ Գլխավոր վերնագրերը բղավելը Օգյուստ Գոթլիբին միշտ էլ մի քիչ ծիծաղելի էր թվացել, որովհետև, նախ վերնագրերը շատ հաճախ զանազան սպանությունների մասին էին լինում և, բացի այդ, անհարմար էր Իթաքայի փողոցներում ելնել մարդկանց մեջ ու բարձրաձայն բղավել։ Լրագրավաճառը ուրախանում էր, երբ փողոցները ամայացած էր տեսնում։ Երբ Իթաքայի փողոցները դատարկվում էին, Օգյուստ Գոթլիբը կարծես ուրախ, որ ինքը քաղաքի միակ բնակիչն է, ձայնը սովորականից ավելի էր բարձրացնում, բղավելով օրվա սովորական նորությունները։ Ո՞ւմ էին պետք այդ լուրերը, և ի՞նչ օգուտ դրանցից։ Անշուշտ, կարելի էր թերթ ծախել և մի քանի սենթ շահել, բայց մի՞թե այդ է ամբողջը։ Մի՞թե հիմարություն չէր օրվա սուտ լուրերը բղավել, կարծես ուրախ բան լիներ ավետածը։ Ամոթ չէ՞ր, որ մարդիկ այդքան անտարբեր էին դարձել լուրերի հանդեպ։ Երբեմն, նույնիսկ երազի մեջ, լրագրավաճառը բղավում էր համաշխարհային լուրերի վերնագրերը, բայց այդտեղ էլ, երազում, նա հեգնանք և արհամարհանք էր զգում լուրերի էության նկատմամբ, և երբ բղավում էր, ինքը կանգնած էր լինում մի բարձունքի վրա, իսկ ներքևում ծփում էին հանցանքի ու ոճիրի մեջ լողացող բազմություններ, որոնք, լսելով նրա որոտացող ձայնը, դադարեցնում էին գործերը և նայում էին վերև՝ իրեն, իսկ նա բղավում էր նրանց։

— Ետ գնացեք, վերադարձեք ձեր հայրենիքը։ Դադարեցրեք ձեր ոճիրը, դրա փոխարեն ծառեր տնկեցեք։— Նրա հոգուն միշտ սիրելի էր ծառ տնկելու գաղափարը։

Երբ Յուլիսիսը Օգյուստ Գոթլիբին տեսավ փողոցի անկյունում, սարսափի մեծ մասը փարատվեց, և նա սկսեց հասկանալ, որ աշխարհում վերստին բարություն ու սեր գտնելու համար երկար տարիներ անհրաժեշտ չեն։ Փոքրիկ տղան ուզեց բղավել Օգյուստ Գոթլիբին, բայց ձայն հանել չէր կարողանում։ Փոխարենը, ամբողջ ուժով վազեց դեպի լրագրավաճառը և իրեն գցեց նրա գիրկը ա՛նպիսի ուժով, որ Օգին համարյա գետին գլորեց։

— Յուլիսիս,— ասաց լրագրավաճառը,— ի՞նչ է պատահել, ինչո՞ւ ես լաց լինում։

Յուլիսիսը նայեց փոքրիկ լրագրավաճառի աչքերին, բայց խոսել չէր կարողանում։

— Դու վախեցե՞լ ես, Յուլիսիս,— ասաց Օգին,— դե, մի վախեցիր, ինչի՞ց ես վախենում։ Դե՛, լաց մի լինիր, Յուլիսիս, վախենալու բան չկա։— Բայց փոքրիկը տակավին չէր կարողանում զսպել լացը։— Լաց մի լինիր,— ասաց Օգին և սպասեց, որ Յուլիսիսը դադարեցնի լացը։ Յուլիսիսը շատ ճիգ գործադրեց, որ լաց չլինի, և շուտով հեկեկանքները սկսեցին անկանոն դառնալ, վերածվեցին հեծկլտանքի։ Հետո Օգին ասաց.— Լսիր, Յուլիսիս, եկ գնանք Հոմերի մոտ։

Լսելով եղբոր անունը, Յուլիսիսը ժպտաց և հեկեկանքը կուլ տվեց։

— Հոմերի՞,— ասաց նա։

— Անշուշտ,— ասաց Օգին,— քո եղբոր մոտ։ Արի։

Օ՜, որքան կուզեր այդ փոքրիկ տղան հավատալ դրան։

— Գնա՞նք Հոմերին տեսնելու,— ասաց նա։

— Անշուշտ,— ասաց Օգին,— հեռագրատունը անկյունում է։

Օգյուստ Գոթլիբն ու Յուլիսիս Մաքոլին քայլեցին դեպի հեռագրատուն։ Նրանք Հոմերին գտան առաքման սեղանի առաջ նստած։ Երբ Յուլիսիսը տեսավ եղբորը, դեմքը լրիվ խաղաղվեց։ Սարսափը չքացավ նրա հայացքից, որովհետև իրեն զգաց տանը։

Երբ Հոմերը տեսավ Յուլիսիս եղբորը, վեր կացավ և գնաց տղայի մոտ ու նրան թևերի մեջ առավ։ Նա դարձավ Օգինին։

— Ի՞նչ է պատահել,— ասաց նա,— Յուլիսիսը այս ժամին քաղաքում ի՞նչ է անում։

— Կարծեմ կորել էր,— ասաց Օգին,— նա լաց էր լինում։

— Լա՞ց էր լինում,— ասաց Հոմերը և նորից գրկեց եղբորը, մինչ փոքրը մի նոր հեկեկոց էր կուլ տալիս։— Շատ լավ, Յուլիսիս,— ասաց

նա,— այլևս լաց մի լինիր։ Քեզ հեծանիվով տուն կտանեմ։ Դե՛, լաց մի լինիր։

Հեռագրատան կառավարիչը՝ Թոմաս Սփանգլերը, իր սեղանի մոտից դիտում էր երեք տղաներին, իսկ ծեր հեռագրիչը՝ Վիլյամ Գրոգանը նույնիսկ դադարեցրեց գործը, նրանց դիտելու համար։ Նրանք մի քանի անգամ իրար նայեցին։ Հոմերը եղբորը իջեցրեց գրկից։ Երբ Ցուլիսիսը մոտեցավ առաքման սեղանին՝ դիտելու համար այդտեղի աշխատանքը, Հոմերը համոզվեց, որ տղան իրեն շատ լավ է զգում։ Ցուլիսիսը իրեն միշտ լավ էր զգում, եթե որևէ բանով հետաքրքրվում էր։ Հոմերը գիտեր Օգյուստին և ասաց.

— Շնորհակալություն, Օգի, շատ վատ կլիներ, եթե նա քեզ չգտներ։

Սփանգլերը վեր կացավ և գնաց երկու տղաների մոտ։

— Հելլո, Օգի,— ասաց նա,— ինձ մի թերթ տուր։

— Իսկույն, սըր,— ասաց Օգին և սկսեց թերթը ծալելու իր սովորական արարողությունը, որը կատարում էր նա ծախելիս, բայց Սփանգլերը կանգնեցրեց նրան և թերթը վերցրեց նախքան ծալելը։ Հեռագրատան վարիչը նայեց վերնագրերին, ապա թերթը գցեց զամբյուղի մեջ։

— Գործերն ինչպե՞ս են, Օգի,— հարցրեց նա։

— Վատ չեն, միստր Սփանգլեր,— պատասխանեց Օգին։— Այսօր հիսունհինգ սենթ եմ աշխատել, բայց վաճառքն սկսեցի ցերեկվա ժամը մեկից։ Երբ յոթանասունհինգ սենթը լրացնեմ, տուն կգնամ։

— Ինչո՞ւ,— ասաց Սփանգլերը,— ինչո՞ւ ես ուզում յոթանասունհինգ սենթի հասցնել։

— Չգիտեմ,— ասաց Օգին,— պարզապես մտածեցի շաբաթ օրը յոթանասունհինգ սենթ աշխատել։ Քաղաքում համարյա թե մարդ չկա, բայց ինձ թվում է, որ մնացած թերթերը մեկ կամ երկու ժամում կծախեմ։ Շուտով, ընթրիքից հետո, ժողովուրդը փողոց դուրս կգա, կինո գնացող մարդիկ կլինեն։

— Ոչինչ,— ասաց Սփանգլերը,— գրողի ծոցը գնան այդ կինոյի մարդիկ։ Դու մնացած թերթերը ինձ տուր և հենց հիմա տուն գնա։ Ահա քեզ մի քառորդ։

Թեև լրագրավաճառ տղան խորապես շնորհակալ էր հեռագրատան վարիչի այդ վերաբերմունքից, սակայն, այնուամենայնիվ, գործարքը նրան արդարացի չէր թվում։ Թերթը պետք էր ծախել մեկ առ մեկ, և յուրաքանչյուրը՝ տարբեր մարդկանց։ Պետք է կանգնել փողոցի անկյունում և վերնագիրը բղավելով ժողովրդի մեջ թերթ կարդալու ցանկություն առաջացնել։ Թեև դա այդպես էր, բայց նա շատ հոգնած էր և ուզում էր տուն գնալ ընթրելու։ Բացի այդ, նա մինչև այդ երբեք չէր

հանդիպել Սփանգլերի նման մի մարդու, որ բոլոր թերթերը ուզենար գնել՝ դրանք անմիջապես զամբյուղ գցելու համար։ Եվ գուցե դա էլ հենց օրվա ամենամեծ նորությունն էր։ Սակայն նրան պարզապես ցավ էր պատճառում, որ Սփանգլերի պես լավ մարդն է այդ բանը անում և ոչ թե փողոցի թափթփուկներից մեկը. գուցեև ոչ թափթփուկ, այլ դրա նման մի բան։ Փոքրիկ լրագրավաճառը, այնուամենայնիվ, ուզեց բողոքել այդպիսի վաճառքի դեմ։

— Չեմ ուզում ձեզ մի քառորդի վնաս պատճառել, միստր Սփանգլեր,— ասաց նա։

— Ոչինչ,— ասաց Սփանգլերը։— Դու թերթերը տուր և տուն գնա։

— Շատ լավ, սըր,— ասաց Օգին։— Գուցե մի օր կփոխհատուցեմ այդ քառորդը։

— Անշո՞ւշտ, անշո՞ւշտ,— ասաց Սփանգլերը և թերթերը նետեց զամբյուղը։

Օգին դարձավ Յուլիսիսին, որն այդ ժամանակ զբաղված էր ցպահանջ հեռագրերի արկղը ուսումնասիրելով։

— Յուլիսիսը կորավ,— ասաց Օգին միստր Սփանգլերին։

— Ոչինչ,— ասաց Սփանգլերը,— չի կորի։ Յուլիսիս,— նա կանչեց տղային և Յուլիսիսը դարձավ հեռագրատան վարիչին։ Սակայն ոչինչ չգտնելով տղային ասելու, Սփանգլերը հարցրեց.

— Ինչպե՞ս ես։

Իր հերթին, համարյա պատասխան չգտնելով, Յուլիսիսն ասաց։

— Շատ լավ։

Նրանցից յուրաքանչյուրն էլ զգում էր, որ ինքը ուշիշ բան էր ուզում ասել։

Իմանալով հանդերձ, որ սխալ բան էր ասում, Հոմերը մեջ մտավ.

— Նա այժմ լավ է։— Օգին, իր հերթին, շփոթությունից, նույն բառերը այնպես կրկնեց, բոլորովին նոր իմաստ դնելով դրանց մեջ։ Նրանք բոլորն էլ շփոթված էին՝ բայց շատ երջանիկ էին և ուրախ, մանավանդ Սփանգլերը։

Վիլյամ Գրոգանը՝ հեռագրիչը, մտքերի այս փոխանակությունից հետո, իր շիշը դուրս քաշեց, խցանը հանեց և մի մեծ կում խմեց։

Օգին շրջվեց տուն գնալու, բայց Հոմերը պահեց նրան։

— Մի րոպե սպասիր,— ասաց նա,— ես քեզ հեծանիվով տուն կտանեմ. կարելի է, չէ՞, միստր Սփանգլեր։ Ես հեռագիր եմ բերելու Իթաքայի գինու գործարանից, իսկ դա մեր տան ճանապարհի վրա է։ Եթե կարելի է, ես Յուլիսիսին և Օգինին տուն կտանեմ, ապա կգնամ Իթաքայի գինու գործարանը։ Կարելի՞ է։

— Անշուշտ, անշուշտ,— ասաց Սփանգլերը և վերադարձավ իր սեղանի մոտ։ Նա վերցրեց խաշած ձուն, որը, նրա կարծիքով, երջանկություն է բերում, կամ, առնվազն, դժբախտությունը հեռու է վանում իրենից։

— Ոչ,— Օգին ասաց Հոմերին,— կարիք չկա, որ դու ինձ հեծանիվով տանես։ Միանգամից երկու հոգի հեծանիվով տանելը շատ դժվար է, Հոմեր։ Ես ոտքով տուն կհասնեմ։

—Ոչ, ես քեզ տուն կտանեմ,— ասաց Հոմերը,— դու չես կարող արագ տուն հասնել։ Դու կնստես իմ առաջ, իսկ Ցուլիսիսը կնստի ղեկին։ Դե, գնանք։

Երեք տղաները գնացին դեպի Հոմերի հեծանիվը։ Բեսը շատ ծանր էր, մանավանդ մի մարդու համար, որի ոտքը վնասված է, բայց Հոմերը իր ուղևորներին հանգիստ տուն հասցրեց։ Նրանք նախ կանգ առան Արայի խանութի կողքին՝ Օգիենց փոքր տան առաջ։ Ինքը Արան կանգնել էր խանութի առջև՝ որդու ձեռքից բռնած։ Նրանք երկինք էին նայում։ Փողոցի մյուս կողմը, մի հին ընկուզենու տակ, բակում կանգնել էր միսիս Մաքոլին և պարանի վրայից չորացած սպիտակեղենն էր հավաքում։ Մերին և Բեսը նվագում և երգում էին հյուրասենյակում, որտեղից լսվում էին դաշնամուրի մեղմ հնչյուններն ու Մերիի ձայնը։

Օգին հեծանիվից իջավ և տուն դնաց։ Մի ձեռքով հեծանիվը բռնած, Հոմերը մի պահ կանգնեց փողոցում՝ նայելով մերթ դեպի երկինք, մերթ դեպի Մաքոլիների տան կողմը։ Քիչ հետո Օգին տնից դուրս եկավ ու գնաց նպարավաճառ Արայի մոտ։

— Այսօր առևտուրը լա՞վ էր, միստր Արա,— հարցրեց Օգին նպարավաճառին։

— Շնորհակալություն, Օգի,— պատասխանեց խանութպանը։— Գոհ եմ։

— Ես յոթանասունհինգ սենթ ունեմ, որը ուզում եմ ծախսել,— ասաց Օգին։— Վաղվա համար ուզում եմ շատ բան գնել։

— Խնդրեմ, Օգի,— ասաց նպարավաճառը, սակայն նախքան խանութ մտնելը, նա որդուն ցույց տվեց երկնքի ամպերը և ասաց։

— Տեսնո՞ւմ ես, Ջոն,— ասաց նա,— արդեն գիշեր է գալիս, շուտով մենք կմտնենք անկողին։ Կքնենք ամբողջ գիշեր։ Երբ առավոտ լինի, մենք նորից վեր կկենանք։ Այդ կլինի նոր օր։

Նպարավաճառը, նրա որդին և հարևանի տղան մտան խանութ, իսկ Ցուլիսիսը, այդ պահին իր եղբոր հեծանիվի ղեկին նստած, աչքը չէր հեռացնում մորից։ Հոմերը նորից նստեց հեծանիվը և սկսեց դեպի տուն քշել։

— Մայրի՜կը,— Յուլիսիսն ասաց եղբորը, շուռ գալով և նրա դեմքին նայելով։

— Այո,— ասաց Հոմերը,— մայրիկն է, ծառի տակ կանգնած, տեսնո՞ւմ ես նրան։

Երբ նրանք մոտեցան ծառի տակ կանգնած կնոջը, փոքր եղբոր դեմքը լուսավորվեց ժպիտով, բայց միևնույն ժամանակ խորունկ տրխրություն կար այդ դեմքի վրա, ինչպես և նրա եղբոր դեմքին, որը բռնել էր հեծանիվի ղեկը՝ համարյա գրկելով նրան։

Հոմերը քշեց դատարկ տաբատաթյունով դեպի իրենց տան բակը, ընկուզենու տակ։ Նա իջավ հեծանիվից և Յուլիսիսին իջեցրեց։ Յուլիսիսը կանգնեց ու նայեց մորը։ Նրա դեմքից մեկընդմիշտ չքացել էր մարդ-մեքենայի ներշնչած սարսափը։

— Մայրիկ, նա կորել էր,— ասաց Հոմերը,— Օգին գտավ նրան և բերեց հեռագրատուն։ Ես մնալ չեմ կարող, բայց ներս կմտնեմ Բեսին և Մերիին ողջունելու։

Հոմերը տուն մտավ և կանգնեց մութ ճաշասենյակում, ականջ դնելով իր քրոջն ու եղբոր սիրած աղջկան։ Երբ երգն ավարտվեց, նա հյուրասենյակ մտավ։

— Բարև ձեզ,— ասաց նա։

Աղջիկները շրջվեցին։

— Բարև, Հոմեր,— ասաց Մերին և ապա, շատ արագ, երջանիկ ձայնով ավելացրեց։— Այսօր Մարկուսից նամակ ստացա։

— Ճի՞շտ, Մերի,— ասաց Հոմերը,— ինչպե՞ս է։

— Հրաշալի,— ասաց Մերին։— Շուտով նրանք կմեկնեն, բայց չգիտեն՝ թե ուր։ Նա գրում է, որ չմտահոգվենք, եթե որոշ ժամանակ նամակ չստանանք։

— Նա բոլորիս էլ գրել է,— ասաց Բեսը,— մայրիկին, ինձ և նույնիսկ Յուլիսիսին։

— Ճի՞շտ,— ասաց Հոմերը և մի պահ սպասեց, որ ասեն նաև իրեն ուղարկված նամակի մասին, կարծես վախենալով, որ այդպիսի բան չասվի։ Ապա, շատ հանգիստ, ասաց.

— Նա ինձ նամակ չի՞ ուղարկել։

— Օ՜հ, անշուշտ,— ասաց Մերին,— քոնը ամենաերկարն է։ Մի՞թե կարծում էիր, որ եթե նա գրել է բոլորիս, քեզ կարող է գրած չլինել։

Հոմերի քույրը սեղանից մի նամակ վերցրեց և մեկնեց նրան։ Հոմերը երկար ժամանակ նայում էր նամակին։ Քույրը ասաց.

— Ինչո՞ւ բաց չես անում ու կարդում։ Մեզ համար էլ կարդա։

— Ոչ, Բեսս,— ասաց Հոմերը։— Ես պետք է գնամ։ Ես այն գրասենյակ կտանեմ և գիշերը կկարդամ, երբ ազատ ժամանակ կունենամ։

— Մենք ամբողջ օրը աշխատանք փնտրեցինք,— ասաց Բեսը,— սակայն չգտանք։

— Բայց չափազանց զվարճացանք,— ասաց Մերին։— Զվարճալի էր պարզապես գնալն ու հարցնելը՝ աշխատանք կա՞։

— Չգիտեմ՝ դա զվարճություն է թե ոչ,— ասաց Հոմերը,— բայց ես ուրախ եմ, որ դուք աշխատանք չեք ճարել։ Մի մտածեք գործի մասին։ Իմ աշխատավարձը մեզ հերիք է, իսկ Մերիի հայրը լավ պաշտոն ունի Իթաքայի գինու գործարանում։ Երկուսդ էլ կարիք չունեք աշխատանք փնտրելու։

— Ունենք, Հոմեր,— ասաց Բեսը,— այն էլ ինչպիսի կարիք։ Մոտ օրերս մենք մի գործ կգտնենք։ Երկու տեղ ասացին, որ նորից հանդիպենք։

— Գործ գտնելու մասին երբեք մի մտածեք,— ասաց Հոմերը։ Նա բարկացած էր։— Քեզ հարկավոր չէ, Բեսս, և ոչ էլ քեզ, Մերի։ Թող տղամարդիկ աշխատեն։ Աղջիկները պետք է տանը մնան դաշնամուր նվագեն, երգեն և երբ տղամարդը տուն դառնա, գեղեցիկ տեսքով դիմավորեն նրան։ Այդ է ձեր անելիքը։— Նա մի պահ լռեց, դարձավ Մերիին, խոսեց քնքշությամբ։

— Երբ Մարկուսը տուն գա,— ասաց նա,— դուք երկուսդ կարող եք մի փոքր տուն վարձել և ընտանիք կազմել այնպես, ինչպես կցանկանաք։— Նա դարձավ Բեսին.— Շուտով դու էլ, Բեսս, կգտնես քո հավանած տղային։ Դա միակ աշխատանքն է, որի մասին պետք է մտածեք։ Պատերազմը չպետք է պատճառ լինի, որ բոլորը իրենց գլուխը կորցնեն։ Պարզապես մնա տանը և օգնիր մայրիկին, իսկ դու, Մերի, օգնիր քո հորը։

Հոմերը այնպես տիրական էր, որ Բեսը համարյա հպարտությամբ լցվեց, որովհետև մինչ այդ չէր նկատել, որ նա ամեն ինչի նկատմամբ այդքան հոգատար լիներ։

— Իմ ասածը մի մոռացեք,— ասաց Հոմերը քրոջը և հարևանի աղջկան։— Իսկ այժմ, իմ գնալուց առաջ, մի երգ նվագեք և երգեք։

— Ի՞նչ երգ ես ուզում,— հարցրեց Բեսը։

— Որևէ երգ,— ասաց Հոմերը։

Հոմերի քույրը՝ Բեսը, սկսեց նվագել, իսկ Մերին՝ երգել։ Ցրիչը մութ ընդունարանում կանգնած լսում էր։ Երգը դեռ չավարտած՝ նա հանգիստ դուրս եկավ։ Բակում նկատեց Յուլիսիսին, որ հավաքնի առաջ կանգնած նայում էր մի ձվի։

— Մա՞,— գոչեց Հոմերը։ Մայրը շրջվեց։— Վաղը անպայման եկեղեցի կգնանք։ Բոլորս միասին, Մերին նույնպես։

— Ինչո՞ւ, ի՞նչ ես ուզում ասել, Հոմեր,— ասաց միսիս Մաքոլին,— մենք ամեն կիրակի եկեղեցի ենք գնում և Մերին միշտ մեզ հետ է լինում։

— Գիտեմ,— ասաց Հոմերը մի քիչ անհամբերությամբ,— բայց վաղը՝ անպայման պետք է գնանք։ Եվ Մերին անպայման մեզ հետ պետք է լինի։— Նա դարձավ եղբորը և ասաց.— Ձեռքիդ մեջ ի՞նչ կա, Յուլիսիս։

— Ջու,— ասաց Յուլիսիսը այնպես, կարծես խոսքը աստծո մասին էր։

Հոմերը նստեց հեծանիվը և ուղղվեց դեպի Իթաքայի գինու գործարանը։

Գլուխ 32

ԹԵՎԵՐԴ, ՏԵՐ, ՄԵԶ ԱՊԱՎԵՆ

Այն ժամանակ, երբ Հոմերը հեծանիվը քշում էր դեպի գինու գործարան, հեռվում, շատ հեռվում, այնքան հեռվում, որ նույնիսկ օրվա ժամն այնտեղ տարբերվում էր Իթաքայի ժամից, ամերիկյան մարդատար մի գնացք սլանում էր ամերիկյան հողի վրայով, ամերիկյան գիշերվա միջով։ Գնացքը լցված էր ամերիկացի տղաներով, որոնց մեջ էին նաև Մարկուսն ու նրա ընկերը՝ Քոբին։ Բոլորն էլ զինվորական զգեստ էին հագել և բոլորն էլ յուրացրել էին պատերազմի արհեստը։ Բայց նրանց աչքերից, նրանց բարձր տրամադրությունից, նրանց ծիծաղից ու երգելուց կարելի էր հասկանալ, որ սոսկ ռազմիկներ չէին, այլ ազգ՝ ըստ որում՝ լավ ու մեծ ազգ։ Թեև ակնհայտ էր, որ նրանք սովորել էին շարք կանգնել և կարգ ու կանոն պահպանել, անհատական ազատությունը ենթարկել ջոկատի պահանջներին, այսուհանդերձ, նրանք մեքենա չէին դարձել և դեռևս մնացել էին մարդկային էակներ, իրենց մարդկային պարզ ու հասարակ ցանկություններով։ Թեև նրանք մի քիչ աղմկում էին և չէին գիտակցում իրենց վիճակը, բայց զուրկ չէին արժանապատվությունից։ Եթե նրանց աղմկարարությունը արդյունք էր խոր վախի, այնուհանդերձ, նրանք անվախներ էին։ Ցուցամոլության ու նման կեղծ նպատակների համար չէր, որ նրանք պատրաստ էին հաղթահարելու երկյուղը, և եթե պետք է՝ մեռնելու։ Նրանք պարզապես

ամերիկացի տղաներ էին, ոմանք նույնիսկ քառասունը անց, բայց մեծ մասը պատանիներ, եկած մեծ քաղաքներից և փոքր ավաններից, ֆերմաներից և գրասենյակներից, հարուստ և աղքատ ընտանիքներից, պատանիներ՝ խլված մեծ աշխարհներից և փոքր աշխարհներից, մի կողմ թողած շքեղ երազանքները, խաղաղ կյանքի համեստ անուրջները, պատանիներ՝ պայծառ հոգով ու արագաթռիչ, պատանիներ՝ դանդաղամիտ ու սովորական։ Եվ աղմուկի, ծիծաղի, ուրախության, շփոթության, սրամտության, տգիտության և խոր իմաստության այդ խառնարանի մեջ Մարկուս Մաքոլին ու նրա ընկեր Թոբի Ջորջը հանգիստ զրուցում էին։

— Վերջապես կարծես թե գնում ենք,— ասաց Թոբին։

— Գնում ենք,— պատասխանեց Մարկուսը։

— Գիտե՞ս, Մարկուս,— ասաց Թոբին,— ես գոհ եմ իմ բախտից, որովհետև, եթե այս պատերազմը չլիներ, քեզ չէի հանդիպի և երբեք չէի իմանա քո ընտանիքի մասին։

Մարկուսը շփոթվեց.

— Շնորհակալ եմ,— ասաց նա,— ես նույնպես ուրախ եմ, որ ծանոթացա քեզ հետ։— Նա մի պահ լռեց և հետո տվեց այն հարցը, որ տալիս է ամեն ոք, ում սպառնում է անծանոթ վտանգը։— Ուզում եմ, որ ճշմարիտն ասես,— ասաց նա,— դու շա՞տ ես մտահոգվում, որ կարող ես սպանվել։

Մյուսը անմիջապես չկարողացավ պատասխանել այդ հարցին, բայց, ի վերջո, ասաց.

— Անշուշտ։ Ես կարող եմ ստել, այնպես ձևացնել, թե ինձ համար միևնույն է։ Բայց ճիշտ չէ։ Այդ բանը ինձ մտահոգում է։ Իսկ քե՞զ։

— Ինձ նույնպես,— ասաց Մարկուսը,— ես շատ եմ մտահոգվում։ Ուզեցի պարզապես իմանալ քո կարծիքը։— Նա մի պահ լռեց, ապա ասաց.— Ինչո՞ւ ես ուզում վերադառնալ։

— Չգիտեմ,— ասաց Թոբին, որովհետև նա իսկապես չգիտեր։— Ինձ թվում է, որ ուզում եմ վերադառնալ, ինչ էլ որ ինձ սպասելիս լինի։ Ես քեզ նման ընտանիք չունեմ։ Չունեմ մեկը, որի մոտ վերադառնամ, բայց ինչ էլ լինի, ուզում եմ վերադառնալ։ Ինձ սպասող սիրած աղջիկ չունեմ, ինչպիսին քո Մերին է, բայց գիտեմ, որ ուզում եմ վերադառնալ, եթե, իհարկե, կարողանամ։

— Հասկանալի է,— ասաց Մարկուսը։

Նորից մի պահ լուռ մնացին, հետո Մարկուսն ասաց.

— Այդ ինչի՞ց է, որ դու սիրում ես երգել։

— Ինչ իմանամ,— ասաց Թոբին։— Ես պարզապես սիրում եմ եր-

գել։— Նրանք միասին ունկնդրեցին գնացքի աղմուկը, հետո Թոբին ասաց,— դու ինչի՞ մասին ես մտածում։

Այդ հարցին պատասխանելուց առաջ Մարկուսը մի պահ մտածեց։

— Մտածում եմ հորս մասին,— ասաց նա,— և մորս, և Բեսս քրոջս, և Հոմեր եղբորս, և Ցուլիսիս եղբորս մասին։ Մտածում եմ Մերիի մասին և նրա հոր՝ միստր Արենայի մասին։ Մտածում եմ մեր բոլոր հարևանների մասին, մեր տան առջևի դատարկ տարածության, երեխաների, տների, Արայի խանութի և իր՝ Արայի մասին։ Երկաթգծի մասին, որտեղ ես սիրում էի դիտել գնացքների անցնելը, կիրակնօրյա դպրոցի, եկեղեցու, դասարանի դիմացի այգու, հանրային գրադարանի, ծեր ուսուցիչների, իմ դասընկերների մասին, որոնք իմ կյանքի մասն են կազմել։ Նրանցից ոմանք արդեն մեռել են, անշուշտ, ոչ այս պատերազմում։

— Տարօրինակ բան է,— ասաց Թոբին,— գուցեև դու չհավատաս, բայց ես այնպիսի զգացողություն ունեմ, որ կարծես Իթաքան նաև իմ հայրենի քաղաքն է։— Նա մի պահ լռեց, ապա ասաց.— Եթե ողջ մնանք, եթե ողջ վերադառնանք, ինձ քեզ հետ Իթաքա կտանե՞ս, ցույց կտա՞ս քեզ ծանոթ տեղերը և կպատմե՞ս դրանց մասին, կասե՞ս, թե ինչ պատահեց այստեղ, կամ ի՞նչ պատահեց այնտեղ։

— Իհարկե,— պատասխանեց Մարկուսը,— անպայման։ Ես հենց այդպես էլ ուզում եմ անել։ Ուզում եմ նաև, որ դու ծանոթանաս իմ ընտանիքի հետ։ Մենք աղքատ ենք, միշտ այդպես ենք եղել, բայց իմ հայրը մեծ մարդ էր։ Նա հաջողակ մարդ չէր։ Նա հազիվ հացի փող էր վաստակում, ավելին չէր կարողանում։

— Մաթյու Մաքոլի՞ն,— հարցրեց Թոբին։

— Այո,— պատասխանեց Մարկուսը,— Մաթյու Մաքոլին՝ իմ հայրը։ Նա աշխատում էր խաղողի այգիներում, մրգի փաթեթավորման պահեստներում և գինեգործարաններում։ Նա կատարում էր հասարակ, սովորական, ամենօրյա գործեր։ Եթե նրան փողոցում տեսնեիր, կմտածեիր, որ սովորական մարդ է, հասարակ և աննշան։ Բայց դրանով հանդերձ նա մեծ մարդ էր։ Նա իմ հայրն էր, և ես գիտեմ, որ նա մեծ մարդ էր։ Միակ բանը, որը նրան մտահոգում էր, իր ընտանիքն էր՝ մայրս և իր զավակները։ Նա ամիսներով փող հավաքեց և մասնավճարով տավիղ գնեց, այո, տավիղ։ Ես գիտեմ, որ հիմա ոչ ոք տավիղ չի նվագում, բայց մայրս երազել էր տավիղ ունենալ, և հայրս փող հավաքեց ու նրա համար տավիղ գնեց։ Հինգ տարի տևեց, մինչև որ հայրս վճարեց տավիղի արժեքը։ Դա ամենաթանկ տավիղն էր, որ կարելի էր գնել։ Մենք կարծում էինք, թե սմեն տուն տավիղ ունի, որովհետև մենք ունեինք։

Հետո իմ քույր Բեսի համար դաշնամուր գնեց, որը, ճիշտ է, այնքան թանկ չէր, որքան տավիղը։ Ես կարծում էի, թե բոլորը հորս նման մեծ էին, մինչև որ աշխարհ մտա և հանդիպեցի ուրիշ մարդկանց։ Անշուշտ, բոլորն էլ լավն են, բոլորն էլ հրաշալի են, բայց չեմ կարծում, որ մեծ լինեն։ Գուցե դա նրանից է, որ ես նրանց դեռ լավ չեմ ճանաչում։ Անհրաժեշտ է լավ ճանաչել մարդկանց, իմանալու համար մե՞ծ են նրանք, թե ոչ։ Շատ մարդիկ կան, որ մեծ են, բայց ոչ ոք գլխի չի ընկնում, որ նրանք մեծ են։

— Կուլենայի քո հոր նման մի մարդու հանդիպել,— ասաց Թոբին,— պարտադիր չէ, որ նա իմ հայրը լիներ։ Ով ուզում է լինի, միայն թե ես ճանաչեի նրան։ Գուցե բախտավոր եմ, որ չգիտեմ, թե ով է իմ հայրը, որովհետև, չիմանալով, կարող եմ միշտ հավատալ, որ նա մեծ էր, ինչպես քո հայրը։

— Գուցե իսկապես մեծ էր,— ասաց Մարկուսը։

— Գուցե,— ասաց Թոբին,— հույս ունեմ։ Գիտե՞ս ինչ, ես չգիտեի, որ երեխաները հայրեր ու մայրեր են ունենում, մինչև որ դպրոց գնացի ու այդ մասին լսեցի երեխաների զրույցները։ Ես երկար ժամանակ ուշքի չէի գալիս։ Գոնե այդ է պատճառը, որ ես սիրում եմ երգել։ Երբ երգում ես, մենակությունն այնքան էլ չես զգում։— Հետո ամաչելով, համարյա երկչոտությամբ հարցրեց.— Ինչպիսի՞ աղջիկ է Բեսը։

Մարկուսը հասկացավ, որ ընկերը այդ հարցը տալիս անհարմար էր զգում, և ուզեց, որ նա անհարմար չզգա։

— Ոչինչ,— ասաց Մարկուսը։— Դու կարող ես քրոջս մասին հարցնել։ Ես ուզում եմ, որ դու հանդիպես նրան։ Ինձ թվում է, որ նա քեզ կհավանի։

— Ի՞նձ,— ասաց Թոբին։

— Այո, քեզ, ինձ թվում է, որ նա քեզ շատ կհավանի,— ասաց Մարկուսը։— Ուզում եմ քեզ ինձ հետ տանել մեր տուն։ Եթե դուք իրար հավանեք... լավ կլինի, եթե Բեսը... ինչ անենք, որ նա իմ քույրն է... մի խոսքով, ես պարզապես կարծում եմ, որ նա քեզ շատ կհավանի։

Մարկուսը սկսեց շատ արագ խոսել, որովհետև զգում էր, որ այդ նյութի շուրջ համարյա անհնար է զրուցել թեև, միաժամանակ, զգում էր, որ դա անհրաժեշտ է։ Այդ պատճառով էլ նա ուզում էր, որ բառերը ասվեն ինչքան կարելի է արագ, և լինեն տպավորիչ, որպեսզի վարանումն ու շփոթությունը շուտ փարատվեին։

— Ամուսնացիր հետը և ապրիր Իթաքայում,— ասաց նա,— Իթաքան լավ քաղաք է։ Դու այնտեղ երջանիկ կլինես։ Ահա նրա նկարը, պահիր մոտդ։— Նա Թոբիին տվեց Բեսի մի փոքրիկ նկարը։ Պահիր քո

զինվորական գրքույկում, ինչպես ես Մերիի նկարն եմ պահում։ Տե՛ս։

Թոբի Ջորջը վերցրեց իր ընկերոջ քրոջ նկարը և երկար ժամանակ նայեց, իսկ Մարկուսը նայում էր նրան։ Ի վերջո, նա ասաց.

— Բեսը իսկապես գեղեցիկ է։ Ես չգիտեմ, կարո՞ղ է մարդ սիրահարվել մի աղջկա, որին չի տեսել, բայց զգում եմ, որ արդեն սիրահարվել եմ Բեսին։ Ինձ վատ եմ զգում։ Ճիշտն ասած, մինչև հիմա վախենում էի խոսել քեզ հետ Բեսի մասին։ Բայց մտածեցի, որ գույն շատ չես նեղանա, եթե խոսեմ, քանի որ ռազմաճակատ ենք գնում, և հայտնի չէ, թե ինչ կպատահի մեզ հետ։ Ես միշտ կարծել եմ, որ չունեմ նույն իրավունքները, ինչ ուրիշներն ունեն, որովհետև, գիտես ինչ, ես մի տղա եմ, որի անունը որբանոցում է դրվել ոչ թե հոր կամ մոր կողմից, մի տղա, որ նույնիսկ չգիտի, թե ովքեր են իր հայրն ու մայրը, չգիտի, անգամ, թե ինչ ազգության են պատկանել նրանք, ո՞ր աղիից է ինքը։ Ոմանք ասում են, որ ես իսպանացի կամ ֆրանսիացի եմ, ուրիշներ թե՝ իտալացի կամ հույն, կամ թե՝ կելտանգլիացի-կելտիլանդացի։ Համարյա ամեն մարդ ինձ տարբեր ազգություն է տալիս։

— Դու ամերիկացի ես և վերջ,— ասաց Մարկուսը։— Ամեն մարդ դա կարող է նկատել հենց առաջին հայացքից։

— Անշուշտ,— ասաց Թոբին,— և դա ճիշտ է, շատ ճիշտ։ Ես, իհարկե, ամերիկացի եմ։ Բայց կուզենայի իմանալ, ո՞ր ամերիկացիներից։

— Դու պարզապես ամերիկացի ես, որի անունը Թոբի Ջորջ է, ասաց Մարկուսը։— Կարիք չկա ավելին իմանալու։ Պահիր այդ նկարը։ Մենք կվերադառնանք Իթաքա, երկուսս էլ ընտանիք կկազմենք, երբեմն կայցելենք փրար, մի քիչ երաժշտություն և երգ կլսենք և այսպես կապրենք մեր կյանքը։

— Գիտե՞ս ինչ, Մարկուս,— ասաց Թոբին,— ես քեզ հավատում եմ։ Աստված վկա, ես քեզ հավատում եմ։ Չեմ կարծում, որ դու այդ բոլորը ասում ես սոսկ նրա համար, որ մենք ճանապարհի ընկերներ ենք։ Ես քեզ հավատում եմ և աշխարհում ամենից շատ ուզում եմ քեզ հետ Իթաքա գնալ։— Նա մի պահ լռեց՝ մտածելով թե ինչը կարող է այդ բանին խանգարել, ապա ասաց.— Եթե Բեսը ինձ չսիրի, եթե նա ուրիշին սիրի, եթե նա ամուսնացած լինի, երբ մենք այնտեղ հասնենք, միևնույն է՝ Իթաքան կլինի իմ բնակավայրը։ Չգիտեմ, թե ինչու, բայց թվում է, որ Իթաքան այժմ հարազատ տուն է նաև ինձ համար։ Կյանքումս առաջին անգամ զգում եմ, որ տուն ունեմ։ Կարծում եմ չես նեղանա, եթե ասեմ, որ Մաքոլի ընտանիքը իմ ընտանիքն է, որովհետև դա ճիշտ այն ընտանիքն է, որ ես կփափագեի ունենալ, եթե հնարավոր լի-

ներ ընտրություն կատարել։ Հույս ունեմ, որ աստծո օգնությամբ Բեսը կսիրի ինձ, ուրիշին չի սիրի, որովհետև արդեն գիտեմ, որ ես սիրում եմ նրան։— Այժմ նա շատ ցածրաձայն էր խոսում ու թեև գնացքը աղմուկով լեցուն էր, Մարկուսը կարողանում էր լսել նրա խոսքերը։— Թեև Բեսը դեռևս այդ չգիտի, միևնույն է, նա իմն է։ Եվ այս պահից ես ամեն ինչ պիտի անեմ, որ ողջ մնամ, մինչև որ հասնեմ Իթաքա, հասնեմ Բեսին։ Իթաքան իմ տունն է։ Ես ուզում եմ այնտեղ ապրել։ Ես ուզում եմ այնտեղ մահանալ, եթե հաջողվի։

— Մենք կվերադառնանք,— ասաց Մարկուսը,— մենք մի օր Իթաքայում կլինենք՝ Բեսը և դու, Մերին և ես, մայրս, Հոմերը և Ցուլիսիսը։ Այ, հոտ-նեսս։

Երկու ընկերները երկար ժամանակ լուռ էին։ Նրանց մոտեցան ուրիշ տղաներ, և բոլորը միասին աղմկեցին, նույնիսկ երգեցին մի երգ, որ իրենք էին հորինել, մի երգ փողոցային կանանց մասին, թե ինչ բանի համար են նրանք պիտանի։ Եվ հետո, այդ երգի կեսին, կարծես ասելիքը հենց այդ երգից էր բխում, Թոբին հարցրեց.

— Աղոթո՞ւմ ես։

Եվ Մարկուսը շտապով պատասխանեց.

— Մի՛շտ, մի՛շտ։

— Որբանոցում,— ասաց Թոբին,— մեզ ստիպում էին աղոթել։ Այնտեղ դա պարտադիր էր։ Ուզեինք-չուզեինք՝ պիտի աղոթեինք։

— Այդքան էլ վատ կարգ չէ,— ասաց Մարկուսը,— թեև աղոթքը այնպիսի բան է, որ չի կարելի ստիպել։ Էլ ինչ աղոթք, եթե պարտադրված է։

— Գիտեմ,— ասաց Թոբին,— ահա թե ինչու, որբանոցից հետո ես թողեցի աղոթելը։ Տասներեք տարեկանից հետո ոչ մի աղոթք ասած չկամ։ Իսկ հիմա նորից կսկսեմ... հենց այս րոպեից։— Նա մի պահ լռեց, հետո առանց աչքերը փակելու, առանց գլուխը խոնարհելու, առանց ձեռքերը ծալելու սկսեց աղոթել, և ինչ-որ նա ասաց, անկասկած աղոթք էր։— Ինձ Իթաքա վերադարձրու,— ասաց նա,— եթե կարող ես։ Քո կամքը թող լինի, բայց եթե կարող ես, ինձ Իթաքա հասցրու։ Թույլ տուր տուն հասնեմ։ Պաշտպան դարձիր բոլորին։ Բոլորին վշտից հեռու պահիր։ Անտոններին ապաստան տուր, պանդուխտին տուն հասցրու, իսկ ինձ՝ Իթաքա։— Նա կանգ առավ և սկսեց նորից երգել քիչ առաջվա անառակ երգը։ Հանկարծ դադարեց երգելուց ու բղավեց։

— Ամե՛ն։

— Լավ աղոթք էր,— ասաց Մարկուսը։— Հույս ունեմ, որ ի կատար կածվի։

Որբը հիշեց, որ մի քանի բաներ աղոթքից դուրս էր թողել։ Ուստի և շարունակեց.

— Պահպանիր Իթաքա քաղաքը,— ասաց նա։— Այնպես արա, որ քայլեմ նրա փողոցներով։ Բոլոր Մաքոլիններին պահպանիր։ Պահպանիր Բեսին։ Նրան զգացնել տուր, որ ես իրեն սիրում եմ։ Պահպանիր Մարկուսին և Մերիին։ Պահպանիր նրա մորը, Հոմեր եղբորը և Յուլիսիս եղբորը։ Պահպանիր նրանց տունը և տան կողքի բաց տարածությունը։ Պահպանիր տավիղը, դաշնամուրը և երգերը։ Պահպանիր երկաթգիծը, որպեսզի տեսնեմ գնացքների անցնելը։ Պահպանիր այն երկիրը, ուր այդ բոլոր բաները կան և ինձ արժանացրու ապրել այնտեղ, ուր ուզում եմ՝ Իթաքայում։ Ինձ Իթաքա հասցրու, եթե կարող ես։ Այսքան։— Եվ նորից բարձրաձայն ասաց,— Ամեն։

Այդ միջոցին զինվորները մի ուրիշ երգ էին երգում, որը նույնպես իրենք էին հորինել։ Երգի ասելիքն այն էր, որ աշխարհը անկայուն է, հատկապես կնոջ սերը, և տղաները հրճվում էին այդ երգի ցինիկ իմաստությամբ։ Թոբին և Մարկուսը միացան երգողներին։ Հանկարծ Թոբին դադարեց երգելուց և հարցրեց.

— Իսկ դու ինչի՞ համար ես աղոթում, Մարկուս։

Մարկուսը նույնպես լռեց, ասելով.

— Ես աղոթում եմ նույն բանի համար, ինչ որ դու, հենց նույն բանի համար։— Եվ նորից երկու ընկերները սկսեցին երգել ցինիկ իմաստով այդ երգը։

Երգից հետո ամբողջ գնացքը լռեց։ Ոչ մի պատճառ չկար, բայց բոլորը մի պահ պապանձվել էին ու խորապես լրջացել։ Ի վերջո, Ջոն Հիգգինս անունով զինվորը, Մարկուսին ու Թոբիին մոտենալով, ասաց.

— Ի՞նչ պատահեց, ինչո՞ւ բոլորը այդպես լռեցին։ Թոբի, մի երգ չե՞ս երգի, իսկ դու, Մարկուս, ակորդեոնի վրա չե՞ս նվագի։

— Ի՞նչ երգ ես ուզում լսել, Ջո,— հարցրեց Մարկուսը։

— Օհ, չգիտեմ,— ասաց Ջոն,— բոլոր կեղտոտ երգերը արդեն երգել ենք, գուցե մի հին բան երգենք, գիտե՞ս ինչ, մի մաքուր բան։ Մի հին սաղմոս չերգե՞նք... Բոլորս գիտենք, սովորել ենք երեխա ժամանակ։

— Ինչո՞ւ չէ,— ասաց Մարկուսը,— դու ո՞ր սաղմոսն ես սիրում, Ջո։

— Տղաներ, մի ծիծաղեք ինձ վրա, ես կուզենայի լսել «Թեև լրջ, տեր» երգը։ Գիտե՞ք «Թեերդ, տեր, մեզ ապավեն» երգը։

Մարկուսը դարձավ Թոբին։

— Այդ երգի խոսքերը գիտե՞ս, Թոբի,— հարցրեց նա։— Եթե չգիտես, կարող եմ քեզ օգնել։

— Խոսքե՞ր,— ասաց Թոբին,— իհարկե գիտեմ. ամբողջ տասը տարի, ամեն կիրակի այդ սաղմոսը երգել եմ։

— Շատ լավ,— ասաց Մարկուսը,— այդ դեպքում Ջոյի համար երգենք։— Մարկուսը դարձավ Ջոյին։— Իսկ դու, Ջո, եթե ուզես ձայնակցել մեզ, երգիր, փույթ չէ, թե վատ ես երգում. պարզապես ձայնակցիր մեզ։

— Համաձայն եմ,— ասաց Ջոն։— Ես ուզում եմ երգել։

Մարկուսը սկսեց նվագել հինավուրց սաղմոսը, իսկ Թոբին սկսեց երգել.

Ինչ ցնծություն, եղբայրություն,
Թևերդ, տեր, մեզ ապավեն,
Ինչ օրհնությո՞ւն, խաղաղություն.
Թևերդ, տեր, մեզ ապավեն։

Թեև ոչ երաժշտական, բայց ուժեղ և բոլոր դեպքերում հաճելի ձայնով, Ջոն սկսեց Թոբիի հետ երգել։ Եվ շուտով բոլորը սկսեցին լսել։ Քիչ հետո զինվորները շրջապատեցին Մարկուսին, Թոբիին ու Ջոյին, որպեսզի ավելի մոտիկից լսեին այդ հին և հրաշալի սաղմոսի երաժշտությունը և խոսքերը։ Ջոն և Թոբին երգեցին.

Հաղթ թևերդ, մեզ ապավեն,
Թող մեզ փրկի ամեն ահեն.
Թևերդ, տեր, մեզ ապավեն,
Լինեն ամուր, հավերժական։

Այժմ արդեն բոլորը միասին էին երգում. թե նրանք և թե նրանց շուրջ հավաքված մարդիկ։

Գլուխ 33

ՄԱՐԿՈՒՍԻ ՆԱՄԱԿԸ ԻՐ ԵՂԲԱՅՐ ՀՈՄԵՐԻՆ

Այդ շաբաթ օրը Հոմեր Մաքոլիի կյանքում ամենաերկար ու արկածալից օրը եղավ։ Նույնիսկ աննշան բաները սկսեցին նոր կարևորություն ու նշանակություն ստանալ, և նա սկսեց հասկանալ դրանց իմաստը։ Անցյալ գիշերվա ահավոր ու հուզումնալի քունը պատճառ դարձավ, որ ամեն բանի հանդեպ նա այսուհետև միշտ արթուն լինի։ Ամբողջ

ուժով նա փորձել էր մահվան համբավաբերին հեռու վանել Իթաքայից և նրա ժողովրդից։ Այդպես էր եղել կյանքում, իսկ այժմ դա այլևս երազ չէր։

Մարկուս եղբոր չբացված նամակը իր մոտ էր, որը հարկավոր էր կարդալ։

Նա հեռագրատուն եկավ կաղալով. հոգնած էր ու հանգստի կարոտ։ Նայեց դարակին, ոչ մի տեղից պատվեր չկար։ Նայեց ստացված հեռագրերի դարակին, բաժանելու հեռագիր չկար։ Գործը ավարտված էր։ Ամեն ինչ մաքուր էր։ Նա մոտեցավ ծեր հեռագրիչին և ասաց.

— Միստր Գրոգան, կուզեի՞ք ինձ հետ հնդկընկույզից և խնձորից պատրաստված կարկանդակ ուտել։

Ծերունի հեռագրիչը, որ արդեն կիսով չափ հարբած էր, ասաց.

— Գնելուն կմասնակցեմ, մանչուկ, բայց կարկանդակ չեմ ուտի։ Շնորհակալություն։

— Եթե դուք կարկանդակ չեք ուզում, միստր Գրոգան,— ասաց Հոմերը,— ես էլ չեմ ուզում։ Ինձ թվաց, որ դուք քաղցած եք։ Ես բոլորովին էլ քաղցած չեմ։ Ամբողջ օրը վազվզել եմ, բայց քաղցած չեմ։ Տարօրինակ է։ Թվում է, որ ամբողջ օրը, գիշեր-ցերեկ աշխատելով, մարդ պետք է քաղց զգա, բայց այդպես չէ։ Երեկոյան ժամը վեցին մի պնակ ձավարի ապուր եմ կերել, այդ է ամբողջը։

— Ոտքդ ինչպե՞ս է,— հարցրեց Գրոգանը։

— Ոչինչ,— պատասխանեց Հոմերը,— այդ մասին ես նույնիսկ մոռացել եմ։ Լավ եմ քայլում։— Նա հարցական նայեց ծեր հեռագրիչին և շատ քնքշությամբ ասաց.— Հարբա՞ծ եք, միստր Գրոգան։— Այնպիսի անկեղծությամբ նա տվեց այդ հարցը, որ ծերուկը չվիրավորվեց։

— Այո, խմած եմ, մանչուկ,— ասաց միստր Գրոգանը։ Նա գնաց իր աթոռը գնաց և նստեց։ Մի վայրկյան հետո նայեց տղային, որը սա քի վրա էր։

— Ես ինձ ավելի լավ եմ զգում, երբ խմած եմ,— ասաց ծեր հեռագրիչը։— Ապա շիշը հանեց և մի մեծ կում խմեց։— Մարդիկ խոր հուրդ են տալիս՝ «Երբեք մի խմիր»։ Դու դա ինձնից չես լսի։ Ոչ մի մարդ նման չեմ ասի. «Ինձնից դաս վերցրու, տես, թե խմիչքը ինչ ինչի է հասցրել»։ Դատարկաբանություն է։ Դու այժմ շրջում և շատ բաներ ես տեսնում, բազմաթիվ բաներ, որ երբեք չէիր տեսել։ Ուրեմն, թույլ տուր քեզ մի բան ասել. մարդկանց վերաբերվող գործերում դու շատ զգույշ եղիր։ Եթե նույնիսկ քո աչքերով տեսնես, որ մեկը վատ է վարվում, վստահ մի եղիր, որ դու անպայման ճիշտ ես։ Մարդկանց հանդեպ շատ զգույշ եղիր։ Ներիր ինձ, բայց պետք է ասեմ քեզ, որով

հետև դու մի մարդ ես, որին ես հարգում եմ։ Ուրեմն ասում եմ. հիմարություն է մարդկանց քննադատել նրա համար, որ նրանք այնպիսին են, ինչպիսին որ կան։ Ես բոլորովին չգիտեմ, թե ով ես դու, որտեղից ես գալիս, ինչպես եկար, ինչը քեզ այդպես դարձրեց, բայց ուրախ եմ, որ այդպես է, և դու ինձ դուր ես գալիս։ Ինչքան մարդը մոտենում է իր կյանքի վախճանին, այնքան նա իրեն ավելի ու ավելի երախտապարտ է զգում լավ մարդկանց նկատմամբ, որոնք կյանքը պիտի շարունակեն իրենից հետո։ Այս բոլորը կարող էի չասել քեզ, եթե խմած չլինեի։ Ուրեմն, միայն դա բավարար ապացույց է, որ սխալ է մարդու արածների մասին վատ կարծիք կազմելը, թեկուզ ուրիշների կարծիքով դրանք ճիշտ չլինեն։ Ինձ համար շատ կարևոր է ասել քեզ բոլոր այս բաները, իսկ քեզ համար՝ շատ կարևոր է դրանք իմանալը։ Ուրեմն լավ է, որ խմած եմ և ասում եմ։ Հասկանո՞ւմ ես, թե ինչ եմ ասում։

— Ոչ այնքան, միստր Գրոգան,— պատասխանեց Հոմերը։

— Իմ խոսքերից մի ճնշվիր,— ասաց ծեր հեռագրիչը,— եթե հարբած չլինեի, չէի կարող քեզ այս ամենը ասել, ուրեմն շնորհակալ եղիր քեզնից, որ դու այդպիսին ես։ Այո, ինքդ քեզ երախտապարտ եղիր։ Հասկացիր, որ մարդը պետք է շնորհակալ լինի այն իրողության համար, որ ինքը այն է, ինչ որ է, որովհետև, եթե նա բարի է, իր բարությունը միայն իրենը չէ, այն նաև իմն է, ուրիշինը։ Այդ բարությունը նրանն է միայն այնքանով և նրա համար, որ պահպանի այն ու տարածի ամենուրեք՝ թե ինձ և թե աշխարհում ապրող բոլոր մարդկանց համար։ Դու ունես այդ բարությունը, դրա համար շնորհակալ եղիր։ Վաղ թե ուշ այն կգնահատվի բոլորի կողմից։ Մարդիկ երախտապարտ կլինեն քեզ դրա համար։

Չգիտես մտքի ինչ զուգորդությամբ, Հոմերը հանկարծ հիշեց Բեթհել հյուրասենյակների աղջկան և իր հետ խոսելու նրա ձևը։ Ծերունի հեռագրիչը շարունակեց.

— Նրանք կզգան, որ դու չես դավաճանի, չես վիրավորի իրենց։ Նրանք կզգան, որ դու չես արհամարհի իրենց, եթե նույնիսկ ամբողջ աշխարհը արհամարհի։ Նրանք կզգան, որ դու իրենց մեջ տեսար այն, ինչ ամբողջ աշխարհը չուզեց տեսնել։ Դու այդ պետք է գիտակցես։ Դու դրանից չպետք է ճնշվես։ Դու արդեն մեծ մարդ ես, տասնչորս տարեկան ես, հայտնի չէ, թե ո՞վ քեզ մեծ դարձրեց, բայց քանի որ դու իսկապես մեծ ես, գիտակցիր ուրեմն այդ և խոնարհ եղիր, պաշտպանիր այդ մեծությունը։ Հասկանո՞ւմ ես։

Ծերիը շատ էր շփոթվել և դժվարությամբ պատասխանեց.

— Երևի այդպես է, միստր Գրոգան։

Ծեր հեռագրիչը շարունակեց.

— Ուրեմն՝ շնորհակալություն։ Ես քեզ դիտել եմ թե սթափ և թե հարբած, այստեղ գալուցդ ի վեր, անկախ նրանից՝ սթափ եմ եղել, թե հարբած, ես քեզ ճանաչել եմ։ Ես աշխատել եմ աշխարհի տարբեր քաղաքներում։ Երիտասարդ ժամանակ ուզեցի շատ քաղաքներ շրջել և շրջեցի։ Ամբողջ կյանքումս, որտեղ որ գնացել եմ, շարունակ քեզ եմ փնտրել և գտել եմ հեռավոր ու խուլ վայրերում, անծանոթ, խոնարհ մարդկանց մեջ։ Իմ հանդիպած յուրաքանչյուր մարդու մեջ քեզնից մի մաս եմ գտել, բայց այդ ինձ չէր գոհացնում։ Եվ ահա, Իթաքայում, իմ տունդարձի ճամփին, գտա քեզ և դու ավելի լավն ես, ավելի մեծ, քան մինչ այդ իմ տեսած բոլոր մարդիկ։ Եթե դու հասկանում ես իմ ասածները, շնորհակալություն։ Այդ ի՞նչ ես բռնել, նամա՞կ է։ Ես ավարտեցի, դե, կարդա նամակդ, մանչուկ։

— Իմ եղբայր Մարկուսն է ուղարկել,— ասաց Հոմերը,— բաց անելու ժամանակ չեմ ունեցել։

— Ուրեմն բաց արա,— ասաց ծեր հեռագրիչը,— կարդա եղբորդ նամակը։ Բարձր կարդա։

— Դուք կցանկանա՞ք լսել, միստր Գրոգան,— ասաց Հոմերը։

— Այո, եթե կարելի է, նույնիսկ շատ ուրախ կլինեմ,— ասաց ծեր հեռագրիչը և նորից մի կում խմեց։

Հոմեր Մաքոլին պատռեց ծրարը, նամակը հանեց, բացեց և սկսեց կարդալ շատ դանդաղ։

«Սիրելի Հոմեր,— կարդաց նա,— նախ և առաջ, ինչ որ տանը ունեմ, բոլորը քոնն են, իսկ երբ դրանց կարիքը այլևս չես զգա, կարող ես Ցուլիսիսին տալ՝ իմ գրքերը, պատեֆոնը, սկավառակները, հագուստները, եթե դրանք քեզ վրա լինեն, հեծանիվը, մանրադիտակը, ձկնորսության գործիքները, Պիեդրայից բերած քարերի հավաքածուն և, վերջապես, մնացած իմ բոլոր իրերը։ Դրանք ավելի շուտ քոնն են, քան Բեսինը, քանի որ այժմ Իթաքայի Մաքոլի ընտանիքի տղամարդը դու ես։ Անցյալ տարվա շահած փողս մայրիկին եմ տվել, որ մի քիչ թեթևացրած լինեմ նրա բեռը։ Բայց այդ քիչ է, և շուտով մայրիկն ու Բեսը պիտի մտածեն աշխատելու մասին։ Ես իրավունք չունեմ քեզ ասելու, որ չիպնես նրանց աշխատել, սակայն հուսով եմ, որ դու չես թողնի։ Ես համոզված եմ, որ չես թողնի, որովհետև գիտեմ, որ ես ինքս չէի թողնի։ Մայրիկը, անշուշտ, պիտի ուզենա աշխատել, նույնպես և Բեսը, բայց դա հենց պատճառ է, որ չթողնես։ Ես չգիտեմ, թե դու ինչպես պիտի կարողանաս պահել մեր ընտանիքը և միաժամանակ դպրոց գնալ, բայց

հավատում եմ, որ դու միջոց կգտնես։ Բանակում ինձ հասնող վարձը ուղարկում եմ մայրիկին, բացի մի քանի դոլարից, որն ինձ անհրաժեշտ է, բայց այդ փողն էլ բավարար չէ։ Հեշտ չէ ինձ համար քեզնից այդքան շատ բան պահանջելը, քանի որ ես ինքս մինչև տասնինը տարեկանը աշխատել չէի սկսել, բայց չգիտեմ ինչու, հավատում եմ, որ դու կկարողանաս անել այն, ինչ ես չկարողացա։

Իհարկե, կարոտում եմ քեզ և միշտ քո մասին եմ մտածում։ Ծրջանիկ եմ, ու թեև երբեք չեմ հավատացել պատերազմների, և գիտեմ, որ անհրաժեշտության դեպքում էլ դրանք հիմարություն են, բայց հպարտ եմ, որ ծառայում եմ իմ հայրենիքին, իսկ իմ հայրենիքը Իթաքան է, մեր տունը և բոլոր Մաքոլիները։ Իմ թշնամին մարդը չէ, որովհետև ոչ մի մարդկային էակ չի կարող իմ թշնամին լինել։ Ով էլ որ լինի այդ մարդը, ինչ գույն էլ ունենա, ինչքան էլ սխալված լինի իր համոզմունքներում, նա իմ ընկերն է, ոչ թե թշնամին։ Իմ պայքարը մարդու դեմ չէ, այլ նրա մեջ եղած այն գազանի դեմ, որը առաջին հերթին ուզում եմ իմ մեջ ոչնչացնել։

Ես ինձ հերոս չեմ զգում։ Այդպիսի բաների ընդունակ չեմ։ Ոչ ոքի չեմ ատում։ Նույնիսկ հայրենասեր էլ չեմ դարձել, որովհետև միշտ սիրել եմ իմ երկիրը, իմ ժողովուրդը, իմ քաղաքը, իմ տունը և իմ ընտանիքը։ Ես, իհարկե, կուզենայի բանակում չլինել, կուզենայի, որ պատերազմ չլիներ, բայց քանի որ բանակում եմ և քանի որ պատերազմ է, վճռել եմ լինել լավագույն զինվորը։ Չգիտեմ, ինչ է ինձ սպասում, բայց, ինչ էլ լինի, ես պատրաստ եմ խոնարհաբար ընդունել այն։ Սարսափելի վախենում եմ, այդ մեկը քեզ պետք է խոստովանեմ, բայց երբ ժամանակը գա, ես կանեմ այն, ինչ սպասվում է ինձնից և գուցե նույնիսկ ավելին։ Ուզում եմ իմանաս, որ ես ոչ մի հրամանի չեմ ենթարկվելու, բացի իմ խղճի հրամանից։ Ինձ հետ տղաներ կան ամբողջ Ամերիկայից, Իթաքայի նման հազարավոր քաղաքներից։ Կարող է պատահել, որ այս պատերազմում սպանվեմ։ Ես պետք է այդ բանը համարձակորեն ասեմ քեզ։ Իհարկե, բոլորովին չէի ուզենա։ Աշխարհում ամեն ինչից ավելի ուզում եմ վերադառնալ Իթաքա և երկար տարիներ անցկացնել քեզ հետ, իմ մոր, քրոջ և եղբոր հետ։ Ուզում եմ Մերիի մոտ վերադառնալ և ընտանիք կազմել։ Հավանական է, շուտով մեկնենք ռազմաճակատ։ Ոչ ոք չգիտի, թե ուր, բայց բոլորս էլ գիտենք, որ շուտով կմեկնենք։ Ուրեմն, կարող է պատահել, որ երկար ժամանակ ինձնից նամակ չստանաք։ Հույս ունեմ, որ այս նամակը վերջինը չի լինի, իսկ եթե այդպես լինի, մի հավատա, որ ես չկամ։ Մի թող, որ մյուսներն էլ հավատան։ Այստեղ ես մի ընկեր ունեմ, որը է, ընկեցիկ մի տղա, և

տարօրինակ է, որ այստեղի բոլոր տղաներից նա դարձավ իմ հարազատ ընկերը։ Նրա անունը Թոբի Ջորջ է։ Նրան պատմել եմ Իթաքայի և մեր ընտանիքի մասին։ Մի օր նրան ինձ հետ Իթաքա կբերեմ։ Երբ այս նամակը կարդաս, մի տխրիր։ Ուրախ եմ, որ ես եմ այն Մաքոլին, որը մատնակցում է պատերազմին, անարդար ու ցավալի կլիներ, եթե դու լիներ։

Նամակում ես կարող եմ ասել այն, ինչը երբեք չէի կարողանա արտահայտել բառերով։ Դու Մաքոլիների լավագույնն ես։ Դու պետք է շարունակես լավագույնը մնալ։ Ոչինչ չպետք է քեզ խանգարի։ Հիմա դուք տասնչորս տարեկան ես, բայց պետք է ապրես մինչև քսան, հետո՝ երեսուն, քառասուն, հիսուն, վաթսուն։ Դու պետք է հավիտյան ապրես։ Ես վստահ եմ, որ կապրես։ Հեռվից միշտ պիտի հսկեմ քեզ։ Դու այն ես, ինչի համար կռվում ենք մենք։ Այո, դու, իմ եղբայրը։ Ինչպե՞ս կարող էի այսպիսի բաներ ասել քեզ, եթե միասին լինեինք։ Դու կնստվեիր ինձ վրա, կկռվեիր հետս և ինձ հիմար կանվանեիր։ Բայց, հակառակ դրան, ինչ որ ասացի, ճշմարիտ է։ Այժմ ես քո անունը նորից պիտի գրեմ այստեղ, որպեսզի միշտ հիշես. Հոմեր Մաքոլի։ Ահա թե ով ես դու։ Ես քեզ շատ եմ կարոտում։ Անհամբեր սպասում եմ այն օրվան, երբ քեզ նորից կտեսնեմ։ Երբ այդ օրը գա, երբ մենք նորից իրար հանդիպենք, պիտի թողնեմ, որ ինձ կռնակի վրա պառկեցնես մայրիկի, Բեսի և Յուլիսիսի ներկայությամբ, գուցե նույնիսկ Մերիի ներկայությամբ։ Պիտի թողնեմ, որ այդպես անես, որովհետև անչափ պիտի ուրախանամ քեզ նորից տեսնելու համար։ Աստված օրհնի քեզ։ Ցտեսություն։

Քո եղբայր Մարկուս»

Կարդալով նամակը, ցրիչը նստեց։ Նա շատ դանդաղ կարդաց, ժամանակ առ ժամանակ լացը կուլ տալով և վատ զգալով, ինչպես առաջին անգամ վատ էր զգացել մեքսիկացի կնոջ տանը և այն գիշերը, երբ լաց էր եղել աշխատանքից հետո Իթաքայի շուրջը հեծանիվով շրջելիս։ Նա կծեց շրթունքը և շեշտակի նայեց ծեր հեռագրիչին, որը խորապես հուզված էր։ Տղան շատ մեղմ խոսեց։

— Եթե իմ եղբայրը սպանվի այս հիմար պատերազմում,— ասաց նա,— ես կթքեմ աշխարհի վրա։ Առհավետ կատեմ։ Բարի չեմ լինի, բոլորից չարը կլինեմ, ամենաչար մարդը, որ երբևէ ծնվել է։

Նրա ձայնը հանկարծ խզվեց, և աչքերը արցունքով լցվեցին։ Նա վազեց դեպի հանդերձակալը, հանեց համազգեստը, հագավ պիջակը և գրասենյակից դուրս վազեց։

Ծեր հեռագրիչը երկար անշարժ մնաց։ Սենյակում շատ խաղաղ էր։ Ի վերջո, նա մեկնեց ձեռքը, գատարկեց շշի մնացորդը, վեր կացավ և նայեց շուրջը։

Գլուխ 84

ՀԱՄԲՈՒՐՈՒՄ ԵՄ...

Ի թաքայի կյանքը, ինչպես աշխարհի բոլոր մասերի մարդկանց կյանքը, այնպիսի ընթացք էր ստացել, որ թվում էր անիմաստ և խառնաշփոթ, բայց երբ օրերն ու գիշերները դարձան ամիսներ ու տարիներ, պարզվեց, որ այդ կյանքը զուրկ չէր գեղեցկությունից։ Վայրագությունն ու խստասրտությունը մեղմացան, չափավորվեցին ու բաղդրացան կարեկցության առավել մեծ ուժի կողմից։ Ցարիքի հրեշային գույնը խամրեց արդարության պայծառ լույսի տակ, և երկուսը միասին ստացան մի գույն, որը ավելի գեղեցիկ էր, քան արդարության գույնն առանձին վերցրած։

Շատ անգամներ հեռագրի ընկալիչ մեքենան հնչեց, և միստր Գրոգանը նստեց գրամեքենայի առաջ ու մեքենագրեց սիրո և հույսի, վշտի և մահվան ուղերձներ, որ աշխարհը հասցեագրում էր իր զավակներին։ «Տուն եմ գալիս», «Շնորհավորում եմ ծնունդդ», «Ռազմական բաժանմունքը ցավով հաղորդում է, որ ձեր որդին...» «Հանդիպիր ինձ խաղաղ-օվկիանոսյան երկաթուղու կայարանում»։ «Համբուրում եմ...» «Ես շատ լավ եմ», «Աստված քեզ պահապան»։ Քանի այդպիսի հեռագրեր Հոմեր Մաքոլին հանձնեց տերերին։

Մաքոլիների հյուրասենյակում նորից էր հնչում երգը տավիղի նվագակցությամբ։ Ջինվորները առաջ էին շարժվում ցամաքով, ջրով, երկնքով, դեպի նոր վայրեր, նոր օրեր, նոր գիշերներ, նոր քուն։ Անհավատալի աղմուկով լեցուն նոր ու տարօրինակ պահեր էին եղել։ Անհավատալի հարցեր էին առաջ քաշվել ու անհավատալի և անմարդկային վտանգներ էին սպառնացել մարդկանց։ Ապրողների դիմագծերը ինչ-որ չափով փոխվել էին։ Մարկուսը, Թոբին, Հոմերը, Սթանգլերը, Գրոգանը, միսիս Մաքոլին, Ցուլիսիսը, Դիանան, Օգին, Լայոնելը, Բեսը, Մերին, Բեթհել հյուրասենյակների աղջիկը, Թոզալի Սիմս-Փիբիթին, միստր Արան, նրա Ջոն որդին, Մեծ Քրիսը, միսս Հիքսը և նույնիսկ մարդ-մեքենան՝ բոլորը փոխվել էին։

Ապրանքատար գնացքը շարունակեց իր ճանապարհը և սեամորթը

նույն ձևով կախվել էր վագոնի դռնից, խլուրդը դուրս եկավ գետնի տակից, միստր Հենդերսոնի ծիրանները ստացան արևի և ծիրան գողանալու եկած տղաների դեմքի կարմրավուն գույնը։ Թուխս նստած հավը զբոսանքի ելավ ճուտիկների իր ամբողջ դերդաստանով։ Յուլիսիսը դիտում էր։ Հոմերի ոտքի ցավն անցավ։ Զատկի կիրակին Իթաքա եկավ։ Եվ հետո՝ Զատկի հաջորդ կիրակին։ Հետո՝ մի ուրիշ կիրակի, հետո՝ մի ուրիշը, հետո՝ ուրիշը, ուրիշը։

Այդ կիրակի, Իթաքայի բոլոր Մաքոլինները Մերի Արենայի հետ նստել էին Իթաքայու երիցական առաջին եկեղեցում։ Յուլիսիսը նստել էր գավթում։ Ուղիղ նրա առաջ, մի ինչ-որ կրոնական պատահականությամբ, նստել էր ճաղատ գլխով մի մարդ։ Այդ գլուխը անզուսպ հիացմունք և հետաքրքրություն էր առաջացնում տղայի մեջ. հենց միայն նրա գլխի ձվաձև լինելը, ինքնին, ուսումնասիրության արժանի բան էր։ Ճաղատ գլխի կես դյուժին մազերը, առանձին խմբով բուսած, համառում էին աճել անպատկառորեն ու հերոսականությամբ։ Ծալքի այն գիծը, որ գլուխը երկու կեսի էր բաժանում, ինչպես հասարակածը՝ երկիրը, գծագրական մի հրաշալիք էր։ Ամբողջ գլուխը Յուլիսիսի համար մի կատարելություն էր։

Պատվելի Հոլին և հավատացյալները երկյուղած փոխասացությամբ զրուցում էին ավետարանական ինչ-որ թեմայի շուրջ։ Սկզբում պատվելի Հոլին մի քառյակ կարդաց, հետո հավատացյալները պատասխանեցին միահամուռ և մեղմ ձայնով։

«Եվ տեսնելով ժողովրդին,— երգեց պատվելի Հոլին,— նա լեռ բարձրացավ և երբ նստեց այնտեղ, իր աշակերտները գնացին նրա մոտ»։

«Եվ բերանը բացելով,— պատասխանեցին հավատացյալները,— սովորեցնում էր նրանց, ասելով.

— Երանի՝ աղքատներին, որովհետև նրանցն է երկնի արքայությունը։

— Երանի՝ սգավորներին, որովհետև նրանք մխիթարվելու են։

— Երանի՝ հեզերին, որովհետև նրանք պիտի ժառանգեն երկիրը։

— Երանի՝ նրանց, ովքեր անոթի ու ծարավ են արդարության, որովհետև նրանք պիտի կշտանան։

— Երանի՝ ողորմածներին, որովհետև նրանք ողորմություն են գտնելու։

— Երանի՝ նրանց, ովքեր սրտով մաքուր են, որովհետև նրանք տեսնելու են Աստծուն։

— Երանի՜ խաղաղություն բերողներին, որովհետև նրանք Աստծու որդիներ պիտի կոչվեն։

— Ցնծացեք և ուրախացեք. դուք եք երկրի աղը, դուք եք աշխարհի լույսը։

— Թող ձեր լույսը մարդկանց ճանապարհը լուսավորի, որպեսզի նրանք տեսնեն ձեր բոլոր գործերը և փառավորեն ձեր Հորը, որը երկնքում է։

Սուրբ գրքի փոխնիփոխ ընթերցումն սկսվեց այն ժամանակ, երբ Յուլիսիս Մաքոլին ուսումնասիրում էր ճաղատ գլուխը։ Հանկարծ այն զարդարվեց մի ճանճով, որը սկսեց ճաղատ գլուխը հետազոտել և բարձրացնել տղայի կիսաքուն տրամադրությունը։ Յուլիսիսը հետևում էր ճանճին, հետո կամացուկ ձեռքը երկարեց բռնելու, բայց միսիս Մաքոլին մեղմորեն պահեց որդու ձեռքը։ Ուշադիր նայելով ճաղատ գլխին ու ճանճին և ոչ մի բանի մասին չմտածելով, Յուլիսիսը ընկավ երազանքի մեջ։ Յուլիսիսին թվաց, թե ճաղատ գլխի հարթ մաշկը մի անապատ է։ Հերաբաժանը նա պատկերացրեց որպես մի գետ, յոթ մազերը՝ որպես արմավենիներ, իսկ ճանճը՝ որպես առյուծ։ Հետո տեսավ, որ ինքը, կիրակնօրյա հագուստով, գտնվում է գետի մի կողմում, իսկ առյուծը՝ մյուս։ Յուլիսիսը նստեց աղբյուրի եզրին՝ նայելով առյուծին։ Առյուծն էլ իր հերթին եկավ կանգնեց Յուլիսիսի ուղիղ դիմացը և նայեց նրան։ Ավետարանի ընթերցումը շարունակվում էր։

Յուլիսիսը հեռվում տեսավ ավազի վրա պառկած, երկար հագուստով մի արաբի։ Արաբի կողքին՝ մի ինչ-որ մանդոլին կամ դրա նման մի գործիք և ջրաման։ Յուլիսիսը տեսավ առյուծին, որն այդ քնած մարդու խաղաղությամբ ու անմեղությամբ շարժվեց դեպի արաբը, կանգ առավ նրա գլխավերևում, հոտոտեց, առանց վնաս տալու որևէ մտադրության։

Ավետարանի ընթերցումն ավարտվեց։ Եկեղեցու երգեհոնը ուժեղ հնչեց, և երգչախումբն ու հավատացյալները սկսեցին երգել «Դարերի ապառաժը»։

Անապատի տեսիլքը չքացավ։ Դրա փոխարեն մի օվկիանոս երևաց։ Կառչելով ինչ-որ ժայռի, որը մի քանի ոտնաչափ բարձր էր ջրից, կանգնել էր ինքը՝ Յուլիսիսը։ Միայն գլուխն ու ձեռքերն էին ջրից դուրս։ Նա շուրջն էր նայում փախուստի կամ օգնության հույսով, բայց ջրից բացի ուրիշ բան չէր տեսնում։ Այդուհանդերձ, նույնիսկ այդ վիճակում, նա համբերում էր և հավատը չէր կորցնում։ Ի վերջո, շատ հեռվում, Յուլիսիսը տեսավ մի հսկա մարդու, Մեծ Քրիսին, որ գալիս էր ջրի վրայով։ Մեծ Քրիսը եկավ Յուլիսիսի մոտ և առանց խոսելու բռնեց նրա ձեռքից և ջրի երես հանեց։ Սակայն, մի քանի հետո, Յուլիսիսը նորից սուզվեց

ջրի մեջ, և Մեծ Քրիսը նորից հանեց նրան։ Ապա Յուլիսիսի ձեռքից բռնած, Մեծ Քրիսը քայլեց ջրի վրայով։ Հեռվում մի գեղեցիկ, սպիտակ քաղաքի պարիսպները երևացին, իսկ քաղաքի շուրջը՝ կանաչ գոտի։ Մարդն ու տղան քայլեցին այդ քաղաքի ուղղությամբ։

Երգեցողությունն ավարտվեց։ Հանկարծ մեկը Յուլիսիսին ցնցեց։ Նա միանգամից արթնացավ։ Լայոնելն էր, ձեռքին փող հավաքելու ափսեն։ Յուլիսիսը գտավ իր հինգ սենթանոցը, դրեց ափի մեջ և ամանը փոխանցեց մորը։

Լայոնելը շշնջաց Յուլիսիսին երկյուղածությամբ և մեծ խորհրդավորությամբ.

— Փրկվա՞ծ ես, Յուլիսիս,— հարցրեց նա։

— Ի՞նչ,— հարցրեց Յուլիսիսը։

— Կարդա,— ասաց Լայոնելը և ընկերոջը երկարեց կրոնական մի թերթիկ։

Յուլիսիսը զննեց թերթիկը, բայց չկարողացավ կարդալ խոշոր տառերը, նույնիսկ վերնագրի.

«Փրկվա՞ծ ես. Երբեք ուշ չէ»։

Լայոնելը նույն հարցը տվեց կողքի նստարանի տարիքոտ մարդուն։

— Փրկվա՞ծ եք,— ասաց նա։

Մարդը խստությամբ նայեց տղային և սրտնեղած ասաց.

— Հեռացի՛ր, հեռացի՛ր։

Սակայն, հեռանալուց առաջ, Լայոնելը, նահատակի տեսքով, ծերուկին տվեց թերթիկներից մեկը։ Զայրացած, ծերուկը թերթիկը լուռ խլեց Լայոնելի ձեռքից՝ վախեցնելով տղային և նրան իսկական նահատակի զգացում ներշնչելով։

Ծերուկի կինը փսփսաց նրա ականջին.

— Ի՞նչ պատահեց, սիրելիս։

— Տղան ինձ հարցրեց, թե փրկվա՞ծ եմ։ Ապա տվեց ինձ սա...— Մարդը, գետնից վերցնելով թերթիկը, մեկնեց կնոջը։— Նա ինձ սա տվեց, այս թերթիկը,— տարիքոտ մարդը բառերը կարդաց բարկությամբ։— «Փրկվա՞ծ ես։ Երբեք ուշ չէ»։

Կինը շոյեց ծերուկի ձեռքը և ասաց.

— Մի զայրանա։ Տղան որտեղի՞ց իմանար, որ դու երեսուն տարի Չինաստանում միսիոներ ես եղել։

Փող հավաքելու արարողության ամբողջ ընթացքում երկնքում նիստում էր մեղմ ու քաղցրաձայն, իսկ մի սոպրանո երգում էր։ Լայոնելը, Օգին, Շեկը և Իթաքայի մյուս տղաները կանգնել էին ասպիտարանի հանի

մասում, յուրաքանչյուրը՝ ձեռքին մի ափսե։ Երաժշտությունն ավարտվեց։ Հետո, զարմանալի և ծիծաղելի լռությամբ ու լրջությամբ, տղաները առաջացան և ամբիոնի մոտի սեղանին մեկը մյուսի վրա դնելով ափսեները, վերադարձան իրենց տեղերը՝ ծնողների մոտ։

Գլուխ 35

ԱՌՅՈՒԾԻ ԾԻԾԱՂԸ

Եկեղեցուց և կիրակնօրյա ճաշից հետո Օգյուստ Գոթլիբը իրենց տան դիմացի ազատ տարածությունում կանգնած նայում էր թենիսի հին ցանցին, որը նա հույս ուներ կարկատելուց հետո օգտագործել։ Ենոք Հոպերը, Օգիի տարիքի մի տղա, արագ վազելով մոտեցավ Նրան, կանգնեց և սկսեց դիտել։ Նրա ձեռքին բեյսբոլի մի հին գնդակ կար, որը խփում էր մայթին՝ բարձր թռցնելով։ Նա բռնում էր գնդակը և նորից ու նորից խփում։ Ենոք Հոպերը Իթաքայի ամենաուժեղ, ամենաանհանգիստ, ամենաարագաշարժ, ամենաանհամբեր և ամենաբարձր ձայնով խոսող տղան էր։

— Ի՞նչ ես սարքում, Օգի,— հարցրեց նա։

— Ցանց,— պատասխանեց Օգին։

— Ինչի՞ համար,— հարցրեց Ենոքը,— ձո՞ւկ որսալու։

— Ոչ,— պատասխանեց Օգին,— գազաններ բռնելու։

Անմիջապես ձանձրույթ իջավ Ենոք Հոպերի վրա։

— Արի բեյսբոլ խաղանք կամ գնանք Գուգենհեյմի ամբարտակը և մագլցենք վրան,— ասաց նա։

— Պետք է ցանցը նորոգեմ,— ասաց Օգին։

— Աստված իմ, ինչի՞դ է պետք,— բղավեց Ենոքը անհամբերությամբ։

— Գազաններ պիտի բռնեմ,— ասաց Օգին։

— Այստեղ գազան որտեղի՞ց գտնես,— բարձրաձայն ասաց տղան,— արի գնանք Մալագա լողանանք։

— Այս ցանցով ես շատ գազաններ կբռնեմ,— ասաց Օգին։

— Այդ թենիսի ցանցով դու մի ճանճ էլ չես բռնի,— ասաց Ենոք Հոպերը,— արի մի բան խաղանք կամ գնանք կինոթատրոն Տարզանի մասին նկարը դիտենք։

— Նախ մի շուն կբռնեմ,— ասաց Օգին,— պարզապես ցանցը փորձելու համար, տեսնեմ պի՞նդ է։ Եթե դիմացավ, այդ ժամանակ կտեսնես։

— Է՛, դա թենիսի պատռված ցանց է,— ասաց Ենոքը,— դրանով դու ոչ մի բան էլ չես բռնի։ Արի դատարանի այգին գնանք կամ քաղաքային բանտի մոտ և զրուցենք բանտարկյալների հետ։

— Պետք է գաղանների ցանցը կարգի բերեմ,— ասաց Օգին։— Հենց այսօր պիտի փորձեմ, եթե բանի պետք է, կտեսնես, թե վաղը ինչ՛ր կանեմ...

— Ինչ՛ր կանեմ,— հեգնեց Ենոքը,— այստեղ կենդանիներ չկան։ Մի կով, մի քանի շուն, վեց կամ յոթ ճագար, մի քանի հավ... ի՞նչ ես որսալու։

— Հրաշալի ցանց է,— ասաց Օգին,— սրանով արջ էլ կարելի է բռնել։

— Դե, արի գնանք,— ասաց Ենոքը,— ի՞նչ ես իզուր ժամանակ կորցնում։ Չէ՞ մի՝ արջ։ Այդ հնոտիով խաղալիք արջ էլ չես բռնի։ Արի գնանք չինական թաղամասը և զբոսնենք Չինաստան պողոտայով։

Օգյուստ Գոթլիբը մի պահ դադարեցրեց իր աշխատանքը, մտածելով չինական թաղամասի և չինացիների մասին։ Նա նայեց Ենոք Հոպերին և ասաց.

— Վախենո՞ւմ ես չինացիներից։

— Ե՞ս,— զարմացավ Ենոքը անկեղծությամբ,— ես ոչ մի բանից էլ չեմ վախենում։ Եթե նույնիսկ մտքներով անցնի ինձ բռնել, չեն կարողանա։ Շատ արագ եմ վազում։ Ոտքերս կրակ են։

— Գրազ կգամ, որ նույնիսկ առյուծը չի կարող քեզ բռնել,— ասաց Օգին։

— Առյուծն ինչ է, որ ինձ հասնի,— ասաց Ենոքը,— ես շատ արագավազ եմ։ Ոչ մի առյուծ չի կարող ինձ բռնել։ Ոչ մի արջ, ոչ մի վագր, ոչ մի չինացի, ոչ մի բան։ Ես նրանց համեմատությամբ շատ եմ արագավազ։ Արի գնանք երկաթգծի դաշտը և այնտեղի տղաների հետ խաղանք։

— Գրազ կգամ, որ քեզ ավելի դժվար է թակարդի մեջ գցել, քան առյուծին,— ասաց Օգին։

— Աշխարհում չկա այնպիսի թակարդ, որ ինձ բռնի,— ասաց Ենոքը։— Արի գնանք տոնավաճառի դաշտը և դրա շուրջը վազենք։ Կթողնեմ, որ հարյուր յարդ առջևից սկսես վազքը։

— Գրազ կգամ, որ նույնիսկ հարյուր չի կարող քեզ բռնել,— ասաց Օգին։

— Իհարկե, չի կարող,— ասաց Ենոքը։— Նույնիսկ մտանել չի կարող. ես նրան փոշու մեջ կթողնեմ։

Այդ ժամանակ մոտեցավ Լայոնելը։

— Ի՞նչ ես պատրաստում, Օգի,— հարցրեց նա։

— Ցանց,— ասաց Օգին,— կենդանիներ բռնելու։

— Այդ ցանցով մժեղ նույնիսկ չի կարելի բռնել, Լայոնել,— ասաց Ենոքը,— արի գնդակ խաղանք։ Ի՞նչ կասես։

— Ե՞ս,— հարցրեց Լայոնելը անվստահ։

— Դու,— ասաց Ենոքը,— արի։ Դու ինձ ինչքան կարող ես ուժեղ նետիր, իսկ ես քեզ շատ թույլ կնետեմ։ Արի, արի, օրը համարյա թե անցավ։

— Շատ լավ, Ենոք,— ասաց Լայոնելը,— բայց հիշիր, որ դու շատ թույլ պիտի նետես։ Ես այնքան էլ լավ չեմ բռնում։ Երբեմն վրիպում եմ, և գնդակը դեմքիս է դիպչում։ Մի անգամ աչքիս է կպել ու ցավացրել, երկու անգամ՝ քթիս։

— Ես կամաց կնետեմ, մի մտածիր,— ասաց Ենոքը։— Դե, գնանք։

Ենոք Հոպերն ու Լայոնել Քեբոտը անցան փողոցի մյուս կողմը, իսկ Օգին շարունակեց իր գործը։ Շուտով նա հին ցանցի բոլոր մասերը իրար կապեց, այնպես, որ ստացվեց գրեթե մի քառանկյունի ցանց։ Հետո ցանցը փռեց և յուրաքանչյուր ծայրը ամրացրեց գետնին ցցով, որպեսզի տեսնի իր արածը։ Այդ ժամանակ բակի ետնամասի ցանկապատի վրայով Օգին մոտեցավ Շեկ Մանուկյանը։

— Այդ ի՞նչ է,— հարցրեց նա։

— Ցանց,— պատասխանեց Օգին,— գազաններ բռնելու ցանց... փորձե՞նք։

— Ինչո՞ւ չէ,— ասաց Շեկը։— Բայց ինչպե՞ս պիտի բռնենք։

— Շատ հասարակ,— ասաց Օգին,— ես ցանցը կվերցնեմ և Արայի խանութի ետև կթաքնվեմ։ Դու Ենոքին կանչիր։ Այնտեղ, Լայոնելի հետ գնդակ է խաղում։ Ենոքին բռնելն ավելի դժվար է, քան առյուծին։ Եթե այս ցանցը կարողանա Ենոքին պահել, նշանակում է՝ կարող է ամեն ինչ բռնել։ Լավ, ես թաքնվում եմ։ Պատրաստ։ Կանչիր Ենոքին։ Ասա, որ իրեն բան ես ասելու։

— Շատ լավ,— ասաց Շեկը։ Նա նայեց Ենոքին, հետո բարձր ձայնով կանչեց,— Ենո՜ք, հե՜յ, Ենոք։

Ենոք Հոպերը շրջվեց և պատասխանեց էլ ավելի բարձր ձայնով.

— Ի՞նչ ես ուզում, Շեկ։

— Եկ այստեղ, Ենոք,— բղավեց Շեկը,— քեզ բան ունեմ հարցնելու։

— Ի՞նչ ես ուզում հարցնել,— բղավեց Ենոքը։

— Արի այստեղ, որ ասեմ,— գոռաց Շեկը։

— Եկա,— բղավեց Ենոքը և վազեց դեպի Շեկը։ Նրա ետևից գալիս էր Լայոնելը, որ չգիտեր ինչ անի՝ վազի՞, թե կամաց քայլի։

— Լսիր, Շեկ,— շշնջաց Օգին,— հիմա դու արի և ինձ հետ թաքնվիր այստեղ։ Բռնիր ցանցի այս ծայրը։ Երբ նա հասնի խանութի անկյունին, մենք վրա կպրծնենք և նրան կբռնենք, լա՞վ։

Ենոքը վազում էր ու բղավում։

— Տղանե՜ր, եկեք Մալագա գնանք և լողանանք. օրվա կեսը արդեն անցավ։ Եկեք մի բան անենք, ի՞նչ եք ասում։

Ենոքը հասավ միստր Արայի խանութի անկյունը։ Օգին և Շեկը արագ դուրս թռան և ցանցը գցեցին նրա վրա։ Ենոք Հոպերը թպրտում էր վայրի կենդանու, գուցեև իսկապես առյուծի նման։ Որսորդները կատաղորեն մաքառում էին, բայց ցանցը այնքան էլ ուժեղ չէր, և Ենոք Հոպերը շուտով դուրս պրծավ ու հանգիստ կանգնեց, լրիվ ազատ և նույնիսկ փորձի արդյունքով շատ հետաքրքրված։

Նա բեյսբոլի գնդակը խփեց մայթին։

— Եկ գնանք, Օգի,— բղավեց նա,— գնանք։ Այդ ցանցը մժեղ անգամ բռնել չի կարող։ Արի, ի՞նչ ես սպասում։

— Շատ լավ,— ասաց Օգին և ցանցը նետեց իրենց տան բակը,— եկեք դատարանի այգին գնանք և բանտարկյալների հետ զրուցենք։

Օգին, Ենոքը, Շեկը և նրանցից մի փոքր ետ ընկած Լայոնելը փողոցով շարժվեցին դեպի դատարանի այգին։ Շուտով Ենոք Հոպերը մի թաղամաս նրանից առաջ էր անցել և ետ դառնալով բղավում էր.

— Դե՛, շուտ եկեք, շտապեցեք, ինչո՞ւ եք այդպես դանդաղ շարժվում,— նա գնդակը նետեց ծառին թառած մի թռչունի վրա, բայց վրիպեց։

Գլուխ 36

ԾԱՌԵՐՆ ՈՒ ՈՐԹԱՏՈՒՆԿԵՐԸ

Թոմաս Սփանգլերն ու Դիանա Սթիդը կիրակի կեսօրից հետո քաղաքից դուրս էին եկել և մեքենայով շրջում էին Քինգսբուրգի կողմերը։ Սփանգլերի վարած երկու տեղանոց ավտոմոբիլն հին էր, վրան բաց։

— Դրանք թզի ծառեր են,— ասաց Սփանգլերը, ցույց տալով ծառերի մի շարք, որ խաղողի մի այգի էր եզերում։— Դրա ետևի որթատունկերը մուսկաթ են։ Այնտեղ մի քանի ձիթենիներ կան։ Այս մեկը նռենի է։ Այն կողմի որթատունկերը մալագաներ են։ Ահա, սա դեղձի ծառ է։ Սրանք ծիրանիներ են։ Այս հովիտը աշխարհի ամենագեղեցիկ հովիտն է։ Տեսնո՞ւմ ես այն ընկուզենին։ Ահա մի ծառ, որը հազվա-

գյուտ է, ամեն տեղ չես հանդիպի։ Նոր տեսակի սալորենի է։ Այս հոլ-տում աճում են ամեն տեսակի հրաշալի պտուղներ։

— Օ՜, սիրելիս,— ասաց երիտասարդ կինը,— դու ծառեր շատ ես սիրում, չէ՞։

— Ես ամեն ինչ սիրում եմ,— ասաց Սփանգլերը, ապա անմիջապես ավելացրեց,— հիմա մի հարցրու, թե քեզ սիրո՞ւմ եմ, որովհետև սիրում եմ։ Ես քեզ սիրում եմ. սիրում եմ նաև ամբողջ աշխարհը և այնտեղ եղած ամեն ինչը։— Նա ձայնը բարձրացրեց, համարյա բղավեց։— Ես տեսել եմ կյանքի գետը, զուլալ, ինչպես բյուրեղ։ Այդ գետի երկու ափերին կանգնած էր կյանքի ծառը, որի վրա տասներկու տեսակ պտուղ էր աճում և այդ ծառի տերևները բուժում էին մարդկանց ցավերը։— Սփանգլերը համբուրեց աղջկա աչքի անկյունի փոսիկը։

— Օ՜, սիրելիս,— ասաց աղջիկը,— երջանի՞կ ես։

— Այո, այո,— արագ ասաց Սփանգլերը,— երջանկություն ասված բանը շատ հստակ չեմ պատկերացնում, բայց ինչպիսին էլ լինի այն, վստահ եմ, որ սրա նման մի բան է։ Նայիր, դարձյալ ձիթենիներ։

Նա գրկեց երիտասարդ աղջկան և ասաց.

— Դու պետք է գիտենաս, որ ես չեմ կարող սպասել։ Հետաքրքիր է, ո՞վ կլինի նա։ Ես ուզում եմ, որ աղջիկ լինի։ Ուզում եմ, որ լինի քեզ նման։ Ուզում եմ լսել այդպիսի մի աղջկա ձայն։— Նա քնքշությամբ շարունակեց,— կարծում էի, որ դու խենթ ես։— Եվ համբուրեց երիտասարդ կնոջ շուրթերը։— Բայց նա, ով կարող է այդ բանը անել, ով կարող է աշխարհին մարդկային մի էակ պարգևել, խենթ լինել չի կարող։ Իսկ դու ընդունակ ես դրան։

— Օ, ես ուզում եմ պարգևել այդ էակը, սիրելիս,— ասաց երիտասարդ կինը,— և ամենափոքր իսկ չափով չեմ վախենում, մաղաչափ իսկ չեմ վախենում։

Փոքր ավտոմեքենան շարժվեց Քինգս գետի եզերքով, զբոսավայրերի կողքով։ Այդ կիրակի, կեսօրից հետո՝ այստեղ ուրախանալու էին եկել հինգ մեծ խմբեր՝ իտալացիներ, հույներ, խորվաթներ ու սերբեր, հայեր ու ամերիկացիներ։ Յուրաքանչյուր համայնք իր հատուկ երաժշտությունն ու պարն ուներ։ Սփանգլերը մեքենան մի պահ կանգնեցնում էր յուրաքանչյուր խմբի մոտ, որպեսզի կարողանային լսել նրանց երգերը և դիտել՝ պարերը։ Նա յուրաքանչյուր խմբի մասին մի բան էր ասում։

— Սրանք հույներ են,— ասաց նա,— ես դա իմացա նրանց երաժշտությունից։ Մի հույն ընտանիք էի ճանաչում։ Տեսնո՞ւմ ես պարող աղջկան։ Նրանք այդպես են պարում իրենց երկրում։

Մեքենան փոքր-ինչ առաջացավ և նորից կանգնեց։

— Այդ մարդիկ հայեր են,— ասաց նա,— հայերին կարելի է ճանաչել նրանց քահանաներից և երեխաներից։ Նրանք հավատում են աստծուն և այն բանին, որ մարդ պետք է շատ երեխաներ ունենա։ Ինչ-որ բանով նման են հույներին, ինչ-որ բանով էլ՝ մյուս ժողովուրդներին։ Տեսնո՞ւմ ես այն պարող ծերունուն։ Հապա լսիր երաժշտությունը։— Մեքենան շարժվեց և նորից կանգնեց մի ուրիշ խմբի մոտ։— Կարծում եմ, որ սրանք խորվաթներ ու սերբեր կլինեն,— ասաց Սփանգլերը,— կամ նրանց հարևան որևէ ժողովուրդ։ Նրանք բոլորն էլ նման են իրար։

Նա նորից գրկեց երիտասարդ կնոջը և արագ շշնջաց.

— Կուզենայի, որ նա մի փոքրիկ սերբուհի լիներ, կամ գուցե վատ չէր լինի, եթե նրա մեջ լիներ մի քիչ հունական արյուն, կամ մի քիչ հայկական, իտալական, լեհական, ռուսական արյուն։ Լավ կլիներ, եթե նա լիներ նաև մի քիչ գերմանուհի, իսպանուհի, ֆրանսուհի, մի խոսքով, նա իր մեջ ունենար աշխարհի բոլոր ազգերի արյունից։

Մեքենան շարժվեց և հետո նորից կանգ առավ։

— Գիտե՞ս ովքեր են դրանք,— ասաց Սփանգլերը երիտասարդ կնոջը։— Իտալացիներ են։ Հավանաբար ինքը Կորբետն էլ այնտեղ է կնոջ ու երեխաների հետ։ Լսո՞ւմ ես, թե ինչպես են նրանք երգում։

"O sole Mio„։

Մեքենան ուղղվեց դեպի զվարճացողների վերջին խումբը։ Այդ խումբը գուցե ամենահետաքրքրականն էր։ Բոլորից ուրախն ու զվարթը։ Նրանց երաժշտությունը՝ սվինգ, ջայվ և բուգի-վուգի էր, իսկ պարը՝ սոսկալի։

— Ամերիկացիներ են,— ասաց Սփանգլերը,— նայիր նրանց։ Ամերիկացիներ են՝ հույն, սերբ, լեհ, ռուս, հայ, գերմանացի, իսպանացի, պորտուգալացի, իտալացի, հաբեշ, հրեա, ֆրանսիացի, անգլիացի, շոտլանդացի, իռլանդացի...։ Մի դրանց նայիր, լսիր։

Նրանք նայեցին, լսեցին. քիչ հետո հեռացան։

Գլուխ 37

ԻԹԱՔԱ, ԻՄ ԻԹԱՔԱ

Կեսօրից հետո, Սանտա Ֆե գնացող մարդատար գնացքը Սան Ֆրանցիսկոյից գալով, կանգնեց Իթաքայում։ Ինը հոգի դուրս եկան, որոնցից երկուսը երիտասարդ զինվորներ էին։ Բայց նախքան

գնացքի շարժվելը, ցած իջավ մի երրորդ երիտասարդ ևս, որը ձախ ուսքից կաղում էր։ Նա դանդաղ ուղղվեց դեպի քաղաք։

Առաջին զինվորը նայեց իր ընկերոջը և ասաց.

— Ահա եղբայր, սա Իթաքան է։ Սա մեր հայրենիքն է։

— Մի թող կարգին նայեմ մեր Քաղաքին,— ասաց երկրորդ զինվորը,— թող տեսնեմ ու կշտանամ։— Նա ուրախությունից ուղղակի պոռթկաց.— ո՜ւ ո՜ւ, ախ դու իմ հայրենի Իթաքա։— Հետո դարձավ ընկերոջը։— Ես չգիտեմ, թե դու ինչ ես զգում, բայց ես ուրիշ կերպ չեմ կարող...— Զինվորը ծնկի եկավ և համբուրեց կայարանի սալահատակը։— Մի համբույր իմ Իթաքային,— ասաց նա։ Հետո նորից համբուրեց և ասաց.— Մի հատ էլ։— Հետո նորից համբուրեց, մի հատ էլ, մի անգամ էլ։

— Վեր կաց, Հենրի,— ասաց առաջին զինվորը,— վեր կաց։ Մարդիկ նայում են։ Ուզում ես, որ նրանք մտածեն, թե զինվորները խե՞նթ են։

— Չէ՛, չեմ ուզում,— ասաց Հենրին,— բայց չեմ կարող ինձ զսպել։ Այ տղա, սա իմ Իթաքան է։— Նա վեր կացավ և բռնեց ընկերոջ թևից.— Դե գնանք, Դենի, գնանք,— ասաց նա։

— Կարծում ես, որ ձերոնք քեզ տեսնելով պիտի զարմանա՞ն,— ասաց Դենին։— Լավ, սպասիր մինչև մերոնք ինձ կտեսնեն։ Նրանք այնպես անակնկալի կգան, որ ուղղակի կապշեն։

Երկու զինվորները քայլելով հասան այն փողոցը, որտեղ միստր Աղայի խանութն էր։ Հանկարծ նրանք սկսեցին վազել, մեկը՝ դեպի մի տան մուտքը, մյուսը՝ դեպի կողքի տան մուտքը։ Ալֆ Ռայֆը վազելով եկավ կանգնեց երկու տների դիմացը և սկսեց հետաքրքրությամբ նայել։ Երկու տների դռները միաժամանակ բացվեցին։ Դուռ բացող կանայք միաժամանակ գրկեցին տղաներին։ Եվ ապա, տղամարդիկ, երեխաներ ու կանայք գրկեցին զինվորներին։ Բայց ինչ-որ թյուրիմացություն կար։ Այդ բանը գլխի ընկավ Ալֆ Ռայֆը և ամբողջ ձայնով բղավեց.

— Չէ, մեր տղան չէ,— բղավեց նա,— սխալվեցինք։ Սա Դենի Պութն է, հարևանի տղան։ Նա է տուն վերադարձել։ Նա կողքի տանն է ապրում։ Սխալ տուն եկավ։ Մենք կարծեցինք, որ եղբայրս է, բայց նա միսիս Պութի տղան է։ Իսկ եղբայրս, հրեն, միսիս Պութին է համբուրում։ Սխալվեցիր, մա, սխալվեցիր։

— Օ՜, բարև, Դենի, —ասաց միսիս Ռայֆը Դենի Պութին,— մենք կարծեցինք, որ դու Հենրին ես։

— Ինչ տարբերություն, միսիս Ռայֆ,— ասաց Դենին,— հիմա կգնամ և մայրիկին էլ կհամբուրեմ։

Մյուս տան մուտքին Հենրի Ռայֆն էր։

— Բարև, միսիս Պութ, մեր տուն համեցեք, բոլորդ էլ եկեք։ Ես շատ ուրախ եմ ձեզ տեսնելու համար, միսիս Պութ։— Նա նորից համբուրեց կնոջը,— Դենին մեր դռան առաջ իմ մորն է համբուրում։

Երկու տների արանքը լցվեց մարդկանցով, որոնք ինչ-որ հրաշալի շփոթության մեջ գնում ու գալիս էին, իսկ Ալֆ Ռայֆը նորից ու նորից բղավում էր.

— Սխալվեցին, սխալվեցին, նա ուրիշ տուն մտավ։ Նա կողքի տանն է ապրում։ Լսիր, Հենրի, մայրիկն այստեղ է։ Դա միսիս Պութն է։ Ուրիշ տուն ես մտել, Հենրի։

Գլուխ 38

ՍԵՐԸ ԱՆՄԱՀ Է, ԱՏԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՀԱՆՈՒՄ Է ԱՄԵՆ ՐՈՊԵ

Հոմեր Մաքոլին, նրա Բես քույրը, Յուլիսիս եղբայրը և Մերի Արենան կիրակի կեսօրից հետո զբոսնում էին Իթաքայում։ Նրանք անցան «Կինեմա» թատրոնի առջև հերթի կանգնած մարդկանց կողքով և նրանց մեջ տեսան Լայոնելին։ Հոմերը կանգ առավ։

— Հելլո, Լայոնել,— ասաց նա,— կինո՞ ես գնում։

— Փող չունեմ,— ասաց Լայոնելը։

— Հապա ինչո՞ւ ես հերթի կանգնել,— հարցրեց Հոմերը։

— Ես, Օգին, Շեկը և Ենոքը,— պատմեց Լայոնելը,— եկանք դատարանի բակը բանտարկյալների հետ խոսելու։ Հետո նրանք ինձ քշեցին։ Ես չգիտեի ուր գնալ։ Այս մարդկանց տեսա կանգնած, ես էլ եկա և նրանց հետ կանգնեցի։

— Ինչքա՞ն ժամանակ է, որ կանգնել ես,— ասաց Հոմերը։

— Մի ժամ կլինի,— պատասխանեց Լայոնելը։

— Ուզում ես կինո՞ գնալ,— ասաց Հոմերը և գրպանից փող հանեց։

— Չգիտեմ,— ասաց Լայոնելը,— գնալու տեղ չունեի։ Բայց կինո շատ եմ սիրում։

— Այդ դեպքում,— ասաց Հոմերը,— արի մեզ հետ։ Մենք հենց այնպես ման ենք գալիս, դիտում ենք խանութների ցուցափեղկերը։ Մի քիչ քաղաքում ման կգանք, հետո տուն կգնանք։ Եկ մեզ հետ, Լայոնել։

Նա պարանը բարձրացրեց, և Լայոնելը հերթից դուրս եկավ։

— Շնորհակալություն,— ասաց Լայոնելը,— կանգնելուց արդեն հոգնել էի։

Նրանք շարունակեցին, և հանկարծ Յուլիսիսը կանգնեց ու Հոմերի ձեռքը սեղմեց։ Նա ցույց տվեց մայթը։ Այնտեղ, տղայի առաջ ընկած էր Լինկոլնի նկարով մի պենսի։

— Մի պենսի,— ասաց Հոմերը,— վերցրու, Յուլիսիս, դա բախտի նշան է։ Միշտ պահիր մոտդ։

Յուլիսիսը պենսին վերցրեց և նայեց շուրջը, նա ուրախ էր իր բախտի համար։

Նրանք անցան հեռագրատան դիմացի մայթով։ Հոմերը կանգ առավ ու նայեց փոքր գրասենյակին։

— Այ, այստեղ եմ աշխատում,— ասաց նա,— այստեղ աշխատում եմ արդեն համարյա վեց ամիս։— Նա մի պահ լռեց և հետո, կարծես ինքն իր հետ խոսելով, ասաց.— Այնպես է թվում, թե հարյուր տարի է։— Հոմերը նայեց գրասենյակից ներս։— Կարծես միստր Գրոգանն է։ Չգիտեի, որ միստր Գրոգանը այսօր աշխատում է։— Նա դարձավ մյուսներին.— Մի բոպե սպասեցեք,— ասաց նա,— շուտով կվերադառնամ։

Նա անցավ փողոցը և գրասենյակ մտավ։ Հեռագրատուփը տկտկում էր, բայց ծեր հեռագրիչը հեռագիրը չէր ընդունում։ Հոմերը վազեց նրա մոտ և ասաց.

— Միստր Գրոգան, միստր Գրոգան,— բայց ծերունին չարթնացավ։

Լրաբերը գրասենյակից դուրս վազեց և փողոցն անցնելով հասավ մյուսներին։

— Միստր Գրոգանը լավ չի զգում։ Ես պետք է օգնեմ նրան։ Դուք տուն գնացեք։ Ես շուտով կգամ։

— Շատ լավ,— ասաց Բեսը։

— Ի՞նչ է պատահել նրան,— ասաց Լայոնելը, առանց իմանալու, թե ում մասին է խոսքը։

— Ես շտապում եմ,— ասաց Հոմերը։— Դուք գնացեք։ Նա ծեր մարդ է, Լայոնել, հարկավոր է օգնել նրան։

Հոմերը շտապեց հեռագրատուն և մի քանի անգամ ցնցեց միստր Գրոգանին։ Նա վազեց դեպի ջրամանը և թղթե բաժակը լցնելով, ցանեց ծերունու երեսին։ Միստր Գրոգանը աչքերը բացեց։

— Ես եմ, միստր Գրոգան,— ասաց Հոմերը,— ես չգիտեի, որ դուք այսօր աշխատում եք, թե չէ վաղուց եկած կլինեի, ինչպես միշտ։ Պարզապես անցնում էի։ Հիմա սուրճը կբերեմ։

Ծեր հեռագրիչը գլուխը օրորեց, հասավ հեռագրիչ մեքենային և տեղադրեց այն։ Նա գրամեքենայի վրա մի բլանկ դրեց և սկսեց մեքենագրել։

Հոմերը գրասենյակից դուրս վազեց և Կորբետի խորտակարանը հասնելով, սուրճ ուզեց։

— Նա հենց հիմա թարմ սուրճ է պատրաստում, Հոմեր,— ասաց Փիթը՝ գինետան մատուցողը,— մի քանի րոպեից պատրաստ կլինի։

— Պատրաստի չունի՞,— հարցրեց Հոմերը։

— Սպառվեց,— ասաց Փիթը,— այժմ նորն է խարկում։

— Շատ է հարկավոր,— ասաց Հոմերը,— ես մի րոպե գրասենյակ վերադառնամ, հետո նորից կգամ։ Գուցե մինչ այդ սուրճը պատրաստ կլինի։

Երբ Հոմերը վերադարձավ միստր Գրոգանի մոտ, ծեր հեռագրիչը այլևս չէր մեքենագրում հեռագիրը։ Հոմերը նորից ցնցեց նրան։

— Միստր Գրոգան,— ասաց նա,— հեռագիր են հաղորդում, իսկ դուք չեք ընդունում, ասացեք նրանց թող դադարեցնեն։ Ասացեք թող մի րոպե սպասեն։ Կորբետի մոտ թարմ սուրճ են պատրաստում։ Մեկ կամ երկու րոպեից ձեզ համար մի բաժակ կբերեմ։ Հայտնեցեք թող դադարեցնեն, միստր Գրոգան։ Դուք հեռագիրը չեք ընդունում։

Հոմերը շրջվեց և գրասենյակից դուրս վազեց։ Ծեր հեռագրիչը նայեց մեքենագրված կիսատ հեռագրին։ Նա նորից կարդաց այն, ինչ մեքենագրել էր.

Միսիս Քեթի Մաքոլի
2226, Սանտա Կլարա պողոտա
Իթաքա, Կալիֆոռնիա
Ռազմական բաժանմունքը ցավով հայտնում է, որ ձեր որդի Մարկուսը...

Ծեր հեռագրիչը փորձեց աթոռից վեր կենալ, բայց նոպան նորից սկսվեց և բռնեց սիրտը։ Մի պահ հետո նա ընկավ գրամեքենայի վրա։

Հոմեր Մաքոլին գրասենյակ մտավ, ձեռքին դողացող սուրճի գավաթը։ Նա մոտեցավ ծերունուն և գավաթը դրեց սեղանին։ Հեռագրի մեքենան դադարեց աշխատելուց, և ամբողջ գրասենյակում լռություն տիրեց։

— Միստր Գրոգան,— ասաց Հոմերը,— ի՞նչ է պատահել,— նա ծերունուն գրամեքենայից հեռու քաշեց, նայելու համար նրա դեմքին, և այդ անելիս գրամեքենայի վրա տեսավ անավարտ հեռագիրը։ Առանց

նույնիսկ կարդալու հեռագրի բառերը, Հոմերը իմացավ լուրը, բայց չուզեց հավատալ դրան։ Ծերունուն բռնած նա կանգնեց անդամալույծի պես։— Միստր Գրոգան,— ասաց նա։

Ֆելիքսը՝ կիրակնօրյա ցրիչը, ներս մտավ և զարմացած նայեց ծերունուն ու ցրիչին։

— Ի՞նչ է պատահել, Հոմեր,— ասաց նա,— ի՞նչ է պատահել ծերուկին։

— Մեռել է,— ասաց Հոմերը։

— Դու խենթ ես,— ասաց Ֆելիքսը։

— Ոչ,— ասաց Հոմերը. նա խոսում էր համարյա կատաղած։— Նա մեռած է։

— Ես հիմա միստր Սփանգլերին կկանչեմ,— ասաց Ֆելիքսը։ Նա հեռախոսի համարը հավաքեց, սպասեց, հետո հեռախոսը կախեց։— Նա տանը չէ,— ասաց Ֆելիքսը— ի՞նչ պիտի անենք։— Նա մոտեցավ տեսնելու, թե ինչու է Հոմերը անթարթ նայում գրամեքենային։ Հեռագիրը կարդալուց հետո Ֆելիքսը ասաց.— Հեռագիրն անավարտ է, Հոմեր, քո եղբայրը գուցե միայն վիրավորված կամ անհայտ կորած է։

Հոմերը նայեց միստր Գրոգանին, հետո ասաց.

— Ոչ, նա լսել է հեռագրի շարունակությունը։ Չի մեքենագրել, բայց լսել է։

— Գուցեև չի լսել,— ասաց Ֆելիքսը,— ես նորից կզանգահարեմ միստր Սփանգլերին։ Գուցե հիմա տանը լինի։

Հոմեր Մաքոլին նայեց չորս կողմը։ Հանկարծ աճավոր ատելությամբ ու կատաղությամբ թքեց։ Նա նստեց և նայեց ուղիղ իր դիմացը։ Նրա աչքերում արցունք չկար։

Շրջագայությունից վերադառնալով, Թոմաս Սփանգլերը մեքենայով մոտեցավ դրասենյակին։ Նա ազդանշան տվեց, և Ֆելիքսը վազեց դեպի ավտոմեքենան։

—Միստր Սփանգլեր,— ասաց Ֆելիքսը,— ես փորձում էի ձեզ հետ հեռախոսով խոսել։ Ինչ-որ բան է պատահել միստր Գրոգանին։ Հոմերն ասում է, որ մահացել է։

— Դու տուն գնա,— ասաց Սփանգլերը Դիանա Սթիդին,— ես հետո կգամ, բայց ընթրիքի մի սպասիր։ Գուցե, ավելի լավ կլինի, որ գիշերը ձերոնց հետ անցկացնես։— Նա մեքենայից դուրս եկավ և համբուրեց երիտասարդ կնոջը։

— Շատ լավ, սիրելիս,— ասաց նա։

Սփանգլերը շտապեց հեռագրատուն։ Նա նայեց միստր Գրոգանին, հետո Հոմերին, ապա դարձավ մյուս ցրիչին։

— Ֆելիքս— ասաց նա— զանգահարիր բժիշկ Նելսոնին, 1133, ասա, որ անմիջապես գա։

Սփանգլերը բարձրացրեց ծերուկին և տարավ դեպի հեռագրատան խորքում գտնվող մահճակալը։ Նա վերադարձավ և նայեց Հոմեր Մաքոլիին։

— Մի հուզվիր, Հոմեր,— ասաց նա,— Միստր Գրոգանը ծեր մարդ էր։ Նա հենց այսպես էլ ուզում էր մեռնել։ Դե, սթափվիր, պինդ կաց։

Այդ ժամանակ հեռագրի տուփը տկտկաց, և Սփանգլերը գնաց ազդանշանին պատասխանելու։ Գրոգանի աթոռին նստելիս, նա տեսավ անավարտ հեռագիրը, երկար նայեց դրան, հետո նայեց Հոմերին։ Սփանգլերը գծի մյուս ծայրի հեռագրիչին հարցրեց անավարտ հեռագրի մասին։ Մյուս կողմի հեռագրիչը ամբողջ հեռագիրը նորից հաղորդեց։ Սփանգլերը հեռագրիչին ասաց, որ միառժամանակ հետաձգի հեռագրեր հաղորդելը։ Հետո վեր կացավ, գնաց գրասեղանի մոտ և նստեց, ոչնչի չնայելով։ Նրա ձեռքը անփութորեն դիպավ խաշած ձվին, որ պահում էր որպես երջանկության նշան։ Չիմանալով, թե ինչ է անում, նա ձուն խփեց սեղանին, ջարդեց, ապա դանդաղ կեղևեց և հուսահատ ինքնամոռացության մեջ կերավ։ Հանկարծ սեղանի վրա նկատեց ձվի կճեպները և դրանք հրեց աղբամանի մեջ։

— Ֆելիքս,— ասաց նա,— հեռագրիչ Հարրի Բերկին գրիր և ասա, որ անմիջապես գա։ Երբ բժիշկը գա, ասա, ինչ որ պետք է, անի։ Ես նրա հետ հետո կխոսեմ։

Հոմեր Մաքոլին վեր կացավ, գնաց դեպի գրամեքենան և վերցրեց անավարտ հեռագիրը։ Նա անավարտ հեռագրի պատճենը դրեց տեղը, ծալեց հեռագիրը և ծրարեց։ Հետո ծրարը դրեց բաճկոնի գրպանը։ Սփանգլերը մոտեցավ ցրիչին և գրկեց նրան։

— Արի, Հոմեր,— ասաց նա,— եկ մի քիչ ման գանք։

Նրանք հեռագրատնից դուրս եկան և լուռ քայլեցին երկու փողոց։ Ի վերջո, Հոմերը սկսեց խոսել։

— Ի՞նչ է անում մարդ նման դեպքերում,— ասաց նա շատ հանդարտ, համարյա մեղմ.— Չգիտեմ ում ատեմ։ Մտածում եմ, թե ո՞վ կարող է լինել այդ մարդը և չեմ հասկանում։ Պարզապես չեմ հասկանում։ Ի՞նչ է հարկավոր անել։ Ի՞նչ կարող եմ անել ես։ Մարդ ինչպես շարունակի ապրել։ Ո՞ւմ կարող է այլևս սիրել։

Այդ ժամանակ Հոմերը և Սփանգլերը տեսան Օգիին, Ենոքին, Շեկին և Նիքին, որոնք իրենց կողմն էին գալիս։ Տղաները ողջունեցին Հոմերին, և նա անուններով ողջունեց նրանցից յուրաքանչյուրին։ Համար-

յս։ Երեկո էր։ Արևը մայր էր մտնում, երկինքը կարմիր էր, քաղաքը մթնում էր։

— Ո՞ւմ ատեն,— հարցրեց Հոմերը,— ոչ ոքի չեմ հանաչում, որին կարելի լինի ատել։ Արգելավազքի ժամանակ Բայֆիլդը ինձ գետին գցեց, բայց Նուլնիսկ նրան չեմ կարող ատել։ Նա պարզապես այդպիսին է։ Ես չգիտեմ ի՞նչ է այս։ Չգիտեմ ո՞վ է այդ անում։ Բոլորովին չեմ հասկանում։ Միակ բանը, որ ուզում եմ իմանալ, այն է, թե ի՞նչ եղավ իմ եղբայրը։ Ուզում եմ միայն այդ իմանալ։ Մինչև հիմա ինձ այդպիսի բան չէր պատահել։ Երբ հայրս մահացավ, ուրիշ էր։ Մենք տխուր էինք, որովհետև նա մահացել էր, բայց դառնացած չէինք։ Այժմ ես դառնացած եմ, բայց ո՞ւմ դեմ։ Ո՞վ է թշնամին։ Դուք գիտե՞ք, միստր Սփանգլեր։

Բավական ժամանակ անցավ, մինչև որ հեռագրատան վարիչը կարողացավ ցրիչին պատասխանել.

— Ես գիտեմ, որ թշնամին ժողովուրդը չէ,— ասաց նա,— եթե այդպես լիներ, ինքս իմ թշնամին կլինեի։ Ժողովուրդը ամեն տեղ նույնն է։ Եթե մեկը մյուսին ատի, նշանակում է՝ ինքն իրեն է ատում։ Մարդը չի կարող ուրիշներին ատել, որովհետև ուրիշին ատողը ինքն իրեն է ատում։ Եվ եթե մարդն ինքն իրեն է ատում, նրան մի ելք է մնում՝ լքել մարմինը, լքել աշխարհը, հեռանալ աշխարհի մարդկանցից։ Քո եղբայրը հեռանալ չէր ուզում, նա ուզում էր մնալ։ Նա կմնա։

— Ինչպե՞ս,— ասաց Հոմերը— ինչպե՞ս նա պիտի մնա։

— Չգիտեմ ինչպես,— ասաց Սփանգլերը,— բայց հավատում եմ, որ նա կմնա։ Գուցե նա կմնա քո մեջ, քո փոքր եղբոր՝ Յուլիսիսի մեջ։ Գուցե նա կմնա այն սիրո մեջ, որ դուք զգում եք նրա նկատմամբ։

— Ոչ,— ասաց Հոմերը,— ոչ, դա քիչ է։ Ես ուզում եմ տեսնել նրան։ Ուրիշ կերպ հնարավոր չէ։ Ես ուզում եմ տեսնել նրան այնպես, ինչպես Յուլիսիսն է ուզում նրան տեսնել։ Ես ուզում եմ նրան տեսնել քայլելիս և կանգնած։ Ուզում եմ շոշափել նրան։ Ուզում եմ խոսել հետը։ Ուզում եմ ձայնը լսել։ Ուզում եմ լսել ծիծաղը։ Նույնիսկ ուզում եմ կռվել հետը, ինչպես մենք կատակով կռվում էինք։ Հիմա որտե՞ղ գտնեմ նրան։ Որքան էլ փնտրեմ, չեմ գտնի։ Ամբողջ աշխարհը փոխվել է։ Աշխարհի բոլոր մարդիկ փոխվել են։ Նրանք կորցրել են ինչ-որ մի լավ բան։ Իթաքայում այժմ ամեն ինչ փոխված է, որովհետև իմ եղբայրը այլևս երբեք չի տեսնելու դրանք։

Նրանք քայլեցին դատարանի այգու միջով, անցան քաղաքային բանտը, ուղղվեցին դեպի խաղադաշտը։

— Քեզ մխիթարել չեմ փորձի,— ասաց Սփանգլերը,— գիտեմ, որ չեմ կարող։ Բայց հիշիր, որ լավ մարդը երբեք չի մահանում։ Դու նրան

հաճախ պիտի տեսնես։ Դու նրան պիտի տեսնես փողոցներում, տներում, խաղողի այգիներում և մրգաստաններում, գետերում և ամպերի մեջ, այն ամենի մեջ, որ այս աշխարհը մեզ համար դարձնում են ցանկալի։ Դու պիտի նրան զգաս այն ամենի մեջ, որ ծնված է սիրուց և սիրո համար, այն ամենի մեջ, որ առատ են, աճում են, ծաղկում, ուռճանում։ Մարդու մարմինը կարող է մեզնից հեռանալ, նրան կարող են մեզնից խլել, բայց այն լավագույնը, որ կա մարդու մեջ, մնում է, մնում է հավիտյան։ Սերը անմահ է և ամեն ինչ հավերժական է դարձնում, իսկ ատելությունը ամեն բոպե մահանում է։ Դու ինչպի՞ս ես պայտ նետելու մեջ։

— Վատ,— ասաց Հոմերը,— շատ վատ եմ խաղում։

— Ես նույնպես,— ասաց Սփանգլերը։— Արի մի քիչ խաղանք, քանի դեռ շատ մութ չէ։

— Խաղանք,— ասաց Հոմերը։

Գլուխ 39

ՎԱԽՃԱՆՆ ՈՒ ՍԿԻԶԲԸ

Դենի Պութին և Հենրի Ռայֆին Իթաքա բերող գնացքից իջած կաղ զինվորը սկսեց շրջել քաղաքում։ Նա քայլում էր դանդաղ, նայելով ամեն ինչի և խոսելով ինքն իր հետ։

— Սա Իթաքան է,— ասաց նա,— ահա Սանտա Ֆե տանող երկաթուղային կայարանը և ահա Իթաքայի երկինքը նրա վրա։ Այնտեղ «Կինեմա» կինոթատրոնն է, և Իթաքայի հրաշալի մարդիկ հերթի են կանգնել։ Սա հանրային գրադարանն է։ Այն մեկը երիցսական ժողովարանն է։ Ահա Իթաքայի միջնակարգ դպրոցը և նրա ֆիզկուլտհրապարակը։ Այնտեղ Սանտա Կլարա փողոցն է և Արայի խանութը. ահա և տունը։ Այնտեղ է նա։ Այնտեղ է իմ տունը։

Զինվորը երկար նայեց տանը։

— Այստեղ են մայրիկն ու Բեսը,— ասաց նա,— Հոմերն ու Ցուլիսիսը։ Մերին և նրա հայրը՝ միստր Արենան, կողքի տանն են։— Նա այս խոսքերը ոչ թե արտասանեց, այլ պոռթկաց իր հոգու խորքից։

— Իթաքա, իմ Իթաքա։— Զինվորը առաջ շարժվեց։— Ահա դատարանը,— ասաց նա։— Սա քաղաքային բանտն է, լուսամուտներից նայում են բանտարկյալները։ Եվ ահա Իթաքայի երկու բնակիչ, որ պայտ են

խաղում։— Զինվորը դանդաղ մոտեցավ նրանց և հենվեց երկաթե ցանկապատին։

Հոմեր Մաքոլին և Թոմաս Սփանգլերը լուռ նետում էին պայտերը, առանց նույնիսկ միավորները հաշվելու։ Արդեն շատ մութ էր, բայց նրանք շարունակում էին խաղալ։ Հոմերը նկատեց ցանկապատին հենված զինվորին։ Նա մոտեցավ երիտասարդին և զննեց նրա դեմքը։

— Ներեցեք,— ասաց նա,— ինձ թվաց, թե ձեզ ճանաչում եմ։

— Ոչինչ,— ասաց զինվորը։

— Ուզո՞ւմ եք խաղալ,— հարցրեց Հոմերը,— ես իմ տեղը կարող եմ զիջել ձեզ։ Ճիշտ է, մի քիչ մութ է։

— Ոչ, շնորհակալություն,— ասաց զինվորը,— դուք շարունակեք։ Ես պարզապես կդիտեմ։

— Չեմ կարծում, որ ձեզ երբևէ տեսած լինեմ,— ասաց Հոմերը։— Դուք իթաքացի՞ եք։

— Այո՛,— ասաց զինվորը,— ես տուն եմ վերադարձել մեկընդմիշտ։

— Դուք ուզում եք ասել, որ այլևս ստիպված չե՞ք լինի պատերազմի դաշտ վերադառնալու,— հարցրեց Հոմերը։

— Ոչ,— ասաց զինվորը,— վերջնականապես ինձ տուն ուղարկեցին։ Մի քանի ժամ առաջ իջա գնացքից։ Քաղաքում ման եկա, նորից դիտեցի ամեն ինչ։

— Իսկ ինչո՞ւ տուն չեք գնում,— հարցրեց Հոմերը,— չե՞ք ուզում, որ ձեր ընտանիքն իմանա, թե դուք այստեղ եք։

— Կգնամ,— ասաց զինվորը,— իհարկե, ուզում եմ, որ իմ ընտանիքն իմանա իմ այստեղ լինելը։ Տուն կգնամ կամաց-կամաց։ Նախ՝ ուզում եմ, որքան հնարավոր է, շատ բան տեսնել։ Չեմ կարողանում հագենալ։ Չեմ հավատում, որ այստեղ եմ։ Մի քիչ էլ ման կգամ, հետո տուն կգնամ։

Զինվորը դանդաղ, կաղարով հեռացավ։ Հոմեր Մաքոլին նայեց նրա ետևից զարմացած.

— Չգիտեմ,— ասաց նա Սփանգլերին,— ինձ թվում է, որ ճանաչում եմ այդ մարդուն։ Այլևս չեմ ուզում խաղալ, միստր Սփանգլեր,— ասաց նա։— Մի բոպե հետո շարունակեց.— Ինչ պիտի անեմ։ Ինչ պիտի ասեմ նրանց։ Տանը ինձ են սպասում։ Գիտեմ, որ սպասում են։ Ասել եմ, որ ընթրիքին տանը կլինեմ։ Ինչպե՞ս պիտի տուն մտնեմ և նրանց նայեմ։ Նրանք ամեն ինչ պիտի հասկանան, հենց որ ինձ տեսնեն։ Ես չեմ ուզում ասել նրանց, բայց գիտեմ, որ պիտի հասկանան։

Սփանգլերը գրկեց Հոմերին։

— Սպասիր,— ասաց նա,— դեռ տուն մի գնա։ Նստիր այստեղ։ Մի քիչ էլ սպասիր։ Մի քիչ էլ։

Առանց խոսելու նրանք հանդարտ նստեցին այգու նստարանին։ Մի պահ հետո Հոմերն ասաց.

— Ինչո՞ւ եմ սպասում։

— Հիմա կբացատրեմ,— ասաց Սփանգլերը,— դու սպասում ես, որ նրա այն մասը, որ մահացել է, քո մեջ նույնպես մահանա, այն մասը, որը միայն միս է և արյուն, այն մասը, որ գալիս է ու գնում։ Դա հիմա քեզ ցավ է պատճառում, բայց մի փոքր էլ համբերիր։ Երբ այդ ցավը մահանա և հեռանա քեզնից, մնացած մասը ավելի թեթև և ավելի ազնիվ կդառնա, քան երբևէ եղել է։ Մի քիչ ժամանակ պետք է անցնի, բայց քանի դեռ ապրում ես, միշտ անհրաժեշտ է, որ մի քիչ ժամանակ անցնի, միշտ մի քիչ, և ժամանակի այդ ամեն մի անցումը քեզ մի քիչ ավելի պիտի մոտեցնի այն աղնվագույնին, որ ապրում է բոլորիս մեջ։ Համբերիր։ տուն կգնաս թեթևացած հոգով, առանց քո մեջ մահը կրելու։ Ժամանակ տուր, որ մահը հեռանա քեզնից։ Ես քեզ հետ կնստեմ, մինչև որ հեռանա։

— Շատ լավ,— ասաց Հոմերը։

Հեռագրատան վարիչն ու ցրիչը նստեցին Իթաքայի դատարանի զբոսայգում և սպասեցին։

Մաքոլինների տանը տավիղի նվագը ապաքինում էր ամեն մի ցավ։ Տավիղ նվագողի դեմքը զվարթ էր, և ուժեղ, և սիրով լեցուն։ Դաշնամուր նվագող աղջկա սիրտը մաքուր էր և անմեղ, իսկ այն աղջիկը, որ երգում էր, բարի էր ու ազնիվ։ Այն փոքրիկ տղան, որ ունկնդրում էր, ունկնդրում էր ամբողջ էությամբ, հավատով լեցուն աչքերով։ Գլխավոր մուտքի աստիճանների վրա նստած երիտասարդ զինվորը, այն տղան, որ տուն էր վերադարձել, եկել էր մի քաղաք, որը երբեք չէր տեսել, մի տուն, որտեղ երբեք չէր մտել, եկել էր մի ընտանիք՝ որին երբեք չէր ճանաչել։ Թվում էր, թե պատահական անցորդ էր նա, և, այնուամենայնիվ, նա տուն էր եկել։ Իթաքան նրա ծննդավայրն էր։ Եկել էր այն տունը, որտեղ ինքը մեծացել էր։ Եկել էր իր հարազատ ընտանիքի գիրկը։

Հանկարծ Ցուլիսիս Մաքոլին մոտեցավ դռանը և ինչ-որ բան ցույց տվեց։ Նրա Բես քույրը մոտեցավ տեսնելու, թե ինչ է։ Նա դարձավ մորը։

— Մայրիկ,— ասաց նա,— ինչ-որ մեկը նստել է մեր մուտքի աստիճաններին։

— Իսկ ինչո՞ւ ես կանգնել, Բես,— ասաց տիկին Մաքոլին,— մոտ գնա և ներս հրավիրիր, ով ուզում է լինի։ Վախենալու բան չկա։

Բես Մաքոլին շքամուտք գնաց։

— Ներս համեցեք,— ասաց նա զինվորին,— մայրիկն ուզում է, որ ներս գաք։

Զինվորը դանդաղ շրջվեց և նայեց աղջկան։ Նա խոսեց շատ հանգիստ։

— Բես,— ասաց նա,— նստիր մոտս։ Նստիր մոտս, մինչև որ հոգեպես հանգստանամ և կարող լինեմ ոտքի կանգնելու։ Ոտքերս դողում են և եթե փորձեմ կանգնել, կընկնեմ։ Նստիր մոտս, Բես։

Աղջիկը նստեց աստիճանների վրա։ Երիտասարդի մոտ։

— Որտեղի՞ց գիտեք իմ անունը,— ասաց նա քնքշությամբ,— ո՞վ եք դուք։

— Չգիտեմ ով եմ ես,— ասաց զինվորը,— բայց գիտեմ, թե ով ես դու և ով է քո մայրը, և ովքեր են քո եղբայրները։ Ինձ մոտիկ նստիր, Բես, մինչև որ հանգստանամ։

— Դու իմ Մարկուս եղբորը ճանաչո՞ւմ ես։

— Այո,— ասաց զինվորը,— քո եղբայրը ինձ կյանք տվեց, տվեց ծննդավայր, ընտանիք։ Այո, ճանաչում եմ նրան, նա նաև իմ եղբայրն է։

— Ո՞ւր է Մարկուսը,— հարցրեց Բեսը,— ինչո՞ւ նա ձեզ հետ տուն չի վերադարձել։

— Բես,— ասաց զինվորը։ Նա աղջկան մի մատանի մեկնեց, որ Մարկուս Մաքոլին էր տվել նրան։— Քո Մարկուս եղբայրը ուղարկեց։

Բես Մաքոլին լռեց, ապա խուլ ձայնով հարցրեց.

— Մարկուսը մահացե՞լ է։

— Ոչ,— ասաց զինվորը,— Բես, հավատա ինձ։— Նա համբուրեց աղջկա շուրթերը։— Նա չի մահացել։

Հոմեր Մաքոլին փողոցով տուն էր գալիս։ Բեսը ընդառաջ վազեց նրան։

— Հոմեր,— բացականչեց Բեսը,— նա Մարկուսի կողմից է եկել։ Նրանք ընկերներ են եղել։ Նստած է մեր աստիճաններին։— Աղջիկը շրջվեց և վազեց դեպի տուն։

Հոմեր Մաքոլին կանգնեց ու նայեց Թոբի Ջորջին։

— Դուք Թոբի՞ն եք,— հարցրեց նա,— ես կարծես թե ճանաչեցի ձեզ, երբ զբոսայգում խոսեցինք։— Նա մի պահ լռեց, հետո ասաց.— Հեռագիրը այսօր կեսօրից հետո եկավ։ Իմ գրպանում է։ Ի՞նչ անենք։

— Պատռիր այդ հեռագիրը, Հոմեր,— ասաց զինվորը,— դեն գցիր. դա ճիշտ չէ, պատռիր։

Հոմերը գրպանից հանեց հեռագիրը և պատուց։ Մանր կտորները նա դրեց գրպանը, որպես հիշատակ։

— Օգնիր, խնդրում եմ,— ասաց զինվորը,— միասին գնանք տուն։

Հոմեր Մաքոլին թեքվեց դեպի Թոբի Ջորջը, դեպի այն որբը, որը վերջապես գտել էր իր տունը, իսկ զինվորը գրկեց ցրիչի ուսերը և դանդաղ ոտքի կանգնեց։

Եվ այդ ժամանակ Հոմերն ասաց բարձրաձայն, բայց առանց սրբության.

— Մայրի՜կ,— ասաց նա,— Բես, Մերի, նվագեցեք։ Զինվորը տուն է եկել։ Բարի գալուստ մաղթեցեք նրան։

Նվագը սկսեց։

— Թող մի քիչ այստեղ կանգնեմ և լսեմ,— ասաց զինվորը։

Հոմեր Մաքոլին և Թոբի Ջորջը ոտկոնդրում էին երաժշտությունը, երկուսն էլ ժպտալով, զինվորը՝ մեղմ վշտով, ցրիչը խաղաղ մի զգացումով, որը դեռևս չէր կարողանում ըմբռնել։

Մերի Արենան սկսեց երգել, իսկ Յուլիսիս Մաքոլին տնից դուրս գալով բռնեց զինվորի ձեռքը։ Երբ երգն ավարտվեց, միսիս Մաքոլին, Բեսը և Մերին եկան դեպի բաց դուռը։ Մայրը կանգնած նայում էր ու ժպտում ողջ մնացած իր երկու որդիներին, որ կանգնել էին անծանոթ զինվորի կողքը, այն զինվորի, որ ճանաչել էր իր մյուս որդուն, որն այժմ մեռած էր։ Նա ժպտաց հենց զինվորին. չէ՞ որ նա հիմա դարձել էր իր որդին։ Նա ժպտաց այնպես, կարծես նա Մարկուսը լիներ։ Զինվորն ու իր երկու եղբայրները առաջացան դեպի դուռը, դեպի լույսը, դեպի հարուստ օջախի ջերմությունը, տան ջերմությունն ու լույսը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նատալյա Գոնչարի խմբագրությամբ

Խոսք Վիլյամ Սարոյանի մասին Գ. Դավթյան 5

Յոթանասուն հազար ասորի թարգմ. Ն. Գոնչար, Վ. Գրիգորյան 18

Ցուրտ օրը թարգմ. Ն. Գոնչար, Ա. Հովհաննիսյան 28

Ճոճաձողով սավառնող խիզախ պատանին թարգմ. Ն. Գոնչար, Ա. Հովհաննիսյան 34

Օձ թարգմ. Կ. Սուրենյան 40

Հարին թարգմ. Մ. Հարությունյան 45

Հովվի աղջիկը թարգմ. Մ. Հարությունյան 52

Նարինջները թարգմ. Հ. Դավթյան 54

Կոտրված անիվը թարգմ. Գ. Հախվերդյան 59

Պատերազմը թարգմ. Գ. Հախվերդյան 70

Ֆրեզնոն թարգմ. Գ. Հախվերդյան 74

Վարսավիրը, որի քեռու գլուխը կրծեց կրկեսի վագրը թարգմ. Ռ. Ղազարյան . 80

Սև թաթարները թարգմ. Վ. Ավետիսյան 87

Իմ սիրտը լեռներում է թարգմ. Խ. Հրաչյան 96

Բիթլիսը թարգմ. Գ. Հախվերդյան 106

Կիրակնօրյա ցեպելինը թարգմ. Խ. Հրաչյան 109

Վելվետե շալվարը թարգմ. Ա. Խանզադյան 125

Առաջին օրը դպրոցում թարգմ. Խ. Հրաչյան 130

Մեքսիկացին թարգմ. Մ. Դավոյան 135

Գյուղացին թարգմ. Վ. Դավթյան, Կ. Պասմանյան 141

Որտեղ ես ծնվել եմ, այնտեղ մարդիկ բարեկիրթ են թարգմ. Հ. Հարությունյան 147

Ջորս, հինգ, վեց, դուրը մեկեն փակվեց թարգմ. Խ. Հրաչյան 155

Ֆիլիպինցին ու հարբածը թարգմ. Լ. Բոյամյան 163

Հանճարը թարգմ. Լ. Բոյամյան 166

Ջիմ Փեմբրրիքը և նրա որդի Թրիգերը թարգմ. Մ. Հարությունյան . . . 171

Դու կոտրում ես սիրտս թարգմ. Մ. Դավոյան 178

Մրջյունները թարգմ. Ռ. Ղազարյան 191

Ակրոբատները թարգմ. Ա. Խանզադյան 196

Մեր ուշածը սեր է և փող թարգմ. Ջ. Բոյաջյան 203

Իսպանիայի պատերազմը թարգմ. Ջ. Բոյաջյան 205

Տանը՝ տաք ու խաղաղ հովտում թարգմ. Ն. Գոնչար, Վ. Գրիգորյան . . . 208

ԻՄ ԱՆՈՒՆԸ ԱՐԱՄ է

Գեղեցիկ սպիտակ ձիու ամառը թարգմ. Գ. Քեշիշյան 215
Ուղևորություն դեպի Հանֆորդ թարգմ. Ս. Հարությունյան 222
Նոնենները թարգմ. Հ. Հարությունյան 229
Նա, կարելի է ասել, մեր ապագա բանաստեղծն է թարգմ. Շ. Մաթևոսյան, Հր. Մաթևոսյան 241
Հիսուն յարդանոց վազքը թարգմ. Խ. Հրաչյան 243
Հնամոմ սիրավեպ սիրային ոտանավորներով ու այլևայլ բաներով թարգմ. Շ. Մաթևոսյան, Հր. Մաթևոսյան 250
Իմ զարմիկ հռետոր Տիգրանը թարգմ. Ա. Էմին 258
Երիցական եկեղեցու երգիչները թարգմ. Ս. Հարությունյան 264
Կրկեսը թարգմ. Ա. Էմին 274
Կրթված նպարավաճառը լողորդ երեք տղայի առջև թարգմ. Շ. Մաթևոսյան, Հր. Մաթևոսյան 281
Լոկոմոտիվ—38 օշիբվեյը թարգմ. Շ. Մաթևոսյան, Հր. Մաթևոսյան . . . 290
Խորհուրդներ ամերիկացի ճանապարհորդին թարգմ. Շ. Մաթևոսյան, Հր. Մաթևոսյան 298
Խեղճուկրակ արաբը թարգմ. Կ. Սուրենյան 301
Ուղերձ ընչահավատներին թարգմ. Շ. Մաթևոսյան, Հր. Մաթևոսյան . . 308

Ֆելիքս Մելոյանի խմբագրությամբ

Մարդկային կատակերգություն (վիպակ) թարգմ. Գր. Քեշիշյան . . 315

ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆ

Ընտիր երկեր

չորս հատորով

Հատոր 1

УИЛЬЯМ САРОЯН

Избранные сочинения

в четырех томах
том I
(На армянском языке)
«Советакан грох»
Ереван, 1986

Հրատ. խմբագիր՝ **Ա. Ս. Հովսեփյան**
Նկարիչ՝ **Ջ. Ե. Գասպարյան**
Գեղ. խմբագիր՝ **Հ. Ս. Մալխասյան**
Տեխ. խմբագիր՝ **Ս. Գ. Շահվերդյան**
Վերատեսող սրբագրիչ՝ **Մ. Գ. Ստեփանյան**

ИБ 5317

Հանձնված է շարվածքի 12. 09. 1986 թ.։ Ստորագրված է տպագրության 5. 11. 1986 թ.։ ՎՖ 03609։ Ֆորմատ 60×84 1/16։ Թուղթ տպագր. № 1։ 28,36 պայմ. տպ. մամ., 26,6 հրատ. մամ.+1 ներդիր։ Տպաքանակ 50000։ Պատվեր 1486։ (30001—50000 II թողարկում), Գինը՝ 3 ռ. 10 կ.։

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան—10, Ալավերդյան փող. 65։

Типография № 1 Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван-10, ул. Алавердяна, 65.